

4. ԸՈՉԱՐՅԱՆ



ՄԻԶԱՉԳԱՅԻՆ
ԻՐԱԿՈՒՆՔ

ԵՐԵՎԱՆ - 2002

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Վ. ՔՈՉԱՐՅԱՆ

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔ**

Նստածնական շեմաքիչ



Երևանի համալսարանի հրատարակչություն
Երևան - 2002

**Երաշխավորված է տպագրության Երևանի պետական համալսարանի
 իրավաբանական ֆակուլտետի խորհրդի կողմից**

Խմբագիր՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ **Վ. Հովհաննիսյան**

Գրախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Ա. Հարությունյան**
 իրավ. գիտ. թեկնածու **Ա. Զալինյան**

Տպագրությանը օժանդակել է Բաց հասարակության ինստիտուտի
 օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղը

This publication was partially supported by a grant from the OSIAF-Armenia

Քոչարյան Վ.

Զ 822 Միջազգային իրավունք: Ուսումնական ձեռնարկ — Եր.: Երևանի համալսարանի իրատարակչություն, 2002, 504 էջ:

Բուհական դասընթացի ծրագրին համապատասխան ուսումնական ձեռնարկում համակարգված կերպով շարադրված է ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական բովանդակությունը, ներկայացված են նրա ճյուղերի և ինստիտուտների առանձնահատկությունները: Առանձին ուշադրություն է հատկացված Հայաստանի Հանրապետության միջազգային իրավական պրակտիկային: Ուսումնական ձեռնարկում տեղ են գտել նաև առանձին հիմնարար միջազգային իրավական և ներպետական ակտեր:

Նախատեսված է բուհերի իրավաբանական և միջազգային հարաբերությունների ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների և դասախոսների համար: Այն կարող է օգտակար լինել արտաքին հարաբերությունների և միջազգային կապերի ոլորտի աշխատողների, միջազգային հիմնախնդիրներով հետաքրքրվող անձանց և կազմակերպությունների համար:

Զ 1207000000
 704(02)2002 2002թ.

ԳՄԴ 67.91 ց73

ISBN 5-8084-0425-8

© Քոչարյան Վ., 2002

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. Միջազգային իրավունքի էությունը և առանձնահատկությունները..... 7
 § 2. Միջազգային իրավունքի նորմերը 10
 § 3. Միջազգային իրավունքի համակարգը և կողիֆիկացիան 15
 § 4. Միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցությունը 18

ԳԼՈՒԽ 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

§ 5. Միջազգային իրավունքի աղբյուրները 21

ԳԼՈՒԽ 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 6. Միջազգային իրավունքի ձևավորումը և զարգացումը 30
 § 7. Ժամանակակից միջազգային իրավունքի կայացումը 39
 § 8. Հայաստանի պատմության միջազգային իրավական ակնարկ..... 43

ԳԼՈՒԽ 4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

§ 9. Միջազգային իրավունքի սուբյեկտները 60
 § 10. Պետությունը որպես միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտ 64
 § 11. Ճանաչումը միջազգային իրավունքում 72
 § 12. Պետությունների իրավահաջորդությունը 76

ԳԼՈՒԽ 5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՂԲՈՒՆՔՆԵՐԸ

§ 13. Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների հասկացությունը..... 82
 § 14. Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները 86

ԳԼՈՒԽ 6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 15. Միջազգային պայմանագրերի իրավունքի հասկացությունը և աղբյուրները 101
 § 16. Միջազգային պայմանագրերի կնքումը 105

§ 17. Միջազգային պայմանագրերի գործողությունը, վավերականությունը, մեկնաբանությունը և դադարումը 113

§ 18. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի իրավական կարգավորումը..... 120

ՔԼՈՒԽ 7. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

§ 19. Միջազգային իրավական պատասխանատվության հասկացությունը և հիմքերը 130

§ 20. Միջազգային իրավախախտումների և միջազգային իրավական պատասխանատվության տեսակները և ձևերը 136

§ 21. Հայոց ցեղասպանության համար միջազգային իրավական պատասխանատվության հիմնահարցերը..... 142

ՔԼՈՒԽ 8. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 22. Դիվանագիտական իրավունքի հասկացությունը..... 148

§ 23. Արտաքին հարաբերությունների մարմինները..... 151

§ 24. Դիվանագիտական ներկայացուցչությունները 155

§ 25. Դիվանագիտական ներկայացուցչությունների անձեռնմխելիությունները և արտոնությունները 164

§ 26. Հյուպատոսական ներկայացուցչություններ..... 170

§ 27. Դիվանագիտական և հյուպատոսական ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում 174

ՔԼՈՒԽ 9. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 28. Միջազգային կազմակերպություններ և միջազգային կոնֆերանսներ 179

§ 29. Միջազգային կազմակերպությունների գործունեության կազմակերպական-իրավական կառուցակարգը 183

§ 30. Միավորված ազգերի կազմակերպությունը..... 188

§ 31. Տարածաշրջանային միջազգային կազմակերպությունները..... 199

ՔԼՈՒԽ 10. ԱՆՀԱՏԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

§ 32. Բնակչության միջազգային իրավական հիմնահարցերը..... 214

§ 33. Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանությունը 221

§ 34. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային պայմանագրերին 228

ՔԼՈՒԽ 11. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

§ 35. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման միջոցները . 234

ՔԼՈՒԽ 12. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 36. Միջազգային անվտանգության իրավունքի հասկացությունը և հիմնական ինստիտուտները 245

§ 37. Հավաքական անվտանգության համակարգեր 251

ՔԼՈՒԽ 13. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 38. Միջազգային մարդասիրական իրավունքի հասկացությունը և սկզբունքները 260

§ 39. Պատերազմ վարելու միջազգային իրավական կարգավորումը 267

ՔԼՈՒԽ 14. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 40. Միջազգային քրեական իրավունքի, միջազգային հանցագործությունների և միջազգային բնույթի հանցագործությունների հասկացությունը..... 284

§ 41. Միջազգային հանցագործությունների դեմ պայքարը 290

ՔԼՈՒԽ 15. ՏԱՐԱԾՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

§ 42. Տարածքի տեսակները 297

§ 43. Պետական տարածքը և պետական սահմանները..... 298

§ 44. Միջազգային տարածքներ 304

ՔԼՈՒԽ 16. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՈՎԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 45. Միջազգային ծովային իրավունքը..... 306

§ 46. Ծովային տարածությունների իրավական ռեժիմը..... 310

ՔԼՈՒԽ 17. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 47. Միջազգային օդային իրավունքի հասկացությունը 323

§ 48. Միջազգային օդային իրավունքի սկզբունքները..... 325

§ 49. Միջպետական համագործակցությունը միջազգային օդային հաղորդակցությունների ոլորտում 329

ԳԼՈՒԽ 18. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԻԵՉԵՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 50. Միջազգային տիեզերական իրավունքի հասկացությունը . 333

§ 51. Տիեզերական տարածության, երկնային մարմինների և տեզերազանցների իրավական կարգավիճակը..... 336

ԳԼՈՒԽ 19. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 52. Միջազգային էկոլոգիական իրավունքի հասկացությունը և հիմնական դրույթները..... 339

ԳԼՈՒԽ 20. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 53. Միջազգային տնտեսական իրավունքի հասկացությունը և սկզբունքները..... 345

§ 54. Միջազգային տնտեսական իրավունքի ենթաճյուղերը և ինստիտուտները..... 351

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ 362

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԸՆԴԱՆՈՒՐ ՀՈՉԱԿԱԳԻՐ .. 390

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՎԻԵՆՆԱՅԻ 1969Թ. ՄԱՅԻՍԻ 23-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱ 396

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության համագործակցության և փոխադարձ օգնության մասին 430

ՀՈՉԱԿԱԳԻՐ Հայաստանի անկախության մասին 438

ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՊԱՏԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ 440

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԸ 443

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ..... 477

Հեղինակի մասին..... 503

ԳԼՈՒԽ 1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. Միջազգային իրավունքի էությունը և առանձնահատկությունները

Միջազգային իրավունքի ծագումը սովորաբար կապվում է պետությունների առաջացման հետ, քանզի այն կարգավորում է միջպետական հարաբերությունները, այսինքն՝ հարաբերություններն առանձին պետությունների միջև: «Միջազգային իրավունք» եզրույթն ունի ավանդական բնույթ, այն ձևավորվել է պատմականորեն: Իրականում միջազգային իրավունքը կոչված է կանոնակարգել հարաբերությունները ոչ այնքան ազգերի, որքան միջազգային հարաբերության հիմնական մասնակիցների՝ պետությունների միջև: Պետությունների առաջացման հետ մեկտեղ առաջացավ օբյեկտիվ անհրաժեշտություն՝ կանոնակարգել նրանց միջև հարաբերությունները: Չնավորվեցին միջազգային իրավունքի նորմերը՝ միջազգային շփման հիմնական մասնակիցների վարքագծի կանոնները: Այդ նորմերը հասարակական առաջադիմությանը զուգընթաց շարունակաբար զարգանում և վերափոխվում էին: Այսպիսով, ժամանակակից միջազգային իրավունքը մարդկային քաղաքակրթության առաջընթացի արդյունք է, որը ներառում է տարբեր պետությունների միջազգային շփումների ընթացքում կուտակված բազմադարյա դրական փորձը: Միջազգային իրավունքն իր նորմերի միջոցով սահմանում է պետությունների վարքագծի այնպիսի կանոններ, որոնց կատարումը պայմաններ է ստեղծում միջազգային խաղաղության և համագործակցության համար:

Միջազգային իրավունքը իրավական համակարգ է, որն էականորեն տարբերվում է պետությունների ներպետական իրավական համակարգերից: Այն չի կարելի դասել ներպետական իրավունքի առանձին ճյուղերի հետ մի շարքում (օրինակ՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական և այլն), քանզի միջազգային իրավունքն առանձին և ինքնուրույն իրավական համակարգ է: Չնայած և ներպետական, և՛ միջազգային իրավունքին բնորոշ են որոշ ընդհանուր

հատկանիշներ, սակայն միջազգային իրավունքը սկզբունքորեն տարբերվում է ներպետական իրավունքից:

Այսպես, *միջազգային իրավունքը ներպետական իրավունքից տարբերվում է կարգավորման առարկայով*: Ներպետական իրավունքը կարգավորում է հասարակական այն հարաբերությունները, որոնք վերաբերում են յուրաքանչյուր պետության ներքին իրավասությանը, որպես կանոն, ծագում, գործում և դադարում են նրա պետական սահմանների շրջանակներում: Միջազգային իրավունքի կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունները դուրս են գալիս ինչպես պետության ներքին իրավասության ոլորտից, այնպես էլ տարածքային սահմաններից: Ընդ որում, միջազգային իրավական կարգավորման առարկա են միջազգային հարաբերությունների հիմնական մասնակիցների՝ պետությունների փոխհարաբերությունները: Միջազգային իրավունքն ու միջազգային հարաբերությունները սերտորեն փոխկապակցված են: Միջազգային իրավունքը կոչված է կարգավորելու միջազգային հարաբերությունները, սակայն միաժամանակ միջազգային իրավունքի նորմերն այդ հարաբերությունների զարգացման արդյունք են: Միջազգային իրավունքով կարգավորվող միջազգային հարաբերությունները դառնում են միջազգային իրավական հարաբերություններ, որոնց բովանդակությունը կազմում են դրանց մասնակիցների՝ միջազգային իրավունքի սուբյեկտների, իրավունքներն ու պարտականությունները:

Մեծ է *տարբերությունը նաև ներպետական և միջազգային իրավունքի սուբյեկտների միջև*: Եթե ներպետական իրավունքի սուբյեկտներ են (իրավունքների և պարտականությունների կրողներ) ֆիզիկական և իրավաբանական անձինք, պետական մարմինները, հասարակական և այլ կազմակերպությունները, ապա միջազգային իրավունքի սուբյեկտները հիմնականում պետություններն են, իրենց անկախության համար պայքարող ազգերը, միջազգային միջկառավարական կազմակերպությունները, այսինքն՝ միջազգային հարաբերությունների այն մասնակիցները, որոնք օժտված են որոշակի միջազգային իրավական իրավունքներով ու պարտականություններով:

Միջազգային և ներպետական իրավունքների միջև որոշ *տարբերություններ կան նաև սոցիալական էության* առումով: Յուրաքանչյուր պետություն, ստեղծելով իր ներքին օրենսդրությունը, առաջնորդ

վում է օրինականության, սոցիալական արդարության, ժողովրդավարության և այլ հիմնահարցերի մասին իր սեփական պատկերացումներով: Միջազգային իրավունքը կոչված է կանոնակարգել հարաբերությունները տարբեր հասարակական կարգ, տնտեսական կացութաձև, քաղաքական համակարգ ունեցող պետությունների միջև, ուստի նրա սոցիալական էությունն այնպիսին է, որ այն պետք է հավասարապես ընդունելի և հարազատ լինի բոլոր պետությունների համար: Այսպիսով, ժամանակակից միջազգային իրավունքը հիմնված է համամարդկային արժեքների վրա և ընդհանուր ժողովրդավարական բնույթ ունի:

Ներպետական և միջազգային իրավունքներն էական տարբերություններ ունեն նաև *իրավունքի աղբյուրների* տեսակետից: Ներպետական իրավունքի աղբյուրներ են սահմանադրությունները, օրենքները և ենթօրենսդրական ակտերը, դատական մասնադեպերը: Միջազգային իրավունքի աղբյուրներ են հիմնականում միջազգային պայմանագրերը և միջազգային իրավական սովորույթը:

Ի տարբերություն պետությունների, միջազգային հարաբերությունների ոլորտում գոյություն չունի օրենսդիր մարմին, և այս հանգամանքը մեծ ազդեցություն է թողնում միջազգային իրավունքի *նորմերի ստեղծման գործընթացի* վրա: Ներպետական իրավունքի նորմերը ստեղծվում են տվյալ պետության համապատասխան պետական մարմինների կողմից, իսկ միջազգային իրավունքի նորմերը գոյանում են դրա սուբյեկտների՝ պետությունների համատեղ գործունեության արդյունքում: Այդ համատեղ գործունեության էությունը պետությունների կամարտահայտության համաձայնեցումն է, որի ընթացքում նրանք համաձայնության են գալիս միջազգային իրավունքի նորմի բովանդակության և այն իրենց համար իրավաբանորեն պարտադիր ճանաչելու վերաբերյալ:

Միջազգային հարաբերությունների ոլորտում չկան նաև իրավական նորմերի կատարումն ապահովող և դրանց խախտման դեպքում հարկադրանք կիրառող հատուկ մարմիններ, ինչը չի կարող չազդել նաև միջազգային իրավունքի *նորմերի իրականացման սուպահովման եղանակների* վրա: Միջազգային իրավունքի առանձնահատկությունն այստեղ այն է, որ դրա նորմերի կատարումը ապահովվում է իրավունքի սուբյեկտների՝ պետությունների կողմից, որոնք կարող են

իրավախախտի դեմ կիրառել հարկադրանքի միջոցներ ինչպես ինքնուրույն, այնպես էլ միացյալ ուժերով: Անհրաժեշտ է ընդգծել, որ միջպետական հարաբերություններում ուժի, հարկադրանքի կիրառումը խստորեն կանոնակարգված է և կարող է իրականացվել միայն միջազգային իրավունքով սահմանված եղանակներով ու ծավալներով:

Քննարկելով միջազգային իրավունքի էության և հասկացության հիմնախնդիրները՝ անհրաժեշտ է նշել, որ շարադրվածը վերաբերում է *միջազգային հանրային իրավունքին*, որը սովորաբար ուղղակի անվանում են միջազգային իրավունք: Բացի միջազգային հանրային իրավունքից, գոյություն ունի նաև *միջազգային մասնավոր իրավունք*, որը թեև սերտորեն կապված է միջազգային հանրային իրավունքին, սակայն դրանք չի կարելի նույնացնել: Միջազգային մասնավոր իրավունքի նորմերը չեն կարգավորում միջազգային (միջպետական) հարաբերությունները, այլ կոչված են կարգավորելու այն քաղաքացիական իրավական, ընտանեկան և աշխատանքային հարաբերությունները, որոնց մասնակից կողմերից մեկը օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձ է:

Դիտարկելով միջազգային իրավունքի առանձնահատկությունները և հաշվի առնելով դրանք՝ կարող ենք եզրակացնել, որ *միջազգային իրավունքը իրավական նորմերի համակարգ է, որը սրբեցվում է պետությունների կողմից իրենց կամարտահայրության համաձայնեցման միջոցով և կարգավորում է պետությունների, ինչպես նաև միջազգային իրավունքի այլ սուբյեկտների հարաբերությունները:*

§ 2. Միջազգային իրավունքի նորմերը

Միջազգային իրավունքի նորմերի հասկացությունը, կառուցվածքը և դասակարգումը: Միջազգային իրավունքի նորմերը միջազգային հարաբերությունների մասնակիցների վարքագծի իրավաբանորեն պարտադիր կանոններ են, որոնց կատարումը անհրաժեշտության դեպքում ապահովվում է հարկադրանքով:

Իրավունքի ընդհանուր տեսության համաձայն՝ իրավունքի նորմերը ներառում են երեք տարր, ունեն եռանդամ կառուցվածք՝ վարքագծի սահմանված կանոնի գործողության պայման նշանակող *հիպո-*

թեզը, այդ կանոնը շարադրող *դիսպոզիցիան* և տվյալ կանոնը խախտողի համար առաջացող անբարենպաստ իրավաբանական հետևանքներ նախատեսող *սանկցիան*:

Միջազգային իրավունքում դրա առանձին վերցված նորմը, որպես կանոն, պարունակում է միայն այդ նորմը գործողության մեջ դնող իրավաբանական փաստը (հիպոթեզը) և վարքագծի կանոնը, իսկ սանկցիան շարադրվում է նորմերի տվյալ համակարգի (ենթահամակարգի) մեկ այլ նորմում: Այսպես, սանկցիաներին է նվիրված միջազգային իրավունքի միջազգային իրավական պատասխանատվությանը վերաբերող հատուկ ինստիտուտը :

Միջազգային իրավունքի նորմերը տարբերվում են իրենց հասցեատերերով՝ այն սուբյեկտներով, որոնց հարաբերությունները դրանք կարգավորում են: Դրան համապատասխան գոյություն ունեն նորմեր, որոնք կոչված են կանոնակարգել հարաբերությունները միջազգային իրավունքի բոլոր սուբյեկտների միջև՝ *ընդհանուր միջազգային իրավունքի նորմեր* և միջազգային իրավունքի երկու կամ մի քանի սուբյեկտներին հասցեագրված *տեղային (լոկալ) նորմեր*:

Տեղային նորմերի շարքից կարելի է առանձնացնել նաև առանձին դեպքում կոնկրետ սուբյեկտների վարքագիծը որոշող *անհատական նորմերը*: Դրանք, օրինակ, միջազգային դատարանների կամ արբիտրաժների՝ միայն տվյալ գործով վեճի կողմերի համար պարտադիր որոշումներն են:

Ընդհանուր միջազգային իրավունքի և տեղային նորմերի հարաբերակցությունն այն է, որ վերջինները չպետք է հակասեն ընդհանուր միջազգային իրավունքի նորմերին, այսինքն՝ իրենց հիմքում պետք է համապատասխանեն դրանց: Այսպես, ՄԱԿ-ի Կանոնադրության (ընդհանուր միջազգային իրավունքի հիմնական ակտի) 103-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, երբ կանոնադրությամբ նախատեսված կազմակերպության անդամների պարտավորությունները հակասության մեջ մտնեն որևէ այլ միջազգային համաձայնագրով նրանց պարտավորությունների հետ, նախապատվության ուժ ունեն կանոնադրությամբ նախատեսված պարտավորությունները:

Բացի նշվածից, ընդունված են միջազգային իրավունքի նորմերի նաև այլ դասակարգումներ.

• *ըստ բովանդակության և համակարգում զբաղեցրած տեղի՝* տարբերում են նպատակներ, սկզբունքներ և բուն նորմեր: *Միջազգային իրավական նպատակը* ապագայում ցանկալի վիճակի մոդելն է, որը սուբյեկտները համաձայնել են իրականացնել համատեղ ջանքերով և դրան հաղորդել իրավաբանական ուժ: Նպատակները կարևոր տեղ են զբաղեցնում միջազգային իրավունքի համակարգում: Պայմանագրի նպատակները ծառայում են որպես դրա իրացման միջոցների օրինականության չափանիշ: *Սկզբունքները* միջազգային իրավունքի գլխավոր բովանդակությունն արտացոլող և բարձրագույն իրավաբանական ուժով օժտված ընդհանրացված նորմեր են: Որոշելով պետությունների փոխգործողության հիմունքները՝ սկզբունքները տարբերվում են կայունությամբ, իսկ դրանց զարգացումը բնութագրվում է հաջորդականությամբ:

• *ըստ գործողության ոլորտի՝* ունիվերսալ (համընդհանուր), տարածաշրջանային, պարտիկուլյար (մասնավոր): Նորմերի *ունիվերսալության* գլխավոր տարբերակիչ հատկանիշներն են գործողության գլոբալությունը, համընդհանուր պարտադիր ուժը, դրանց ստեղծումը և վավերացումն ամբողջ միջազգային ընկերակցության կողմից: Ունիվերսալ նորմերի գոյության հիմնական ձևը սովորույթն է: Այդ նորմերը կազմում են ընդհանուր միջազգային իրավունքը: *Տարածաշրջանային նորմերը* առաջանում են երկրագնդի առանձին շրջաններում, ուր պետությունների փոխգործողությունը երկկողմ պայմանագրերից ավելի բարձր մակարդակի նորմատիվ կարգավորման անհրաժեշտություն ունի: *Պարտիկուլյար (մասնավոր) կամ լոկալ (տեղային) նորմերը* քանակով զգալիորեն գերազանցում են ունիվերսալներին: Դրանց գործողությունը տարածվում է մասնակիցների սահմանափակ թվով հարաբերությունների վրա, մեծ մասամբ՝ երկկողմ հարաբերություններում:

• *ըստ իրավաբանական ուժի՝* իմպերատիվ (հրամայական) և դիսպոզիտիվ (տնօրինչական): *Իմպերատիվ նորմերը* (jus cogens) օժտված են հատուկ իրավաբանական ուժով: Պետությունների փոխհարաբերություններում «jus cogens» նորմերից շեղումներն անթույլատրելի են նույնիսկ դրանց համաձայնության առկայության դեպքում: Դրանց հակասող սովորույթը կամ պայմանագիրը անվավեր է: Այդ նորմերի խախտման դեպքում ծագում են պատասխանատվության

հատուկ իրավաբարաբերություններ՝ ոչ միայն անմիջականորեն տուժող պետությունը, այլև ցանկացած այլ պետություն իրավունք ունի դնել իրավախախտի պատասխանատվության հարցը: *Դիսպոզիտիվ նորմերը* սուբյեկտների փոխադարձ համաձայնությամբ՝ որոշակի սահմաններում դրանցում պարունակվող վարքագծի կանոններից շեղվելու հնարավորություն նախատեսող նորմերն են: Միջազգային իրավունքի նորմերի մեծ մասը դիսպոզիտիվ նորմերն են:

• *ըստ գործառույթների՝* նյութական և ընթացակարգային (պրոցեսուալ): *Նյութական նորմերն* անմիջականորեն կարգավորում են միջազգային հարաբերությունները: *Ընթացակարգային նորմերի* թվին են դասվում միջազգային իրավունքի ստեղծման և իրականացման գործընթացները կարգավորող նորմերը: Ընթացակարգային նորմեր է պարունակում գրեթե յուրաքանչյուր պայմանագիր: Պրոցեսուալ իրավունքն աչքի է ընկնում դիսպոզիտիվիզմի բարձր աստիճանով: Այն միայն որոշում է պրոցեսուալ գործունեության ընդհանուր գծերը:

• *ըստ ստեղծման եղանակի և գոյության ձևի*, այսինքն՝ ըստ աղբյուրի՝ սովորութային, պայմանագրային, միջազգային կազմակերպությունների որոշումների նորմեր:

Միջազգային իրավունքի նորմերի ստեղծումը: Միջազգային իրավունքի նորմերի ստեղծման հիմնական սուբյեկտներն են պետությունները և միջազգային կազմակերպությունները: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ միջազգային իրավունքի ստեղծման գործում գլխավոր դերը վերապահված է պետություններին, քանի որ նրանք ստեղծում են միջազգային իրավունքի նորմերի մեծ մասը, դրանից բացի միջազգային կազմակերպությունների կողմից ստեղծվող միջազգային իրավական նորմերը նույնպես կախված են պետությունների կամքից:

Միջազգային իրավունքի նորմերն ստեղծվում են երկու փուլով՝

1. վարքագծի կանոնների վերաբերյալ պետությունների կամքի համաձայնեցումը.
2. տվյալ կանոնը, որպես իրավաբանորեն պարտադիր, ճանաչելու վերաբերյալ պետությունների կամքի համաձայնեցումը:

Պետության կամքի բովանդակությունը նրա *միջազգային իրավական դիրքորոշումն է:* Պետության միջազգային իրավական դիրքորոշումը ներառում է միջազգային իրավունքը, դրա առաջընթաց զար-

զացումը և սկզբունքների ու նորմերի պահպանման նկատմամբ պետությունների ընդհանուր վերաբերմունքը: Այդպիսով, պետության միջազգային իրավական դիրքորոշումը նախ և առաջ նրա իրական վարքագծում և գործողություններում միջազգային իրավունքի բոլոր հարցերի վերաբերյալ արտահայտված դիրքորոշումն է: Պետության միջազգային իրավական դիրքորոշումը, որպես արտաքին քաղաքականության մաս, արտահայտում է պետության ազգային շահերը:

Միջազգային իրավունքի նորմերի ստեղծման համար չի պահանջվում դրանց կազմավորմանը մասնակցող պետությունների կամքի նույնություն: Բավական է վարքագծի կանոնի բովանդակության և այն իրավաբանորեն պարտադիր ճանաչելու վերաբերյալ համաձայնությունը:

Հարկ է նկատել, որ միջազգային իրավունքի նորմերը ոչ թե նոր միասնական բարձրագույն կամքի, այլ միջազգային իրավունքի սուբյեկտների կամքի համաձայնեցման արդյունք են, և հենց դա է դրանց էական տարբերությունը ներպետական իրավունքի նորմերից:

Միջազգային իրավունքի նորմի ստեղծմամբ ավարտվող պետությունների կամքերի համաձայնեցման գործընթացը ներառում է այդ կամքերի փոխապայմանավորվածությունը: Դա դրսևորվում է նրանում, որ պետությունը տալիս է իր համաձայնությունը՝ ճանաչելու այս կամ այն վարքագծի կանոնը որպես միջազգային իրավունքի նորմ այն պայմանով, որ նույնը կանի նաև այլ պետություն կամ պետություններ: Այլ կերպ ասած՝ միջազգային իրավունքի այս կամ այն նորմն ընդունելով և հետևաբար պարտավորվելով կատարել այն՝ յուրաքանչյուր պետություն ակնկալում է, որ մյուս պետությունները նույնպես պահպանելու են այդ նորմը:

Պետությունների կամքի *համաչափակեցվածությունը* և *փոխապայմանավորվածությունը* միջազգային իրավունքի նորմերի ստեղծման գործընթացի երկու էական գծերն են: Եթե կամքի համաձայնեցվածությունը վկայում է որոշակի կանոնը որպես իրավական նորմ ճանաչելուն ուղղված համաձայնության առկայության մասին, ապա փոխապայմանավորվածությունը նշանակում է պետությունների կամքերի փոխկապվածություն: Դա փոխադարձության սկզբունքն է, որը միջազգային իրավունքի նորմերն ստեղծելու և կատարելու գործընթացների հիմքն է: Այսպիսով, միջազգային իրավունքի նորմերը պե-

տությունների կամքի համաձայնեցման և փոխապայմանավորվածության արդյունք են:

Միջազգային իրավունքի նորմերի ստեղծման ընթացքում պետությունների իրավաբանական հավասարությունը նշանակում է, որ նրանց մեծամասնությունը չի կարող ստեղծել փոքրամասնության համար պարտադիր նորմեր, իրավունք չունի մյուս պետություններին ենթարկել այդ նորմերին:

Գոյություն ունի պետությունների կամքի համաձայնեցման մեկ այլ կողմ՝ *փաստական հանգամանքները*, որոնք հիմնականում կանխորոշում են պետությունների միջազգային իրավական դիրքորոշումը և վճռորոշ ազդեցություն թողնում համաձայնեցման գործընթացի վրա:

Որոշակի առանձնահատկություններ ունի միջազգային իրավունքի *սովորույթային նորմերի* ստեղծումը: Միջազգային իրավունքի սովորույթային նորմերի ստեղծման գործընթացը տարբերվում է պայմանագրային նորմերի ստեղծման գործընթացից, սակայն դրա էությունը մնում է նույնը. պետությունների համար պարտադիր՝ միջազգային իրավունքի նորմերի ստեղծման նպատակով նրանց կամքի համաձայնեցումը:

§ 3. Միջազգային իրավունքի համակարգը և կողիֆիկացիան

Միջազգային իրավունքի համակարգը: Միջազգային իրավունքը՝ որպես իրավունքի հատուկ համակարգ, տարբեր տարրերից բաղկացած բավականին բարդ իրավաբանական կազմավորում է:

Ժամանակակից միջազգային իրավունքի միջուկը, դրա «սահմանադրությունն» են միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները: Հիմնական սկզբունքները ունիվերսալ և բարձրագույն իրավաբանական ուժով օժտված հիմնարար միջազգային իրավական նորմերն են: Դրանցով է համակված ամբողջ միջազգային իրավական համակարգը. միջազգային իրավական մյուս բոլոր նորմերը, իսկ միջազգային իրավունքի սուբյեկտների վարքագիծը պետք է համապատասխանի հիմնական սկզբունքների դրույթներին:

Միջազգային իրավունքը, ինչպես և ցանկացած պետության ներքին իրավունքը, բաժանվում է ճյուղերի: Միջազգային իրավունքի

ճյուղերը կարգավորում են որոշակի տեսակի միջազգային հարաբերությունների խոշոր խմբեր և որակական ինքնատիպությամբ տարբերվող, շատ թե քիչ առանձնացված հասարակական հարաբերությունները կարգավորող միջազգային իրավական ինստիտուտների և նորմերի համակցություն են:

Միջազգային իրավունքի ճյուղերի թվի և անվանման վերաբերյալ միջազգային իրավական գիտության մեջ առկա են բազմաթիվ տեսակետներ:

Ըստ մեզ, միջազգային իրավունքում կազմավորվել են հետևյալ ճյուղերը՝

- միջազգային պայմանագրերի իրավունքը,
- դիվանագիտական և հյուպատոսական իրավունքը,
- միջազգային կազմակերպությունների իրավունքը,
- մարդու իրավունքների միջազգային իրավունքը,
- միջազգային անվտանգության իրավունքը,
- միջազգային մարդասիրական իրավունքը,
- միջազգային քրեական իրավունքը,
- միջազգային ծովային իրավունքը,
- միջազգային օդային իրավունքը,
- միջազգային տիեզերական իրավունքը,
- միջազգային էկոլոգիական իրավունքը,
- միջազգային տնտեսական իրավունքը:

Միջազգային իրավունքի ճյուղերն իրենց հերթին կազմված են ավելի պարզ կազմավորումներից՝ ենթաճյուղերից և ինստիտուտներից:

Օրինակ, միջազգային մարդասիրական իրավունքը կազմված է երկու ենթաճյուղերից՝ «Մարդասիրական իրավունքը լսադադ ժամանակ» և «Մարդասիրական իրավունքը զինված հակամարտությունների ժամանակ»:

Միջազգային իրավական ինստիտուտը իրավական համակարգի ավելի փոքր տարր է: Այն շատ թե քիչ միասեռ հարաբերություններ կանոնակարգող միջազգային նորմերի խումբ է: Նորմերի նման խմբեր են կազմում միջազգային իրավական պատասխանատվության, միջազգային վեճերի խաղաղ կարգավորման ինստիտուտները:

Միջազգային իրավունքի համակարգի սկզբնական տարրեր են միջազգային իրավունքի նորմերը:

Միջազգային իրավունքի կողիֆիկացիան և առաջադիմական զարգացումը: Միջազգային իրավունքը մշտապես զարգացող իրավական համակարգ է. որում ակտիվորեն իրականացվում են կողիֆիկացման գործընթացներ:

Միջազգային իրավունքի կողիֆիկացիան գոյություն ունեցող և միջազգային հարաբերությունների առանձին ոլորտին վերաբերող միջազգային իրավական նորմերի ավելի ճշգրիտ ձևակերպումն ու համակարգումն է և, որպես կանոն, ընդգրկում է դրանց գրավոր շարադրումը մեկ միասնական փաստաթղթում: Կողիֆիկացման գործընթացում հաշվի են առնվում միջպետական հարաբերությունների արդեն առկա պրակտիկան, նախադեպերը և դոկտրինները: Կողիֆիկացիան կարող է լինել ճյուղային կամ ներճյուղային:

Միջազգային իրավունքի առաջադիմական զարգացման տակ հասկացվում է միջազգային իրավունքով դեռ չկարգավորված կամ թերի կարգավորված միջազգային հարաբերությունների որոշակի խմբի կարգավորմանն ուղղված նոր միջազգային իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման գործընթացը:

Միջազգային իրավունքի կողիֆիկացիայի և առաջադիմական զարգացման հարցում կարևոր դեր է խաղում ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը: Հանձնաժողովը նպատակ ունի աջակցել միջազգային իրավունքի առաջադիմական զարգացմանը և դրա կողիֆիկացմանը: Իր գործունեության ընթացքում հանձնաժողովը մշակել է միջազգային իրավունքի տարբեր ճյուղերին վերաբերող մեծ թվով միջազգային իրավական ակտերի նախագծեր:

Կողիֆիկացման առավել էական արդյունքները ձեռք են բերվել միջազգային պայմանագրերի, միջազգային կազմակերպությունների, դիվանագիտական, մարդասիրական իրավունքի ոլորտներում: Հաճախ կողիֆիկացիան զուգորդվում է միջազգային իրավունքի առաջադիմական զարգացմամբ:

§ 4. Միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցությունը

Միջազգային և ներպետական (ազգային) իրավունքները գործում են տարբեր ոլորտներում, լինելով ինքնուրույն իրավական համակարգեր, որոնց միջև գոյություն ունի բարդ փոխգործողություն:

Ներպետական և միջազգային իրավունքի հարաբերակցության վերաբերյալ կան երկու հիմնական մոտեցումներ՝ դուալիստական և մոնիստական: *Դուալիստական* տեսությունը միջազգային և ներպետական իրավունքները համարում է որպես միանգամայն տարբեր, միմյանցից մեկուսացված և զուգահեռ գործող համարժեք իրավական համակարգեր: *Մոնիստական* մոտեցումը միջազգային և ներպետական իրավունքներն ընդունում է որպես իրավունքի միասնական համակարգի բաղադրյալներ և այդ միասնության մեջ առաջնությունը տալիս է նշված բաղադրյալներից որևէ մեկին: Այսինքն՝ գոյություն ունեն մոնիստական մոտեցման երկու՝ միջազգային իրավունքին կամ ներպետական իրավունքին առաջնություն տվող տարբերակներ:

Կարևոր նշանակություն ունի միջազգային և ներպետական իրավունքի փոխազդեցության խնդիրը: Ներպետական իրավունքը երկակի ազդեցություն է գործում միջազգային իրավունքի վրա: Նախ, դա ներպետական իրավունքի բովանդակության ազդեցությունն է միջազգային իրավունքի նորմերի վրա. պետությունները, ստեղծելով միջազգային իրավական նորմը, ձգտում են հաշվի առնել իրենց ներքին օրենսդրության դրույթները: Միջազգային իրավունքի վրա ներպետականի ազդեցությունը դրսևորվում է նաև այն եղանակների միջոցով, որոնցով պետությունն արտահայտում է իր համաձայնությունը միջազգային իրավունքի նորմերին: Միջազգային պայմանագրերի վավերացման կարգը նախատեսվում է ներպետական օրենսդրությամբ: Միջազգային իրավունքի՝ ներպետական օրենսդրության վրա ազդեցության վերաբերյալ պետք է նշել, որ միջազգային իրավական նորմերի իրացումը հաճախ պահանջում է ներպետական նորմերի փոփոխում՝ դրանք պետության միջազգային իրավական պարտավորությունների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Այն դեպքում, երբ ներպետական օրենսդրության և միջազգային

իրավունքի դրույթների միջև առկա է հակասություն, պետությունը պարտավոր է կատարել իր ստանձնած միջազգային իրավական պարտավորությունը: Բազմաթիվ երկրների օրենսդրական ակտերում սահմանված է սկզբունք, ըստ որի, եթե միջազգային պայմանագրերում նախատեսված կանոնները չեն համընկնում ներպետական նորմերին, ապա պետք է կիրառվեն միջազգային պայմանագրի կանոնները: Դա նախատեսված է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (հոդվ. 6), որտեղ նշված է. «Վավերացված միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը»: Սակայն միջազգային իրավունքի նորմերի ազդեցությունը ներպետական իրավունքի վրա անսահմանափակ և բացարձակ չէ: Սահմանադրության մույն հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության անունից կնքված պայմանագրերը կիրառվում են միայն վավերացումից հետո, իսկ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո:

Միջազգային և ազգային իրավունքի փոխգործողության խորացումը կանխորոշվում է հասարակական կյանքի միջազգայնացմամբ:

Միջազգային իրավունքով պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքին համապատասխան, իր իշխանությունն իրականացնելիս, այդ թվում՝ օրենքներ և վարչական կանոններ ընդունելիս, պետությունները հաշվի են նստում իրենց միջազգային պարտավորությունների հետ: Մինևույն ժամանակ, պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը յուրաքանչյուր պետությանն թույլ է տալիս ազատ ընտրել իր իրավական համակարգը և, հետևաբար, որոշել իր իրավունքի՝ միջազգային իրավունքի հետ փոխգործողության կարգը: Դա նշանակում է, որ միջազգային իրավունքը պետությունների վրա դնում է պարտավորություններ, իսկ երկրի ներսում դրանց իրացման կարգը որոշվում է ազգային իրավունքով, եթե այլ բան սահմանված չէ միջազգային իրավական նորմում:

Միջազգային իրավունքի նորմերի՝ ազգային իրավունք մուտք գործելու գործընթացը սովորաբար անվանում են *տրանսֆորմացիա*՝

նկատի ունենալով միջազգային իրավունքի նորմերի փոխակերպվելը ազգային իրավունքի նորմերի: Ընդ որում, նորմը պահպանում է իր բովանդակությունը, սակայն դրա ձևը երբեմն փոփոխվում է: Ուստի, երբեմն խոսում են նաև *ինսյլենենդացիայի*, այսինքն՝ միջազգային իրավունքի նորմը ազգային իրավունք ներմուծելու մասին :

Տրանսֆորմացիան կարող է լինել՝

- ընդհանուր. պետությունը սահմանում է, որ իր ընդունած միջազգային իրավական բոլոր նորմերը կամ միայն դրանց որոշակի տեսակները ազգային իրավունքի մաս են,
- անհատական. յուրաքանչյուր նորմը կամ նորմերի խումբը ազգային իրավունք է ներմուծվում հատուկ ակտով,
- ուղղակի. պայմանագրի կանոնները կիրառվում են ազգային իրավունքի համակարգի շրջանակներում: Սակայն որպեսզի միջազգային իրավունքի նորմը կարողանա կիրառվել որպես երկրի իրավունքի մաս, այն պետք է լինի ինքնակատարվող, այսինքն՝ ձևակերպված լինի այնպես, որպեսզի պիտանի լինի անմիջական կիրառման համար,
- միջնորդավորված. պայմանագրի հիման վրա ընդունվում է պայմանագրի բովանդակությունը վերարտադրող ազգային նորմատիվ ակտ:

Ինսյլենենտացիայի հատուկ տեսակ է *հղումը*, երբ օրենքում ասված է, որ դրա այս կամ այն դրույթները կիրառվելու են որոշակի պայմանագրին համապատասխան կամ, որ սահմանված դեպքերում պետք է կիրառվի որոշակի պայմանագիր:

Ներմուծվելով ազգային իրավունք՝ միջազգային իրավունքի նորմերը դրանում զբաղեցնում են հատուկ դիրք: Երկրի իրավական համակարգի մի մասը լինելով՝ դրանք կիրառվում են նրա նպատակներին և սկզբունքներին համապատասխան, ինչպես նաև նրա կողմից սահմանված պրոցեսուալ կարգով:

ԳԼՈՒԽ 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

§ 5. Միջազգային իրավունքի աղբյուրները

Ինչպես նշեցինք, միջազգային իրավունքի նորմերը ստեղծվում են միջազգային իրավունքի սուբյեկտների, նախ և առաջ՝ պետությունների կամարտահայտության համաձայնեցման միջոցով: Միջազգային իրավական գործընթացների արդյունքում ձևավորված նորմերն ամրագրվում են միջազգային իրավունքի աղբյուրներում:

Միջազգային իրավունքի աղբյուրները այն ձևերն են, որոնց միջոցով արտահայտվում և ամրագրվում են միջազգային իրավական նորմերը: Միջազգային իրավունքի աղբյուրների ցանկը շարադրված է ՄԱԿ-ի Միջազգային դատարանի ստատուտում՝ միջազգային պայմանագրում, որի մասնակիցներ են աշխարհի գրեթե բոլոր պետությունները: Ստատուտի 38-րդ հոդվածում ասվում է, որ դատարանն իրեն հանձնված վեճերը լուծելիս կիրառում է.

- ա) միջազգային պայմանագրերը,
- բ) միջազգային սովորույթները,
- գ) քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքները,
- դ) դատական վճիռները և հանրային իրավունքի հարցերով առավել որակյալ մասնագետների դոկտրինները՝ որպես օժանդակ միջոցներ:

Անհրաժեշտ է նշել, որ որոշ դեպքերում միջազգային կազմակերպությունների և կոնֆերանսների որոշումները և բանաձևերը նույնպես միջազգային իրավունքի աղբյուրներ են:

Միջազգային իրավունքի նշված աղբյուրներից հիմնականն են՝ միջազգային պայմանագիրը և միջազգային իրավական սովորույթը: Միջազգային իրավունքի ծագման և զարգացման սկզբնական փուլերում սովորույթն այն գլխավոր միջոցն էր, որի օգնությամբ ամրագրվում էին միջազգային շփման ձևավորվող կանոնները: Սակայն, սկսած 19-րդ դարի վերջից, սովորույթն աստիճանաբար տեղը զիջեց պայմանագրին, և արդի միջազգային իրավունքի նորմերի հիմնական մասն ամրագրված է միջազգային պայմանագրերում:

Միջազգային պայմանագիրը կայացած ակնհայտ համաձայնությունն է միջազգային իրավունքի սուբյեկտների միջև, նրանց փոխադարձ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Միջազգային պայմանագրերը կնքվում ու կատարվում են որոշակի կանոնների հիման վրա, որոնց համակցությունը կոչվում է միջազգային պայմանագրերի իրավունք: Վերջինի նորմերն ու սկզբունքները ձևակերպված են *Վիեննայի 1969թ. Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին կոնվենցիայում*: Ըստ այդ համաձայնագրի՝ գոյություն ունի միջազգային պայմանագրերի կնքման որոշակի կարգ: Պետության անունից միջազգային պայմանագիր կնքելու իրավունքը սովորաբար վերապահվում է պետության ղեկավարին կամ նրա հանձնարարությամբ՝ պետության այլ ներկայացուցիչներին: Երկկողմ միջազգային պայմանագրերը, որպես կանոն, կնքվում են երկկողմ բանակցությունների արդյունքում, իսկ բազմակողմ պայմանագրերը՝ միջազգային կոնֆերանսներում (համաժողովներում): Պայմանագրի կնքման ընթացքի ավարտը կախված է դրանում ամրագրված պայմաններից, որոնցով կարող են նախատեսված լինել պայմանագրի ստորագրումը, վավերացումը կամ հաստատումը:

Արդեն ստորագրված պայմանագիրը պետական իշխանության բարձրագույն մարմնի կողմից հաստատման գործողությունը կոչվում է վավերացում: Վավերացման իրավունքով օժտված պետական մարմինների ցանկը և կարգը որոշվում է պետության սահմանադրական ակտերով: Հայաստանի Հանրապետությունում այդ լիազորությամբ օժտված է Ազգային ժողովը, որը ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «վավերացնում կամ չեղյալ է հայտարարում Հայաստանի Հանրապետության պայմանագրերը»:

Հաստատման ենթակա են այն պայմանագրերը, որոնց համար կողմերը վավերացում չեն նախատեսում: Հայաստանի Հանրապետության միջկառավարական պայմանագրերը ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ վավերացնում է հանրապետության նախագահը:

Կնքելուց հետո օրակարգի հարց է դառնում պայմանագրի ուժի մեջ մտնելը: Դա այն պահն է, որից հետո պայմանագիրը սկսում է գործել որպես իրավաբանական ակտ: Մինչ այդ պայմանագրի մասնակիցը պարտավոր չէ կատարել այն: Ուժի մեջ է մտնում դրանում

նշված պահին: Պայմանագիրը գործում է մինչև նշված ժամկետի սպառումը կամ որոշակի իրադրության վրա հասնելը: Ժամկետային պայմանագրերից բացի, կան նաև անժամկետ պայմանագրեր: Անժամկետ պայմանագիրը կարող է դադարեցվել մասնակիցների փոխադարձ համաձայնությամբ:

Միջազգային իրավունքը չի սահմանում պայմանագրի պարտադիր ձև: Պետություններն իրավունք ունեն այն ընտրել իրենց հայեցողությամբ: Չևր չի ազդում պայմանագրի պարտադիր ուժի վրա: Գոյություն ունեն երկու հիմնական ձևեր՝ գրավոր և բանավոր: Վերջինս հաճախ կոչում են «ջենտլմենական համաձայնություն»: Գերապատվությունը, սակայն, տրվում է գրավոր պայմանագրերին:

Միջազգային պայմանագրերի անվանման հարցում նույնպես գոյություն չունեն հստակ կանոններ: Միջազգային պայմանագիրը լայն հասկացություն է, որը ներառում է բոլոր միջազգային համաձայնագրերը: Առավել տարածված են պայմանագրերի հետևյալ անվանումները՝ պայմանագիր, դաշնագիր, համաձայնագիր, կոնվենցիա, ստատուտ, կանոնադրություն: Միատեսակ բովանդակության ակտերը հաճախ տարբեր անվանումներ ունեն: Միջազգային պայմանագրերն ունեն որոշակի կառուցվածք և, որպես կանոն, բաղկացած են երեք հիմնական մասերից՝ նախաբան (պրեամբուլա), կենտրոնական (բովանդակային) մաս և եզրափակիչ մաս: Նախաբանում հաստատագրվում են պայմանագրի կնքման շարժառիթներն ու դրա նպատակները: Պայմանագրի կենտրոնական մասում շարադրվում է դրա բովանդակությունը: Եզրափակիչ մասում նշվում է պայմանագրի՝ ուժի մեջ մտնելու և դադարեցման կարգը, գործողության ժամկետը: Բանի որ պայմանագիրը փոխկապակցված նորմերի միասնական համակարգ է, ուստի դրա բոլոր դրույթները պարտադիր են մասնակիցների համար և ենթակա են կատարման:

Միջազգային պայմանագրերը դասակարգվում են տարբեր չափանիշներով: Ըստ սուբյեկտների թվի՝ դրանք լինում են երկկողմ և բազմակողմ: Ըստ կարգավորման առարկայի՝ տարբերում են քաղաքական (դաշինքի, փոխօգնության, հաշտության, հավաքական անվտանգության, չհարձակման, անվտանգության պայմանագրեր և այլն), տնտեսական (առևտրական, ապրանքաշրջանառության և վճարումների մասին, վարկային, տեխնիկական օգնության պայման-

նագրեր և այլն), գիտության և մշակույթի հարցերով (գիտության, սոցիալական և հումանիտար բնույթի համաձայնագրեր) և վարչաիրավական պայմանագրեր (իրավական օգնության, հանցագործներին հանձնելու և այլ հարցերով):

Պայմանագրին միանալու կարգի տեսանկյունից տարբերում են փակ և բաց պայմանագրեր: Փակ են այն պայմանագրերը (հիմնականում՝ երկկողմ), որոնք չեն նախատեսում դրան այլ պետությունների միանալու հնարավորություն: Բաց պայմանագրերը երրորդ պետություններին իրավունք են վերապահում միանալ դրանց կամ դրանց առանձին դրույթներին:

Միջազգային պայմանագրերի խնդիրներին ավելի մանրամասն կանոնադրադաշտ ստորև, միջազգային պայմանագրերի իրավունքին նվիրված գլխում:

Միջազգային իրավունքի մյուս հիմնական աղբյուրը միջազգային սովորույթն է:

Միջազգային սովորույթը: Որպես միջազգային իրավունքի աղբյուր դիտվող միջազգային (միջազգային իրավական) սովորույթը միջազգային շփման պրակտիկայում տարերայնորեն ծագող միջազգային իրավունքի նորմերի գոյության ձև է, որը գրավոր չէ: Միջազգային իրավական սովորույթը միջազգային ասպարեզում պետությունների համանման գործողությունների պարբերական կրկնման հետևանքով ձևավորված վարքագծի կանոն է, որը նրանց կողմից ճանաչվում է, որպես իրավական նորմ: Վերջինը, որպես կանոն, միջազգային պրակտիկայում ձևավորվում է որոշակի ժամանակահատվածում պետությունների նույն գործողությունների պարբերական կրկնման հետևանքով: Տարերայնորեն ծագում է վարքագծի կանոն, որին պետությունները սկսում են հետևել:

«Միջազգային սովորույթը» եզրույթ է, որն օգտագործվում է ինչպես միջազգային իրավունքի հիմնական աղբյուրներից մեկի, այնպես էլ ոչ նպատակաուղղված իրավաստեղծ գործընթացի արդյունքում ծագող և ոչ գրավոր ձևով գոյություն ունեցող՝ միջազգային իրավունքի բուն նորմերի անվանման համար: Միջազգային սովորույթը միջազգային իրավունքի նորմերի որոշակի կատեգորիայի գոյության ձև է, դրանց աղբյուրը, իսկ միջազգային սովորույթի բովանդակությունը միջազգային սովորույթային իրավունքի նորմերն են:

Գրավոր ձևի բացակայությունը միջազգային սովորույթի բացարձակ հատկանիշը չէ, քանի որ կարող են կնքվել նաև բանավոր միջազգային պայմանագրեր: Սակայն դրանցում բովանդակվող նորմերը ստեղծվում են նպատակաուղղված, այն դեպքում, երբ սովորույթային նորմերը ծնվում են պրակտիկայից: Երկուսի ստեղծման առանձնահատկություններն էլ կանխորոշում են դրանց աղբյուրը՝ մի դեպքում դա միջազգային պայմանագիրն է, մյուս դեպքում՝ սովորույթը:

Միջազգային սովորույթի երեք հատկանիշները՝ ճանաչման հանրահանրությունը, կիրառման համանմանությունը և որպես իրավաբանորեն պարտադիր կանոն ճանաչումը (opinio juris) վերաբերում են ոչ այնքան միջազգային իրավունքի աղբյուրին, որքան դրա բովանդակությունը կազմող նորմին կամ նորմերին:

Առաջին երկու հատկանիշները վկայում են միայն *սովորույթային* ի հայտ գալու մասին, այսինքն՝ մի նորմի, որը պահպանվում է նպատակահարմարության ուժով, սակայն որից շեղումները և նույնիսկ ուղղակի խախտումները միջազգային իրավախախտումներ չեն համարվում և պետության կամ միջազգային իրավունքի այլ սուբյեկտի միջազգային իրավական պատասխանատվություն չեն առաջացնում: Միջազգային սովորույթում կարող է մնալ այդպիսին և երբեք էլ չվերածվել միջազգային իրավական նորմի, եթե դրա պարտադիր իրավաբանական ուժը չճանաչվի պետությունների կողմից:

Միայն վարքագծի կանոնը որպես միջազգային իրավական նորմ ճանաչելը սովորույթում դարձնում է սովորույթ: Այս հանգամանքն ընդգծված է ՄԱԿ-ի Միջազգային դատարանի ստատուտում: Այդ միջազգային իրավական ակտի 38-րդ հոդվածում նշվում է, որ դատարանը վեճերը կարգավորելիս կիրառում է «միջազգային սովորույթը, որը ճանաչվել է որպես իրավաբանական նորմ»: Անհնար է ստույգ որոշել, թե որ պահից է սկսում ուրվագծվել միջազգային իրավական սովորույթի երրորդ հատկանիշը: Միջպետական շփման անդամների ինչ-որ մասը կարող է վաղ թե ուշ իր վարքագծով լռությամբ հասկացնել միջազգային սովորույթի ճանաչման մասին:

Կարևոր խնդիր է միջազգային սովորույթի կապը միջազգային պայմանագրի հետ, որը կարող է դրսևորվել այսպես. միջազգային սովորույթը մի շարք դեպքերում ստանում է պայմանագրային ձևակերպում (հաստատվում և ամրագրվում է միջազգային պայմանագ-

րուն), միջազգային պայմանագիրը կարող է դառնալ միջազգային սովորույթ պայմանագրում չմասնակցող միջազգային իրավունքի սուբյեկտների համար, միջազգային սովորույթը կարող է ճշտումներ և լրացումներ մտցնել միջազգային պայմանագրում և նույնիսկ փոփոխել դրա որոշ դրույթները:

Ժամանակակից պայմանագրային միջազգային իրավունքի զգալի մասը կազմված է նախկինի սովորութային նորմերից: Այդ նորմերը չեն կորցրել իրենց սովորութային բնույթը դրանք ամրագրած միջազգային պայմանագրերում չմասնակցող պետությունների համար:

Իրավունքի ընդհանուր սկզբունքները հանրաճանաչ իրավաբանական կանխադրույթներ (պոստուլատներ) են, տրամաբանական կանոններ, որոնք բնորոշ են բոլոր պետությունների իրավական համակարգերին և միջազգային իրավունքին: Այդպիսի կանոններից է, օրինակ, «հատուկ նորմը վերացնում է ընդհանուր նորմը» սկզբունքը: Այս դրույթները նորմատիվ բնույթ չունեն և օգտագործվում են միջազգային իրավունքի նորմերը կիրառելիս և մեկնաբանելիս, ուստի և ամմիջականորեն պետությունների համար իրավունքներ ու պարտավորություններ չեն առաջացնում:

Միջազգային իրավական նորմերի որոշման համար օժանդակ միջոցները կոչված են բացահայտելու միջազգային իրավունքի նորմերի գոյությունը և բովանդակությունը: Միջազգային իրավունքի օժանդակ աղբյուրներ են *միջազգային դատարանների վճիռներն ու փարբեր ազգերի որակյալ իրավաբանների հետազոտությունները*: Միջազգային դատարանի ստատուտի 38-րդ հոդվածի համաձայն՝ դրանք կարևոր դեր են խաղում «որպես օժանդակ միջոց իրավական նորմերը սահմանելու» համար:

Միջազգային դատական ատյանների որոշումները մեծ նշանակություն ունեն միջազգային իրավական նորմի բովանդակությունը պարզաբանելու համար: Դրանց մեջ կարևորագույն դեր ունեն *Միջազգային արդարադատության մշտական պալատի* և *Միջազգային դատարանի* որոշումները: Որոշակի միջազգային սովորույթի գոյությունն ապացուցելու համար կարող է բավարար լինել միջազգային դատական մարմնի մեկ վճիռ, որում վկայակոչվում է այդպիսի սովորույթը: Միջազգային դատարանի որոշումների հետ մեկտեղ որպես

«*opinio juris*» (կամ դրա բացակայության) վկայություն կարող են լինել նաև դրա խորհրդատվական եզրակացությունները:

Դատական որոշումներն այն տարածված միջոցներից մեկն են, որոնք թույլ են տալիս բացահայտել միջազգային իրավունքի սովորութային նորմերի գոյությունը անկախ նրանից՝ դրանք ընդունվել են միջազգային, թե՞ ներպետական (ազգային) դատական մարմինների կողմից: Որպես այդպիսի միջոցներ կարող են օգտագործվել ոչ միայն դատարանների, այլև արբիտրաժների որոշումները:

Նշենք, որ դատական որոշումներն այնուամենայնիվ օժանդակ միջոցներ են, և այստեղ չի կարելի դրանք նույնացնել անգլո-սաքսոնական իրավական համակարգերին բնորոշ իրավունքի լիարժեք աղբյուրի՝ դատական նախադեպի հետ: Այս առումով դատական որոշումների՝ որպես օժանդակ միջոցի, դերի ճանաչումը կարելի է դիտել որպես տարբեր իրավական համակարգեր ունեցող պետությունների միջև յուրատեսակ փոխզիջման դրսևորում:

Միջազգային իրավունքի նորմը որոշելիս որպես օժանդակ միջոց կարող են կիրառվել նաև հանրային իրավունքի հարցերով տարբեր ազգերի առավել որակյալ մասնագետների դոկտրինները (գիտական աշխատություններում մշակված ուսմունքները, հայեցակետերը, տեսակետները կամ տեսությունները): Դոկտրինը զգալի դեր է խաղում միջազգային իրավունքի աղբյուրները մեկնաբանելիս: Մասնագետները գիտական աշխատություններում կարող են մշակել և ձևակերպել միջազգային իրավունքի նոր կանոններ, սակայն դրանք իրավաբանական պարտադիր ուժ չունեն, մինչև որ պետություններն այդ հարցում համաձայնության չգան և այդ կանոնները միջազգային ճանաչում չստանան:

Ներպետական դատարաններին յուրահատուկ չէ գիտական աշխատությունների օգտագործումը: Սակայն Միջազգային դատարանում գործերի քննության ընթացքում այդպիսի աշխատությունները կարող են հեշտացնել այն հանգամանքի պարզումը, թե արդյոք գոյություն ունե՞ն տվյալ գործի համար կիրառելի միջազգային սովորույթներ կամ ինչպիսի՞ն է դրանց բովանդակությունը: Նման կարգի աշխատությունները, բնականաբար, պետք է պատկանեն առավել հայտնի և փորձառու միջազգայնագետ իրավաբաններին: Այդպիսի աշխատությունների թվին կարող են դասվել ոչ միայն միջազգային ի-

րավունքի ձեռնարկները, այլև այս կամ այն միջազգային իրավական հիմնահարցերի ուսումնասիրությունները: Որպես կանոն, դրանցում բովանդակվում է որոշակի միջազգային սովորույթի գոյության պնդումը և բացահայտվում է դրա բովանդակությունը, ինչի հիմքը ինչպես տեսության, այնպես էլ միջպետական հարաբերությունների պրակտիկայի ուսումնասիրությունն է:

Միջազգային կազմակերպությունների և կոնֆերանսների որոշումները և բանաշեղծությունները: Միջազգային կազմակերպությունների որոշումները միջազգային իրավունքի աղբյուր են այն դեպքում, եթե դրանք, այդ կազմակերպությունների հիմնադիր փաստաթղթերի համաձայն, ունեն պարտադիր բնույթ և պարունակում են բազմակի կիրառական համար նախատեսված կանոններ, այն է՝ միջազգային իրավական նորմատիվ ակտեր:

Որպես միջազգային իրավունքի աղբյուրներ կարող են լինել միայն միջպետական համագործակցության ձև հանդիսացող միջկառավարական կազմակերպությունների որոշումները: Ոչ կառավարական կազմակերպությունների որոշումները ոչ մի պարագայում չեն կարող միջազգային իրավունքի աղբյուր լինել:

Կազմակերպությունների նորմատիվ, իրավաբանորեն պարտադիր ակտերը (ընթացակարգի կանոններ և այլն) միջազգային իրավունքի հիմնական աղբյուրներ չեն, սակայն ավելի և ավելի տեսանելի դեր են խաղում միջազգային կյանքում, քանի որ տեղի է ունենում միջպետական հարաբերությունների ինստիտուցիոնալացում, և աճում է միջազգային կազմակերպությունների քանակը:

Ուշադրության է արժանի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պարտադիր բանաձևերի վերաբերյալ հարցը: Անվտանգության խորհուրդը կարող է ընդունել նորմատիվ բնույթի պարտադիր բանաձևեր: Դրա առավել վառ օրինակներն են նախկին Հարավսլավիայի և Ռուսոնոսի Միջազգային տրիբունալների կանոնադրությունները, որոնք ստեղծվել են ՄԱԿ-ի Կանոնադրության VII գլխի հիման վրա:

Ժամանակակից պայմաններում սովորության նորմերի գոյությունը որոշելու օժանդակ միջոցներն են նաև միջազգային կազմակերպությունների ոչ պարտադիր որոշումները (բանաձևերը) այն դեպքում, եթե դրանք՝

- հանդես են գալիս որպես «*opinio juris*» վկայություններ,
- դրանց դրույթները վեր են ածվել սովորության նորմերի,
- գրավոր ամրագրում են սովորության նորմերի բովանդակությունը.

- սովորության նորմերի մեկնաբանություն են:

Որոշ դեպքերում խորհրդատվական բնույթի բանաձևերի դրույթները ժամանակի ընթացքում վեր են ածվում միջազգային սովորույթի: Անհրաժեշտ է ընդգծել հենց դրանց դրույթները և ոչ թե բանաձևերը, որպես այդպիսին: Առավել վառ օրինակ կարող են լինել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի դրույթները:

Պատահում են նաև այնպիսի բանաձևեր, որոնք նպատակատուղիված պատրաստվում են որպես որևէ նորմերի մեկնաբանություններ: Այդ տեսակի ամենահայտնի բանաձևը ՄԱԿ-ի Կանոնադրության համապատասխան պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքների հիմնական սկզբունքների մասին 1970 թ. հռչակագիրն է:

ԳԼՈՒԽ 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 6. Միջազգային իրավունքի չեղարկումը և զարգացումը

Հին աշխարհ: Միջազգային իրավունքը սկսել է ձևավորվել պետությունների ծագմանը և նրանց միջև հարաբերությունների զարգացմանը զուգընթաց:

Այդ հարաբերությունների առանձնահատկությունը դրանց օջախային բնույթն էր: Ի սկզբանե միջազգային հարաբերությունները և դրանք կարգավորող նորմերը զարգանում էին երկրագնդի այն շրջաններում, որտեղ ձևավորվում էր քաղաքակրթությունը և առաջանում էին միջազգային կյանքի կենտրոններ: Դրանք առաջին հերթին Տիգրիսի և Եփրատի, Նեղոսի հովիտներն էին, Չինաստանի և Հնդկաստանի, Էգեյան և Միջերկրական ծովերի շրջանները:

Իր առաջացման արշալույսին միջազգային իրավունքը հիմնականում սովորության բնույթ ուներ: Միջազգային իրավական սովորույթը միջազգային իրավունքի հիմնական աղբյուրն էր ստրկատիրական հասարակությունում: Աստիճանաբար, հնագույն պետությունների կապերն ամրապնդվելուն ու կայունանալուն զուգընթաց, սկսում են կնքվել միջազգային պայմանագրեր: Դրանց կնքումը ենթադրում էր արդեն զարգացած գրի գոյություն: Առաջին նման պայմանագրերն ի հայտ են եկել մ.թ.ա. IV և III հազարամյակների սահմանագծին, մոտ հինգ հազար տարի առաջ: Դրանք կնքում էին Շումերը, Էլամը, Լագաշը, Աքադը, Էբլան, Աբարսալենը և Միջագետքի այլ ստրկատիրական պետությունները:

Այսօր մեզ հայտնի ամենահին միջազգային իրավական ակտ է համարվում մ.թ.ա. մոտ 3100 թ. մեսոպոտամական Լագաշ և Ումա քաղաքների տիրակալների միջև կնքված պայմանագիրը: Դրանով հաստատվում էր պետական սահմանը և ընդգծվում դրա անձեռնմխելիությունը: Այդ պայմանագրի համաձայն, կողմերի վեճերը պետք է լուծվեին խաղաղ ճանապարհով՝ արբիտրաժի հիման վրա: Պայմանագրի կատարման պարտավորությունը երաշխավորվում էր աստվածներին ուղղված երդումներով:

Հայտնի գրավոր պայմանագրերից առավել ուսումնասիրված է Ռամզես II-ի պայմանագիրը խեթերի արքա Խաթուշիլ III-ի հետ մ.թ.ա. XIII դարի սկզբին: Դա խաղաղության և դաշինքի մասին պայմանագիրն էր, որը վերջ դրեց Եգիպտոսի և Խեթական քաղաքության միջև երկարատև պատերազմին: Երկու պետությունները պարտավորվում էին դադարեցնել ռազմական գործողությունները, օգնություն ցուցաբերել միմյանց ներքին և արտաքին թշնամիների դեմ պայքարում և հանձնել փախուստի դիմած ստրուկներին:

Մ.թ.ա. II – I հազարամյակներին միջազգային կյանքի առանձին կենտրոններ ծագել են Եգիպտոսի, Հնդկաստանի և Չինաստանի տարածքներում, իսկ ավելի ուշ՝ հին Հունաստանում և հին Հռոմում:

Հնագույն պետությունների արտաքին քաղաքականություն վարելու գլխավոր միջոցը պատերազմներն էին: Եգիպտոսում պատերազմի ժամանակ տիրում էր իրավաբանորեն չսահմանափակված կամայականությունը: Պարտվածները և նրանց զույքն ավարի տեսքով անցնում էին հաղթողի սեփականությանը: Հնդկաստանում պատերազմի իրավունքի սովորույթներն առավել զարգացած էին: Դրանք ամրագրվել են «Մանուի օրենքներում» և «Արթհաշաստրայում»: Սակայն, թեև պատերազմը համարվում էր իրավաչափ գործողություն, այդուհանդերձ, այն դիտվում էր անցանկալի երևույթ: Այստեղ նաև հանդիպում էին որոշակի սահմանափակումներ: Այսպես, չէր կարելի սպանել կանանց, երեխաներին, ծերերին և վիրավորներին, ինչպես նաև զերի հանձնվող անձանց: Անձեռնմխելիությունից օգտվում էին տաճարները, կրոնական այլ կառույցներն ու դրանց սպասավորները: Այդ ժամանակ արդեն իսկ գոյություն ունեին զենքի գործադրումը սահմանափակող նորմեր:

Ինչ վերաբերում է Հունաստանին, ապա այստեղ պատերազմն ընկալվում էր որպես մի պոլիսի բոլոր քաղաքացիների պայքար մյուսի բոլոր քաղաքացիների դեմ: Որոշակի զինատեսակների գործադրումը սահմանափակող նորմերի քանակն այնքան էլ մեծ չէր: Ուշագրավ է, որ որևէ թշնամական քաղաք գրավելիս՝ խաղաղ բնակիչների սպանությունը համարվում էր լիովին իրավաչափ: Հույների մոտ գոյություն չուներ «զերի» հասկացություն: Այսպես, պարտվածները կարող էին ենթարկվել տանջանքների և սպանվել, իսկ նրանց զույքը՝ ոչնչացվել: Դրա հետ մեկտեղ, Հունաստանում արդեն հայտնի էին չեզո-

քության և չմիջամտելու կարգավիճակները: Չեզոքությունը հնարավոր էր միայն պատերազմի ժամանակ, իսկ չմիջամտելը՝ նաև խաղաղ ժամանակ:

Հին հույներին հայտնի չէր մշտական դիվանագիտական ներկայացուցչության ինստիտուտը, և դեսպանություններն ավելի հաճախ միանվագ բնույթ ունեին: Դեսպաններին տրվում էին իրենց պաշտոնական կարգավիճակը հավաստող և բանակցություններ վարելուն լիազորող փաստաթղթեր: Փաստաթուղթն ուներ երկփեղկ մոմապատ փայտիկների տեսք և անվանվում էր «դիպլոմ» (այստեղից էլ ծագել է «դիպլոմատիա» (դիվանագիտություն) եզրույթը): Դեսպանների անձեռնմխելիությունը հանրաճանաչ էր, և դրա խախտումը կարող էր հանգեցնել պատերազմի:

Հին Հունաստանում գոյություն ուներ նաև օտարերկրացիների հովանավորության հատուկ ինստիտուտ՝ *պրոքսենիա*, հատուկ հավատարմատարները (*պրոքսեններ*) հովանավորում էին հունական այլ քաղաք-պետությունից ժամանած քաղաքացիներին: Վերջինները այլ օտարերկրացիների համեմատ (որոնք հնում առավելապես իրավագուրկ և արհամարհված էին), օգտվում էին որոշ իրավունքներից՝ հարկերի, առևտրի ու նավերի առնչությամբ և նույնիսկ՝ որոշ պատվավոր արտոնություններից:

Ընդարձակ էր հին Հռոմի միջազգային իրավական պրակտիկան: Սկզբնապես հարևանների հետ դիվանագիտական հարաբերություններն իրականացնում էր *ֆեդիալների* հատուկ քրմական կոլեգիան: Հետագայում դիվանագիտական հարաբերությունները պահպանվում էին աշխարհիկ դեսպանների՝ լեգատների միջոցով, որոնց իր կազմից ընտրում էր հռոմեական սենատը: Հռոմեացիները կնքում էին մեծ թվով միջազգային պայմանագրեր: Դրանց մի մասով սահմանվում էր «հավերժ» խաղաղություն և բարեկամություն, մյուսներով՝ միայն ժամանակավոր զինադադար: Գոյություն ունեին հովանավորության և միության մասին պայմանագրեր: Միության մասին պայմանագրերը լինում էին հարձակողական և պաշտպանողական: Տարբերում էին իրավահավասար և ոչ իրավահավասար պայմանագրեր: Վերջիններն ավելի մեծ թիվ էին կազմում:

Հին Հռոմի ռազմական սովորույթները դաժան էին, թեև արդեն հին հռոմեական կանոնը սահմանում էր, որ «պատերազմում են զենքով և

ոչ թե թույնով»: Թույլատրվում էր անզենների ոչնչացումը և ոչ միայն ռազմագերիների, այլև զավթված տարածքի խաղաղ բնակչության ստրկացումը, նվաճված քաղաքների ավերումը և լրիվ ոչնչացումը:

Հին հռոմեացի իրավաբաններն առաջիններն են օգտագործել «ժողովուրդների իրավունք» (*jus gentium*) եզրույթը: Այն ընդգրկում էր ինչպես պետությունների փոխհարաբերությունները, այնպես էլ հռոմեացիների և օտարերկրյա քաղաքացիների հարաբերությունները կարգավորող նորմերը: Հին հռոմեացի իրավաբան Ուլպիանոսի բնորոշմամբ, «այդ իրավունքն օգտագործում են գրեթե բոլոր ժողովուրդները»:

Ինչպես երևում է, ստրկատիրական հասարակությունում չի եղել գլոբալ միջազգային համակարգ, որը կընդգրկեր ամբողջ Հին աշխարհը, այդ պատճառով էլ չի եղել ընդհանուր միջազգային իրավունք: Միջազգային իրավական նորմերը և ինստիտուտները տարածաշրջանային բնույթ ունեին: Դրանք կազմավորվում և պետությունների միջև կիրառվում էին այդ ժամանակվա միջազգային կյանքի կենտրոններ հանդիսացող աշխարհագրական տարբեր շրջաններում և ունեին կրոնական բնույթ: Այդուամենայնիվ, արդեն այդ ժամանակ ճանաչվում էին միջազգային իրավական այնպիսի նորմեր, ինչպիսիք են դեսպանների անձեռնմխելիությունը, միջազգային պայմանագրերը կատարելու պարտականությունը, պատերազմում թույն և թունավոր զենք կիրառելու արգելքը և այլ նորմերը, որոնց շնորհիվ միջազգային իրավունքը հետագայում դարձել է համամարդկային արժեք, բոլոր ժողովուրդների մշակույթի հարստությունը:

Միջին դարեր: Միջին դարերում, ինչպես և Հին աշխարհում, չկար բոլոր պետությունների համար ընդհանուր միջազգային իրավունք: Գոյություն ունեին միջազգային կյանքի մի քանի կենտրոններ, որոնց շարքում կարևորագույններն էին Արևմտյան Եվրոպան, Բյուզանդիան, Կիևյան Ռուսը, Արաբական Արևելքը, Հնդկաստանը և Չինաստանը: Այդ դարաշրջանի միջազգային իրավունքն արտացոլում էր ֆեոդալական հասարակության առանձնահատկությունները՝ դրա զարգացման տարբեր փուլերում, սկսած ֆեոդալական պետությունների կազմավորումից և ֆեոդալական պառակտվածությունից, մինչև ներկայացուցչական և բացարձակ միապետությունները:

Միջնադարի սկիզբը նշանավորվել էր բազմաթիվ բանավոր պայմանագրերով, որոնք ուղեկցվում էին կամ երդմամբ, կամ ձեռքստեղծումով: Մակայն աստիճանաբար սահմանվում է նաև պայմանագրերի գրավոր կնքման ձևը: Դրանք ավելի հաճախ շարադրվում էին լատիներեն:

Այս դարաշրջանում ի հայտ են եկել միջազգային պայմանագրերի նոր տեսակներ՝ առևտրային, գետերով նավագնացության մասին, հյուպատոսական, արժույթային և այլ համաձայնագրեր: Ֆեոդալական պայմանագրերը հիմնականում երկկողմ գործարքներ էին, սակայն պատմությանը հայտնի է նաև բազմակողմ պայմանագրերի կնքումը: Դրանք, որպես կանոն, խաղաղության պայմանագրեր էին: Այսպես, 1648 թ. պայմանագիրը մտել է պատմության մեջ *Վեստֆալյան տրակտատ* անվանմամբ, որով ավարտվել է Երեսնամյա պատերազմը: Այդ տրակտատի հիմքում ընկած էր քաղաքական հավասարակշռության սկզբունքը, և այդ ժամանակից եվրոպական հիմնախնդիրների լուծումն իրականացվում էր ոչ թե կրոնական, այլ աշխարհիկ հիմքի վրա: Առավելագույն տարածում են ստացել միջնորդ դատարանները: Որպես արբիտր հանդես էին գալիս միապետերը, աշխարհիկ ֆեոդալները, Հռոմի պապը, դրանից բացի երբեմն կազմավորվում էին վեճի կողմերից յուրաքանչյուրից հավասար թվով մասնակիցներով կոլեգիաներ:

Դեսպանական իրավունքի ոլորտում հարկ է առանձնացնել XV դարից մշտական դեսպանությունների առաջացումը: Դեսպանների անձեռնմխելիության խախտման համար նախատեսվում էր խիստ պատասխանատվություն: Ձևավորվում էր այն մոտեցումը, որի համաձայն՝ նրանց իրավունքների և արտոնությունների հիմքը այն միապետի ինքնիշխանությունն էր, որի անունից նրանք գործում էին:

Միջնադարում ռազմական սովորույթները բավականաչափ դաժան էին: Տարբերություն չէր դրվում զորքերի և խաղաղ բնակչության միջև: Պատերազմողների կողմից նվաճված բնակավայրերը կողոպտվում էին, վիրավորները թողնվում էին բախտի քմահաճույթին: Ռազմական գործողությունների ընթացքում կիրառվում էր նվաճող կողմի «ավարի իրավունքը»:

Միջին դարերում առաջանում է միջազգային իրավունքի գիտությունը: Դրա հիմնադիրը համարվում է հոլանդացի ակադեմիկոս իրա-

վաբան Հուգո Հրոցիուսը (1583-1645 թթ.): 1625 թ. նա հրատարակեց «Պատերազմի և խաղաղության իրավունքի մասին: Երեք գիրք» վերնագրով առաջին համակարգված աշխատությունը, որը ներառեց միջազգային իրավունքի բոլոր հիմնական հարցերը: Նշված աշխատությունում և այլ գրքերում Հուգո Հրոցիուսն ընդհանրացրել և համակարգել է միջազգային իրավական պրակտիկան և այնպես է հայտնի իրավաբանների հայացքները, ինչպես էլ իսպանացի Վիտորիան և Սուարեցը, իտալացի Ջենթիլին, ֆրանսիացի Ժան Բոդենը և այլն:

Իր աշխատություններում Հուգո Հրոցիուսը ներկայացրել է միջազգային իրավունքի համակարգված շարադրանք, որպես իրավունքի հատուկ բնագավառի, որը գործում է ինչպես խաղաղության, այնպես էլ պատերազմի ժամանակ: Նրա կողմից մշակվել են պատերազմի օրենքները և սովորույթները, այդ թվում՝ պատերազմի ժամանակ մասնավոր սեփականության անձեռնմխելիության սկզբունքը, մարդասիրական նորմեր՝ ռազմագերիների և վիրավորների, պատերազմի ժամանակ հանցագործությունների համար պատիժների վերաբերյալ:

Հուգո Հրոցիուսը հատուկ ուշադրությամբ է շարադրել միջազգային պայմանագրերի մասին ուսմունքը, հիմնավորել է իրավահավասար և ոչ իրավահավասար պայմանագրերի տարբերությունը, միջազգային պարտավորությունների պահպանման անհրաժեշտությունը, զարգացրել է դեսպանական իրավունքը, դեսպանների անձեռնմխելիության և արտերկրայնության սկզբունքները:

Հրոցիուսից հետո և զգալի չափով նրա աշխատությունների ազդեցության ներքո, որոնցում համակցվում էին իրավունքի բնաիրավական և պոզիտիվիստական ըմբռնումները, միջազգային իրավունքի գիտությունում ձևավորվել են երեք հիմնական ուղղություններ՝ *բնաիրավականը*, *պոզիտիվիստականը* և *հրոցիանականը*:

Առաջին ուղղության ներկայացուցիչներ Հոբսը, Սպինոզան, Պուֆենդորֆը համարում էին, որ միջազգային իրավունքն ամբողջությամբ խարսխված է աստվածային կամքի վրա, իսկ պայմանագրերը միայն գրանցում են բնական իրավունքի նորմերը: Երկրորդ ուղղության ներկայացուցիչներ Չյոչը, Ռահելը և Մոզերն ընդհակառակը՝ միջազգային իրավունքին էին դասում միայն միջազգային պայմանագ-

րերում ամրագրված նորմերը: Երրորդ ուղղությունն ընդգրկում էր այս երկու մոտեցումները: Դրա ներկայացուցիչներն են Վատելը, Բեյնկերսհուլը, Մարտենսը: Այս ուղղությունն ավելի կենսունակ գտնվեց :

Դասական միջազգային իրավունք: 1648 թ. հոկտեմբերի 24-ին ստորագրված Վեստֆալյան տրակտատը ձևակերպեց նախկինում գոյություն չունեցած նոր միջազգային իրավական սկզբունքներ, որոնք հաջորդ երկու հարյուրամյակում դարձան գերակայող՝ քաղաքական հավասարակշռության, հոգևոր իշխանությունից աշխարհիկ իշխանության անկախության, պետությունների հավասարության սկզբունքները: Այն ձևակերպեց նաև ճանաչման հռչակագրային տեսությունը, նախատեսեց ազդեցությունների դեմ հավաքական միջոցների կիրառում, վեճերի լուծման խաղաղ միջոցները, փոփոխություններ մտցրեց գետերի իրավական ռեժիմում, վերափոխեց հյուպատոսների կարգավիճակը և այլն: Տրակտատը նախապատրաստեց անցումը միջազգային իրավունքի զարգացման պատմության որակապես նոր փուլին, որն անվանվում է «դասական միջազգային իրավունք»:

Համաշխարհային շուկայի կազմավորումը, միջազգային առևտրի, տնտեսական, տեխնիկական և միջազգային այլ կապերի ու հաղորդակցության միջոցների լայն զարգացումը հանգեցրել է միջազգային պայմանագրերի, հատկապես կապի, հաղորդակցության ուղիների, սանիտարիայի հարցերով բազմակողմ համաձայնագրերի քանակի ավելացման: Դրանց հիմքի վրա առաջացել են առաջին միջազգային կազմակերպությունները՝ *Միջազգային հեռագրային միությունը* (1865 թ.), *Համաշխարհային փոստային միությունը* (1874 թ.), և *Միջազգային երկաթուղային միությունը* (1886 թ.):

Բարդանում էր առևտրային պայմանագրերի և հյուպատոսական կոնվենցիաների բովանդակությունը, զգալիորեն ավելացել էր դրանց քանակը: Առաջացել էին պայմանագրերի նոր տեսակներ (իրավական օգնության մասին, հանձնման մասին, արտոնագրերի և հեղինակային իրավունքների մասին): Բազմակողմ պայմանագրերից շատերը նախատեսում էին նոր պետությունների՝ դրանց միանալու հնարավորությունը՝ ի տարբերություն ֆեոդալական դարաշրջանի փակ բազմակողմ պայմանագրերի:

Աստիճանաբար ներմուծվելով միջպետական հարաբերությունների ամենատարբեր ոլորտներ՝ միջազգային պայմանագիրը դառնում

է միջազգային իրավունքի հիմնական (սովորույթի հետ մեկտեղ), իսկ հետագայում նաև գլխավոր աղբյուրը:

Ձևի առումով միջազգային պայմանագրերը ձեռք են բերում լիովին ժամանակակից տեսք: Վերանում է լիազորված անձանց տարբեր տիտղոսների, տարբերանշանների և շքանշանների՝ ֆեոդալական պայմանագրերի համար բնութագրական մանրամասն թվարկումը: Երկկողմ պայմանագրերը, որպես կանոն, սկսել են կազմվել երկու կողմերի լեզուներով, իսկ բազմակողմները՝ ֆրանսերեն և ավելի ուշ՝ անգլերեն:

Փոփոխվել է միջազգային պայմանագրերի վավերացման ընթացակարգը: Եթե նախկինում վավերացման իրավունքը պատկանում էր միապետին, ապա, խորհրդարանական կարգերի առաջացմանը զուգահեռ, պետությունների սահմանադրությունները սկսել են պահանջել առավել կարևոր պայմանագրերի նախնական հավանություն խորհրդարանների կողմից: Վերացել են միջազգային պայմանագրերի ապահովման հին միջոցները՝ երդումը, պատանդները, Հռոմի պապերի երաշխավորությունը, արժեքների գրավը: Հիմնական միջոցներ են դարձել տարբեր միջազգային երաշխիքներ, երրորդ պետությունների երաշխավորությունը և տարածքի օկուպացիան:

Տարածքային նվաճումներն ամրագրվում էին համապատասխան միջազգային ակտերում: XIX դարի վերջին գաղութային նվաճողականության հատուկ օբյեկտ էր դարձել Աֆրիկան (տե՛ս 1885 թ. Բեռլինի կոնֆերանսի *Եզրափակիչ ակտը՝ Աֆրիկայի բաժանման մասին*): Դրանում նաև սահմանվել են տարածքի ձեռքբերման նպատակով առաջնային օկուպացիայի նոր կանոններ, այն պետք է լինի իրական և ոչ թե անվանական, ինչպես նախկինում էր (արդյունավետության սկզբունքը) և ճանաչվի այլ պետությունների կողմից (նոտիֆիկացիայի կանոնը):

Զգալիորեն աճել է ոչ իրավահավասար պայմանագրերի քանակը՝ Ասիայի և Լատինական Ամերիկայի երկրների հետ՝ որպես գաղութային կախվածության սահմանման և պահպանման ձևեր:

Պետությունների պատերազմի իրավունքը նախկինի պես օրինականացված էր, որպես նրանց միջազգային իրավասուբյեկտության կարևորագույն և անօտարելի տարր: Ռազմական ուժի գործադրումը

դիտուում էր որպէս պետութիւնների միջև վեճերի լուծման օրինական միջոց:

Պատերազմի միջոցով իրականացված անեքսիաները համարվում էին պետական տարածքի ձեռքբերման օրինական եղանակ: Անեքսիաների հետ սերտորեն փոխկապված էին կոնտրիբուցիաները (տուրքը, որը հաղթողն իրավունք ուներ դնել պարտվածների վրա, և որի չափն ամբողջությամբ կախված էր հաղթող պետության հայեցողությունից):

Միջազգային իրավունքի պատմության այս ժամանակաշրջանը կապված է պետությունների ինքնիշխան հավասարության գաղափարի զարգացման և բնական իրավունքի հայեցակարգերի վրա հիմնված՝ միջազգային իրավունքի նոր սկզբունքների և նորմերի հաստատման հետ:

Այս ժամանակաշրջանում պետության ինքնիշխանությունը սկսում է կապվել ժողովուրդների ինքնիշխանության հետ: Ժողովուրդները (խոսքը, սակայն, գաղութացված ազգերի մասին չէր) և, հետևաբար, պետությունները անկախ են և իրավահավասար, օժտված մի շարք հիմնական իրավունքներով և ազատություններով: Առաջ են քաշվում միջազգային կյանքի, միջպետական հարաբերությունների նոր գաղափարներ, սկզբունքներ:

Իրականացվում է պատերազմ վարելու կանոնների մարդասիրականացում: Դրա սկիզբը դրվել է Պետերբուրգում 1868 թ. ընդունված *Պայքուցիկ զնդակների արգելման մասին կոնվենցիայով*:

Բնական իրավունքի գաղափարների ազդեցության տակ նորովի են սկսել լուծվել պետությունների միջև տարածքային փոփոխությունների հարցերը, մասնավորապես, փոխանցվող տարածքի բնակչության քվեարկության արդյունքների՝ հանրաքվեի հիման վրա:

Միջազգային իրավական զարգացմանն էապես օժանդակել են մի շարք միջազգային կոնգրեսներ և կոնֆերանսներ:

Այսպես, Վիեննայի 1814-1815 թթ. կոնգրեսը նախատեսեց Շվեյցարիայի մշտական չեզոքությունը, նպաստեց ստրկավաճառության արգելմանը, դիվանագիտական իրավունքի զարգացմանը, միջազգային զենքերի կարգավիճակի սահմանմանը: Փարիզի 1856 թ. կոնգրեսը վերացրեց կապերությունը՝ պատերազմող պետությունների, ինչպես նաև չեզոք երկրների նավերի զավթումը, կողոպտումը կամ խորտա-

կումը, չեզոքացված հայտարարեց Սև ծովը: Բեռլինի 1878 թ. կոնգրեսը նշանավորվել է Սերբիայի, Չեռնոգորիայի, Ռումինիայի անկախության հավաքական ճանաչմամբ, կրոնի և հավատի տարբերությունների ուժով՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքներից օգտվելու, հանրային պաշտոններ վարելու հարցում որևէ խտրականության անթույլատրելիության սկզբունքի հռչակմամբ:

§ 7. Ժամանակակից միջազգային իրավունքի կայացումը

Ժամանակակից միջազգային իրավունքի ձևավորման գործընթացը: Նոր միջազգային իրավունքի ձևավորման սկիզբ կարող ենք համարել 1919 թ. Վերսալի պայմանագիրը և Ազգերի լիգայի ստեղծումը: Դրա զարգացման ճանապարհին կարևոր իրադարձություն եղավ 1928 թ. Փարիզի խաղաղության (Բրիան-Քելլոգի) պայմանագիրը, որն արգելեց պատերազմը, որպես ազգային քաղաքականության գործիք: Երկրորդ համաշխարհային պատերազմում հակահիտլերական կռաւիցիայի երկրների հաղթանակը, Թեհրանի, Յալթայի, Պոտսդամի և միջազգային այլ կոնֆերանսների որոշումներով, ՄԱԿ-ի Կանոնադրությունը (1945 թ.) և Նյուրնբերգում Միջազգային տրիբունալի դատավճռով (1946 թ.) ավարտվել է միջազգային իրավունքի նոր պատմական տեսակի ստեղծման գործընթացը:

Նոր գաղափարները և սկզբունքները ժամանակակից միջազգային իրավունքի կայացման հիմքն էին: Միջազգային իրավական կարևորագույն սկզբունքներին են դասվում ազդեցիկ պատերազմի արգելման սկզբունքը, նման պատերազմի հանցավորության սկզբունքը, բոլոր ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, պետությունների իրավահավասարության սկզբունքը՝ անկախ նրանց սոցիալական, տնտեսական և քաղաքական համակարգերից, ոչ իրավահավասար և հարկադրաբար կնքված պայմանագրերի անվավերության սկզբունքը, մարդու սոցիալ-տնտեսական իրավունքները հարգելու սկզբունքը:

Միջազգային իրավունքի վրա մեծ ազդեցություն են թողել Առաջին համաշխարհային պատերազմը և Ազգերի լիգայի կազմավորումը: Առաջին անգամ պատմության ընթացքում ստեղծվել է միջազգային խաղաղության պահպանման և միջազգային իրավունքի նորմերի ի-

րացման համընդհանուր միջազգային կազմակերպություն: Կարևոր իրադարձություն էր նաև Միջազգային արդարադատության մշտական պալատի, այսինքն՝ լիգային առընթեր միջազգային դատարանի ստեղծումը:

Ազգերի լիգայի Ստատուտը մեծ առաջընթաց էր միջազգային իրավունքի զարգացման ճանապարհին: Թեև Ստատուտը չէր արգելում պատերազմին դիմելը, սակայն էականորեն սահմանափակում էր պետությունների այս իրավունքը և նախատեսում էր նման սահմանափակումը խախտած պետության դեմ պատժամիջոցների կիրառման հնարավորությունը:

Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում միջազգային իրավունքում առավել խոշոր իրադարձությունն էր 1928 թ. Բրիանի-Քելլոգի պակտի կնքումը: Պատմության ընթացքում առաջին անգամ կնքվել էր ընդհանուր բազմակողմ պայմանագիր, որով արգելվել է դիմել պատերազմի՝ պետությունների միջև հարաբերություններում և սահմանվել է, որ պետությունների միջև բոլոր վեճերը պետք է լուծվեն խաղաղ միջոցներով: Այդ պայմանագրի նորմերը շուտով դարձել են բոլոր պետությունների համար պարտադիր ընդհանուր միջազգային իրավունքի նորմեր:

Երկրորդ համաշխարհային պատերազմը, հակահիտլերական կռաւիցիայի հաղթանակը, Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումը նշանավորել են միջազգային իրավունքի զարգացման նոր, ժամանակակից փուլի ձևավորումը:

Դումբարտոն-Օքսում (1944 թ.) և Սան Ֆրանցիսկոյում (1945 թ.) մշակվել են ՄԱԿ-ի Կանոնադրության հիմնական դրույթները, որը և ստորագրվել է 1945 թ. հունիսի 26-ին: ՄԱԿ-ի Կանոնադրությունն ամրագրել է միջազգային իրավունքի սկզբունքները և որոշել է ունիվերսալ անվտանգության համակարգի կազմակերպատիրավական կառուցակարգը:

Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Կանոնադրությունը ոչ միայն զարգացրեց միջազգային իրավունքի՝ գոյություն ունեցող ժողովրդավարական սկզբունքները, այլև ներմուծեց մի շարք նոր հիմնարար սկզբունքներ, ինչպես օրինակ՝ պետությունների հարաբերություններում ուժ կամ ուժի սպառնալիք չգործադրելու սկզբունքը,

բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, բոլոր պետությունների իրավահավասարության սկզբունքը, մարդու հիմնական իրավունքները և ազատությունները հարգելու սկզբունքը:

ՄԱԿ-ի Կանոնադրությունը դարձել է ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական պայմանագրային փաստաթուղթը: ՄԱԿ-ի Կանոնադրությանը համապատասխան, ստեղծվել է միջազգային իրավունքի նորմերի իրացման միջազգային կառուցակարգ, ավելի արդյունավետ, քան Ազգերի լիգայի համակարգը: Դրա կարևորագույն օղակներն են ՄԱԿ-ի *Անվտանգության խորհուրդը* և ՄԱԿ-ի *Միջազգային դատարանը*:

Անվտանգության համընդհանուր (ունիվերսալ) համակարգը լրացվել է տարածաշրջանային համակարգերով՝ Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպություն (ՆԱՏՕ), Վարշավյան պայմանագրի կազմակերպություն, Ամերիկյան պետությունների կազմակերպություն և այլն: Այդ կազմակերպությունները, չնայած «սառը պատերազմին» և 50-60-ական թթ. միջազգային լարվածության սրմանը, մեծ դեր են խաղացել գլոբալ զինված հակամարտությունների կանխարգելման գործում:

Անցած դարի 70-ական թվականները նշանավորվել են միջազգային լարվածության թուլացմամբ և տարածաշրջանային, նախ և առաջ՝ եվրոպական ինտեգրման գործընթացի բուռն զարգացմամբ: Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության Եզրափակիչ ակտը (Հելսինկի, 1975 թ.) սկիզբ դրեց տարբեր դաշինքների պատկանող եվրոպական պետությունների մերձեցմանը, վստահության միջոցների համակարգի կայացմանը:

1960-1970-ական թվականներին իրականացվել է միջազգային իրավունքի կողմնակցման լուրջ աշխատանք: Այդ ժամանակ, մասնավորապես, կնքվել են միջազգային պայմանագրերի իրավունքի, պետությունների իրավահաջորդության, մարդու իրավունքների, դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի, տիեզերական իրավունքի մասին և այլ կոնվենցիաներ:

Միջազգային հարաբերություններում լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել 1990-ական թվականներին: Նախկին ԽՍՀ Միության փլուզումից հետո առաջացել են նոր ինքնուրույն պետություններ, ստեղծվել է Անկախ պետությունների համագործակցությունը: ԽՍՀ

Միության գոյության դադարմամբ և սոցիալիստական համակարգի փլուզմամբ Եվրոպայում և Ասիայում լուրջ միջազգային հակամարտությունների օջախներ բռնկվեցին:

Ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական գծերը:

Դասական միջազգային իրավունքի համեմատ ժամանակակից միջազգային իրավունքը կարող է համարվել նոր միջազգային իրավունք: Դա նախ և առաջ կապված է միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների և ինստիտուտների փոփոխության հետ, որոնք որոշում են դրա էությունը:

Դասական միջազգային իրավունքը թեև եղել է զգալիորեն ավելի առաջադեմ, քան ֆեոդալականը, սակայն շարունակում էր ըստ էության մնալ ուժեղի իրավունք. այն ճանաչում էր այլ պետությունների հետ հարաբերություններում ուժ գործադրելու՝ պետության իրավունքը, պետության՝ պատերազմի իրավունքը, որոշ սահմանափակումներով ճանաչում էր ուժով ձեռքբերվածը:

Ժամանակակից միջազգային իրավունքն ընդհակառակը՝ արգելում է պատերազմի դիմելը, ուժ կամ ուժի սպառնալիք գործադրելը: Պետությունները իրենց վեճերը պետք է լուծեն միայն խաղաղ միջոցներով:

Հին միջազգային իրավունքը բովանդակում էր նորմեր և ինստիտուտներ, որոնք գաղութացման գործիք էին, իրավաբանորեն անբարձրում էին գաղութատիրական ռեժիմը և ժողովուրդների կախվածության ու շահագործման այլ ձևերը: Դրանց թվում էին նվաճման իրավունքը, գաղութները, պրոտեկտորատները, ազդեցության ոլորտները, ոչ իրավահավասար պայմանագրերը:

Ժամանակակից միջազգային իրավունքում ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը հիմնականներից է: Միջազգային իրավունքը պահպանում է ժողովուրդների ազատությունն ու անկախությունը և գաղութատիրությունը հայտարարում օրենքից դուրս:

Հին միջազգային իրավունքը գերազանցապես քաղաքակիրթ կամ քրիստոնյա պետությունների իրավունք էր: Աֆրիկայի և Ասիայի հսկայական մայրցամաքները, նրանց ժողովուրդները միջազգային հարաբերությունների և միջազգային իրավունքի սուբյեկտներ չէին: Գաղութատիրական համակարգի փլուզման հետևանքով ընդլայնվել

է միջազգային իրավունքի գործողության տարածքային ոլորտը: Այս իմաստով այն դարձել է համաշխարհային իրավունք:

Միջազգային իրավունքում հսկայական իրադարձություն եղավ դրանում մարդու իրավունքների ինստիտուտի ի հայտ գալը: Հին միջազգային իրավունքը պետության ինքնիշխանությունը համարում էր անանցանելի անջրպետ, որից այն կողմ մարդը մնում էր պետության լիակատար ենթակայության ներքո: Բացառությունները վերաբերում էին ազգային փոքրամասնություններին: Ժամանակակից միջազգային իրավունքը անհատին «վերցրել է» իր պաշտպանության տակ: Միջազգային իրավունքի համաձայն, պետությունը պարտավոր է ապահովել իր տարածքում բնակվող բոլոր մարդկանց հիմնական իրավունքները և ազատությունները:

Միջազգային իրավունքի ամրապնդման համար էական նշանակություն ունեն դրանում իմպերատիվ նորմերի (jus cogens) ճանաչումը, որոնցից պետություններն իրավունք չունեն հետ կանգնել՝ փոխադարձ համաձայնությամբ:

XX դարում միջազգային իրավունքը հսկայական առաջընթաց ունեցավ դասական միջազգային իրավունքի համեմատ: Նոր միջազգային իրավունքը համամարդկային արժեք է, պետությունների շփման յուրահատուկ լեզու, համաշխարհային մշակույթի կարևորագույն տարրերից մեկը: Սակայն, արդեն XXI դարի իրողությունները, մարդկության առջև ծառայած բազում հիմնախնդիրները և ճգնաժամերը, արդի դարաշրջանի նոր մարտահրավերները թելադրում են միջազգային իրավունքի շարունակական զարգացման անհրաժեշտությունը:

§ 8. Հայաստանի պայմանության միջազգային իրավական ակնարկ

Հին աշխարհ և միջին դարեր: Հայաստանը մարդկության քաղաքակրթության հնագույն օրրաններից է: Մեր բազմադարյա պատմությունը օտարերկրյա նվաճողներին հայ ժողովրդի երկարատև դի-

¹ Սույն պարագրաֆը շարադրելիս օգտագործվել են Կ.Գևորգյանի գիտական հետազոտությունների նյութերը:

մադրության, ինչպես նաև հայկական հողերին տիրելու համար տարբեր տերությունների չղադարող դիվանագիտական պայքարի վառ վկայությունն է: Անկախ պետականության գոյության կարճ ժամանակահատվածներին փոխարինելու էին գալիս արյունալի պատերազմները: Հաճախ հայ ժողովուրդը հայտնվում էր համաշխարհային քաղաքականության կենտրոնում՝ դառնալով Արևելքի և Արևմուտքի խոշորագույն պետությունների քաղաքական շահերի հանգուցաքարը:

Պատմական թատերաբեմում հայ ժողովրդի ի հայտ գալը կապվում է մարդկության զարգացման այն ժամանակաշրջանի հետ, երբ դեռ չկային այժմ գոյություն ունեցող շատ ժողովուրդներ և միայն սաղմնավորվում էր հին անտիկ քաղաքակրթությունը: Մեր թվարկությունից առաջ II հազարամյակով թվագրված խեթական սեպագիր աղբյուրներում բովանդակվում է հայկական էթնոսի կազմավորման գործում մեծ դեր խաղացած Հայասա-Ազգի ցեղային միության («երկիր Հայասա») մասին հիշատակումը: Հայագետների հետազոտությունները հաստատում են «հայ» ինքնանվանման ծագումը Հայասա երկրի և այն բնակեցնող ժողովրդի՝ հայասների անվանումից:

Ասորական արքաների սեպագրերը Նաիրի երկրի՝ «ընդարձակ, անհնազանդ և անծանոթ երկրի» մասին էին (մ.թ.ա. XIV-X դդ.), որը Հայկական լեռնաշխարհում մեծաթիվ ցեղերի միություն էր:

Սկսած մ.թ.ա. IX դարից, ասորական սեպագրերում հիշատակվում է Հայկական լեռնաշխարհի այլ պետական կազմավորում՝ Ուրարտու պետությունը: Ուրարտացիները վճռորոշ դեր են խաղացել նաիրական ցեղերը Ուրարտու հզոր կենտրոնացված պետության (մ.թ.ա IX-VI դդ.) մեջ միավորելու գործում, որը հին-արևելյան բռնապետության տիպիկ օրինակ էր: Պատմական աղբյուրները վկայում են Ուրարտու պետության հարուստ միջազգային փորձի մասին: Այդպիսի օրինակ կարող է ծառայել մ.թ.ա. VII դարում հարևան Ասորեստանի հետ բարեկամական հարաբերությունների հաստատումը, որոնք դրսևորվել են փոխադարձ չեզոքությամբ և փոխօգնությամբ:

Ուրարտական թագավորության փլատակների վրա մ.թ.ա VI դարում առաջանում է Երվանդունիների գահատոհմի հիմնադիր՝ Երվանդ արքայի գլխավորած հին հայկական պետությունը: Երվանդունիների հին հայկական պետությունը կախվածության մեջ ընկնելով

ժամանակին բարեկամական Մեդիայից, հետագայում դարձել է Աքեմենյանների հզոր պարսկական թագավորության սատրապություններից մեկը:

Պարսկական թագավորության անկումը հանգեցնում է մ.թ.ա. IV դարի վերջին Հայաստանի անկախության վերականգնմանը, որի տարածքում առաջանում են երկու ինքնուրույն պետություններ՝ Մեծ Հայքը և Փոքր Հայքը: Ավելի ուշ՝ մ.թ.ա. III դարի առաջին կեսին, Հայկական լեռնաշխարհում առաջանում է ևս մեկ ինքնուրույն պետություն՝ Ծովքի հայկական թագավորությունը:

Մ.թ.ա. 189 թ. Մեծ Հայքի տիրակալ Արտաշեսը հռչակեց իրեն Արտաշես I թագավոր՝ դառնալով հայ թագավորների նոր՝ Արտաշիսյան գահատոհմի հիմնադիր, որոնց անվան հետ է կապված դեռ Երվանդունիների գահատոհմի ներկայացուցիչների կողմից սկսված՝ հայկական հողերի միավորման և ուժեղ հայկական պետության ստեղծման գործընթացի ավարտը: Արտաշես I-ը իր գահակալության ընթացքում հաջողվեց ընդլայնել պետության տարածքը՝ Մեծ Հայքին միացնելով Հայկական լեռնաշխարհի հարավային հատվածները՝ բացառությամբ Ծովքի: Ամրապնդվել է նաև հայկական պետության դիրքը միջազգային ասպարեզում: Այդպիսի օրինակ կարող է ծառայել Փոքր Ասիայի պատերազմող պետությունների միջև խաղաղություն կնքելիս Արտաշես թագավորի՝ միջնորդի դերում հանդես գալը: Փաստորեն, աճած հզորության և հեղինակության շնորհիվ Հայաստանը դառնում է միմյանց միջև պատերազմող հարևանների «արքիտորը»: Բնութագրական է նաև այն, որ հենց թագավորի ձեռքում էին կենտրոնացված արտաքին քաղաքական հիմնական գործառույթները՝ պատերազմ հայտարարելը, խաղաղության պայմանագրեր, հարձակվողական և պաշտպանական դաշինքներ կնքելը, բազմակողմ պայմանագրերում իր պետությունը ներկայացնելը:

Հայկական պետականության պատմության տարեգրության մեջ ոսկե տառերով է գրված Արտաշիսյան գահատոհմի մեկ այլ ներկայացուցիչ՝ Տիգրան II Մեծի (մ.թ.ա. 95-55 թթ.) գահակալության դարաշրջանը: Նվաճումների արդյունքում հայ թագավորի տիրույթներն ընդգրկում էին Ասիայի գրեթե ամբողջ արևմտյան մասը՝ սփռվելով Կասպից ծովից մինչև Միջերկրական ծով և Կուր գետից մինչև Միջազգային Տիգրան II-ը կարողացավ իր իշխանությանը ենթարկել

շատ հարևան պետությունների և ժողովուրդների՝ Իբերիան և Ադվանքը հյուսիսում, ինչպես նաև քաղաքիվ արաբական ցեղեր հարավում: Գոյատևելով երկու տասնամյակ՝ Տիգրան Մեծի հսկայական կայսրությունը տրոհվեց: Պատճառը ներքին տարածայնություններն էին և որպես դրանց հետևանք՝ Հռոմի դեմ պատերազմում համախմբվելու անկարողությունը: Հայ-հռոմեական պատերազմի արդյունքը եղավ խաղաղության պայմանագիրը (մ.թ.ա. 66 թ.), որի համաձայն՝ Տիգրան II թագավորը հրաժարվեց իր բոլոր նվաճումներից հոգուտ Հռոմի և պարտավորվեց վճարել հսկայական ռազմատուգանք (կոնտրիբուցիա): Սակայն պահպանվում էր Հայաստանի ամբողջականությունը:

Մինչև առաջին դարի կեսերը Հայաստանը, փաստորեն, գտնվում էր հռոմեացիների վասալական ենթակայության ներքո: Սկսած առաջին դարի երկրորդ կեսից՝ Հայաստանում նկատելի է դառնում ուժեղացած Պարթևական թագավորության ազդեցությունը: Հայպարթևական յուրօրինակ դաշինքի արդյունք էր պարթևական թագավորների թագավորող գահատոհմի ներկայացուցիչ, Արշակունյաց նոր գահատոհմի (66-428 թթ.) հիմադիր Տրդատի բազմելը հայկական գահին: Արշակունյաց գահատոհմի գահակալության ժամանակը հանրակ է հայ ժողովրդի պատմության այնպիսի նշանավոր իրադարձությունների հետ, ինչպիսիք են քրիստոնեության ընդունումը և հայկական գրերի գյուտը, որոնք վերջնական արդյունքում դարձել են ազգային ինքնության պահպանմանը նպաստող գործոններ:

Տևական հռոմեա-պարսկական պատերազմները հաջողությամբ չեն պսակվել և վերջնական արդյունքում բերել են 387 թ. Սասանյան Պարսկաստանի և Արևելյան Հռոմեական կայսրության (Բյուզանդիա) միջև Հայաստանի բաժանմանը: Շուտով՝ բյուզանդական (Արևմտյան) Հայաստանը դարձել է հռոմեական նահանգներից մեկը, իսկ պարսկական (Արևելյան) Հայաստանի քաղաքական անկախությունը պահպանվեց մինչև 428 թ.-ը, երբ գահընկեց արվեց Արշակունյաց գահատոհմի վերջին ներկայացուցիչը, ինչի արդյունքում Արևելյան Հայաստանը վեր է ածվել պարսկական պետության վարչական միավորի՝ *մարզպանության*:

Հայկական արևմտյան և արևելյան տարածքների անջատ գոյությունը շարունակվեց մինչև VII դարի արաբական արշավանքները:

րը: VIII դարի սկզբին նրանք ամբողջությամբ նվաճեցին Հայաստանը:

Այդ ժամանակաշրջանում նկատելիորեն ուժեղանում է ժողովրդական դիմադրությունը գլխավորած առանձին նախարարական տների և հատկապես՝ Բագրատունյաց տան դերը:

Հայաստանի անկախության վերականգնումը կապված է Բագրատունյաց տան իշխան Աշոտի անվան հետ: Չնավորված հանգամանքներում արաբական խալիֆը ստիպված էր բավարարել հայ իշխանների պահանջը և 885թ. ճանաչել Աշոտին Հայաստանի թագավոր: Արաբական խալիֆայության օրինակին հետևեց նաև Բյուզանդիան: Հայկական գահին բազմեց Բագրատունիների գահատոհմը: Բագրատունյաց գահատոհմի ողջամիտ պետական քաղաքականությունը ապահովեց Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային բարգավաճումը, էապես ամրապնդեց նրա միջազգային հեղինակությունը: Հայ թագավորները բարեկամական հարաբերություններ հաստատեցին հարևան պետությունների (Վրաստանի, Ադվանքի, Աբխազական թագավորության) հետ: Բյուզանդական կայսրության հետ սերտ համագործակցությունը դրսևորվեց *հայ-բյուզանդական սոնտրային պայմանագրի* (893 թ.) կնքմամբ, որի համաձայն, Հայաստանը դառնում էր Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության միջև տարանցիկ առևտրի գլխավոր կենտրոնը, ինչը հսկայական չափով նպաստում էր երկրի տնտեսական աճին:

Կենտրոնացված հայկական պետության բացակայության պայմաններում չկար ուժեղ արտաքին թշնամուն արժանի դիմադրություն ցույց տալու հնարավորություն: Արդյունքում, բյուզանդացիների ճնշման տակ 1045 թ. կործանվեց Բագրատունիների մայրաքաղաք Անին: Երկար դարերի ընթացքում հայ ժողովուրդը զրկվեց բուն Հայաստանում անկախ պետականություն վերականգնելու հնարավորությունից:

Բագրատունյաց պետության անկումից հետո հայկական առանձին թագավորություններ և իշխանություններ որոշ ժամանակով պահպանեցին հարաբերական անկախությունը՝ վերածվելով կիսանկախ պետականանման կազմավորումների, սակայն դրանք առանձնակի նշանակություն ու քաղաքական կշիռ չունեին և չէին կարող հանդես գալ հայկական հողերը վերամիավորողների դերում:

Դեռ արաբական տիրապետության ժամանակաշրջանում մեծ քվով հայեր, լքելով հայրենիքը, բնակություն են հաստատել Միջերկրական ծովի ափին՝ Կիլիկիայում: Հաջորդող դարերի ընթացքում, հատկապես սելջուկների արշավանքների շրջանում, հայերի գաղթը դեպի Կիլիկիա մեծացավ:

Կիլիկիայում հայկական պետությունը ստեղծվել է 1080 թ., այն հիմնադրել է Ռուբինյանների գահատոհմը:

Կիլիկյան հայկական պետության պատմությունն ընդունված է բաժանել երկու ժամանակաշրջանի՝ մեծ իշխանության ժամանակաշրջան (1080-1198 թթ.) և թագավորության ժամանակաշրջան (1198-1375 թթ.):

Մի քանի տասնամյակների ընթացքում Ռուբինյան գահատոհմի հիմնադիր Ռուբեն իշխանը և նրա հաջորդները հարկադրված էին պաշտպանել իրենց անկախությունը՝ բյուզանդացիների, սելջուկների և խաչակիրների դեմ անհավասար պայքարում:

Սկսած XIII դարի 60-ական թվականներից, եգիպտական մամլուկները կատարում էին արշավանքներ Կիլիկիայի տարբեր շրջաններ՝ իրական վտանգ ստեղծելով հայկական պետության գոյության համար: Չրկվելով մոնղոլների աջակցությունից՝ Կիլիկյան պետությունը հարկադրված էր միայնակ դիմակայել եգիպտական մամլուկների արշավանքներին: Այդպիսի դրությունը շարունակվում էր մինչև 1375 թ., երբ նրանց հարվածների տակ դադարեց իր գոյությունը գրեթե երեքհարյուրամյա Կիլիկյան հայկական պետությունը:

XIV դարի վերջին – XV դարի սկզբին հայկական շրջանները ենթարկվում էին Լեւոն Թեմուրի կործանարար արշավանքներին, որոնք ուղեկցվում էին աննկարագրելի վայրագություններով և կողոպուտով՝ դրանով իսկ ավելի վատթարացնելով հայ ժողովրդի դրությունը:

Շուտով նա հարկադրված եղավ բախվել նոր սպառնալիքի՝ ի դեմս օսման-թուրքերի և նոր պարսից նվաճողների: XVI դարի սկզբից ավելի քան հարյուրամյակի ընթացքում Հայաստանը դառնում է օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի արյունահեղ բախումների թատերաբեմ: Թուրք-պարսկական երկարատև պատերազմների արդյունքը եղավ XVII դարի առաջին կեսին Հայաստանի նոր բաժանումը: Պարսկաստանին անցավ Արևելյան Հայաս-

տանը, իսկ Թուրքիային՝ Արևմտյանը: Այդ դրությունը պահպանվեց մինչև XIX դարի սկիզբը:

XIX դարի սկզբին Հայաստանը հայտնվեց երեք տերությունների՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի պայքարի կենտրոնում: Պարսկաստանի դեմ 1826-1828 թթ. պատերազմում հաղթանակը և, որպես դրա հետևանք, *Թուրքմենչայի խաղաղության պայմանագրի* (1828 թ. *փետրվարի 10* (22)) կնքումը Ռուսաստանին ամրագրեցին Արևելյան Հայաստանի հիմնական շրջանները: Պայմանագրի համաձայն, Ռուսաստանին են միացվել Երևանի և Նախիջևանի խանությունները, Օրդուբադի գավառը:

Թուրքական իրականության դաժան պայմաններում Արևմտյան Հայաստանի ժողովուրդը շարունակում էր իր անկախության համար պայքարը: Թուրքիայի լծից Արևմտյան Հայաստանի ազատագրման գաղափարը XIX դարի վերջին և XX դարի սկզբին ամբողջ հայ ժողովրդի ազգային շարժման բովանդակությունն էր:

Առաջին հանրապետություն: 1914 թ. հուլիսի 19-ին (օգոստոսի 1-ին) սկսվել է Առաջին համաշխարհային պատերազմը, որը լուրջ փորձություն էր ամբողջ մարդկության համար և վճռորոշ եղավ մեծ ու փոքր ժողովուրդների համար: Այն ողբերգական հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար, որը XX դարի առաջին ցեղասպանության գոհը դարձավ:

1915-1916 թթ. Կովկասյան ճակատում գործող ռուսական բանակը, հայ կամավորական ջոկատների ակտիվ մասնակցությամբ, կարողացավ զբաղեցնել Արևմտյան Հայաստանի մեծ մասը:

Հնկտեմբերյան հեղափոխությունը կտրուկ փոխեց Ռուսաստանում և Կովկասում պատմական իրադարձությունների ընթացքը: Իշխանության եկած խորհրդային կառավարությունը բռնեց Ռուսաստանը Առաջին համաշխարհային պատերազմից դուրս բերելու ուղին: Ռազմաճակատը սկսեց քայքայվել, ռուս զինվորները զանգվածաբար լքում էին դիրքերը և վերադառնում տուն:

Ելնելով խորհրդային իշխանության մի շարք փաստաթղթերում ամրագրված բոլշևիկների ազգային քաղաքականության սկզբունքներից՝ 1917 թ. դեկտեմբերի 29-ին (1918 թ. հունվարի 11-ին) Ժողովրդական կոմիսարների խորհուրդն ընդունեց «*Թուրքահայաստանի մասին*» *դեկրետը*, որում ասվում էր, որ «Ռուսաստանի Բանվորա-

կան և Գյուղացիական Կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայ բնակչության ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախությունը»: Սակայն, արևմտահայերի ճակատագրին միջամտելու՝ Խորհրդային Ռուսաստանի փորձը հաջողությամբ չպսակվեց:

Արդեն 1918 թ. հունվարի վերջին թուրքական բանակը, օգտվելով ռուսական բանակը դուրս բերելու հետևանքով Կովկասյան ռազմաճակատի քայքայումից, սկսեց առաջխաղացումը Անդրկովկասի ուղղությամբ: 1917թ. դեկտեմբերին *Բրեստ-Լիտվսկում* սկսվեցին Խորհրդային Ռուսաստանի բանակցությունները Գերմանիայի և նրա դաշնակիցների հետ: Բանակցություններն ավարտվեցին 1918 թ. մարտի 3-ին, խաղաղության պայմանագրի ստորագրմամբ: Պայմանագրով Ռուսաստանը պարտավորվում էր ապահովել «Արևելյան Անատոլիայի» մարզերի շուտափույթ հանձնումը, դրանց կանոնակարգված վերադարձը Թուրքիային: Բացի այդ, ռուսական զորքերը պետք է դուրս գային նաև Արդահանի, Ղարսի և Բաթումի շրջաններից, և Ռուսաստանը չպետք է միջամտեր այդ շրջանների պետաիրավական և միջազգային իրավական հարաբերությունների նոր կազմակերպմանը:

1918 թ. փետրվարի 10-ին (23-ին) Թիֆլիսում գումարվեց *Անդրկովկասյան սեյմը*՝ Անդրկովկասում պետական իշխանության բարձրագույն մարմինը: Սեյմը չճանաչեց Բրեստ-Լիտվսկի խաղաղության պայմանագիրը՝ հույս ունենալով թուրքական կառավարության հետ անմիջական բանակցությունների միջոցով կնքել ավելի ձեռնտու պայմաններով խաղաղության պայմանագիր:

Թուրքական բանակի առաջխաղացումը շարունակվում էր: Ի վիճակի չլինելով դիմագրավել թուրքական ագրեսիային՝ Անդրկովկասյան սեյմն ստիպված էր ընդունել թուրքական պատվիրակության կողմից նախապես ներկայացված պայմանները:

1918 թ. ապրիլի 9-ին (22-ին) հռչակվեց *Անդրկովկասի Դեմոկրատիական Ֆեդերատիվ Հանրապետությունը*, իսկ մեկ օր անց Թուրքիայի կովկասյան բանակի հրամանատարությանը հայտնվեց սեյմի կողմից Բրեստ-Լիտվսկի պայմանագրի պայմաններն ընդունելու մասին:

Չնայած շարունակվող խաղաղ բանակցություններին, թուրքական զորքերը ներխուժեցին Հայաստան և, չհանդիպելով լուրջ դիմադրության, հասան Երևանի մատույցներին: 1918 թ. մայիսի 22-ից 28-ն ընկած ժամանակահատվածում Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերում հայ ժողովուրդը կանգնեցրեց թուրքական բանակի հետագա առաջխաղացումը՝ կանխելով Երևանի, Արարատյան դաշտավայրի, Սևանի ավազանի զավթումը և դրանով իսկ պաշտպանեց իր գոյության իրավունքը:

1918 թ. մայիսի 26-ին Վրաց Ազգային խորհուրդը հռչակեց Վրաստանի անկախությունը: Մեկ օր անց նույնանման որոշում ընդունեց Ադրբեջանի Ազգային խորհուրդը:

1918 թ. մայիսի 28-ին Հայոց Ազգային խորհուրդը որոշեց Բաթում ուղարկել պատվիրակություն՝ ընձեռնելով նրան բացառիկ լիազորություն՝ բանակցություններ վարելու և կնքելու խաղաղության պայմանագիր *անկախ* Հայաստանի անունից: Դրանով իսկ Ազգային խորհուրդը, փաստորեն, արձանագրեց Հայաստանի անկախությունը, իսկ արդեն մայիսի 30-ին հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, որում ասվում էր. «...Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական մարզերում գերագույն և միակ իշխանությունը... Հայոց Ազգային խորհուրդը ժամանակավորապես իր վրա է վերցնում կառավարման բոլոր գործառույթները...»: Բաթումում հայ-թուրքական բանակցություններն ավարտվեցին *Խաղաղության և բարեկամության մասին պայմանագրի* ստորագրմամբ (1918 թ. հունիսի 4-ին): Պայմանագրով Հայաստանը ոչ միայն զրկվում էր իր տարածքի զգալի մասից, այլև, փաստորեն, ընկնում էր կախվածության մեջ:

Հայաստանի անկախության հռչակումից հետո առաջին իսկ ամիսներին Հայաստանը սկսեց կապեր հաստատել արտաքին աշխարհի հետ: Առաջին պետությունը, որի հետ Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց, Վրացական Ժողովրդավարական Հանրապետությունն էր: 1918 թ. հուլիսին նշանակվել է Վրաստանի կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը, իսկ նույն թվականի հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր իր դիվանագիտական ներկայացուցիչն է նշանակել Վրաստանը: Օգոստոսի կեսին Երևան է ժամանել Հայաստանում Թուր-

քիայի դիվանագիտական ներկայացուցիչը, իսկ 1918 թ. սեպտեմբերին նշանակվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Լիտվական պետության ներկայացուցիչը: Տարվա վերջին Հայաստանն ուներ իր ներկայացուցիչը այն ժամանակ Թուրքիայի կողմից Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի), ինչպես նաև Ուկրաինայում: Հայաստանը և Ադրբեջանը դիվանագիտական ներկայացուցիչներ են փոխանակել միայն 1919 թ. սկզբին:

Անտանտայի տերությունների հաղթանակը ոգևորություն հաղորդեց հայերին՝ արթնացնելով հաղթող տերությունների կողմից իրենց նախապատերազմական խոստումների և հռչակագրերի շուտափույթ կատարման հույսը: Նրանց հայ ժողովրդի պահանջները հասցնելու և 1919 թ. հունվարին Փարիզում բացված խաղաղ կոնֆերանսում նրա շահերը պաշտպանելու նպատակով այնտեղ է ուղարկվել Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, Փարիզյան խաղաղ կոնֆերանսում քննարկվել են նաև հայերի պահանջները: 1919 թ. «Չորսի խորհուրդը» որոշում ընդունեց Հայաստանի մանդատը հանձնել Ամերիկայի Միացյալ Նահանգներին: Մանդատի կատարման պայմանները շարադրված էին ԱՄՆ-ի և Հայաստանի միջև հատուկ համաձայնագրի նախագծում: Իսկ հուլիսին Փարիզի խաղաղ կոնֆերանսում որոշում է ընդունվել Հայաստանում դաշնակիցների գերագույն հանձնակատար նշանակել ԱՄՆ բանակի գնդապետ Հասկելին: Մակայն ԱՄՆ Սենատը, հաշվի առնելով ներքաղաքական և արտաքին քաղաքական մի շարք հանգամանքներ, 1920 թ. հունիսի 1-ին վերջնականապես մերժեց Հայաստանի մանդատի ընդունումը:

1920 թ. հունվարի 19-ին Անտանտի գերագույն խորհուրդը (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա) «de facto» ճանաչեց Հայաստանի կառավարությունը՝ հատուկ վերապահում կատարելով, որ «տվյալ ճանաչումը չի կանխորոշում այդ պետության ապագա սահմանների հարցը»:

Այդ ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունը եղավ 1920 թ. օգոստոսի 10-ին Սևրում (Փարիզի մոտ) Անտանտի տերությունների ու նրանց միացած պետությունների (այդ թվում՝ Հայաստանի) և Թուրքիայի միջև խաղաղության պայմանագրի ստորագրումը:

Սահմանելով Թուրքիայի հետպատերազմական սահմանները՝ Սևրի խաղաղության պայմանագիրը բովանդակում էր նաև Հայաստանին վերաբերող մի շարք հողվածներ (88-96): Այդ հողվածների հիմնական բովանդակությունը հետևյալն էր: Թուրքիան ճանաչում էր Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն, Թուրքիայի և Հայաստանի միջև Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում սահմանները վերապահվում էին ԱՄՆ նախագահի միջնորդ որոշմանը, եթե սահմանի որոշումը կրերի հիշյալ վիլայեթների ամբողջ տարածքի կամ դրա մի մասի փոխանցմանը Հայաստանին, Թուրքիան պարտավորվում էր անմիջապես հայտարարել նշված տարածքների նկատմամբ իր բոլոր իրավունքներից և առավելություններից հրաժարվելու մասին:

1920 թ. Թուրքիան, մտադրություն ունենալով իրականացնել զավթողական պլանները և հասնել Սևրի պայմանագրի վերացմանը, հարձակում սկսեց Հայաստանի վրա: 1920 թ. նոյեմբերի 18-ին պատերազմող պետությունների միջև կնքվեց զինադադար՝ հայկական կողմի համար ծայրահեղ ծանր պայմաններով: Դրանից մի քանի օր անց սկսվեցին հայ-թուրքական խաղաղ բանակցությունները:

1920 թ. նոյեմբերի 29-ին բոլշևիկյան Հայաստանի հեղափոխական կոմիտեն հատեց հայ-ադրբեջանական սահմանը և մտավ Իջևան: Նույն օրը Հայիեղկոնը հրապարակեց Հայաստանը Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն հայտարարելու մասին հռչակագիրը: Մեկ օր անց հանրապետության կառավարությանն առաջարկվեց իշխանությունը փոխանցել Հեղկոնին:

Հաշվի առնելով երկրի ներսում ստեղծված դրությունը՝ Հայաստանի կառավարությունը որոշեց իշխանությունը հանձնել բոլշևիկներին: 1920 թ. դեկտեմբերի 2-ին ՌԽՖՍՀ և Հայաստանի Հանրապետության միջև կնքվեց համաձայնագիր, որով Հայաստանը հայտարարվում էր անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետություն:

Նույն օրը, Հայաստանը սոցիալիստական խորհրդային հանրապետություն հռչակելուց հետո, ավարտվեցին Հայաստանի դաշնակցական կառավարության և քեմալականների խաղաղ բանակցությունները: Դրանց արդյունքը եղավ Ալեքսանդրապոլում խաղաղ պայմանագրի կնքումը: Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանը զրկվեց իր տարածքի մեծ մասից՝ սահմանափակվելով Արարատյան

դաշտավայրով և Սևանա լճի ավազանով: Էականորեն կրճատվում էր հայկական բանակի թվակազմը: Հայաստանի կառավարությունը համաձայնվում էր չեղյալ ճանաչել Սևրի պայմանագիրը, ինչպես նաև պարտավորվում էր Եվրոպայից և Ամերիկայից հետ կանչել իր պատվիրակությունները: Սակայն Հայաստանի Հեղկոմը չճանաչեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը՝ այն հայտարարելով ապօրինի:

1920 թ. դեկտեմբերի 4-ին Հայաստանի Հեղկոմը և Կարմիր բանակը մտան Երևան:

ԽՍՀՄ կազմում Հայաստանի իրավական կարգավիճակը: Հեղկոմի ահաբեկման քաղաքականությունը դարձել է Հայաստանում 1921 թ. փետրվարին հակաբոլշևիկյան ապստամբության պատճառը: Այն սկսվեց ապստամբների կողմից Քեշիշքենդի, Դարալագյազի, Նոր Բայազետի զբաղեցմամբ, իսկ հետագայում տարածվեց նաև այլ վայրերում՝ Աշտարակում, Էջմիածնում, Բաշ-Գառնիում, Ապարանում: Փետրվարի 18-ին ապստամբները մտան Երևան: Մայրաքաղաքում կազմավորվեց «Հայրենիքի փրկության կոմիտեն», որին անցավ ապստամբների զբաղեցրած շրջաններում գերագույն իշխանությունը: Սակայն ապստամբները չկարողացան իրենց ձեռքում պահել իշխանությունը: Մինչև ապրիլի կեսերը խորհրդային իշխանությունը վերականգնվել էր ապստամբների զբաղեցրած բոլոր շրջաններում:

Հայաստանում փետրվարյան ապստամբության ժամանակ Մոսկվայում տեղի ունեցավ խորհրդային-թուրքական կոնֆերանսը, որն ավարտվեց 1921 թ. մարտի 16-ին, ՌԽՖՍՀ և Թուրքիայի միջև բարեկամության և եղբայրության մասին պայմանագրի ստորագրմամբ: Պայմանագրի պայմաններով Ղարսի, Արդահանի և Արդվինի շրջաններն անցնում էին Թուրքիային, Բաթումը՝ Վրաստանին, Նախիջևանն անցնում էր Ադրբեջանի խնամակալության (սյրոտեկտորատի) ներքո այն պայմանով, որ վերջինս չի զիջի այն երրորդ պետությանը (երրորդ պետության տակ հասկացվում էր Հայաստանը): Խորհրդային Հայաստանին վերադարձվում էր Ալեքսանդրապոլ քաղաքը և գավառը:

Այսպիսով, խորհրդային իշխանության հաստատումից հետո, ներքաղաքական և արտաքին-քաղաքական մի շարք պատճառներ

ով, Հայաստանը կրկին կորցրեց իր տարածքի զգալի մասը՝ պահպանելով միայն չնչին մասը:

1922 թ. դեկտեմբերի 30-ին ԽՍՀՄ Խորհուրդների I համագումարը հաստատեց *Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության* ստեղծման մասին հռչակագիրը և պայմանագիրը:

Հայկական ԽՍՀ-ն անկախ և ինքնուրույն չէր միջազգային հարաբերություններում, իսկ արտաքին քաղաքականության բնագավառում իր շահերին առնչվող հարցերի լուծումը մնում էր համամիութենական մարմինների իրավասությունը: ԽՍՀՄ-ում գոյություն ունեցող կառավարման խիստ կենտրոնացված համակարգը, որը ներթափանցում էր հանրապետությունների հասարակական-քաղաքական կյանքի գրեթե բոլոր ոլորտները և, որպես դրա հետևանք, հանրապետական մարմինների նկատմամբ միութենականների ղեկավար և ուղղություն տվող դերը բացահայտել են անհամապատասխանությունը՝ Հայաստանի որպես ինքնիշխան խորհրդային սոցիալիստական պետության, սահմանադրորեն ամրագրված կարգավիճակի և նրա իրական դրության միջև, ինչը ցույց էր տալիս հանրապետության ինքնիշխանության ղեկավարատիվ բնույթը:

Նման դրությունը պահպանվում էր ընդհուպ մինչև այն ժամանակը, երբ հայ ժողովուրդը բռնեց անկախ պետականության կառուցման ուղին:

Անկախության հռչակումը և Հայաստանի Հանրապետության ճանաչումը որպես միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ: XX դարի 90-ական թվականների սկիզբը նշանավորվել է աշխարհի քաղաքական քարտեզի էական փոփոխություններով, որոնք, մասնավորապես, բազմազգ խորհրդային պետության տրոհման և նախկին միութենական հանրապետությունների տեղում նոր ինքնիշխան պետությունների կազմավորման հետևանք էին:

Հայ ժողովրդի անկախության առաջին քայլերը եղան 1990 թ. Հայաստանի Գերագույն խորհրդի ժողովրդական պատգամավորների ընտրությունները, որոնք ավարտվեցին ժողովրդավարական ուժերի հաղթանակով և հանրապետության ինքնիշխանության ու անկախության հռչակմամբ: 1990 թ. օգոստոսի 23-ին հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց *Հայաստանի անկախության մասին հռչակագիրը*: Հռչակագրով Հայաստանի Հանրապետություն

նր հռչակվում էր պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ և լիիրավությամբ օժտված ինքնիշխան պետություն: Այդ փաստաթղթում նաև ընդգծվում էր, որ Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, իրականացնում է անկախ արտաքին քաղաքականություն, ուղղակի հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը:

Մեկ օր անց հանրապետության օրենսդիր մարմինն ընդունեց «Հայկական ԽՍՀ վերանվանման մասին» օրենքը, որի համաձայն, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն:

Սակայն հռչակագրի ընդունման հետևանքով ծագեց յուրահատուկ իրավիճակ. այդ կարևոր ծրագրային փաստաթղթի դրույթների իրացմանը խոչընդոտում էր Հայաստանի՝ միութենական հանրապետության կարգավիճակը:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ 1991 թ. մարտի 1-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշեց Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացնել հանրաքվե՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին, քվեարկության դնելով հետևյալ հարցը՝ «Համաձայն եք դուք, որպեսզի Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն՝ ԽՍՀՄ կազմից դուրս»: Անհրաժեշտ է ընդգծել, որ հանրապետության Գերագույն խորհրդի նշված որոշումն ընդունվել է «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» 1990 թ. ապրիլի 3-ի ԽՍՀՄ օրենքի պահանջներին լիովին համապատասխան, ինչն ապացուցում էր իշխանությունների կողմից՝ ԽՍՀՄ-ից անջատման օրինական ճանապարհի ընտրությունը:

1991 թ. սեպտեմբերի 21-ին անցկացված հանրաքվեում ԽՍՀՄ կազմից դուրս անկախ ժողովրդավարական Հայաստանի օգտին քվեարկեց հանրաքվեի մասնակիցների 99,31 տոկոսը կամ ընտրական իրավունք ունեցող բնակչության 94,39 տոկոսը:

Հիմք ընդունելով հանրաքվեի արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1991 թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետությունը հռչակեց անկախ պետություն:

Հայաստանի Հանրապետության՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի, կայացման համար կարևոր նշանակություն է ունեցել այլ պետությունների կողմից նրա ճանաչումը: Դեռ սեպտեմբերյան հանրաքվեից առաջ՝ 1991 թ. հուլիսին և օգոստոսին, Հայաստանի անկախությունը ճանաչել են համապատասխանաբար՝ Վրաստանը և Լիտվայի Հանրապետությունը: Ի դեպ, Լիտվան առաջին պետությունն էր, որի հետ Հայաստանի Հանրապետությունը հաստատել է դիվանագիտական հարաբերություններ: Բացի այդ, արդեն 1991 թ. օգոստոսին, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ, նշանակվել է Հյուսիսային Ամերիկայում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը:

Սեպտեմբերյան հանրաքվեն էականորեն արագացրեց Հայաստանի Հանրապետության ճանաչման գործընթացը: Հայաստանի անկախությունը ճանաչած օտարերկրյա առաջին պետությունը Ռումինիան էր: Իսկ արդեն 1992 թ. հունվարի կեսերին հանրապետության անկախությունը ճանաչել են ավելի քան հիսուն պետություններ: Վրաստանին, Լիտվային և Ռումինիային միացել են նաև Ռուսաստանը, Թուրքիան, Մոնղոլիան, Ուկրաինան, Կոստա-Ռիկան, Շվեյցարիան, Իսրայելը, Կանադան, Իրանը, ԱՄՆ-ը, Չինաստանը և այլ երկրներ: Հետագայում Հայաստանի Հանրապետությունը որպես անկախ պետություն ճանաչած պետությունների քանակը շարունակում էր անընդմեջ ավելանալ:

1992 թ. մարտի 2-ին Հայաստանի Հանրապետությունը դարձել է Միավորված ազգերի կազմակերպության անդամ: Ամենահեղինակավոր այս միջազգային կազմակերպությանն անդամակցելը էականորեն նպաստել է միջազգային ասպարեզում հանրապետության հեղինակության ամրապնդմանը և միևնույն ժամանակ ամուր հիմք է ստեղծել նրա միջազգային իրավասուբյեկտության առավել լրիվ իրացման համար: Բավականին կարճ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունը դարձել է մի շարք ունիվերսալ և տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների անդամ, իսկ այսօր ավելի քան 20 ունիվերսալ և 5 տարածաշրջանային կազմակերպությունների անդամ է:

Ինչ վերաբերում է հանրապետության արտաքին քաղաքական գործունեության սահմանադրական հիմունքներին, ապա ՀՀ Սահմա-

նադրությանը ամրագրված է. «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը իրականացվում է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով» (հ. 9): Տվյալ դրույթը, չնայած դրա լակոնիկությանը, այնուամենայնիվ, թույլ է տալիս դատել երկրի արտաքին քաղաքականության ընդհանուր ուղղվածության, ինչպես նաև սկզբունքների և նպատակների մասին, հիմք է ծառայում այս բնագավառում օրենսդրության հետագա զարգացման համար:

Հայաստանի Հանրապետության միջազգային կապերն անընդմեջ զարգանում են: Այդ միտումը պետք է պահպանվի նաև ապագայում:

Լեռնային Ղարաբաղի (Արցախի) ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանությունը: Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը, հազարամյակներ շարունակ լինելով Հայաստանի բաղկացուցիչ մասը, 1920թ. մտել են նախկին ԽՍՀՄ կազմ և ոչ սահմանադրական, ոչ իրավագոր մարմին՝ *Ռուսաստանի կոմկուսի Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշմամբ* ընդգրկվել Ադրբեջանական Խորհրդային Հանրապետության կազմում: Փաստորեն, խախտվել է ինքնորոշման սկզբունքը, ոտնահարվել է Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության կամքը, որն այդ ժամանակ կազմում էր բնակչության ընդհանուր թվի 95 տոկոսը: Հետագայում, 1923թ., Լեռնային Ղարաբաղը ձեռք է բերում ինքնավար մարզի կարգավիճակ Ադրբեջանի կազմում և դառնում խորհրդային միասնական Դաշնության սուբյեկտ:

Ադրբեջանական իշխանություններն իրականացնում էին հայերի դուրսմղման, հայ մշակույթի հուշարձանների ոչնչացման և ազգային խտրականության քաղաքականություն: 1988թ., երբ սկսվեցին ժողովրդավարական շարժումները, Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչական մարմինը, գործելով ԽՍՀՄ օրենքներին համապատասխան, դիմեց Ադրբեջանական և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդներին՝ քննարկելու և դրականորեն լուծելու Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ կազմում ընդգրկելու հարցը: Ի պատասխան՝ մի քանի օր անց Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում սկսվեց հայերի ջարդը, որը հետագայում շարունակվեց Բաքվում, Կիրովաբադում և ադրբեջանական այլ բնակավայրերում՝ սկիզբ դնելով դարաբաղյան հակամարտությանը:

1991թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանի իշխանությունները հռչակեցին 1918-1920 թթ. պետական անկախության վերականգնման և ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու գործընթացի սկիզբը: 1991թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի և հարակից Շահումյանի շրջանի բոլոր ներկայացուցչական մարմինների համատեղ նստաշրջանը, դեկավարվելով «Խորհրդային հանրապետության ԽՍՀՄ կազմից դուրս գալու հետ կապված խնդիրների լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքով, որով ճանաչվում էր ինքնավար կազմավորումների պետական կարգավիճակի հարցերն ինքնուրույն լուծելու իրավունքը, հռչակեց *Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ)*: Նույն ամսում միջազգային դիտորդների ներկայությամբ տեղի ունեցավ հանրաքվե, որը հաստատեց ընդունված որոշումը:

Այսպիսով, Ադրբեջանական Հանրապետության միջազգային ճանաչման պահին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը այդ պետության մասը չէր: Սակայն զանց առնելով այդ իրողությունը և ինքնորոշման սկզբունքը՝ Ադրբեջանը պատերազմական գործողություններ սկսեց ԼՂՀ-ի դեմ՝ զավթելով հանրապետության տարածքի 52%-ը: Լեռնային Ղարաբաղի պաշտպանության ուժերը ստիպված էին հակահարված տալ և զրկել Ադրբեջանին հարակից շրջանների տարածքից հարվածներ հասցնելու հնարավորությունից: Արդյունքում հնարավոր դարձավ զինադադարի հաստատումը, որը պահպանվում է 1994 թվականից ի վեր:

Ճանաչելով ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքը և նպատակ ունենալով հասնել խնդրի արդարացի և օրինական հանգուցալուծման՝ Հայաստանի Հանրապետությունը գործունե մասնակցություն է ունենում հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին:

ՉԼՈՒՄ 4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

§ 9. Միջազգային իրավունքի սուբյեկտները

Միջազգային իրավունքի սուբյեկտները միջազգային հարաբերությունների այն մասնակիցներն են, որոնց վարքագիծն անմիջականորեն կարգավորվում է միջազգային իրավունքի նորմերով: Միջազգային իրավունքի սուբյեկտների վարքագծի կանոնակարգումը ենթադրում է նրանց իրավունքների և պարտականությունների ամրագրում և դրանց խախտման համար պատասխանատվության սահմանում: Բացի նշվածից, միջազգային իրավունքի սուբյեկտի պարտադիր հատկանիշ է միջազգային իրավական նորմերի ստեղծմանը մասնակցելու ունակությունը: Միջազգային իրավունքի սուբյեկտ են միջազգային կապերի միայն այն կողմերը, որոնց բնորոշ են այս բոլոր հատկանիշները: Այսպես, օրինակ, անհատները, համաձայն ժամանակակից միջազգային իրավունքի, կարող են օժտված լինել որոշակի իրավունքներով և պարտականություններով, նրանց կարելի է պատասխանատվության ենթարկել միջազգային իրավական նորմերը խախտելու համար, սակայն նրանք չեն կարող համարվել միջազգային իրավունքի սուբյեկտներ, քանզի հնարավորություն չունեն մասնակցելու միջազգային իրավունքի նորմերի ստեղծմանը: Իհարկե, այդ գործընթացը (բանակցություններ, պայմանագրերի նախագծերի մշակում և այլն) ի վերջո իրականացնում են մարդիկ, սակայն նրանք այստեղ հանդես են գալիս ոչ թե իրենց անձնական դիրքորոշմամբ և իրենց անունից, այլ որպես համապատասխան պետության պաշտոնական ներկայացուցիչներ:

Հաշվի առնելով շարադրվածը՝ կարելի է տալ միջազգային իրավունքի սուբյեկտի հետևյալ սահմանումը. *միջազգային իրավունքի սուբյեկտներ են միջազգային հարաբերությունների այն մասնակիցները, որոնք միջազգային իրավունքի նորմերին համապատասխան միջազգային իրավունքների և պարտականությունների կրողներ են, ունակ են ենթարկվել միջազգային պարտասխանատվության և մասնակցել միջազգային իրավունքի նորմերի ստեղծմանը:*

Այս սահմանման մեջ առկա պահանջներին համապատասխան

նում և, հետևաբար, միջազգային իրավունքի սուբյեկտներ են միջազգային հարաբերությունների հետևյալ մասնակիցները՝ *պետությունները, անկախության համար պայքարող ազգերն ու ժողովուրդները, միջազգային կազմակերպությունները, ինչպես նաև որոշ պետականակերպ կազմավորումներ:*

Միջազգային իրավունքի սուբյեկտների թվարկված տեսակների միջև սովորաբար կատարվում է դասակարգում: Տարբերում են *միջազգային իրավունքի սկզբնական և ածանցյալ սուբյեկտներ:* Միջազգային իրավունքի սկզբնական սուբյեկտները չեն ստեղծվում որպես այդպիսին. դրանց ի հայտ գալն օբյեկտիվ իրականություն է, բնական պատմական գործընթացի արդյունք: Նախ և առաջ, դրանք պետություններն են, ինչպես նաև ազգերը և ժողովուրդները: Ծագելով որպես սոցիալական ամբողջություններ, նրանք անխուսափելիորեն շփման մեջ են մտնում միմյանց հետ՝ ստեղծելով իրենց հարաբերությունները կարգավորող կանոններ: Միջազգային իրավունքի ածանցյալ սուբյեկտները՝ միջազգային և պետականակերպ կազմակերպությունները, ստեղծվում են սկզբնականների կողմից: Դրանց միջազգային իրավասուբյեկտության ծավալը կախված է նրանց ստեղծողների մտադրությունից և ցանկությունից: Դրանք են՝ միջազգային կազմակերպությունները և պետականակերպ կազմավորումները: Որպես կանոն, միջազգային իրավունքի ածանցյալ սուբյեկտների իրավունքների և պարտականությունների շրջանակները սահմանափակվում են միջազգային պայմանագրերով:

Ժամանակակից *միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտներն են պետությունները:* Պետությունները միջազգային իրավասուբյեկտությամբ օժտված են իրենց ստեղծման պահից: Այդ իրավասուբյեկտության հիմքը պետության ինքնիշխանությունն է, որը ենթադրում է պետության գերիշխանությունն իր տարածքում և անկախությունը միջազգային հարաբերությունների ոլորտում:

Պետությունների միջազգային իրավասուբյեկտությունը ենթադրում է նրանց պատկանող միջազգային իրավունքների և պարտականությունների առկայություն: Այդ իրավունքներից և պարտականություններից կարելի է առանձնացնել այնպիսիք, որոնցով հավասարապես օժտված են բոլոր պետությունները: Խոսքը *պետությունների հիմնական իրավունքների և պարտականությունների* մասին է:

Պետության այդ իրավունքների խախտումները սպառնալիք են առաջացնում նրա գոյության համար, իսկ պետության կողմից իր հիմնական պարտականությունների խախտումները սպառնալիք են մյուս պետությունների գոյության և միջազգային համագործակցության զարգացման համար: Պետությունների հիմնական իրավունքների թվում կարելի է նշել հետևյալները. անկախության և իր բոլոր օրինական իրավունքներն ազատ կենսագործելու իրավունքը, իր տարածքում ու դրա սահմաններում գտնվող բոլոր անձանց և իրերի նկատմամբ իրավասության իրականացման իրավունքը, մյուս պետությունների հետ իրավահավասարության իրավունքը, զինված հարձակումից անհատական և հավաքական պաշպանության իրավունքը և այլն: Հիմնական պարտականությունների թվում կարելի է նշել. այլ պետությունների ներքին և արտաքին գործերին միջամտելուց զերծ մնալը, մարդու իրավունքների հարգումը, այլ պետությունների հետ վեճերի լուծումը խաղաղ միջոցներով, միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումը և այլն:

Միջազգային իրավունքի *սուբյեկտներ են նաև իրենց անկախության համար պայքարող ազգերը և ժողովուրդները*: Պայքարելով իրենց ճակատագիրն ինքնուրույն տնօրինելու, անկախ պետականություն ստեղծելու համար՝ այդ ժողովուրդները կազմակերպում են որոշակի մարմիններ, որոնք, ղեկավարելով պայքարը, ներկայացնում են տվյալ ժողովրդի շահերը միջազգային ասպարեզում: Այսպիսով, չնայած միջազգային իրավունքի համաձայն ինքնորոշման իրավունքը պատկանում է բոլոր ազգերին և ժողովուրդներին, այնուհանդերձ, ոչ բոլոր ազգերն ու ժողովուրդները կարող են դիտվել որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ: Միայն իր ազատության համար պայքարող և իշխանության միասնական կենտրոնով միավորված, ժողովրդի անունից միջպետական հարաբերություններում հանդես գալու ընդունակ կառույցներ ստեղծած ժողովուրդը կարող է համարվել միջազգային իրավունքի սուբյեկտ: Գործնականում այդպիսի կառույցներ են զինված, միասնական հրամանատարություն ունեցող ջոկատները, որոնց գլխավորում է քաղաքական ղեկավարությունը: Անկախության համար պայքարող ժողովուրդների քաղաքական կազմավորումները հաճախ անվանվում են «պետություններ կայացման շրջանում», քանզի ժողովուրդների օրինական պայքարն իրենց

ազատության համար վաղ թե ուշ պետք է հանգեցնի այդ ժողովրդի անկախ պետության ստեղծմանը:

Միջազգային իրավունքի սուբյեկտներ են նաև *միջազգային կազմակերպությունները*: Ի տարբերություն միջազգային իրավունքի սկզբնական սուբյեկտների, դրանք օժտված են սահմանափակ, ածանցյալ իրավասուբյեկտությամբ: Այդ իրավասուբյեկտության ծավալը որոշվում է կազմակերպության հիմնադիր ակտով մասնակից պետությունների կամարտահայտությամբ: Միջազգային իրավասուբյեկտությամբ օժտված են Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ), նրա մասնագիտացված հաստատությունները, տարածաշրջանային կազմակերպությունները՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ), Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՀ), Ամերիկյան պետությունների կազմակերպությունը, Արաբական պետությունների լիգան, Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը (NATO) և այլն:

Միջազգային իրավունքի ածանցյալ սուբյեկտների շարքին են դասվում նաև *պետականակերպ կազմավորումները*: Դրանք միջազգային պայմանագրերի հիման վրա կամ միջազգային կազմակերպությունների որոշումներով ստեղծված յուրօրինակ «պետություններ» են: Անցյալում դրանք այսպես կոչված՝ ազատ քաղաքները կամ գոտիներն էին, որոնք սովորաբար ստեղծվում էին որպեսզի ստեղծվեին պետությունների միջև տարածքային պահանջները կամ մեղմացվեին տարածքի պատկանելության պատճառով ծագած միջպետական վեճերը: Ժամանակին նման կազմավորումներ էին Դանցիգ ազատ քաղաքը և Տրիեստի ազատ տարածքը: Այդ կազմավորումներն ունեին սահմանադրություն կամ համանման ակտ, պետական բարձրագույն մարմիններ, քաղաքացիություն, սահմանների և իրավակարգի պաշտպանության ուժեր: Նշենք, որ ներկայում նման կարգավիճակ ունեցող կազմավորումներ աշխարհում չկան (նման կարգավիճակով տարածքի վերջին օրինակն Արևմտյան Բեռլինն էր, որը վերացավ Գերմանիայի վերամիավորման հետևանքով), սակայն դա չի նշանակում, որ բացառվում է այդպիսի կազմավորումների առաջացումն ապագայում:

Միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող պետականա-կերպ կազմավորում է նաև Վատիկանը: Այն ունի պետության գրեթե բոլոր հատկանիշները՝ որոշակի տարածք, իշխանության և կառավարման մարմիններ: Սակայն Վատիկանը բնակչություն, որպես այդպիսին, չունի, նրա տարածքում բնակվում են միայն կաթոլիկ եկեղեցու գործերով զբաղվող համապատասխան հոգևորականները, ուստի Վատիկանը դժվար է համարել պետություն: Այն ավելի շուտ կաթոլիկ եկեղեցու վարչական կենտրոնն է: Այդուամենայնիվ, որպես ժամանակակից աշխարհում կաթոլիկ եկեղեցու նշանակալի, այդ թվում նաև քաղաքական դերի հավաստում, պետությունները ճանաչում են Վատիկանը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ: Հաստատանի Հանրապետությունը ևս Վատիկանի հետ հաստատել է դիվանագիտական հարաբերություններ:

§ 10. Պետությունը որպես միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտ

Պետությունները երկար ժամանակ միջազգային իրավունքի միակ սուբյեկտներն ու ստեղծողներն էին: Այժմ դրանք շարունակում են մնալ այդպիսին, քանի որ ժամանակակից միջազգային իրավունքն իր հիմքում մնացել է միջպետական:

Օգտագործելով «պետություն» եզրույթը՝ միջազգային իրավունքը չի բնորոշում այն, սակայն սահմանում է, որ պետությունները հատուկ ինքնիշխան կազմավորումներ են, և որ նրանց փոխհարաբերությունների հիմնական սկզբունքներից մեկը պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքն է:

Այդ սկզբունքի համաձայն, բոլոր պետությունները օգտվում են ինքնիշխան հավասարությունից, միջազգային համագործակցության իրավահավասար անդամներ են, անկախ տնտեսական, սոցիալական, քաղաքական կամ այլ բնույթի տարբերություններից:

Իրավունքի դոկտրինայում ընդունված է համարել, որ պետությունը բնութագրվում է երեք հատկանիշի՝ տարածքի (պետական տարածքի), բնակչության և հանրային (պետական) իշխանության առկայությամբ: Սակայն իրականում դրանք փոխկապված են բոլոր պե-

տությունների համար ընդհանուր՝ ինքնիշխանության հատկությամբ, այն է՝

• *պեպրական Կարածքը*՝ տվյալ պետության ինքնիշխանության ներքո գտնվող երկրային տարածությունն է.

• *բնակչությունը*՝ պետության տարածքային սահմաններում գտնվող անձանց (քաղաքացիների, օտարերկրացիների, ապատրիդների) այն համակցությունն է, որոնց նկատմամբ տարածվում է տվյալ պետության իրավասությունը (ինքնիշխան իշխանական լիազորությունների համակցությունը).

• *հանրային (պեպրական) իշխանությունը*՝ իշխելու հատուկ կազմակերպություն է, որի գործունեության միջոցով իրականացվում է պետական ինքնիշխանությունը:

Պետության ինքնիշխանությունը (պետական ինքնիշխանությունը) պետությանը բնորոշ գերակայությունն է իր տարածքում և անկախությունը միջազգային հարաբերություններում:

Հետևաբար, «ինքնիշխանությունը» պետությանը բնորոշ առավել ընդհանուր իրավաբանական հատկություններն արտացոլող իրավաբանական հասկացություն է: Ինքնիշխանության իրավաբանական հատկանիշները (գերակայությունը և անկախությունը) արտահայտում են ցանկացած պետության որակական առանձնահատկությունները, որոնք դրսևորվում են իրական հասարակական հարաբերություններում: Պետությունը գոյություն ունի որպես իրական ուժ, որն ունակ է իրականացնել գերագույն իշխանությունն իր տարածքում և հանդես գալ որպես ինքնիշխան անկախ կազմակերպություն միջազգային հարաբերություններում:

Պետությանը հատուկ ինքնիշխանության հատկանիշները՝ գերակայությունը և անկախությունը, անխզելիորեն փոխկապված են, կանխորոշում են միմյանց: Առանց պետական տարածքի սահմաններում գերակայության գոյություն չունի մյուս պետությունների հետ հարաբերություններում պետության անկախություն: Առանց մյուս պետություններից անկախության անիրական է նաև իր տարածքի սահմաններում պետության գերակայությունը:

Տարածքային գերակայությունը: Իր տարածքում պետության գերակայությունը նշանակում է, որ պետությունն իրականացնում է բարձրագույն, գերագույն իշխանությունը (իրավասությունը)՝ իր տա-

րածքում գտնվող բոլոր անձանց և նրանց միավորումների նկատմամբ: Պետությունն օժտված է իր տարածքի սահմաններում լիիշխանությամբ՝ հանրային իշխանության (օրենսդիր, գործադիր, դատական) լրիվությամբ, որը բացառում է այդ տարածքի սահմաններում ցանկացած այլ հանրային իշխանության գործունեությունը: Պետության անունից հանդես եկող պետական իշխանության պահանջները պարտադիր են պետության բոլոր մարմինների, պաշտոնատար անձանց, քաղաքացիների, նրանց միավորումների, պետական տարածքի սահմաններում գտնվող օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

Պետության տարածքային գերակայությունը ենթադրում է, որ պետությունից վեր չկա այլ բարձրագույն իշխանություն, որը կարող է սահմանել կամ սահմանափակել պետության իրավագործությունը:

Պետության տարածքային գերակայությունը դրսևորվում է նաև նրանում, որ նրա ձեռքում կենտրոնանում են ամբողջ հարկադիր իշխանությունը և իշխանական հարկադրանքի բոլոր միջոցները: Իշխանական հարկադրանքը կարող է կիրառվել պետության մարմնի կողմից՝ պետության անունից կամ դրան անմիջականորեն լիազորված ոչ պետական կազմակերպության կողմից, որի իրավագործությունները և բուն գոյությունը կախված են բացառապես պետության կամքից: Իշխանական հարկադրանքի՝ պետության մենաշնորհը բնավ չի նշանակում, որ պետությունը զբաղված է միայն իր կամքը կատարելուն հարկադրելով, սակայն նշանակում է, որ միայն պետությունը կարող է հարկադրանք կիրառել իր կամքը պարտադրելու համար:

Պետության գերակայությունը դրսևորվում է նաև նրանում, որ միայն պետությունը կարող է սահմանել իր շրջանակներում գտնվող մարմինների, կազմակերպությունների և անձանց համար պարտադիր վարքագծի կանոններ, այսինքն՝ ստեղծել իրավունք և ապահովել դրա կատարումը:

Պետական իշխանության գործունեությամբ դրսևորվող պետության տարածքային գերակայությունը բխում է, մասնավորապես, վերջինի որակական առանձնահատկություններից՝ դրա միասնությունից և իրավաբանական չսահմանափակվածությունից:

Պետական իշխանության միասնությունը արտահայտվում է նրանում որ դրա մարմինների համակարգը համակցության մեջ կազմում է միասնական պետական իշխանությունը: Պետական իշխանության իրավաբանական միասնությունը դրսևորվում է նրանում, որ՝

- պետական իշխանության մարմինների գումարային իրավասությունն ընդգրկում է պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ բոլոր իրավագործությունները, և
- այդ համակարգին պատկանող տարբեր մարմինները չեն կարող միաժամանակ միևնույն սուբյեկտներին միևնույն հանգամանքներում հանձնարարել վարքագծի իրարամերժ կանոններ:

Այս ամենը պետք է նախատեսվի և ապահովվի պետության ներքին իրավունքով:

Այսպիսով, պետության տարածքային գերակայությունը իրականացվում է ոչ թե պետական իշխանության առանձին մարմինների, այլ պետական իշխանության՝ որպես միասնական ամբողջության կողմից: Եթե պետական իշխանությունը բաղկացած լիներ իրարից անկախ մի քանի մարմիններից, ապա տվյալ պետության սահմաններում կլինեին տարածքային գերակայություն իրականացնող մի քանի իշխանություններ կամ ընդհանրապես գոյություն չէր ունենա որևէ գերագույն պետական իշխանություն:

Պետական իշխանության մյուս որակական առանձնահատկությունը դրա իրավաբանական չսահմանափակվածությունն է: Իսկապես, պետության տարածքային գերակայությունից բխում է պետական իշխանության չսահմանափակվածությունը որևէ արտաքին իրավական հանձնարարություններով, այլապես, գերագույնը կլիներ նման հանձնարարող իշխանությունը: Պետական իշխանությունը սահմանափակված չէ նաև ազգային իրավունքով, քանի որ այն գործում է հենց իր կողմից սահմանված իրավունքի հիման վրա: Պետությունը, ի դեմս պետական իշխանության, կարող է փոփոխել կամ վերացնել պետական իրավունքի այս կամ այն նորմերը, ընդունել այլ սահմանադրություն: Միայն պետությունը, ի դեմս պետական իշխանության, սահմանում է ազգային իրավունքը, իրավաստեղծման կարգը և այս իմաստով վեր է կանգնած իրավունքից:

Այլ կերպ ասած՝ պետական իշխանության չսահմանափակվածությունը նշանակում է, որ դրանից վեր չկա իրեն վարքագծի կանոններ հանձնարարող բարձրագույն իշխանություն:

Պետության անկախությունը պետական ինքնիշխանության հատկանիշ է, որը գլխավորապես դրսևորվում է այլ պետությունների և միջազգային իրավունքի սուբյեկտների հետ փոխհարաբերություններում:

Ներպետական հասարակական հարաբերություններում պետությունը հանդես է գալիս որպես իր տարածքում գտնվող բոլոր անձանց և միավորումների նկատմամբ բացառիկ իրավասությանը օժտված սուբյեկտ: Միջազգային հարաբերությունների համար բնութագրական է պետությունների չենթարկվելը միջազգային շփումներում վարքագծի կանոններ հանձնարարելու իրավասությանը օժտված որևէ իշխանության: Դրանով իսկ պետությունները փոխադարձաբար անկախ են:

Միջազգային իրավունքում պետությունների փոխադարձ անկախությունն ունի դրսևորման երկու կողմ՝ ներքին գործերում պետության անկախությունը (*ներքին անկախություն*) և արտաքին գործերում պետության անկախությունը (*արտաքին անկախություն*):

Պետության ներքին անկախությունն ապահովվում է նրանով, որ միջազգային իրավունքը չի կարգավորում և սկզբունքորեն չի կարող կարգավորել ներպետական հասարակական հարաբերությունները: Դա դրսևորվում է պետությունների կողմից՝ միմյանց գործերին միջամտելու անթույլատրելիության ճանաչմամբ:

Պետությունները կարող են ստանձնել և իրականում ստանձնում են իրենց տարածքում գտնվող օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ միջազգային իրավական պարտավորություններ, որոնք գերակայում են ներքին օրենսդրության դրույթներին: Սակայն այդպիսի պարտավորությունները չեն կարող շոշափել և չեն շոշափում ներքին գործերում նրանց իրավասության հիմնական էությունը (ներքին անկախությունը) նրանց հասարակական քաղաքական կազմակերպումը: Յուրաքանչյուր պետություն՝ այլ պետություններից անկախ ու ազատ սահմանում է այնպիսի հասարակական-քաղաքական կարգ և իրավակարգ, որոնք համապատաս-

խանում են այդ պետության հասարակության զարգացման մակարդակին, պահանջումներին և շահերին:

Իսկ պետության արտաքին անկախությունը՝ նրա անկախությունը արտաքին գործերում, այլ պետությունների հետ փոխհարաբերություններում՝ միջազգային իրավական կարգավորման ոլորտն է: Պետությունն այլ պետություններից անկախ, ազատ և ինքնուրույն իրականացնում է իր արտաքին գործառնություններն ու որոշում իր արտաքին քաղաքականությունը՝ այլ պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների հետ նրա փոխհարաբերությունները՝ իր համաձայնությամբ սահմանված միջազգային իրավական կարգավորման շրջանակներում:

Պետության միջազգային պարտավորությունների պահպանման պայմանով դրա արտաքին քաղաքական գործունեության ազատությունը, սակայն, ոչ թե միջազգային հարաբերություններում նրա անկախության սահմանափակումն է, այլ դրա հաստատումը և ապահովումը, քանի որ միջազգային իրավունքի նորմերն ուղղված են հենց միջազգային շփման մեջ բոլոր պետությունների անկախության ապահովմանը:

Միջազգային հարաբերություններում պետության անկախությունը դրսևորվում է մասնավորապես նրանում, որ պետության համար իրավաբանորեն պարտադիր միջազգային իրավական նորմ կարող է դառնալ միայն վարքագծի այնպիսի կանոնը, որի վերաբերյալ առկա է նրա ուղղակի համաձայնությունը: Ոչ մի այլ պետություն կամ պետությունների խումբ չեն կարող վարքագծի կանոններ հանձնարարել պետությանը:

Ինքնիշխանությունը պետությունների միջազգային իրավասուբյեկտության գլխավոր նախադրյալն է: Վերջինը պայմանավորված չէ առանձին պետությունների կամքով, այդ թվում՝ այլ պետությունների կողմից նրան իրավունքի սուբյեկտ ճանաչելով: Պետությունը դառնում է այդպիսին ժողովրդի կամ ազգի ինքնորոշման դրսևորմամբ՝ որպես ինքնուրույն պետություն առաջանալու փաստի ուժով: Տասնյակ նոր ինքնիշխան պետություններ՝ միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտներ, այդ ձևով առաջացել են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ասիայում, Աֆրիկայում, աշխարհի այլ տարածաշրջաններում: Մի շարք պետությունների (ԽՍՀՄ, Չեխոսլովա-

կիս, Հարավսլավիա) տրոհման կամ բաժանման հետևանքով Եվրոպայում առաջացել են միջազգային իրավունքի տասնյակից ավելի նոր սուբյեկտներ, որոնք դարձել են ՄԱԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների լիիրավ անդամներ, կնքում են միջազգային պայմանագրեր, փոխանակում են դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչներ:

Միջազգային հարաբերություններին մասնակցող պետությունները կարող են լինել պարզ կամ ունիտար և բարդ՝ կազմված երկու և ավելի պետություններից:

Ունիտար պետություններում առկա է իշխանության (օրենսդիր, գործադիր և դատական) բարձրագույն մարմինների միասնական համակարգ, որին ուղղակի ենթարկված են տեղերում իշխանության մարմինները: Ունիտար պետությունում գործում է մեկ սահմանադրություն՝ նրա ամբողջ տարածքում, այն ունի միասնական քաղաքականություն, իրավունքի միասնական համակարգ: Ունիտար պետության տարածքը բաժանվում է վարչատարածքային միավորների, որոնք օժտված չեն քաղաքական ինքնուրույնությամբ, թեև երբեմն կարող են օգտվել վարչական ինքնավարությունից: Այստեղ միայն ամբողջ պետությունը կարող է հանդես գալ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ: Ունիտար պետության օրինակ կարող է ծառայել Հայաստանի Հանրապետությունը:

Բարդ պետություններ են համադաշնությունները և դաշնությունները: *Համադաշնությունը* մի շարք ընդհանուր խնդիրներ լուծելու համար (փոխադարձ պաշտպանության, արտաքին հարաբերությունների, պետական անվտանգության, ֆինանսավորման և այլն) ընդհանուր մարմիններ ստեղծող ինքնիշխան պետությունների միություն է: Սակայն համադաշնության յուրաքանչյուր անդամ ունի իր պետության գլուխը: Համադաշնության մարմինները կազմված են դրա կազմի մեջ մտնող պետությունների ներկայացուցիչներից, իսկ առավել կարևոր հարցերով նրանց որոշումները սովորաբար պահանջում են անդամ-պետությունների վավերացում (հաստատում): Համադաշնության անդամները մնում են որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ: Բացի այդ, միջազգային իրավունքի սուբյեկտ կարող է լինել նաև ամբողջ համադաշնությունը, եթե այն ստեղծելիս անդամ-պետությունները նրա վրա որոշակի միջազգային գործեր իրականացնելու, պայմանագրեր կնքելու և այլ պատասխանատվություն են դրել: Նախկինում համադաշնության օրինակ կարող էին ծառայել ԱՄՆ-ը (1776-1787 թթ.), Շվեյցարիան (1815-1848 թթ.) և Գերմանիան (1815-1866 թթ.):

նացնելու, պայմանագրեր կնքելու և այլ պատասխանատվություն են դրել: Նախկինում համադաշնության օրինակ կարող էին ծառայել ԱՄՆ-ը (1776-1787 թթ.), Շվեյցարիան (1815-1848 թթ.) և Գերմանիան (1815-1866 թթ.):

Դաշնությունը առավել սերտ բարդ պետական կազմավորում է: Այն արդեն պարզապես պետությունների միություն չէ, այլ միութենական պետություն: Այսինքն, դաշնությունը, ինչպես և ունիտար պետությունը, պետական կառուցվածքի ձև է: Ի տարբերություն համադաշնության, այստեղ դաշնային իշխանությունն անմիջականորեն տարածվում է նաև նրա քաղաքացիների վրա: Կենտրոնական դաշնային մարմինների ակտերը (օրենքները, կառավարության որոշումները և այլն) պարտադիր են ամբողջ դաշնության տարածքում: Միևնույն ժամանակ, դաշնության անդամներն օժտված են որոշակի ինքնուրույնությամբ: Դաշնային քաղաքացիությունից բացի, այստեղ երբեմն առկա է նաև դաշնության անդամի քաղաքացիություն, սեփական սահմանադրություն, որը չի կարող հակասել դաշնայինին, պահպանվում են իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինները, որոնք գոյություն ունեն դաշնության համանման մարմինների հետ մեկտեղ: Սակայն դաշնության անդամների ինքնուրույնությունը չի հասնում այն աստիճանի, որ դրանք լինեն միջազգային իրավունքի սուբյեկտներ, քանի որ դրանք, որպես կանոն, օժտված չեն պետական ինքնիշխանության արտաքին կողմով՝ չեն կարող իրականացնել սեփական արտաքին քաղաքականություն: Ներկայում դաշնային պետություններ են Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Կանադան, Բրազիլիան, Մեքսիկան, Արգենտինան, Ավստրիան, Բելգիան, Շվեյցարիան, Հնդկաստանը, Պակիստանը, Մալայզիան, Նիգերիան, Ավստրալիան և այլն: Այդ բոլոր երկրներում միջազգային իրավունքի սուբյեկտ է ամբողջ դաշնությունը, այլ ոչ թե նրա անդամները :

Առանձին դաշնությունների (ԱՄՆ, ԳԴՀ, Ավստրիա) սահմանադրությամբ նախատեսված դաշնության սուբյեկտների որոշ հարցերով միջազգային համաձայնագրեր կնքելու իրավունքը կարող է իրականացվել միայն դաշնության համաձայնությամբ:

Պետությունների՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտների, շարքում երբեմն առանձնացվում են *մշտական չեզոքության կարգավիճակ* ունեցող պետությունները (Շվեյցարիա, Ավստրիա, Կամբոջա,

Մալթա): Մակայն այդ կարգավիճակը չի սահմանափակում նրանց ինքնիշխանությունը: Դրանք բոլորն էլ լիիրավ ինքնիշխան պետություններ են:

§ 11. Ճանաչումը միջազգային իրավունքում

Ճանաչման հասկացությունը և նշանակությունը: Պետությունների միջազգային իրավասությունների կետ սերտորեն կապված է միջազգային իրավական ճանաչման խնդրը: *Միջազգային իրավական ճանաչումը* պետության միակողմանի կամավոր ակտն է, որով նա նպատակահարմար է գտնում իրավաբանական հարաբերությունների մեջ մտնել ճանաչվող կողմի հետ: Այդպիսի կողմ կարող է լինել նոր առաջացած պետությունը, նոր կառավարությունը, անկախության համար պայքարող ազգը կամ ազգային-ազատագրական շարժումը, ապստամբած և պատերազմող կողմը, միջազգային կազմակերպությունը: Ճանաչումը կարևոր արտաքին քաղաքական ակտ է, քանի որ արտահայտում է ճանաչվող կողմի հետ բնականոն, կայուն հարաբերություններ հաստատելու՝ ճանաչող պետության ցանկությունը: Միևնույն ժամանակ ճանաչումն ունի միջազգային իրավական մեծ նշանակություն, որը որոշվում է դրա իրավաբանական հետևանքներով:

Միջազգային իրավունքի տեսության մեջ միջազգային իրավական ճանաչման նշանակության մասին գոյություն ունեն երկու տեսություններ՝ *սահմանադիր* (կոնստիտուտիվ) և *հոչակագրային* (դեկլարատիվ): Համաձայն առաջինի՝ ճանաչումը պետության միջազգային իրավասությունների պարտադիր պայման է, քանզի ճանաչման հասցեատիրոջը հաղորդում է դրա համար անհրաժեշտ հատկանիշներ: Հոչակագրային տեսության համաձայն՝ այլ պետությունների կողմից ճանաչումը սուբյեկտիվ որևէ հատկություններ չի հաղորդում, այլ ընդամենը հոչակում է նրա՝ միջազգային իրավասությունների համար անհրաժեշտ հատկանիշների առկայությունը և դրա հիման վրա հարաբերություններ հաստատելու պատրաստակամությունը: Տարածված տեսակետի համաձայն՝ հենց հոչակագրային տեսությունն է մեծապես համապատասխանում միջազգային կյանքի իրողություններին, քանզի հայտնի են դեպքեր, երբ պետությունները եր-

կար ժամանակ գոյություն են ունենում առանց միջազգային ճանաչման, սակայն դա ոչ մի կերպ չի ազդել նրանց՝ ինքնիշխան պետություններ հանդիսանալու իրողության վրա:

Ճանաչումը ինչպես քաղաքական, այնպես էլ իրավաբանական մեծ նշանակություն ունի: Ճանաչումը հեշտացնում է նոր պետության կայացումը, բերում է այլ պետությունների հետ քաղաքական և տնտեսական հարաբերությունների նորմալացման, այդ նոր պետությունը հանում է միջազգային մեկուսացումից: Ճանաչված պետության համար ավելի հեշտ է լրիվ իրացնել իր միջազգային իրավասությունը՝ որպես իր ձեռք բերած ինքնիշխանության հետևանք:

Նոր պետությունն ունի միջազգային ճանաչման իրավունք: Դա բխում է ՄԱԿ-ի Կանոնադրությունից, ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից, որոնց համաձայն՝ բոլոր պետությունները պարտավոր են զարգացնել միմյանց միջև բարեկամական հարաբերությունները, հարգել ժողովուրդների ինքնիշխան հավասարության և ինքնորոշման սկզբունքը:

Նոր պետության ճանաչումն իրականացվում է որպես կանոն՝ հայտարարության կամ դիվանագիտական ուղիներով փոխանցվող գրավոր ուղերձի ձևով:

Ճանաչման չեղերը: Գոյություն ունեն պետությունները և կառավարությունները պաշտոնական ճանաչելու երկու ձևեր՝ «*դե-ֆակտո*» (*de facto*) և «*դե-յուրե*» (*de jure*): Դրանց տարբերությունները արտահայտվում են այն իրավական հետևանքների ծավալում, որոնք առաջանում են ճանաչողի և ճանաչվողի համար՝ իրենց փոխհարաբերություններում. «դե-ֆակտո» ճանաչման դեպքում իրավական հետևանքների ծավալն ավելի փոքր է: Այդ տարբերությունը կամ ճանաչման այս կամ այն ձևի օգտագործման հիմքերը որոշող որևէ ստույգ կողմնորոշիչներ և առավել ևս՝ նորմեր գոյություն չունեն: Պրակտիկան ցույց է տալիս, որ դրանց օգտագործման հիմքում ընկած են քաղաքական նկատառումները:

«Դե-ֆակտո» ճանաչումն անվստահության դրսևորումն է տվյալ պետության կամ կառավարության երկարակեցության կամ կենսունակության նկատմամբ: «Դե-ֆակտո» ճանաչումը որոշ դեպքերում կարող է հանգեցնել հյուպատոսական հարաբերությունների հաստատման:

«Դե-յուրե» ճանաչումը լրիվ է և վերջնական: Այն, որպես կանոն, իր հետ բերում է դիվանագիտական հարաբերությունների հաստատում: Ամեն դեպքում համարվում է, որ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը նշանակում է «դե-յուրե» ճանաչում:

Պատահում են դեպքեր, երբ պետությունները, կառավարությունները (կամ այլ իշխանությունները) միմյանց հետ պաշտոնական շփումների մեջ են մտնում հարկադրված՝ որևէ որոշակի հարցեր լուծելու համար, սակայն, միևնույն ժամանակ, չեն ցանկանում ճանաչել միմյանց: Այս դեպքում խոսում են «ad hoc» (տվյալ իրավիճակում, կոնկրետ գործով) ճանաչման մասին:

Ճանաչման տեսակները: Դրանք տարբերվում են՝ կախված ճանաչվողներից: Կարելի է առանձնացնել ճանաչման ավանդական տեսակները (պետությունների և կառավարությունների ճանաչումը) և նախնական կամ միջանկյալ (ժողովուրդներին կամ ազգերին ապստամբած կամ պատերազմող կողմ ճանաչելը, դիմադրության կազմակերպությունների ճանաչումը): Ճանաչման նախնական տեսակները կիրառվում են, սպասելով իրադարձությունների հետագա զարգացմանը, որոնք կարող են հանգեցնել կամ նոր պետության ստեղծման, կամ երկրում դրության կայունացման, որտեղ նոր կառավարության իշխանությունը հաստատվել էր ոչ սահմանադրական ճանապարհով:

Պետության ճանաչման հարցը ծագում է այն դեպքում, երբ մի քանի պետության միավորման արդյունքում կազմավորվում է նորը կամ պետության տրոհման արդյունքում առաջանում են նոր պետություններ, կամ եթե որևէ պետության կազմից առանձնանում է նոր պետություն:

Պետության ճանաչման հարցը կարող է ծագել նաև հեղափոխության արդյունքում պետական և հասարակական կարգի արմատական փոփոխության դեպքում: Սակայն, գործնականում, նման իրավիճակներում ավելի հաճախ դիմում են նոր կառավարության ճանաչմանը, հատկապես եթե հեղափոխությունը չի հանգեցրել տարածքային փոփոխությունների:

Ոչ սահմանադրական ճանապարհով իշխանության եկած կառավարությունների ճանաչման չափանիշների մշակման փորձերը հաջողությամբ չեն պսակվել: Ընդունված է համարել, որ նման ճանաչումը հիմնավորված է այն դեպքում, եթե ճանաչվող կառավարությունն

արդյունավետ իշխանություն է իրականացնում երկրի տարածքում կամ դրա մեծ մասում, վերահսկում է իրավիճակը երկրում: Եթե հեղաշրջման արդյունքում փոփոխվում է կառավարման ձևը, օրինակ, միապետականը՝ հանրապետականի և համապատասխանաբար՝ պետության պաշտոնական անվանումը, ապա նոր կառավարության ճանաչումը կարող է իրականացվել պետության ճանաչման տեսքով:

Քանի որ կառավարության ճանաչումը կարող է սխալմամբ մեկնաբանվել որպես հեղաշրջման հավանության արտահայտություն, որոշ պետություններ որդեգրել են կառավարությունների որևէ պաշտոնական ճանաչումից ձեռնպահ մնալու քաղաքականությունը: Այդ քաղաքականությունն ստացել է «Էստրադայի դոկտրին» անվանումը (այն ձևակերպած է Մեքսիկայի արտաքին գործերի նախարարի անունով): Ըստ էության, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, խոսքը լռելյայն կամ ենթադրվող ճանաչման մասին է, քանի որ այդպիսի իրավիճակներում սովորաբար պահպանվում են դիվանագիտական հարաբերությունները կամ նոր կառավարության հետ պաշտոնական շփումների այլ ձևերը:

Ազգի (կամ ժողովրդի) ճանաչումը՝ որպես միջանկյալ ճանաչման տեսակ, առաջացել է Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, երբ Անտանտի երկրները, որպես «դաշնակից» կամ «համատեղ պատերազմող» ազգեր, ճանաչել են չեխերին, սլովակներին, լեհերին և այլն:

Գաղութային համակարգի վերացման ժամանակաշրջանում մեծ տարածում է ստացել ազգային-ազատագրական շարժումների ճանաչումը ինչպես առանձին պետությունների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների, հատկապես՝ ՄԱԿ-ի կողմից, որոնք դրանց ընձեռել են դիտորդի կարգավիճակ:

Որպես ապստամբած կամ պատերազմող կողմ ճանաչումն օգտագործվում էր XIX դարում և որոշ չափով՝ XX դարի առաջին կեսին: Այդպիսի ճանաչման հիմնական նպատակներից մեկն ապստամբների կողմից վերահսկվող տարածքում ճանաչողի շահերի պաշտպանության հնարավորության ապահովումն է: Այսպես, 1823 թ. Մեծ Բրիտանիան որպես պատերազմող կողմ է ճանաչել Թուրքիայի դեմ սեփական պետության ստեղծման համար պայքարող հույներին:

§ 12. Պետությունների իրավահաջորդությունը

Իրավահաջորդությունը որոշակի տարածքի միջազգային հարաբերությունների համար պատասխանատու մեկ պետությունը մեկ այլ պետությամբ փոխարինելու արդյունքում իրավունքների և պարտականությունների անցումն է մեկից մյուսին: Իրավահաջորդության հարցը ծագում է, երբ՝

- մի պետությունը բաժանվում է երկու և ավելի նոր պետությունների.
- երկու և ավելի պետություններ միավորվում են մեկ նոր պետության կազմում.
- պետության տարածքի մի մասում ստեղծվում է նոր պետություն.
- մի պետությունը մտնում է մեկ այլ պետության կազմի մեջ.
- մի պետության տարածքի մասն անցնում է մեկ այլ պետության:

ՄԱԿ-ի հովանու ներքո ընդունված իրավահաջորդության մասին երկու կոնվենցիաները վավերացրել են քիչ թվով պետություններ, դրանք դեռևս ուժի մեջ չեն մտել: Այդուհանդերձ, կոնվենցիաները քննարկվող բնագավառում առավել հեղինակավոր ակտերն են և բովանդակում են իրավահաջորդության հարցի լուծման համար ընդհանուր կողմնորոշիչներ: Դրանք են՝ Պայմանագրերի նկարմամբ պետությունների իրավահաջորդության մասին Վիեննայի 1978 թ. կոնվենցիան և Պետական սեփականության, պետական արխիվների և պետական պարտքերի նկարմամբ պետությունների իրավահաջորդության մասին Վիեննայի 1978 թ. կոնվենցիան:

Տարբերակում են իրավահաջորդության հետ կապված իրավիճակների հանդեպ դրսևորվող երկու հիմնական մոտեցում՝

- լիակատար իրավահաջորդություն, այսինքն՝ իրավանախորդ պետության բոլոր իրավունքների և պարտականությունների ընդունումն առանց որևէ վերանայման.
- «tabula rasa» (մաքուր տախտակի) սկզբունքով իրավահաջորդությունը, այսինքն՝ նրա բոլոր իրավունքների և պարտականությունների լրիվ վերանայումը:

Գործնականում սովորաբար երկու եղանակներն օգտագործվում են զուգահեռաբար:

Իրավահաջորդությունը պայմանագրերի նկարմամբ: Իրավահաջորդության այս ոլորտն առնչվում է միջպետական հարաբերությունների գրեթե բոլոր սուբյեկտներին, քանի որ ժամանակակից աշխարհում այդ հարաբերությունների կարգավորման գործում միջազգային պայմանագրերին վերապահված է վճռորոշ դեր:

1978 թ. Վիեննայի կոնվենցիայում ասվում է, որ իրավահաջորդությունը չի առնչվում սահմաններին և դրանց ռեժիմը սահմանած պայմանագրերին: Դա նշանակում է, որ նոր կազմավորված պետությունը իրավահաջորդության պահին պարտավոր է ճանաչել սահմանները և դրանց ռեժիմն այնպիսին է, ինչպիսին դրանք եղել են իրավանախորդ պետության ժամանակ: Սահմանների հետ անհամաձայնության դեպքում նա կարող է պահանջել դրանց վերանայում միայն հետագայում՝ այդ մասին միջազգային իրավական բոլոր պահանջների պահպանմամբ:

Պետությունների միավորման դեպքում նրանց բոլոր պայմանագրերը պահպանում են իրենց ուժը, սակայն կիրառվում են միավորված պետության տարածքի միայն այն մասի նկատմամբ, որի նկատմամբ դրանք ուժի մեջ էին իրավահաջորդության պահին:

Եթե պետությունների բաժանման ժամանակ մասերից մեկը շարունակում է գոյություն ունենալ որպես իրավանախորդ պետություն, ապա նրա պայմանագրային հարաբերություններում փոփոխություններ չեն կատարվում: Բացառություն են այն պայմանագրերը, որոնք անմիջականորեն կապված են անջատված տարածքի հետ: Ասվածը վերաբերում է նաև ՄԱԿ-ի անդամությանը:

ԽՍՀՄ նախկին հանրապետությունների իրավահաջորդությունը: Խորհրդային Միության տրոհման ընթացքում նախկին միութենական բոլոր հանրապետությունները սկզբում միակողմ կարգով հայտարարել են ԽՍՀՄ միջազգային պայմանագրերից և համաձայնագրերից բխող բոլոր պարտավորությունների կատարման պատրաստակամության մասին: Այնուհետև այդ պարտավորությունը հավաքական կարգով հաստատվել է *Անկախ պետությունների համագործակցության սրբազան մասին համաձայնագրում*: ԱՊՀ պետությունների դեկլարների խորհրդի 1992 թ. մարտի 20-ի որոշմամբ Համագործակցության անդամ բոլոր պետությունները ճանաչվել են նախկին ԽՍՀՄ Միության իրավահաջորդներ:

Գործնականում և Ռուսաստանի Դաշնությունը, և՛ մյուս բոլոր նոր պետություններն իրականացրել են իրենց տարածքներին վերաբերող՝ ԽՍՀՄ միջազգային պայմանագրերի յուրատեսակ գույքագրում: Ռոքոշ դեպքերում դա իրականացվում էր այդ պայմանագրերի մյուս կողմերի հետ համատեղ:

Միջազգային իրավունքը իրավահաջորդությունը կապում է միայն տարածքի փոփոխման հետ: Ինչ վերաբերում է պետական իշխանության կազմակերպման և բնույթի փոփոխություններին, ապա հստակ սահմանված է, որ դրանք չեն ազդում պայմանագրերի պարտադիր ուժի վրա: Դա նշանակում է, որ ո՛չ կառավարման ձևի փոփոխությունները (միապետություն – հանրապետություն), ոչ պետական կառուցվածքի ձևի փոփոխությունները (դաշնություն – ունիտար պետություն) չեն ազդում պայմանագրերի վրա:

Պետություններում առանձնապես խոր փոփոխություններ են տեղի ունենում սոցիալական հեղափոխությունների արդյունքում, որոնք փոխում են ոչ միայն իշխանության բնույթը, այլև հասարակության էությունը:

Իրավահաջորդությունը պետական սեփականության նկատմամբ: 1983 թ. Վիեննայի կոնվենցիայի նորմերը վերաբերում են միայն իրավանախորդ պետության պետական սեփականությանը: Իրավահաջորդության ռեժիմը չի տարածվում ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականության վրա: «Իրավանախորդ պետության պետական սեփականության» տակ հասկացվում է «այն գույքը, իրավունքները և շահերը, որոնք, պետության իրավահաջորդության պահին իրավանախորդ պետության ներքին իրավունքի համաձայն, պատկանում էին այդ պետությանը»: Պետական սեփականության օբյեկտների կոնկրետ կազմը որոշվում է ներքին իրավունքով: Ավելի հաճախ, պետական սեփականության հիմնական զանգվածը պաշտոնական նպատակներով օգտագործվող գույքն է՝ պետական շենքերը, կապի միջոցները, թանգարանները, ռազմական բազաները և այլն:

Իրավահաջորդության հարցերն ավելի հեշտ են լուծվում պետությունների միավորման դեպքում: Միավորվող պետությունների սեփականությունն անցնում է միավորված պետությանը: Ավելի բարդ դեպքերի համար Վիեննայի կոնվենցիան, որպես իրավահաջորդության

հիմնախնդիրների լուծման հիմնական եղանակ. նշում է փոխադարձ համաձայնությունը և միայն դրա բացակայության դեպքում առաջարկում է իր կանոնները:

Պետության տարածքի մասի փոխանցման դեպքում իրավանախորդ պետության՝ իրավահաջորդության օբյեկտ հանդիսացող անշարժ սեփականությունն անցնում է իրավահաջորդ պետությանը: Իրավանախորդ պետության մույն կարգի շարժական սեփականությունն անցնում է իրավահաջորդ պետությանը, եթե այն կապված է եղել փոխանցվող տարածքի նկատմամբ իրավանախորդ պետության գործունեության հետ:

Նույն կանոնները կիրառվում են նաև մյուս դեպքերում՝ տարածքի մի մասի անջատման և դրանում նոր պետության կազմավորման, ինչպես նաև պետության բաժանման դեպքում: Այս հարցերը որպես կանոն՝ լուծվում են հատուկ համաձայնագրերի միջոցով:

Պետության բաժանման դեպքում ծագում է արտասահմանում իրավանախորդ պետության շարժական գույքի նկատմամբ իրավահաջորդության հարցը: Նման սեփականությունն անցնում է իրավանախորդ պետություններին «արդար բաժիններով» (հ. 18): Նախատեսվում է արդարացի փոխհատուցման հնարավորություն:

Իրավահաջորդությունը պետական արխիվների նկատմամբ: Արխիվները մեծ արժեք են ներկայացնում ոչ միայն գիտական և մշակութային նպատակների, այլև պետության կազմակերպման, նրա բարեկեցության, սոցիալ-տնտեսական զարգացման համար: 1983 թ. Վիեննայի կոնվենցիայի հատուկ մասը նվիրված է արխիվներին:

Իրավահաջորդության առարկան են «իրավանախորդ պետության պետական արխիվները»: Դրա տակ հասկացվում է իրավանախորդի ստեղծած կամ ձեռք բերած ցանկացած վաղեմության փաստաթղթերի համակցությունը, որոնք նրան են պատկանում իր ներքին իրավունքի համաձայն և պահպանվում են նրա կողմից: Ընդհանուր կանոնի համաձայն, արխիվների անցումը չի ուղեկցվում փոխհատուցմամբ:

Կոնվենցիան ամրագրում է պետական արխիվների և ֆոնդերի ամբողջականության պահպանման սկզբունքը: Այդ սկզբունքը դրսևորվեց ԱՊՀ շրջանակներում 1992 թ. կնքված *Նախկին ԽՍՀՄ պե-*

դրական արխիվների նկատմամբ իրավահաջորդության մասին համաձայնագրում: Ելնելով արխիվային ֆոնդերի ամբողջականության և անբաժանելիության սկզբունքից՝ մասնակիցները չեն հավակնելու նախկին Ռուսական կայսրության և ԽՍՀՄ բարձրագույն պետական կառույցների գործունեության արդյունքում կազմավորված ֆոնդերին, որոնք պահպանվում են «իրենց տարածքի սահմաններից դուրս»:

Միաժամանակ, մասնակիցները փոխադարձաբար ճանաչել են պետական արխիվների անցումն իրենց իրավատիրության ներքո, ներառյալ՝ նրանց տարածքում գտնվող համամիութենական մակարդակի պետական արխիվները: Հետևաբար, արխիվները բաժանվել են առավել պարզ՝ տարածքային չափանիշով:

Իրավահաջորդությունը պետական պարտքերի նկատմամբ:

1983 թ. Վիեննայի կոնվենցիան նաև վերաբերվում է պետական պարտքերին, որոնց թվին դասվել են իրավանախորդ պետության՝ միջազգային իրավունքին համապատասխան ծագած ցանկացած ֆինանսական պարտավորությունները միջազգային իրավունքի այլ սուբյեկտի հանդեպ:

Նախկին ԽՍՀՄ ներքին պարտքի հիմնահարցի լուծման հիմունքները որոշվել են 1992 թ. հատուկ համաձայնագրով: Մասնակիցներն ստանձնել են բնակչության առաջ նախկին ԽՍՀՄ պետական պարտքի մարման պարտավորություն՝ նրանցից յուրաքանչյուրի տարածքում ԽՍՀՄ խնայրանկի հիմնարկների հաշվեկշիռներում պարտքի մնացորդին համամասնական գումարներով:

Որպես ընդհանուր սկզբունք, Վիեննայի կոնվենցիան սահմանել է, որ պետությունների իրավահաջորդությունը չի շոշափում պարտատերերի իրավունքները և պարտավորությունները (հ. 36): Այլ կերպ ասած, բացառությամբ հատուկ դեպքերի, իրավահաջորդությունը վնաս չի պատճառում նրանց իրավունքներին, ովքեր վարկեր են տրամադրել:

Իրավահաջորդության բոլոր դեպքերի համար սահմանված է ընդհանուր կանոն. իրավանախորդ պետության պարտքն անցնում է իրավահաջորդ պետություններին արդար բաժնով, այն գույքի, իրավունքների և շահերի հաշվառմամբ, որոնք անցնում են համապա-

տասխան իրավահաջորդին՝ տվյալ պետական պարտքի կապակցությամբ:

Նախկին Խորհրդային միութենական հանրապետությունների միջև կնքվել են մի շարք բազմակողմ և երկկողմ համաձայնագրեր՝ նախկին ԽՍՀՄ պետական պարտքի նկատմամբ իրավահաջորդության վերաբերյալ, որոնց համաձայն նախկին խորհրդային հանրապետությունները Ռուսաստանին են փոխանցում նախկին ԽՍՀՄ արտաքին պարտքի իրենց համապատասխան բաժնեմասի վճարման պարտավորությունը՝ մինևույն ժամանակ զիջելով Ռուսաստանին նախկին ԽՍՀՄ ակտիվներում իրենց բաժնեմասերը:

ԳԼՈՒԽ 5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՉՔՈՒՆՔՆԵՐԸ

§ 13. Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների հասկացությունը

Միջազգային իրավունքի նորմերի մեջ առանձնանում են բոլոր պետությունների կողմից հիմնարար ճանաչված որոշ դրույթներ, որոնք անվանվում են *միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներ*: Այդպիսի սկզբունքներ են միջազգային իրավունքի այն նորմերը, որոնք, առավել կարևորություն ունենալով միջազգային հարաբերությունների կարգավորման համար, պարտադիր են միջազգային իրավունքի բոլոր սուբյեկտների համար: Այդ նորմերի պահպանումը խիստ պարտադիր է, առանձին պետություն կամ պետությունների խմբեր չեն կարող չեղյալ հայտարարել կամ փոփոխել դրանք: Միջազգային իրավունքի սկզբունքներն ամրագրում են միջպետական հարաբերությունների համար ելակետային նշանակություն ունեցող ղեկավար կանոններ, նրանք միջազգային իրավունքի ամբողջ համակարգի հիմքն են: Միջազգային իրավունքի ոչ մի նորմ չի կարող հակասել հիմնական սկզբունքներին, հակառակը՝ միջազգային իրավունքի յուրաքանչյուր այլ նորմ ինչ-որ իմաստով հիմնական սկզբունքների զարգացում է, կոնկրետացում: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ հաճախ նշվում է, որ միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներում խտացված կերպով արտահայտված է միջազգային իրավունքի հիմնական բովանդակությունը:

Այսպիսով, միջազգային իրավունքի սկզբունքները սուբյեկտների հասարակական պրակտիկայի արդյունքում ծագող վարքագծի ղեկավար կանոններ են: Դրանք միջազգային հարաբերությունների կայացած պրակտիկայի առավել ընդհանուր դրսևորումն են: Միջազգային իրավունքի սկզբունքը բոլոր սուբյեկտների համար պարտադիր միջազգային իրավունքի նորմ է:

Լինելով ընդհանուր միջազգային իրավունքի միջուկը և օժտված լինելով իմպերատիվ ուժով՝ հիմնական սկզբունքները գոյություն ունեն միայն որպես համընդհանուր, հանրաճանաչ և համապարտա-

դիր նորմեր: Միջազգային իրավունքի սկզբունքը կարելի է վերացնել միայն վերացնելով հասարակական պրակտիկան, ինչն անհնարին է առանձին պետությունների կամ պետությունների խմբերի կողմից:

Միջազգային իրավունքի սկզբունքների բնորոշ գիծը դրանց ունիվերսալ բնույթն է: Դա նշանակում է, որ միջազգային իրավունքի բոլոր սուբյեկտները պարտավոր են խստորեն պահպանել դրանք, քանի որ դրանց ցանկացած խախտում անխուսափելիորեն կառնչվի միջազգային հարաբերությունների այլ մասնակիցների օրինական շահերին: Դա նաև նշանակում է, որ միջազգային իրավունքի սկզբունքները միջազգային իրավական նորմերի ամբողջ համակարգի օրինականության չափանիշներ են: Սկզբունքների գործողությունը տարածվում է նույնիսկ միջազգային հարաբերությունների այն ոլորտների վրա, որոնք որևէ պատճառներով կարգավորված չեն կոնկրետ նորմերով: Այդպիսով, սկզբունքները միջազգային իրավակարգի հիմքն են:

Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներն ամրագրված են ՄԱԿ-ի Կանոնադրությունում: Լայն ճանաչում է ստացել այն տեսակետը, որ ՄԱԿ-ի Կանոնադրության սկզբունքները «jus cogens» բնույթ ունեն, այսինքն՝ բարձրագույն կարգի պարտավորություններ են և չեն կարող վերացվել պետությունների կողմից ո՛չ անհատապես, ոչ փոխադարձ համաձայնությամբ: Կանոնադրության 103-րդ հոդվածի դրույթները՝ դրանցից բխող պարտավորությունների առավելագույն ուժի մասին, նախ և առաջ վերաբերվում են դրանում ամրագրված հիմնական սկզբունքներին: Ավելին, ՄԱԿ-ը պետք է ապահովի, որպեսզի նաև իրեն չանդամակցող պետությունները գործեն այդ սկզբունքներին համապատասխան, քանի որ դա կարող է անհրաժեշտ լինել միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման համար (հ. 2, կ. 6.):

Ժամանակակից միջազգային իրավունքի սկզբունքների բովանդակությունը բացահայտող առավել հեղինակավոր փաստաթղթեր են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1970 թ. հոկտեմբերի 24-ին ընդունված *Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագիրը* և Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության 1975 թ. օգոստոսի 1-ի Եզրափակիչ ակտում բովանդակվող *Սկզբունքների հռչակագիրը*, որոնցով մասնակից պետությունները ղեկավարվելու են փոխադարձ հարաբերություններում:

Միջազգային իրավունքի սկզբունքները մեկնաբանելիս և կիրառելիս կարևոր է հիշել, որ դրանք փոխկապակցված են, և դրանցից յուրաքանչյուրը պետք է դիտարկվի մյուս բոլոր սկզբունքների համատեքստում:

Հիմնական սկզբունքների բովանդակությունն առանձնանում է կայունությամբ: Արտացոլելով միջազգային հարաբերությունների համակարգի և միջազգային իրավունքի բնորոշ գծերը՝ դրանք միջպետական հարաբերություններում այս կամ այն մասնավոր փոփոխությունների ազդեցությանը չեն ենթարկվում:

Հիմնական սկզբունքների գործողության կառուցակարգի մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանցից ծագող պարտավորությունները կրում են համընդհանուր բնույթ (erga omnes): Դա յուրաքանչյուր պետության իրավունք է վերապահում և մաս պարտավորեցնում է սկզբունքների խախտման դեմ ուղղված միջոցներ ձեռնարկել նույնիսկ այն դեպքերում, երբ սկզբունքների խախտմամբ այդ պետության շահերը անմիջականորեն չեն շոշափվում:

Հիմնական սկզբունքների գործողության հաջորդ առանձնահատկությունն այն է, որ այդ ընթացքում պարզ երևում են դրանց գործողության երկու ձևերը՝ *ուղղակի* և *միջնորդավորված*: Որպես միջազգային իրավունքի նորմեր, դրանք ուղղակիորեն ներգործում են միջազգային իրավունքի սուբյեկտների հարաբերություններին: Իսկ արտացոլվելով իրենց վրա հենվող ավելի կոնկրետ նորմերի բովանդակության մեջ՝ դրանք այդ նորմերով միջնորդավորված ներգործություն են ունենում:

Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների գործառույթները մախ և առաջ այն են, որ դրանք գլխավոր համակարգ կազմավորող գործոնի դեր են կատարում, միավորելով նորմերը, իմաստոտները, ճյուղերը՝ նպաստելով միջազգային իրավունքի գործողության համակարգային բնույթին:

Դրանք նորմատիվային հիմք են ծառայում ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառական գործընթացի, մասն միջազգային իրավունքի առաջընթաց զարգացման համար և արդյունքում օրինակալուծության բարձրագույն չափանիշն են այդ իրավունքի գործողության բոլոր փուլերում:

Հիմնական սկզբունքների դերը հասկանալու համար էական նշանակություն ունի այն, որ իրենց համակցությամբ դրանք կազմավորում են միջազգային իրավունքի կենտրոնական ենթահամակարգը: Հիմնական սկզբունքների գոյությունը և գործողությունը համակարգային բնույթ ունեն: Դրանք բոլորն էլ սերտորեն փոխներհյուսված են և փոխգործում են:

Հիմնական սկզբունքների համակարգը չի կարող ամբողջովին ըմբռնվել, առանց հաշվի առնելու միջազգային իրավունքի հիմնական նպատակների հետ դրա կապերը: *Նպատակը* ցանկալի վիճակն է: Այն հանդես է գալիս որպես իրավաստեղծման, իրավակիրառման և իրավունքի զարգացման կայուն կողմնորոշիչ: Ամրագրվելով իրավունքով՝ նպատակը սուբյեկտներին իրավաբանորեն պարտադրում է ապահովել դրա իրականացումը: Սկզբունքները ժամանակակից միջազգային իրավունքի համակարգի միջուկն են և գործում են դրա նպատակների հետ փոխգործակցված: Այդ փոխգործողության բնույթն արտացոլված է միջազգային ակտերում: Այսպես, ՄԱԿ-ի Կանոնադրության 1-ին հոդվածն ամրագրել է կազմակերպության և այդպիսով իսկ՝ միջազգային իրավունքի հիմնական նպատակները: Կանոնադրության 2-րդ հոդվածը նվիրված է սկզբունքներին: Դրանում ասվում է. «1 հոդվածում նշված նպատակներին հասնելու համար կազմակերպությունը և դրա անդամները գործում են հետևյալ սկզբունքներին համապատասխան...»: Նույն կերպ է հարցը լուծվել մաս 1970 թ. Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում:

Հիմնական նպատակներն ամրագրված են ՄԱԿ-ի Կանոնադրությունում և այլ միջազգային ակտերում: Դրանք են միջազգային խաղաղության և անվտանգության պահպանումը, միջազգային իրավունքի սկզբունքների վրա հիմնված բարեկամական կապերի զարգացումը, տնտեսական, սոցիալական, մշակութային և մարդասիրական բնույթի միջազգային հիմնախնդիրների լուծման հարցում միջազգային համագործակցության իրականացումը: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ միջազգային իրավունքի հիմնական նպատակը պետությունների խաղաղ գոյակցության ապահովումն է:

§ 14. Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները

Ուժ կամ ուժի սպառնալիք չգործադրելու սկզբունքը: Ուժ կամ ուժի սպառնալիք չգործադրելու սկզբունքը միջազգային իրավունքում առաջացել է համաշխարհային երկու պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում՝ սկզբնապես որպես ագրեսիվ պատերազմի արգելման սկզբունք: Այդ սկզբունքը փոխարինեց մինչ այդ միջազգային իրավունքում գոյություն ունեցած՝ պետության պատերազմի իրավունքին (jus ad bellum), որի համաձայն՝ յուրաքանչյուր պետություն կարող էր այլ պետության դեմ պատերազմ սկսել ցանկացած վեճի դեպքում:

1928 թ. օգոստոսի 27-ի Փարիզի պայմանագրի (Բրիսնի – Քելլոգի պակտը) առաջին բազմակողմ միջազգային պայմանագիրն էր, որը, չնայած իր դրույթների որոշ անկատարությանը, բովանդակում էր ագրեսիվ պատերազմի արգելքը:

ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն. «Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամները իրենց միջազգային հարաբերություններում ձեռնպահ են մնում ուժի սպառնալիքից կամ դրա գործադրումից ինչպես ցանկացած պետության տարածքային անձեռնմխելիության կամ քաղաքական անկախության դեմ, այնպես էլ՝ Միավորված ազգերի նպատակների հետ անհամատեղելի որևէ այլ ձևով»:

Հետագայում կանոնադրության նշված նորմը կոնկրետացվել է ՄԱԿ-ի բանաձևերի տեսքով ընդունված փաստաթղթերում: Գերանցից է նաև Միջազգային իրավունքի սկզբունքների մասին 1970 թ. հոշակագիրը, ինչպես նաև Միջազգային հարաբերություններում ուժի սպառնալիքից կամ դրա գործադրումից հրաժարվելու սկզբունքի արդյունավետության ուժեղացման մասին 1987 թ. հոշակագիրը: Վերջին փաստաթղթում սկզբունքի նորմատիվ բովանդակությունն արտահայտված է առավել սպառնիչ: ՄԱԿ-ի Կանոնադրությունը նախատեսում է զինված ուժի իրավաչափ գործադրման միայն երկու դեպք՝ ինքնապաշտպանության նպատակներով (հ. 51) և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի որոշմամբ՝ խաղաղությանը սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի դեպքում (հհ. 39 և 42):

Ուժ չգործադրելու սկզբունքը նախատեսում է նախ և առաջ ագրեսիվ պատերազմների արգելքը: ՄԱԿ-ի բանաձևերի տեսքով 1974 թ. ընդունված ագրեսիայի բնորոշումը սահմանում է միջազգային իրավունքով արգելված այն գործողությունների ոչ սպառնիչ ցանկը, որոնք ուժի ապօրինի օգտագործման առավել լուրջ և վտանգավոր ձևեր են: 1974 թ. ընդունված ագրեսիայի բնորոշման համաձայն, պետության կողմից առաջինը զինված ուժի գործադրումը կարող է որակվել որպես ագրեսիվ պատերազմ, որը միջազգային հանցագործություն է և առաջ է բերում պետությունների միջազգային իրավական պատասխանատվություն և մեղավոր անհատների միջազգային քրեական պատասխանատվություն:

Բացի ագրեսիայի հասկացությունից, միջազգային իրավունքում հայտնի է «զինված հարձակում» հասկացությունը: Երկու դեպքերում էլ, պետությունների գործողությունների նմանությունների հետ մեկտեղ, դրանց իրավաբանական հետևանքները կարող են տարբեր լինել: Օրինակ, Անվտանգության խորհուրդը կարող է որպես ագրեսիա որակել անմիջական զինված հարձակման հետ չկապված գործողությունները:

Ուժ չգործադրելու սկզբունքի նորմատիվային բովանդակությունը ներառում է՝

- միջազգային իրավունքի նորմերի խախտմամբ այլ պետության տարածքի օկուպացիայի արգելքը,
- ուժ գործադրելու հետ կապված ռեպրեսալիաների արգելքը,
- երրորդ պետության դեմ ագրեսիա իրականացնելու համար պետության կողմից իր տարածքն այլ պետությանը տրամադրելու արգելքը,
- այլ պետությունում քաղաքացիական պատերազմին կամ անարևելյան ակտերին օգնություն ցուցաբերելու, մասնակցության, կազմակերպման կամ դրոշմի արգելքը,
- այլ պետության տարածք ներխուժելու համար զինված բանակների և կանոնավոր ուժերի կազմակերպման կամ կազմակերպումը խրախուսելու արգելքը:

Ուժ չգործադրելու սկզբունքի խախտում պետք է համարել նաև միջազգային դեմարկացիոն գծերի և զինադադարի գծերի նկատմամբ բռնի գործողությունները, պետության նավահանգիստների և

ծովեզերքների շրջափակումը, ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրականացմանը խոչընդոտող ցանկացած բռնի գործողությունները, ինչպես նաև մի շարք այլ բռնի գործողություններ:

Պեղական սահմանների անխախտելիության սկզբունքը: Պետական սահմանների անխախտելիության սկզբունքը եվրոպական պետությունների անվտանգության կարևորագույն հիմքերից մեկն է:

Սահմանների անխախտելիության սկզբունքը ձևակերպվել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության 1975 թ. Եզրափակիչ ակտում. «Մասնակից պետությունները անխախտ են դիտում միմյանց բոլոր սահմանները, ինչպես նաև Եվրոպայում բոլոր պետությունների սահմանները, և այս պատճառով նրանք այժմ և հետագայում ձեռնպահ կմնան այդ սահմանների նկատմամբ ցանկացած ոտնձգությունից»: Պետական սահմանների նկատմամբ ոտնձգություն են միակողմ գործողությունները կամ պահանջները՝ ուղղված սահմանի գծի, դրա իրավաբանական ձևակերպման կամ տեղանքում սահմանի գծերի փաստացի դիրքի փոփոխմանը:

ԵԱՀԽ մասնակից պետությունները դրանով իսկ արտահայտել են եվրոպական պետությունների առկա սահմանների ճանաչումը կամ հաստատումը: Այդ ճանաչումը միջազգային իրավական է, ինչը բերում է որոշակի իրավաբանական հետևանքների, մասնավորապես՝ այդ ճանաչումը չի կարելի չեղյալ հայտարարել: Փաստացի ձևավորված սահմանի միջազգային իրավական ճանաչումը հավասարեցվում է գոյություն ունեցող սահմանների վերաբերյալ պետությունների համաձայնությանը:

Սահմանների անխախտելիության սկզբունքի հիմնական բովանդակությունը ներառում է հետևյալ տարրերը՝

- գոյություն ունեցող սահմանների ճանաչումը՝ որպես միջազգային իրավունքին համապատասխան իրավաբանորեն ձևավորված,
- ներկայում կամ ապագայում որևէ տարածքային հավակնություններից հրաժարվելը,
- այդ սահմանների նկատմամբ այլ ցանկացած ոտնձգություններից հրաժարվելը, ներառյալ ուժի սպառնալիքը կամ դրա գործադրումը:

Պեղականների փարածքային ամբողջականության սկզբունքը: Միջպետական հարաբերություններում կայունության տեսանկյունից այդ սկզբունքի կարևորությունը չափազանց մեծ է: Դրա նշանակությունը պետության տարածքի պաշտպանությունն է ցանկացած արտաքին ոտնձգություններից: Այդ սկզբունքը հաստատվել է 1945 թ. ՄԱԿ-ի Կանոնադրության ընդունմամբ: Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետն առաջին անգամ արգելել է ուժի սպառնալիքը կամ դրա գործադրումը ցանկացած պետության տարածքային անձեռնմխելիության և քաղաքական անկախության դեմ:

Հետագայում, Միջազգային իրավունքի սկզբունքների մասին 1970 թ. հռչակագրում, ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետի ձևակերպումը մեկնաբանելիս, արտացոլվել են տարածքային ամբողջականության (անձեռնմխելիության) սկզբունքի բազմաթիվ տարրեր, թեև սկզբունքն ինքնին առանձին չէր հիշատակվում: Մասնավորապես, սահմանվում էր, որ յուրաքանչյուր պետություն «պետք է ձեռնպահ մնա ցանկացած այլ պետության կամ երկրի ազգային միասնության և տարածքային ամբողջականության մասնակի կամ լրիվ խախտմանն ուղղված ցանկացած գործողություններից»: Նշվում էր նաև, որ «պետության տարածքը չպետք է լինի կանոնադրության դրույթների խախտմամբ ուժի գործադրման արդյունք հանդիսացած ռազմական օկուպացիայի օբյեկտ», և որ «պետության տարածքը չպետք է լինի ուժի սպառնալիքի կամ դրա գործադրման արդյունքում այլ պետության ձեռքբերման օբյեկտ»:

Տվյալ սկզբունքի զարգացման հաջորդ փուլը դարձավ Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության 1975 թ. Եզրափակիչ ակտը, որը բովանդակում է պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքի առանձին և առավել լրիվ ձևակերպումը. «Մասնակից պետությունները հարգելու են մասնակից պետություններից յուրաքանչյուրի տարածքային ամբողջականությունը: Դրան համապատասխան, նրանք ձեռնպահ կմնան ցանկացած մասնակից պետության տարածքային ամբողջականության, քաղաքական անկախության կամ միասնության դեմ ուղղված՝ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության նպատակների և սկզբունքների հետ անհամատեղելի ցանկացած գործո-

դրություններից և մասնավորապես, ցանկացած նման գործողություններից, որոնք ուժի գործադրում կամ ուժի սպառնալիք են»:

Անհրաժեշտ է նշել, որ այս սկզբունքը վերաբերվում է միջպետական հարաբերություններին, ուստի դրա և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքների միջև, իբր, գոյություն ունեցող հակասության մասին կարծիքը զուրկ է որևէ հիմքից: Տարածքային ամբողջականության սկզբունքը բացառում է ինչպես այլ պետության կողմից տարածքի բռնազավթումը, այնպես էլ օտար պետության շրջանակներում որևէ ազգին բռնությամբ պահելը: Այս տեսանկյունից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը լիովին իրավաչափ է, քանի որ դա ոչ թե տարածքային ամբողջականության սկզբունքի խախտում է, այլ ինքնորոշման սկզբունքի իրականացում: Պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը կարգավորում է պետությունների միջև գոյություն ունեցող հարաբերությունները և չի վերաբերում այն դեպքերին, երբ ժողովուրդը, ինքնորոշվելով, ստեղծում է իր պետությունը:

Միջազգային վեճերի խաղաղ լուծման սկզբունքը: ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամներն իրենց միջազգային վեճերը լուծում են խաղաղ միջոցներով, այնպես, որպեսզի չվտանգվի միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և արդարությունը: Միջազգային վեճերի խաղաղ լուծման սկզբունքի զարգացումը նշանավորվել է մի շարք միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի կնքմամբ, որոնք, աստիճանաբար սահմանափակելով պատերազմի դիմելու իրավունքը, զարգացնում էին միջազգային վեճերի խաղաղ կարգավորման միջոցները և սահմանում այդպիսի միջոցներ կիրառելու՝ պետությունների իրավաբանական պարտականությունը:

Միջազգային իրավունքի այս սկզբունքը ենթադրում է, որ.

- պետությունները պարտավոր են իրենց միջև ծագած վեճերը լուծել միայն խաղաղ միջոցներով,
- պետությունները ազատ են իրենց վեճերը լուծելու միջոցների ընտրության հարցում,
- եթե խաղաղ միջոցներից մեկի կիրառումը չի հանգեցրել վեճի լուծմանը, ապա պետությունները պետք է փնտրեն այլ խաղաղ միջոցներ:

ՄԱԿ-ի Կանոնադրության 33-րդ հոդվածի համաձայն, վեճի մասնակիցները «պետք է նախ և առաջ ձգտեն վեճը լուծել բանակցությունների, ուսումնասիրության, միջնորդության, հաշտեցման, արբիտրաժի, դատական քննության, տարածաշրջանային մարմիններին կամ համաձայնություններին դիմելու կամ իրենց ընտրությամբ այլ խաղաղ միջոցներով»:

Այսպիսով, ՄԱԿ-ի Կանոնադրությունը վեճին մասնակցող կողմերին այնպիսի խաղաղ միջոցների ընտրության ազատություն է ընձեռում որոնք նրանք ավելի հարմար են համարում տվյալ վեճը լուծելու համար:

Ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը: Չմիջամտելու սկզբունքի ժամանակակից ըմբռնումն ընդհանուր ձևով ամրագրված է ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 7-րդ կետում և որոշակիացված է հեղինակավոր միջազգային փաստաթղթերում՝ Միջազգային իրավունքի սկզբունքների մասին 1970 թ. հռչակագրում, ԵԱՀԽ Եզրափակիչ ակտում, *Պետությունների ներքին գործերին միջամտելու անթույլատրելիության մասին ՄԱԿ-ի հռչակագրում*:

Այսպես, ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն, կազմակերպությունն իրավասու չէ «միջամտել, ըստ էության, ցանկացած պետության ներքին իրավասության մեջ մտնող գործերին»: Նշված սահմանափակումը տարածվում է ոչ միայն ՄԱԿ-ի, այլև միջազգային շփման այլ ցանկացած մասնակիցների գործողությունների նկատմամբ:

Միջազգային իրավունքը սկզբունքորեն չի կարգավորում պետությունների ներքին քաղաքական դրության հարցերը, ուստի և միջամտություն պետք է համարվեն պետությունների կամ միջազգային կազմակերպությունների ցանկացած քայլերը, որոնց օգնությամբ վերջինները փորձում են խոչընդոտել միջազգային իրավունքի սուբյեկտին՝ ըստ էության իր ներքին իրավասության մեջ մտնող հարցերը լուծելիս:

«Պետության ներքին գործեր» և «ըստ էության, ցանկացած պետության ներքին իրավասության մեջ մտնող գործեր» հասկացությունները տարածքային հասկացություններ չեն: Տվյալ պետության տարածքում տեղի ունեցող ամեն ինչ չէ, որ վերաբերում է նրա ներքին գործերին: Միևնույն ժամանակ, պետության տարածքային սահ-

մաններից դուրս եկող բազմաթիվ հարաբերություններ, ըստ էության, կազմում են դրա ներքին իրավասությունը:

1970 թ. հռչակագրի համաձայն, չմիջամտելու սկզբունքը նախատեսում է ցանկացած պատճառներով ցանկացած պետության ներքին կամ արտաքին գործերին ուղղակի կամ անուղղակի միջամտության արգելքը: Հռչակագրի համաձայն, տվյալ սկզբունքը ներառում է՝

• զինված միջամտության (ինտերվենցիայի) և պետության իրավասությունների կամ նրա քաղաքական, տնտեսական և մշակութային հիմքերի դեմ ուղղված միջամտության կամ դրա սպառնալիքի արգելքը:

• ինքնիշխան իրավունքներն իրականացնող այլ պետությանն իրեն ներթափելու և նրանից որևէ առավելություն ստանալու նպատակով տնտեսական, քաղաքական և այլ միջոցներ օգտագործելու արգելքը:

• բռնության միջոցով, այլ պետության պետական կարգի փոփոխմանն ուղղված զինված, սադրիչ կամ ահաբեկչական գործունեություն կազմակերպելու, խրախուսելու, օգնելու կամ թույլ տալու արգելքը:

• այլ պետությունում ներքին պայքարին միջամտելու արգելքը:

• իրենց ազգային գոյության ձեռքն ազատ ընտրելու իրավունքից ժողովուրդներին զրկելու համար ուժ գործադրելու արգելքը:

• առանց այլ պետությունների միջամտության իրենց քաղաքական, տնտեսական և սոցիալական համակարգն ընտրելու՝ պետության իրավունքը:

«Ըստ էության, ցանկացած պետության ներքին իրավասության մեջ մտնող գործեր» հասկացության բովանդակությունը փոփոխվում էր միջազգային իրավունքի զարգացմանը զուգընթաց: Այդ զարգացման ընթացքում ավելանում է այն խնդիրների կամ ոլորտների քանակը, որոնք որոշ չափով ենթարկվում են միջազգային իրավական կարգավորման, հետևաբար, դադարում են պատկանել միայն պետությունների ներքին իրավասությանը:

Պետությունների ներքին իրավասությանը վերաբերող գործերի հիմնահարցի լուծումը գործնականում հաճախ վեճերի տեղիք է տալիս: Պետք է հիշել, որ միջազգային համագործակցության զարգացմամբ ավելանում է այն հարցերի քանակը, որոնք պետություններ

ը կամավոր հիմքով ենթարկում են միջազգային կարգավորման: Դա, սակայն, չի նշանակում բոլոր նման հարցերի ինքնաբերաբար դուրս բերում պետությունների ներքին իրավասության ոլորտից:

Չմիջամտելու հայեցակարգը չի նշանակում, որ պետությունները կարող են կամայականորեն իրենց ներքին իրավասությանը դասել ցանկացած հարց: Պետությունների միջազգային պարտավորությունները, այդ թվում նաև՝ ՄԱԿ-ի Կանոնադրության համաձայն ստանձնած պարտավորությունները, այն չափանիշն են, որը թույլ է տալիս ճիշտ մոտենալ խնդրի լուծմանը:

Պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը: Միջազգային իրավակարգի պահպանումը կարող է ապահովվել միայն մասնակիցների իրավաբանական հավասարության լիակատար հարգման պարագայում: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել մյուս պետությունների ինքնիշխանությունը, այսինքն՝ նրանց իրավունքը՝ սեփական տարածքի ռազմաներում իրականացնելու օրենսդիր, գործադիր, վարչական և դատական իշխանություն, առանց այլ պետությունների կողմից որևիցե միջամտության, ինչպես նաև ինքնուրույն իրականացնել արտաքին քաղաքականություն: Պետությունների ինքնիշխան հավասարությունը ժամանակակից միջազգային հարաբերությունների հիմքն է, ինչն ընդհանրացված արտահայտված է ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 1-ին կետում. «Կազմակերպությունը հիմնված է դրա բոլոր անդամների ինքնուրույն հավասարության սկզբունքի վրա»:

Տվյալ սկզբունքն ամրագրված է նաև ՄԱԿ-ի համակարգի միջազգային կազմակերպությունների կանոնադրություններում, տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների ճնշող մեծամասնության կանոնադրություններում, պետությունների և միջազգային կազմակերպությունների բազմակողմ և երկկողմ համաձայնագրերում, միջազգային կազմակերպությունների իրավական ակտերում:

Շամանակակից միջազգային իրավունքում այն առավել ամբողջական արտացոլված է ՄԱԿ-ի Կանոնադրության համաձայն պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում:

Պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը միջազգային իրավունքի երկու՝ պետական ինքնիշխանությունը հարգելու և պետությունների իրավահավասարության ավանդական սկզբունքների ընդհանրացումն է:

Ինքնիշխան հավասարության սկզբունքի հիմնական սոցիալական նշանակությունը միջազգային հարաբերություններին բոլոր պետությունների իրավաբանորեն հավասար մասնակցության ապահովումն է, անկախ տնտեսական, սոցիալական, քաղաքական կամ այլ բնույթի տարբերություններից: Քանի որ պետությունները միջազգային շփման իրավահավասար մասնակիցներ են, նրանք բոլորն էլ օժտված են սկզբունքորեն հավասար իրավունքներով և պարտականություններով:

1970 թ. հռչակագրի համաձայն, ինքնիշխան հավասարության հասկացությունը ներառում է հետևյալ տարրերը՝

- պետությունները իրավաբանորեն հավասար են
- յուրաքանչյուր պետություն օգտվում է լիակատար ինքնիշխանությանը հատուկ իրավունքներից.
- յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել այլ պետությունների իրավասուբյեկտությունը.
- պետությունների տարածքային ամբողջականությունը և քաղաքական անկախությունը անձեռնմխելի են.
- յուրաքանչյուր պետություն իրավունք ունի ազատ ընտրել և զարգացնել իր քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային համակարգերը.
- յուրաքանչյուր պետություն պարտավոր է լրիվ և բարեխղճորեն կատարել իր միջազգային պարտավորությունները և խաղաղ գոյակցել այլ պետությունների հետ:

Պետությունների իրավաբանական հավասարությունը չի նշանակում նրանց փաստացի հավասարություն, ինչը հաշվի է առնվում իրական միջազգային հարաբերություններում: Դրա օրինակներից մեկը ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի մշտական անդամների հատուկ իրավական վիճակն է:

Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը: Քննարկվող սկզբունքի բովանդակությունը ժամանակակից միջազգային իրավունքում ներառում է հիմնականում հետևյալը՝

• բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատ, առանց արտաքին միջամտության, որոշել իրենց քաղաքական կարգավիճակը և իրականացնել իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը.

• բոլոր պետությունները պարտավոր են հարգել այդ սկզբունքը.
• բոլոր պետությունները պարտավոր են համատեղ և ինքնուրույն գործողություններով նպաստել ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրականացմանը.

• բոլոր պետությունները պարտավոր են ձեռնպահ մնալ ժողովուրդներին ինքնորոշման, ազատության և անկախության իրենց իրավունքից զրկող ցանկացած բռնի գործողություններից.

• անկախության համար իրենց պայքարում ժողովուրդները կարող են օգտագործել անհրաժեշտ բոլոր միջոցները.

• արգելվում է ժողովրդին օտարերկրյա տիրապետության ենթարկելը:

Ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը, որպես պարտադիր նորմ, իր զարգացումն է ստացել ՄԱԿ-ի Կանոնադրության ընդունումից հետո: ՄԱԿ-ի կարևորագույն նպատակներից մեկը «ազգերի միջև բարեկամական հարաբերությունների զարգացումն է ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքը հարգելու սկզբունքի հիման վրա» (կանոնադրության 1-ին հոդվածի 2-րդ կետ):

Ինքնորոշման սկզբունքը բազմիցս հաստատվել է ՄԱԿ-ի փաստաթղթերում, մասնավորապես՝ *Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն տրամադրելու մասին 1960 թ. հռչակագրում*, 1966 թ. *Մարդու իրավունքների դաշնագրերում*, *Միջազգային իրավունքի սկզբունքների մասին 1970 թ. հռչակագրում*:

ՄԱԿ-ի փաստաթղթերում արտահայտված է ինքնորոշման սկզբունքի նորմատիվային գլխավոր բովանդակությունը: Այսպես, Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում ընդգծվում է. «Ինքնիշխան և անկախ պետության ստեղծումը, անկախ պետությանը միանալը կամ նրա հետ միավորվելը, կամ ժողովրդի կողմից ազատորեն որոշված ցանկացած այլ քաղաքական կարգավիճակի սահմանումը՝ այդ ժողովրդի կողմից ինքնորոշման իրավունքի իրականացման ձևերն են»:

Ինքնորոշման իրավունքը չի վերանում, եթե ժողովուրդը կազմավորել է ինքնորոշման պետություն կամ մտել է դաշնության կազմի մեջ: Ինքնորոշման իրավունքի սուբյեկտներ են ոչ միայն կախյալ, այլև ինքնիշխան ժողովուրդները: Ինքնորոշման իրավունքը, այսպիսով, պատկանում է բոլոր ժողովուրդներին, և նրանք շարունակում են կրել այդ իրավունքը՝ անկախ որևէ հանգամանքից:

Ինքնորոշման նորմատիվային բովանդակությունը ներառում է ինչպես ժողովուրդների իրավունքները, այնպես էլ պետությունների՝ դրան համապատասխանող պարտականությունները: Այսպես, ազատ, առանց դրսից որևէ միջամտության իր քաղաքական կարգավիճակը որոշելու և տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումն իրականացնելու իրավունքին համապատասխանում է պետությունների պարտականությունը՝ ոչ միայն հարգել այդ իրավունքը, այլև աջակցել դրան համատեղ և անհատական գործողությունների միջոցով:

1970 թ. հռչակագրի համաձայն, յուրաքանչյուր պետություն պարտավոր է ձեռնպահ մնալ ցանկացած բռնի գործողություններից, որոնք կարող են խանգարել ժողովուրդներին իրականացնելու ինքնորոշման իրենց իրավունքը: Սկզբունքի կարևոր տարր է ժողովուրդների իրավունքը՝ խնդրել և ստանալ աջակցություն ՄԱԿ-ի Կանոնադրության նպատակներին և սկզբունքներին համապատասխան այն դեպքում, եթե նրանց բռնի ճանապարհով զրկում են ինքնորոշման իրավունքից:

Ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը ժողովուրդների իրավունքն է և ոչ թե պարտականությունը: Այդ իրավունքը կարող է իրականացվել բազմաթիվ տարբերակներով: Ինքնորոշման իրականացումը չպետք է պարտադիր բերի նոր պետության առաջացման: Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը չի նշանակում, որ ազգը (ժողովուրդը) պարտավոր է ձգտել ինքնուրույն կամ ամբողջ ազգին միավորող պետության ստեղծմանը:

Այստեղից նաև հետևում է, որ քննարկվող սկզբունքը չի կանխորոշում այս կամ այն ազգի (ժողովրդի) միջազգային իրավական կարգավիճակը: Ազգը (ժողովուրդը) իրավունք ունի ազատ միավորվել այլ ազգի կամ ազգերի (ժողովուրդների) հետ, և այս դեպքում, կախված

միավորման բնույթից, համապատասխան ազգային կազմավորումը կդիտվի կամ չի դիտվի որպես միջազգային իրավունքի սուբյեկտ:

Միևնույն ժամանակ, եթե ժողովուրդը, ձգտելով սեփական պետականության, ստեղծում է մարմին, որը պաշտոնապես ներկայացնում է նրան և իրականացնում է հանրային իրավական գործառույթներ, ապա ինքնորոշման գործընթացին խոչընդոտող արտաքին ցանկացած բռնի գործողություն կարող է դիտվել որպես չմիջամտելու և պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքների խախտում:

Այդպիսով, ազգի կամ ժողովրդի ազատ որոշումից պետք է կախված լինի պետական կազմավորման՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի ստեղծումը:

Պետությունների համագործակցության սկզբունքը: ՄԱԿ-ի Կանոնադրության ընդունումից հետո համագործակցության սկզբունքն ամրագրվել է բազմաթիվ միջազգային կազմակերպությունների կանոնադրություններում, միջազգային պայմանագրերում, բազմաթիվ բանաձևերում և հռչակագրերում:

Այսպես, ՄԱԿ-ի Կանոնադրության համաձայն, պետությունները պարտավոր են «իրականացնել միջազգային համագործակցություն՝ տնտեսական, սոցիալական, մշակութային և մարդասիրական հիմնախնդիրների լուծման գործում», ինչպես նաև պարտավոր են «պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և այդ նպատակով ընդունել հավաքական արդյունավետ միջոցներ»:

Համագործակցության սկզբունքը, որպես իրավական կատեգորիա, բխում է Կանոնադրության մյուս դրույթներից, մասնավորապես՝ 55-րդ և 56-րդ հոդվածների դրույթներից: Օրինակ, 55-րդ հոդվածի բովանդակությունը վկայում է ՄԱԿ-ի անդամների պարտականությունների երկու տեսակների մասին՝ պետությունների պարտականությունը համագործակցել միմյանց հետ կանոնադրությամբ նախատեսված նպատակներին հասնելու գործում և նրանց պարտականությունները համագործակցել ՄԱԿ-ի հետ նույն նպատակներին հասնելու համար:

Իհարկե, համագործակցության կոնկրետ ձևերը և դրա ծավալները կախված են հենց պետություններից, նրանց պահանջումներից

և նյութական ռեսուրսներից ներքին օրենսդրությունից և ստանձնած միջազգային պարտավորություններից:

Չարգացնելով ՄԱԿ-ի Կանոնադրության դրույթները՝ Միջազգային իրավունքի սկզբունքների մասին 1970 թ. հռչակագիրը այսպես է բնորոշում պետությունների համագործակցության սկզբունքի բովանդակությունը՝

• պետությունները պարտավոր են համագործակցել միմյանց հետ միջազգային հարաբերությունների տարբեր ոլորտներում՝ միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման, միջազգային համագործակցության զարգացման և առաջընթացի նպատակով.

• պետությունների համագործակցությունը պետք է իրականացվի անկախ դրանց քաղաքական, տնտեսական և սոցիալական համակարգերի տարբերություններից.

• պետությունները պետք է համագործակցեն ամբողջ աշխարհում (հատկապես՝ զարգացող երկրներում) տնտեսական աճին աջակցելու գործում:

1975 թ. Համաեվրոպական խորհրդակցության Եզրափակիչ ակտը որոշակիացնում է այդ սկզբունքի բովանդակությունը:

Բոլոր պետությունների պարտականությունը՝ գործել ՄԱԿ-ի սկզբունքներին համապատասխան, ակնհայտորեն ենթադրում է նրանց պարտականությունը՝ համագործակցելու տարբեր միջազգային հիմնախնդիրների լուծման գործում. «քանի որ դա կարող է անհրաժեշտ լինել միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման համար»:

ՄԱԿ-ի սկզբունքներին համապատասխան, միմյանց հետ համագործակցելու՝ պետությունների պարտականությունը բնականաբար ենթադրում է պետության կողմից միջազգային իրավունքի և ՄԱԿ-ի Կանոնադրության նորմերի պահպանում: Եթե որևէ պետություն անտեսում է միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից և սկզբունքներից բխող իր պարտավորությունները, ապա դրանով այդ պետությունը քայքայում է համագործակցության հիմքը:

Մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունքը: Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների համընդհանուր հարգման սկզբունքի՝ որպես միջազգային իրավական հիմնական սկզբունքներից մեկի, կայացումը երաբերում է հետպատե-

րագմյան ժամանակին և կապված է ՄԱԿ-ի Կանոնադրության ընդունման հետ:

Մարդու իրավունքները հարգելու սկզբունքի բովանդակությունը ընդհանուր միջազգային իրավունքում հանգում է հետևյալին՝

• բոլոր պետությունները պարտավոր են հարգել իրենց տարածքում գտնվող բոլոր անձանց հիմնական իրավունքները և ազատությունները.

• պետությունները պարտավոր են թույլ չտալ սեռի, ռասայի, լեզվի և կրոնի հատկանիշներով պայմանավորված խտրականություն

• պետությունները պարտավոր են նպաստել մարդու իրավունքների և հիմնական ազատությունների համընդհանուր ճանաչմանը և միմյանց հետ համագործակցել՝ այդ նպատակին հասնելու համար:

Մարդու իրավունքներին վերաբերող բազմաթիվ միջազգային փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակակից միջազգային իրավունքում առկա է ունիվերսալ մի նորմ, որի համաձայն՝ պետությունները պարտավոր են հարգել և պահպանել մարդու իրավունքները և հիմնական ազատությունները բոլորի համար, առանց ռասայի, սեռի, լեզվի և կրոնի տարբերության:

Նշված պարտականությունը համընդհանուր բնույթ ունի: Դա նշանակում է, որ մարդու իրավունքները և ազատությունները ենթակա են պահպանման բոլոր պետություններում և գործում են բոլոր անձանց նկատմամբ, առանց որևէ խտրականության: Ընդ որում, այս բնագավառում միջազգային համագործակցության նպատակը ոչ թե ազգային օրենսդրությունների ունիֆիկացումն է, այլ այն չափորոշիչների մշակումը, որոնք պետությունների համար յուրօրինակ ելակետ են սեփական ազգային օրենսդրության մշակման համար:

Այդպիսով, մարդու իրավունքների և հիմնական ազատությունների անմիջական կանոնակարգումը նախկինի պես յուրաքանչյուր պետության ներքին գործն են: Մարդու իրավունքների բնագավառի միջազգային նորմերը ճնշող մեծամասնությամբ չեն կարող կիրառվել անմիջականորեն, նրանք պահանջում են իմպլեմենտացիային ուղղված որոշակի քայլեր:

Որպես կանոն, միջազգային փաստաթղթերը չեն որոշում, թե ինչպես է պետությունը կատարելու իր ստանձնած պարտավորությունները: Միևնույն ժամանակ, միջազգային փաստաթղթերում պարտ-

նակվող վարքագծի չափորոշիչները որոշ չափով կաշկանդում են ազգային օրենսդրության ոլորտում պետության վարքագծի ազատությունը:

Միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքը: Միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքը ծագել է «pacta sunt servanda» միջազգային իրավական սովորույթի տեսքով, պետականության զարգացման վաղ փուլերում, իսկ ներկայում արտացոլվում է բազմաթիվ երկկողմ և բազմակողմ միջազգային համաձայնագրերում:

Որպես սուբյեկտների վարքագծի հանրաճանաչ նորմ, նշված սկզբունքն ամրագրված է ՄԱԿ-ի Կանոնադրությունում, որի նախաբանում ընդգծվում է ՄԱԿ-ի անդամների վճռականությունը «ստեղծելու պայմաններ, որոնց պարագայում կարող են պահպանվել արդարությունն ու հարգանքը՝ պայմանագրերից և միջազգային իրավունքի այլ աղբյուրներից բխող պարտավորությունների նկատմամբ»: ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, «Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամները բարեխիղճորեն կատարում են սույն կանոնադրության համաձայն ստանձնած պարտավորությունները՝ համակցության մեջ իրենց այն իրավունքներն ու առավելությունները ապահովելու համար, որոնք բխում են կազմակերպության անդամների կազմին պատկանելուց»:

Միջազգային իրավունքի այս սկզբունքի նորմատիվ բովանդակությունը հետևյալն է.

- յուրաքանչյուր պետություն պարտավոր է բարեխիղճորեն կատարել ՄԱԿ-ի Կանոնադրության ամրագրված և միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներից բխող իր պարտավորությունները,
- յուրաքանչյուր պետություն պարտավոր է կատարել միջազգային պայմանագրերում ամրագրված իր պարտավորությունները,
- իրենց ինքնիշխան իրավունքներն իրացնելիս, ներառյալ իրենց ներպետական ակտերը սահմանելը, ամեն մի պետություն պարտավոր է համակերպվել իր միջազգային իրավական պարտավորությունների հետ,
- այն դեպքում, երբ միջազգային պայմանագրերից բխող պետության պարտավորությունները հակասում են ՄԱԿ-ի Կանոնադրությանը, ՄԱԿ-ի Կանոնադրությունում հաստատագրված դրույթներն ունեն գերակայող ուժ.

ԳԼՈՒԽ 6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 15. Միջազգային պայմանագրերի իրավունքի հասկացությունը և աղբյուրները

Միջազգային պայմանագրերի իրավունքը միջազգային իրավունքի ճյուղ է, որը միջազգային պայմանագրերի կնքման, գործողության ու դադարման կապակցությամբ պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների հարաբերությունները կարգավորող նորմերի համակցություն է:

Միջազգային պայմանագրերի իրավունքը առանցքային տեղ ունի միջազգային իրավունքի համակարգում: Դրան կարևորագույն դեր է վերապահվում միջազգային իրավունքի գործողության կարգավորման հարցում, այն որոշում է միջազգային իրավունքի նորմերի ստեղծման կարգը, դրանց վավերականությունը, իրականացումը, դադարումը, իրավական հետևանքները և այլն: Միջազգային պայմանագրերի իրավունքի հետ այս կամ այն կերպ կապված են միջազգային իրավունքի մյուս բոլոր ճյուղերի և ինստիտուտների ձևավորումը և գործողությունը: Միջազգային իրավունքի այս ճյուղի գործառույթը միջազգային պայմանագրերի կնքման, գործողության և դադարման կարգավորումն է:

Միջազգային պայմանագրերի իրավունքի նշանակությունը պայմանավորված է այն դերով, որը պատկանում է պայմանագրային՝ միջազգային հարաբերություններում: Պայմանագիրը միջազգային հարաբերությունների կարգավորման քաղաքական և իրավական կարևորագույն միջոցներից մեկն է, որի օգնությամբ լուծվում են առավել կարևոր և բարդ հիմնախնդիրները: Այն միջազգային հարաբերությունների կառավարման ամբողջ համակարգի գործողությունն ապահովող հզոր գործիք է:

Միջազգային պայմանագիրը կարելի է սահմանել որպես միջազգային իրավունքի սուբյեկտների միջև ակնհայտ արտահայտված համաձայնություն, որի միջոցով սահմանվել են միջազգային իրավունքի նորմեր: Միջազգային իրավական փաստաթղթերում *միջազգային պայմանագիրը* բնորոշվում է որպես պետությունների և մի-

ջազգային իրավունքի այլ սուբյեկտների միջև կնքված գրավոր համաձայնություն, որը կարգավորվում է միջազգային իրավունքով, անկախ նրանից, թե այդ համաձայնությունը բովանդակվում է մեկ, թե մեկից ավելի փոխկապված փաստաթղթերում, ինչպես նաև անկախ այդ փաստաթղթերի անվանումից:

Միջազգային համաձայնության ձևերը բազմաթիվ են, միջազգային պայմանագիրը դրանցից միայն մեկն է: Ոչ իրավական միջազգային համաձայնություններն ունեն երկու հիմնական ձևեր, դրանք են միջազգային մարմինների և կազմակերպությունների բանաձևերը և պետությունների քաղաքական համաձայնությունները: Ի տարբերություն միջազգային պայմանագրերի, քաղաքական համաձայնությունները հաճախ անվանում են «պայմանավորվածություններ», իսկ միջազգային մարմինների և կազմակերպությունների բանաձևերը կազմում են այսպես կոչված՝ «փափուկ միջազգային իրավունքը»:

Միջազգային պայմանագրերի իրավունքի աղբյուրները: Միջազգային իրավական պայմանագրերի ի հայտ գալուն զուգընթաց սկսել է կազմավորվել դրանց գործողությունը կարգավորող իրավունքը: Երկար ժամանակ միջազգային պայմանագրերի իրավունքի միակ աղբյուրը սովորույթներն էին: Ըստ էության, միջազգային պայմանագրերի իրավունքը ձևավորվել է ընդհանրապես միջազգային իրավունքի հետ միաժամանակ: Այդ գործընթացը տեղի էր ունենում հռոմեական իրավունքի և, մասնավորապես, դրա այնպիսի ճյուղի զգալի ազդեցության տակ, ինչպիսին պարտավորական իրավունքն է: Այդտեղից է փոխառնվել նաև պայմանագրերի իրավունքի հիմնական սկզբունքի բանաձևը՝ «pacta sunt servanda»:

Միջազգային պայմանագրերի իրավունքի առավել կախյալ գործընթացները կողմնակիցացրած միջազգային իրավական առաջին ակտը ընդամենը 21 հոդվածից բաղկացած *Միջազգային պայմանագրերի մասին 1928 թ. միջամերիկյան կոնվենցիան* էր:

Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին հարցն ի սկզբանե ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդգրկվել էր Միջազգային իրավունքի հանձնաժողովի աշխատանքների ծրագրում, որն սկսել է դրանով զբաղվել 1950 թ.-ից: Հոդվածների նախագծերը նախապատրաստելու համար երկար տարիներ պահանջվեցին:

Միայն 1968 թ. հարցի քննարկման համար գումարվել է Միջազգային պայմանագրերի իրավունքի Վիեննայի կոնֆերանսը, որը 1969 թ. ավարտվել է *Միջազգային պայմանագրերի իրավունքի Վիեննայի կոնվենցիայի* ընդունմամբ:

Կոնվենցիան միջազգային պայմանագրերի իրավունքի յուրատեսակ օրենսգիրք է (85 հոդված և հավելված): Դրանում կարգավորված են միջազգային իրավունքի այդ ճյուղի բոլոր հիմնական հարցերը: Դրա շրջանակներից դուրս են մնացել այն համաձայնությունները, որոնց կողմերը ոչ թե պետություններն են, այլ միջազգային իրավունքի այլ սուբյեկտները, ինչպես նաև ոչ գրավոր ձևով կնքված միջազգային համաձայնությունները:

1978 թ. ընդունվել է *Պայմանագրերի նկատմամբ պետությունների իրավահաջորդության մասին կոնվենցիան*, որը, սակայն, ցայսօր ուժի մեջ չի մտել:

1986 թ. Վիեննայում ՄԱԿ-ի հովանու ներքո գումարված կոնֆերանսում ընդունվել է *Պետությունների և միջազգային կազմակերպությունների միջև կամ միջազգային կազմակերպությունների միջև պայմանագրերի իրավունքի մասին կոնվենցիան*:

Թեև 1978 և 1986 թթ. Վիեննայի կոնվենցիաներն ուժի մեջ չեն մտել, սակայն դրանց դրույթները գործում են որպես սովորութային նորմեր: Նշված կոնվենցիաներում կողմնակիցացված են միջազգային պայմանագրերի իրավունքի բնագավառում գործող ոչ բոլոր սովորութային նորմերը: Այդ պատճառով էլ պայմանագրային նորմերի հետ մեկտեղ շարունակում են գործել նաև սովորութայինները:

Միջազգային պայմանագրերի դասակարգումը: Պայմանագրերը կարող են դասակարգվել տարբեր հիմքերով: Ըստ մասնակիցների շրջանակի՝ պայմանագրերը բաժանվում են երկու տեսակի՝ *երկկողմ* և *բազմակողմ*: Տարբերակում են նաև *ունիլտերալ (համընդհանուր)* և *տարածաշրջանային* պայմանագրեր: Պայմանագրերը կարող են լինել բաց և փակ: *Բաց* են այն պայմանագրերը, որոնց մասնակից կարող են դառնալ ցանկացած պետություններ, անկախ նրանից՝ առկա՞ է, արդյոք, դրանց մասնակցող մյուս պետությունների համաձայնությունը, թե՞ ոչ: *Փակ* են այն պայմանագրերը, որոնց մասնակցելը կախված է մյուս մասնակիցների համաձայնությունից:

Միջազգային պայմանագրերի չեղ. կառուցվածքը և անվանումը:

Պայմանագիրը կարող է կնքվել բանավոր կամ գրավոր: Պայմանագրերը բանավոր կնքվում են շատ հազվադեպ, առավել տարածված է գրավոր ձևը, քանզի միայն գրավոր պայմանագիրն է հստակ և որոշակի ամրագրում կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

Պայմանագրի կառուցվածքին է վերաբերում դրա բաղկացուցիչ մասերի հարցը, ինչպիսիք են կայմանագրի անվանումը, նախաբանը (պրեամբուլան), հիմնական և եզրափակիչ մասերը, կողմերի ստորագրությունները:

Նախաբանը պայմանագրի կարևոր մաս է, քանի որ դրանում հաճախ ձևակերպվում է պայմանագրի նպատակը: Բացի այդ, նախաբանը օգտագործվում է պայմանագիրը մեկնաբանելիս:

Պայմանագրի *հիմնական մասը* բաժանվում է հոդվածների, որոնք կարող են խմբավորվել բաժիններում, գլուխներում կամ մասերում:

Միջազգային պայմանագրի *եզրափակիչ մասում* շարադրվում են այնպիսի դրույթներ, ինչպիսիք են պայմանագրերի ուժի մեջ մտնելու և դադարելու պայմանները, լեզուն, որով կազմված է պայմանագրի տեքստը և այլն:

Միջազգային պայմանագրերը հաճախ ունենում են *հավելվածներ*՝ արձանագրությունների, լրացուցիչ արձանագրությունների, կանոնների և այլ փաստաթղթերի տեքստով: Հավելվածները կարող են լինել պայմանագրի անբաժանելի մասը, եթե այդ մասին ուղղակիորեն նշված է պայմանագրի տեքստում:

Պայմանագրերը կարող են ունենալ տարբեր *անվանումներ* (օրինակ, համաձայնագիր, կոնվենցիա, պայմանագիր, արձանագրություն, հռչակագիր, կանոնադրություն և այլն) կամ չունենալ անվանում: Պայմանագրի անվանումը որևէ իրավաբանական նշանակություն չունի:

Միջազգային պայմանագրի լեզուն: Միջազգային պայմանագրի լեզուն որոշում են պայմանագիր կողմերը: Երկկողմ պայմանագիրը, որպես կանոն, կազմվում է պայմանագիր երկու կողմերի լեզուներով կամ որևէ երրորդ լեզվով: Բազմակողմ պայմանագրերը կազմվում են կողմերի որոշած լեզուներով: ՄԱԿ-ի, ՄԱԿ-ի մասնագիտացված հիմ-

նարկների կամ միջազգային այլ կազմակերպությունների հովանուները կնքվող պայմանագրերը սովորաբար կազմվում են այդ կազմակերպությունների պաշտոնական լեզուներով: Տարբեր լեզուներով պայմանագրի տեքստերը աուտենտիկ (նույնական) են և ունեն հավասար իրավաբանական ուժ:

§ 16. Միջազգային պայմանագրերի կնքումը

Միջազգային պայմանագրերի *կնքումը* նշանակում է պետության բոլոր գործողությունները, սկսած բանակցություններից, մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը:

Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիաներով սահմանվել են պայմանագրերի կնքման երեք փուլեր (հհ. 9-11): Առաջին փուլը *տեքստի ընդունումն* է: Տեքստն ընդունվում է դրա կազմմանը մասնակցող բոլոր կողմերի համաձայնությամբ, իսկ բազմակողմ պայմանագրերի դեպքում՝ կոնֆերանսի մասնակիցների ձայների երկու երրորդով:

Երկրորդ փուլը՝ *տեքստի աուտենտիկության հավաստումն* է, որն իրականացվում է պայմանագրի տեքստի կամ այդ տեքստը բովանդակող՝ կոնֆերանսի եզրափակիչ ակտի ստորագրման, «ad referendum» ստորագրման կամ նախաստորագրման միջոցով:

Երրորդ փուլը *պայմանագրի պարտադիր իրավական ուժը ճանաչելու վերաբերյալ համաձայնության արտահայտումն* է, որը կարող է արտահայտվել ստորագրմամբ, վավերացմամբ, հաստատմամբ, ընդունմամբ կամ այլ ձևերով՝ կախված պայմանագրում նախատեսված կարգից:

Պետությունների միջազգային պայմանագրերում մասնակցության իրավունքը տարածվում է վերը թվարկված բոլոր փուլերի վրա:

Միջազգային պայմանագրերին մասնակցության իրավունքը: Պայմանագրերի կողմեր կարող են լինել միջազգային իրավունքի բոլոր սուբյեկտները: Հիմնականում դրանք պետություններն են:

Հաճախ պայմանագրերում կողմ են անվանվում կառավարությունները: Ինչպես Վիեննայի կոնվենցիաները, այնպես էլ ազգային օրենսդրությունները նախատեսում են, որ անկախ նրանից, թե իր որ մարմնի միջոցով է ներկայացված պետությունը, պայմանագրի կողմ

է հանդիսանում պետությունը և ոչ թե նրա մարմինը: Պետությունն իր ինքնիշխանության ուժով իրավասու է մասնակցել ցանկացած իրավաչափ պայմանագրի՝ ինքնիշխան հավասարության սկզբունքի համաձայն:

Պայմանագրեր կնքելու՝ միջազգային կազմակերպությունների իրավունակությունը սահմանափակ է, գործառութային: Դա որոշվում է այն կանոններով, որոնց հիման վրա գործում է կազմակերպությունը:

Որոշ դաշնություններում դրանց սուբյեկտներն օժտված են պայմանագրային հարաբերություններին մասնակցելու որոշակի իրավունքներով:

Պայմանագրերի կողմեր կարող են լինել նաև անկախացման համար պայքարող ժողովուրդները, ազգերը, որոնք, ըստ էության, կայացման ընթացքում գտնվող պետություններ են: Սակայն պայմանագրերին դրանց մասնակցությունը տարածված չէ և ավելի շատ բացառություն է, քան կանոն:

Միջազգային պայմանագրերին մասնակցելու իրավունքը միջազգային պայմանագրերի իրավունքի և ընդհանրապես միջազգային իրավունքի նոր ինստիտուտ է: Դրանում իր արտահայտությունն է գտել լիակատար իրավահավասարության հիման վրա միջազգային հարցերի լուծմանը պետությունների մասնակցության իրավունքը հարգելու պահանջը:

Մասնակցության իրավունքը նախ և առաջ վերաբերում է ընդհանուր, ունիվերսալ պայմանագրերին: Այդ պայմանագրերին մասնակցության իրավունքը բխում է ժամանակակից միջազգային իրավունքի էությունից, նպատակներից և սկզբունքներից, որը ձևավորվում է բոլոր պետությունների համատեղ ջանքերով: Միջազգային իրավունքի ընդհանուր նորմեր ստեղծող պայմանագրերի բնույթի ուժով վերջինները բոլոր պետությունների գործն են, ուստի և դրանց այս կամ այն պետության մասնակցության մերժելն անիրավաչափ է: Ոչ ոք իրավասու չէ խոչընդոտել բոլոր երկրների ընդհանուր շահերին առնչվող հիմնահարցի լուծմանը պետության մասնակցությանը:

Նախկինում աշխարհում գործում էր «պայմանագրերի ազատության» սկզբունքը, որի համաձայն՝ մեծ տերությունները պայմանագրեր էին կնքում ցանկացած հարցով և իրենք էին որոշում մասնակից-

ների շրջանակը՝ ոտնահարելով ավելի թույլ պետությունների իրավունքները:

Մասնակցության իրավունքը գոյություն ունի ոչ միայն ունիվերսալ, այլ նաև այլ պայմանագրերի նկատմամբ: Մասնակցության իրավունքը կարող է իրագործվել՝ անկախ պետությունը կամ նրա կառավարությունը ճանաչելու հանգամանքից: Դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերությունների բացակայությունը արգելք չէ պայմանագիր կնքելու համար: Միմյանց չճանաչող պետությունների մասնակցությունը բազմակողմ պայմանագրերին սովորական երևույթ է:

Մասնակցության իրավունքը որոշվում է պայմանագրի օբյեկտի և նպատակների հանդեպ պետության օրինական շահերի առկայությամբ: Շահագրգռվածությունը կարող է լինել ձևական-իրավաբանական և փաստական: Առաջինը բխում է հիմնահարցի նախորդ պայմանագրային կարգավորմանը պետության մասնակցությունից, երկրորդը՝ պետության փաստացի շահագրգռվածությունից:

Լիազորություններ: Պայմանագրի կնքման ցանկացած փուլին մասնակցելու համար պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցիչը պետք է ունենա լիազորություններ: Բարձրագույն պաշտոնատար անձինք (պետության գլուխը, վարչապետը, արտաքին գործերի նախարարը կամ միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղարը) օժտված են այդ լիազորություններով իրենց զբաղեցրած դիրքի ուժով: Այլ անձինք պետք է ունենան հատուկ լիազորություն: Երկկողմ պայմանագիր նախապատրաստելիս իրականացվում է լիազորությունների փոխանակում: Բազմակողմ պայմանագրերի դեպքում լիազորությունները ներկայացվում են ստուգման համար: Լիազորությունները տրվում են պետության այն մարմնի կողմից, որի անունից կնքվում է պայմանագիրը:

Պայմանագրի կնքմանը մասնակցությունն առանց լիազորությունների կամ դրանց սահմանափակումը չունի իրավաբանական նշանակություն, եթե համապատասխան գործողությունները հետագայում չհաստատվեն պետության կամ միջազգային կազմակերպության կողմից:

Պայմանագրի րեքստի նախապատրաստումը և ընդունումը: Պայմանագրի տեքստը նախապատրաստվում է սովորական դիվա-

նագիտական ուղիներով, միջազգային կոնֆերանսներում և միջազգային կազմակերպություններում բանակցությունների միջոցով: Դիվանագիտական բանակցությունների միջոցով, որպես կանոն, նախապատրաստվում են երկկողմ պայմանագրերի տեքստերը: Միջազգային կազմակերպություններում պայմանագրերի տեքստերի նախագծերը մշակվում են գլխավոր մարմինների կամ հատուկ դրա համար ստեղծված օժանդակ մարմինների կողմից:

Պայմանագրի տեքստի ընդունմամբ ավարտվում են այդ տեքստի նախապատրաստման վերաբերյալ պետությունների բանակցությունները: Միջազգային կոնֆերանսներում պայմանագրի տեքստը ընդունվում է դրանց ընթացակարգի կանոններին համապատասխան՝ քվեարկությամբ: *Այս անհրաժեշտություն է առաջանում հավասարել պայմանագրի տեքստի սուրենտիկությունը (նույնականությունը):* Պայմանագրի տեքստի *սուրենտիկությունը* նշանակում է, որ տվյալ տեքստը իսկական է և հավաստի, այսինքն վերջնական է և այլևս փոփոխման ենթակա չէ:

Գոյություն ունի պայմանագրի ստորագրման երեք տեսակ, երկուսը՝ նախնական (մակագրումը և «ad referendum» ստորագրումը), մեկը՝ վերջնական ստորագրում:

Նախաստորագրման (մակագրման) տակ, որպես կանոն, հասկացվում է պայմանագրի տեքստի էջ առ էջ ստորագրումը պետությունների կամ կազմակերպությունների ներկայացուցիչների անունների սկզբնատառերով: Նախաստորագրվել կարող են ինչպես ամբողջ պայմանագրերը, այնպես էլ բանակցությունների ընթացքում փոխհամաձայնեցված մասերը: Մասնակի նախաստորագրումը նշանակում է, որ ներկայացուցիչները վերջնականապես համաձայնեցրել են համապատասխան դրույթները և այլևս չեն պատրաստվում անդրադառնալ դրանց: Ամբողջ տեքստի նախաստորագրումը նշանակում է դրա աուտենտիկության հավաստում:

«Ad referendum» *ստորագրումը* նույնպես նախնական է և կատարվում է պայմանով, որ մասնակիցների կողմից պայմանագրին հավանություն տալուց հետո այն ձեռք կրերի լրիվ ստորագրման կարգավիճակ:

Պայմանագրի *ստորագրումը* ինչպես իրավաբանական, այնպես էլ քաղաքական նշանակություն ունի: Ստորագրումից հետո իրավա-

բանական ուժ են ստանում այդ պայմանագրի վավերացման, ընդունման, դրան միանալու մասին դրույթները: Բարեխղճության սկզբունքը պայմանագիրը ստորագրած պետություններին պարտավորեցնում է ձեռնպահ մնալ այն բոլոր գործողություններից, որոնք կդժվարացնեն կամ անհնարին կդարձնեն պայմանագրի կատարումը դրա վավերացումից հետո, ինչպես նաև պայմանագրին հակասող բոլոր գործողություններից:

Ստորագրման և վավերացման միջև ընկած ժամանակահատվածում հատուկ տեղ ունեն միջազգային իրավունքի այս կամ այն բաժինները կողմնակցող բազմակողմ կոնվենցիաները: Դրանք դիտվում են որպես սովորության իրավունքի հեղինակավոր շարադրանք, որպես «opinio juris» արտահայտում, և պետությունների ընդհանուր պրակտիկա:

Ներկայում միջազգային պայմանագրերի վավերացումը, հաստատումը և ընդունումը կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ և «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով:

Պայմանագրի պարտադիրության վերաբերյալ համաչայնություն արտահայտելու եղանակներ: Պայմանագիր կնքելու վերջին փուլը պայմանագրի պարտադիրության վերաբերյալ պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների համաձայնության արտահայտումն է: 1969 և 1986 թթ. Վիեննայի կոնվենցիաների 11-րդ հոդվածներով սահմանվել են պայմանագրի պարտադիրության վերաբերյալ համաձայնության արտահայտման հետևյալ եղանակները՝

- պայմանագրի ստորագրումը,
- պայմանագիրը կազմող փաստաթղթերի փոխանակումը,
- պայմանագրի վավերացումը,
- պայմանագրի ընդունումը,
- պայմանագրի հաստատումը,
- պայմանագրին միանալը,
- ցանկացած այլ եղանակ, որի մասին պայմանավորվել են կողմերը:

Միջազգային պրակտիկան մշակել է պայմանագրերի ստորագրման որոշակի կանոններ: Յուրաքանչյուր լեզվով տեքստում առաջին տեղում (որպես կանոն, ներքևի ձախ մասում) դրվում է այն պետութ-

յան ներկայացուցչի ստորագրությունը, որի մոտ պահպանվելու է պայմանագրի տվյալ օրինակը: Այդպիսի հերթականությունը անվանվում է *ալփերնայր*:

Բազմակողմ պայմանագրի տեքստի ներքո պետությունների ներկայացուցիչների ստորագրությունները դրվում են իրար տակ՝ պետությունների անվանումների այբբենական կարգով այն լեզվով, որով պայմանավորվել են մասնակիցները:

Վավերացումը պայմանագրի հաստատումն է պետության բարձրագույն մարմնի կողմից, որով արտահայտվում է համաձայնությունը դրա պարտադիրության վերաբերյալ: Վավերացման կարգը սահմանվում է ներպետական իրավունքով: Պայմանագիրը վավերացնող ներպետական մարմինը սովորաբար խորհրդարանն է կամ պետության գլուխը:

Վավերացման ակտի հիման վրա պետության գլուխն ստորագրում է վավերագիրը: Վավերացման գործընթացն ավարտված է համարվում վավերագրերի փոխանակումից կամ բազմակողմ պայմանագրի դեպքում՝ այն ավանդապահին հանձնելուց հետո: Վավերացումից հրաժարվելը չի խախտում միջազգային իրավունքը, սակայն կարող է լուրջ քաղաքական հետևանքներ առաջացնել: Վավերացումը վերջնական է: Դրանից չի կարելի հրաժարվել, այն չի կարելի կրկին քննարկման դնել:

Վավերացմանը հավասարեցվում է *պաշտոնական հաստատումը*, որն իրականացվում է միջազգային կազմակերպության կողմից՝ պայմանագրի պարտադիրության վերաբերյալ համաձայնության արտահայտման նպատակով:

Հաստատումը և *ընդունումը* վավերացման ոչ ենթակա, սակայն ստորագրումից հետո հավանություն ենթադրող պայմանագրի պարտադիրության վերաբերյալ համաձայնություն արտահայտելու ընթացակարգեր են:

Պայմանագրին միանալը այլ պետությունների կամ միջազգային կազմակերպությունների միջև կնքված պայմանագրի պարտադիրությանը պետության համաձայնությունն է: Միանալու հնարավորությունը նախատեսվում է պայմանագրում կամ համաձայնեցվում է դրա մասնակիցների հետ: Որպես կանոն, միանալն իրականացվում է

նույն մարմինների կողմից և նույն կարգով, ինչ վավերացումը կամ հաստատումը:

Վավերացումը, ընդունումը, հաստատումը և միանալը ենթադրում են համապատասխան փաստաթղթերի փոխանակման, դրանք ավանդապահին հանձնելու կամ այդպիսի ակտերի ընդունման մասին ծանուցման անհրաժեշտություն:

Ավանդապահը բանակցությունների մասնակիցների կողմից որոշվող պետությունն է (կամ միջազգային կազմակերպությունը), որի պարտականությունների մեջ է մտնում պայմանագրի բնօրինակ տեքստի և դրան վերաբերող փաստաթղթերի պահպանումը, ինչպես նաև դրա հետ կապված գործառույթների իրականացումը: Ավանդապահի գործառույթները միջազգային բնույթ ունեն և պետք է իրականացվեն անկողմնակալ:

Պայմանագրերի գրանցումը և հրապարակումը: ՄԱԿ-ի անդամ պետությունները, ՄԱԿ-ի Կանոնադրության 102-րդ հոդվածի համաձայն, պարտավոր են գրանցել իրենց պայմանագրերը ՄԱԿ-ի քարտուղարությունում: Եթե պայմանագիրը գրանցված չէ, ապա պետությունները չեն կարող վկայակոչել այն ՄԱԿ-ի մարմիններից ոչ մեկում: Իր հերթին ՄԱԿ-ի քարտուղարությունն առաջին իսկ հնարավորության դեպքում գրանցված պայմանագրերը հրապարակում է հատուկ ժողովածուում:

Վերապահումները և հայտարարությունները: Վերապահումը միակողմ հայտարարությունն է, որի միջոցով պետությունը կամ միջազգային կազմակերպությունը ցանկանում է փոփոխել կամ բացառել իր նկատմամբ բազմակողմ պայմանագրի որոշակի դրույթների գործողությունը: Վերապահումներ են արվում միայն բազմակողմ պայմանագրերի վերաբերյալ: Եթե ցանկություն է արտահայտվում վերապահում կատարել երկկողմ պայմանագրի վերաբերյալ, ապա դա հավասարազոր է բանակցությունները վերսկսելուն կամ համաձայնեցված տեքստում փոփոխություն կատարելու առաջարկությամբ:

Ամրագրելով վերապահում կատարելու իրավունքը՝ Վիեննայի կոնվենցիաները միաժամանակ ճանաչել են մասնակիցների իրավունքը՝ պայմանագրերում ներառել այդ իրավունքի իրականացումը սահմանափակող դրույթներ: Անիրավաչափ են պայմանագրով ար-

գելված վերապահումները կամ թույլատրվածների թվի մեջ չմտնող վերապահումները: Մյուս դեպքերում անթույլատրելի են միայն այն վերապահումները, որոնք պայմանագրի օբյեկտի և նպատակների հետ անհամատեղելի են:

Յուրաքանչյուր պայմանադիր կողմ իրավասու է առարկել իր համար անընդունելի վերապահումների դեմ: Սակայն դա չի խոչընդոտում իր և վերապահում հայտարարած կողմի միջև պայմանագիրն ուժի մեջ մտնելուն: Այլ իրավիճակ հնարավոր է միայն, եթե առարկողը հայտարարի, որ վերապահում հայտարարած կողմի հետ իր հարաբերություններում պայմանագիրը չի գործելու:

Վերապահումը չպետք է հակասի պայմանագրի նպատակներին և սկզբունքներին, փոփոխի դրա գլխավոր բովանդակությունը: Վերապահման իրավաբանական հետևանքներն այն են, որ դրանով համապատասխան փոփոխություններ են մտցվում այն կատարած կողմի և պայմանագրի այլ կողմերի փոխհարաբերություններում: Վերապահման դեմ առանձին մասնակիցների առարկությունների դեպքում վերապահում կատարած պետության հետ նրանց փոխհարաբերություններում համապատասխան դրույթը չի կիրառվում: Վերապահումը չի փոփոխում այլ պետությունների փոխհարաբերությունները կարգավորող դրույթները: Վերապահում կատարած մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ հանել այն: Այդ դեպքում վերապահումը ճանաչված մասնակիցների համաձայնությունը չի պահանջվում:

Պայմանագրի պարտադիրության վերաբերյալ համաձայնություն արտահայտելիս, բացի վերապահումներից, արվում են նաև *հայտարարություններ*, որոնց նպատակն է շարադրել պայմանագրի որոշակի դրույթների ըմբռնումը: Ահա թե ինչու այդպիսի հայտարարությունները հաճախ անվանվում են մեկնաբանական: Ի տարբերություն վերապահումների, հայտարարությունները չեն փոփոխում պայմանագրի բովանդակությունը: Դրանք հնարավոր են նաև երկկողմ պայմանագրեր կնքելիս: Մյուս մասնակցի կողմից դրանք որպես պայմանագրին վերաբերող փաստաթուղթ ընդունվելու դեպքում դրանք ներառվում են պայմանագրի համատեքստում՝ մեկնաբանման նպատակով:

§ 17. Միջազգային պայմանագրերի գործողությունը, վավերականությունը, մեկնաբանությունը և դադարումը

Պայմանագրերի գործողությունը: Պայմանագրի ուժի մեջ մտնելու տակ հասկացվում է դրա դրույթների՝ մասնակիցների համար իրավաբանական պարտադիրության ձեռքբերումը, այսինքն՝ այդ պահից սկսած՝ կողմերը ձեռք են բերում պայմանագրով նախատեսված փոխադարձ իրավունքներ և պարտականություններ: Այն նշանավորում է պայմանագրի կնքման գործընթացի ավարտը: Որպես կանոն, պայմանագրի ուժի մեջ մտնելը ժամանակով համընկնում է դրա կիրառման սկզբի հետ:

Միջազգային պայմանագրերի իրավունքի հիմնական սկզբունքը պայմանագրերից ծագող միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքն է՝ «pacta sunt servanda»: Այն նաև պատկանում է «jus cogens» բնույթի միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների թվին, և դրանից շեղվելն անթույլատրելի է միջազգային իրավունքի սուբյեկտների հարաբերություններում:

Մինչև ուժի մեջ մտնելը պայմանագիրը չի պարտավորեցնում նրա կողմերին: Իրավաբանական հետևանքներ է առաջացնում միայն ուժի մեջ մտած պայմանագիրը: Դա նշանակում է, որ այն դառնում է իրավաբանորեն պարտադիր մասնակիցների համար: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում դրանում նշված պայմաններով: Վիեննայի կոնվենցիաների համաձայն, պայմանագրի ուժի մեջ մտնելու կարգը և ամսաթիվը սահմանվում են հենց պայմանագրում կամ համաձայնեցվում են դրա մասնակիցների կողմից: Այսպես, պայմանագրերը կարող են ուժի մեջ մտնել ստորագրման, վավերացման, վավերագրերի փոխանակման կամ ավանդապահին որոշակի թվով վավերագրերի հանձնելու ամսաթվից: Վերջին դեպքում կարող է նախատեսվել այն ժամկետը, որը լրանալուց հետո պայմանագիրն ուժի մեջ է մտնում:

Պայմանագիրը կարող է ժամանակավորապես կիրառվել մինչև ուժի մեջ մտնելը, եթե դա նախատեսված է պայմանագրում կամ մասնակիցներն այդ մասին պայմանավորվել են այլ կերպ:

Պայմանագրերի գործողությունը սերտորեն կապված է *երրորդ կողմի* հիմնահարցի հետ, որի տակ հասկացվում են այն պետությունները կամ միջազգային կազմակերպությունները, որոնք պայմանագ-

րի մասնակիցներ չեն: Պայմանագիրը պարտականություններ կամ իրավունքներ չի առաջացնում երրորդ պետությունների կամ միջազգային կազմակերպությունների համար առանց նրանց համաձայնության:

Միջազգային իրավունքում գոյություն ունի այլ պետությունների միջև կնքված իրավաչափ պայմանագրերը հարգելու և ճանաչելու պարտականություն, եթե դրանք չեն խախտում երրորդ պետությունների իրավունքները: Եթե պետությունը համարում է, որ այլ պետությունների միջև կնքված պայմանագիրն առնչվում է իր օրինական շահերին, ապա կարող է հայտարարել այն չճանաչելու մասին և այդ դեպքում իրավասու կլինի գործել այնպես, ինչպես պայմանագրի չգոյության ժամանակ:

Այսպիսով, միջազգային իրավունքում սահմանվել է այն կանխավարկածը, որ պայմանագիրը իրավունքներ և պարտականություններ չի ստեղծում երրորդ կողմի համար: Այլ իրավիճակ հնարավոր է միայն կողմերի հստակ արտահայտված մտադրության և երրորդ պետության (կազմակերպության) համաձայնության առկայության դեպքում: Պարտավորությունը պետք է որոշակիորեն ընդունվի գրավոր ձևով: Իրավունքին համաձայնվելը կարող է իրականացվել լռությամբ:

Երրորդ կողմի՝ իրավունքներից օգտվելը նշանակում է նաև այն պայմանների ընդունում, որով դրանք տրամադրվում են: Այլ կերպ ասած՝ իրավունքների ընդունումը նշանակում է նաև համապատասխան պայմանների պահպանման պարտականության ընդունում: Իրավունքների օգտագործումը հնարավոր է պայմանագրի՝ ուժի մեջ մտնելու պահից: Պայմանագրի կողմերից ոչ մեկը չի կարող միակողմանի մերժել երրորդ պետության իրավունքներից օգտվելը:

Պայմանագիրը, ինչպես և օրենքը, հետադարձ ուժ չունի: Պայմանագիրը չի տարածվում մինչև դրա ուժի մեջ մտնելը կատարված գործողությունների նկատմամբ, եթե այլ բան չի սահմանվել մասնակիցների համաձայնությամբ: Պայմանագիրը չի կիրառվում դրա դադարման պահից: Սակայն, որոշ դեպքերում հատուկ նախատեսվում է, որ պայմանագիրը դրա դադարումից հետո ևս կիրառվելու է այն փաստերի նկատմամբ, որոնք տեղի են ունեցել դրա գործողության ընթացքում:

Պայմանագրի գործողության ժամկետը, որպես կանոն, սահմանվում է պայմանագրում: Պայմանագրերը կարող են կնքվել որոշակի ժամկետով (ժամկետային պայմանագրեր), անորոշ ժամկետով, առանց գործողության ժամկետը նշելու կամ գործողության անժամկետ բնույթի նշմամբ (օրինակ, իրավական ռեժիմ սահմանող ընդհանուր պայմանագրերը, կողմիֆիկացիոն կոնվենցիաները և այլն):

Անժամկետ են այն պայմանագրերը, որոնցում նշված չէ դրանց գործողության ժամկետը և սահմանված չեն դրանց դադարման պայմանները, կամ որոնք ուղղակիորեն նախատեսում են դրանց գործողության անժամկետ բնույթը:

Պայմանագրի գործողության ժամկետը կարող է երկարացվել դրանում նշված պայմաններով կամ փոխադարձ համաձայնությամբ: Այդ երկարացումը կոչվում է *երկարացում* (պրոլոնգացիա): Այն պետք է կատարվի մինչև գործողության ժամկետը լրանալը:

Երկարաձգումը անվանվում է *ինքնաբերաբար*, եթե, պայմանագրի դրույթների համաձայն, դրա համար չեն պահանջվում կողմերի որևէ գործողություններ: Եթե այդպիսի գործողություններ պահանջվում են, ապա երկարաձգումը անվանվում է *նախաշեռնային*:

Պայմանագրի իրականացման կարգը հիմնականում կարգավորվում է ներպետական իրավունքով:

Միջազգային պայմանագրերի վերանայումը: Պայմանագրի արդյունավետության անհրաժեշտ պայմանը կարգավորվող հարաբերություններին, դրանց զարգացման պահանջներին, կողմերի համապատասխան շահերին դրա համապատասխանությունն է: Սակայն այդ գործոններն անփոփոխ չեն մնում, համապատասխանաբար տեղի՝ են ունենում փոփոխություններ նաև պայմանագրային դրույթների իրական բովանդակությունում, այլապես դրանք չեն կարող գործել:

Կողմերն իրավասու են սահմանել պայմանագրի վերանայման ցանկացած կարգ: Եթե դա չի արվել, ապա երկկողմ պայմանագրերի և մասնակիցների սահմանափակ թվով պայմանագրերի առնչությամբ գործում է կանոն, որի համաձայն՝ փոփոխությունները կատարվում են ընդհանուր համաձայնության արդյունքում: Միևնույն ժամանակ, Վիեննայի կոնվենցիայի 40-րդ հոդվածը նախատեսում է բազմակողմ պայմանագրերի փոփոխությունների ոչ միաձայն ընդուն-

ման հնարավորություն: Այդ հողվածում ամրագրված է փոփոխությունների ընդունմանը բոլոր կողմերի մասնակցության իրավունքը: Նրանցից յուրաքանչյուրը պետք է ծանուցվի փոփոխությունների վերաբերյալ ցանկացած առաջարկության մասին և իրավունք ունի մասնակցել այդպիսի առաջարկությունների վերաբերյալ բանակցություններին ու որոշումների ընդունմանը, ինչպես նաև փոփոխված պայմանագրին: Սակայն Վիեննայի կոնվենցիաները չեն նախատեսում, որ փոփոխություններին մեկ կամ մի քանի պետության չհամաձայնելը կարող է անհնարին դարձնել դրանց ուժի մեջ մտնելը: Ընդհակառակը, փոփոխություններին չհամաձայնելու արդյունքում նախկին պայմանագրի որոշ մասնակիցներ փոփոխված պայմանագրի կողմ չեն դառնում: Փոփոխությունների մասին համաձայնությունը չի պարտավորեցնում պայմանագիրը չընդունած մասնակիցներին:

Փոփոխություններն ընդունած մասնակիցը համարվում է փոփոխված պայմանագրի մասնակից և միաժամանակ նախկին պայմանագրի մասնակից՝ փոփոխությունները չընդունածների նկատմամբ: Դրանք ընդունած յուրաքանչյուր մասնակցի համար փոփոխություններն ուժի մեջ են մտնում մասնակիցների մեծամասնության կողմից դրանք ընդունվելուց հետո, իսկ հետագայում մնացած յուրաքանչյուր մասնակցի համար՝ փոփոխություններն իր կողմից ընդունվելու օրը:

Պայմանագրի փոփոխությունն իրականացնելիս անհրաժեշտ է պահպանել լրացուցիչ պայմաններ. փոփոխությունը չպետք է ազդի մյուս մասնակիցների իրավունքներին և պարտականություններին, անհամատեղելի լինի պայմանագրի նպատակների արդյունավետ իրականացման հետ:

Միջազգային պայմանագրերի իրավունքը հիմնված է *պայմանագրերի վավերականության կանխավարկածի* վրա: Յուրաքանչյուր գործող պայմանագիր պարտադիր է մասնակիցների համար, քանի դեռ հակառակը չի ապացուցվել: Վավերականությունը կարող է վիճարկվել միայն միջազգային իրավունքի հիման վրա:

Պայմանագրի վավերականությունն ունի երկու տեսանկյուն՝ *ընթացակարգային* և *նյութական*: Առաջինի առանձնահատկությունը կնքման գործընթացի իրավաչափությունն է (օրինակ, պայմանագիրը կնքված է դրան մասնակցելու իրավունք ունեցող կողմերի միջև,

պարտադիրությանը համաձայնությունն արտահայտված է առանց հատկապես կարևոր նշանակության ներքին իրավունքի նորմի բացահայտ խախտման): Նյութական վավերականությունն այն է, որ միջազգային իրավունքի տեսանկյունից պայմանագրի բովանդակությունն օրինական է: Այդ պատճառով վավերական է օրինական կարգով կնքված պայմանագիրը՝ իրավաչափ բովանդակությամբ:

Անվավերությունը կարող է լինել *հարաբերական* և *բացարձակ*: Առաջինը պայմանագիրը դարձնում է վիճահարույց: Դրա հիմքերն են՝ ներկայացուցչին կաշառելը, սխալը, խաբեությունը: Բացարձակ անվավերությունը պայմանագրի առոչնչությունն է ի սկզբանե: Դրա հիմքերն են՝ ներկայացուցչին հարկադրելը, պետությանը հարկադրելը, ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմին հակասելը:

Այն պայմանագրերի դրույթները, որոնց անվավերությունը հաստատված է, իրավաբանական ուժ չունեն: Մասնակիցներից յուրաքանչյուրն իրավասու է մյուս մասնակցից պահանջել հնարավորին չափ վերկանգնել մինչև պայմանագրի իրականացումը ձևավորված վիճակը:

Միջազգային պայմանագրերի մեկնաբանությունը: *Մեկնաբանությունը* պայմանագրի կամ նրա առանձին դրույթների իրական իմաստի և բովանդակության բացահայտումն է: Միջազգային պայմանագրի կիրառումն անհնար է առանց որոշակի պայմանների նկատմամբ դրա դրույթների իրական բովանդակությունը պարզելու:

Պայմանագրի մասնակիցների մեկնաբանությունն անվանվում է *աուտենտիկ*: Մեկնաբանման այս տեսակը հիմնվում է մասնակիցների համաձայնության վրա, ուստի օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով:

Աուտենտիկ մեկնաբանության հետ մեկտեղ լայնորեն կիրառվում է այսպես կոչված՝ *միջազգային* մեկնաբանությունը, որն իրականացվում է միջազգային մարմինների կողմից: Այդպիսի մարմիններ կարող են լինել ՄԱԿ-ի միջազգային դատարանը, տարբեր կոնվենցիոն մարմինները, հանձնաժողովները և այլն:

Տարբերակում են նաև *ներպետական* մեկնաբանություն, որը կարող է արտահայտվել համապատասխան մարմինների հայտարարությունների և որոշումների տեսքով: *Ոչ պաշտոնական* մեկնաբա-

նության տեսակ է դոկտրինալ մեկնաբանումը, այսինքն առանձին միջազգայնագետ իրավաբանների աշխատություններում պարունակվող կարծիքները միջազգային պայմանագրի կամ դրա դրույթների իմաստի և բովանդակության վերաբերյալ:

Մեկնաբանությունն իրականացվում է հատուկ եղանակների (հնարքների) օգնությամբ, որոնցից են՝ պայմանագրերի քերականական, տրամաբանական, պատմական և համակարգային մեկնաբանումը:

Քերականական մեկնաբանությունը առանձին բառերի և պայմանագրի իմաստի բացահայտումն է քերականական և այլ կանոնների հիման վրա:

Տրամաբանական է պայմանագրի այս կամ այն դրույթի մեկնաբանությունը պայմանագրի այլ հոդվածների հիման վրա կամ դրանց բաղդատմամբ:

Պայմանագիրը կարող է մեկնաբանվել նաև դրա դրույթներն այլ պայմանագրերի հետ համեմատելու միջոցով: Մեկնաբանության այս տեսակը կոչվում է *համակարգային*:

Երբեմն միջազգային պայմանագրերի մեկնաբանման համար անհրաժեշտ է լինում դիմել պայմանագրի կնքման ժամանակամիջոցի պատմական իրավիճակի ուսումնասիրությանը, տարբեր նախապատրաստական նյութերի, դիվանագիտական մամակագրության հետազոտմանը և այլն: Այդպիսի մեկնաբանությունն անվանվում է *պատմական*:

Միջազգային պայմանագրերի դադարումը: Պայմանագրի *դադարում* տակ հասկանում ենք պայմանագրի գործողության ավարտը, դրա դրույթների պարտադիր իրավական ուժի դադարումը:

Պայմանագիրը կարող է դադարել դրա գործողության ժամկետը լրանալու, պայմանագրի կատարման, «jus cogens» նոր նորմի առաջացման, ինչպես նաև պայմանագրում նախատեսված պայմաններն առաջանալու դեպքում:

Մեծամասամբ պայմանագրի դադարումը կապում են որոշակի ժամանակը լրանալու կամ դրա դրույթների իրագործման հետ: Պայմանագիրը կարող է դադարեցվել նաև մասնակիցների կողմից *դե-նոնսացիայի* միջոցով, որի տակ հասկացվում է պայմանագրի իրավաչափ միակողմ դադարեցումը՝ դրանում նախատեսված պայման-

ներով: Բացի դրանից, պայմանագիրը կարող է դադարեցվել ցանկացած ժամանակ, այդ պայմանագրի բոլոր մասնակիցների համաձայնությամբ:

Վիեննայի կոնվենցիաները որպես պայմանագրի դադարման հիմքեր նախատեսում են մասնակիցների կողմից դրանց էական խախտումը, կատարման հետագա անհնարինությունը հաջորդող պայմանագրի ընդունմամբ, հանգամանքների արմատական փոփոխությունը, ընդհանուր միջազգային իրավունքի ինպերատիվ նոր նորմի առաջացումը:

Պայմանագիրը դադարելու համար կարող է հիմք հանդիսանալ միայն պայմանագրի մյուս կողմի թույլ տրված էական խախտումը: *Էական խախտում* է պայմանագրից անիրավաչափ հրաժարվելը կամ պայմանագրի նպատակներին հասնելու համար էական նշանակություն ունեցող դրույթները խախտելը: Սակայն նույնիսկ նման խախտումը չի դադարեցնում պայմանագիրը, այլ միայն բարեխիղճ մասնակցին իրավունք է տալիս դադարեցնել այն: Խախտողը նման իրավունք չի ստանում:

Մասնակիցներից մեկի կողմից բազմակողմ պայմանագրի էական խախտումը մյուս մասնակիցներին իրավունք է տալիս միաձայն համաձայնության հիման վրա լրիվ կամ մասնակիորեն դադարեցնել պայմանագիրը բոլոր մասնակիցների միջև կամ միայն խախտողի հետ հարաբերություններում:

Պետությունը կարող է դադարեցնել պայմանագրի գործողությունը նաև եթե տեղի է ունեցել *հանգամանքների արմատական փոփոխություն* (rebus sic stantibus): Հանգամանքների արմատական փոփոխությունները կարելի է վկայակոչել, երբ այդպիսի հանգամանքների առկայությունը մասնակիցների համաձայնության էական հիմքն է, և երբ հանգամանքների փոփոխությունը արմատապես փոփոխում է պարտավորությունների գործողության ոլորտը:

Հանգամանքների փոփոխությունը չի կարելի վկայակոչել, եթե այն վկայակոչող մասնակցի կողմից պայմանագրի ցանկացած այլ մասնակցի հանդեպ պարտավորության խախտման արդյունք է կամ եթե խոսքը սահմանի մասին պայմանագրի դադարեցման մասին է:

Պայմանագրի դադարման իրավաբանական հետևանքների առնչությամբ սահմանված է, որ դադարումն ազատում է մասնակիցներին

հետագայում այն կատարելու պարտականությունից, սակայն չի ազդում պայմանագրի կատարման արդյունքում առաջացած իրավունքների, պարտականությունների կամ իրավաբանական վիճակի վրա:

§ 18. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի իրավական կարգավորումը

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ միջազգային պայմանագրերի հետ կապված հարցերը կարգավորող հատուկ իրավական ակտը «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքն է¹, որը, մասնավորապես, կարգավորում է ՀՀ միջազգային պայմանագիրը նախապատրաստելու, դրա շուրջ բանակցություններ վարելու, այն նախաստորագրելու, ստորագրելու, վավերացնելու կամ հաստատելու, դրան միանալու, ուժի մեջ մտնելու, գրանցելու, ժամանակավորապես կիրառելու, կատարելու, ինչպես նաև պայմանագրի գործողությունը կասեցնելու, դադարեցնելու և դրա հետ կապված այլ հարաբերությունները:

Օրենքում տրվում է ՀՀ միջազգային պայմանագրի սահմանումը: Դա ՀՀ և օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ միջազգային իրավունքի այլ սուբյեկտների միջև կնքված գրավոր համաձայնություն է, որը կարգավորվում է միջազգային իրավունքով, սահմանում, փոփոխում կամ դադարեցնում է կողմերի իրավունքները և պարտականությունները, սահմանված կարգով մտնում է իրավաբանական ուժի մեջ և Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է պարտադիր:

Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն է: Եթե ՀՀ Ազգային ժողովի վավերացրած միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են ՀՀ օրենքներով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը: ՀՀ Ազգային ժողովի կողմից չվավերացված միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերը չեն կարող հակասել ՀՀ օրենքներին:

¹ Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 28.07.2000 թ.-ին:

ՀՀ միջազգային պայմանագրի նորմերը ՀՀ տարածքում գործում են անմիջականորեն, եթե պայմանագրով նախատեսված չէ ՀՀ ներպետական ակտի ընդունում կամ եթե դրա ընդունումը չի բխում այդ պայմանագրի պատշաճ կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:

ՀՀ միջազգային պայմանագիրը կարող է կնքվել՝

- ՀՀ անունից (միջպետական պայմանագիր),
- ՀՀ կառավարության անունից (միջկառավարական պայմանագիր),
- ՀՀ հանրապետական գործադիր մարմինների, գլխավոր դատախազության, գիտությունների ազգային ակադեմիայի անունից (միջգերատեսչական պայմանագիր):

Անկախ նրանից, թե միջազգային պայմանագիրը ում անունից է կնքվել, որպես միջազգային պայմանագրի սուբյեկտ հանդես է գալիս Հայաստանի Հանրապետությունը, որը և պատասխանատու է հայկական կողմի ստանձնած պարտավորությունների կատարման համար:

Բացառիկ դեպքերում Հայաստանի Հանրապետությունը կարող է միջազգային պայմանագիր կնքել միջազգային կամ օտարերկրյա ոչ կառավարական կազմակերպության կամ միավորման հետ, որը հիմնադրվել է բարեգործական կամ մարդասիրական գործունեության նպատակով և ՀՀ-ում իրականացնելու է բարեգործական, մարդասիրական կամ զարգացման, տեխնիկական, տնտեսական կամ ֆինանսական գործունեություն կամ Հայաստանի Հանրապետությանը տրամադրելու է մարդասիրական, բարեգործական, տեխնիկական, տնտեսական կամ ֆինանսական օգնություն: Միջազգային պրակտիկայում տարածում չունեցող այս կարգի պայմանագիրը, ըստ օրենքի, նույնպես համարվում է ՀՀ միջկառավարական պայմանագիր:

ՀՀ միջազգային պայմանագիր կնքելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ ՀՀ Նախագահը, ՀՀ կառավարությունը, ՀՀ վարչապետը, գերատեսչությունները՝ իրենց գործունեության ոլորտին կամ իրավասությանը վերաբերող հարցերով, ինչպես նաև օտարերկրյա պետությունները և միջազգային իրավունքի այլ սուբյեկտներ:

Եթե միջպետական, միջկառավարական պայմանագիր կնքելու նախաձեռնությամբ հանդես է գալիս գերատեսչությունը, ապա նա մշակում է համապատասխան պայմանագրի նախագիծը և հիմնավորումներով ներկայացնում ՀՀ արտաքին գործերի նախարարություն: Եթե նախաձեռնությամբ հանդես է եկել օտարերկրյա պետությունը կամ միջազգային իրավունքի այլ սուբյեկտ, ապա ՀՀ արտաքին գործերի նախարարությունն ստացված առաջարկությունը հասցեագրում է համապատասխան գերատեսչությանը:

Համապատասխան գերատեսչության առաջարկությունները կամ կարծիքներն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում ՀՀ արտաքին գործերի նախարարությունն ուսումնասիրում է դրանք և տվյալ միջպետական կամ միջկառավարական պայմանագիրը կնքելու վերաբերյալ բոլոր փաստաթղթերը կամ դրանց պատճենները նախարարության կարծիքի հետ համապատասխանաբար ներկայացնում է ՀՀ Նախագահին կամ ՀՀ կառավարությանը:

Համաձայնեցման նպատակով ՀՀ միջպետական կամ միջկառավարական պայմանագրի նախագիծն ստանալուց հետո շահագրգիռ գերատեսչությունները պարտավոր են իրենց կարծիքը կամ դիտողությունները և առաջարկությունները ներկայացնել իրավասու գերատեսչություն:

Շահագրգիռ գերատեսչությունների կարծիքները կամ դիտողություններն ու առաջարկություններն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում իրավասու գերատեսչությունն ուսումնասիրում է դրանք, անհրաժեշտության դեպքում լրամշակում կամ վերամշակում է պայմանագրի նախագիծը և ներկայացնում ՀՀ արտաքին գործերի նախարարություն:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը միջպետական կամ միջկառավարական պայմանագրի նախագիծն իրավասու գերատեսչություններից ստանալուց հետո ներկայացնում է պայմանագրի մյուս կողմին (կողմերին):

Դրանից հետո ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ներգրավելով իրավասու գերատեսչություններին, կազմակերպում և ղեկավարում է այդ պայմանագրի կնքման շուրջ բանակցությունները, պայմանագրի տեքստը մյուս կողմի հետ համաձայնեցնելու, նախաս-

տորագրելու, ստորագրելու և սահմանված կարգով վավերացնելու կամ հաստատման ներկայացնելու հետ կապված աշխատանքները:

ՀՀ միջազգային պայմանագրի *նախաստորագրումը* դրա կնքման փուլն է, որի ընթացքում լիազորված անձն այդ պայմանագրի յուրաքանչյուր էջի վրա նշագրում կատարելու միջոցով հավաստում է գրավոր տեքստի վերաբերյալ հայկական կողմի նախնական համաձայնությունը, որից հետո պայմանագիրը սահմանված կարգով պատրաստ է ստորագրման Հայաստանի Հանրապետության կողմից: Նախաստորագրված միջազգային պայմանագրի տեքստը կարող է փոփոխվել միայն պայմանագիրն ստորագրելուց առաջ դրանում որոշակի ճշգրտումներ կամ ուղղումներ կատարելու համար կողմերի միջև ձեռք բերված լրացուցիչ պայմանավորվածության դեպքերում:

ՀՀ միջազգային պայմանագրի *ստորագրումը* դրա կնքման փուլն է, որով ավարտվում են պայմանագրի շուրջ բանակցությունները, և որի ընթացքում նախաստորագրված պայմանագիրը ստորագրվում է՝ ի հաստատումն դրա տեքստի հետ վերջնական համաձայնության:

Եթե միջպետական պայմանագրով նախատեսվում է, որ այն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից կամ մինչև ուժի մեջ մտնելը կարող է ժամանակավորապես կիրառվել, ապա Հայաստանի Հանրապետության կողմից այդ պայմանագիրն ստորագրելու իրավասություն կամ հատուկ լիազորություն ունեցող անձը պարտավոր է բանակցությունների ընթացքում մյուս կողմի հետ համաձայնեցնել, որ պայմանագիրն ուժի մեջ կմտնի այն վավերացնելուց հետո: Այդպիսի համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կողմից իրավասու կամ լիազոր անձը նման դրույթներ պարունակող պայմանագիրն ստորագրելիս պետք է վերապահում կատարի՝ նշելով, որ այդ պայմանագիրը ՀՀ-ի համար ուժի մեջ է մտնելու կամ կիրառվելու է «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ միջազգային պայմանագրի ստորագրմանը հավասարազոր է ճանաչվում դիվանագիտական ուղիներով նոտաների փոխանակման միջոցով կողմերի միջև համապատասխան բնագավառում հարաբերություններ հաստատելու մասին համաձայնության ձեռքբերումը:

ՀՀ միջազգային պայմանագրի *վավերացումը* կամ *հաստատումը* այդ պայմանագրի կնքման փուլն է, որի ընթացքում հայկական կող-

միջ ստորագրված միջազգային պայմանագրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը համապատասխան որոշում է ընդունում, և այդ հիմքով պայմանագիրը, ուժի մեջ մտնելու պահից, պարտադիր է ճանաչվում Հայաստանի Հանրապետության համար:

Հայաստանի Հանրապետությունը, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, կարող է միանալ ուժի մեջ մտած միջազգային պայմանագրին:

ՀՀ միջազգային պայմանագիրը վավերացնելու, հաստատելու, այդ պայմանագրին միանալու կարգը: ՀՀ միջազգային պայմանագիրը վավերացնում են ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ Նախագահը: ՀՀ Ազգային ժողովը վավերացնում է միջպետական պայմանագիրը, ինչպես նաև միջկառավարական և միջգերատեսչական այն պայմանագրերը, որոնք՝

• վերաբերում են վարկեր, փոխառություններ, երաշխիքներ ստանալուն կամ դրանք տրամադրելուն, կամ Հայաստանի Հանրապետության համար առաջացնում են այլ անմիջական ֆինանսական պարտավորություններ: «Այլ անմիջական ֆինանսական պարտավորություններ» են համարվում, մասնավորապես, հարկային և այլ պարտադիր վճարումների գծով արտոնություններ, միջազգային կազմակերպությունների պահպանման, միջպետական (միջկառավարական) հիմնադրամների ձևավորման նպատակով դրամական միանվագ կամ պարբերական մուծումներ նախատեսող պարտավորությունները,

- պարունակում են ՀՀ օրենքներին հակասող նորմեր,
- պարունակում են ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու կամ նոր օրենքներ ընդունելու վերաբերյալ նորմեր:

Բացի վերը նշվածներից, մյուս բոլոր միջկառավարական պայմանագրերը վավերացնում է ՀՀ Նախագահը:

Միջգերատեսչական այն պայմանագիրը, որը ենթակա չէ վավերացման ՀՀ Ազգային ժողովի կողմից, հաստատում են՝

- ՀՀ Նախագահը, եթե պայմանագիրը հակասում է ՀՀ Նախագահի հրամանագրերին,
- ՀՀ կառավարությունը, եթե պայմանագիրը կնքված է ՀՀ այլ գերատեսչությունների անունից:

Եթե ՀՀ միջկառավարական պայմանագիրն ստորագրել է ՀՀ Նախագահը, և այն ենթակա չէ ՀՀ Ազգային ժողովի վավերացմանը, ապա պայմանագիրը վավերացված է համարվում դրա ստորագրման պահից:

ՀՀ Ազգային ժողովի վավերացմանը ենթակա միջազգային պայմանագիրը ՀՀ Նախագահը նախապես ներկայացնում է ՀՀ սահմանադրական դատարան՝ պայմանագրում ամրագրված պարտականությունները ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումն ստանալու համար: ՀՀ սահմանադրական դատարանի դրական որոշումն ստանալու դեպքում ՀՀ Նախագահը միջազգային պայմանագիրը ներկայացնում է ՀՀ Ազգային ժողովի վավերացմանը:

Բացասական որոշում ստանալու դեպքում, ելնելով Հայաստանի Հանրապետության համար այդ պայմանագրի կարևորությունից, ՀՀ Նախագահը կարող է՝

- հանձնարարել ՀՀ կառավարությանը՝ պայմանագրի մյուս կողմի հետ բանակցություններ վարել դրանում ՀՀ Սահմանադրությանը հակասող պարտավորություններ նախատեսող նորմերը փոփոխելու, վերացնելու և սահմանված կարգով վավերացման ներկայացնելու համար,
- աննպատակահարմար համարել տվյալ միջազգային պայմանագրի կնքումը:

Եթե Հայաստանի Հանրապետությունը շահագրգռված է այդպիսի պայմանագիրը վավերացնել առանց այդ դրույթները վերացնելու, ապա ՀՀ Ազգային ժողովը նշված պայմանագիրը կարող է վավերացնել միայն ՀՀ Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո:

ՀՀ Ազգային ժողովը միջազգային պայմանագիրը վավերացնելու, դրան միանալու կամ այն մերժելու մասին ընդունում է որոշում, իսկ ՀՀ Նախագահը՝ ստորագրում է հրամանագիր: ՀՀ Նախագահը միջգերատեսչական պայմանագիրը հաստատում կամ մերժում է հրամանագրով, իսկ ՀՀ կառավարությունը՝ որոշմամբ:

ՀՀ միջազգային պայմանագրի ուժի մեջ մտնելը: ՀՀ միջազգային պայմանագրի ուժի մեջ մտնելը այդ պայմանագրի կնքման ավարտական փուլն է, երբ պայմանագիրն ստորագրելուց, վավերաց-

նելուց, հաստատելուց կամ դրան միանալուց հետո իրականացվում են տվյալ պայմանագրով նախատեսված իրավունքների ու պարտականությունների ծագման համար անհրաժեշտ կազմակերպական և իրավաբանական վերջին գործողությունները, որոնց ավարտմամբ կամ ավարտից հետո այն համարվում է կնքված, և պայմանագրով նախատեսված ժամկետից այդ իրավունքներն ու պարտականությունները համարվում են ծագած:

ՀՀ միջազգային պայմանագիրն ուժի մեջ է մտնում՝

• վավերացվելուց, հաստատվելուց կամ դրան միանալուց հետո՝ տվյալ պայմանագրով նախատեսված կարգով,

• միջազգային պայմանագրի պաշտոնական հրապարակումից հետո, եթե պայմանագիրը վերաբերում է մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին,

• ստորագրման կամ տվյալ միջազգային պայմանագրով նախատեսված այլ պահից, եթե պայմանագիրը միջկառավարական կամ միջգերատեսչական է և ենթակա չէ վավերացման կամ հաստատման ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ Նախագահի կամ ՀՀ կառավարության կողմից:

Միջազգային պայմանագիրն ստորագրելիս կամ վավերացնելիս, հաստատելիս կամ դրան միանալիս հայկական կողմը կարող է դրա վերաբերյալ կատարել վերապահումներ կամ վերացնել կատարված վերապահումները, ինչպես նաև ընդունել մյուս կողմի՝ նույն պայմանագրի վերաբերյալ կատարված վերապահումները կամ առարկել դրանց դեմ:

ՀՀ Նախագահն ստորագրում է ՀՀ Ազգային ժողովի վավերացրած միջազգային պայմանագիրը, ստորագրվում է վավերագիր, որով այդ պայմանագրի մյուս կողմին կամ ավանդապահին տեղեկացվում է, որ պայմանագրի վավերացմամբ այն պարտադիր է դարձել Հայաստանի Հանրապետության համար: ՀՀ Նախագահի ստորագրած վավերագրերը ամրագրվում են ՀՀ կնիքով և ՀՀ արտաքին գործերի նախարարի ստորագրմամբ:

Միջազգային պայմանագրի վավերագրերի փոխանակման կամ այդ պայմանագրի ավանդապահներին վավերագրեր և հայտարարագրեր հանձնելու գործառնություններն իրականացնում է ՀՀ արտաքին գործերի նախարարությունը:

Ուժի մեջ մտած ՀՀ միջազգային պայմանագիրը հրապարակվում է «ՀՀ միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագրում», որը ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական պարբերականն է:

Մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին վերաբերող ՀՀ միջազգային պայմանագրերը հրապարակվում են նաև «ՀՀ պաշտոնական տեղեկագրում»՝ ՀՀ օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի հրապարակման մասին օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ միջազգային պայմանագրի կատարումը և դադարումը: Ուժի մեջ մտած ՀՀ միջազգային պայմանագիրը ենթակա է անվերապահ կատարման ՀՀ կողմից: Միջազգային պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով ՀՀ Նախագահը, ՀՀ կառավարությունը և ՀՀ վարչապետը, իրենց իրավասության շրջանակներում ձեռնարկում են համապատասխան կազմակերպչական և իրավական միջոցներ:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը հետևում է ՀՀ միջազգային պայմանագրերի կատարմանը: Այդ նպատակով ՀՀ արտաքին գործերի նախարարությունն իրավունք ունի օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու գերատեսչություններում ծանոթանալ միջազգային պայմանագրի կատարման վիճակին և ընթացքին, համակարգել միջազգային պայմանագրի կատարման ուղղությամբ գերատեսչությունների կողմից կատարվող աշխատանքները:

Ելնելով ՀՀ միջազգային պայմանագրի կատարման վիճակից՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, անհրաժեշտության դեպքում, կարող է համապատասխան առաջարկություններ ներկայացնել ՀՀ Նախագահին, ՀՀ կառավարությանը և ՀՀ վարչապետին:

Ուժի մեջ մտած ՀՀ միջազգային պայմանագրի գործողությունը կարող է կասեցվել այդ պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով կամ ցանկացած ժամանակ՝ պայմանագրի բոլոր մասնակիցների համաձայնությամբ, պայմանավորվող այլ պետությունների հետ խորհրդակցելուց հետո, ինչպես նաև միջազգային իրավունքի նորմերով նախատեսված դեպքերում, այն է, եթե՝

• Հայաստանի Հանրապետությունը օբյեկտիվ պատճառներով հնարավորություն չունի ժամանակին կամ պատշաճ կատարել իր ստանձնած պարտավորությունները.

• միջազգային պայմանագրի մյուս կողմը (կողմերը) էականորեն խախտում է (են) այդ պայմանագրով ստանձնած անմիջական պարտավորությունները և վտանգում պայմանագրի կատարումը.

• միջազգային պայմանագրի մյուս կողմը (կողմերը) կասեցրել է (են) այդ պայմանագրի գործողությունը:

ՀՀ միջազգային պայմանագրի գործողությունը կասեցնելու համար հիմք դարձած հանգամանքները վերացնելուց հետո այդ պայմանագրի գործողությունը վերսկսվում է: Այդ մասին ՀՀ արտաքին գործերի նախարարությունը ծանուցում է մյուս կողմին (կողմերին):

Ուժի մեջ մտած ՀՀ միջազգային պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել (ուժը կորցնել) պայմանագրով սահմանված կարգով և այն պահից, երբ՝

• որոշակի ժամկետով կնքված միջազգային պայմանագրի ժամկետը լրացել է.

• անորոշ ժամկետով կնքված միջազգային պայմանագրի գործողությունը դադարեցնելու մասին ծանուցվել է հայկական կողմը կամ մյուս կողմը, եթե այդ պահից հետո պայմանագրով նախատեսված ժամկետը լրացել է.

• բազմակողմ միջազգային պայմանագրով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունը դուրս է եկել այդ պայմանագրից:

Ուժի մեջ մտած ՀՀ միջազգային պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել նաև *չեղյալ հայտարարելու* միջոցով: Չեղյալ հայտարարելը՝ Հայաստանի Հանրապետության կողմից միակողմանի և պայմանագրով չսահմանված կարգով այն իր համար այլևս պարտադիր չհամարելու մասին որոշում ընդունելն է:

Միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար կարող է չեղյալ հայտարարվել, եթե պայմանագրի մյուս կողմը (կողմերը)՝

• պատերազմական կամ այլ ռազմական գործողություններ է (են) սկսել Հայաստանի Հանրապետության դեմ կամ իրականացնում է (են) ՀՀ սահմանադրական կարգին սպառնացող այլ գործողություններ.

• էականորեն խախտում է (են) պայմանագրով ստանձնած պարտավորությունները, որի հետևանքով ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ Հայաստանի Հանրապետությունն այլևս նպատակահարմար չի գտնում իր համար այդ պայմանագրի հետագա պարտադիր լինելը.

• չեղյալ է (են) հայտարարել Հայաստանի Հանրապետության հետ կնքված միջազգային պայմանագիրը:

Միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար դադարում է պարտադիր լինել չեղյալ հայտարարելու մասին իրավասու մարմնի որոշումն ընդունելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ այդ որոշմամբ:

ՀՀ միջազգային պայմանագրի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշումն ընդունում է ՀՀ Ազգային ժողովը՝ իր վավերացրած միջազգային պայմանագրի վերաբերյալ, ՀՀ Նախագահը՝ իր վավերացրած միջազգային պայմանագրի վերաբերյալ կամ իրավասու գերատեսչության ղեկավարը՝ համապատասխան միջգերատեսչական պայմանագրի վերաբերյալ:

Եթե ՀՀ միջգերատեսչական պայմանագիրը հաստատել է ՀՀ Նախագահը կամ ՀՀ կառավարությունը, ապա դրա գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու որոշումը նույնպես հաստատում են համապատասխանաբար՝ ՀՀ Նախագահը կամ ՀՀ կառավարությունը:

Միջազգային պայմանագրի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին իրավասու մարմնի որոշումն ընդունելուց հետո եւոբյա ժամկետում, ՀՀ արտաքին գործերի նախարարությունն այդ մասին դիվանագիտական ուղիներով ծանուցում է տվյալ միջազգային պայմանագրի մյուս կողմին (կողմերին):

**ՎՈՒԽ 7. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

**§ 19. Միջազգային իրավական պարասխանարվության
հասկացությունը և հիմքերը**

Միջազգային իրավական պարասխանարվություն ասելով մենք հասկանում ենք միջազգային իրավունքի սուբյեկտի կողմից միջազգային իրավունքի նորմերը և իր միջազգային պարտավորությունները խախտելու դեպքում նրա համար առաջացող անբարենպաստ իրավաբանական հետևանքները: Միաժամանակ, դա նաև այդ նորմերի պահպանման և պատճառված վնասի հատուցման իրավաբանական միջոցներից մեկն է:

Պատասխանատվությունը միջազգային իրավունքի նորմերի պահպանման և խախտված իրավունքների ու հարաբերությունների վերականգնման անհրաժեշտ իրավաբանական միջոցն է: Այն հանդես է գալիս որպես միջազգային հարաբերությունների կարգավորման հատուկ գործիք և միջազգային իրավունքի գործողության երաշխիք:

Միջազգային իրավունքում պատասխանատվությանը վերաբերող նորմերը հատուկ միջազգային իրավական ինստիտուտ են: Հիմնականում դրանք սովորութային նորմեր են, ինչպես նաև առանձին պայմանագրերում ամրագրված նորմեր: Պատասխանատվության ինստիտուտը միջազգային իրավունքի ընդհանուր ինստիտուտ է, որի նորմերը կոչված են ապահովելու միջպետական հարաբերությունների բոլոր ոլորտներում իրավակարգի պահպանումը, անկախ նրանից, թե միջազգային իրավունքի ո՞ր ճյուղի նորմերով է այն կարգավորվում:

Միջազգային իրավունքի պայմանագրային կամ սովորութային նորմերի խախտման իրավաբանական հետևանքները կարող են անդրադառնալ իրավախախտ պետությանը, տուժող պետությանը կամ պետությունների խմբին, կամ միջազգային կազմակերպություններին, ինչպես նաև ամբողջ միջազգային հանրությանը: Այդ հետևանքները, ինչպես նաև պատասխանատվության ձևերը և ծա-

վալը կարող են տարբեր լինել՝ կախված իրավախախտման ծանրության աստիճանից, պատճառված վնասի չափից, իրավախախտման վտանգավորության աստիճանից և բնույթից:

Միջազգային իրավական պարասխանարվության հիմքերը: Միջազգային իրավական պատասխանատվությունը առաջանում է որոշակի հիմքերի առկայության դեպքում, որոնք ընկալվում են երկու իմաստով՝ ինչի հիման վրա է ծագում պատասխանատվությունը և ինչի համար: Դրանից ելնելով՝ տարբերում են պատասխանատվության իրավաբանական և փաստական հիմքերը:

Պարասխանարվության իրավաբանական հիմքերը իրավաբանորեն պարտադիր միջազգային իրավական ակտերի համակցությունն է, որոնց հիման վրա որոշակի վարքագիծը որակվում է որպես միջազգային իրավախախտում:

Պատասխանատվության իրավաբանական հիմքերը կարող են բովանդակվել միջազգային իրավունքի ցանկացած աղբյուրներում և պետությունների համար պարտադիր վարքագծի կանոններ ամրագրող այլ ակտերում: Դրանք են պայմանագրերը, սովորույթները, միջազգային դատարանների և արբիտրաժների վճիռները, միջազգային կազմակերպությունների պարտադիր ակտերը, միջազգային կոնֆերանսների և խորհրդակցությունների որոշ ակտեր, պետությունների՝ միջազգային իրավական բնույթի որոշ ակտեր: Պայմանագիրը և սովորույթը բովանդակում են վարքագծի պարտադիր կանոններ, որպես միջազգային իրավունքի ավանդական աղբյուրներ:

Պետությունների պարտավորությունները կարող են բխել ոչ միայն նորմատիվ ակտերից, այլև իրավունքի կիրառման ակտերից: Այդպիսի ակտեր են, մասնավորապես, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերը միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման հարցերով հարկադրական միջոցների կիրառման մասին, միջազգային դատարանների, արբիտրաժների և տրիբունալների վճիռները:

Միջազգային իրավունքի սուբյեկտի միջազգային իրավական *պարասխանարվության փաստական հիմքը* նրա կողմից միջազգային իրավախախտում կատարելն է:

Միջազգային իրավախախտումը միջազգային իրավունքի սուբյեկտի գործողությունն է կամ անգործությունը, որի հետևանքով

խախտվում են միջազգային իրավունքի նորմերը և այդ սուբյեկտի միջազգային պարտավորությունները, և որը վնաս է պատճառում միջազգային իրավունքի այլ սուբյեկտին, սուբյեկտների խմբին կամ ամբողջ միջազգային հանրությանը:

Ընդ որում, պատասխանատվությունը, որպես կանոն, առաջանում է միայն միջազգային իրավունքի սուբյեկտի հակաիրավական վարքագծի և պատճառված վնասի միջև պատճառական կապի առկայության դեպքում:

Այսպիսով, միջազգային պատասխանատվությունն առաջացնող միջազգային իրավախախտման բաղկացուցիչ տարրերն են միջազգային իրավունքի սուբյեկտի (սուբյեկտների)՝ միջազգային համաձայնագրերի գործող նորմերը կամ միջազգային սովորույթները խախտող գործողությունը կամ անգործությունը, իրավախախտման մեղսագրելիությունը՝ միջազգային իրավունքի սուբյեկտին. միջազգային իրավունքի մեկ այլ սուբյեկտին (սուբյեկտներին) վնաս պատճառելը:

Միջազգային իրավունքի նորմերի խախտմանը և վնաս պատճառելուն հանգեցրած իրենց վարքագիծն արդարացնելու համար պետությունների կողմից ազգային օրենքների և կանոնների վկայակոչումն անընդունելի է:

Պետությունը միասնական սոցիալական օրգանիզմ է, որի բոլոր գործառույթներն իրականացվում են պետական մարմինների համակարգի միջոցով: Ուստի, վարքագիծը պետությանը մեղսագրելու մասին հարցը լուծելիս պետք է որոշել այն մարմինների շրջանակը, որոնց համար նա պատասխանատվություն է կրում:

Միջազգային իրավունքի սուբյեկտների միջազգային իրավական պատասխանատվության հանգեցնող հակաիրավական գործողությունները կամ անգործությունը կարող են կատարվել պետական մարմինների (անկախ պետության մարմինների համակարգում նրանց դիրքից), պետության հանձնարարությամբ կամ նրա անունից հանդես եկող՝ պետության պաշտոնատար անձանց, ինչպես նաև իշխանական լիազորություններով օժտված և պետության անունից հանդես եկող պետության հատուկ մարմինների (օրինակ, ռազմական նավերի և օդանավերի) կողմից:

Հետևաբար, կանխավարկածն այնպիսին է, որ պետությունը միջազգային պատասխանատվություն է կրում իր ցանկացած մարմինների գործողությունների համար, անկախ դրանց գործառույթներից: Այս կապակցությամբ տեղին է հիշատակել ճանաչված իրավաբան-միջազգայնագետի հետևյալ ձևակերպումը. «Պետությունը պատասխանատու է իր մարմինների համար, միայն իր մարմինների համար և իր բոլոր մարմինների համար»:

Պետք է հստակ տարանջատել պետության մարմիններ չհանդիսացող և նրա անունից չգործող տնտեսական, քաղաքական, հասարակական և այլ կազմակերպությունների պատասխանատվության դեպքերը: Պետությունը պատասխանատվություն չի կրում՝ տնտեսական կազմակերպությունների, իսկ վերջինները՝ պետության պարտավորությունների համար:

Անթույլատրելի է նաև պետության պաշտոնատար անձանց՝ միջազգային իրավունքի նորմերի չիմացությունը, դրանց սխալ մեկնաբանությունը կամ կիրառումը վկայակոչելը: Գրեթե բոլոր միջազգային իրավախախտումները միջազգային իրավունքի սուբյեկտների կողմից կատարվում են գիտակցաբար, կանխամտածված, մեղավորությամբ:

Այսպիսով, պետության պատասխանատվությունը կարող է առաջանալ այնպիսի միջազգային պայմանագրի նորմերին հակասող օրենքի կամ այլ նորմատիվ ակտի ընդունման դեպքում կամ հակառակը՝ այն օրենքը չընդունելու դեպքում, որը նա պարտավոր էր ընդունել իր միջազգային պարտավորություններին համապատասխան, և որը կկանխեր հակաիրավական իրադարձությունը կամ գործողությունը:

Պետության պատասխանատվությունը ծագում է նաև իշխանության մարմինների անգործության դեպքում, երբ իշխանությունների ժամանակին միջամտությունը կարող էր կանխել անիրավաչափ գործողությունները:

Պետության միջազգային իրավական պատասխանատվությունը կարող է առաջանալ նաև պետական մարմինների կամ պետության պաշտոնատար անձանց կողմից լիազորությունների սահմանազանցման դեպքում, ինչի հետևանքով կարող է վնաս պատճառվել օտարերկրյա պետությանը, նրա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց:

Ձինված հակամարտությունների ժամանակ պետական մարմինների, զորամասերի և զինվորական ստորաբաժանումների, ռազմա-նավերի և ռազմական օդանավերի գործողությունների դեպքում, երբ այդ գործողությունների արդյունքում խախտվում են Պատերազմի գո-հերի պաշտպանության մասին 1949 թ. Ժնևի կոնվենցիաների, 1970 թ. դրանց I և II լրացուցիչ արձանագրությունների և պատերազմ վարելու միջոցներին և մեթոդներին վերաբերող միջազգային այլ կոն-վենցիաների նորմերը, պատասխանատվությունը կրում է այն պե-տությունը, որին պատկանում են այդ մարմինները, զորամասերը և զինվորական ստորաբաժանումները, ռազմաճակատները և ռազմական օ-դանավերը:

Պատասխանատվությունը իրավաչափ գործունեության համար: Ընդհանուր կանոնի համաձայն, պատասխանատվության փաստա-կան հիմքը միջազգային իրավախախտումն է: Սակայն միջազգային իրավունքում պատասխանատվություն է նախատեսված նաև որոշա-կի գործողությունների համար, որոնք իրենք իրավաչափ են:

Հաճախ այդպիսի պատասխանատվությունը սահմանվում է առա-վել վտանգի աղբյուրի, ռիսկի բարձր աստիճանի հետ կապված գոր-ծունեության տեսակների համար (տիեզերքի հետազոտումը, օդանա-վազնացությունը, ատոմային էներգիայի և տեխնոլոգիայի օգտագոր-ծումը, որը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի աղտոտման):

Իրավաչափ գործունեության համար պատասխանատվության են-թարկելը հանգեցրել է առանց մեղքի վնաս պատճառելու համար բա-ցարձակ պատասխանատվության իրավական հայեցակարգի առա-ջացմանը: Այդպիսի պատասխանատվություն նախատեսող ակտերի թվին է դասվում *Տիեզերական օբյեկտներով պարմանված վնասի համար միջազգային պատասխանատվության մասին* 1972 թ. կոն-վենցիան, որի 11-րդ հոդվածը սահմանում է, որ արձակող պետությու-նը «բացարձակ պատասխանատվություն է կրում իր տիեզերական օբյեկտով երկրի մակերեսին կամ թռիչքի մեջ գտնվող օդանավին պատճառված վնասի համար»:

Իրավախախտումների փարանջարումը հարակից արարքնե-րից: Պետության վարքագծի ճիշտ որակումը կապված է նաև իրավա-խախտումը հարակից արարքներից տարանջատելու անհրաժեշ-

տության հետ: Դրանք ոչ բարեկամական գործողություններն են և մի-ջազգային բնույթի հանցագործությունները:

Ոչ բարեկամական գործողությունները պետության այնպիսի վարքագիծ են, երբ վնաս է հասցվում այլ պետությունների, սակայն չեն խախտվում միջազգային իրավունքի նորմերը, ինչի հետևանքով բացակայում է իրավախախտումը: Ոչ բարեկամական գործողու-թյունները ունահարում են պետությունների՝ միջազգային իրավունքով չպաշտպանված շահերը: Այդպիսի գործողությունների թվին են դաս-վում, օրինակ, տվյալ պետության տարածքում օտարերկրյա ֆիզիկա-կան և իրավաբանական անձանց իրավունքների սահմանափակումը, ներմուծվող ապրանքներից զանձվող մաքսատուրքերի դրույքաչա-փերի ավելացումը, օտարերկրյա սեփականության ազգայնացումը:

Միջազգային իրավունքը չի նախատեսում ոչ բարեկամական գոր-ծողություններ կատարելու արգելք, ուստի և դրա հետ կապված խնդիրների կարգավորման հարցում հիմնական դերը պատկանում է բարոյական և քաղաքական միջոցներին:

Միջազգային բնույթի հանցագործությունները ֆիզիկական ան-ձանց կողմից կատարվող քրեորեն պատժելի այն արարքներն են, ո-րոնք ունենում են երկու, մի քանի կամ բազմաթիվ պետությունների շահերի և միջազգային իրավակարգի դեմ, այսինքն ունեն միջազգա-յին վտանգավորություն:

Այդպիսի հանցագործությունների զլխավոր տարբերակող հատ-կանիշն այն է, որ դրանք կատարվում են անկախ պետության քաղա-քականությունից՝ պետության պաշտոնատար անձ չհանդիսացող և նրա անունից չգործող անհատների կողմից: Ընդհակառակը, որպես կանոն, նրանք գործում են իրենց պետության օրենսդրությանը և իրա-վակարգին հակառակ: Պետությանը չի մեղսագրվում մասնավոր ան-ձանց գործունեությունը, ուստի և այդ հանցագործությունները միջազ-գային իրավական պատասխանատվության հիմք չեն:

§ 20. Միջազգային իրավախախտումների և միջազգային իրավական պարտասխանատվության տեսակները և չևերը

Միջազգային իրավախախտման հատկանիշները: Միջազգային իրավախախտումը բնութագրվում է հետևյալ անհրաժեշտ հատկանիշներով՝ արարքի հակաիրավականությունը և վնասը: Իրավախախտման անբաժանելի կառուցվածքային տարր է պատճառական կապը արարքի և առաջացած հետևանքների (վնասի) միջև:

Վարքագծի հակաիրավականությունը դրսևորվում է պետության պարտավորությունների խախտմամբ՝ գործողության կամ անգործության տեսքով: Հակաիրավականությունը միջազգային իրավունքում հասկացվում է որպես հակասություն իրավական նորմի (պարտավորության) և պետության վարքագծի միջև: Պետության կողմից միջազգային պարտավորության խախտումն առկա է այն դեպքում, երբ այդ պետության արարքը չի համապատասխանում նշված պարտավորությամբ իրեն ներկայացվող պահանջներին:

Ցանկացած հակաիրավական վարքագիծ *վնաս* է պատճառում պետությունների՝ միջազգային իրավունքով պաշտպանվող օրինական շահերին կամ ամբողջ միջազգային հանրությանը: Վնաս կրած պետությունը դառնում է տուժող, ինչը հիմք է տալիս միջազգային պատասխանատվության հարց բարձրացնել:

Վնասը կարող է լինել նյութական (տարածքային, նյութական կորուստներ, ֆինանսական վնասներ, կորցված օգուտ) և ոչ գույքային (պետության իրավունքների, պատվի, արժանապատվության ոտնահարում և այլն): Հաճախ այն պատճառվում է խառը ձևով:

Պատասխանատվություն առաջանալու համար անհրաժեշտ է *պատճառական կապ* հակաիրավական արարքի և վնասների միջև: Պատճառական կապը հնարավորություն է տալիս բավականաչափ ստույգ որոշել պետության առնչությունը որևէ իրադարձություններով կամ գործողություններով պատճառված վնասակար հետևանքներին, հետևաբար՝ լուծել պատասխանատվության հարցը:

Այսպիսով, միջազգային իրավական պատասխանատվությունը ծագում է անհրաժեշտ իրավաբանական և փաստական հիմքերի՝ որոշակի իրավական պարտավորության և սուբյեկտի գործողություններում իրավախախտման առկայության դեպքում:

Միջազգային իրավախախտումների տեսակները: Միջազգային իրավախախտումները տարբերվում են իրենց ուղղվածությամբ և ծանրությամբ: Դրանց հիմնավորված դասակարգումն անհրաժեշտություն է, քանի որ դրանից է կախված պատասխանատվության տարբերակված ռեժիմը:

Միջազգային իրավունքում բոլոր միջազգային իրավախախտումները՝ կախված պետությունների և ընդհանրապես միջազգային հանրության համար դրանց վտանգավորության աստիճանից, իրավախախտումների և հետևանքների բնույթից, կարելի է բաժանել երկու խոշոր խմբերի՝ *միջազգային հանցագործությունների և դելիկտների*:

Միջազգային հանցագործությունը պետությունների և ազգերի կենսական կարևոր շահերի դեմ ոտնձգող, նրանց գոյության հիմքերը քայքայող, միջազգային իրավունքի կարևորագույն հիմնական սկզբունքները կոպտորեն ոտնահարող, միջազգային խաղաղության ու անվտանգության, ամբողջ մարդկության համար վտանգ ներկայացնող առանձնապես վտանգավոր միջազգային իրավախախտում է:

Միջազգային հանցագործություն է պետության կողմից միջազգային հանրության կենսականորեն կարևոր շահերի ապահովման համար հիմնարար միջազգային պարտավորության խախտումը, որը համարվում է հանցագործություն՝ ուղղված ամբողջ միջազգային հանրության դեմ: Այդպիսի միջազգային հանցագործությունների թվին են դասվում՝ ագրեսիան, ցեղասպանությունը, ապարտեիդը, գաղութատիրությունը, զինվորական հանցագործությունները, հանցագործությունները խաղաղության և մարդկության դեմ:

Միջազգային հանցագործություն չկազմող արարքը հասարակ միջազգային իրավախախտում է (դելիկտ): *Միջազգային դելիկտները* առանձին պետությանը կամ միջազգային իրավունքի սուբյեկտների սահմանափակ խմբին վնաս պատճառող հակաիրավական գործողություններն են: Այդ դեպքում պատասխանատվության հարաբերություններն առաջանում են իրավախախտ պետության և անմիջապես տուժած պետության միջև, իսկ եթե իրավախախտումն աննշան է և չի առնչվում պետությունների և ազգերի գոյության հիմքերին, չի պատկանում առաջին խմբի հանցագործությունների թվին:

Այդպիսի իրավախախտումներ են, օրինակ, օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների դեմ հա-

կախրավական գործունեությունը չխափանող պետական մարմինների թողությունը (անգործությունը), առևտրային պարտավորությունների խախտումը և այլն:

Պեպությունների միջազգային իրավական պատասխանատվության տեսակները և չևերը: Գոյություն ունեն պետությունների միջազգային իրավական պատասխանատվության երկու տեսակներ՝ *քաղաքական և նյութական:*

Քաղաքական պատասխանատվությունը, որպես կանոն, ուղեկցվում է իրավախախտ պետության դեմ հարկադրական միջոցներ կիրառելով և զուգակցվում է նյութական պատասխանատվությամբ: Քաղաքական պատասխանատվության առավել տարածված ձևերն են ռետորսիաները, ռեպրեսալիաները, սատիսֆակցիան, ռեստորացիան, միջազգային կազմակերպությունում անդամակցության կասեցումը կամ անդամությունից հանելը, ազրեսորին ուժով ճնշելը, որոնք իրացվում են սանկցիաների կիրառման միջոցով:

Սանկցիաները խախտող պետության նկատմամբ կիրառվող հարկադրական միջոցներն են: Դրանք կարող են կիրառվել միջազգային կազմակերպությունների (ունիվերսալ և տարածաշրջանային), պետությունների խմբի կամ առանձին կազմակերպությունների կողմից: Սանկցիաների ծավալը և տեսակները կախված են իրավախախտման ծանրության աստիճանից և պատճառված վնասից: Օրինակ, ազրեսոր պետության նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ հարկադրական միջոցները՝ հետպատերազմական օկուպացիան ամբողջ տարածքի կամ տարածքի մասի լրիվ կամ մասնակի ապառազմակացում, զինված ուժերի և սպառազինությունների կրճատում կամ զինված ուժերի և սպառազինությունների այս կամ այն տեսակն ունենալու արգելք:

Միջազգային խաղաղության և անվտանգության դեմ ոտնձգությունների համար սանկցիաները նախատեսված են ՄԱԿ-ի Կանոնադրության 39, 41 և 42-րդ հոդվածներում, որոշ տարածաշրջանային քաղաքական կազմակերպությունների կանոնադրություններում: Վերը թվարկված սանկցիաների գրեթե բոլոր տեսակները Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կիրառվել էին Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի նկատմամբ:

Սանկցիաները, որպես հարկադրական միջոցներ, կիրառվում են միայն միջազգային ծանր հանցագործության դեպքում: Այլ դեպքե-

րում նման սանկցիաների կիրառումը չի կարելի համարել իրավաչափ, քանի որ, ըստ էության, դրանք պետությունների (միջազգային հանրության) արձագանքն են հակաիրավական գործողությունների կանխամտածված կատարմանը կամ կանխամտածված էական վնաս պատճառելուն:

Ռեպրեսիաները մի պետության հարկադրական գործողություններն են ուղղված իր շահերը խախտած այլ պետության դեմ: Ռետորսիան կարող է լինել միայն մեկ պետության պատասխանն այլ պետության որոշակի ոչ բարեկամական գործողություններին՝ խախտված իրավունքները վերականգնելու նպատակով: Ռետորսիաների թվին են դասվում ոչ բարեկամական գործողություն կատարած պետությունից դեսպանին հետ կանչելը, այն երկրի հավասար թվով դիվանագետներին վտարելը, որն ավելի վաղ վտարել էր տվյալ պետության համապատասխան թվով դիվանագետներին, պատվիրակությունների, այդ թվում՝ պետության գլխի երկիր մուտքի արգելքը կամ այցերի վերացումը:

Ռեպրեսալիաները (ոչ զինված) մեկ պետության իրավաչափ հարկադիր գործողություններն են մեկ այլ պետության նկատմամբ: Ռեպրեսալիաները կիրառվում են ի պատասխան այլ պետության անիրավաչափ գործողությունների՝ խախտված իրավունքը վերականգնելու նպատակով: Դրանք պետք է համաչափ լինեն պատճառված վնասին և այն հարկադրանքին, որն անհրաժեշտ է բավարարում ստանալու համար:

Ռեպրեսալիաները կարող են դրսևորվել դիվանագիտական հարաբերությունների կասեցմամբ կամ խզմամբ, իրավախախտ պետության տարածքից ապրանքների և հումքի ներմուծման էմբարգոյով (արգելքով) և այլն: Ռեպրեսալիաները պետք է դադարեցվեն բավարարում ստանալուն պես: Ժամանակակից միջազգային իրավունքն արգելում է զինված ռեպրեսալիաները՝ որպես վեճերի և տարածայնությունների լուծման միջոց: Սակայն դա ոչ մի կերպ չի առնչվում ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի համաձայն ազրեսիայից անհատական կամ հավաքական պաշտպանության՝ պետության (պետությունների խմբի) իրավունքին, ՄԱԿ-ի միջազգային դատարան կամ արբիտրաժ դիմելու իրավունքին:

Սալիսֆակցիան (բավարարումը) խախտող պետության կողմից տուժող պետության պատվին և արժանապատվությանը պատճառ-

ված վնասի համար բավարարում տրամադրելն է: Սատիսֆակցիան կարող է դրսևորվել պաշտոնապես ներողություն խնդրելով, ապագայում նման անհրավաչափ գործողություններ թույլ չտալու վերաբերյալ հավաստիացումներով, տուժող պետության դրոշին պատիվներ ցույց տալով կամ նրա օրհներգը համապատասխան հանդիսավոր իրադրությունում կատարելով և այլն:

Ռեսպորացիան, որպես պատասխանատվության ձև, ենթադրում է խախտող պետության կողմից որևէ նյութական օբյեկտի նախկին վիճակի վերականգնում:

Նյութական պատասխանատվությունը առաջանում է պետության կողմից նյութական վնաս պատճառելու հետ կապված իր միջազգային պարտավորությունները խախտելու դեպքում: Այն կարող է դրսևորվել ռեսպորացիայի, ռեստիտուցիայի և սուբստիտուցիայի ձևով:

Ռեսպորացիաները նյութական վնասի հատուցում են դրամական արտահայտությամբ, ապրանքներով, ծառայություններով: Ռեսպորացիաների ծավալը և տեսակը, որպես կանոն, որոշվում են միջազգային պայմանագրերի հիման վրա: Ռեսպորացիաների գումարը սովորաբար էականորեն ցածր է պատերազմով պատճառված վնասի ծավալից:

Ռեստիտուցիաները պատերազմող պետության կողմից հակառակորդի տարածքից անհրավաչափ առգրավված և դուրս բերված գույքը բնեղենով վերադարձնելն է: Ռեստիտուցիայի օբյեկտ կարող է լինել նաև պատերազմական գործողությունների հետ չկապված՝ խաղաղ ժամանակ անհրավաչափ զավթված կամ անհրավաչափ պահված գույքը:

Սուբստիտուցիան ռեստիտուցիայի տարատեսակ է: Այն անհրավաչափ ոչնչացված կամ վնասված գույքի, շենքերի, տրանսպորտային միջոցների, գեղարվեստական արժեքների, անձնական գույքի և այլնի փոխարինումն է:

Պետությունների քաղաքական պատասխանատվության հատուկ տեսակ է միջազգային կազմակերպությանը անդամակցությունից բխող իրավունքների և արտոնությունների կասեցումը (ձայնի իրավունքից, գլխավոր մարմիններում ներկայացուցչության իրավունքից,

օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից զրկելը) և, որպես ծայրահեղ միջոց, միջազգային կազմակերպությունից հեռացնելը:

Ֆիզիկական անչանց միջազգային քրեական պատասխանատվությունը: Միջազգային հանցագործություններ, միջազգային բնույթի հանցագործություններ և միջազգային դելիկտներ իրականացրած ֆիզիկական անձինք (պետությունների քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք) կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության՝ նման իրավախախտումների համար պատիժներ նախատեսող գործող միջազգային պայմանագրերի, ինչպես նաև այն պետության ազգային օրենսդրության համաձայն, որի քաղաքացիներն են այդ ֆիզիկական անձինք կամ որի տարածքում նրանք մշտապես բնակվում են: Այս խնդիրները հիմնականում կարգավորվում են միջազգային քրեական իրավունքի նորմերով:

Միջազգային իրավական պատասխանատվությունից ազատող հանգամանքները: Պետությունների վարքագիծը որակելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքները, որոնց առկայությունը պետություններին ազատում է պատասխանատվությունից: Դրանք կարող են լինել երկու տեսակ՝ *պատասխանատվությունը բացառող* և *պատասխանատվության իրացումը բացառող հանգամանքներ*: Պատասխանատվության առաջացումը բացառվում է այնպիսի իրավիճակներում, որոնց առկայության պարագայում պետությունների վարքագիծը, որը բնականոն պայմաններում որակվում է որպես իրավախախտում, ճանաչվում է իրավաչափ և պատասխանատվություն չի առաջացնում: Երկրորդները փաստական այն իրավիճակներն են, որոնց դեպքում իրավախախտմամբ առաջացած պատասխանատվությունը փաստացի չի իրացվում:

Չնայած միջազգային հակաիրավական արարքի գոյության երկու պայմանների առկայությանը, չի կարելի անվերապահորեն եզրակացնել միջազգային հակաիրավական արարքի առկայության մասին: ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը նշել է միջազգային իրավական պատասխանատվությունից ազատող հետևյալ հանգամանքները՝ համաձայնությունը, հակազդման միջոցները, անհաղթահարելի ուժը և չկանխատեսված դեպքը, աղետը, անհրաժեշտության վիճակը, ինքնապաշտպանությունը:

§ 21. Հայոց ցեղասպանության համար միջազգային իրավական պատասխանատվության հիմնահարցերը

Քննարկելով միջազգային իրավական պատասխանատվության հարցերը՝ չի կարելի չանդրադառնալ նաև հայոց ցեղասպանության համար պատասխանատվության խնդրին, ուստի և անհրաժեշտ ենք համարում ներկայացնել մեր նկատառումները դրան առնչվող որոշ միջազգային իրավական հիմնահարցերի վերաբերյալ:

Ինչպես հայտնի է, հիմնական իրավական ակտը, որը վերաբերում է ցեղասպանությանը, 1948 թվականին ընդունված Ցեղասպանություն հանցագործությունը կանխելու և դրա կատարման համար պատժի մասին կոնվենցիան է: Նպատակ չունենալով այստեղ մանրամասն ներկայացնել նշված փաստաթղթերի բովանդակությունը՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ այդ միջազգային իրավական ակտի և հայոց ցեղասպանության հարաբերակցության խնդիրներին:

Ցեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին կոնվենցիան սահմանում է մարդկության դեմ ծանրագույն հանցագործությունը՝ ցեղասպանությունը, որի տակ հասկացվում են այս կամ այն ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խումբը որպես այդպիսին լրիվ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ կատարվող հետևյալ գործողությունները՝ այդպիսի խմբի անդամների սպանությունը, նման խմբի անդամներին լուրջ մարմնական վնասվածքներ պատճառելը, խմբի համար այնպիսի կենսական պայմանների կանխամտածված ստեղծումը, որոնք հաշվարկված են դրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական բնաջնջմանը, այդպիսի խմբում ծնելիության կանխմանն ուղղված միջոցները, երեխաների հարկադրական փոխանցումը մարդկանց մի խմբից մեկ ուրիշին: Պատժելի է ցեղասպանությունը, այն կատարելու նպատակով դավադրությունը, ցեղասպանությանը դրդելը, դրան հանցակցելը:

Նշենք, որ ցեղասպանության մասին կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների (որոնցում սահմանվում է ցեղասպանության հանցակազմը) բոլոր կետերը 1915 թվականի թուրքական իշխանությունների կողմից Հայկական հարցի «մեկընդմիջտ լուծմանը» ուղղված ոճրագործությունների ուղղակի և իրավաբանորեն հստակեցված նկարագ-

րությունն են, և այս իմաստով հայոց ցեղասպանությունը կարող է ճանաչվել որպես ամենաավարտուն ցեղասպանությունը, որը երբևէ տեղի է ունեցել մարդկության պատմության մեջ:

Այդ ամենը քաջ գիտակցելու հետ մեկտեղ, իրատեսությունը թելադրում է մեզ այնուամենայնիվ հարց տալ՝ ինչքանով է իրավաբանորեն արդարացված 1948 թվականի Ցեղասպանության մասին կոնվենցիայի վկայակոչումը 1915 թվականին տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ: Այս հարցադրման հաճախակի շահարկումն օգտագործվում է մեր ընդդիմախոսների կողմից և փակուղու առաջ է կանգնեցնում անզամ մեր ազնիվ և սրտացավ բարեկամներին: Հարցն այն է, թե կարո՞ղ ենք, արդյոք, Ցեղասպանության մասին կոնվենցիային վերագրել ռետրոակտիվ էֆեկտ (հետադարձ ուժ):

Պետք է նշել, որ իրավական հարթության վրա այդպիսի խնդիր, իրոք, գոյություն ունի, սակայն դա չի նշանակում, որ մենք կանգնած ենք փակուղու առջև:

Հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս պնդել, որ 1948 թ. կոնվենցիան լիովին կիրառելի է 1915 թվականի հայոց ցեղասպանության վերաբերյալ: Այս կարծիքը պայմանավորված է մի շարք փաստարկներով, որոնք հակիրճ կարող են ներկայացվել հետևյալ կերպ:

Ինչպես ցույց է տալիս նշված կոնվենցիայի նախաբանի, ինչպես նաև Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրության վերլուծությունը, մինչև այդ փաստաթղթերի ընդունումը միջազգային իրավունքում գոյություն են ունեցել ցեղասպանությունն արգելող և այն կատարելու համար խիստ պատասխանատվություն սահմանող սովորութային միջազգային իրավական նորմեր: Այսինքն՝ 1948 թվականին ընդունված կոնվենցիան ոչ այլ ինչ է, քան մինչև դրա ընդունումն արդեն գոյություն ունեցող միջազգային իրավական նորմերի կողիֆիկացիա: Այստեղ մենք գործ ունենք սովորութային նորմերի կողիֆիկացիայի հետ, ճիշտ այնպես, ինչպիսին է, օրինակ, 1961թ. ընդունված Դիվանագիտական հարաբերությունների մասին կոնվենցիան: Դիվանագիտական հարաբերությունները կարգավորող սովորութային նորմերը հնագույններից են մարդկության պատմության մեջ, և ոչ ոք չի կարող հայտարարել, որ, օրինակ, դեսպանների անձեռնմխելիության մասին նորմը սկիզբ է առել միայն 1961 թվականին, երբ այն ամ-

րագրվել է կողիֆիկացված տեսքով: Ինչ վերաբերում է Նյուրնբերգյան դատավարություններին, ապա սոսկ դրանց անցկացման փաստը և ընդունած վճիռները մինչև նշված կոնվենցիայի ընդունումն արդեն իսկ վկայում են ներկայացված տեսակետի օգտին: Հակառակ մոտեցումը, այսինքն՝ ցեղասպանությունն արգելող պայմանագրային նորմերին նախորդող սովորությանին նորմերի առկայության ժխտումը, ուղղակիորեն կասկածի տակ է դնում նշված դատավարությունների օրինականությունը, վճիռների իրավական հիմնավորվածությունը, մի բան, որը ժամանակակից աշխարհում իրեն չի կարող թույլ տալ քաղաքակիրթ համարվող ոչ մի անձ կամ պետություն:

Նույնիսկ եթե մի պահ ընդունենք, որ վերը շարադրված փաստարկները գոյություն չունեն, և որ Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումից առաջ համապատասխան միջազգային իրավական նորմեր գոյություն չեն ունեցել, ապա անգամ այդ դեպքում առկա են մեր դիրքորոշումը հաստատող պատշաճ իրավական հիմքեր: 1915թ. թուրքական կառավարության իրականացրած ցեղասպանության առնչությամբ Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիությունը կարելի է հիմնավորել այդ գործողության և դրա հետևանքների շարունակական բնույթով: Այդ առումով հայերի ցեղասպանությունը շարունակվում է մինչ օրս և կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ չեն վերացվել դրա հետևանքները: Ցեղասպանության արդյունքում հայ ժողովրդի մեծամասնությունը ստիպված է ապրել իր հայրենիքից դուրս՝ ամեն օր, ամեն ժամ դիմակայելով ազգային ինքնությունը կորցնելու, որպես ազգային հանրություն, առանձին էթնոմշակութային միավոր գոյությունը դադարելու վտանգին: Մեր ժողովրդի սփյուռքահայ հատվածը կանոնապես չի լքել իր հայրենիքը և տասնյակ տարիներ ստիպված մարտնչել իր ինքնության պահպանման համար, նա հայտնվել է այդ վիճակում բռնության արդյունքում: Եվ քանի որ Ցեղասպանության մասին կոնվենցիան նպատակ է հետապնդում կանխել և պատժել որևէ ազգային խմբի բռնի ամբողջովին կամ մասնակի ոչնչացումը, հայ ժողովրդի՝ 1915 թվականին սկսված և մինչ օրս շարունակվող ցեղասպանությունը նշված կոնվենցիայի կոպիտ խախտում է:

Ավելացնենք, որ համաձայն իրավաբանության հիմնարար սկզբունքի, եթե իրավախախտումը և դրա հետևանքները շարունակ-

վում են, ապա իրավախախտման սկսման ժամանակը համապատասխան օրենքի կիրառման համար իրավաբանորեն էական չէ: Այլ կերպ ասած, օրենքի հետադարձ ուժի արգելքն այս դեպքում կիրառելի չէ: Եթե նոր օրենք է ընդունվում, որն արգելում է արդեն սկսված իրավախախտումը, ապա այդ օրենքը տարածվում է նրա վրա այն դեպքում, եթե իրավախախտումը և դրա հետևանքները շարունակվում են:

Այս ենթատեքստում կարևոր նշանակություն ունի նաև այն, որ ՄԱԿ-ը 1968թ. նոյեմբերի 26-ի կոնվենցիայում հրաժարվեց կիրառել վաղեմության ժամկետը մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ, որոնց շարքում առաջինը ցեղասպանություն հանցագործությունն է: Այդ իրավական ակտում ուղղակիորեն նշվում է, որ վաղեմության ժամկետը չի կարող կիրառվել Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրության և Ցեղասպանության մասին կոնվենցիայում նշված հանցագործությունների, ինչպես նաև զինված հարձակման պատճառով բռնագաղթի ենթարկելու կապակցությամբ, «անկախ դրանց կատարման ժամանակից»: 1968թ. կոնվենցիայի այս հստակ ձևակերպումը միանշանակ նախատեսում է, որ այն ամբողջությամբ վերաբերվում է նշված բոլոր հանցագործություններին, անկախ նրանից, թե երբ են դրանք կատարվել:

Այսպիսով, հայերի ցեղասպանության վերաբերյալ Ցեղասպանության մասին 1948թ. կոնվենցիայի ամբողջական և անվերապահ կիրառելիության վերաբերյալ կարծիքն անհրաժեշտ է համարել հիմնավորված և լիովին համապատասխանող գործող միջազգային իրավունքին:

Սակայն այս եզրակացությունը ևս չի լուծում գոյություն ունեցող միջազգային իրավական տեսական և գործնական բոլոր հիմնախնդիրները, որոնք կապված են հայոց ցեղասպանության համար պատասխանատվության հետ:

Կարևոր և համապատասխան ուսումնասիրություն պահանջող հարց է 1915 և հետագա թվականների իրադարձությունների համար պատասխանատվության սուբյեկտի խնդիրը: Այստեղ ևս պահանջվում է հստակ միջազգային իրավական դիրքորոշման մշակում, ժամանակակից միջազգային իրավական նորմերի հմուտ օգտագործում: Նշված ոլորտում առկա հիմնախնդիրների շարքից կարելի է ա-

ռանձնացնել 1915թ. ցեղասպանության համար Թուրքիայի պատասխանատվության խնդիրը, որն ըստ էության կապված է օսմանյան կայսրության իրավահաջորդության հարցի հետ: Եվ այսպես, խնդիրը հետևյալն է՝ արդյո՞ք Առաջին աշխարհամարտից հետո Օսմանյան կայսրության քայքայումը նրա միջազգային իրավական իրավասուբյեկտության վերջն էր: Եթե այս հարցի պատասխանը դրական է, ապա պետք է արձանագրել, որ համաձայն պետությունների իրավահաջորդության կանոնների, օսմանյան կայսրության իրավական պատասխանատվությունը դադարում է վերջինիս գոյության դադարման հետ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ առկա են երկու իրավական հնարավորություններ: Առաջինն այն է, որ օսմանյան կայսրության լուծարման հետևանքով նրա տարածքում ստեղծվեցին մի շարք պետություններ, այդ թվում նաև՝ ժամանակակից Թուրքիան, որոնք առնչություն չունեն կայսրության իրավասուբյեկտության հետ:

Եվ երկրորդը՝ օսմանյան կայսրության քայքայումը սկիզբ դրեց մի շարք նոր պետությունների առաջացման, որոնց թվում են, օրինակ, Իրաքը, Սիրիան, Լիբանանը, սակայն Թուրքիան, լինելով օսմանյան կայսրության իրավահաջորդը, նոր պետություն չէ, այլ ժառանգն է վերջինիս միջազգային իրավասուբյեկտության:

Ներկայացված երկու միմյանց բացառող հնարավորությունները տեսականորեն հավասարապես կարող են համապատասխանել միջազգային իրավունքին, ուստի այստեղ մենք գործ ունենք ոչ այնքան իրավունքի, որքան փաստի խնդրի հետ: Փաստի, որը պետք է բացահայտվի կոնկրետ պատմական իրողությունների ենթատեքստում և գնահատվի միջազգային իրավունքի դիրքերից:

Իսկ պատմական իրողությունն այն է, որ օսմանյան կայսրության քայքայման արդյունքում չստեղծվեց լիովին նոր մի պետություն՝ Թուրքիայի Հանրապետությունը, այլ գոյություն ունեցող պետությունում, որը պատերազմի ընթացքում կորցրել էր իր գաղութները, փոփոխվեց կառավարման համակարգը:

Այսպիսի մոտեցման հիմքում ընկած են ոչ միայն զուտ տրամաբանությունը կամ իրադարձությունների սուբյեկտիվ գնահատականները: Այսպես, քննարկվող խնդրի կապակցությամբ կարևոր նշանակություն ունեն նաև միջազգային իրավական պրակտիկան, միջազ-

գային հարաբերություններում առկա նախադեպերը: Որպես դրա նորագույն օրինակ կարելի է դիտարկել Ռուսաստանի Դաշնության իրավահաջորդությունը, որը միջազգային հանրության կողմից իրավացիորեն ճանաչվեց որպես Խորհրդային Միության իրավասուբյեկտության օրինական շարունակող:

Բացի դրանից, պետք է նշել, որ վերը ներկայացված կարծիքը ժամանակին ստացել է հեղինակավոր իրավական հիմնավորում, որն իր նշանակությունը և իրավական ուժը չի կորցրել մինչ օրս: Խոսքը այսպես կոչված՝ «Օտտոմանյան պարտքի արբիտրաժի» վճռի մասին է, որում, ըստ էության, պատասխան է տրվում այն հարցին, թե արդյոք Թուրքիայի Հանրապետությունն օսմանյան կայսրության իրավահաջորդն է: Այդ դատավարության ընթացքում քննարկվում էր օսմանյան կայսրության արտաքին պարտքի վճարման հետ կապված հարցը: Համաձայն արբիտրաժի որոշման, Թուրքիան պատասխանատու էր օսմանյան կայսրության արտաքին պարտքերի համար, քանի որ նրա իրավահաջորդն է: Գործի քննության արդյունքում միջազգային ատյանը հանգել էր մի եզրակացության, որը մենք անհրաժեշտ ենք համարում մեջբերել բառացիորեն. «Միջազգային իրավունքի համաձայն, Թուրքիայի Հանրապետությունը պետք է ճանաչվի որպես օսմանյան կայսրության իրավահաջորդ»¹:

1915թ. կատարված ցեղասպանության համար պատասխանատվության խնդրի կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում նշել, որ խոսքը թուրքական պետության պատասխանատվության և ոչ թե թուրք ժողովրդի կամ անհատների պատասխանատվության մասին է: Իրավական առումով հենց թուրքական պետությունն է ցեղասպանության կազմակերպողը և իրագործողը, ուստի առաջին հերթին հենց նա պետք է կրի կատարվածի համար պատասխանատվության ամբողջ ծանրությունը:

Քանի դեռ հայոց ցեղասպանության համար պատասխանատվության խնդիրը վերջնական լուծում չի ստացել, դժվար է խոսել ցեղասպանությունն արգելող միջազգային իրավունքի նորմերի արդյունավետության մասին: Անպատժելիությունը ծնում է նոր հանցագործություններ, ինչի վկայություններն են ժամանակակից աշխարհի տարբեր շրջաններում տեղի ունեցող ողբերգական իրադարձությունները:

¹ Reports of international Arbitral Awards, N1, 1925, p. 529.

ՊԼՈՒԽ 8. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 22. Դիվանագիտական իրավունքի հասկացությունը

Դիվանագիտական իրավունքը միջազգային իրավունքի հնագույն ճյուղերից մեկն է, որի առաջին՝ սովորության բնույթ կրող նորմերն ի հայտ են եկել պետության առաջացմանը զուգահեռ: Դիվանագիտական իրավունքի որոշ ինստիտուտներ (օրինակ, դեսպանների անձեռնմխելիությունը) հնագույնն են ոչ միայն միջազգային իրավունքի, այլ նաև ամբողջ իրավունքի համակարգի շրջանակներում:

Դիվանագիտական և հյուպատոսական իրավունքը կարելի է բնութագրել որպես միջազգային իրավական նորմերի համակարգ, որը կարգավորում է միջպետական պաշտոնական հարաբերությունների իրականացման կարգը: Դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի կարգավորման օբյեկտն են քաղաքական բնույթի միջիշխանական այն հարաբերությունները, որոնցում միջազգային իրավունքի սուբյեկտները փոխգործում են իրենց պաշտոնական մարմինների միջոցով:

Պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների *արտաքին հարաբերություններ* կոչվող այս պաշտոնական հարաբերությունների բովանդակությունը քաղաքական, ինչպես նաև տնտեսական և իրավական հարցերով համագործակցությունն է:

Պետք է ընդգծել, որ խոսքն այստեղ ոչ այնքան նշված հարաբերությունների բովանդակության կարգավորման (ըստ էության, դա ամբողջ միջազգային իրավունքի, նրա բոլոր ճյուղերի խնդիրն է), որքան դրանց իրականացման կարգի մասին է, ինչը և դիվանագիտական իրավունքի առաքելությունն է:

Արտաքին հարաբերությունների մեկ այլ կարևոր հատկանիշը դրանց իրականացումն է հատուկ ստեղծված ապարատի՝ պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների արտաքին հարաբերությունների մարմինների միջոցով: Լինելով պաշտոնական՝ արտաքին հարաբերությունները տարբերվում են ինչպես այսպես կոչված՝ ինտերնացիոնալ կապերից, որոնցում կարող են մասնակցել

անհատներ և հասարակական կազմակերպություններ, այնպես էլ առևտրային, գիտատեխնիկական, մշակութային և այլ կապերից, որոնք իրագործվում են նաև ոչ կառավարական մակարդակով՝ տարբեր հասարակական կամ մասնավոր կազմակերպությունների միջոցով:

Հետևաբար, դիվանագիտությունը, որը պետության արտաքին քաղաքականության իրականացման միջոց է, բնութագրվում է գործունեության ոչ միայն խաղաղ, այլև պաշտոնական բնույթով, ընդ որում՝ այն իրականացվում է ոչ թե պետության ցանկացած մարմինների, այլ հատուկ այդ նպատակի համար ստեղծվող արտաքին հարաբերությունների մարմինների միջոցով:

Դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի աղբյուրներ: Դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի հիմնական աղբյուրներն են պայմանագիրը և սովորույթը: Սակայն եթե դիվանագիտական իրավունքում մինչև XX դարի 60-ական թվականները գլխավոր տեղ էին գրավում սովորության ճյուղերը, ապա հյուպատոսական իրավունքում վճռորոշ դերը միշտ պատկանում էր հյուպատոսական երկկողմ կոնվենցիաներին: Ներկայումս այս ոլորտում միջազգային իրավական կարգավորման հիմքն են կազմում 1961 և 1963 թթ. Վիեննայի ունիվերսալ կոնվենցիաները:

1961 թ. *Դիվանագիտական հարաբերությունների մասին* Վիեննայի կոնվենցիան դարձել է ամբողջ դիվանագիտական իրավունքի միջուկը: Հյուպատոսական իրավունքի համար համանման նշանակություն ունի 1963թ. ընդունված *Հյուպատոսական հարաբերությունների մասին* Վիեննայի կոնվենցիան:

Նշենք, որ դիվանագիտական իրավունքը ներառում է նաև հատուկ առաքելությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպություններում ներկայացուցչությունների և միջազգային կոնֆերանսներում պատվիրակությունների գործունեությունը կարգավորող նորմերը: Դա նախ և առաջ 1969 թ. *Հարուկ առաքելությունների մասին* կոնվենցիան է և մի շարք այլ միջազգային պայմանագրեր: Սակայն այս ոլորտում հիմնարար ակտը (ուժի մեջ մտնելուց հետո) *Ունիվերսալ կազմակերպությունների հետ իրենց հարաբերություններում պետությունների ներկայացուցչության մասին* 1975 թ. Վիեննայի կոնվենցիան է:

Դիվանագիտական իրավունքի աղբյուրներ են նաև պետությունների, միջազգային կազմակերպությունների միջև երկկողմ պայմանագրերը:

Սովորության նորմերը կարևոր դեր ունեն այն դեպքերում, երբ ինչ-ինչ հարցեր չեն կարգավորվել պայմանագրային նորմերով, դրանց պետք է հետևեն նաև այս կամ այն պատճառներով՝ վերը նշված բազմակողմ պայմանագրերին չմասնակցող պետությունները:

Ինչ վերաբերում է միջազգային հյուպատոսական իրավունքին, ապա դրա հիմնական աղբյուրներն են հենց պայմանագրային նորմերը: Նորագույն պատմության մեջ սովորույթը համեմատաբար փոքր դեր է խաղում հյուպատոսական իրավունքում:

Քննարկելով դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի աղբյուրների մասին հարցը, չի կարելի չանդրադառնալ ներպետական՝ ազգային իրավունքի դերին: Վերջինիս ազդեցությունն այնքան մեծ է, որ երբեմն ներպետական ակտերը նույնիսկ դասվում են դիվանագիտական և հատկապես՝ հյուպատոսական իրավունքի անուղղակի աղբյուրների թվին:

Իրենց գործառնություններն իրականացնելիս արտաքին հարաբերությունների մարմինների գործողությունները կարգավորվում են ներպետական իրավունքի նորմերով: Այդուհանդերձ, արտաքին հարաբերություններին վերաբերող ներպետական այս բոլոր օրենքներն ու կանոնները պետք է համապատասխանեն ինչպես միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին և սկզբունքներին, այնպես էլ արտաքին հարաբերություններին վերաբերող կոնկրետ միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորություններին:

Այսպիսով, չնայած արտաքին հարաբերությունների համար ներպետական իրավունքի նորմերի մեծ նշանակությանը, դրանք չեն կարող լինել միջազգային դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի աղբյուր, քանի որ պետության դիվանագիտական ամբողջ գործունեության իրավական հիմքը միջազգային իրավունքն է:

§ 23. Արտաքին հարաբերությունների մարմինները

Արտաքին հարաբերություններում պետությունը հանդես է գալիս որպես ամբողջական կազմավորում, միասնական սոցիալական օրգանիզմ, որն իր ինքնիշխանության ուժով օժտված է միջազգային իրավասուբյեկտությամբ, և որը, ինչպես և ինքնիշխանությունը, չի կարող տրոհվել առանձին մասերի՝ միջազգային ասպարեզում պետության մարմինների իրավասուբյեկտության տեսքով:

Արտաքին հարաբերությունների մարմինները հանդես են գալիս որպես միջազգային հարաբերություններում պետության ներկայացուցիչներ: Նրանց իրավասության շրջանակներում ձեռնարկվող բոլոր գործողությունները դիտվում են որպես ներկայացվող պետության գործողություններ և նրա վրա պատասխանատվություն են դնում ըստ միջազգային իրավունքի:

Արտաքին հարաբերությունների պետական մարմինները երկրի տարածքում և նրա սահմաններից դուրս գործող մարմիններն են, որոնք ներկայացնում են պետությունը՝ պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների հետ պաշտոնական հարաբերություններում և ապահովում են նրա արտաքին քաղաքական նպատակների իրագործումը միջազգային իրավունքով նախատեսված խաղաղ միջոցներով, տվյալ պետության, ինչպես նաև արտասահմանում գտնվող նրա կազմակերպությունների և քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Ցանկացած պետության արտաքին հարաբերությունների մարմինները բաժանվում են երկու մեծ խմբի՝ *ներպետական* և *արտասահմանյան*: Իրենց հերթին, այդ խմբերից յուրաքանչյուրի կազմում տարբերակվում են արտաքին հարաբերությունների մարմինների մի քանի տեսակներ: Դասակարգման հիմք են ընդունվում տարբեր չափանիշներ:

Այսպես, արտաքին հարաբերությունների ներպետական մարմինները, կախված դրանց կազմավորման եղանակից և լիազորությունների բնույթից, լինում են *սահմանադրական* և *մասնագիտացված*: Առաջինների գոյությունն ուղղակիորեն նախատեսվում է պետության սահմանադրությամբ, որը որոշում է նրանց լիազորությունների ծա-

վալը: Մասնագիտացված մարմինների ստեղծումը նույնպես ձևակերպվում է ներքին իրավունքի ակտերով, սակայն դա որոշ չափով պայմանավորված է համապատասխան միջազգային պայմանագրերի գոյությամբ, որոնց միջոցով պետությունը իրականացնում է իր ներկայացուցչությունն արտաքին հարաբերությունների որևէ հատուկ բնագավառում:

Արտաքին հարաբերությունների մարմինների ամենատարածված դասակարգումը ենթադրում է, ինչպես արդեն նշվեց, նրանց բաժանում ներպետական (այսինքն՝ պետության տարածքում գտնվող և գործող) և արտասահմանյան (արտերկրում գտնվող և գործող) պետության արտաքին հարաբերությունների մարմինների:

Իրենց հերթին արտաքին հարաբերությունների ներպետական մարմինները կարելի է բաժանել երկու խմբի. *բոլոր հարցերով* պետության ներկայացուցչությունն իրականացնող մարմիններ և արտաքին հարաբերությունների *առանձին ոլորտում* պետությունը ներկայացնող մարմիններ:

Առաջին խմբին են պատկանում պետության գլուխը, կառավարության ղեկավարը, արտաքին գործերի նախարարը: Միջազգային իրավունքում նրանք համարվում են պետությունը բոլոր հարցերով «ex officio» (ի պաշտոնե), այն է՝ առանց հատուկ լիազորեցումների, ներկայացնողներ: Ինչ վերաբերում է առանձին ոլորտում պետության ներկայացուցչություն իրականացնող արտաքին հարաբերությունների ներպետական մարմիններին, ապա դրանք հիմնականում առանձին գերատեսչություններ են և մասնագիտացված մարմիններ:

Պետք է տարբերել արտաքին հարաբերությունների մարմինները և արտաքին քաղաքականության հարցերով որոշումների ընդունմանը մասնակացող մարմինները:

Այդ առումով առանձնահատուկ տեղ են զբաղեցնում պետությունների խորհրդարանները: Դրանք, սովորաբար, կարևոր դեր են խաղում պետության արտաքին քաղաքականության հարցերում, սակայն հանդես չեն գալիս որպես միջազգային հարաբերություններում պետության ներկայացուցիչներ, չեն կարող պետության անունից միջազգային պայմանագրեր կնքել: Խորհրդարանի ներկայացուցիչների հայտարարությունները պարտավորություններ չեն դնում պետության վրա: Նման մոտեցումը պայմանավորված է նրանով, որ արտա-

քին քաղաքականության իրագործումը գործադիր իշխանության գործառնություն է, և օրենսդիր մարմինն այստեղ չի կարող անմիջական դերակատարություն ունենալ:

Արտաքին հարաբերությունների ոլորտում *խորհրդարանների* ավանդական լիազորություններն են պատերազմի և խաղաղության, տարածքային փոփոխությունների հարցերի լուծումը, միջազգային պայմանագրերի վավերացումը, արտաքին-քաղաքական միջոցառումների ծախսերի սահմանումը, ինչպես նաև միջխորհրդարանական կապերի և համագործակցության իրականացումը:

Պետության գլուխն իրականացնում է պետության բարձրագույն ներկայացուցչությունը արտաքին հարաբերություններում: Պետության գլխի և խորհրդարանի միջև բաժանված իրավասությունը ներառում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են պատերազմ հայտարարելը, միջազգային պայմանագրերի վավերացումը և այլն: Մի շարք լիազորություններ պետության գլխի բացառիկ իրավասությունն են արտաքին հարաբերությունների ոլորտում: Սովորաբար հենց այս մարմինն է պաշտոնապես նշանակում և պաշտոնից ազատում այլ երկրներում տվյալ պետության դեսպաններին և դեսպանորդներին, ընդունում է օտարերկրյա պետությունների դեսպանների և դեսպանորդների հավատարմագրերը և հետևանքալից գրերը:

Կառավարության գլուխը և *կառավարությունն* ընդհանրապես արտաքին հարաբերությունների մարմիններ են, որոնք կատարում են արտաքին-քաղաքական կուրսի գործնական իրականացման գործառնությունները: Հենց կառավարությունն է նախանշում արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները և համապատասխան առաջարկություններ ներկայացնում խորհրդարանի և պետության գլխի քննարկմանը և հաստատմանը, կազմակերպում ընդունված արտաքին քաղաքական որոշումների կատարումը և վերահսկողությունը:

Անհրաժեշտ է շեշտել, որ արտաքին հարաբերությունների ոլորտում պետության գլխի և կառավարության լիազորությունների բաժանման համար էական ազդեցություն ունի տվյալ պետության սահմանադրությամբ նախատեսված կառավարման ձևը: Սովորաբար խորհրդարանական կառավարման ձևը ենթադրում է, որ արտաքին քաղաքական լիազորությունների հիմնական մասը տնօրինում է կա-

ռավարությունը, իսկ պետության գլխի լիազորություններն այստեղ ավելի շուտ ձևական, արարողակարգային բնույթ ունեն։ Այլ է վիճակը նախագահական կառավարման ձևի պայմաններում, երբ պետության գլուխը գործադիր իշխանության ղեկավարն է։ Այս երկու տարբերակների բաղադրյալների յուրատեսակ համադրությունն առկա է կիսանախագահական հանրապետություններում, որոնց թվին է դասվում նաև *Հայաստանի Հանրապետությունը*։ Հանրապետության նախագահը որոշում է արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները և, համագործակցելով գործադիր իշխանության հետ, միջոցներ է ձեռնարկում դրա իրագործման համար։

Արտաքին գործերի գերատեսչությունը (նախարարությունը) պետության արտաքին հարաբերությունների անմիջական օպերատիվ ղեկավարության մարմինն է։ Արտաքին հարաբերությունների ոլորտում ամենօրյա օպերատիվ գործունեությունն իրականացվում է պետության դիվանագիտական ծառայության՝ նրա կենտրոնական ապարատի և արտասահմանյան հիմնարկների միջոցով, որոնք գտնվում են արտաքին գործերի գերատեսչության կազմում։

Արտաքին գործերի գերատեսչությունների ավանդական գործառույթներ են արտաքին հարաբերություններում պետության իրավունքների և շահերի ներկայացուցչությունը և անմիջական պաշտպանությունը, հաստատված դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունների պահպանումը, միջազգային կազմակերպություններին պետության անդամությունից և միջազգային կոնֆերանսների աշխատանքին մասնակցությունից բխող կապերի և հարաբերությունների իրականացումը, արտաքին քաղաքական քայլերի ծրագրման ու մշակման տեղեկատվական և վերլուծական ապահովումը, այլ պետությունների դիվանագիտական, հյուպատոսական, պաշտոնական այլ ներկայացուցչությունների հետ կապեր պահպանելն ու բանակցություններ վարելը, նրանց գործունեության դիտարկումը, արտասահմանյան ներկայացուցչություններից ստացվող տեղեկատվության մշակումը, նրանց ղեկավար ցուցումներ տալը, միջազգային պայմանագրերի նախապատրաստման և կնքման հետ կապված բանակցություններ վարելը և այլն։

Շատ դեպքերում պետության այլ նախարարություններն ու գերատեսչությունները նույնպես իրենց իրավասության սահմաններում

մասնակցում են արտաքին հարաբերություններին։ Դրանք կապեր են պահպանում օտարերկրյա պետությունների համապատասխան գերատեսչությունների հետ, իրենց իրավասության սահմաններում կարող են նրանց հետ կնքել պայմանագրեր, որոնք պարտավորություններ են առաջացնում պետության համար։ Որոշ նախարարություններ և գերատեսչություններ իրականացնում են կապը որոշ միջազգային կազմակերպությունների կամ նրանց մարմինների հետ։

Պետությունների արտաքին հարաբերությունների արտասահմանյան մարմինները բաժանվում են երկու խմբի՝ *մշտականների* և *ժամանակավորների*։ Առաջին խմբին են դասվում պետությունների՝ այլ երկրներում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունները (դեսպանություններ և առաքելություններ), որոնց հետ պահպանվում են դիվանագիտական հարաբերություններ, ինչպես նաև հյուպատոսական հիմնարկները, միջազգային կազմակերպություններում մշտական ներկայացուցչությունները և մշտական դիտորդների առաքելությունները։ Այս նույն խմբի մեջ են մտնում նաև առևտրային ներկայացուցչությունները։

Արտաքին հարաբերությունների ժամանակավոր արտասահմանյան մարմինների թվին են դասվում տարբեր հատուկ առաքելությունները, միջազգային կոնֆերանսներում պատվիրակությունները և դիտորդների խմբերը, միջազգային կազմակերպությունների և դրանց մարմինների նստաշրջաններին մասնակցելու համար կազմավորված պատվիրակությունները և այլն։

§ 24. Դիվանագիտական ներկայացուցչությունները

Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը և դիվանագիտական ներկայացուցչությունների հիմնադրումը։ Դիվանագիտական հարաբերությունները միջպետական հարաբերությունների համակարգի անկյունաքարն են։ Այդպիսի հարաբերություններ հաստատելու համար անհրաժեշտ են համապատասխան իրավաքաղաքական պայմաններ։ Դրանցից կարևորագույններն են «դե-յուրե» ճանաչումը և դիվանագիտական հարաբերությունների հաստատման փոխադարձ համաձայնությունը։

«Դե-յուրե» ճանաչումը հանդես է գալիս կամ որպես դիվանագիտական հարաբերությունների հաստատման անհրաժեշտ պայման (թերևս դա է պատճառը, որ ճանաչման այս ձևը գրականության մեջ ունի նաև երկրորդ անվանումը՝ «դիվանագիտական ճանաչում»), կամ որպես այդպիսի հարաբերությունների հաստատման փաստի անխուսափելի հետևանք, եթե նախկինում ճանաչում տեղի չէր ունեցել («լռելյայն ճանաչում»):

Ճանաչումը չի հանգեցնում դիվանագիտական հարաբերությունների հաստատման, այլ միայն հնարավորություն է ստեղծում դրանց հաստատման համար: Այդ իսկ պատճառով ճանաչումից մինչև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը կարող է անցնել զգալի ժամանակահատված:

Դիվանագիտական հարաբերությունների հաստատման կամ վերականգնման վերաբերյալ պետությունների պայմանավորվածությունը ոչ միշտ է անմիջականորեն հանգեցնում դիվանագիտական ներկայացուցչությունների փաստացի հիմնման: Այս դեպքում ևս կարող է անցնել զգալի ժամանակ:

Ներկայում գործնականում տարբերում են դիվանագիտական և դրանց հավասարեցված ներկայացուցչությունների հետևյալ տեսակները՝

- *դեսպանություններ՝* առաջին՝ բարձրագույն դասի ներկայացուցչություններ (դրանց հավասարեցված են Վատիկանի ներկայացուցչությունները՝ նույնիսկ ատուրաները)։
- *առաքելություններ՝* երկրորդ դասի ներկայացուցչություններ։
- *միջազգային կազմակերպություններին առընթեր մշտական ներկայացուցչություններ:*

Դիվանագիտական առաքելության սկիզբը և ավարտը: Այստեղ «առաքելություն» եզրույթը նշանակում է դիվանագիտական հանձնարարություն, որևէ անձի դիվանագիտական ծառայությունը որոշակի դիվանագիտական պաշտոնում: Ներկայացուցչության ղեկավարի (դեսպանի, դեսպանորդի, գործերի հավատարմատարի) համար գոյություն ունի ազգային և միջազգային իրավունքով հստակ որոշված պաշտոնի անցնելու կարգ, որը կոչվում է *հավատարմագրում*:

Այս գործընթացը բաղկացած է մի քանի փուլից՝ դեսպանի թեկնածության ընտրությունը, ագրեմանի հայցումը, նշանակումը ձևակեր-

պող ներքին իրավունքի ակտի ընդունումը, հավատարմագրերի հանձնումը, դեսպանընկալ երկիր ժամանելիս՝ այդ երկրի արտաքին գործերի նախարարի մոտ նախնական ընդունելությունը և հավատարմագրերի պատճենները նրան փոխանցելը, պաշտոնական արարողության ժամանակ հավատարմագրերի հանձնումը դեսպանընկալ պետության ղեկավարին, որպես հավատարմագրման գործընթացի ավարտ և տվյալ ներկայացուցչի դիվանագիտական առաքելության սկիզբ՝ դեսպանի կամ դեսպանորդի պաշտոնում նրա «անձնական առաքելության» սկիզբ և, վերջապես, հավատարմագրերը հանձնելու մասին պաշտոնական հաղորդագրությունը մամուլում:

Դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի՝ պաշտոնի անցնելու համար միջազգային իրավունքում ներկայացվում են մի շարք պահանջներ: Դրանցից է, մասնավորապես, շահագրգիռ կողմից՝ դեսպանընկալ պետությունից *ագրեմանի*, այսինքն՝ տվյալ անձին դեսպան, դեսպանորդ կամ գործերի մշտական հավատարմատար նշանակելու համաձայնության հայցումը: Հավատարմագրող պետությունը պետք է հավաստվի, որ դեսպանընկալ պետությունը ագրեման է տվել այն անձի համար, որին ենթադրվում է հավատարմագրել որպես այդ պետությունում դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար: Ընդ որում, դեսպանընկալ պետությունը պարտավոր չէ հավատարմագրող պետությանը հայտնել ագրեման չտալու շարժառիթները:

Ագրեմանի ստացումից և, հավատարմագրող պետության սահմանադրական ընթացակարգին համապատասխան, նշանակման իրավաբանական ձևակերպումից հետո ծառայության վայր մեկնող դեսպանը կամ դեսպանորդը ստանում է հատուկ փաստաթուղթ՝ իր պետության գլխի կողմից ստորագրված և արտաքին գործերի նախարարի կողմից մակագրված *հավատարմագիր*:

Հավատարմագրի հանձնումը կարևոր իրավաբանական հետևանքներ է առաջացնում: Սովորաբար այդ պահից է սկսվում տվյալ դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի դիվանագիտական առաքելությունը: Այդուհետ նա համարվում է իր պարտականությունների կատարմանն անցած:

Դիվանագիտական գործակալի առաքելության ավարտը նույնպես կապված է որոշակի հանգամանքների հետ: 1961 թ. Վիեննայի կոնվենցիայի 43-րդ հոդվածի համաձայն, դա կարող է տեղի ունենալ՝

• հավատարմագրող պետության կամ դիվանագիտական գործակալի նախաձեռնությամբ,

• դեսպանընկալ պետության նախաձեռնությամբ՝ տվյալ դիվանագիտական գործակալին ներկայացուցչության աշխատակից ճանաչելուց հրաժարվելու դեպքում՝ նրան «persona non grata» (ներկայացուցչության դիվանագիտական անձնակազմի համար) կամ անընդունելի անձ (ներկայացուցչության մյուս աշխատակիցների համար) հայտարարելիս:

«Persona non grata» հայտարարելու պատճառները կարող են տարբեր լինել, սակայն, դրանք բոլորն էլ այս կամ այն կերպ կապված են դիվանագետի վարքագծի հետ: Դրանցից է. օրինակ, դեսպանընկալ երկրում գործող օրենքների և կանոնների անարգանքը, միջատությունը նրա ներքին գործերին, դեսպանընկալ երկրի համար քաղաքական տեսանկյունից վիրավորական արտահայտություններ կատարելը, հետախուզական գործունեությամբ զբաղվելը և այլն: Այս ամենը, սովորաբար որակվում է որպես «դիվանագիտական գործակալի կարգավիճակի հետ անհամատեղելի գործունեություն»:

Միջազգային իրավունքը նախատեսում է ընդհանրապես դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեության դադարեցման հետևյալ դեպքերը՝

- երբ տվյալ պետությունների դիվանագիտական հարաբերությունները խզված են կամ ժամանակավոր կասեցված,
- երբ նրանց միջև ծագել է պատերազմական իրավիճակ,
- երբ հավատարմագրող կամ դեսպանընկալ պետությունում տեղի է ունենում ոչ սահմանադրական իշխանափոխություն և դրան չի հաջորդել նոր իշխանության հետ դիվանագիտական հարաբերությունները պահպանելու պատրաստակամության հաստատումը,
- երբ դիվանագիտական հարաբերություններ պահպանող պետություններից մեկը դադարեցնում է իր գոյությունը և, միանալով այլ պետության հետ, կազմավորում միջազգային իրավունքի նոր սուբյեկտ:

Դիվանագիտական ներկայացուցչությունների կառուցվածքն ու անհնակազմը: Պետության դիվանագիտական ներկայացուցիչը դեսպանընկալ պետությունում դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարն է: Միջազգային իրավունքի համաձայն, դիվանագիտա-

կան ներկայացուցիչը դեսպանընկալ պետությունում իր պետությունը բոլոր հարցերով ներկայացնող միակ անձն է: Նա նաև բարձրագույն ներկայացուցիչն է դեսպանընկալ պետությունում, տվյալ պետության մշտական հնարավոր մյուս ներկայացուցիչների համեմատ:

Որպես կանոն, դիվանագիտական ներկայացուցչի դասը համընկնում է աստիճանին: Սակայն եթե դիվանագիտական ներկայացուցչի դասի հարցը որոշվում է միջազգային իրավունքով (1961 թ. Վիեննայի կոնվենցիայի հ. 14), ապա աստիճանի հարցը կարգավորվում է յուրաքանչյուր պետության ներքին օրենքով:

Մեկ պետությունում դիվանագիտական ներկայացուցիչը կարող է միաժամանակ լինել դիվանագիտական ներկայացուցիչ մեկ կամ մի քանի այլ պետություններում, եթե հավատարմագրման պետություններից ոչ մեկի կողմից չկան առարկություններ: Նման իրավիճակը կոչվում է *դիվանագիտական ներկայացուցչության համապրեղում*, ինչը ներկայում բավականաչափ տարածված է:

Ներկայացուցչության ղեկավարը կամ ներկայացուցչության դիվանագիտական անձնակազմի ցանկացած անդամ կարող է նշանակվել հավատարմագրող պետության ներկայացուցիչ ցանկացած միջազգային կազմակերպությունում:

Մշտական դիվանագիտական ներկայացուցչությունները ներառում են աշխատակիցների երեք կատեգորիա՝ դիվանագիտական, վարչատեխնիկական և սպասարկող անձնակազմ: Ժամանակակից դիվանագիտական իրավունքը հստակ սահմանում է այդ կատեգորիաներից յուրաքանչյուրի իրավական վիճակը, արտոնությունները և անձեռնմխելիությունները:

Դիվանագիտական անձնակազմի մեջ են մտնում դեսպանները, դեսպանորդները, խորհրդականները, առևտրային ներկայացուցիչները և նրանց տեղակալները, հատուկ կցորդները (ռազմական, տնտեսական, մշակութային և այլն), նրանց տեղակալները, առաջին, երկրորդ, երրորդ քարտուղարները, կցորդները: 1961 թ. Վիեննայի կոնվենցիայում նրանք անվանվում են «դիվանագիտական անձնակազմի անդամներ»:

Վարչատեխնիկական անձնակազմի մեջ մտնում են գրասենյակների վարիչները, հաշվապահները, քարգմանիչները, գործավարները,

մեքենագրուիները և ներկայացուցչության վարչական կամ տեխնիկական գործառույթներ իրականացնող այլ աշխատակիցները:

Սպասարկող անձնակազմին են պատկանում վարորդները, ցրիչները, դռնապանները, հավաքարարները և ներկայացուցչության սպասարկման գործառույթներ իրականացնող այլ անձինք:

Դիվանագիտական անձնակազմի անդամները, որպես կանոն, պետք է լինեն հավատարմագրող պետության քաղաքացիներ: Տեղի բնակիչները կամ երրորդ պետության քաղաքացիները կարող են դիվանագիտական պաշտոնի նշանակվել միայն դեսպանընկալ պետության համաձայնությամբ: Այդ սահմանափակումները չեն վերաբերվում ներկայացուցչության աշխատակիցների այլ կատեգորիաներին, ինչպես նաև տնային աշխատողներին:

Դիվանագիտական կորպուսը: *Դիվանագիտական կորպուսը* տվյալ պետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների համակցությունն է:

Սակայն երբեմն այդ եզրույթն օգտագործվում է լայն առումով, այս դեպքում դիվանագիտական կորպուսի տակ հասկացվում են տվյալ պետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների դիվանագիտական անձնակազմը, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները:

Սակայն ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ իմաստով դիվանագիտական կորպուսը կազմակերպություն չէ: Դիվանագիտական կորպուսը հանդես է գալիս միայն արարողակարգային հարցերով (օրինակ, ազգային տոների ժամանակ շնորհավորանքները):

Դիվանագիտական կորպուսի ավագն է համարվում ըստ իր դասի և համապատասխան երկրում հավատարմագրման ժամկետի ամենաավագ դիվանագիտական ներկայացուցիչը (*դուսյենը*), որն իրականացնում է արարողակարգային բնույթի գործառույթներ:

Դիվանագիտական ներկայացուցչության գործառույթները: Դիվանագիտական ներկայացուցչությունների գործառույթները որոշվում են միջազգային իրավունքով և պետությունների ազգային իրավունքով: Յուրաքանչյուր պետությունում առկա են տվյալ պետության դիվանագիտական ներկայացուցչությունների գործառույթները միջազգային իրավունքով թույլատրվող սահմաններում կանոնակարգող իրավանորմեր: Դիվանագիտական հարաբերությունների մասին

1961 թ. Վիեննայի կոնվենցիայի համաձայն, դիվանագիտական ներկայացուցչության հիմնական գործառույթներն են՝

- դեսպանընկալ պետությունում հավատարմագրող պետության ներկայացուցչությունը,

- դեսպանընկալ պետությունում հավատարմագրող պետության և նրա քաղաքացիների շահերի պաշտպանությունը,

- դեսպանընկալ պետության կառավարության հետ բանակցություններ վարելը,

- օրինական բոլոր միջոցներով դեսպանընկալ պետությունում իրադարձությունների մասին իր կառավարությանը տեղեկատվություն հաղորդելը,

- հավատարմագրող պետության և դեսպանընկալ պետության բարեկամական հարաբերությունների խթանումը և տնտեսության, մշակույթի, գիտության ոլորտում նրանց փոխհարաբերությունների զարգացումը:

Նշված գործառույթների հետ մեկտեղ այսօր դիվանագիտական ներկայացուցչությունները հաճախ կատարում են նաև հյուպատոսական գործառույթներ, ինչի համար նման դեպքերում դեսպանությունների և առաքելությունների կազմում ստեղծվում են հյուպատոսական բաժիններ:

Միջազգային կազմակերպություններին կից ներկայացուցչությունները և հայրուկ առաքելությունները: Դիվանագիտական մարմինների ինքնուրույն տեսակ են նաև միջազգային կազմակերպություններում մշտական ներկայացուցչությունները և մշտական դիտորդների առաքելությունները, միջազգային կոնֆերանսներում պատվիրակությունները և դիտորդների խմբերը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և նրանց մարմինների նստաշրջաններին մասնակցելու համար կազմավորված պատվիրակությունները:

Վերջիններիս կարգավիճակը կարգավորվում է «Ունիվերսալ կազմակերպությունների հետ իրենց հարաբերություններում պետությունների ներկայացուցչության մասին» Վիեննայի 1975թ. կոնվենցիայի նորմերով: Միջազգային կազմակերպություններում մշտական ներկայացուցչությունները, դիտորդների մշտական առաքելությունները մշտական դիվանագիտական մարմիններ են: Մշտական ներկայացուցչությունները ստեղծվում են միջազգային կազմակերպություններում:

պոթյունների անդամ պետությունների, իսկ դիտորդների մշտական առաքելությունները՝ ոչ անդամ պետությունների կողմից:

Միջազգային կազմակերպություններում մշտական ներկայացուցչությունները կատարում են հետևյալ գործառույթները.

- ապահովում են հավատարմագրող պետության ներկայացուցչությունը միջազգային կազմակերպությունում,
- պահպանում են կապը հավատարմագրող պետության և կազմակերպության միջև,
- բանակցություններ են վարում կազմակերպության հետ և նրա շրջանակներում,
- հավատարմագրող պետությանը տեղեկացնում են կազմակերպությունում իրականացվող գործունեության մասին,
- ապահովում են հավատարմագրող պետության մասնակցությունը կազմակերպության գործունեությանը,
- պաշտպանում են հավատարմագրող պետության շահերը կազմակերպության հետ փոխհարաբերություններում,
- աջակցում են կազմակերպության նպատակների և սկզբունքների իրականացմանը՝ համագործակցելով կազմակերպության հետ և նրա շրջանակներում:

Դիտորդների մշտական առաքելությունների գործառույթներն ավելի սահմանափակ են: Վերջիններս ապահովում են հավատարմագրող պետության ներկայացուցչությունը միջազգային կազմակերպությունում, տեղեկացնում են հավատարմագրող պետությանը միջազգային կազմակերպությունում իրականացվող գործունեության մասին և բանակցություններ են վարում կազմակերպության հետ:

Միջազգային կազմակերպություններում մշտական ներկայացուցչությունների և մշտական դիտորդների առաքելությունների հիմնական տարբերությունը այլ դիվանագիտական ներկայացուցչություններից այն է, որ նրանք հավատարմագրվում են ոչ թե դեսպանընկալ պետություններում, այլ միջազգային կազմակերպություններին կից, ինչը բացառում է նրանց նկատմամբ դիվանագիտական իրավունքի մի շարք նորմերի կիրառումը, մասնավորապես, ազրեմանի անհրաժեշտության, փոխադարձության սկզբունքի կիրառման, հավատարմագրերի և հետկանչի գրերի հանձման, «persona non grata» հայտա-

րարելու վերաբերյալ և այլ նորմերը: Մշտական ներկայացուցչություններ են ստեղծվում ՄԱԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԱՊՀ-ի և այլ միջազգային կազմակերպություններին կից: Մշտական ներկայացուցչություններին շնորհվում են դիվանագիտական արտոնություններ և անձեռնմխելիություններ:

Միջազգային կոնֆերանսներում պատվիրակությունները և դիտորդների խմբերը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և դրանց մարմինների նատաշրջաններին մասնակցելու համար կազմավորված պատվիրակությունները ժամանակավոր դիվանագիտական մարմիններ են, որոնց ստեղծման նպատակը համապատասխան կոնֆերանսների աշխատանքներում կամ միջազգային կազմակերպությունների և դրանց մարմինների նատաշրջաններում հավատարմագրող պետության անունից հանդես գալն է: Այդ պատվիրակությունները նույնպես օժտված են դիվանագիտական արտոնություններով և անձեռնմխելիություններով:

Ժամանակակից միջազգային իրավունքի կարևորագույն ինստիտուտ է հատուկ կամ «ad hoc» առաքելությունների ինստիտուտը: Տվյալ ինստիտուտի իրավական կարգավորման հարցերին է նվիրված, ինչպես արդեն իսկ մատնանշել ենք, 1969թ. Վիեննայի կոնվենցիան «Հատուկ առաքելությունների մասին»: Հարուկ առաքելությունները ժամանակավոր դիվանագիտական մարմիններ են, որոնք ուղարկվում են մեկ պետության կողմից մեկ այլ պետություն՝ վերջինիս համաձայնությամբ որոշակի հարցերի համատեղ քննարկման կամ նրա նկատմամբ որոշակի խնդիրներ իրականացնելու համար: Հատուկ առաքելություններ ստեղծվում են տարբեր նպատակներով (երկկողմ բանակցություններ, հանդիսավոր արարողություններ և այլն): Հատուկ առաքելությունների առանձնահատկությունն այն է, որ նրանց գործառույթները սահմանափակ են ժամանակի մեջ և ունեն նպատակային նշանակություն: Հատուկ առաքելություններն օգտվում են 1961թ. Վիեննայի «Դիվանագիտական հարաբերությունների մասին» կոնվենցիայով նախատեսված արտոնություններից և անձեռնմխելիություններից:

§ 25. Դիվանագիտական ներկայացուցչությունների անձեռնմխելիությունները և արտոնությունները

Միջազգային իրավունքի համաձայն՝ դիվանագիտական իրավունքի կենտրոնական ինստիտուտը պաշտպանությունից օգտվող անձանց, մասնավորապես՝ դիվանագիտական գործակալների արտոնություններն ու անձեռնմխելիությունները սահմանող նորմերի համալիրն է:

Դիվանագիտական *արտոնությունների* տակ հասկացվում են դիվանագիտական ներկայացուցչություններին և դրանց աշխատակիցներին տրամադրվող հատուկ իրավունքները և առավելությունները: *Անձեռնմխելիությունները* դեսպանընկալ պետության իրավասության և դրա կողմից կատարվող հարկադիր գործողությունների չտարածվելն է դիվանագիտական ներկայացուցչության և դրա աշխատակիցների նկատմամբ:

Տարածում են ստացել դիվանագիտական արտոնությունների և անձեռնմխելիությունների հիմքերի մասին երեք տեսություններ: Դրանցից առաջինը՝ *արտերկրայնության (էքստերիորիալության) տեսությունը*, հանգում էր նրան, որ դեսպանները թեև ֆիզիկապես գտնվում են այլ պետությունում, իրավաբանական իմաստով դիտվում էին որպես իրենց սուվերենի պետությունում և, հետևաբար, այն պետության տարածքից դուրս (extra territorium) գտնվող, որտեղ նրանք իրականացնում էին իրենց գործառույթները: Դրանից էլ հետևում էր այն, որ դեսպանները, ինչպես և նրանց սուվերենները, ոչ միայն ենթակա չեն պատասխանատվության դեսպանընկալ երկրի օրենքներով, այլև այդ օրենքները և կանոնները չեն կարող տարածվել նրանց վրա:

Թեև արտերկրայնության տեսությունը միշտ եղել է սոսկ իրավաբանական հնարանք (ֆիկցիա), սակայն այն նշանակալի հետք է թողել միջազգային իրավունքի տեսության մեջ և անգամ գործնականում: Բավականին տարածված է այն պատկերացումը, որ դեսպանատունը և հողամասը, որի վրա այն գտնվում է, հավատարմագրող պետության տարածքի մասն են, այն դեպքում, երբ իրականում դիվանագիտական ներկայացուցչությունը միայն օգտվում է այդ հողամասի նկատմամբ անձեռնմխելիությունից: Սակայն դեսպանատան

համար հատկացված հողամասի իրավական տիտղոսը դրանից չի փոխվում այն մնում է դեսպանընկալ պետության տարածքի մասը, և վերջինը կարող է անհրաժեշտության դեպքում պահանջել դեսպանության տեղափոխում այլ վայր՝ նոր հողամասի տրամադրմամբ և այլն:

Այս ոլորտում հայտնի երկրորդ տեսությունը *ներկայացուցչական տեսությունն* է: Դեռևս Հուգո Հրոցիուսը գրում էր, որ միջազգային իրավունքի համաձայն, դեսպանը ներկայացնում է իր միապետի անձը: Ներկայացուցչական տեսությունն արտացոլում էր պատմական այն դարաշրջանի իրողությունները, երբ դեսպանը ներկայացնում էր ոչ թե ամբողջ պետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտի, այլ միայն նրա գլխին՝ միապետին (բացարձակ միապետության ժամանակաշրջան): Հետագայում միջազգային իրավունքի տեսության մեջ զարգանում է այն կարծիքը, որ դեսպանները ներկայացնում են ամբողջ պետությունը:

Երրորդ՝ *գործառույթային անհրաժեշտության տեսության* հիմքերը դրվել են ֆրանսիական բուրժուական հեղափոխության գաղափարախոսների կողմից (Մոնտեսքյո, Ռուսո, ինչպես նաև՝ միջազգայնագետ-իրավաբան Է. դը Վաթել): Մեր օրերում այն տարածում է ստացել ներկայացուցչական ժամանակակից տեսության հետ մեկտեղ՝ Ինչպես երևում է անվանումից, այս տեսությունը ելնում է նրանից, որ դիվանագիտական արտոնությունների և անձեռնմխելիությունների հիմքը և ծավալը որոշվում են այն գործառույթներով, որոնք դրվում են դիվանագիտական ներկայացուցչությունների վրա:

Մեր համոզմամբ, ներկայացուցչական բնույթի և գործառույթային անհրաժեշտության տեսությունները միայն իրենց համակցությամբ կարող են համարվել տվյալ հարցով միջազգային իրավունքի դոկտրինալ հիմքը: Պատահական չէ, որ 1961 թ. Վիեննայի կոնվենցիայի պրեամբուլայում (նախաբանում) ասված է, որ դիվանագիտական արտոնություններն ու անձեռնմխելիությունները «տրամադրվում են ոչ թե առանձին անձանց շահի համար, այլ դիվանագիտական ներկայացուցչությունների՝ որպես պետությունները ներկայացնող մարմինների, գործառույթների բարեհաջող իրականացման համար»:

Դիվանագիտական ներկայացուցչության և դրա պաշտոնատար անձանց տարբերությունը անձեռնմխելիության հարցում դրսևորվում

է ժամանակակից միջազգային իրավունքին հայտնի բոլոր արտոնությունների և անձեռնմխելիությունների համապատասխանաբար երկու խմբի բաժանմամբ, այն է՝

1. ղիվանագիտական ներկայացուցչության՝ որպես պետության մարմնի, արտոնություններ և անձեռնմխելիություններ,

2. ներկայացուցչության աշխատակիցների արտոնություններ և անձեռնմխելիություններ (այսպես կոչված՝ «անձնական արտոնություններ և անձեռնմխելիություններ»):

Դիվանագիտական ներկայացուցչության արտոնությունները և անձեռնմխելիությունները: Ներկայացուցչության *տարածքների անձեռնմխելիությունը* նախ և առաջ նշանակում է, որ ղեկավարնկալ պետության իշխանությունները չեն կարող այդ տարածքներ մուտք գործել այլ կերպ, քան ներկայացուցչության ղեկավարի համաձայնությամբ: Դեսպանընկալ պետությունը հատուկ պարտականություն է կրում՝ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները ներկայացուցչության տարածքները ցանկացած ներխուժումից կամ վնաս հասցնելուց պաշտպանելու և ներկայացուցչության հանգստի խախտումը կամ նրա արժանապատվության վիրավորանքը կանխելու համար: Ընդ որում, ներկայացուցչության տարածքներն ընդգրկում են նաև տվյալ շենքը կամ դրա մասը սպասարկող հողամասը:

Ներկայացուցչության տարածքները, դրա կահավորանքի առարկաները, այդտեղ գտնվող այլ գույքը, ինչպես նաև ներկայացուցչության փոխադրամիջոցներն օգտվում են անձեռնմխելիությունից՝ խուզարկումից, առգրավումից, կալանքից և կատարողական գործողություններից:

Ներկայացուցչության ինչպես սեփական, այնպես էլ վարձակալված տարածքներն օգտվում են *ֆիսկալ անձեռնմխելիությունից*, այն է՝ ազատվում են պետական, տարածաշրջանային և տեղական բոլոր հարկերից, տուրքերից և այլ պարտադիր վճարներից, բացառությամբ այն վճարների, որոնք գանձվում են սպասարկման կոնկրետ տեսակների դիմաց:

Ներկայացուցչությունն օգտվում է *արհիվանների և փաստաթղթերի անձեռնմխելիությունից*, վերջիններս անձեռնմխելի են ցանկացած ժամանակ, անկախ դրանց գտնվելու վայրից:

Ներկայացուցչությունն օգտվում է նաև *հաղորդակցման ազատությունից*: Իր կառավարության, ինչպես նաև հավատարմագրող պետության այլ ներկայացուցչությունների և հյուպատոսությունների հետ հաղորդակցվելիս ներկայացուցչությունը կարող է օգտվել բոլոր հարմար միջոցներից, այդ թվում և՛ ղիվանագիտական սուրհանդակներին և ծածկագրված կամ գաղտնագրված ճեպագրերից: Ներկայացուցչության ղիվանագիտական ամբողջ թղթակցությունն անձեռնմխելի է:

Ներկայացուցչությունն ու նրա ղեկավարն իրավունք ունեն տեղադրել հավատարմագրող պետության *դրոշմ ու զինանշանը* ներկայացուցչության շինությունների (ներառյալ՝ ներկայացուցչության ղեկավարի բնակարանը), ինչպես նաև փոխադրամիջոցների վրա:

Անձնական արտոնությունները և անձեռնմխելիությունները: Դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի և ղիվանագիտական անձնակազմի անդամների *անձն անձեռնմխելի է*: Նրանք չեն կարող ձերբակալվել կամ կալանավորվել: Հավատարմագրման պետությունը պարտավոր է նրանց վերաբերվել պատշաճ հարգանքով և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ նրանց անձի, ազատության կամ արժանապատվության դեմ ոտնձգությունները կանխելու համար:

Հավատարմագրման երկրի իշխանությունները ոչ միայն իրենք պետք է ձեռնպահ մնան ղիվանագիտական ներկայացուցչության ղեկավարին և ղիվանագիտական անձնակազմի անդամներին վիրավորանք հասցնելուց կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելուց, այլև պարտավոր են պաշտպանել նրանց այլ անձանց կողմից բռնությունից կամ վիրավորանքից: Դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի և ղիվանագիտական անձնակազմի անդամների անձի անձեռնմխելիությունն ուժի մեջ է մտնում ղեկավարնկալ երկրի տարածք նրա մուտք գործելու պահից և գործում է մինչև այդ տարածքը լքելու պահը:

Դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի և ղիվանագիտական անձնակազմի անդամների *բնակարանը* (տունը, հյուրանոցային համարը և այլն) օգտվում են այն նույն անձեռնմխելիությունից, ինչ ներկայացուցչության տարածքը: Անձեռնմխելիությունից օգտվում են ղիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի և

եթե նրանք գործում են ծառայողական պարտականություններ կատարելիս:

1961 թ. Վիեննայի կոնվենցիայի համաձայն, սպասարկող անձնակազմի անդամներն օգտվում են անձեռնմխելիությունից, իրենց պարտականություններն իրականացնելիս իրենց գործողությունների նկատմամբ և ազատվում են իրենց եկամտից գանձվող հարկերից, տուրքերից և պարտադիր այլ վճարներից:

Արտոնությունների և անձեռնմխելիությունների տրամադրումը չի նշանակում, որ դրանցից օգտվող անձինք կարող են հաշվի չնստել հավատարմագրման երկրի օրենքների և կանոնների հետ, 1961 թ. Վիեննայի կոնվենցիայում հատուկ նշվում է, որ իրենց արտոնություններով և անձեռնմխելիություններով հանդերձ, դրանցից օգտվող բոլոր անձինք պարտավոր են հարգել դեսպանընկալ երկրի օրենքները և կանոնները: Նրանք պարտավոր են նաև չմիջամտել այդ պետության ներքին գործերին:

§ 26. Հյուպատոսական ներկայացուցչություններ

Հյուպատոսական ներկայացուցչությունների տեսակները և գործառնությունները: Ինչպես արդեն նշել ենք, միջազգային հարաբերություններում պետությունների միջև պաշտոնական քաղաքական բնույթի հարաբերությունների իրականացումը կարգավորվում է դիվանագիտական իրավունքով: Սակայն առկա են նաև բուռն զարգացում ապրող բազմաբնույթ միջազգային կապեր (տնտեսական, առևտրային, գիտական, մշակութային, տուրիստական, սպորտային և այլն), որոնք պետական աջակցության կարիքն ունեն: Այդ առաքելությունն իրականացնում է պետության հյուպատոսական ծառայությունը, որն արտերկրում գտնվող իր մարմինների՝ հյուպատոսությունների միջոցով կոչված է աջակցել իր քաղաքացիներին և կազմակերպություններին, նպաստել նշված կապերի զարգացմանը և խորացմանը:

Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, որպես կանոն, զուգորդվում է հյուպատոսական հարաբերությունների հաստատմամբ: Այն պետություններում, որոնց հետ հյուպատոսական հարաբերություններ չեն հաստատվել, հյուպատոսական հիմնարկ-

ների գործառնությունները կարող են իրականացնել դիվանագիտական ներկայացուցչությունները: Միևնույն ժամանակ, այն պետությունում, որտեղ չկան դիվանագիտական ներկայացուցչություններ, հյուպատոսական հիմնարկները կարող են իրականացնել որոշ դիվանագիտական գործառնություններ:

Հյուպատոսական հարաբերությունների կարգավորման գործում և, համապատասխանաբար, հյուպատոսական իրավունքում առանցքային դեր ունի 1963 թ. ընդունված *Հյուպատոսական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիան*: Մեծ է նաև հյուպատոսական հարաբերությունների վերաբերյալ պետությունների միջև կնքվող երկկողմանի համաձայնագրերի դերը, որոնք ավանդաբար անվանվում են *հյուպատոսական կոնվենցիաներ*:

Ներկայումս տարբերում են հյուպատոսական ներկայացուցչությունների չորս տեսակ՝ *գլխավոր հյուպատոսություն, հյուպատոսություն, փոխհյուպատոսություն և հյուպատոսական գործակալություն*: Դրանք ղեկավարում են համապատասխանաբար՝ գլխավոր հյուպատոսը, հյուպատոսը, փոխհյուպատոսը և հյուպատոսական գործակալը: Հյուպատոսական հիմնարկների թվին են պատկանում նաև դիվանագիտական ներկայացուցչությունների հյուպատոսական բաժինները:

Հյուպատոսական հիմնարկի գտնվելու վայրը և դրա դասը որոշվում է ընդունող պետության հետ համաձայնեցնելով: Հյուպատոսական ներկայացուցչությունը, ի տարբերություն դիվանագիտականի, կարող է գործել ընդունող երկրի ոչ ամբողջ տարածքում, այլ սահմանված *հյուպատոսական շրջանի* սահմաններում:

Պաշտոնի նշանակվելիս հյուպատոսը ստանում է գրավոր լիազորություն՝ *հյուպատոսական արտոնագիր*: Հյուպատոսն իր պարտականությունների կատարմանը անցնում է ընդունող պետության համաձայնությունը (*էկզեկվատորա*) ստանալուց հետո: Էկզեկվատորան ձևակերպվում է հյուպատոսական արտոնագրում կատարվող գրառման ձևով կամ առանձին փաստաթղթի տեսքով:

Որպես կանոն, հյուպատոսական հիմնարկները ենթակա են արտաքին գործերի գերատեսչությանը և գործում են դիվանագիտական ներկայացուցչության գլխի ղեկավարությամբ: Հյուպատոսական

պաշտոնատար անձինք ու հյուպատոսական հիմնարկների աշխատակիցները գտնվում են պետական ծառայության մեջ՝ արտաքին գործերի գերատեսչությունում: Հյուպատոսական հիմնարկների անձնակազմը նույնպես բաժանվում է երեք խմբի՝ *հյուպատոսական պաշտոնատար անձինք*, *վարչատեխնիկական անձնակազմ* և *սպասարկող անձնակազմ*:

Հյուպատոսական ներկայացուցչության գործառույթներն ավելի նեղ են, քան դեսպանություններինը և սովորաբար ներառում են՝

- արտասահմանում իր պետության, նրա քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և շահերի պաշտպանությունը,
- ընդունող պետության հետ հարաբերությունների զարգացմանը նպաստելը,
- հյուպատոսական շրջանում գտնվող՝ իր պետության քաղաքացիների հաշվառումը,
- կալանավորված, ձերբակալված, այլ ձևով ազատությունից զրկված կամ պատիժ կրող՝ իր պետության քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը,
- այցագրային և անձնագրային սպասարկումը,
- քաղաքացիական կացության ակտերի գրանցումը,
- նոտարական գործողությունների կատարումը, փաստաթղթերի լեգալացումը,
- աջակցությունն իր պետության նավերին և օդանավերին,
- օրենքով կամ ընդունող պետությունների հետ պայմանագրերով նախատեսված այլ գործառույթներ:

Հյուպատոսական արտոնությունները և անձեռնմխելիությունները: Դիվանագիտական իրավունքին համանման տարբերում են հյուպատոսական ներկայացուցչությունների և նրանց աշխատակիցների արտոնություններն ու անձեռնմխելիությունները:

Հյուպատոսական ներկայացուցչություններն ունեն հետևյալ արտոնություններն ու անձեռնմխելիությունները՝

- ներկայացուցչության տարածքների անձեռնմխելիություն, ոչ ոք չի կարող մուտք գործել ներկայացուցչության տարածք այլ կերպ քան հյուպատոսական կամ դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի համաձայնությամբ,

- հյուպատոսական ներկայացուցչությունը կարող է ազատ հաղորդակցվել իր կառավարության, դիվանագիտական ներկայացուցչության և այլ հյուպատոսական ներկայացուցչությունների հետ,

- հյուպատոսական ներկայացուցչության տարածքներն, այդտեղ առկա գույքը, ինչպես նաև ներկայացուցչության փոխադրամիջոցներն օգտվում են անձեռնմխելիությունից՝ խուզարկումից, առգրավումից, կալանքից և կատարողական գործողություններից,

- ներկայացուցչությունն ազատվում է պետական, տարածաշրջանային և տեղական հարկերից, տուրքերից և պարտադիր այլ վճարներից,

- հյուպատոսական ներկայացուցչության արխիվներն ու փաստաթղթերն անձեռնմխելի են ցանկացած ժամանակ և անկախ դրանց գտնվելու վայրից,

- ներկայացուցչության պաշտոնական թղթակցությունն անձեռնմխելի է ներկայացուցչության փոստային առաքումները ենթակա չեն բացման կամ ձերբակալման:

Դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցների համեմատ հյուպատոսական ներկայացուցչությունների աշխատակիցներն օգտվում են արտոնությունների և անձեռնմխելիությունների ավելի նեղ շրջանակից:

- ընդհանուր կանոնի համաձայն, հյուպատոսական պաշտոնատար անձինք օգտվում են անձնական անձեռնմխելիությունից և չեն կարող ձերբակալվել կամ կալանավորվել այլ կերպ, քան ծանր հանցագործություն կատարելու համար հետապնդման կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավաճռի կատարման դեպքերում,

- հյուպատոսական գործակալները չեն կարող հրաժարվել վկայի ցուցմունքներ տալուց, բացառությամբ իրենց կողմից ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված հարցերով ցուցմունքների,

- հյուպատոսական գործակալի անձնական նստավայրն օգտվում է այն նույն անձեռնմխելիությունից և պաշտպանությունից, ինչ ներկայացուցչության տարածքը,

- հյուպատոսական գործակալն օգտվում է անձեռնմխելիությունից՝ նստավայր պետության քաղաքացիական և վարչական իրավա-

սություններից, բացառությամբ ճանապարհատրանսպորտային պատահարներով պատճառված վնասների հատուցման մասին հայցերի:

Պետք է հաշվի առնել նաև այն, որ որոշ երկկողմ համաձայնագրերով հյուպատոսական արտոնությունները և անձեռնմխելիությունները հավասարեցվում են դիվանագիտականներին:

§ 27. Գիվանագիտական և հյուպատոսական ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական և հյուպատոսական ծառայության հարցերը մանրամասն կարգավորվում են համապատասխանաբար՝ «Գիվանագիտական ծառայության մասին»¹ և «Հյուպատոսական ծառայության մասին»² ՀՀ օրենքներով:

Գիվանագիտական ծառայությունը: ՀՀ-ում դիվանագիտական ծառայության մարմիններն են՝

- ՀՀ արտաքին գործերի նախարարությունը,
- ՀՀ արտաքին գործերի նախարարության ենթակայության ներքո գործող մարմինները և հիմնարկները,
- օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանությունները,
- միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունները,
- օտարերկրյա պետություններում ՀՀ հյուպատոսական հիմնարկները:

Ընդ որում, նշված մարմինների համակարգը գլխավորում է ՀՀ *արտաքին գործերի նախարարությունը*, որը ՀՀ արտաքին գործերը կառավարող, ինչպես նաև դիվանագիտական ծառայությունը կազմակերպող և ղեկավարող՝ գործադիր իշխանության հանրապետական մարմին է:

ՀՀ *դիվանագիտական ներկայացուցչությունը* ՀՀ արտաքին գործերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանում է, որը օտարերկրյա պետությունում հավատարմագրված ՀՀ դեսպանություն

¹ Ընդունված է ՀՀ Ազգային ժողովի կողմից 24.10.01 թ.:

² Ընդունված է ՀՀ Ազգային ժողովի կողմից 29.05.96 թ.:

է կամ միջազգային կազմակերպությունում հավատարմագրված ՀՀ մշտական ներկայացուցչություն:

Օտարերկրյա պետությունում ՀՀ դեսպանության խնդիրներն են՝

- ներկայացնել Հայաստանի Հանրապետությունը դեսպանընկալ պետությունում և ապահովել պաշտոնական հարաբերություններն այդ պետության հետ,
- խրախուսել և ամրապնդել ՀՀ և օտարերկրյա պետության միջև բարեկամական հարաբերությունները, նպաստել փոխշահավետ կապերի զարգացմանը,
- պաշտպանել ՀՀ, նրա քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը դեսպանընկալ պետությունում,
- պարզաբանել ՀՀ արտաքին և ներքին քաղաքականությունը,
- նպաստել օտարերկրյա պետության հետ կնքված միջազգային պայմանագրերի կատարմանը,
- բանակցություններ վարել օտարերկրյա պետության իշխանությունների և այդ պետությունում հավատարմագրված դեսպանությունների և միջազգային կազմակերպությունների հետ,
- իրականացնել հյուպատոսական գործողություններ,
- օրինական միջոցներով հավաքել, մշակել ու ՀՀ իշխանություններին տրամադրել տեղեկություններ օտարերկրյա պետությունում տեղի ունեցող իրադարձությունների, քաղաքական և տնտեսական իրավիճակի մասին,
- նպաստել ՀՀ և դեսպանընկալ պետության հայ համայնքի համակողմանի կապերի ամրապնդմանն ու զարգացմանը:

Համանման գործառույթներ են իրականացնում նաև միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունները:

Միջազգային հարաբերություններում որոշակի խնդիրներ լուծելու նպատակով ՀՀ Նախագահը կարող է նշանակել *հապուկ հանձնարարություններով դեսպան* կամ ստեղծել *հապուկ առաքելություններ*:

Գիվանագիտական ծառայության անցնելիս և ծառայության ընթացքում դիվանագետներին շնորհվում են *դիվանագիտական աստիճաններ*: Դրանք հատուկ դասային աստիճաններ են, որոնք լինում են բարձրագույն դիվանագիտական և դիվանագիտական: ՀՀ բարձրագույն դիվանագիտական աստիճաններն են՝

- ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան,
- ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար:
- ՀՀ դիվանագիտական աստիճաններն են՝
- առաջին դասի խորհրդական
- երկրորդ դասի խորհրդական,
- առաջին դասի առաջին քարտուղար,
- երկրորդ դասի առաջին քարտուղար,
- երկրորդ քարտուղար,
- երրորդ քարտուղար,
- կցորդ:

ՀՀ բարձրագույն դիվանագիտական աստիճանները շնորհում է ՀՀ Նախագահը, իսկ այլ դիվանագիտական աստիճանները՝ ՀՀ արտաքին գործերի նախարարը՝ արտաքին գործերի նախարարության մրցութային-ատեստավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Անձը համարվում է դիվանագետ, երբ նրան շնորհվում է առաջին դիվանագիտական աստիճանը, նա անցնում է համապատասխան պաշտոնի և տալիս է դիվանագետի երդում:

Դիվանագետին ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից տրվում է *դիվանագիտական անձնագիր*, որպես դիվանագետի անձը հաստատող փաստաթուղթ:

Հյուպատոսական ծառայությունը: ՀՀ հյուպատոսական հիմնարկը օտարերկրյա պետություններում ՀՀ արտաքին գործերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանում է, որն այդ պետությունում պաշտպանում է ՀՀ, նրա քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը, ինչպես նաև նպաստում է այդ պետության հետ բարեկամական հարաբերությունների զարգացմանը և բազմակողմանի կապերի ընդլայնմանը:

ՀՀ հյուպատոսական հիմնարկներն են *գլխավոր հյուպատոսությունը, հյուպատոսությունը, փոխհյուպատոսությունը, հյուպատոսական գործակալությունը*, ինչպես նաև *դիվանագիտական ներկայացուցչությունների հյուպատոսական բաժինները*:

Հյուպատոսական պաշտոնատար անձինք և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցները գտնվում են պետական ծառայության մեջ ՀՀ արտաքին գործերի նախարարությունում:

Հյուպատոսական հիմնարկի ղեկավար կարող է լինել միայն ՀՀ քաղաքացին: Հյուպատոսական հիմնարկի ղեկավարին նշանակում է ՀՀ արտաքին գործերի նախարարը: Նա համարվում է նշանակված արտաքին գործերի նախարարի ստորագրությամբ հյուպատոսական արտոնագիրն ստանալու պահից, որն այնուհետև ներկայացվում է նստավայր պետության կառավարությանը:

Հյուպատոսական հիմնարկը տվյալ օտարերկրյա պետությունում իր գործունեությունն իրականացնում է ՀՀ դեսպանության անմիջական քաղաքական ղեկավարությամբ:

Այն պետություններում, որտեղ Հայաստանի Հանրապետությունը չունի դիվանագիտական ներկայացուցիչներ, նստավայր պետության համաձայնությամբ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը կարող է կատարել նաև դիվանագիտական պարտականություններ:

ՀՀ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը կարող է հավատարմագրվել որևէ երրորդ պետությունում՝ Հայաստանի Հանրապետության և այդ պետության փոխադարձ համաձայնությամբ:

ՀՀ հյուպատոսությունների իրավասությանը պատկանող լիազորություններն են՝

- ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ապահովումը, պաշտպանությունն ու խախտված իրավունքների վերականգնումը, իր տարածաշրջանում գտնվող ՀՀ քաղաքացիների և անհրաժեշտության դեպքում նստավայր պետության օրենսդրությանն ու սովորույթներին ծանոթացնելը,

- հյուպատոսական տարածաշրջանում մշտապես բնակվող և ժամանակավորապես գտնվող ՀՀ քաղաքացիների հաշվառումը,

- ՀՀ-ում գրանցված օդանավերում և տրանսպորտային այլ միջոցներում տեղի ունեցած պատահարների հանգամանքների պարզումը և դրանց հետևանքով առաջացած հարցերի և վեճերի կարգավորումը,

- ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով իրեն փոխանցված՝ ՀՀ դատարանների, դատախազության, քննչական մարմինների՝ իր հյուպատոսական տարածաշրջանում գտնվող ՀՀ քաղաքացիներին վերաբերող հանձնարարությունների կատարումը,

- ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխաների որդեգրման ձևակերպումը, ՀՀ քաղաքացիների նկատմամբ համապատասխան դեպքե-

րում խնամակալության և հոգաբարձության սահմանման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը,

• ՀՀ քաղաքացու մահից հետո մնացած գույքի պահպանման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը, այդ գույքի ընդունումը՝ ՀՀ-ում գտնվող ժառանգներին փոխանցելու համար,

• ձեռքակալված, կալանավորված, ազատագրկյման դատապարտված կամ ազատությունը սահմանափակող այլ միջոցների ենթարկված ՀՀ քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը,

• ՀՀ քաղաքացիներին անձնագրեր տալը, դրանց վավերականության ժամկետները երկարաձգելը, դրանցում փոփոխություններ մտցնելը, ՀՀ մուտքի արտոնագիր տալը, դրանց ժամկետները երկարաձգելը, անվավեր համարելը և դրանցում փոփոխություններ մտցնելը,

• ՀՀ քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումներ ընդունելը,

• ՀՀ քաղաքացիների քաղաքացիական կացության ակտերի գրանցումը,

• նոտարական գործողությունների մի շարք տեսակների կատարումը (գործարքների վավերացում, ժառանգական գույքի պահպանում, ժառանգման վկայականների հանձնում, փաստաթղթերի պատճենների և քաղվածքների ճշտության վավերացում, փաստաթղթերում առկա ստորագրությունների իսկության վավերացում, փաստաթղթի քարզմանության ճշտության վավերացում և այլն),

• սանիտարական, ֆիտոսանիտարական և անասնաբուժական անվտանգության պահպանմանն ուղղված որոշակի գործողությունների իրականացումը,

• հյուպատոսական վավերացումը:

Հյուպատոսական վավերացումը փաստաթղթերում և ակտերում առկա ստորագրությունների իսկության, ինչպես նաև նստավայր պետության օրենքներին դրանց համապատասխանության պարզմանն ու հաստատմանն ուղղված հյուպատոսական գործողությունն է:

Հյուպատոսական գործողությունների համար կատարվում են հյուպատոսական գանձումներ պետական տուրքի ձևով:

ԳԼՈՒԽ 9. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 28. Միջազգային կազմակերպություններ և միջազգային կոնֆերանսներ

Միջազգային կազմակերպությունների հասկացությունը: XX դարում ստեղծվեց միջազգային իրավունքի սուբյեկտների նոր տեսակ՝ միջազգային կազմակերպությունները: Միջազգային կազմակերպությունները կարող են ունենալ տարբեր անվանումներ՝ հիմնադրամ, բանկ, միություն, կազմակերպություն, գործակալություն և այլն: Կազմակերպության անվանումը չի ազդում նրա կարգավիճակի վրա: Միջազգային կազմակերպությունների միջազգային իրավասուբյեկտության առանձնահատկությունները հասկանալու համար նախ և առաջ անհրաժեշտ է պարզել նրանց բնորոշ գծերը և տալ վերջիններիս հասկացությունը:

Միջազգային կազմակերպությունը կարելի է բնորոշել որպես միջպետական պայմանագրի կամ ընդհանուր իրավասության միջազգային կազմակերպության բանաձևի հիման վրա ստեղծված, գլխավոր և օժանդակ մարմինների համակարգ ունեցող, ինքնավար կամքով օժտված, ինքնիշխան պետությունների կամ միջազգային կազմակերպությունների միավորում, որը համագործակցության կոնկրետ ոլորտում պետությունների գործունեության համակարգման նպատակ է հետապնդում: Ինչպես բխում է վերը նշված բնորոշումից, միջազգային կազմակերպության հասկացությունն ունի հետևյալ վեց հատկանիշները (տարրերը)՝

1. ինքնիշխան պետությունների մասնակցությունը,
2. պայմանագրային հիմքը,
3. որոշակի նպատակների առկայությունը,
4. մշտապես գործող մարմինների համակարգը,
5. միջազգային իրավասուբյեկտության հատկանիշով օժտված լինելը,
6. միջազգային իրավունքին համապատասխան հիմնադրված լինելը:

Առաջին հատկանիշը դրսևորվում է նրանում, որ միջկառավարական կազմակերպությունների անդամներն են *ինքնիշխան պետությունները*:

Պայմանագրային հիմքն այն է, որ միջազգային կազմակերպության հիմնադիր փաստաթուղթը (կանոնադրությունը) բազմակողմ միջազգային պայմանագիրն է: Կանոնադրությունը յուրահատուկ միջազգային պայմանագիր է, քանի որ այն ոչ միայն սահմանում է կողմերի (պետությունների) իրավունքներն ու պարտականությունները, ինչպես ցանկացած միջազգային պայմանագիր, այլև ստեղծում է միջազգային կազմակերպություն՝ որոշելով դրա իրավասությունը, կառուցվածքը, դրա անդամների, անձնակազմի իրավական կարգավիճակը և այլն:

Սակայն մի ազգային պրակտիկայում եղել են դեպքեր, երբ միջազգային կազմակերպությունը ստեղծվել էր արդեն գոյություն ունեցող միջազգային կազմակերպության բանաձևի հիման վրա, որպես դրա օժանդակ մարմին (Առևտրի և զարգացման ՄԱԿ-ի կոնֆերանսը՝ ՅՈՒՆԿԵՍՏԱԴ/UNCTAD (1964 թ.), Միավորված ազգերի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը՝ ՅՈՒՆԻԴՕ/UNIDO (1965 թ.)):

Որոշակի նպատակների առկայությունը միջազգային կազմակերպության հասկացության կարևոր հատկանիշն է, քանի որ կազմակերպության նպատակները կանխորոշում են դրա իրավաչափությունը, իրավասությունը և ներկազմակերպական կառուցակարգի բնույթը:

Միջազգային կազմակերպությունները բնորոշվում են նաև *մշտապես գործող մարմինների համակարգով*, որն անվանվում է նաև ներկազմակերպական կառուցակարգ:

Միջազգային իրավասությունների հարկանիշով օժտված լինելը դրսևորվում է կազմակերպությունների միջազգային իրավունքներում և պարտականություններում, ինչպես նաև սեփական գործողություններով այդպիսիք ձեռք բերելու նրանց ունակության մեջ:

Միջազգային իրավունքին համապատասխան հիմնադրված լինելու հատկանիշի տակ հասկացվում է միջազգային կազմակերպության իրավաչափ բնույթը, նրա կանոնադրության և գործունեության՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին և սկզբունքներին,

նախ և առաջ «jus cogens» սկզբունքներին համապատասխանելու անհրաժեշտությունը:

Միջազգային կազմակերպությունների դասակարգումը: Միջազգային կազմակերպությունների դասակարգումը կարող է իրականացվել տարբեր հիմքերով, սակայն առավել տարածում է գտել նրանց տարանջատումը համընդհանուր, ունիվերսալ և տարածաշրջանային կազմակերպությունների վրա:

Միջազգային ունիվերսալ կազմակերպություններ են այն կազմակերպությունները, որոնց գործունեության առարկան և նպատակները հետաքրքրություն են ներկայացնում աշխարհի բոլոր պետությունների համար (օրինակ՝ ՄԱԿ-ը):

Տարածաշրջանային բնույթի միջազգային կազմակերպություններ կարող են ստեղծվել մեկ աշխարհագրական շրջանում գտնվող պետությունների կողմից՝ ցանկացած հարցերով: Սակայն սրանց մեջ հատուկ նշանակություն ունեն տարածաշրջանային այն կազմակերպությունները, որոնց նպատակը միջազգային խաղաղության և անվտանգության ապահովումն է, և որոնց ստեղծումը նախատեսված է ՄԱԿ-ի Կանոնադրության VIII գլխով:

Միջազգային ոչ կառավարական կազմակերպություն է համարվում միջկառավարական համաձայնագրի հիման վրա չհիմնադրված ցանկացած միջազգային կազմակերպություն: Միջազգային ոչ կառավարական կազմակերպություններն էականորեն տարբերվում են միջպետական կազմակերպություններից: Միջազգային իրավունքի սուբյեկտներ չլինելով՝ դրանք կարող են լինել միայն որոշ միջազգային իրավահարաբերությունների մասնակիցներ: Որպես հասարակական կարծիք արտահայտողներ, միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները որոշակի ազդեցություն են ունենում պետությունների և միջպետական կազմակերպությունների քաղաքականության վրա: Այսպես, ՄԱԿ-ի համակարգի միջազգային կազմակերպությունները համագործակցում են միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների հետ: Այդ համագործակցությունը կարգավորվում է «Ոչ կառավարական կազմակերպությունների հետ խորհրդակցությունների միջոցառումներ» վերտառությամբ 1968 թ. հատուկ ակտով, որը սահմանում է խորհրդակցական կարգավիճակի երկու տարատեսակ՝ ընդհանուր և հատուկ:

Միջազգային կազմակերպությունները կարելի է դասակարգել նաև այլ հիմունքներով՝

• ըստ կազմակերպության գործունեության առարկայի (քաղաքական, ռազմական, տնտեսական, առևտրային, վարկային, արժույթային, ֆինանսական, ծովային, ավիացիոն, մշակութային և այլ ոլորտի միջազգային կազմակերպություններ),

• ըստ կազմակերպության անդամների շրջանակի (սահմանափակ և ոչ անդամների սահմանափակ կազմ ունեցող միջազգային կազմակերպություններ),

• ըստ կազմակերպության իրավասության (կոմպետենցիայի) բնույթի (ընդհանուր և հատուկ իրավասության միջազգային կազմակերպություններ):

Միջազգային կոնֆերանսները: Միջազգային կոնֆերանսը երկու կամ ավելի պետությունների պաշտոնական ներկայացուցիչների ժողով է, այդ պետությունների շահերին առնչվող այս կամ այն հարցերի քննարկման համար: Միջազգային կոնֆերանսները միջազգային կազմակերպություններ և միջազգային իրավունքի սուբյեկտներ չեն: Ցանկացած միջազգային կոնֆերանս ունի հստակ որոշված խնդիրներ և նպատակներ, որոնք պետք է համապատասխանեն միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին:

Մշտական հիմունքներով գործող միջազգային կազմակերպությունների համեմատությամբ միջազգային կոնֆերանսները պետությունների ժամանակավոր հավաքական մարմիններ են:

Տարբերում են միջազգային կոնֆերանսների երկու տեսակ՝ միջազգային կազմակերպությունների կողմից գումարվող միջազգային կոնֆերանսներ և միջազգային կազմակերպությունների շրջանակներից դուրս՝ պետությունների կողմից գումարվող կոնֆերանսներ: Կոնֆերանսները գործում են իրենց իսկ կազմած և ընդունած ընթացակարգի կանոնների հիման վրա: Մակավաթիվ պետությունների մասնակցության դեպքում ընթացակարգի կանոնները բավականին պարզ են, իսկ լայն շրջանակով կոնֆերանսները ընդունում են բավականին մանրակրկիտ կանոններ: Մասնակիցների փոքրաքանակ կազմով կոնֆերանսները սահմանափակվում են նախագահողի ընտրությամբ և քարտուղարության ստեղծմամբ, մինչդեռ մասնակիցների լայն շրջանակ ունեցողները բավականին բարդ կազմակերպա-

կան կառուցվածք ունեն՝ նախագահող, կոմիտեներ, ենթակոմիտեներ, աշխատանքային խմբեր, քարտուղարություն և այլն: Կոնֆերանսները սովորաբար ավարտվում են Եզրափակիչ ակտի ընդունմամբ, որը պարունակում է նրանց աշխատանքների արդյունքները և ընդունած որոշումների տեքստերը:

§ 29. Միջազգային կազմակերպությունների գործունեության կազմակերպական-իրավական կառուցակարգը

Միջազգային կազմակերպությունների կազմակերպական կառուցվածքը: Միջազգային կազմակերպությունը սովորաբար բաղկացած է հետևյալ օղակներից՝

- բարձրագույն մարմին,
- գործադիր մարմին,
- վարչական մարմին,
- հատուկ հարցերով կոմիտեներ և հանձնաժողովներ:

Որոշ կազմակերպություններում նախատեսվում է իրավաբանական մարմինների ստեղծում:

Տարբեր կերպ անվանվող (վեհաժողով, ասամբլեա, լիագոր կոնֆերանս, գլխավոր կոնֆերանս և այլն) բարչրագույն (լիակազմ) մարմինների կազմում են կազմակերպության անդամ բոլոր պետությունները: Որպես կանոն, յուրաքանչյուր պետություն ունի մեկ ձայն, անկախ բնակչության քանակից և տնտեսական հզորությունից: Բարձրագույն մարմնի իրավասության մեջ է մտնում կազմակերպության գործունեության բոլոր կարևոր հարցերի քննարկումը, նոր անդամներ ընդունելը, գործադիր մարմինների անդամների, գլխավոր քարտուղարի ընտրությունը, կազմակերպության բյուջեի հաստատումը:

Գործադիր մարմինների խնդիրը օպերատիվ որոշումներ ընդունելն է: Ունիվերսալ կազմակերպություններում դրանք սահմանափակ կազմ ունեցող մարմիններ են: Որպես կանոն, անդամներ են պետությունները և միայն բացառիկ դեպքերում՝ նաև ազգային առևտրային կազմակերպությունները:

Գործադիր մարմինները ձևավորվում են հետևյալ չափանիշներով՝

- արդարացի աշխարհագրական ներկայացուցչություն,
- առանձնահատուկ շահեր,
- չհամընկնող շահերով պետությունների խմբերի հավասար ներկայացուցչություն,

• առավելագույն ֆինանսական ներդրում:

Վարչական մարմիններն են գլխավոր քարտուղարի (տնօրենի) գլխավորած քարտուղարությունները: Քարտուղարության անձնակազմը ստորաբաժանվում է երեք կատեգորիաների՝

1. բարձրագույն վարչական պաշտոնատար անձինք,
2. մասնագետների դաս,
3. սպասարկող անձնակազմ:

Գլխավոր քարտուղարն ընտրվում է կազմակերպության բարձրագույն մարմնի կողմից՝ վերընտրման հնարավորությամբ: Քարտուղարության մնացած անձնակազմը նշանակվում է գլխավոր քարտուղարի կողմից և իր գործառույթներն իրականացնում հատուցման դիմաց: Անձնակազմը պետք է հավաքագրվի արդարացի աշխարհագրական ներկայացուցչության լայն հիմքի վրա՝ որակավորման հաշվառմամբ:

Միջազգային կազմակերպությունների անձնակազմի անդամները պետության ներկայացուցիչներ չեն, նրանց պարտականություններն ունեն միջազգային բնույթ: Դա նշանակում է, որ անձնակազմը պատասխանատու է միայն միջազգային կազմակերպության առջև և իրավունք չունի կազմակերպության անդամ պետություններից հայցել կամ ստանալ որևէ ցուցում: Վերջիններն իրենց հերթին պետք է հարգեն անձնակազմի պարտականությունների միջազգային բնույթը:

Հարուկ հարցերով կոմիտեներն ու հանձնաժողովները կազմավորվում են տարբեր կերպ: Դրանց մի մասը նախատեսվում է կանոնադրությամբ, մյուսներն ստեղծվում են կազմակերպության գործունեության ընթացքում՝ որպես ժամանակավոր կամ մշտական օժանդակ մարմիններ: Մասնակիցների կազմը տարբերվում է թվով և բնույթով: Մի մասի անդամներն են պետությունները, մյուս մասինը՝ ֆիզիկական անձինք: Մի մասն ունեն անդամների սահմանափակ կազմ, մյուսներն ընդգրկում են կազմակերպության անդամ բոլոր պետությունները:

Առանձին միջազգային կազմակերպություններում *դալարական մարմինները* ևս կառուցվածքային օղակ են: Դրանց թվին են պատկանում ՄԱԿ-ի միջազգային դատարանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ՄԱԿ-ի վարչական տրիբունալները, Ամերիկյան պետությունների կազմակերպության դատարանը:

Միջազգային կազմակերպությունների իրավասությունը: Կազմակերպության գործունեությունն իրավաչափ է, եթե այն իրականացվում է իր իրավասությանը համապատասխան: Միջազգային կազմակերպության իրավասությունը դրսևորվում է նրա մարմինների իրավասությամբ:

Անհրաժեշտ է տարբերել իրավասության երկու տեսակ՝ *առարկայական* իրավասություն (կազմակերպության ենթակա հարցերի շրջանակը որոշող) և *յուրիսդիկցիոն* իրավասություն (կազմակերպության առարկայական իրավասության հարցերով ակտերի իրավաբանական ուժը որոշող):

Պետությունները սահմանում են ոչ միայն կազմակերպության իրավասությունը, այլ դրա բաշխումը կազմակերպության մարմինների միջև:

Կազմակերպության առարկայական իրավասությունը կարող է ոչ միայն անմիջականորեն նախատեսված լինել հիմնադիր ակտում, այլև ենթադրվել՝ ելնելով տվյալ ակտի դրույթներից: Դա այսպես կոչված՝ ենթադրվող իրավասությունն է:

Միջազգային կազմակերպությունների յուրիսդիկցիոն իրավասությունը, այսինքն՝ միջազգային կազմակերպության մարմինների կողմից ընդունվող որոշումների իրավաբանական ուժի վերաբերյալ հարցը, որոշվում է նրա հիմնադիր ակտով: Միջազգային կազմակերպությունների մարմիններն ընդունում են երկու տեսակի որոշումներ՝

1. իրենց գործունեության կազմակերպական և ֆինանսական հարցերի նեղ շրջանակին վերաբերող, այսինքն՝ կազմակերպության ներսում գործող որոշումներ, որոնք ստացել են կազմակերպությունների «ներքին իրավունք» անվանումը,

2. կազմակերպությունների շրջանակներից դուրս իրավական նշանակություն ունեցող որոշումներ, որոնք գործում են անդամ պետությունների տարածքում:

Այդ առումով հատուկ տեղ է գրավում ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, որը Կանոնադրության 25-րդ հոդվածի հիման վրա իրավասու է ընդունել անդամ պետությունների համար պարտադիր որոշումներ:

Ինչ վերաբերում է միջազգային կազմակերպությունների մարմինների՝ դրանց գործունեության հիմնական հարցերով ընդունվող բանաձևերին, նախ և առաջ՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևերին, ապա դրանք ունեն խորհրդատվական բնույթ և իրավաբանորեն պարտադիր չեն կազմակերպության անդամների համար:

Միջազգային կազմակերպությունների մարմինների կողմից որոշումների ընդունման ընթացակարգը: Միջազգային կազմակերպությունների գոյության ընթացքում այդ ընթացակարգը ենթարկվել է զգալի փոփոխությունների: Սկզբնապես որոշումներն ընդունվում էին *միաշայնության* սկզբունքի հիման վրա, որն ունի երկու տարատեսակ՝ *լիակապար* միաձայնություն և *հարաբերական* միաձայնություն: Առաջին դեպքում պահանջվում է կազմակերպության բոլոր անդամների քվեարկություն. որևէ անդամ պետության բացակայությունը նիստից կամ քվեարկության դեպքում նրա ձեռնպահ մնալն անհնարին են դարձնում որոշման ընդունումը: Հարաբերական միաձայնության դեպքում անհրաժեշտ է ներկա գտնվող և քվեարկությանը մասնակցող անդամ պետությունների միաձայնություն:

Հետպատերազմական շրջանում ունիվերսալ միջազգային կազմակերպությունների ստեղծման ընթացքում պետությունները հրաժարվել են միաձայնության սկզբունքից և սկսել են կիրառել որոշումների ընդունման նոր կարգ՝ *չայների մեծամասնությամբ*:

Բացառություն է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Մեծ տերությունների միաձայնության սկզբունքը, որը լիովին համապատասխանում է միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման համար այդ պետությունների հատուկ պատասխանատվությանը:

Չայների մեծամասնության սկզբունքն ունի երեք տարատեսակ՝ «պարզ մեծամասնություն» (50% + մեկ ձայն), «որակյալ մեծամասնություն» (ձայների 2/3) և «հատուկ որակյալ» մեծամասնություն (ձայների 3/4): Կախված մարմնի և նրա կողմից քննարկվող հարցի բնույթից՝ տարբեր կազմակերպություններում կիրառվում է մեծա-

մասնության սկզբունքն այս կամ այն տեսքով, ինչը չի բացառում մեծամասնության սկզբունքի բոլոր տարատեսակների կիրառումը կազմակերպությունում ընդհանրապես:

Ֆինանսական բնույթի միջազգային կազմակերպություններում (ՄԱՀ) և Համաշխարհային բանկի խումբը կազմող կազմակերպություններում կիրառվում է համամասնական քվեարկության սկզբունքը, երբ կազմակերպության յուրաքանչյուր անդամի ձայների քանակությունը հավասար չէ մյուսներին և որոշվում է կազմակերպությունում նրա ֆինանսական ներդրմամբ (դրամազխի բաժանային մասնակցությամբ): Սակայն այդ սկզբունքը չի կարելի դիտել որպես ինքնիշխան հավասարության խախտում, քանի որ այն կազմակերպության անդամների կողմից ընդունվել է նրանց համաձայնության հիման վրա:

Վերջին տասնամյակներում լայն կիրառում է ստացել որոշումների ընդունման այնպիսի մեթոդ, ինչպիսին *փոխհամաշայնությունն* է (կոնսենսուս), ինչը կարելի է բացատրել մի շարք պատճառներով, նախ և առաջ՝ միջազգային իրավական այն ակտերի կատարման վերաբերյալ համաձայնության առավելագույն մակարդակին հասնելու ձգտմամբ, որոնց մշակմանը մասնակցել են պետությունները:

ՄԱԿ-ի գործունեության մեջ փոխհամաձայնությունը բնորոշվում է որպես «ընդհանուր համաձայնություն՝ առանց քվեարկության, բայց ոչ անպայման՝ միաձայնություն»: Փոխհամաձայնությունը և միաձայնությունը որոշումներ ընդունելու երկու տարբեր մեթոդներ են: Փոխհամաձայնությունը բնութագրվում է առաջարկվող որոշման ընդունման դեմ որևէ մասնակից պետության ուղղակի առարկությունների բացակայությամբ:

Միջազգային կազմակերպությունների բյուջեն: Միջազգային կազմակերպության բյուջեն համալրվում է անդամ պետությունների անդամավճարների հաշվին: Յուրաքանչյուր միջազգային կազմակերպություն ունի իր բյուջե կատարվող անդամավճարների բաշխման կարգ: Օրինակ, ՄԱԿ-ում յուրաքանչյուր երկրի բաժինը սահմանվում է այն սանդղակին համապատասխան, որը կազմվում է այսպես կոչված՝ *պետությունների հարաբերական վճարունակության սկզբունքի* հիման վրա, որը որոշվում է նրանց համախառն ազգային արդյունքների բաղդատման միջոցով:

Անդամ պետություններն իրենց անդամավճարները վճարում են ինչպես կանոնավոր բյուջե, այնպես էլ կազմակերպության գործունեության առանձին տեսակների ֆինանսավորման համար գոյություն ունեցող կամավոր հիմնադրամներ:

Միջազգային կազմակերպությունների իրավական վիճակը նրա գրկնվելու երկրում: Իրենց գտնվելու երկրում միջազգային կազմակերպությունների իրավական վիճակը կանխորոշվում է մի շարք իրավական ակտերով՝ միջազգային կազմակերպության կանոնադրությամբ, գտնվելու երկրի հետ երկկողմ համաձայնագրերով, բազմակողմ համաձայնագրերով, այդ թվում և՛ *Միավորված ազգերի արյունությունների և անչեռնակեղիությունների մասին 1946 թ. կոնվենցիան* և ՄԱԿ-ի *մասնագիտացված հասարակությունների (հիմնարկների) արյունությունների և անչեռնակեղիությունների մասին 1947 թ. կոնվենցիան:*

§ 30. Միավորված ազգերի կազմակերպությունը

ՄԱԿ-ի նպատակները և գործունեության ուղղությունները: Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) ստեղծվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: ՄԱԿ-ի Կանոնադրությունն ընդունվել է Սան Ֆրանցիսկոյի կոնֆերանսում՝ 1945 թ. հունիսի 26-ին և ուժի մեջ է մտել 1945 թ. հոկտեմբերի 24-ին: Այդ օրը 1947 թ. նշվում է որպես *Միավորված ազգերի կազմակերպության օր:*

ՄԱԿ-ի հիմնադիր փաստաթուղթը՝ Կանոնադրությունը, ունիվերսալ միջազգային պայմանագիր է և ամրագրում է ժամանակակից միջազգային իրավակարգի հիմունքները: ՄԱԿ-ի նպատակներն են՝

- միջազգային խաղաղության և անվտանգության ապահովումը և այդ նպատակով խաղաղությանը սպառնալիքի կանխման և վերացման, ինչպես նաև ագրեսիայի գործողության ճնշման համար արդյունավետ հավաքական միջոցների ձեռնարկումը,
- պետությունների միջև ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հարգանքի հիման վրա բարեկամական հարաբերությունների զարգացումը,
- տնտեսական, սոցիալական, մշակութային և մարդասիրական բնույթի միջազգային հիմնախնդիրների լուծման հարցում համագործակցության իրականացումը,

• այս ընդհանուր նպատակներին հասնելու հարցում պետությունների փոխհամաձայնեցված գործողությունների կենտրոն լինելը:

Կարելի է առանձնացնել ՄԱԿ-ի գործունեության չորս հիմնական ուղղություններ՝

1. միջազգային խաղաղության և անվտանգության պահպանումը,
2. սոցիալ-տնտեսական և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում միջազգային համագործակցության զարգացումը,
3. գաղութատիրության, ռասայական խտրականության և ապարտեիդի դեմ պայքարը,
4. միջազգային իրավունքի կողմնակցումը և առաջընթաց զարգացումը:

ՄԱԿ-ի սկզբնական անդամներն են այն պետությունները, որոնք մասնակցելով Սան Ֆրանցիսկոյում տեղի ունեցած՝ ՄԱԿ-ի ստեղծման կոնֆերանսին կամ ավելի վաղ ստորագրելով 1942 թ. հունվարի 1-ի *Միացյալ ազգերի իռչակագիրը*, ստորագրել և վավերացրել են ՄԱԿ-ի Կանոնադրությունը:

ՄԱԿ-ի անդամ կարող է լինել ցանկացած խաղաղասեր պետություն, որը կատանձնի կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները, և որը ցանկանում է կատարել այդ պարտավորությունները: ՄԱԿ-ի անդամներն ընդունվում են Գլխավոր ասամբլեայի որոշմամբ, անվտանգության խորհրդի երաշխավորությամբ:

Անվտանգության խորհրդի կողմից ՄԱԿ-ի որևէ անդամի դեմ հարկադիր միջոցներ կիրառվելու դեպքում Գլխավոր ասամբլեան իրավասու է անվտանգության խորհրդի հանձնարարականով կասեցնել ՄԱԿ-ի անդամությունից բխող իրավունքների և արտոնությունների իրականացումը: Կանոնադրության սկզբունքները պարբերաբար խախտող պետությունը ՄԱԿ-ից կարող է հեռացվել Գլխավոր ասամբլեայի որոշմամբ, անվտանգության խորհրդի երաշխավորությամբ:

Ներկայում ՄԱԿ-ը շարունակում է մնալ միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման հիմնական գործիքը, ՄԱԿ-ի շրջանակներում մշակվում են մեծ թվով միջազգային պայմանագրեր, ընդունվում են միջազգային հակամարտությունների կարգավորման

ու միջազգային հարաբերություններում իրավակարգի և օրինակա-
նության ապահովմանն ուղղված որոշումներ:

ՄԱԿ-ն ունի վեց գլխավոր մարմիններ՝

1. Գլխավոր ասամբլեան,
2. անվտանգության խորհուրդը,
3. տնտեսական և սոցիալական խորհուրդը,
4. խնամակալության խորհուրդը,
5. միջազգային դատարանը,
6. քարտուղարությունը:

ՄԱԿ-ի գլխավոր գրասենյակը տեղակայված է Նյու Յորքում, իսկ
եվրոպական բաժանմունքը գտնվում է Ժնևում:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան
կազմված է ՄԱԿ-ի անդամ բոլոր պետություններից¹: ՄԱԿ-ի անդամ
յուրաքանչյուր պետության պատվիրակությունը կազմված է ոչ ավել,
քան հինգ ներկայացուցչից և նրանց հինգ տեղակալներից:

Գլխավոր ասամբլեան իրավասու է քննարկել ցանկացած հարց
ՄԱԿ-ի Կանոնադրության շրջանակներում (քացառությամբ այն հար-
ցերի, որոնք քննարկվում են անվտանգության խորհրդի կողմից), բո-
լոր այդպիսի հարցերով հանձնարարականներ տալ ՄԱԿ-ի անդամ-
ներին կամ անվտանգության խորհրդին:

Գլխավոր ասամբլեան մասնավորապես՝

- քննարկում է միջազգային խաղաղության և անվտանգության ա-
պահովման բնագավառում համագործակցության սկզբունքները,
- ընտրում է անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամներ,
տնտեսական և սոցիալական խորհրդի անդամներ,
- անվտանգության խորհրդի երաշխավորությամբ նշանակում է
գլխավոր քարտուղարին,
- անվտանգության խորհրդի հետ համատեղ ընտրում է ՄԱԿ-ի մի-
ջազգային դատարանի անդամներին,
- համակարգում է միջազգային համագործակցությունը տնտեսա-
կան, սոցիալական, մշակութային և մարդասիրական բնագավառնե-
րում,

• իրականացնում է ՄԱԿ-ի Կանոնադրությամբ նախատեսված այլ
լիազորություններ:

Գլխավոր ասամբլեան աշխատում է նստաշրջանային կարգով:
Գլխավոր ասամբլեայի նստաշրջաններն անց են կացվում յուրա-
քանչյուր տարի, հոկտեմբեր-մարտ ամիսներին: Անվտանգության
խորհրդի կամ ՄԱԿ-ի անդամների մեծամասնության պահանջով կա-
րող են գումարվել Գլխավոր ասամբլեայի հատուկ կամ արտահերթ
նստաշրջաններ: Նստաշրջանի աշխատանքն անցնում է լիակազմ
նիստերի և կոմիտեների ու հանձնաժողովների նիստերի ձևով:

Ասամբլեայի յուրաքանչյուր անդամ ունի մեկական ձայն: Կարևոր
հարցերով ասամբլեայի որոշումներն ընդունվում են նիստին ներկա
գտնվող և քվեարկությամբ մասնակցող ՄԱԿ-ի անդամների ձայների
երկու երրորդով, մյուս հարցերով որոշումներն ընդունվում են ձայների
պարզ մեծամասնությամբ:

Գլխավոր ասամբլեան ունի յոթ գլխավոր կոմիտե, որոնցից յուրա-
քանչյուրում ներկայացված են ՄԱԿ-ի բոլոր անդամները՝

1. քաղաքական և անվտանգության հարցերով կոմիտեն (առաջին
կոմիտեն),
2. տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեն (երկրորդ կո-
միտեն),
3. սոցիալական, մարդասիրական հարցերով կոմիտեն (երրորդ
կոմիտեն),
4. խնամակալության և ոչ ինքնակառավարվող տարածքների
հարցերով կոմիտեն (չորրորդ կոմիտեն),
5. վարչական և բյուջետային հարցերով կոմիտեն (հինգերորդ կո-
միտեն),
6. իրավական հարցերով կոմիտեն (վեցերորդ կոմիտեն),
7. հատուկ քաղաքական կոմիտեն:

Գլխավոր կոմիտեներից բացի, Գլխավոր ասամբլեայի կողմից
ստեղծվել են մեծ թվով օժանդակ կոմիտեներ և հանձնաժողովներ:

ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը: ՄԱԿ-ի անվտանգության
խորհուրդը ՄԱԿ-ի գլխավոր մարմիններից մեկն է, որը հիմնական
դեր ունի միջազգային խաղաղության և անվտանգության ապահով-
ման հարցում:

¹ Ներկայումս ՄԱԿ-ի անդամ են ավելի քան 180 պետություններ:

Անվտանգության խորհուրդը կազմված է 15 անդամներից. հինգ մշտական (Ռուսաստան, Չինաստան, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա) և տասը ոչ մշտական անդամներից, որոնք ընտրվում են ՄԱԿ-ի Կանոնադրությանը համապատասխան: Մշտական անդամների ցանկն ամրագրված է ՄԱԿ-ի Կանոնադրությամբ: Ոչ մշտական անդամները ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընտրվում են երկու տարի ժամկետով, առանց անմիջական վերընտրման իրավունքի:

Անվտանգության խորհուրդը լիազորված է քննելու ցանկացած վեճ կամ այնպիսի իրավիճակ, որը կարող է հանգեցնել միջազգային ընդհարումների՝ պարզելու համար, թե կարո՞ղ է, արդյոք, այդ վեճի կամ իրավիճակի շարունակվելը սպառնալ միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը: Այդպիսի վեճի կամ իրավիճակի ցանկացած փուլում Անվտանգության խորհուրդը կարող է հանձնարարել կարգավորման պատշաճ ընթացակարգ կամ մեթոդներ:

Այն վեճի կողմերը, որի շարունակվելը կարող է սպառնալ միջազգային խաղաղությանը կամ անվտանգությանը, իրավասու են ինքնուրույն ընդունել որոշում՝ վեճն Անվտանգության խորհրդի լուծմանը հանձնելու մասին: Մակայն եթե Անվտանգության խորհուրդը համարում է, որ տվյալ վեճի շարունակվելը կարող է սպառնալ միջազգային խաղաղության կամ անվտանգության ապահովմանը, կարող է հանձնարարել վեճի լուծման այնպիսի պայմաններ, որոնք ինքը հարմար կհամարի:

Բացի այդ, Անվտանգության խորհուրդը որոշում է խաղաղությանը ցանկացած սպառնալիքի, խաղաղության ցանկացած խախտման կամ ագրեսիայի գործողության առկայությունը և հանձնարարականներ է տալիս կողմերին կամ որոշում է, թե ինչպիսի միջոցներ է անհրաժեշտ ձեռնարկել միջազգային խաղաղության և անվտանգության վերականգնման համար: Խորհուրդն իրավասու է վեճի կողմերից պահանջել այնպիսի ժամանակավոր միջոցների կատարում, որոնք նա անհրաժեշտ կգտնի: Անվտանգության խորհրդի որոշումները պարտադիր են ՄԱԿ-ի բոլոր անդամների համար:

Խորհուրդը նաև լիազորված է որոշել, թե զինված ուժերի օգտագործման հետ չկապված ինչպիսի միջոցներ պետք է կիրառվեն իր որոշումներն իրականացնելու համար և կազմակերպության անդամներից պահանջել այդ միջոցների իրականացումը: Այդ միջոցները

կարող են ներառել տնտեսական հարաբերությունների, երկաթուղային, ծովային, օդային, փոստային, հեռագրային հաղորդակցությունների լրիվ կամ մասնակի ընդհատում, ինչպես նաև դիվանագիտական հարաբերությունների խզում:

Եթե Անվտանգության խորհուրդը գտնի, որ այդ միջոցներն անբավարար կլինեն կամ անբավարար են, իրավասու է ձեռնարկել օդային, ծովային կամ ցամաքային զինված ուժերի այնպիսի գործողություններ, որոնք անհրաժեշտ կգտնվեն միջազգային խաղաղության կամ անվտանգության վերականգնման համար: ՄԱԿ-ի անդամ պետությունները պարտավոր են Անվտանգության խորհրդին տրամադրել խաղաղության ապահովման համար անհրաժեշտ զինված ուժեր:

Անվտանգության խորհրդում ընթացակարգային հարցերով որոշումներն ընդունված են համարվում, եթե դրանց օգտին քվեարկել են Խորհրդի ինը անդամներ: Մյուս հարցերով որոշումներն ընդունված են համարվում, եթե դրանց օգտին քվեարկել են Խորհրդի ինը անդամներ, ներառյալ Խորհրդի մշտական բոլոր անդամների համընկնող ձայները, ընդ որում՝ վեճին մասնակցող կողմը պետք է ձեռնպահ մնա քվեարկությունից: Եթե ոչ ընթացակարգային հարցով քվեարկության ժամանակ Խորհրդի մշտական անդամներից մեկը դեմ քվեարկի, որոշումը համարվում է չընդունված (վետոյի իրավունք):

ՄԱԿ-ի փնտեսական և սոցիալական խորհուրդը: Տնտեսական և սոցիալական խորհուրդը կազմված է Գլխավոր ասամբլեայի կողմից ընտրվող ՄԱԿ-ի 54 անդամից: Տնտեսական և սոցիալական խորհրդի 18 անդամներ ընտրվում են յուրաքանչյուր տարի՝ երեք տարի ժամկետով:

Տնտեսական և սոցիալական խորհուրդը լիազորված է ձեռնարկել ուսումնասիրություններ և կազմել զեկույցներ՝ տնտեսության, սոցիալական ոլորտի, մշակույթի, կրթության, առողջապահության բնագավառների միջազգային հարցերով:

Տնտեսական և սոցիալական խորհուրդը մասնավորապես լիազորված է՝

- հանձնարարականներ տալ Գլխավոր ասամբլեային՝ մարդու իրավունքների հարգման խրախուսման նպատակով,
- նախապատրաստել կոնվենցիաներ իր իրավասության հարցերով.

• համաձայնագրեր կնքել ՄԱԿ-ի համակարգի տարրեր մասնագիտացված հիմնարկների և միջազգային այլ կազմակերպությունների հետ.

• գումարել միջազգային կոնֆերանսներ իր իրավասությանը պատկանող հարցերով.

• իրականացնել ՄԱԿ-ի Կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Տնտեսական և սոցիալական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկական ձայն: Որոշումներն ընդունվում են միստիկ ներկա և քվեարկությանը մասնակցող Տնտեսական և սոցիալական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Տնտեսական և սոցիալական խորհուրդը սահմանում է ընթացակարգի սեփական կանոններ, ներառյալ՝ մեկ տարի ժամկետով ընտրվող Նախագահի ընտրությունը:

ՄԱԿ-ի խնամակալության խորհուրդը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ՄԱԿ-ի ղեկավարությամբ ստեղծվել է խնամակալության միջազգային համակարգը, որը տարածվում էր հետևյալ տարածքների վրա՝

- մանդատի ներքո գտնվող տարածքները,
- Երկրորդ աշխարհամարտի ընթացքում թշնամական պետություններից անջատված տարածքները,
- տարածքներ, որոնք դրանց կառավարման համար պատասխանատու պետությունների կողմից կամավոր մտցվել են խնամակալության միջազգային համակարգ:

ՄԱԿ-ի խնամակալության խորհուրդը կազմված է խնամակալության ներքո գտնվող տարածքները կառավարող պետություններից, խնամակալության ներքո գտնվող տարածքները չկառավարող՝ ՄԱԿ-ի անդամ պետություններից, Գլխավոր ասամբլեայի կողմից ընտրվող՝ ՄԱԿ-ի այն թվով այլ անդամներից, որն անհրաժեշտ է ՄԱԿ-ի անդամների հավասարությունն ապահովելու համար: Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկական ձայն:

Խնամակալության համակարգի հիմնական նպատակը խնամարկյալ տարածքների բնակչության առաջընթացին նպաստելն է: Խնամակալության համակարգի նպատակները որոշ չափով իրակա-

նացվել են. սկզբնական խնամարկյալ 11 տարածքներից խնամակալության համակարգում մնացել է միայն մեկը՝ ԱՄՆ կողմից կառավարվող խաղաղօվկիանոսյան կղզիները (Միկրոնեզիան): Մյուսները (հիմնականում՝ Աֆրիկայում և Խաղաղ օվկիանոսում) հասել են անկախության՝ որպես ինքնուրույն պետություններ կամ միացել հարևան անկախ պետություններին:

ՄԱԿ-ի միջազգային դատարանը: Միջազգային դատարանը ՄԱԿ-ի գլխավոր դատական մարմինն է: Միջազգային դատարանը գործում է ՄԱԿ-ի Կանոնադրության և ՄԱԿ-ի միջազգային դատարանի սրարուրի հիման վրա, որը ՄԱԿ-ի Կանոնադրության մասն է:

Դատարանը կազմված է 15 անկախ դատավորներից, որոնք ընտրվում են բարձր բարոյական հատկանիշներով օժտված, իրենց երկրներում բարձր դատական պաշտոններում նշանակվելու համար ներկայացվող պահանջներին բավարարող անձանց թվից կամ միջազգային իրավունքի բնագավառում ճանաչված հեղինակություն ունեցող իրավաբաններ են: Ընդ որում, դատարանի կազմում չեն կարող լինել միևնույն պետության երկու քաղաքացիներ: Դատարանի անդամները գործում են որպես անհատներ և իրենց պետության ներկայացուցիչներ չեն հանդիսանում: Իրենց ծառայողական պարտականություններն իրականացնելիս դատարանի անդամներն օժտված են ֆունկցիոնալ արտոնություններով և անձեռնմխելիություններով, որոնք համահունչ են դիվանագիտական արտոնություններին և անձեռնմխելիություններին:

Պետությունները ներկայացնում են դատարանի անդամների թեկնածությունների ցուցակը ՄԱԿ-ի գերագույն քարտուղարին: Դատարանի անդամներն ընտրվում են Գլխավոր ասամբլեայի և Անվտանգության խորհրդի կողմից, առանձին միստերում: Դատավորների լիազորությունների ժամկետը ինը տարի է, ընդ որում՝ յուրաքանչյուր երեք տարին մեկ վերընտրվում է հինգ դատավոր: Զվորումն ապահովված է ինը դատավորի ներկայության դեպքում:

Դատարանի իրավական վիճակը բնութագրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ դատարանի կողմից քննվող գործի կողմ կարող է լինել միայն այն պետությունը, որի իրավաբանական և ֆիզիկական անձինք իրավասու չեն դիմել դատարան:

Դատարանի իրավասությանն են վերաբերում պետությունների կողմից նրան հանձնվող բոլոր գործերը և ՄԱԿ-ի Կանոնադրությամբ ու գործող կոնվենցիաներով նախատեսված վեճերը:

Ընդհանուր կանոնի համաձայն, դատարանի ընդդատությունը կա- մընտրային (ֆակուլտատիվ) բնույթ ունի: Դատարանն իրավասու է այս կամ այն պետության մասնակցությամբ կոնկրետ վեճերը քննել միայն այդ պետության համաձայնությամբ: Սակայն պետությունները կարող են անել հայտարարություններ՝ դատարանի պարտադիր ի- րավասության ճանաչման մասին:

Դատավարությունը դատարանում բաղկացած է երկու փուլից՝ գրավոր և բանավոր: *Գրավոր* դատավարությունը դատարանին և կողմերին պահանջներ ու առարկություններ հայտնելը, այլ փաս- տաթղթեր ներկայացնելն է և, որպես կանոն, տևում է մի քանի ամիս: *Բանավոր* փուլի ընթացքում դատարանը լսում է վկաներին, փորձա- գետներին, կողմերի ներկայացուցիչներին, փաստաբաններին և դա- տավարության այլ մասնակիցներին:

Գործի քննությունը դատարանում իրականացվում է հրապարա- կայնորեն, եթե կողմերը չեն միջնորդում միստերը փակ անցկացնելու մասին: Կողմերի ելույթներին և գործի նյութերին ծանոթանալուց հե- տո դատարանը հեռանում է խորհրդակցության, որն անցնում է փակ միստով: Բոլոր հարցերը դատարանի կողմից լուծվում են ներկաների ձայների մեծամասնությամբ: Չայների հավասարության դեպքում նախագահողի ձայնը վճռորոշ է: Դատական միստի արդյունքներով կայացվում է վճիռ: Վճռում նշվում են դատավորների անունները, այն դատողությունները, որոնց վրա այն հիմնված է: Վճիռն ստորագրում են դատարանի նախագահն ու քարտուղարը: Այն հայտարարվում է բաց միստում: Ընդ որում, դատավորներն ունեն հատուկ կարծիքի ի- րավունք, որը ներկայացվում է գրավոր տեսքով և կցվում է վճռին:

Դատարանն իրավասու է տալ խորհրդակցական եզրակացույթ- յուններ ցանկացած իրավաբանական հարցով՝ ՄԱԿ-ի Կանոնադ- րությամբ նման հարցում անելու լիազորությունն ունեցող ցանկացած մարմնի կամ հիմնարկի հարցումով: Դատարանը խորհրդակցական եզրակացությունները կայացնում է բաց միստում:

ՄԱԿ-ի քարտուղարությունը: ՄԱԿ-ի քարտուղարությունը պա- տասխանատվություն է կրում ՄԱԿ-ի գլխավոր և օժանդակ մարմին-

ների բնականոն գործունեության ապահովման և սպասարկման, նրանց որոշումների կատարման, ՄԱԿ-ի ծրագրերի և քաղաքակա- նության իրականացման համար:

Քարտուղարությունն ապահովում է ՄԱԿ-ի մարմինների աշխա- տանքը, հրապարակում և տարածում է ՄԱԿ-ի նյութերը, պահպանում արխիվները, գրանցում և հրապարակում է ՄԱԿ-ի անդամ պետույթ- յունների միջազգային պայմանագրերը:

Քարտուղարությունը ղեկավարում է ՄԱԿ-ի *գլխավոր քարտուղա- րը*, որը ՄԱԿ-ի գլխավոր վարչական պաշտոնատար անձն է: Գլխա- վոր քարտուղարը նշանակվում է Գլխավոր ասամբլեայի կողմից՝ անվտանգության խորհրդի երաշխավորությամբ:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը՝

- իրականացնում է քարտուղարության ստորաբաժանումների ընդհանուր ղեկավարությունը,
- Գլխավոր ասամբլեային ներկայացնում է ՄԱԿ-ի գործունեույթ- յան մասին զեկույցը,
- մասնակցում է միջազգային կոնֆերանսների աշխատանքին,
- նշանակում է քարտուղարության անձնակազմը և ղեկավարում նրա աշխատանքը:

Իր պարտականությունները կատարելիս գլխավոր քարտուղարը չպետք է ցուցումներ ստանա որևէ կառավարությունից:

Քարտուղարության աշխատակիցները նշանակվում են գլխավոր քարտուղարի կողմից, Գլխավոր ասամբլեայի կողմից սահմանվող կանոններով: Քարտուղարություն աշխատանքի ընդունելը և այդտեղ աշխատանքի պայմանները որոշելը կատարվում է պայմանագրային հիմքով՝ հաշվի առնելով աշխատունակության, որակավորման և բա- րեխղճության բարձր մակարդակի ապահովման անհրաժեշտությու- նը:

ՄԱԿ-ի մասնագիտացված հիմնարկները: ՄԱԿ-ի Կանոնադրույթ- յան 57-րդ և 63-րդ հոդվածների համաձայն, ՄԱԿ-ի հետ կապի մեջ են տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական, առողջապա- հական և այլ ոլորտներում համաձայնագրերով ստեղծված տարբեր հիմնարկներ: Մասնագիտացված հիմնարկները հիմնադիր փաս- տաթղթերի և համաձայնագրերի հիման վրա մշտապես գործող մի- ջազգային կազմակերպություններ են:

մաններում գտնվող և արտաքին քաղաքականության, արտաքին տնտեսական կապերի, սոցիալական, մշակութային, իրավական հարաբերությունների համակարգմամբ շահագրգռված պետությունների համագործակցությունը:

Կազմակերպությունը տարածաշրջանային ճանաչվելու համար անհրաժեշտ է՝

- անդամ պետությունների տարածքային միասնությունը, այս կամ այն չափի միասնական տարածաշրջանի սահմաններում դրանց գտնվելը,

- անդամ պետությունների նպատակների, խնդիրների և գործողությունների տարածքային սահմանափակումը, այսինքն՝ սուբյեկտային կազմին համապատասխանող գործառնության կողմնորոշումը, առանց իր տարածաշրջանային համակարգող շրջանակներից դուրս եկող գործերին միջամտելու հավակնությունների:

Արաբական պետությունների լիգան: 1945 թ. մարտի 22-ին կայացել է համաարաբական կոնֆերանս, որին մասնակցում էին արաբական յոթ պետություններ (Սիրիա, Լիբանան, Հորդանան, Իրաք, Սաուդյան Արաբիա, Եմեն և Եգիպտոս), և նույն օրը արաբական վեց պետությունների ներկայացուցիչներ ստորագրել են *Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) պակտը*: ԱՊԼ պակտն ուժի մեջ է մտել 1945 թ. մայիսի 10-ին: Ներկայում պակտի մասնակիցների թիվն անցնում է քսանից: Պակտի համաձայն, լիգայի անդամ կարող է դառնալ արաբական ցանկացած անկախ պետություն:

ԱՊԼ նպատակներն են՝ ԱՊԼ անդամ պետությունների ավելի սերտ հարաբերությունների ապահովումը, նրանց քաղաքական գործողությունների համակարգումը, նրանց անկախության և ինքնիշխանության ապահովումը:

ԱՊԼ անդամների համագործակցությունն իրականացվում է հետևյալ ոլորտներում՝

- տնտեսական և ֆինանսական հարցեր,
- տրանսպորտ և կապ,
- մշակույթի և առողջապահության հարցեր,
- մարդասիրական հիմնահարցեր:

ԱՊԼ բարձրագույն մարմինն է ԱՊԼ *խորհուրդը*, որում ներկայացված են պակտի բոլոր մասնակիցները: Խորհրդի կողմից միա-

ձայն ընդունված որոշումները պարտադիր են ԱՊԼ բոլոր անդամների համար: Չայների մեծամասնությամբ ընդունված որոշումները պարտադիր են ԱՊԼ միայն այն պետությունների համար, որոնք համաձայնում են դրանց:

ԱՊԼ անդամ պետության հանդեպ ագրեսիայի կամ ագրեսիայի սպառնալիքի դեպքում, այդ պետությունը կարող է պահանջել ԱՊԼ խորհրդի անհապաղ գումարում, որը կնախանջի ագրեսիայի վերացման համար անհրաժեշտ միջոցները (այդ թվում՝ հարկադիր): *Պաշտպանության միացյալ խորհուրդը* և *մշտական ռազմական հանձնաժողովը* խորհրդատվական օժանդակություն են ցուցաբերում խորհրդին:

1964 թ. ԱՊԼ շրջանակներում գործում է *Պետությունների և կառավարությունների գլուխների կոնֆերանսը*, որտեղ քննարկվում են առավել կարևոր հարցեր: ԱՊԼ գլխավոր գրասենյակը գտնվում է Կահիրեում (Եգիպտոս):

Աֆրիկյան միասնության կազմակերպությունը: Աֆրիկյան միասնության կազմակերպությունը (ԱՄԿ) ստեղծվել է 1963 թ., *Աֆրիկյան միասնության խարտիայի* հիման վրա՝ աֆրիկյան պետությունների միասնության և համերաշխության ամրապնդման, նրանց ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և անկախության պաշտպանության, միջազգային համագործակցության խրախուսման նպատակով: Կազմակերպության անդամ կարող է լինել անկախ և ինքնիշխան աֆրիկյան ցանկացած պետություն: Ներկայումս անդամների թիվը հիսունին մոտ է:

ԱՄԿ-ի բարձրագույն մարմինը *Պետությունների և կառավարությունների գլուխների կոնֆերանսն* է (ասամբլեան), որը կազմված է պետությունների և կառավարությունների գլուխներից կամ պատշաճ կերպով հավատարմագրված ներկայացուցիչներից: Կոնֆերանսում յուրաքանչյուր պետություն ունի մեկական ձայն: Կոնֆերանսի որոշումներն ընդունվում են ձայների երկու երրորդով: ԱՄԿ-ի *նախարարների խորհուրդը* կազմված է արտաքին գործերի նախարարներից կամ մասնակից պետությունների կողմից նշանակված այլ նախարարներից: Խորհրդի պարտականությունների մեջ է մտնում կոնֆերանսի նախապատրաստման աշխատանքը:

ԱՄԿ-ի շրջանակներում գործում է վեճերի լուծման տարածաշրջանային կառուցակարգ՝ միջնորդության, հաշտեցման և արքիպրաժի կոմիտեի:

ԱՄԿ-ի գլխավոր գրասենյակը գտնվում է Ադիս-Աբեբայում (Եթովպիա):

Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը: Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը (ԻԿԿ) կամ Իսլամական կոնգրեսը ստեղծվել է դեռ 1954 թ., սակայն իրական գործունեությունն սկսել է 1969 թ., երբ բարձրագույն մակարդակով գումարվել է ԻԿԿ մասնակից երկրների կոնֆերանսը՝ Իսրայելի դեմ նրա գործունեության ակտիվացման և Երուսաղեմի իսլամական սրբատեղիների պաշտպանության համար: ԻԿԿ մշտապես գործող մարմինը գերագույն քարտուղարի ղեկավարած քարտուղարությունն է: ԻԿԿ պաշտոնական լեզուներն են արաբերենը, անգլերենը և ֆրանսերենը:

ԻԿԿ-ն գործում է 1972 թ. հաստատված կանոնադրության հիման վրա: ԻԿԿ-ին անդամակցում են ավելի քան հիսուն պետություններ: Ոչ մահմեդական պետությունների մահմեդական փոքրամասնությունները ԻԿԿ են ուղարկում իրենց ներկայացուցիչներին, որպես դիտորդներ: ԻԿԿ-ի նպատակներն են՝

- աջակցությունը մահմեդական պետությունների ամրապնդմանը,
- սրբավայրերի պահպանությունը,
- աջակցությունը պաղեստինյան ժողովրդի պայքարին,
- համագործակցությունը տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում:

ԻԿԿ-ն ստեղծվել է իսլամի սկզբունքների, ինչպես նաև ՄԱԿ-ի Կանոնադրության սկզբունքների ճանաչման հիման վրա: Կազմակերպությունն ունի ՄԱԿ-ին առընթեր մշտական դիտորդի կարգավիճակով ներկայացուցիչ:

ԻԿԿ-ի մարմիններն են՝ Պետությունների գլուխների և ղեկավարների կոնֆերանսը (գումարվում է ըստ անհրաժեշտության), Արտաքին գործերի նախարարների կոնֆերանսը (գումարվում է տարեկան մեկ անգամ), քարտուղարությունը, քաղաքական, փնտրեսական, սոցիալական և այլ հարցերով հանձնաժողովները:

Հարավարևելյան Ասիայի պետությունների ընկերակցությունը: Հարավարևելյան Ասիայի պետությունների ընկերակցությունը (Ա-

ՄԵԱՆ) ստեղծվել է 1967 թ.՝ Բանգկոկի հռչակագրի և Համաշայնության հռչակագրի հիման վրա, որը 1976 թ. լրացվել է Հարավարևելյան Ասիայում բարեկամության և համագործակցության մասին պայմանագրով:

Ներկայումս ԱՄԵԱՆ-ի անդամներն են Բրունեյը, Ինդոնեզիան, Լաոսը, Մալայզիան, Մյանման (Բիրմա), Ֆիլիպինները, Սինգապուրը, Թայլանդը, Վիետնամը, Կամբոջան: 1996 թ. ԱՄԵԱՆ որոշում է ընդունել իր կազմում որպես լիիրավ անդամներ Ռուսաստանին և Չինաստանին ընդգրկելու մասին: ԱՄԵԱՆ-ի մշտական գործընկերներն են նաև ԱՄՆ-ը, Ավստրալիան, Ճապոնիան, Հարավային Կորեան, Կանադան, Նոր Զելանդիան և Եվրոպական միությունը:

ԱՄԵԱՆ-ի նպատակներն են՝

- շրջանում խաղաղության, ազատության և չեզոքության տարածաշրջանի ստեղծումը,
- տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետությունների համագործակցությանն աջակցելը,
- ԱՄԵԱՆ շրջանակներում ազատ առևտրի գոտու սահմանումը,
- տարածաշրջանային այլ կազմակերպությունների հետ փոխգործողությունը:

ԱՄԵԱՆ բարձրագույն մարմինը Պետությունների և կառավարությունների գլուխների կոնֆերանսն է, որը գումարվում է երեք տարին մեկ: Յուրաքանչյուր տարի տեղի են ունենում արտաքին գործերի նախարարների հանդիպումներ: Կոնֆերանսների և հանդիպումների միջև ընկած ժամանակահատվածներում ընթացիկ աշխատանքն իրականացնում է Մշտական կոմիտեի: ԱՄԵԱՆ Քարտուղարությունը ղեկավարում է Գերագույն քարտուղարը, որն ընտրվում է երեք տարի ժամկետով: Քարտուղարության գտնվելու վայրը Ջակարտա քաղաքն է (Ինդոնեզիա):

Եվրոպական միությունը: Եվրոպական միությունը (ԵՄ) ստեղծվել է 1957 թ.՝ նախկինում ինքնուրույն կազմակերպություններ 1951 թ. Քարածիտի և պողպարի եվրոպական միավորման, 1957 թ. Արոմալիան էներգետիկայի եվրոպական համագործակցության, 1957 թ. Եվրոպական փնտրեսական համագործակցության միավորման արդյունքում և մինչև վերջերս անվանվում էր Եվրոպական համայնքներ:

1965 թ. Բրյուսելի պայմանագրի հիման վրա ստեղծվել են Համագործակցությունների միացյալ մարմիններ: 1986 թ. Միացյալ եվրոպական տնտեսական կազմակերպությունը և շրջակա միջավայրի պահպանության, մշակույթի, կրթության, առողջապահության, տեխնոլոգիական և սոցիալական քաղաքականության ոլորտում լիազորությունների փոխանցումը միությանը, միասնական մաքսային տարածությունը: 1990 թ. համաձայնագիրը կարգավորել է ԵՄ անդամ պետությունների սահմաններով ապրանքների, աշխատուժի և կապիտալների անարգել տեղաշարժման հարցերը:

1992 թ. Մասսարիիսի համաչափագրերով (ուժի մեջ են մտել 1993 թ.) ավարտվել է եվրոպական կառուցակարգի իրավաբանական ձևակերպման գործընթացը, նախատեսելով մինչև 20-րդ դարի վերջը ԵՄ երկրների քաղաքական և արժույթային-տնտեսական սերտ միության ստեղծում: Եվրոպական միության մասին պայմանագիրը լրացված է 17 արձանագրություններով: Պայմանագրով սահմանված է ԵՄ քաղաքացիությունը:

ԵՄ-ի սկզբնական անդամներն էին Բելգիան, Իտալիան, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները, Ֆրանսիան, ԳՂՀ-ն: Այսօր ԵՄ կազմի մեջ են մտնում 15 պետություններ:

ԵՄ-ի իրավաբանական էության վերաբերյալ հարցում առկա է մի քանի տեսակետ: Դրանցից մեկի համաձայն, ԵՄ-ն կամավոր միավորված երկրների դաշնային պետականակերպ կազմավորում է: Մեկ այլ տեսակետի համաձայն, թեև ԵՄ-ն ունի մի շարք առանձնահատկություններ, սակայն այն միջազգային կազմակերպություն է, իսկ դրա իրավունքը՝ միջազգային իրավունք: Երրորդ տեսակետի կողմնակիցները համարում են, որ ԵՄ-ն համադաշնության տարրերով միջազգային կազմակերպություն է:

Եվրոպական միության իրավունքը բաղկացած է նորմերի երկու մեծ խմբերից՝

- միության՝ որպես միջազգային կազմակերպության, ներքին իրավունքը,
- միության պետությունների քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային գործունեության որոշակի տեսակները կարգավորող՝ միության իրավունքը:

ԵՄ-ի գլխավոր մարմիններն են Եվրոպական խորհուրդը, Եվրոպական հանձնաժողովը, Եվրոպական միության խորհուրդը, Եվրոպական դատարանը:

Եվրոպական խորհրդի կազմում են ԵՄ-ի պետությունների և կառավարությունների գլուխները և Եվրոպական հանձնաժողովի նախագահը, նրանց տեղակալները (արտաքին գործերի նախարարները) և Հանձնաժողովի անդամը: Խորհրդի նիստերը գումարվում են տարեկան երկու անգամ:

Եվրախորհրդարանը կազմված է մասնակից երկրներում ուղղակի ընտրությունների ընթացքում հինգ տարի ժամկետով ընտրվող պատգամավորներից: Եվրախորհուրդը վերահսկում է Եվրոպական հանձնաժողովին և Խորհրդին, մշակում է ԵՄ իրավունքը և միության բյուջեն:

Եվրախորհրդարանի ամսական նստաշրջանները գումարվում են Ստրասբուրգում (Ֆրանսիա), արտահերթ նստաշրջանները՝ Բրյուսելում (Բելգիա), որտեղ աշխատում են Եվրախորհրդարանի կոմիտեները, Եվրախորհրդարանի քարտուղարությունը՝ Լյուքսեմբուրգում:

Եվրոպական միության Խորհուրդը կազմված է անդամ պետությունների նախարարներից (կախված քննարկվող հարցից): Չայների որակյալ մեծամասնության անհրաժեշտության դեպքում ներկայացուցչությունը Խորհրդում միևնույնը չէ: Այսպես, Գերմանիան ունի տասը ձայն, Իռլանդիան՝ երեք, Լյուքսեմբուրգը՝ երկու և այլն: Խորհուրդը գտնվում է Բրյուսելում:

Եվրոպական հանձնաժողովը կազմված է քսան անդամներից և ԵՄ երկրների կառավարությունների կողմից՝ Եվրահանձնաժողովի համաձայնությանը նշանակվող նախագահից: Հանձնաժողովը վերահսկում է ԵՄ նորմերի և որոշումների պահպանումը: Հանձնաժողովը գտնվում է Բրյուսելում:

Եվրոպական դատարանը կազմված է 15 դատավորից, ինը գլխավոր դատախազներից, որոնք նշանակվում են ընդհանուր համաձայնությամբ՝ վեց տարի ժամկետով: Դատարանը լուծում է ԵՄ-ի անդամ պետությունների, ԵՄ-ի մարմինների և անդամ պետությունների, ԵՄ-ի մարմինների, ԵՄ-ի և իրավաբանական ու ֆիզիկական անձանց միջև վեճերը, պատրաստում է փորձագիտական եզրակացություններ:

Եվրոպայի խորհուրդը: Եվրոպայի խորհուրդն ստեղծվել է Երկրորդ աշխարհամարտից հետո և գործում է 1949 թ. կանոնադրության հիման վրա: Եվրոպայի խորհրդին անդամակցում են մոտ 40 պետություններ, այդ թվում և՛ Հայաստանի Հանրապետությունը:

Եվրախորհրդի նպատակներն են՝

- Եվրոպայի պետությունների միջև ավելի սերտ կապերի ապահովումը,
- աջակցությունը Եվրոպայի ժողովրդավարական տարածք վերածվելուն,
- մարդու իրավունքների պաշտպանությունը,
- խորհրդի գործունեության համակարգումը եվրոպական այլ պետությունների հետ:

Եվրախորհրդին անդամակցել ցանկացող պետությունը պետք է համապատասխանի հետևյալ պայմաններին՝

- իրավական կառուցվածքը և ինստիտուտները պետք է համապատասխանեն ժողովրդավարության սկզբունքներին,
- ժողովրդական ներկայացուցիչները պետք է ընտրվեն ազատ, հավասար և համընդհանուր ընտրությունների միջոցով:

Հաշվի են առնվում նաև կարծիքի արտահայտման ազատության իրականացման երաշխիքները, ազգային փոքրամասնությունների պաշտպանությունը, միջազգային իրավունքի հիմունքների պահպանումը: Պարտադիր պայման է *Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. եվրոպական կոնվենցիայի* ստորագրումը:

Եվրախորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ճանաչի իրավունքի գերակայության սկզբունքը և այն սկզբունքը, որի համաձայն՝ իր իրավասության ներքո գտնվող բոլոր անձինք պետք է օգտվեն մարդու իրավունքներից և հիմնական ազատություններից, և ակտիվորեն համագործակցի խորհրդի նպատակներին հասնելու համար:

Եվրախորհրդի գլխավոր մարմիններն են՝ նախարարների կոմիտեն, Խորհրդարանական ասամբլեան: Այդ մարմինների աշխատանքն ապահովում է Եվրախորհրդի քարտուղարությունը:

Յուրաքանչյուր անդամ ունի մեկական ներկայացուցիչ *նախարարների կոմիտեում*, և յուրաքանչյուր անդամ ունի մեկական ձայն: Կոմիտեում ներկայացուցիչներն են արտաքին գործերի նախարար-

ները կամ նրանց փոխարինող անձը՝ իր երկրի կառավարության անդամը: Նախարարների կոմիտեն Խորհրդատվական ասամբլեայի հանձնարարությամբ կամ սեփական նախաձեռնությամբ քննարկում է Եվրախորհրդի նպատակներին հասնելուն ուղղված միջոցները, ներառյալ՝ կոնվենցիաների և համաձայնագրերի կնքումը և որոշակի հարցերի առնչությամբ կառավարությունների կողմից միասնական քաղաքականության իրականացումը:

Նախարարների կոմիտեի եզրակացությունները կարող են արվել անդամ պետությունների կառավարություններին հանձնարարականների ձևով: Կոմիտեն կարող է հարցումներ կատարել անդամ պետությունների կառավարություններին՝ այդպիսի հանձնարարականների կատարման ընթացքի մասին:

Խորհրդատվական ասամբլեայի նստաշրջանի անցկացման ժամանակ Նախարարների կոմիտեն հաշվետվություն է ներկայացնում իր գործունեության մասին:

Խորհրդարանական ասամբլեան Եվրախորհրդի խորհրդակցական մարմինն է: Եվրախորհրդի կանոնադրության համաձայն, նա քննարկում է իր իրավասությանը վերաբերող հարցերը և հանձնարարականների ձևով իր եզրակացությունները հանձնում է Նախարարների կոմիտեին:

Խորհրդարանական ասամբլեան կազմված է բոլոր անդամ պետությունների ներկայացուցիչներից, որոնք ընտրվում են իրենց խորհրդարանի կազմից կամ նշանակվում են այդ խորհրդարանի կազմից՝ նրա սահմանած ընթացակարգին համապատասխան: Յուրաքանչյուր ներկայացուցիչ պետք է լինի այն անդամ պետության քաղաքացին, որը նա ներկայացնում է, սակայն, չի կարող միաժամանակ լինել նաև Նախարարների կոմիտեի անդամ:

Եվրախորհրդի քարտուղարությունը կազմված է *Գերագույն քարտուղարից*, նրա տեղակալներից և անձնակազմից: Գերագույն քարտուղարը և նրա տեղակալները նշանակվում են Խորհրդատվական ասամբլեայի կողմից՝ Նախարարների կոմիտեի երաշխավորությամբ: Քարտուղարության մյուս աշխատակիցները նշանակվում են Գերագույն քարտուղարի կողմից՝ վարչական կանոններին համապատասխան:

Քարտուղարությունը գլխավորում է Խորհրդատվական ասամբլեայի կողմից ընտրվող Գերագույն քարտուղարը:

Եվրոպայի խորհրդի կարևոր մարմիններից մեկը Մարդու իրավունքների եվրոպական դատարանն է, որը կոչված է ապահովելու Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. եվրոպական կոնվենցիայի իրագործումը բոլոր անդամ պետությունների կողմից:

Եվրոպայի խորհրդի մարմինները գտնվում են Ստրասբուրգում:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը: Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) սկզբնապես գործում էր որպես միջազգային կոնֆերանս՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցություն (ԵԱՀԽ): 1994 թ. Բուդապեշտի խորհրդակցության որոշմամբ Խորհրդակցությունը վերակազմավորվել է կազմակերպության:

Համագործակցության համաեվրոպական գործընթացի սկիզբ դրած առաջին փաստաթուղթը՝ եվրոպական 33 պետությունների, ԱՄՆ և Կանադայի պետությունների ու կառավարությունների գլուխների կողմից 1975 թ. Հելսինկիում ստորագրված *Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության Եզրափակիչ ակտն* էր:

Եզրափակիչ ակտի դրույթները զարգացվել և լրացվել են 1986 թ. *Սյոնկիոլմի փաստաթղթով*, 1989 թ. *Վիեննայի փաստաթղթով*, 1990 թ. *Կոպենհագենի խորհրդակցության փաստաթղթով*, 1990 թ. *Նոր Եվրոպայի համար Փարիզյան խարտիայով*:

ԵԱՀԿ առանձնահատկությունը միջազգային կազմակերպությունների հիմնադիր ավանդական փաստաթղթի՝ կանոնադրության բացակայությունն է:

ԵԱՀԿ նպատակներն են՝

- Եվրոպայում խաղաղության և անվտանգության ապահովումը,
- միջազգային լարվածության թուլացումը,
- մարդու իրավունքների պաշտպանության ապահովումը,
- երկրների միջև հարաբերություններում միջազգային իրավունքի սկզբունքների պահպանումը:

ԵԱՀԿ կառուցվածքը բավականին բարդ է: ԵԱՀԿ գլխավոր մարմիններն են՝ *Պետությունների և կառավարությունների գլուխների խորհրդակցությունը*, *Վերահսկիչ կոնֆերանսները*, *Արտաքին գործերի նախարարների խորհուրդը*, *Բարչրասպիճան պաշտոնադատական կոմիտեն*, *Ազգային փոքրամասնությունների գործերով զբաղվող կոմիտեն*, *Ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների բյուրոն*, *ԵԱՀԿ Քարտուղարությունը*, *Խորհրդարանական ասամբլեան*, *ԵԱՀԿ Արբիտրաժային և հաշտարար դատարանը*, *Վեճերի խաղաղ կարգավորման ԵԱՀԿ հաշտարար հանձնաժողովը* և այլն:

Անկախ պետությունների համագործակցությունը: Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ստեղծման մասին որոշումն ընդունվել է Ռուսաստանի, Բելոռուսիայի և Ուկրաինայի կողմից՝ 1991 թ. դեկտեմբերի 8-ին, Մինսկում տեղի ունեցած հանդիպման ընթացքում: ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագրում արձանագրվում է, որ ԽՍՀ Միությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն, դադարել է գոյություն ունենալ: Պայմանադիր պետությունները կազմավորել են Անկախ պետությունների համագործակցությունը:

Բարդ քաղաքական իրավիճակում, Անկախ պետությունների համագործակցության ստեղծումից մեկ տարի անց, ընդունվել է ԱՊՀ Կանոնադրությունը: Համապատասխան որոշումն ընդունվել է ԱՊՀ պետությունների գլուխների խորհրդի կողմից՝ 1993 թ. հունվարի 22-ին և ստորագրվել՝ յոթ պետությունների (Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության) ղեկավարների կողմից: Ավելի ուշ նրանց միացել են Ադրբեջանական Հանրապետությունը, Վրաստանի Հանրապետությունը և Մոլդովայի Հանրապետությունը:

ԱՊՀ Կանոնադրությունը բաղկացած է նախաբանից և 45 հոդված պարունակող ինը բաժիններից: Դրանում հղում է արվում միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին և սկզբունքներին, ՄԱԿ-ի Կանոնադրության, ԵԱՀԽ Եզրափակիչ ակտի և այլ փաստաթղթերի դրույթներին:

Ոչ սկզբնական հիմնադիր ակտերը, ո՛չ ԱՊՀ կանոնադրությունը չեն սահմանում ԱՊՀ իրավաբանական էության դրա իրավական կարգավիճակի հստակ բնութագրում: Ալմա-Աթայի հռչակագիրը սահմանափակվում է միայն ժխտական այն դրույթով, որ «Համագործակցությունը չի հանդիսանում ոչ պետություն, ո՛չ վերաբնակային կազմավորում»: ԱՊՀ կանոնադրությունում զետեղված է համանման մի բանաձև. «Համագործակցությունը չի հանդիսանում պետություն և օժտված չէ վերագրային լիազորություններով»:

Համագործակցության նպատակներն են՝

- քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ ոլորտներում համագործակցության իրականացումը,
- ընդհանուր տնտեսական տարածության շրջանակներում անդամ պետությունների զարգացումը,
- միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին, ինչպես նաև ԵԱՀԽ փաստաթղթերին համապատասխան, մարդու իրավունքների և ազատությունների ապահովումը,
- Համագործակցությունում քաղաքացիների ազատ շփումը և տեղաշարժը,
- իրավական օգնությունը և համագործակցությունը հարաբերությունների այլ ոլորտներում,
- ԱՊՀ անդամ պետությունների վեճերի խաղաղ կարգավորումը:

ԱՊՀ կանոնադրության համաձայն, Համագործակցության անդամությունը հիմնված է պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքի վրա: ԱՊՀ անդամներն են ԱՊՀ կանոնադրության ընդունման պահին (1993 թ. հունվարի 22-ին) ԱՊՀ ստեղծման մասին 1991 թ. համաձայնագիրը և դրա 1991 թ. արձանագրությունը վավերացրած պետությունները: ԱՊՀ մասնակից կարող է դառնալ այն պետությունը, որը համաձայն է Համագործակցության նպատակներին, սկզբունքներին և ստանձնում է կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները՝ բոլոր անդամ պետությունների համաձայնությամբ:

Պետությունը կարող է դուրս գալ ԱՊՀ կազմից՝ մտադրության մասին 12 ամիս առաջ տեղեկացնելու պայմանով:

Միջպետական հարաբերությունների իրավական հենք են դիտվում երկկողմ և բազմակողմ համաձայնությունները:

ԱՊՀ գոյության անցած ժամանակահատվածի ընթացքում կուտակվել է տարբեր ոլորտներում պայմանագրային համագործակցության մեծ փորձ: Կարելի է նշել այնպիսի ակտեր, ինչպիսիք են Համալսարանական անվտանգության մասին 1992 թ. մայիսի 15-ի պայմանագիրը, Տնտեսական միության սրեղծման մասին 1993 թ. սեպտեմբերի 24-ի պայմանագիրը, Բաղաձայնական, ընդհանրական և քրեական գործերով իրավական օգնության մասին 1993 թ. հունվարի 22-ի կոնվենցիան:

Ի կատարումն ԱՊՀ կանոնադրության դրույթների, 1993-1995 թթ. կնքվել են Համագործակցության մարմինների կանոնադրությունների հաստատման մասին համաձայնագրեր: .

Համագործակցության կազմակերպական կառուցվածքը բավականին բարդ է: ԱՊՀ գլխավոր մարմիններն են՝ Պետությունների գլուխների խորհուրդը, Կառավարությունների ղեկավարների խորհուրդը, Արտաքին գործերի նախարարների խորհուրդը, Պաշտպանության նախարարների խորհուրդը, Սահմանապահ զորքերի հրամանատարների խորհուրդը, Համակարգող-խորհրդատվական կոմիտեն, Գործադիր քարտուղարությունը, Տնտեսական դատարանը, Մարդու իրավունքների հանձնաժողովը:

Բացի այդ, ԱՊՀ շրջանակներում գործում են բազմաթիվ օժանդակ մարմիններ՝ Միջպետական բանկը, Տեղեկատվական խորհուրդը և այլն: Պետությունները Համագործակցության կանոնադրային և այլ մարմիններում նշանակում են իրենց մշտական լիազոր ներկայացուցիչներին:

Պետությունների գլուխների խորհուրդը, կանոնադրության 21-րդ հոդվածի համաձայն, Համագործակցության բարձրագույն մարմինն է: Այն քննարկում և լուծում է իրենց ընդհանուր շահերի ոլորտում անդամ պետությունների գործունեության սկզբունքային հարցեր և միստեր է գումարում տարեկան երկու անգամ (հնարավոր են արտահերթ միստեր):

Կառավարությունների ղեկավարների խորհուրդը համակարգում է անդամ պետությունների գործադիր իշխանության համագործակցությունը և միստեր է գումարում տարեկան չորս անգամ:

Երկու մարմինները որոշումները կայացվում են ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով): Ցանկացած պետություն կարող է

հայտնել այս կամ այն հարցով իր շահագրգռված չլինելու մասին, ինչը չի խոչընդոտում որոշման ընդունման համար:

Արտաքին գործերի նախարարների խորհուրդը համակարգում է անդամ պետությունների արտաքին քաղաքական գործունեությունը, դիվանագիտական ծառայությունների փոխգործողությունը: Խորհրդի նիստերն անց են կացվում ոչ ուշ, քան երեք ամիսը մեկ անգամ:

Պաշտպանության նախարարների խորհուրդը զբաղվում է ռազմական քաղաքականության, ռազմական շինարարության և անվտանգության հարցերով, համակարգում է անդամ պետությունների պաշտպանության նախարարությունների (կոմիտեների) գործունեությունը, Պետությունների գլուխների խորհրդին և Կառավարությունների ղեկավարների խորհրդին առաջարկություններ է ներկայացնում՝ Համագործակցության *Միացյալ զինված ուժերի* կազմի և նշանակության, պատրաստման և նյութատեխնիկական ապահովման սկզբունքների մասին:

Սահմանապահ զորքերի հրամանատարների խորհուրդն իրավասու է անդամ պետությունների արտաքին սահմանների պահպանության և դրանցում կայուն իրավիճակի ապահովման հարցերում:

Համակարգող-խորհրդարկական կոմիտեն Համագործակցության մշտապես գործող գործադիր մարմինն է: Այն, ի կատարումն Պետությունների գլուխների խորհրդի և Կառավարությունների ղեկավարների խորհրդի որոշումների, մշակում է առաջարկություններ՝ ԱՊՀ շրջանակներում համագործակցության հարցերով, կազմակերպում է փաստաթղթերի պատրաստման համար ներկայացուցիչների և փորձագետների խորհրդակցություններ, ապահովում է Պետությունների գլուխների խորհրդի և Կառավարությունների ղեկավարների խորհրդի անցկացումը, աջակցում է այլ մարմինների աշխատանքին:

Գործադիր քարտուղարությունը զբաղվում է ԱՊՀ գործունեության վարչակազմակերպական հարցերով: Այն գլխավորում է ԱՊՀ *գործադիր քարտուղարը*: Գործադիր քարտուղարության գտնվելու վայրը Մինսկն է:

Տնփեսական դատարանը ԱՊՀ անդամ պետությունների և Համագործակցության ինստիտուտների դիմումներով վեճերի քննության,

ինչպես նաև իրավաբանական բնույթի հարցերը մեկնաբանող մարմին է:

Մարդու իրավունքների հանձնաժողովը, ԱՊՀ կանոնադրության 33-րդ հոդվածի համաձայն, մարդու իրավունքների գծով ԱՊՀ շրջանակներում անդամ պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումը վերահսկող խորհրդատվական մարմին է: Այն բաղկացած է պետությունների ներկայացուցիչներից:

ԱՊՀ մշտապես գործող մարմինների մեծամասնության (համակարգող խորհրդատվական կոմիտե, գործադիր քարտուղարություն, տնտեսական դատարան, մարդու իրավունքների հանձնաժողով) գտնվելու վայրը Մինսկ քաղաքն է:

Միջխորհրդարանական ասամբլեայի մասին 1995 թ. կոնվենցիան այն բնորոշել է որպես ԱՊՀ միջպետական մարմին:

Միջխորհրդարանական ասամբլեան կազմված է ԱՊՀ խորհրդարանական պատվիրակություններից: Ասամբլեան անց է կացնում միջխորհրդարանական խորհրդակցություններ, մշակում է համատեղ առաջարկություններ՝ խորհրդարանների գործունեության ոլորտում:

Ասամբլեան գտնվում է Սանկտ Պետերբուրգում:

ԳԼՈՒԽ 10. ԱՆՀԱՏԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

§ 32. Բնակչության միջազգային իրավական հիմնահարցերը

Քաղաքացիությունը: Անհատի իրավական կարգավիճակի հիմքը քաղաքացիության իրավահարաբերությունն է: *Քաղաքացիությունը* անձի կայուն իրավական կապն է որոշակի պետության հետ, որը բնութագրում է անձի իրավական կարգավիճակի հիմունքները և արտահայտվում փոխադարձ իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության համակցությամբ:

Իր կարգավիճակի ուժով քաղաքացին օգտվում է օրենքով նախատեսված բոլոր իրավունքներից և կրում համապատասխան պարտավորություններ: Պետությունն ապահովում է քաղաքացու իրավունքները և վերահսկում նրա կողմից իր պարտավորությունների կատարումը: Արտասահմանում գտնվելիս քաղաքացին պարտավոր է պահպանել իր պետության որոշակի օրենքներ, իսկ վերջինը նրան ապահովում է դիվանագիտական պաշտպանություն: Շատ պայմանագրեր նախատեսում են մասնակից պետությունների քաղաքացիներին որոշակի իրավունքների և արտոնությունների տրամադրում:

Քաղաքացիության կարգավորման հարցում վճռորոշ դեր ունի ներքին իրավունքը: Իր գերակայության ուժով պետությունը սահմանում է քաղաքացու իրավունքները, քաղաքացիություն ձեռք բերելու և կորցնելու կարգը: Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիության հիմնահարցերի կարգավորման հիմքը գործող ՀՀ *Սահմանադրության 14-րդ հոդվածն է* և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» 1995 թ. օրենքը: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման կարգը սահմանվում է օրենքներով: Ազգությանը հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով: Հայաստանի Հանրապետության քաղաքացին միաժամանակ չի կարող լինել այլ պետության քաղաքացի»: Հիմնական օրենքի նշված դրույթները մանրամասն կանոնակարգում են ՀՀ քաղաքացիության ձեռքբերման, քաղաքացիությունից դուրս գալու և մի շարք այլ խնդիրներ:

Միևնույն ժամանակ, աճում է միջազգային իրավունքի ազդեցությունը քաղաքացու կարգավիճակի վրա: Դա նախ և առաջ վերաբերում է մարդու իրավունքների և պետությունների իրավասության վերաբերյալ նորմերին: 1948 թ. *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն* առաջին անգամ ամրագրել է ընդհանուր մի սկզբունք՝ «1. յուրաքանչյուր մարդ ունի քաղաքացիության իրավունք, 2. ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր քաղաքացիությունից կամ քաղաքացիությունը փոփոխելու իրավունքից» (հ. 15):

Միջազգային առումով իր քաղաքացիների նկատմամբ պետության գլխավոր պարտականությունը այլ պետությունում գտնվելիս նրանց պաշտպանելն է: Դիվանագիտական պաշտպանությունը կարող է իրականացվել հետևյալ պայմաններում՝

- պետության գործողություններով վնաս է պատճառվել նրա տարածքում գտնվող օտարերկրյա պետության քաղաքացուն,
- այդ գործողությունները հակասում են միջազգային իրավունքին,
- իրավունքների պաշտպանության սովորական միջոցների (դատարան և այլն) օգտագործումը արդյունք չի տվել կամ չի կարող տալ: Վնասը կարող է պատճառվել նաև մասնավոր անձանց գործողություններով: Եթե պետությունը խախտված իրավունքները վերականգնելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել, ապա դրանք կհամարվեն արդեն հենց պետության այն գործողությունները, որոնց մասին նշվեց վերևում (առաջին պայմանը): Օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ ներքին օրենքները չպահպանելը նույնպես հակասում է միջազգային իրավունքին:

Որպես կանոն, դիվանագիտական պաշտպանությունն իրականացնում են դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները: Բացառիկ դեպքերում գործողության մեջ է դրվում արտաքին գործերի գերատեսչությունը և նույնիսկ՝ կառավարությունը:

Գոյություն ունեն քաղաքացիություն ձեռք բերելու երկու հիմնական եղանակներ՝ *սկզբնական*, այսինքն՝ ծնվելիս, և *սծանցյալ*, այսինքն՝ ծնվելուց հետո, որը կոչվում է հպատակագրում (*նաբուրասիզացիա*): Քաղաքացիների հիմնական մասն են կազմում ի ծնե քաղաքացիները: Հայտնի է քաղաքացիություն ձեռք բերելու վերաբեր-

յալ երկու սկզբունք՝ դրանցից մեկը *արյան իրավունքի* սկզբունքն է (jus sanguinis), մյուսը՝ *փարածքի իրավունքի* սկզբունքը (jus soli): Առաջինի համաձայն՝ ծնվածը հետևում է ծնողների քաղաքացիությանը, որտեղ էլ նրանք գտնվեն: Ծնողների տարբեր քաղաքացիության դեպքում հարցը լուծվում է նրանց համաձայնությանը: Եթե ծնողները համաձայնության չեն եկել, ապա ամուսնության մեջ գտնվող ծնողներից ծնված երեխան ստանում է հոր քաղաքացիությունը, իսկ ամուսնության մեջ չգտնվող ծնողներից ծնվածը՝ մոր քաղաքացիությունը: Տարածքի սկզբունքի համաձայն, քաղաքացիությունը ձեռք է բերվում տվյալ պետության տարածքում ծնվելու փաստի ուժով:

«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի համաձայն, քաղաքացիությունը ձեռք է բերվում արյան իրավունքի սկզբունքի հիման վրա, երեխան ձեռք է բերում ծնողների քաղաքացիությունը՝ պնկախ ծննդյան վայրից:

Տարածքի իրավունքի սկզբունքը կիրառվում է այն դեպքերում, երբ ծնողները չունեն ոչ մի պետության քաղաքացիություն կամ եթե ծնողները հայտնի չեն: Այն երեխաների տեղական քաղաքացիության կանխավարկածը, որոնց ծնողները հայտնի չեն, բնորոշ է պետությունների մեծ մասին:

Քաղաքացիությունը կորցնելու հետ կապված հարցերը կարգավորվում են պետությունների ներքին օրենսդրությամբ և տարբեր կերպ են լուծվում: Անձը կարող է կորցնել քաղաքացիությունը սեփական կամքով կամ պետության նախաձեռնությամբ: Վերջին դեպքում խոսում են քաղաքացիությունից զրկելու մասին: Այն կարող է լինել ինքնաբերաբար, այսինքն՝ օրենքի ուժով, որը նախատեսում է, որ որոշակի պայմաններում քաղաքացիությունը դադարում է (օրինակ, այլ քաղաքացիություն ձեռք բերելու, արտասահմանում երկարատև բնակության, օտարերկրյա զինված ուժերում ծառայության անցնելու դեպքերում): Քաղաքացիությունից զրկման այլ ձևը դրսևորվում է պետության հատուկ ակտի, բարձրագույն մարմնի դեկրետի կամ դատարանի դատավճռի ընդունմամբ:

Անքաղաքացիությունը իրավաբանական վիճակ է, որի դեպքում անձը օժտված չէ որևէ պետության քաղաքացիությամբ: Այդպիսի անձինք կոչվում են *ապապրիդներ*: Անձը կարող է նման վիճակում

հայտնվել արդեն ծնվելիս, սակայն քաղաքացիությունը կարող է կորցնել նաև հետագայում:

Ժամանակակից միջազգային իրավունքն ընդհանուր առմամբ բացասաբար է վերաբերվում անքաղաքացիությանը և ուղղված է նման դեպքերի նվազեցմանը: Դրան է նվիրված *Անքաղաքացիության դեպքերի նվազեցման մասին* 1969 թ. կոնվենցիան: Այն պետությանը պարտավորեցնում է քաղաքացիություն շնորհել իր տարածքում ծնված ցանկացած անձի, որն այլապես կդառնա ապատրիդ:

Նշված կոնվենցիան մի շարք նորմեր է պարունակում քաղաքացիությունը կորցնելու վերաբերյալ: Եթե պետության օրենքը նախատեսում է քաղաքացիությունը կորցնելը՝ անձնական կարգավիճակի որևէ փոփոխության արդյունքում (ամուսնություն կամ դրա դադարեցում, ճանաչում կամ որդեգրում), ապա քաղաքացիությունը կորցնելը պայմանավորվում է այլ քաղաքացիության ձեռքբերմամբ:

Քաղաքացին չի կորցնում իր քաղաքացիությունը՝ մեկնելու, արտասահմանում երկարատև բնակության, չգրանցման կամ նման այլ պատճառ, եթե քաղաքացիությունը կորցնելու դեպքում նա կդառնա քաղաքացիություն չունեցող անձ:

1969 թ. կոնվենցիան ամրագրել է ընդհանուր կանոն, որի համաձայն՝ պետությունը անձին չպետք է զրկի քաղաքացիությունից, եթե դրա արդյունքում նա կդառնա քաղաքացիություն չունեցող անձ:

Ընդհանուր առմամբ Կոնվենցիան ուղղված է քաղաքացիության անընդհատության սկզբունքի ապահովմանը, որի համաձայն՝ քաղաքացիությունը կորցնելը թույլատրվում է միայն միաժամանակ նորի ձեռքբերմամբ:

Պետության բաժանման, մեկ պետության տարածքը մեկ այլ պետությանն անցնելիս բնակչության քաղաքացիության մասին հարցը ստանում է միջազգային նշանակություն: Հարցին հատուկ նշանակություն է տալիս այն հանգամանքը, որ նման դեպքերում քաղաքացիության հիմնահարցն ունի զանգվածային բնույթ:

Տարածքի փոխանցումը սովորաբար ուղեկցվում է *օպորացիայով*: Օպորացիան քաղաքացիության ընտրությունն է: Այն կարող է տեղի ունենալ ոչ միայն տարածքն անցնելիս, այլ նաև այլ դեպքերում, օրինակ, կնոջ՝ օտարերկրացու հետ ամուսնանալիս, ծնվելիս երկու քա-

ղաքացիություն ձեռքբերած անձանց՝ չափահասության հասնելիս և այլն:

Բազմաքաղաքացիությունը: Քաղաքացիության մասին ազգային օրենքների միջև տարբերության ուժով մարդն արդեն ծնվելիս կարող է ձեռք բերել երկու և ավելի պետությունների քաղաքացիություն:

Մի քանի պետության քաղաքացիություն ունեցող անձն այդ պետություններից յուրաքանչյուրի կողմից դիտվում է որպես միայն իր քաղաքացի: Դրանից բխում է, որ եթե անձը գտնվում է այն պետություններից որևէ մեկի տարածքում, որոնց քաղաքացիությունը նա ունի, ապա մյուս պետությունները պետք է նրան դիվանագիտական պաշտպանություն ընձեռեն: Երրորդ պետության, այսինքն՝ այն պետության տարածքում գտնվող անձը, որի քաղաքացին չէ նա, մի քանի քաղաքացիություն ունենալու դեպքում դիտվում է որպես դրանցից միայն մեկն ունեցող: Երրորդ պետությունը ղեկավարվում է արդյունավետ քաղաքացիության կանոնով, որի համաձայն՝ հաշվի է առնվում այն պետության քաղաքացիությունը, որտեղ անձը մշտապես բնակվում է: Եթե դա դժվար է որոշել, ապա ճանաչվում է այն պետության քաղաքացիությունը, որի հետ քաղաքացին փաստացի առավելապես կապված է:

Երկքաղաքացիների (բիպատրիդների) համար հատուկ նշանակություն ունի զինապարտության հիմնահարցի լուծումը: Դրան է նվիրված *երկքաղաքացիության որոշ դեպքերում զինապարտության մասին Հասագյի 1930 թ. արչանագրությունը*: Համապատասխան դրույթներ կան նաև *Բազմաքաղաքացիության դեպքերի նվազեցման և զինապարտության մասին 1963 թ. կոնվենցիայում*: Զինվորական ծառայություն անցնելը պարտադիր է միայն սովորական բնակչության կամ այսպես կոչված՝ «արդյունավետ կապի» պետությունում:

Ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավունքն ընդհանրապես բացասաբար է վերաբերվում երկքաղաքացիությանը, քանի որ այն բարդացնում է պետությունների փոխհարաբերությունները: Սակայն որոշ դեպքերում, հատուկ պայմանների ուժով, օրենսդրությունը ճանաչում է բազմաքաղաքացիությունը: Այդպիսին է, օրինակ, Ռուսաստանի, Գերմանիայի և Իսրայելի օրենսդրությունը: Մեզանում միլիոնավոր սփյուռքահայության առկայությամբ է պայ-

մանավորված Հայաստանի Հանրապետության կողմից երկքաղաքացիության ճանաչման նպատակահարմարության մասին տարիներ շարունակ ընթացող բանավեճը:

Օտարերկրացիները: Օտարերկրացի է գտնվելու վայրի պետության քաղաքացի չհանդիսացող և այլ պետության քաղաքացիություն ունեցող անձը: Դրանով է որոշվում նրա իրավական ռեժիմը: Նա միաժամանակ գտնվում է այլ պետության տարածքային և իր քաղաքացիության պետության անձնական իրավասության ներքո: Առավելությունը տրվում է տարածքային իրավասությանը:

Օտարերկրացիների իրավական վիճակը (իրավական ռեժիմը) տվյալ պետության տարածքում նրանց իրավունքների և պարտականությունների համակցությունն է: Տարբերում են օտարերկրացիների իրավական ռեժիմի երեք տեսակներ՝ ազգային ռեժիմ, հատուկ ռեժիմ և առավել բարենպաստման ռեժիմ:

Ազգային ռեժիմը ենթադրում է հարաբերությունների այս կամ այն ոլորտում օտարերկրացիների կարգավիճակի հավասարեցում երկրի քաղաքացիների կարգավիճակի հետ:

Հատուկ ռեժիմը օտարերկրյա քաղաքացիներին որոշակի իրավունքներ ընձեռելը և (կամ) պարտականություններ սահմանելն է: Այսպես, ԱՊՀ անդամ պետությունների քաղաքացիները Ռուսաստանում օգտվում են ՌԴ և նախկին ԽՍՀՄ հանրապետությունների միջև պայմանագրերից բխող բազմաթիվ իրավունքներից:

Առավել բարենպաստման ռեժիմն արտահայտվում է որևէ բնագավառում օտարերկրացիներին այնպիսի իրավունքներ տրամադրելով կամ այնպիսի պարտականություններ սահմանելով, որոնք նախատեսված են այդ երկրում առավել շահավետ դիրքում գտնվող ցանկացած երրորդ պետության քաղաքացիների համար: Այս ռեժիմը, որպես կանոն, սահմանվում է փոխադարձության հիմքով, այդ պետությունների միջև պայմանավորվածության համաձայն:

Սահմանադրությունում հիմնական իրավունքները և ազատությունները ճանաչվում և երաշխավորվում են մարդու համար, անկախ նրա քաղաքացիությունից: Սահմանադրության համապատասխան գլխի հոդվածների մեծամասնությունն սկսվում է «բոլորը հավասար են» կամ «յուրաքանչյուր ոք իրավունք ունի» բառերով: Միայն ա-

ռանձին իրավունքներ են պատկանում միայն քաղաքացիներին, և, հետևաբար, օտարերկրացիները դրանցով օժտված չեն:

Այդպիսի իրավունքների թվին են դասվում՝ Հայաստանի Հանրապետություն անարգել վերադառնալու իրավունքը, հանրահավաքների, ցույցերի, երթերի իրավունքը, անվճար բժշկական օգնության իրավունքը: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող վտարվել Հայաստանի Հանրապետությունից կամ հանձնվել այլ պետության:

Միևնույն ժամանակ, օտարերկրացիները չեն կրում միայն քաղաքացիների վրա դրված մի շարք պարտականություններ, նախ և առաջ՝ զինապարտությունը:

Օտարերկրացու կարևոր իրավունքներից է իր պետության դիվանագիտական պաշտպանության իրավունքը: Այդ սովորությանը մեր հաստատված է Դիվանագիտական հարաբերությունների մասին 1961 թ. Վիեննայի կոնվենցիայով և Հյուսիսատլանտիկ հարաբերությունների մասին 1963 թ. Վիեննայի կոնվենցիայով:

Ապաստանը: Պետության կարևոր ինքնիշխան իրավունքներից է քաղաքական, ռասայական, կրոնական կամ էթնիկական շարժառիթներով հետապանվող անձանց ապաստան տրամադրելու իրավունքը:

Տարածքային ապաստանը հետապնդվող անձին պետության տարածքում ապաստան տրամադրելն է:

Դիվանագիտական ապաստանը օտարերկրյա պետության դիվանագիտական ներկայացուցչության տարածքում ապաստան տրամադրելն է: Դիվանագիտական ապաստանի ինստիտուտը գործում է գլխավորապես Լատինական Ամերիկայի երկրներում:

Ապաստանը տրամադրվում է միայն բացառիկ դեպքերում և միայն անձի անվտանգության ապահովման համար անհրաժեշտ ժամկետով: Ապաստան տրամադրելու մասին տեղեկացվում է այն երկրի արտաքին գործերի նախարարությունը, որի քաղաքացին է համապատասխան անձը:

Պետության կողմից որևէ անձի տրամադրված ապաստանը պետք է հարգվի մյուս բոլոր պետությունների կողմից: Ապաստան ստացած անձը չի կարող հանձնվել և ապաստան տրամադրած պետությունից ստանում է պաշտպանության իրավունք:

Ապաստանի իրավունք ստացած անձն իրավունք չունի կատարել հասարակական անվտանգությանը և ապաստան տրամադրած պետության օրենսդրությանը հակասող գործողություններ:

Ապաստան չի տրամադրվում ընդհանուր քրեական հանցագործություններում մեղադրվող կամ դրանց համար դատապարտված անձանց, ինչպես նաև պետության զինված ուժերից դասալքված անձանց և զինվորական հանցագործներին:

Փախստականները: *Փախստականն* այն անձն է, որը ռասայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբին պատկանելու կամ քաղաքական հայացքների հատկանիշով հետապնդման զոհ դառնալու հիմնավոր մտավախությունների ուժով, գտնվում է իր քաղաքացիության երկրի սահմաններից դուրս և չի կարող կամ չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից:

Փախստականների կարգավիճակի և պետությունների համապատասխան պարտավորությունների հետ կապված հարցերը կարգավորվում են *Փախստականների կարգավիճակի մասին 1951 թ. կոնվենցիայով*: Պետությունները փախստականներին տրամադրում են վկայականներ և պարտավորվում են հեշտացնել նրանց հպատակագրումը (նատուրալիզացիան): Փախստականները պարտավոր են ենթարկվել իրենց գտնվելու վայրի երկրի օրենսդրությանը: Պետությունները չպետք է խտրական միջոցներ ձեռնարկեն փախստականների նկատմամբ ռասայի, կրոնի կամ ծագման երկրի հատկանիշով և պարտավորվում են փախստականներին տրամադրել կարգավիճակ, որից ընդհանրապես օգտվում են օտարերկրացիները: Կոնվենցիան հատուկ ուշադրություն է հատկացնում փախստականների սոցիալական ապահովությանը և կառավարական օժանդակությանը:

§ 33. Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանությունը

Մարդու իրավունքները: *Մարդու իրավունքները* միջազգային իրավունքի ինքնուրույն՝ մարդու իրավունքները և ազատությունները, իր քաղաքացու հանդեպ պետության պարտականությունները կանոնակարգող ճյուղ են, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների ոլորտում պետությունների համագործակցությունը

կարգավորող հանրաճանաչ և հատուկ սկզբունքների և նորմերի համակցություն:

Մարդու իրավունքները ժամանակակից միջազգային իրավունքի գլխավոր ճյուղերից մեկն է, որով կանխորոշվում են այդ իրավունքի մի շարք բնութագրիչ գծեր: Այդ ճյուղը կազմված է մարդու հիմնական իրավունքներն ամրագրած նորմերից և սկզբունքներից, որոնք դրանով իսկ որոշել են միջազգային և ազգային համակարգերում ժողովրդավարության չափորոշիչները:

Միջազգային իրավունքի քննարկվող ճյուղի հիմքում ընկած է մարդու իրավունքները հարգելու՝ ՄԱԿ-ի Կանոնադրությամբ ամրագրված սկզբունքը: Վերջինը պետությունների վրա պատասխանատվություն է դրել՝ մարդու իրավունքների նկատմամբ հարգանք ապահովելու համար: Այն ելնում է նրանից, որ մարդու իրավունքները հարգելու վրա հիմնված միջազգային կարգի հաստատումն ունի կարևոր նշանակություն՝ նրա այլ նպատակներին հասնելու համար:

Ի զարգացումն ՄԱԿ-ի Կանոնադրությամբ ամրագրված սկզբունքի, 1948 թ. ընդունվել է *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը*, որը որոշել է մարդու հիմնական իրավունքների ցանկը և բովանդակությունը: Այս ուղղությամբ հաջորդ կարևորագույն քայլը ՄԱԿ-ի կողմից 1966 թ. միջազգային երկու դաշնագրերի ընդունումն էր (*Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին* և *Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին*):

Բացի այդ, ընդունվել են մարդկանց առանձին կատեգորիաների իրավունքներին նվիրված մեծ թվով կոնվենցիաներ: Հատուկ ուշադրություն է հատկացվում պաշտպանության առանձնակի կարիք ունեցող բնակչության խմբերին, նախ և առաջ՝ կնոջ և երեխայի իրավունքներին: Չգալի թվով կոնվենցիաներ ուղղված են մարդու իրավունքների դեմ հանցագործությունների կանխմանը (ցեղասպանության և ապարտեիդի արգելման մասին կոնվենցիաները, ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, ստրկության արգելման մասին և այլն): Հատուկ համալիր են Աշխատանքի միջազգային կազմակերպության բազմաթիվ կոնվենցիաները:

Միջազգային իրավունքի քննարկվող ճյուղին յուրահատուկ են ունիվերսալության և խտրականության արգելման սկզբունքները: Առաջին սկզբունքի ուժով մարդու իրավունքների մասին նորմերը պար-

տաղիք են բոլոր պետությունների համար և նրանց ամբողջ բնակչության նկատմամբ: Երկրորդի ուժով անիրավաչափ է խտրականությունը որևէ հատկանիշով:

Մարդու իրավունքները հիմնականում անհատական բնույթ ունեն, նրանց սուբյեկտն է առանձին մարդը: Սակայն գոյություն ունեն նաև մարդու կոլեկտիվ իրավունքներ, որոնք պատկանում են անհատների խոշոր խմբերին (ժողովուրդներ, ազգեր, ազգային փոքրամասնություններ, բնիկ ժողովուրդներ):

Ժողովրդի կոլեկտիվ իրավունքներ են նախ և առաջ՝ ինքնորոշման իրավունքը և իր բնական հարստություններն ազատ տնօրինելու իրավունքը:

Լուրջ նշանակություն ունի ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովումը, որոնք չհարգելը բազում հակամարտությունների պատճառ է դարձել: Փոքրամասնություններին պատկանող անձանց պետք է ապահովվեն իրենց ինքնությունը պահպանելու, ազգային մշակույթը զարգացնելու, կրոնին դավանելու, ինչպես նաև մայրենի լեզուն օգտագործելու իրավունքները:

ՄԱԿ-ի Կանոնադրությունում ամրագրված մարդու իրավունքները և ազատությունները հարգելու սկզբունքը մանրամասնեցվել և ամրագրվել է որոշակի միջազգային իրավական նորմերի տեսքով պայմանագրերում և համաձայնագրերում, ինչպիսիք են՝ *Ցեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին 1948 թ. Պարերազմի գոհերի պաշտպանության մասին Ժնևի 1949 թ. կոնվենցիաները*, *Կանանց քաղաքական իրավունքների մասին 1953 թ. կոնվենցիան*, *Ռասայական խտրականության բոլոր չևերի վերացման մասին 1966 թ. միջազգային կոնվենցիան*, *Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966 թ. միջազգային դաշնագիրը*, *Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թ. դաշնագիրը*, *Ապարտեիդի հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին 1973 թ. կոնվենցիան*:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն ամրագրում է մարդկանց հավասարությունը (բոլոր մարդիկ ծնվում են ազատ և իրավահավասար), սեռի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, կրոնի և այլ հատկանիշներով խտրականության արգելքը, յուրաքանչյուրի կյանքի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը,

ստրկության և ստրկավաճառության արգելքը, տանջանքների և դաժան վերաբերմունքի արգելքը, յուրաքանչյուրի իրավասուրյեկտության իրավունքը, օրենքի առաջ բռնողի հավասարությունը, դատարան դիմելու իրավունքը, կամայական ձերբակալումների արգելքը, անմեղության կանխավարկածը և քրեական օրենքի հետադարձ ուժի արգելքը, տեղաշարժման ազատության և բնակության վայրի ընտրության իրավունքը, քաղաքացիության իրավունքը, ամուսնության իրավունքը, գույքի տիրապետելու իրավունքը, համոզմունքների ազատության իրավունքը, խաղաղ հավաքների իրավունքը, հասարակական և պետական գործերի կառավարմանը մասնակցելու իրավունքը, աշխատանքի իրավունքը և մարդու այլ իրավունքներ ու ազատություններ:

Ցեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պայքարի մասին 1948 թ. կոնվենցիան սահմանում է մարդկության դեմ ծանրագույն հանցագործությունը՝ *ցեղասպանությունը*, որի տակ հասկացվում են այս կամ այն ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խումբ, որպես այդպիսին լրիվ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ կատարվող հետևյալ գործողությունները՝ այդպիսի խմբի անդամների սպանությունը, խմբի անդամներին լուրջ մարմնական վնասվածքներ պատճառելը, խմբի համար այնպիսի կենսական պայմանների կանխամտածված ստեղծումը, որոնք հաշվարկված են դրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական բնաջնջման համար, այդպիսի խմբում ծնելիության կանխմանն ուղղված միջոցները, երեխաների հարկադրական փոխանցումը մարդկանց մի խմբից մեկ ուրիշին: Պատժելի է ցեղասպանությունը, այն կատարելու նպատակով դավադրությունը, ցեղասպանության դրդելը, դրան հանցակցելը:

Մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության համակարգում կենտրոնական տեղերից մեկը գրավում է *Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. Եվրոպական կոնվենցիան*: Կոնվենցիայի մասնակից պետությունները (այսինքն՝ Եվրոպայի խորհրդի բոլոր անդամները) պարտավորվել են ստեղծել կոնվենցիայում ամրագրված իրավունքներից օգտվելու հնարավորություն իրենց իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար: Կոնվենցիայում ամրագրված է

կյանքի իրավունքը (հ. 2), խոշտանգումներից ազատությունը (հ. 3), ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը (հ. 4), ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը (հ. 5), անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում գործի արդարացի հրապարակային քննության իրավունքը (հ. 6), անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և թղթակցության նկատմամբ հարգանքի իրավունքը (հ. 8), մտքի, խղճի և դավանանքի ազատությունը (հ. 9), իր կարծիքն արտահայտելու ազատությունը (հ. 10), խաղաղ ժողովների և միությունների ազատությունը (հ. 11) և այլ իրավունքներ ու ազատություններ: Կոնվենցիայով պարտավորությունների պահպանման ապահովման համար կազմավորվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:

Մարդու իրավունքների ապահովման համակարգում կարևոր տեղ ունեն մարդու իրավունքների մասին դաշնագրերը: *Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրն* ու *Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրն* ընդունվել են 1966 թ.:

Երկու դաշնագրերի 1-ին հոդվածներում ամրագրվում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, որի համաձայն՝ նրանք ազատ սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ապահովում իրենց տնտեսական և քաղաքական զարգացումը, ազատ տնօրինում են իրենց բնական պաշարները:

Հարկ է նկատել, որ դաշնագրերի դրույթները տարբեր են իրենց իրավաբանական պարտադիրության աստիճանով: Եթե *Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի* 2-րդ հոդվածի համաձայն մասնակից պետությունները պարտավորվում են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, այդ թվում՝ օրենսդրական, այդ միջազգային պայմանագրում նշված՝ մարդու իրավունքների իրականացման համար, ապա, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի համաձայն, պետությունները պարտավոր են առկա ռեսուրսների շրջանակներում առավելագույն միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու դաշնագրում ճանաչվող իրավունքների և ազատությունների աստիճանական իրականացումը:

Ռասայական խորականության բոլոր ձևերի վերացման մասին 1966 թ. միջազգային կոնվենցիայի համաձայն՝ պետությունները դատապարտել են ռասայական խտրականությունը և պարտավորվել են իրականացնել ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման քաղաքականություն:

Ռասայական խորականության տակ հասկացվում է ռասայի, մաշկի գույնի, ցեղային, ազգային, էթնիկական ծագման հատկանիշների վրա հիմնված ցանկացած տարբերություն, բացառում, սահմանափակում կամ մախապատվություն, որը նպատակ ունի վերացնել կամ նվազեցնել հավասար հիմունքներով մարդու իրավունքների և հիմնական ազատությունների իրականացումը:

Տանջանքների և վերաբերմունքի ու պատժի այլ դաժան անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող տեսակների դեմ 1984 թ. կոնվենցիան արգելում է խոշտանգումները:

Տանջանքը ցանկացած գործողությունն է, որով անձին դիտավորյալ պատճառով է ուժեղ ցավ կամ տառապանք (ֆիզիկական կամ բարոյական) նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություններ ստանալու, նրա կամ երրորդ անձի կողմից կատարված գործողության համար նրան պատժելու, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու համար, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնատար անձի, պաշտոնական կարգավիճակով հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ՝ նրանց գիտությամբ և լռելյայն համաձայնությամբ:

Կանանց և երեխաների իրավունքների միջազգային իրավական պաշտպանությունն իրականացվում է ինչպես մարդու ընդհանուր իրավունքների մասին պայմանագրերի հիման վրա, այնպես էլ բազմաթիվ հատուկ համաձայնագրերին համապատասխան:

Կանանց հանդեպ խորականության բոլոր ձևերի վերացման մասին 1979 թ. կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվել են արգելել կանանց հանդեպ խտրականության ցանկացած ձևերը և այդ նպատակով իրենց սահմանադրություններում և օրենսդրություններում ընդգրկում են տղամարդկանց ու կանանց իրավահավասարության սկզբունքը, սահմանում են կանանց իրավունք-

ների իրավաբանական պաշտպանություն՝ տղամարդկանց հետ հավասար հիմունքներով, ապահովում են, որպեսզի պետական մարմինները և հիմնարկները գործեն կոնվենցիայով պետությունների պարտավորություններին համապատասխան:

Երեխայի իրավունքների մասին 1989 թ. կոնվենցիայի համաձայն, պետությունները պարտավորվել են ապահովել բոլոր երեխաների՝ կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները, անկախ ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից կամ ցանկացած այլ հանգամանքներից, այդ թվում՝ երեխայի և նրա ընտանիքի անդամների հայացքներից և համոզմունքներից:

Ըստ կոնվենցիայի, պետությունները պետք է բոլոր երեխաներին ընձեռեն ինչպես մարդու ընդհանուր իրավունքները (կյանքի, մտքի, խղճի և դավանանքի ազատության, անձնական կյանքի միջամտությունից պաշտպանության իրավունքը և այլն), այնպես էլ իրավունքի տվյալ սուբյեկտի առանձնահատկություններից բխող հատուկ իրավունքներ (անվան և քաղաքացիության ձեռքբերման, իր ծնողներից չբաժանվելու իրավունքները և այլն):

Կոնվենցիան սահմանում է պահանջներ՝ ուղղված որդեգրման և խնամակալության ներպետական ինստիտուտներին, առողջապահության, կրթության համակարգին: Նախատեսված է պաշտպանություն շահագործումից և ցանկացած աշխատանք կատարելուց, որը կարող է վտանգ ներկայացնել երեխայի առողջության համար կամ վնասել նրա լիարժեք զարգացմանը: Այդ նպատակով պետությունները սահմանում են աշխատանքի ընդունման նվազագույն տարիք, որոշում են աշխատանքային օրվա տևողությունը, աշխատանքի պայմանները և օրենքի դրույթների ապահովման միջոցները: Նախատեսված են նաև երաշխիքներ՝ երեխաներին քրեական պատասխանատվության ենթարկելիս:

§ 34. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային պայմանագրերին

Հայաստանի մասնակցությունը մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ՄԱԿ-ի և փարածաշրջանային համաչափագրերին: Չեռք բերելով անկախություն՝ Հայաստանի Հանրապետությունը մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային պայմանագրերին և համաձայնագրերին միանալու, միջազգային կազմակերպություններին անդամակցելու և միջազգային համաժողովներին մասնակցելու աննախադեպ հնարավորություն ստացավ: Բազմիցս հավաստելով մարդու իրավունքների պաշտպանության իր նախանձախնդրությունը (1990թ. Անկախության հռչակագիր, 1995թ. ՀՀ Սահմանադրություն)՝ անցած ավելի քան տասը տարիների ընթացքում Հայաստանը միացել է այն հիմնարար միջազգային ակտերին, որոնք կնքվել են ինչպես համընդհանուր (ունիվերսալ), այնպես էլ տարածաշրջանային մակարդակներով:

1991թ. Հայաստանը միացել է Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրին, որն ամրագրում է մարդու հիմնական քաղաքական և քաղաքացիական իրավունքները և ազատությունները (կյանքի, իրավահավասարության, ազատության և անձեռնմխելիության, մտքի, խղճի և խոսքի ազատության, պետության կառավարմանը մասնակցելու, ընտրելու և ընտրվելու, ազգային փոքրամասնությունների, խոշտանգումները, ստրկությունը, հարկադրական աշխատանքը արգելող և այլն), որոնք պետք է ճանաչվեն և պաշտպանվեն բոլոր մասնակից պետությունների կողմից: Այդ իրավունքների իրացման համար մասնակից պետությունները պարտավորվում են ձեռնարկել իրենց սահմանադրական ընթացակարգերին համապատասխանող բոլոր անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցները:

1993թ. Հայաստանը միացել է Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին դաշնագրին, դրանով ճանաչելով միջազգային չափանիշներին համապատասխանող աշխատանքի, աշխատանքի բարենպաստ և արդարացի պայմանների, սոցիալական

ապահովության, արժանապատիվ կենսամակարդակի, կրթության, առողջության պահպանման և այլ իրավունքները:

1992թ. Հայաստանը միացել է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային, որը ոչ միայն սահմանում է մարդու հիմնական իրավունքներից օգտվելու՝ երեխաների իրավունքը, այլև մասնակից պետություններին պարտավորեցնում է ուշադրություն դարձնել երեխայի շահերի հնարավորին պաշտպանությանը երեխաներին վերաբերող ցանկացած օրենսդրական, վարչական կամ դատական որոշումներ ընդունելիս: Դաշնագիրը մասնակից պետությունների համար նախատեսում է նաև որոշակի միջոցառումների իրականացում, մասնավորապես հատուկ օրենքի ընդունում:

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային Հայաստանը միացավ 1993թ.: Համաձայն այդ միջազգային իրավական փաստաթղթի՝ մասնակից պետությունները պարտավոր են գործունե միջոցներ ձեռնարկել քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում ապահովելու մարդու բոլոր իրավունքներից օգտվելու՝ կանանց հնարավորությունը: Կոնվենցիայում շեշտվում է մասնավորապես կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքի ամրագրման անհրաժեշտությունը ազգային իրավական ակտերում, ինչպես նաև օրենսդրական և այլ միջոցների կիրառումը կանանց հանդեպ խտրականությունն արգելելու նպատակով, ներառյալ համապատասխան պատժամիջոցների սահմանումը:

Նույն թվականին Հայաստանը միացավ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիային: Համաձայն այս միջազգային իրավական փաստաթղթի՝ պետությունները պարտավորվում են ընդունել օրենքներ, որոնք կբացառեն մարդու իրավունքների որևէ խտրականության դրսևորում: Կոնվենցիայում թվարկվող հիմնական քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրագործումը պետք է երաշխավորվի անկախ անձի ռասայից, մաշկի գույնից, ցեղային, ազգային կամ էթնիկ պատկանելությունից:

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի տեսակների դեմ կոնվենցիային Հայաստանը միացել է 1993թ., որով ոչ միայն

հաստատել է խոշտանգումները և մարդու նվաստացումը մերժելու, արգելելու իր պատրաստակամությունը, այլև պարտավորվել է իրողություն դարձնել այդ արգելքը: Մասնավորապես, խոշտանգումները ճանաչել որպես քրեական հանցագործություն և սահմանել համապատասխան պատիժ, ինչպես նաև դրանք բացառելու նպատակով պարբերաբար վերանայել հարցաքննությանը և կալանքին, բանտարկությանը վերաբերող օրենքները, կանոնները, մեթոդները և գործելակերպը:

1991-94թթ. Հայաստանը միացել է նաև Յեդասպանության հանցագործության կանխման և դրա պատժի մասին, Փախստականների կարգավիճակի մասին և ժնեի 1949թ. չորս կոնվենցիաներին ու դրանց լրացուցիչ արձանագրություններին՝ պարտավորվելով հարգել մարդու իրավունքները զինված հակամարտություններում:

Հայաստանն անդամակցում է Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությանը (1991թ.), Միավորված ազգերի կազմակերպությանը (1992թ.), Անկախ պետությունների համագործակցությանը (1992թ.), ինչպես նաև մի շարք տարածաշրջանային համաձայնագրերի, ներառյալ ԵԱՀԿ և ԱՊՀ շրջանակներում: Վերջիններիս հետ համագործակցությունը մեծապես խթանել է երկրի ժողովրդավարացման, մարդկային զարգացման ու միջազգային չափորոշիչների որդեգրման գործընթացները:

Հարկ է նշել, որ գրեթե բոլոր միջազգային փաստաթղթերը նախատեսում են դրանց իրագործումը վերահսկող միջազգային ինստիտուցիոնալ կառուցակարգեր: Այդ մարմինները կոչված են քննարկելու պետությունների պարբերական զեկույցները մարդու իրավունքների ոլորտում իրենց պարտավորությունները կատարելու մասին, ինչպես նաև մարդու իրավունքների խախտման վերաբերյալ դիմումները: Հայաստանի Հանրապետությունը, լինելով նշված միջազգային իրավական պայմանագրերի մասնակից, համապատասխան մարմիններին ներկայացրել է իր ազգային զեկույցները: 2000թ. Հայաստանը ներկայացրել է իր ազգային զեկույցը Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի տեսակների դեմ կոնվենցիայի մասին: Երեսիայի իրավունքների և Ռասայական խտրականության բոլոր ձևերի

վերացման մասին միջազգային կոնվենցիաների վերաբերյալ ազգային պարբերական զեկույցները ներկայացվել են 2001թ.:

Այսպիսով, կարելի է նշել, որ ստեղծվել է ամուր միջազգային իրավական հիմք Հայաստանում մարդու իրավունքների հարգման և իրացման համար:

Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջազգային պայմանագրերը և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը: Որպես մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային պայմանագրերի մասնակից՝ Հայաստանը պարտավորվել է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները այդ միջազգային ակտերում ամրագրված նորմերն իրագործելու համար: Այդ գործունեությունը ծավալվում է երկու՝ օրենսդրական և օրենքի կիրառման կառուցակարգերի բարելավման ուղղությամբ:

Օրենսդրական գործունեությունը մարդու իրավունքների իրականացման անհրաժեշտ պայման է, սակայն ոչ բավարար: Մարդու իրավունքների ոլորտում ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման մյուս կարևոր կողմը միջազգային փաստաթղթերում և ներպետական ակտերում առկա դրույթների փաստացի իրագործումն է: Կոնկրետ պետությունում առկա վիճակով և իրողություններով են պայմանավորված այդ դրույթների իրագործումը կամ ձախողումը, ուստի բացի զուտ իրավականից, վճռական նշանակություն ունեն նաև այլ բնույթի գործոններ. պատմական, քաղաքական, հոգեբանա-մտածելակերպային, աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած Հայաստանի Հանրապետությունը միացել է մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող գրեթե բոլոր կարևորագույն միջազգային պայմանագրերին, սակայն դրանց մեծ մասը դեռևս պաշտոնապես քարգմանված չէ: Միաժամանակ լուրջ թերություններ և բացթողումներ կան օրենսդրության մեջ ՀՀ միջազգային պայմանագրային պարտավորությունների արտացոլման և դրանց կատարումն ապահովող ազգային ինստիտուցիոնալ կառուցակարգերի ստեղծման գործում: ՀՀ օրենքները որոշ դեպքերում պարունակում են դրույթներ, որոնք ուղղակի հակասում են նրա կողմից վավերացված միջազգային պայմանագրերին:

Համաձայն ՀՀ Սահմանադրության, վավերացված միջազգային պայմանագրերը Հայաստանի իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են (հ. 6): Ավելին, եթե այդ պայմանագրերում սահմանված և օրենքներով նախատեսված նորմերը տարբեր են, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը: Մինչև Ազգային ժողովի կողմից պայմանագրերի վավերացումը, ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է սահմանադրական նորմերին տվյալ պայմանագրում ամրագրված պարտավորությունների համապատասխանության հարցը (հ. 100): Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո (հ. 6):

Փաստորեն, միակ իրավական ակտը, որն ինչ-որ իմաստով գերակայություն ունի միջազգային պայմանագրի նկատմամբ, Սահմանադրությունն է, որին հակասելու դեպքում այդ պայմանագրերը չեն կարող վավերացվել: Տեսականորեն սա կարող է լուրջ խնդիրներ առաջացնել: Սակայն անցած տարիների փորձը ցույց տվեց, որ միջազգային պայմանագրերի վավերացումը որևէ խնդիր կամ դժվարություն չի առաջացնում: Այս իրողությունը թերևս կարելի է բացատրել նույն Սահմանադրությամբ, ըստ որի՝ այնտեղ ամրագրված իրավունքների և ազատությունների ցանկը սպառիչ չէ և չի կարող բացառել մարդու այլ հիմնական իրավունքները (հ. 43):

Այսպիսով, Ազգային ժողովի կողմից վավերացված միջազգային պայմանագրերը Հայաստանի իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են և գերակայություն ունեն ընթացիկ օրենսդրության նկատմամբ: Այդ անչափ կարևոր դրույթը հնարավորություն է ընձեռում առժամանակ որոշ չափով չեզոքացնել մարդու իրավունքների ոլորտին վերաբերող՝ Հայաստանի օրենսդրության բացերը և թերությունները:

Ցավոք, միջազգային պայմանագրերի անմիջական ներպետական կիրառումը դեռևս չի կարելի հայաստանյան իրավական մշակույթի օրգանական մասը համարել: Գոյություն ունեցող իրավական ավանդույթը միջազգային պայմանագրերը որպես իրավունքի լիարժեք աղբյուրներ չի ընկալում: Այս իրողությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Նախ՝ բավականաչափ հստակեցված չէ, թե մարդու իրավունքներին վերաբերվող ո՞ր պայմանագրերը կարող են

ուղղակի և անմիջականորեն գործել ներպետական շրջանակներում՝ փոխակերպված չլինելով օրենսդրության մեջ կամ հակասելով դրան: Հիշենք, որ համաձայն խորհրդային իրավական մտածելակերպի, որի կրողներն են դեռևս շատ քաղաքացիներ և իրավաբաններ, միջազգային պայմանագիրը կիրառելու համար հարկ է, որ այն պաշտոնական ճանաչում ստանա ներպետական իրավունքում օրենքի կամ ենթօրենսդրական ակտի տեսքով: Սեկ այլ կարևոր գործոն, որ անվերապահորեն բացասական պետք է գնահատվի, քաղաքացիների և որոշ իրավաբանների անտեղյակությունն է մարդու իրավունքների միջազգային պայմանագրերին: Այս իրավիճակում Հայաստանի դատարանները հազվադեպ են ուղղակիորեն կիրառում միջազգային պայմանագրերը, ուստի և ներկայում դժվար է միջազգային պայմանագրի դրույթների վրա հիմնված որևէ դատական որոշում մատնանշել:

Միջազգային պայմանագրերի կիրառման հիմնահարցի լուծումը, անշուշտ, պայմանավորված է առհասարակ դատական իշխանության բարեփոխումների ընթացքով: Անտարակույս, նոտ ապագայում այս հիմնահարցի լուծման անհրաժեշտությունն ավելի հրատապ կդառնա: Հայաստանի անդամակցությունը Եվրոպայի խորհրդին օրակարգի խնդիր կդարձնի այդ կառույցի շրջանակներում գործող դատարանի ընդունած որոշումների և Հայաստանի օրենսդրության ու հատկապես իրավակիրառման պրակտիկայի համապատասխանեցումը:

ՎՈՒՄ 11. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԽԱՂԱԿ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

§ 35. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման միջոցները

Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներին համապատասխան, բոլոր պետությունները պարտավոր են իրենց միջև ծագող տարաձայնությունները լուծել խաղաղ միջոցներով՝ միջազգային խաղաղությունը և անվտանգությունը չվտանգելու համար:

Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման ինստիտուտը միջոցառումներն է: Դրա նորմերը տեղ են գտել միջազգային անվտանգության, միջազգային կազմակերպությունների և միջազգային իրավունքի մի շարք այլ ճյուղերում: Տվյալ ինստիտուտի հիմնական աղբյուրներն են՝ *Միջազգային վեճերի խաղաղ լուծման մասին 1907 թ. կոնվենցիան*, *Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին 1928 թ. վերանայված ընդհանուր ակտը* (1949 թ. խմբագրությամբ), *ՄԱԿ-ի Կանոնադրությունը*, տարածաշրջանային կազմակերպությունների կանոնադրությունները, *Միջազգային իրավունքի սկզբունքների 1970 թ. հռչակագիրը*, 1975 թ. *ԵԱՀԿ Եզրափակիչ ակտը*:

Տարբերում են միջազգային տարաձայնությունների երկու հիմնական տեսակներ՝ վեճը և իրավիճակը:

Վեճը միջազգային իրավունքի սուբյեկտների փոխադարձ հավակնությունների համակցությունն է նրանց իրավունքներին և շահերին, ինչպես նաև պայմանագրերի մեկնաբանմանը վերաբերող չկարգավորված հարցերով:

Իրավիճակի տակ հասկացվում է սուբյեկտիվ բնույթի հանգամանքների համակցություն, որոնք հանգեցրել են սուբյեկտների միջև տարաձայնությունների՝ անկախ վեճի որոշակի առարկայից: Այսպիսով, իրավիճակի պարզայում դեռ առկա չէ վեճը, սակայն առկա են դրա առաջացման նախադրյալները:

Յուրաքանչյուր վեճ որոշակի վիճելի իրավիճակ է, սակայն ոչ ցանկացած նման իրավիճակն է վերածում վեճի: Այսպիսով, վիճելի իրավիճակի հասկացությունն ավելի լայն է, քան վեճի հասկացությունը. նաև այն պատճառով, որ վիճելի իրավիճակը, առաջանալով

մինչև վեճ ծագելը, կարող է պահպանվել նաև դրա կարգավորումից հետո:

Միջազգային վեճերը և վիճելի իրավիճակները լինում են երկու տեսակ՝

- որոնց շարունակվելը սպառնում է միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը,
- որոնց շարունակվելը չի սպառնում միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը:

Առավել վտանգավոր են առաջին տեսակի միջազգային վեճերը և իրավիճակները, սակայն երկրորդներն էլ կարող են սրվել և նույնիսկ վերածել զինված հակամարտությունների:

Վեճի և իրավիճակի տարբերակումն ունի նաև իրավաբանական նշանակություն: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում վեճը քննելիս վեճին մասնակցող պետությունը պետք է ձեռնպահ մնա քվեարկությունից: Այստեղ գործում է այն սկզբունքը, որի համաձայն՝ ոչ ոք չի կարող լինել դատավոր իր սեփական գործով: Վիճելի իրավիճակը քննելիս քվեարկությունից ձեռնպահ մնալ չի պահանջվում:

Տարբերվում են իրավաբանական և քաղաքական վեճերը: Այս տարբերությունը պայմանական է և հաճախ դժվար է հստակ սահմանազատել: ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ օգտագործվում է «իրավաբանական բնույթի վեճեր» եզրույթը, որոնք, ընդհանուր կանոնի համաձայն, վիճող պետությունների կողմից պետք է փոխանցվեն ՄԱԿ-ի միջազգային դատարան: Դատարանի ստատուտի 36-րդ հոդվածի համաձայն, «իրավական վեճերի» շարքին են դասվում նախ և առաջ այն վեճերը, որոնք վերաբերում են միջազգային պայմանագրերի մեկնաբանմանը, միջազգային իրավունքի ցանկացած այլ հարցի, միջազգային պարտավորությունների խախտման փաստի առկայությանը, նման խախտումների համար հասանելիք փոխհատուցմանը:

Քաղաքական վեճերի շարքին առավել հաճախ դասում են տարածքային վեճերը, պետական սահմանների վերաբերյալ վեճերը: Մինևույն ժամանակ, դրանք առավել վտանգավոր վեճերն են, որոնք նույնպես պետք է լուծվեն խաղաղ միջոցներով:

Միջազգային իրավունքը չի կանխորոշում, թե հատկապես ո՞ր խաղաղ միջոցին պետք է դիմեն պետությունները յուրաքանչյուր որո-

շակի դեպքում: Կախված վեճի բնույթից և գործի հանգամանքներից, նրանք կարող են ազատ ընտրել այս կամ այն միջոցը:

ՄԱԿ-ի Կանոնադրությունում (հ. 33) թվարկվում են այդպիսի խաղաղ միջազգային իրավական միջոցները՝ բանակցություններ, ուսումնասիրություն, միջնորդություն, հաշտեցում, արբիտրաժ, դատական քննություն, տարածաշրջանային մարմիններին և համաձայնություններին կամ կողմերի ընտրությամբ՝ այլ խաղաղ միջոցների դիմելը:

Անմիջական բանակցություններ և խորհրդակցություններ, բարի ծառայություններ, միջնորդություն: Անմիջական բանակցությունների տակ սովորաբար հասկացվում է վիճելի հիմնահարցերի երկկողմ քննարկումը, բազմակողմ հանդիպումներն անվանվում են կոնֆերանսներ:

ՄԱԿ-ի Կոնանադրության 33-րդ հոդվածում զետեղված ցանկից երևում է, որ վեճերի խաղաղ կարգավորման միջոցների շարքում անմիջական բանակցությունները դրված են առաջին տեղում:

Անմիջական բանակցությունները միջազգային վեճերի լուծման գլխավոր միջոցն են և մյուս բոլոր միջոցների հիմքը, քանի որ դրանք նախատեսում են պետությունների անմիջական շփումներ և հնարավորություն են ստեղծում համաձայնության արդյունավետ որոնման համար:

Բանակցությունները կարելի է դասակարգել՝

- ըստ վեճի առարկայի (խաղաղ, քաղաքական, առևտրային և այլն),
- ըստ մասնակիցների քանակի (բազմակողմ և երկկողմ),
- ըստ կողմերի ներկայացուցչության մակարդակի (միջպետական, միջկառավարական, միջգերատեսչական) և այլն:

Բանակցությունները կարող են անցկացվել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր:

Բանակցությունների տարատեսակն են փոխադարձ խորհրդակցությունները: Ինչպես բանակցությունների մյուս ձևերը, դրանք ոչ միայն վեճերի լուծման միջոց են, այլև պետությունների միջև հարաբերությունների բարելավման եղանակ:

Նախապես ձեռք բերված համաձայնությանը համապատասխան, պետությունները պարտավորվում են պարբերաբար կամ որոշակի

հանգամանքներ առաջանալիս խորհրդակցել միմյանց հետ՝ հնարավոր տարածայնությունները հարթելու համար:

Անմիջական բանակցությունների համեմատ միջազգային համաձայնեցման ընթացակարգը օժանդակ բնույթ ունի: Դրա նշանակությունը վիճող պետություններին օժանդակելն է՝ բանակցությունների մեջ մտնելու և վիճելի հարցով համաձայնության գալու համար: Միջազգային համաձայնեցման ընթացակարգին են պատկանում բարի ծառայությունները, միջնորդությունը, քննչական և համաձայնեցման հանձնաժողովները:

Բարի ծառայությունները վեճի լուծման այնպիսի եղանակ են, որի դեպքում վեճին չմասնակցող կողմն իր նախաձեռնությամբ կամ վեճին մասնակցող կողմերի խնդրանքով մտնում է վեճի կարգավորման գործընթաց: Բարի ծառայությունների նպատակը կողմերի միջև շփումներ հաստատելն է կամ վերսկսելը: Ընդ որում, բարի ծառայություններ մատուցող կողմը չի մասնակցում բուն բանակցություններին, նրա նպատակն է հեշտացնել վիճող կողմերի փոխգործունեությունը:

Բարի ծառայությունները կարող են ցուցաբերվել ինչպես երրորդ կողմի նախաձեռնությամբ, այնպես էլ վիճող պետությունների խնդրանքով: Բարի ծառայությունները կարող են լինել կոլեկտիվ, երբ դրանք ցուցաբերում են մի քանի պետություններ և անհատական, երբ դրանք առաջարկում է մի կողմը (պետություն կամ մասնավոր անձ): Ներկայում բարի ծառայությունները հաճախ ցուցաբերվում են նաև միջազգային կազմակերպությունների կողմից: Մակայն ցանկացած պարագայում նրանց առաջարկությունը պարտադիր չէ վիճող պետությունների համար և կարող է մերժվել նրանց կողմից:

Միջնորդության դեպքում վեճին մասնակցող պետություններն ընտրում են երրորդ կողմ, որը մասնակցում է բանակցություններին: Երրորդ կողմ կարող է լինել վեճին չմասնակցող պետությունը կամ պետությունները, մասնավոր անձը, միջազգային կազմակերպությունը: Կոլեկտիվ միջնորդության տարբեր ձևերը շատ տարածված են:

Ի տարբերություն բարի ծառայությունների, միջնորդն ակտիվորեն մասնակցում է վիճող պետությունների բանակցություններին: Ավելին՝ նա կարող է ներկայացնել իր առաջարկությունները, տալ իր որոշումը, համաձայնությունների նախագծեր կազմել վիճող կողմերի համար: Սակայն դրանք բոլորն էլ ունեն միայն խորհրդի նշանակությամբ:

յուն: Այդ խորհրդին հետևելուց հրաժարվելը միջազգային իրավունքի տեսակետից անբարյացակամ գործողություն չի համարվում: Միջնորդի խնդիրը կողմերի դիրքորոշումների համաձայնեցումն է և նրանց հաշտեցումը: Միջնորդը հաշտարար է և ոչ թե դատավոր, ուստի նրա առաջարկությունները պարտադիր չեն վիճող կողմերի համար:

Որպես բանակցությունների ակտիվ մասնակից, միջնորդն օժտված է իրավունքների և պարտականությունների ավելի լայն շրջանակով, նա մասնակցում է բանակցություններին սկզբից մինչև վերջ, հաճախ նույնիսկ դեկավարում է դրանք, կարող է առաջարկություններ անել վիճող կողմերի պահանջները մերժեցնելու նպատակով:

Միջնորդությունների գործառնությունների լայն բնույթը պայմանավորում է միջնորդության երկրորդ կարևոր առանձնահատկությունը՝ միջնորդության իրականացման համար անհրաժեշտ է երկու վիճող կողմերի համաձայնությունը:

Քննչական և համաչայնեցման հանձնաժողովներ: Պետությունների արմատական կամ էական շահերին չառնչվող միջազգային վեճերում, որոնք ծագում են իրավիճակի փաստական հանգամանքների գնահատման տարաձայնություններից, կողմերն իրավասու են հիմնադրել հատուկ միջազգային մարմին՝ *քննչական հանձնաժողով*, համապատասխան հարցերը պարզելու համար:

Քննչական հանձնաժողովները հիմնադրվում են կողմերի միջև հատուկ համաձայնության հիման վրա, որում որոշվում են քննության ենթակա փաստերը, հանձնաժողովի գործունեության կարգը և ժամկետը, նրա լիազորությունները, գտնվելու վայրը, քննության լեզուն և այլն:

Քննությունը հանձնաժողովն իրականացնում է մրցակցային կարգով: Կողմերը սահմանված ժամկետներում հանձնաժողովին շարադրում են փաստեր, ներկայացնում են անհրաժեշտ փաստաթղթեր, ինչպես նաև այն վկաների և փորձագետների ցուցակները, ովքեր պետք է լսվեն: Հանձնաժողովը կարող է կողմերից պահանջել լրացուցիչ նյութեր: Քննության ընթացքում իրականացվում է վկաների հարցաքննություն, ինչի մասին կազմվում է արձանագրություն:

Կողմերի բոլոր բացատրություններն ու ապացույցները ներկայացվելուց և բոլոր վկաներին լսելուց հետո քննությունը հայտարար-

վում է ավարտված, իսկ հանձնաժողովը ներկայացնում է հաշվետվություն: Հանձնաժողովի հաշվետվությունը սահմանափակվում է փաստերի հաստատմամբ և չունի դատարանի կամ արբիտրաժի որոշման ուժ: Կողմերն իրավունք ունեն հանձնաժողովի հաշվետվությունն օգտագործել իրենց հայեցողությամբ:

Միջազգային պրակտիկայում ավելի լայն տարածում են ստացել *համաչայնեցման հանձնաժողովները*: Նրանց կազմավորման և գործունեության մանրամասն կանոնակարգումը ամրագրվել էր 1928 թ. *Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման ընդհանուր ակտում*, որը որոշ ուղղումներով հաստատվել է ՄԱԿ-ի կողմից 1949 թ.: Այդ ակտում նախատեսված է մշտական հանձնաժողովի կամ հատուկ համաձայնեցման հանձնաժողովի կազմավորումը՝ վիճող կողմերից մեկի՝ վիճող մյուս կողմին ուղղված խնդրանքից վեց ամսվա ընթացքում: Մշտական հանձնաժողովը պետք է կազմված լինի հինգ անդամից: Վեճի յուրաքանչյուր կողմ նշանակում է մեկական անդամ, որը կարող է ընտրվել իր քաղաքացիների թվից: Հանձնաժողովի մյուս երեք անդամներն ընտրվում են փոխադարձ համաձայնությամբ, երրորդ տերությունների քաղաքացիների թվից: Նրանց թվից կողմերը նշանակում են հանձնաժողովի նախագահ: Համաձայնեցման հանձնաժողովում գործերը հարուցվում են երկու վիճող կողմերի դիմումով կամ, եթե նման համաձայնություն չկառ նրանցից մեկի դիմումով: Այլ կերպ ասած՝ ընդհանուր ակտը նախատեսում է պարտադիր համաձայնեցման ընթացակարգ և իրավասություն, որոնք պետությունների մեծամասնության համար անընդունելի էին: Ակտը վավերացվել է միայն մի քանի պետության կողմից և ուժի մեջ չի մտել:

Համաձայնեցման ընթացակարգերին դիմելը նախատեսված է բազմաթիվ երկկողմ միջազգային պայմանագրերում:

Համաձայնեցման հանձնաժողովների յուրօրինակ տեսակ է *սահմանային ներկայացուցիչների* ինստիտուտը: Դա համաձայնեցման ընթացակարգ է սահմանային վեճերի և միջադեպերի կարգավորման համար:

Միջազգային արբիտրաժային քննությունը: Միջազգային արբիտրաժը կողմերի համաձայնության վրա հիմնված՝ վեճի քննությունն է առանձին անձի (արբիտրի) կամ անձանց խմբի (արբիտրների) կողմից, որոնց որոշումները պարտադիր են կողմերի համար:

Արբիտր կարող է լինել մեկ անձը կամ մի քանի անձինք (սակայն, միշտ կենտ թվով), ովքեր ընտրում են նախագահ՝ *սուպերարբիտր*: Արբիտրաժին, ինչպես և վեճերի լուծման մյուս խաղաղ միջոցներին դիմելը կամավոր է, սակայն եթե վիճող կողմերը համաձայնվել են իրենց վեճը փոխանցել արբիտրաժ, ապա դրանով իսկ պարտավորվել են ենթարկվել նրա վճռին: Դա արբիտրաժի կարևորագույն տարբերությունն է համաձայնեցման ընթացակարգի՝ վերը քննարկված բոլոր տեսակներից (միջնորդություն, քննչական և համաձայնեցման հանձնաժողովներ):

Համաձայնությունը, որով վիճող կողմերը վեճը փոխանցում են արբիտրաժային քննության, անվանվում է *փոխազիջում* (կոմպրոմիս) կամ *միջնորդ գրառում*: Դրանում նշվում է արբիտրաժային դատարանի կազմավորման կարգը, վեճի առարկան, քննության ընթացակարգը, վեճը լուծելիս՝ արբիտրաժի կողմից կիրառման ենթակա իրավունքի աղբյուրները, վճիռ կայացնելու կարգը և արբիտրաժային վճռին ենթարկվելու՝ կողմերի պարտավորությունը:

Մի շարք բազմակողմ պայմանագրերով միջազգային պայմանագրերի վերաբերյալ՝ դրանց մասնակիցների վեճերի քննության համար արբիտրաժ դիմելը *պարտադիր* է: Այդպիսի պայմանագրերից են *Համաշխարհային փոստային կոնվենցիան, Էլեկտրակապի միջազգային կոնվենցիան, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանոնադրությունը, Ծովային իրավունքի ՄԱԿ-ի 1982 թ. կոնվենցիան*:

Տարբերում են «ad hoc» արբիտրաժը և ինստիտուցիոնալ արբիտրաժը:

«Ad hoc» արբիտրաժը (հատուկ արբիտրաժ) ստեղծվում է որոշակի վեճ քննելու համար: Այդ դեպքում վեճը արբիտրաժի քննությանն է փոխանցվում կողմերի արբիտրաժային համաձայնության հիման վրա: Համաձայնության մեջ նշվում են արբիտրների նշանակման կարգը կամ կոնկրետ անձինք՝ որպես արբիտրներ, վեճի քննության ընթացակարգը, վայրը, լեզուն և այլ հարցեր:

Ինստիտուցիոնալ արբիտրաժը իրականացվում է մշտապես գործող արբիտրաժային մարմնի կողմից: Պետությունները նախօրոք պարտավորվում են արբիտրաժ փոխանցել որևէ պայմանագրի մեկնաբանման վերաբերյալ ծագող բոլոր վեճերը կամ տարաձայնու-

յունները, որոնք կարող են ծագել հետագայում որոշակի վեճերի կապակցությամբ:

Ստորև քննարկվող դատական քննության համեմատ, արբիտրաժայինն ունի մի շարք առավելություններ: Արբիտրաժային վարույթը նվազ ձևական է և ավելի ճկուն, պետություններն ավելի ազատ են դատավորների (արբիտրների) ընտրության հարցում և ամենագլխավորը՝ միջազգային արբիտրաժում վիճող կողմեր կարող են լինել ոչ միայն պետությունները, այլ նաև այլ սուբյեկտներ, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունները:

Միջազգային դատական ընթացակարգ: Միջազգային վեճերի լուծման տեսակներից մեկը *դատական ընթացակարգն* է: Համապատասխան դատական մարմինները հիմնադրվում են պայմանագրերի հիման վրա, ինչպես ունիվերսալ (ՄԱԿ-ի միջազգային դատարան), այնպես էլ տարածաշրջանային (ԵԽ դատարանը, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը, ԱՊՀ տնտեսական դատարանը) բնույթի միջազգային կազմակերպություններին առընթեր:

Միջազգային դատարանի կազմը ձևավորվում է վաղօրոք և կախված չէ կողմերի կամքից: Նրա իրավասությունն ամրագրվում է հիմնադիր փաստաթղթում, դատարաններն ընդունում են նաև կանոնակարգը: Դատարանների որոշումները պարտադիր են կողմերի համար և բողոքարկման ենթակա չեն:

ՄԱԿ-ի միջազգային դատարանը կազմված է 15 դատավորից: Դատավորներն ընտրվում են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի և Անվտանգության խորհրդի կողմից՝ ինը տարի ժամկետով, որպես անհատներ, այսինքն՝ պետությունների ներկայացուցիչներ չեն հանդիսանում: Դատարանի կազմում չեն կարող լինել միևնույն պետության երկու քաղաքացիներ: Դատավորների ամբողջ կազմը պետք է ապահովի աշխարհի հիմնական իրավական համակարգերի ներկայացուցչությունը: Քվորումը կազմում են ինը դատավորներ: Բոլոր որոշումներն ընդունվում են ներկաների ձայերի մեծամասնությամբ: Դատարանի գտնվելու վայրը Հաագան է:

Միջազգային դատարանն իրականացնում է երկու գործառույթ՝ լուծում է պետությունների վեճերը և ՄԱԿ-ի Կանոնադրության համաձայն՝ այդ իրավունքով օժտված միջազգային մարմինների և կազմակերպությունների (Գլխավոր ասամբլեա, Անվտանգության խոր-

հուրդ) հարցումով տալիս է խորհրդատվական եզրակացություններ ցանկացած իրավաբանական հարցերով:

Միջազգային դատարանում քննվող գործերով կողմեր կարող են լինել միայն պետությունները: Դա Դատարանի կարևորագույն տարբերություններից մեկն է միջազգային արբիտրաժից, որտեղ վեճի մասնակիցներ կարող են լինել նաև այլ սուբյեկտները, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունները:

ՄԱԿ-ի միջազգային դատարանը հիմնված է կամընտրային (ֆակուլտատիվ) իրավասության սկզբունքի վրա: Դա նշանակում է, որ ոչ մի պետություն չի կարող հարկադրել մյուս պետությանը՝ իրենց միջև առկա վեճը փոխանցել Միջազգային դատարան: Սակայն եթե վիճող կողմերը համաձայնել են դրան, ապա Միջազգային դատարանի վճիռը պարտադիր է նրանց համար:

Ապագա վեճերը Դատարան փոխանցելու՝ պետությունների համաձայնությունը կարող է տրվել *վաղորոք*՝ հայտարարելով Դատարանի պարտադիր իրավասությունը ճանաչելու մասին:

Դատավարությունը բաղկացած է երկու մասից՝ գրավոր և բանավոր: *Գրավորի* ընթացքում վիճող կողմերը Դատարանին հուշագրեր և հակահուշագրեր են հանձնում, որոնցում շարադրվում են այդ պետությունների դիրքորոշումները, իսկ *բանավորի* ժամանակ դատարանը լսում է պետությունների ներկայացուցիչներին, նրանց փաստաբաններին, վկաներին, փորձագետներին:

Միջազգային դատարանը որոշումները կայացնում է միջազգային իրավունքի հիման վրա՝ օգտագործելով վիճող կողմերի որոշակիորեն ճանաչած կանոնները սահմանող միջազգային կոնվենցիաները ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ միջազգային սովորույթները՝ որպես իրավանորմ ճանաչված համընդհանուր պրակտիկայի ապացույց, իրավունքի ընդհանուր սկզբունքները, դատական որոշումները և տարբեր պետությունների հանրային իրավունքի առավել որակյալ մասնագետների դեկտրինները որպես իրավանորմների հաստատման օժանդակ միջոց:

Կողմերի ցանկության դեպքում դատարանը կարող է վեճը լուծել ոչ թե իրավունքի, այլ արդարության (ex aequo et bono) հիման վրա, ինչպես ասված է Միջազգային դատարանի ստատուտի 38-րդ հոդվածում:

Միջազգային դատարանի վճիռը պարտադիր է միայն վիճող պետությունների համար և միայն կոնկրետ գործով: Այն վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Ինչ վերաբերում է Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացություններին, ապա դրանք միայն իրավաբանական հարցով խորհրդի բնույթ ունեն:

Վեճերի լուծումը միջազգային կազմակերպություններում: Վերջերս միջազգային հարաբերությունների պրակտիկայում լայն տարածում է ստացել միջազգային կազմակերպությունների մարմիններում տարաձայնությունների լուծման եղանակը:

Միավորված ազգերի կազմակերպությունը և նրա մարմինները կարևոր դեր են խաղում վեճերի և այն իրավիճակների կանխարգելման ու վերացման հարցում, որոնք կարող են հանգեցնել միջազգային տարաձայնությունների և առաջացնել միջազգային վեճ, որի շարունակվելը կարող է սպառնալ միջազգային խաղաղության և անվտանգության ապահովմանը:

Վեճի մասնակից պետությունները պետք է հաշվի առնեն ՄԱԿ-ի համապատասխան մարմիններին դիմելու հնարավորությունը՝ տարաձայնությունը կարգավորելու համար կանխարգելիչ միջոցների վերաբերյալ խորհուրդներ կամ երաշխավորություններ ստանալու նպատակով:

Վեճի կողմ ցանկացած պետություն կամ պետություն, որին անմիջականորեն առնչվում է իրավիճակը, վեճի վաղ փուլում պետք է դիմի անվտանգության խորհուրդ:

Անվտանգության խորհուրդը, որպես մի մարմին, որը ՄԱԿ-ի Կանոնադրության համաձայն՝ գլխավոր պատասխանատվությունն է կրում միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման համար, վեճերի խաղաղ լուծման հարցում օժտված է առավել լայն գործառնություններով: Ընդհանրապես ՄԱԿ-ի իրավասությունը և, մասնավորապես, անվտանգության խորհրդինը սահմանափակվում է այն վեճերով, որոնց շարունակվելը կարող է սպառնալ միջազգային խաղաղության և անվտանգության ապահովմանը:

Անվտանգության խորհուրդն իրավասու է վիճող կողմերին հանձնարարել վեճի կարգավորման պատշաճ ընթացակարգ կամ մեթոդներ: Ընդ որում, հաշվի է առնվում, որ իրավաբանական բնույթի վեճե-

րը, ընդհանուր կանոնի համաձայն, պետք է փոխանցվեն Միջազգային դատարան: Եթե կողմերը չկարողանան կարգավորել վեճը խաղաղ միջոցներից մեկի օգնությամբ, ապա անվտանգության խորհուրդը վեճի մասնակիցներին կարող է հանձնարարել ըստ էության վեճը լուծելու կոնկրետ պայմաններ կամ նրանց խնդրանքով տալ երաշխավորություններ՝ այդ վեճը խաղաղ լուծելու նպատակով: Բացի այդ, անվտանգության խորհուրդն իրավունք ունի քննել վեճը կամ վիճելի իրավիճակը՝ պարզելու, թե կարո՞ղ է, արդյոք, դրա շարունակվելը սպառնալ միջազգային խաղաղության և անվտանգության ապահովմանը: Այդպիսով, ՄԱԿ-ի կանոնադրության VI գլխի հիման վրա անվտանգության խորհուրդը լիազորված է իրականացնել հաշտեցման տարրեր գործառույթներ՝ բարի ծառայությունների (հ. 36), միջնորդության (հ. 37), քննչական (հ. 38) և համաձայնեցման հանձնաժողովների միջոցով (հ. 39): Նշված բոլոր դեպքերում նրա ընդունած բանաձևերը երաշխավորություններ են և պարտադիր չեն վիճող պետությունների համար:

Նույնը վերաբերվում է վեճերի խաղաղ կարգավորման վերաբերյալ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից կայացվող բանաձևերին, որը նույնպես կարող է իրականացնել հաշտեցման գործառույթներ, եթե վեճը չի փոխանցվել անվտանգության խորհրդի քննությանը (ՄԱԿ-ի Կանոնադրության հհ. 11, 12, 14 և 35):

Այդ գործառույթները Գլխավոր ասամբլեան և անվտանգության խորհուրդը կարող են վերապահել վեճի կարգավորման համար հատուկ ստեղծված մարմիններին, ինչպես նաև այդ նպատակով օգտագործել տարածաշրջանային մարմինները կամ համաձայնություններ:

ԳԼՈՒԽ 12. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 36. Միջազգային անվտանգության իրավունքի հասկացությունը և հիմնական ինստիտուտները

Միջազգային անվտանգության և խաղաղության ապահովման գործում պետությունների համագործակցության ապահովման օբյեկտիվ անհրաժեշտությունը պայմանավորել է միջազգային իրավունքի նոր ճյուղի՝ միջազգային անվտանգության իրավունքի ձևավորման և զարգացման գործընթացը:

Միջազգային անվտանգության իրավունքը միջազգային հարաբերություններում ռազմական ուժի գործադրումը կանխելու, ինչպես նաև սպառազինությունները սահմանափակելու և կրճատելու նպատակով պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների ռազմաքաղաքական հարաբերությունները կարգավորող սկզբունքների և նորմերի համակարգ է:

Որպես ժամանակակից միջազգային իրավունքի նոր և արագ զարգացող բաղադրյալ, միջազգային անվտանգության իրավունքին բնորոշ է այն, որ միջազգային հարաբերությունների կարգավորման ընթացքում նրա սկզբունքները և նորմերը սերտորեն փոխհյուսվում են միջազգային իրավունքի մյուս բոլոր ճյուղերին, սկզբունքներին և նորմերին՝ այդպիսով կազմավորելով ժամանակակից միջազգային իրավունքի առանձին համալիր ճյուղ:

Միջազգային անվտանգության իրավունքի հիմնական նպատակները և սկզբունքները: Միջազգային անվտանգության իրավունքի հիմքում ընկած են միջազգային իրավունքի հիմնական նպատակները և սկզբունքները, ինչը բնութագրում է իրավունքի այս ճյուղի տեղը միջազգային իրավունքի համակարգում: Միջազգային անվտանգության իրավունքի հիմնարար ակտը ՄԱԿ-ի Կանոնադրությունն է: Դրանում ձևակերպված է գլխավոր նպատակը, ապահովել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը: Նշված են նաև այս նպատակին հասնելու ուղիները. «ընդունել խաղաղությանը սպառնալիքի կանխարգելման և վերացման, ինչպես նաև ազդեցիկ»

յի կամ խաղաղության այլ խախտումների ճնշման արդյունավետ հավաքական միջոցներ», խաղաղ միջոցներով կարգավորել միջազգային վեճերը կամ այլ իրավիճակները, որոնք կարող են հանգեցնել խաղաղության խախտման: Այս առնչությամբ ակներև է երկու հանգամանք, լայն միջազգային համագործակցության անհրաժեշտությունը, ինչպես նաև այն, որ շեշտն այստեղ դրվում է կանխարգելիչ գործունեության, սպառնալիքի կանխման և խաղաղ կարգավորման վրա:

Ինչպես միջազգային իրավունքի ցանկացած ճյուղ, միջազգային անվտանգության իրավունքը հենվում է ժամանակակից միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների վրա, որոնց շարքում առանձնահատուկ տեղ են գրավում ուժ կամ ուժի սպառնալիք չգործադրելու սկզբունքը, վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքը, տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության սկզբունքները, ինչպես նաև մի շարք ճյուղային սկզբունքներ: Իրենց համակցությամբ դրանք միջազգային անվտանգության իրավունքի հիմքն են:

Միջազգային անվտանգության ճյուղային սկզբունքներն ունեն նորմատիվ բնույթ: Դրանց շարքում պետք է առանձնացնել հավասար անվտանգության և պետությունների անվտանգությանը վնաս չհասցնելու սկզբունքները, ինչպես նաև հավասարության և միևնույն անվտանգության սկզբունքը:

Հավասար անվտանգության սկզբունքի հիմնական բաղադրատարրերն են՝

- յուրաքանչյուր պետության (առանց որևէ բացառության) անվտանգության իրավունքը,
- բոլորի համար անվտանգության ապահովումը հավասար չափով,
- ցանկացած բանակցային գործընթացում անվտանգության ոլորտում՝ պայմանավորվող կողմերի (առանց խտրականության) շահերի հավասար հաշվառումը,
- համաձայնության հասնելը՝ շահերի հավասարակշռության հիման վրա:

Պետությունների անվտանգությանը վնաս չհասցնելու սկզբունքի համաձայն՝

• չի կարելի ամրապնդել անվտանգությունը այլոց անվտանգության հաշվին,

• ոչ ոք չի կարող ստանալ միակողմանի առավելություններ անվտանգության ապահովման հարցում,

• անթույլատրելի է որևէ պետության անվտանգությանը վնաս պատճառելը.

Հավասարության և միևնույն անվտանգության սկզբունքի համաձայն՝

• պետությունները և ռազմական խմբավորումները, որոնց միջև առկա է ռազմավարական հավասարակշռություն, պարտավոր են չխախտել այդ հավասարակշռությունը՝ միևնույն ժամանակ ձգտելով սպառնալիքությունների և զինված ուժերի ավելի ցածր մակարդակի:

Միջազգային իրավունքն օժտված է միջազգային անվտանգության ապահովման կոնկրետ միջոցների լայն ընտրությամբ: Դրանց թվին են պատկանում վեճերի կարգավորման խաղաղ միջոցները, հավաքական անվտանգությունը (համընդհանուր և տարածաշրջանային), զինաթափումը, միջազգային լարվածության թուլացման, սպառնալիքությունների մրցավազքի դադարեցման, դրանց սահմանափակման միջոցները, միջուկային պատերազմի և հանկարծակի հարձակման կանխարգելման միջոցները, չմիանալը և չեզոքությունը, ագրեսիայի գործողությունների, խաղաղության խախտման և խաղաղությանը սպառնալիքի խափանման միջոցները (ինքնապաշտպանությունը, միջազգային կազմակերպությունների գործողությունները), առանձին տարածքների չեզոքացումը և ապառազմականացումը, օտարերկրյա ռազմական բազաների վերացումը, երկրագնդի տարբեր շրջաններում խաղաղության գոտիների և միջուկազերծ գոտիների ստեղծումը, պետությունների միջև վստահության ամրապնդման միջոցները:

Զինաթափում և սպառնալիքությունների սահմանափակում: Զինաթափումը պետությունների միջև համաշայնեցված միջոցառումների համալիրն է, որը կոչված է նվազեցնել և, ի վերջո, ի սպառ վերացնել սպառնալիք վարելու նյութական միջոցները:

Զինաթափումը ներկայում հանդես է գալիս որպես միջազգային իրավունքի սկզբունք: Այդ սկզբունքի հիմնական իրավաբանական բովանդակությունն են կազմում նորմատիվ երեք տարրեր՝

1. պետությունների ընդհանուր բնույթի պարտավորություն՝ մշակել գործնական միջոցներ զինաթափման բնագավառում,

2. ծրագրային բնույթի նորմ՝ զինաթափման վերջնական նպատակի հասնելը սպառազինությունների և զինված ուժերի լրիվ վերացման միջոցով,

3. երաշխիքային բնույթի պարտավորություն՝ կատարել զինաթափման բնագավառում գործող պայմանագրերի պահանջները:

Այսօր առկա է զինաթափման և սպառազինությունների կրճատման հիմնահարցի արդյունավետ լուծման եղանակների և մեթոդների, միջազգային իրավական նորմերի մի ամբողջ համալիր: ՄԱԿ-ի Կանոնադրությունը սահմանում է այս հիմնահարցի լուծման կարգը և խնդիրները: ՄԱԿ-ի շրջանակներում զինաթափման հարցերով զբաղվող հիմնական մարմիններն են ՄԱԿ-ի *զինաթափման հանձնաժողովը* (որը պատրաստում է հանձնարարականներ զինաթափման հիմնախնդիրների վերաբերյալ, մշակում է զինաթման վերաբերյալ բանակցությունների ընդհանուր սկզբունքները, հետևում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ զինաթափման հարցերին նվիրված հատուկ նստաշրջանների որոշումների կատարմանը) և ՄԱԿ-ի *Չինաթափման կոնֆերանսը*:

Միջազգային անվտանգության իրավունքի աղբյուրների համալիրում կարևոր տեղ են գրավում խաղաղության ապահովման իրավական ասպեկտները կանոնակարգող փոխկապակցված բազմակողմ և երկկողմ պայմանագրերը:

Չինաթափման հարցերի լուծման տեսակետից առավել կարևոր են խորհրդա-ամերիկյան երկկողմ պայմանագրերը՝ *Հակահրթիռային պաշտպանության համակարգերի սահմանափակման մասին* 1972 թ. մայիսի 26-ի պայմանագիրը և 1974 թ. հուլիսի 3-ի *Լրացուցիչ արջանագրությունը, Ռազմավարական հարչակողական սպառազինությունների սահմանափակման մասին* պայմանագիրը, *Միջին հեռավորության և փոքր հեռավորության հրթիռների վերացման* մասին 1987 թ. դեկտեմբերի 8-ի պայմանագիրը:

Միջուկային զենքի փորձարկումների արգելմանն է նվիրված 1963 թ. օգոստոսի 5-ին ստորագրված՝ *Մթնոլորտում, տիեզերական տարածությունում և ջրի տակ միջուկային զենքի փորձարկումների*

արգելման մասին Մոսկվայի պայմանագիրը (ուժի մեջ է մտել 1963 թ. հոկտեմբերի 10-ին):

Միջուկային զենքի տարածումը կանխելու նպատակով 1968 թ. հուլիսի 1-ին ստորագրվել է *Միջուկային զենքի չտարածման մասին* պայմանագիրը (ուժի մեջ է մտել 1970 թ. մարտի 5-ին):

Պայմանագրով ստանձնվող պարտավորությունները կարող են դասակարգվել երկու խմբի՝

1. միջուկային տերությունների պարտավորություններ (չփոխանցել միջուկային սարքերը ոչ միջուկային պետություններին, չաջակցել սեփական միջուկային զենք ստեղծելու՝ նրանց փորձերին և այլն),

2. ոչ միջուկային պետությունների պարտավորություններ (հրաժարվել միջուկային զենքի սեփական արտադրությունից և այլ պետություններից այն ձեռք բերելուց):

Որոշակի տարածքում ցանկացած ձևով միջուկային զենք տեղադրելն արգելելու միջոցով ստեղծվում են *միջուկազերծ գոյրհներ*:

Միջուկազերծ գոտի է հռչակված տիեզերական տարածությունը: *Տիեզերքի մասին* 1967 թ. հունվարի 27-ի պայմանագրով լրիվ ապառազմականացված են հայտարարվել երկնային մարմինները: Սակայն մնացած տիեզերական տարածության նկատմամբ գործում է միայն այդտեղ միջուկային զենք և զանգվածային ոչնչացման զենքի այլ տեսակներ տեղադրելն արգելող նորմը:

1971 թ. փետրվարի 11-ին կնքվել է *Ծովերի ու օվկիանոսների հստակիս և դրանց ընդերքում միջուկային և զանգվածային ոչնչացման զենքի այլ տեսակների տեղադրման արգելման մասին* պայմանագիրը: 1967 թ. կնքվել է *Լատինական Ամերիկայում միջուկային զենքի արգելման մասին* պայմանագիրը: 1985 թ. Հարավխաղաղօվկիանոսյան ֆորումի 11 անդամներ ստորագրել են *Խաղաղ օվկիանոսի հարավային մասում միջուկազերծ գոյու մասին* պայմանագիրը (Ռարոտոնգի պայմանագիրը): 1995-1996 թվականներին ստեղծվել է ևս երկու միջուկազերծ գոտի՝ Հարավարևելյան Ասիայում (1995 թ. դեկտեմբերի 15-ի *Բանգկոկի պայմանագիրը*) և Աֆրիկայում (1996 թ. սպրիլի 11-ի *Պեյկինաքի պայմանագիրը*), ինչը թույլ տվեց հասնել մի կարևոր սահմանի միջուկային զենքի չտարածման գործընթացում. հաշվի առնելով Անտարկտիդայում, Լատինական Ամերիկայում,

Խաղաղ օվկիանոսի հարավային մասում արդեն գործող գոտիները, միջուկային զենքից ազատ է դառնում համարյա ամբողջ հարավային կիսագունդը, երկրագնդի մակերևույթի գրեթե կեսը:

Իր բովանդակությամբ վերջին երկու պայմանագրերը շատ ընդհանուր գծեր ունեն: Գլխավորն այն է, որ երկուսի հիմքում էլ ընկած է միևնույն հիմնարար սկզբունքը՝ «գոտում միջուկային զենքի լրիվ բացակայությունը», այսինքն՝ ոչ միայն մասնակից պետությունների, այլև օտարերկրյա զենքի:

Քիմիական և կենսաբանական զենքի արգելք է պարունակում 1925 թ. *Շենյան արշանագրությունը*: Սակայն այդ արձանագրությունը վերաբերում է միայն զենքի նշված տեսակների գործադրմանը: 1972 թ. ապրիլի 10-ին ստորագրվել է *Կենսաբանական և իրոքսինային զենքի պաշարների մշակման, արտադրության և կուրակման արգելման և դրանց ոչնչացման մասին* կոնվենցիան: 1990 թ. հունիսին ԱՄՆ և ԽՍՀՄ միջև ձեռք էր բերվել համաձայնություն՝ քիմիական զենքի արտադրության դադարեցման և դրա պաշարների աստիճանական ոչնչացման մասին: 1993 թ. հունվարին Փարիզում ստորագրման համար բացվել էր *Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուրակման և կիրառման արգելման և դրա ոչնչացման մասին* կոնվենցիան, որը նախատեսում է քիմիական զենքի առկա պաշարների ոչնչացում 10 տարվա ընթացքում:

Սովորական սպառազինությունների և զինված ուժերի կրճատման հիմնախնդիրը միշտ գրավում էր պետությունների ուշադրությունը: Վիեննայում երկար տարիների բանակցությունների արդյունքում 1990 թ. նոյեմբերի 19-ին ստորագրված *Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին* պայմանագրի համաձայն, կրճատման են ենթակա հարձակողական հնարավորություններով օժտված սպառազինությունների ցամաքային և օդային տեսակները (տանկերը, զրահապատ մարտական մեքենաները, հրետանային համակարգերը, մարտական ինքնաթիռները, հարվածային ուղղաթիռները):

Կրճատման նկատմամբ սահմանվել է վերահսկողություն, որի կարևորագույն ձևը տեղերում ստուգայցն է (առանց ստուգվող երկրի հրաժարվելու իրավունքի):

Վարահության ամրապնդման միջոցներ: Վստահության ամրապնդման միջոցները, որպես միջազգային անվտանգության իրա-

վունքի ինստիտուտ, փոխըմբռնման հասնելու, հանկարծակի հարձակման կամ չսանկցիավորված հակամարտության կանխարգելման, ինչպես նաև զինաթափման գործընթացի ապահովման նպատակով տեղեկատվական և վերահսկողական բնույթի միջոցների սահմանման միջոցով պետությունների ռազմական գործունեությունը կանոնակարգող նորմերի համակցություն են:

Վստահության ամրապնդման ինստիտուտը նախատեսում է այնպիսի միջոցներ, ինչպիսիք են ծանուցումը (ցամաքային զորքերի խոշոր զորավարժությունների մասին այլ պետություններին նախնական տեղեկացումը), դիտարկումը (զորավարժություններին ներկա լինելու համար դիտորդների փոխանակումը), վերահսկողական գործունեությունը, տեղեկատվությունը, համապատասխան մակարդակով աշխույժ շփումները (այցելություններ ռազմական բազաներ, զինվորական ղեկավարության ներկայացուցիչների այցելություններ զինվորական հաստատություններ, փոխանակումներ, ուսումնական պարապմունքների այցելություններ, հրամանատարների և հրամանատարական կազմի սպաների փոխանակումներ):

Վստահության ամրապնդման միջոցների ինստիտուտն անխզելիորեն կապված է *միջազգային վերահսկողության* ինստիտուտի հետ: Պայմանագրերում ամրագրված վերահսկողության կառուցակարգերը հանգում են միջազգային կազմակերպությունների շրջանակներում վերահսկողական մարմինների ստեղծմանը, պետությունների կողմից հատուկ վերահսկողական մարմինների հիմնադրմանը, վերահսկողության ազգային տեխնիկական միջոցների օգտագործմանը:

§ 37. Հավաքական անվտանգության համակարգեր

Չնսեմացնելով միջազգային անվտանգության ապահովման միջազգային իրավական բոլոր միջոցների դերը՝ առավել կարևոր պետք է համարել ունիվերսալ և տարածաշրջանային հիմքերի վրա պետությունների հավաքական անվտանգության համակարգի ստեղծումը և պետությունների կողմից զինված հակամարտության կանխմանը և զինաթափմանը հասնելուն ուղղված համատեղ միջոցառումներ:

րի իրականացումը: Հենց այս միջոցներն են մեծ չափով ապահովում բոլոր պետությունների համար հավասար անվտանգությունը և ռազմաքաղաքական հավասարակշռությունը:

Ցանկացած հավաքական անվտանգության համակարգի իրավական հիմքը համապատասխան միջազգային պայմանագիրն է (պայմանագրերը): Այդ պայմանագրի կոնկրետ բովանդակությունը (այդ թվում՝ համատեղ միջոցառումների բնույթն ու ծավալը) որոշվում է դրան մասնակցող պետությունների կողմից (միջազգային իրավունքի տեսանկյունից թույլատրելի սահմաններում): Մակայն հավաքական անվտանգության ցանկացած համակարգի առանցքում ընկած է երեք հիմնաքար՝

1. չգործադրել ուժ կամ ուժի սպառնալիք,
2. միջազգային վեճերը կարգավորել բացառապես խաղաղ միջոցներով,
3. ակտիվորեն համագործակցել միջազգային խաղաղությանը ցանկացած սպառնալիքի վերացման, միջազգային իրավիճակի առողջացման գործում:

Բացի այդ, մասնակից պետությունները կարող են պարտականություններ ստանձնել օգնություն ցուցաբերելու այն բոլոր դեպքերում, երբ հավաքական անվտանգության համակարգի անդամներից մեկը ենթարկվում է երրորդ պետության հարձակմանը (մեկ մասնակցի նկատմամբ կատարված հարձակումը դիտվում է որպես հարձակում՝ հավաքական անվտանգության համակարգի բոլոր մասնակիցների նկատմամբ):

Հավաքական անվտանգությունը, որպես պետությունների համատեղ գործողությունների համակարգ, ընգրկում է հետևյալ տարրերը.

- ժամանակակից միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները,
- խաղաղությանը սպառնալիքների և ագրեսիայի գործողությունների կանխարգելմանն ուղղված հավաքական միջոցները, որոնք ընգրկում են ինչպես խաղաղ, այնպես էլ զինված ուժերի օգտագործմամբ զուգորդվող գործողությունները,
- սպառազինությունների սահմանափակումը և դրանց կրճատմանն ուղղված միջոցները:

Տարբերում են հավաքական անվտանգության համակարգերի երկու հիմնական տեսակ՝ ունիվերսալ (համընդհանուր) և տարածաշրջանային:

Հավաքական անվտանգության ունիվերսալ (համընդհանուր) համակարգեր: Հավաքական անվտանգության ունիվերսալ կազմակերպություն է *Միավորված ազգերի կազմակերպությունը*, որը կոչված է միավորելու բոլոր խաղաղասեր պետություններին, անկախ նրանց պետական և հասարակական կարգից:

Հավաքական անվտանգության համաշխարհային այս կառույցը ստեղծվել էր հետպատերազմյան շրջանում: Նրա հիմնական խնդիրն է «ազատել գալիք սերունդներին պատերազմի աղետներից»: ՄԱԿ-ի Կանոնադրությամբ նախատեսված հավաքական միջոցառումների համակարգն ընդգրկում է՝ պետությունների միջև հարաբերություններում ուժի սպառնալիքի կամ դրա գործադրումն արգելելուն ուղղված միջոցները (հ. 2, կ. 4), միջազգային վեճերի խաղաղ կարգավորմանն ուղղված միջոցները (գլ. VI), զինաթափմանն ուղղված միջոցները (հ.հ. 11, 26, 47), անվտանգության տարածաշրջանային կազմակերպությունների օգտագործմանն ուղղված միջոցները (գլ. VIII), խաղաղության խախտումների խափանմանն ուղղված ժամանակավոր միջոցները (հ. 40), անվտանգության հարկադիր միջոցներն առանց զինված ուժերի օգտագործման (հ. 41) և դրանց օգտագործմամբ (հ. 42):

Միջազգային խաղաղության և անվտանգության պահպանումը կառուցվում է միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների և նորների հիմքի վրա և իրականացվում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ու Անվտանգության խորհրդի կողմից, որոնց իրավասությունն այդ ոլորտում հստակ սահմանազատված է:

Միջազգային անվտանգության համար առաջնահերթ նշանակություն ունի ուժի սպառնալիքի կամ ուժի գործադրման արգելքը: Միայն ՄԱԿ-ի Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում, անվտանգության խորհրդի որոշմամբ, կարող է գործադրվել ուժ կամ ուժի սպառնալիք: Խորհուրդը, արձանագրելով խաղաղության սպառնալիքի կամ խաղաղության խախտման նախ և առաջ՝ ագրեսիայի գործողության առկայությունը, որոշում է ընդունում կիրառել կանոնադրությամբ նախատեսված միջոցները:

Անվտանգության խորհուրդն իրավասու է կիրառել ներագրման ոչ ռազմական միջոցներ՝ պահանջել ՄԱԿ-ի անդամներից լրիվ կամ մասնակի դադարեցնել իրավախախտ պետության հետ իրենց տնտեսական հարաբերությունները, տրանսպորտային հաղորդակցությունները, կապի գծերի աշխատանքը և, վերջապես, դիվանագիտական հարաբերությունները: Եթե խորհուրդը համարի, որ այդպիսի միջոցներն անբավարար են կամ կարող են անբավարար լինել, ապա իրավունք ունի որոշում ընդունել ռազմական ներգործության միջոցներ կիրառելու մասին: Դրանք կարող են ներառել զինված ուժերի ցուցադրումը, շրջափակումը և անդամ պետությունների զինված ուժերի այլ գործողությունները: Վերջիններս պարտավոր են Խորհրդին տրամադրել համապատասխան զինված ուժերը և դրանց սպասարկման միջոցները: Անդամ պետությունները պարտավոր են մշտական պատրաստության վիճակում պահել զինված ուժերի համապատասխան համակազմերը:

Ուժ չգործադրելու ընդհանուր սկզբունքից բացառություն է *ինքնապաշտպանության իրավունքը*: Այդ իրավունքը ցանկացած իրավական համակարգի անհրաժեշտ ինստիտուտ է: Հարձակման դեպքում հասարակության անդամը իրավունք ունի օգտագործել պաշտպանության իր ունեցած բոլոր միջոցները: ՄԱԿ-ի Կանոնադրությունը հաստատեց «զինված հարձակման դեպքում անհատական կամ հավաքական ինքնապաշտպանության անօտարելի իրավունքի» գոյությունը (հ. 51): Անվտանգության խորհուրդը պետք է անհապաղ տեղեկացվի ընդունված միջոցների մասին: Ինքնապաշտպանության իրավունքն իրականացվում է այնքան ժամանակ, մինչև Խորհուրդը կընդունի խաղաղության վերականգնման համար անհրաժեշտ միջոցները:

Հատուկ ուշադրության են արժանի խաղաղության պահպանմանն ուղղված ՄԱԿ-ի գործողությունները (օպերացիաները): Դրանց խնդիրը հետևյալն է՝

- միջադեպերի քննում և հակամարտող կողմերի հետ հաշտեցման նպատակով բանակցությունների անցկացում,
- կրակի դադարեցման մասին պայմանավորվածության պահպանման ստուգում

- աջակցություն օրինականության և իրավակարգի պահպանմանը,
- տեղական բնակչությանը մարդասիրական օգնության տրամադրում,

• իրավիճակի դիտարկում:
Բոլոր դեպքերում խաղաղության պահպանմանն ուղղված ՄԱԿ-ի գործողությունները (օպերացիաները) պետք է համապատասխանեն հետևյալ սկզբունքներին՝

- օպերացիայի իրականացման և դրա մանդատի մասին որոշման ընդունումը անվտանգության խորհրդի կողմից հակամարտության կողմերի համաձայնության պարագայում,
- կողմերի համար ընդունելի անդամ պետությունների կողմից զինվորական համակազմեր տրամադրելը,
- միջազգային հանրության կողմից ֆինանսավորվելը,
- ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի բարձրագույն հրամանատարությունը՝ անվտանգության խորհրդի տրամադրած մանդատից բխող լիազորությունների տրամադրմամբ,
- ներգրավված ուժերի անկողմնակալությունը և ռազմական ուժի գործադրումը նվազագույնի հասցնելը (միայն ինքնապաշտպանության համար):

Հավաքական անվտանգության տարածաշրջանային համակարգեր: Հաշվի առնելով տարածաշրջանների և դրանցում ստեղծվող իրադրությունների բազմազանությունը՝ ՄԱԿ-ի Կանոնադրությունը տարածաշրջանային համաձայնագրերի և մարմինների հատուկ բնորոշում չի տալիս, ինչի շնորհիվ ապահովվում է պետությունների համար տարածաշրջանային մակարդակով անվտանգության համակարգեր ստեղծելու որոշակի ճկունություն: Նման իրավիճակը հիմք է տալիս խոսելու տարածաշրջանային կազմակերպությունների և ՄԱԿ-ի միջև հարաբերությունների ձևավորված մոդելի ու խաղաղության ապահովման գործում աշխատանքի բաժանման մասին:

ՄԱԿ-ի Կանոնադրությունը բովանդակում է հատուկ VIII գլուխը՝ տարածաշրջանային համաձայնագրերի և խաղաղության ու անվտանգության պահպանմանը վերաբերող հարցերի լուծման համար ստեղծվող մարմինների մասին: Ընդ որում, շեշտվում է, որ այդ համաձայնագրերը և մարմինները, ինչպես նաև դրանց գործունեություն-

նր պետք է համապատասխանեն ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին: Անվտանգության խորհուրդը խրախուսում է վեճերի խաղաղ կարգավորումը նման համաձայնագրերի և մարմինների շրջանակներում: Այն օգտագործում է տարածաշրջանային համաձայնագրերը և մարմինները՝ իր ղեկավարությամբ հարկադիր գործողությունների համար: Առանց Խորհրդի համապատասխան որոշման, դրանք չեն կարող ձեռնարկել հարկադիր գործողություններ՝ բացառությամբ այն գործողությունների, որոնք կատարվում են համատեղ ինքնապաշտպանության կարգով: Խորհուրդը պետք է տեղեկացված լինի այն բոլոր գործողությունների մասին, որոնք ձեռնարկվել կամ ձեռնարկվելու են խաղաղության և անվտանգության ապահովման համար:

ՄԱԿ-ի Կանոնադրության 52-րդ հոդվածի համաձայն՝ անվտանգության տարածաշրջանային կազմակերպությունների հավաքական միջոցառումների համակարգում գլխավորներն են պատերազմի կանխարգելման խաղաղ միջոցները, առաջին հերթին՝ տարածաշրջանում ծագող վեճերի խաղաղ կարգավորումը:

Գոյություն ունեն հավաքական անվտանգության տարածաշրջանային մի քանի համակարգեր: Աֆրիկյան մայրցամաքում դրա հիմքերը դրվել էին *Աֆրիկյան միասնության կազմակերպության* հիմնադրմամբ, Մերձավոր և Միջին Արևելքում՝ *Արաբական պեյրությունների լիգայի* ստեղծմամբ: *Ամերիկյան պեյրությունների կազմակերպությունը*, որի կանոնադրությունը ընդունվել էր 1948 թ. Բոզոտայի կոնֆերանսում, ընդգրկում է Հյուսիսային և Հարավային Ամերիկաները: ԱՊԿ հավաքական անվտանգության հարցերին վերաբերող ավելի մանրամասն որոշումները զետեղված են *Փոխադարձ օգնության մասին 1947 թ. պայմանագրում* և *Վեճերի խաղաղ կարգավորման մասին 1948 թ. պայմանագրում*:

Եվրոպայում հավաքական անվտանգության համակարգի հիմքերը դրվել են *Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցությանը* (ԵԱՀԽ): Հելսինկիում ստորագրված *Եզրափակիչ ակտում* (1975 թ.) զետեղված է պետությունների համագործակցության և նրանց փոխհարաբերությունների սկզբունքների համակցությունը, ուրվագծված են կոնկրետ միջոցներ զինաթափման ոլորտում, այդ թվում՝ ռազմական ոլորտում վստահության միջոցները,

նշված են Եվրոպայում անվտանգության ապահովման գործնական քայլերը: Եզրափակիչ ակտի՝ որպես հավաքական անվտանգության եվրոպական համակարգի հիմքի, առանձնահատկությունն այն է, որ դրանում նախատեսված չէ հարկադիր միջոցների գործադրում:

1994 թ. ԵԱՀԽ՝ *Կազմակերպության* (OSCE/ԵԱՀԿ) վերափոխվելուց և դրա կառույցների ձևավորումից հետո խաղաղության և անվտանգության պահպանման կառուցակարգը կրեց որոշ փոփոխություններ և ավելի հստակ ուրվագծեր ունեցավ:

Այստեղ կենտրոնական տեղ է գրավում վեճերի խաղաղ կարգավորման համալիր համակարգը: Այն բաղկացած է երկու մասից՝

1. ընդհանուր միջազգային իրավունքում գործող և ՄԱԿ-ի Կանոնադրության VI գլխում ամրագրված՝ խաղաղ կարգավորման դասական միջոցների օգտագործումը,

2. հատուկ ԵԱՀԽ (ԵԱՀԿ) համար մշակված՝ վեճերի խաղաղ կարգավորման համակարգի կիրառումը, որը կարող է բնութագրվել որպես հաշտարար-արբիտրաժային ընթացակարգ: Կարգավորման առաջին փուլում օգտագործվում է այնպիսի մի ինստիտուտ, ինչպիսին հաշտեցումն է, երբ կողմերը անմիջականորեն շփվում են միմյանց հետ՝ ձգտելով հաշտարար հանձնաժողովների միջնորդությամբ հասնել համաձայնության:

Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ տարածաշրջանային անվտանգության և կայունության ապահովման ԵԱՀԿ մոտեցման առանցքում դրված է «վաղ արձագանքման», հակամարտությունների կանխման հայեցակարգը: Դրան է ուղղված ԵԱՀԿ ամբողջ գործունեությունը:

Վեճերի խաղաղ կարգավորման շրջանակներում լայնորեն օգտագործվում են հատուկ զեկուցողների և փաստերի հաստատման առաքելությունները:

Ճգնաժամային իրավիճակների ծագման դեպքում Նախարարների խորհրդի կամ Ղեկավար խորհրդի որոշմամբ կարող են իրականացվել խաղաղության պահպանման գործողություններ (օպերացիաներ)՝ զինվորական դիտորդներ կամ խաղաղության պահպանման ուժեր ուղարկելու միջոցով: Այդ օպերացիաները խաղաղարար գործողությունների բնույթ ունեն (իրականացվում են հակամարտության բոլոր կողմերի համաձայնությամբ. չեն կարող հարկադիր միջոց-

ներ լինել. զենք կարող է կիրառվել միայն ինքնապաշտպանության համար. իրականացվում է վերահսկողություն՝ կրակի դադարեցման և գորբերի դուրս բերման նկատմամբ. հակամարտող կողմերի միջև ստեղծվում են բուֆերային գոտիներ. մարդասիրական օգնության ստացման ժամանակ իրականացվում են պահպանական գործառույթներ):

ԵԱՀԿ անվտանգության ապահովման գործում ներգրավված են ինչպես ընդհանուր իրավասության մարմիններ (*Պետությունների և կառավարությունների ղեկավարների խորհուրդը, Նախարարների խորհուրդը, Ղեկավար խորհուրդը*), այնպես էլ խաղաղության ապահովման հատուկ կառույցներ, օրինակ, *անվրանգության ֆորումը, հակամարտությունների կանխարգելման կենտրոնը* կամ էլ այդ նպատակով ստեղծվող հատուկ մարմինները: Օրինակ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համար Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը հիմնադրել է *Միևակի միջնորդական խումբը*:

ԱՊՀ մասնակից պետությունները, ԱՊՀ Կանոնադրությանը համապատասխան, պարտականություն են ստանձնել համաձայնեցված քաղաքականություն իրականացնել միջազգային անվտանգության, զինաթափման և սպառազինությունների վերահսկողության ոլորտում և պահպանել ԱՊՀ անդամ պետությունների անվտանգությունը:

ԱՊՀ անդամ պետությունների ռազմաքաղաքական համագործակցության բոլոր կոնկրետ հարցերը կարգավորվում են հատուկ համաձայնագրերով, որոնցից կարևորագույնը Տաշքենդում 1992 թ. մայիսի 15-ին ստորագրված *Հավաքական անվրանգության մասին պայմանագիրն* է: Պայմանագրով նախատեսված է միջպետական հարաբերություններում ուժ կամ ուժի սպառնալիք գործադրելուց ձեռնպահ մնալու պարտավորություն: Մասնակից պետությունները պարտավորվում են իրենց միջև և այլ պետությունների հետ ունեցած բոլոր տարաձայնությունները լուծել խաղաղ միջոցներով (հ. 1): Նրանք պարտավորություն են ստանձնել՝ չմտնել այլ ռազմական միություններ, ինչպես նաև չմասնակցել մասնակից պետության դեմ ուղղված գործողություններին, հարգել միմյանց անկախությունը և

ինքնիշխանությունը, խորհրդակցել միջազգային անվտանգության՝ իրենց շահերը շոշափող բոլոր կարևոր հարցերի շուրջ:

ԱՊՀ հավաքական անվտանգությունը կառուցվում է ՄԱԿ-ի Կանոնադրության նորմերի հիմքի վրա (հավաքական ինքնապաշտպանություն): Դրանից ելնելով՝ պայմանագիրը բովանդակում է նաև ագրեսիայի դեպքում փոխադարձ օգնության համապատասխան կառուցակարգ: Այն ներառում է ռազմական օգնություն ցուցաբերելը, ինչպես նաև փոխադարձ օժանդակությունը: Ագրեսիային դիմագրավելու նպատակով զինված ուժերի օգտագործման մասին որոշումն ընդունվում է բացառապես ԱՊՀ մասնակից պետությունների գլուխների կողմից: Պայմանագիրը զուտ պաշտպանական բնույթ ունի: Այն բաց է դրա նպատակները և սկզբունքները ընդունող բոլոր շահագրգիռ պետությունների միանալու համար:

ԱՊՀ շրջանակներում խաղաղության պահպանման օպերացիայի իրականացման մասին որոշումն ընդունվում է *Պետությունների գլուխների խորհրդի* կողմից՝ հակամարտող բոլոր կողմերի համաձայնությամբ, ինչպես նաև կրակի և թշնամական այլ գործողությունների դադարեցման մասին նրանց համաձայնության հասնելու պայմանով:

ԳԼՈՒԽ 13. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 38. Միջազգային մարդասիրական իրավունքի հասկացությունը և սկզբունքները

Միջազգային մարդասիրական իրավունքի հասկացությունը: Իրավաբանական գրականության մեջ և ՄԱԿ-ի միջազգային փաստաթղթերում լայնորեն կիրառվում է «միջազգային հակամարտությունների իրավունք» անվանումը: Հայտնի է միջազգային իրավունքի տվյալ ճյուղի ևս մեկ անվանում՝ «պատերազմի իրավունք»: «Միջազգային մարդասիրական իրավունք» եզրույթն առաջին անգամ օգտագործվել է անցած դարի 50-ական թվականներին՝ հայտնի շվեյցարացի իրավաբան Ժան Պիկտեի կողմից և համեմատաբար կարճ ժամանակահատվածում լայն տարածում է ստացել:

Միջազգային մարդասիրական իրավունքը ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային հակամարտություններում կիրառվող այն իրավաբանական սկզբունքների և նորմերի ամբողջական համակարգն է, որոնք սահմանում են միջազգային իրավունքի սուբյեկտների փոխադարձ իրավունքները և պարտականությունները՝ զինված պայքարի որոշ միջոցների և մեթոդների արգելման կամ կիրառման սահմանափակման, այդ պայքարի ընթացքում հակամարտության զոհերի պաշտպանության ապահովման կապակցությամբ, և որոնք նախատեսում են պատասխանատվություն՝ այդ սկզբունքները և նորմերը խախտելու համար:

Միջազգային մարդասիրական իրավունքի գործառնությունների մասին խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ ի տարբերություն միջազգային իրավունքի մյուս ճյուղերի, որոնց հիմքը հնարավոր հակամարտություններն առանց ուժային միջոցների գործադրման լուծելու ձգտումն է, միջազգային մարդասիրական իրավունքն ուղղված է բռնության գործադրումը պետությունների միջև փոխհամաձայնեցված որոշակի նորմերի ենթարկելուն:

Պատերազմ վարելու կանոնների կարգավորման առարկա են յուրահատուկ հասարակական հարաբերությունները, որոնք ձևավորվում են զինված հակամարտությունների ընթացքում:

Միջազգային զինված հակամարտությունը զինված բախումն է միջազգային իրավունքի սուբյեկտների՝ պետությունների միջև կամ ազգային-ազատագրական շարժման և պետությունների միջև: Ոչ միջազգային բնույթի զինված հակամարտությունը հակակառավարական կազմակերպված զինված ջոկատների զինված բախումն է կառավարության զինված ուժերի հետ, որը տեղի է ունենում որևէ մեկ պետության շրջանակներում:

Պատերազմ վարելու կանոններով տվյալ հարաբերությունների միջազգային իրավական կարգավորման նշանակությունն անընդմեջ աճում է: Դա բացատրվում է նրանով, որ կանոնները սահմանափակում են պատերազմողներին՝ ռազմական գործողություններ վարելու միջոցների և մեթոդների ընտրության հարցում, կանոնակարգում են քաղաքացիական բնակչության, վիրավորների, հիվանդների և ռազմագերիների դրությունը, արգելում են պատերազմ վարելու բարբարոսական միջոցները (ինչը հատկապես կարևոր է զանգվածային ոչնչացման զենքի տարբեր տեսակների առկայության և զարգացման կապակցությամբ), կանոնակարգում են չեզոք պետությունների դրությունը:

Միջազգային մարդասիրական իրավունքն ընդգրկում է երկու բնագավառ՝

- պատերազմ վարելու եղանակների (զենքի որոշակի տեսակների և ռազմական գործողություններ վարելու որոշակի մեթոդների՝ ներառյալ ռազմական մարտավարությունը) առնչությամբ սահմանափակումների սահմանումը,
- ռազմական գործողություններին անմիջական մասնակցություն չունեցող կամ մասնակցությունը դադարեցրած անձանց պաշտպանությունը:

Միջազգային մարդասիրական իրավունքի՝ սերտորեն փոխկապակցված, սակայն իրավական և կազմակերպական առումով հարաբերականորեն ինքնուրույն այս երկու ուղղություններն ստացել են «Հաագայի իրավունք» և «Ժնևի իրավունք» անվանումները:

«Հաագայի իրավունքը» կամ «պատերազմի իրավունքը» պայմանավորում է ռազմական գործողություններ իրականացնելիս պատերազմող կողմերի իրավունքներն ու պարտականությունները և սահմանափակում է վնաս պատճառելու միջոցների ընտրությունը:

Միջազգային մարդասիրական իրավունքի տվյալ ուղղությունը Հաազայում 1899 և 1907 թթ. անցկացված խաղաղության միջազգային կոնֆերանսների արդյունքն է: Պատերազմ վարելու եղանակների սահմանափակումը հետագա զարգացումն ստացավ Զինված հակամարտության ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954 թ. Հաազայի կոնվենցիայում, Բնական միջավայրի վրա ներգործության միջոցների ռազմական կամ ցանկացած այլ թշնամական օգտագործման արգելման մասին 1976 թ. կոնվենցիայում, Սովորական զենքի որոշակի տեսակների, որոնք կարող են համարվել չափազանց մեծ վնասվածքներ հասցնող կամ ոչ ընտրական գործողություն ունեցող, գործադրման արգելման կամ սահմանափակման մասին 1980 թ. կոնվենցիայում՝ կից արձանագրություններով, Քիմիական զենքի արտադրության, պահպանման և պաշարների կուտակման արգելման և դրա ոչնչացման մասին 1993 թ. կոնվենցիայում, Հակահետևակային ականների կիրառման, պաշարների կուտակման, արտադրության և փոխանցման արգելման և դրանց ոչնչացման մասին 1997 թ. կոնվենցիայում:

Այդպիսով, տեսանելի են դասական «Հաազայի իրավունքի» բովանդակության հետագա զարգացման միտումները: Ավելին, նկատվում է միջազգային իրավունքի երկու ճյուղերի՝ միջազգային մարդասիրական իրավունքի և միջազգային անվտանգության իրավունքի փոխներթափանցում: Սակայն առկա են նաև որոշ տարբերություններ նախ և առաջ դրանց էության և նպատակների միջև: Եթե առաջինը քննարկում է բացառապես ռազմական հակամարտություններում զենք գործադրելուն առնչվող հարցերը, ապա երկրորդը ձգտում է սահմանափակել, վերահսկել և կարգավորել զենքի արտադրությունը, կուտակումը և փոխանցումը՝ ընդհուպ մինչև դրա լրիվ ոչնչացումը:

«Ժնևի իրավունքը» կամ բուն մարդասիրական իրավունքը պաշտպանում է շարքից դուրս եկած զինվորականների և մարտական գործողություններին չմասնակցող անձանց շահերը:

«Ժնևի իրավունքի» իրավական հիմքը Պայտերսզմի գոհերի պաշտպանության մասին Ժնևի 1949 թ. չորս կոնվենցիաներն են և դրանց 1977 թ. երկու լրացուցիչ արձանագրությունները, որոնք զինված հակամարտության ժամանակ մարդու պաշտպանությանն ուղղ-

ված կանոնների համակարգ են և, ի տարբերություն «Հաազայի իրավունքի», չեն ընձեռում պետություններին որևէ իրավունքներ՝ ի վնաս անհատի: Այդպիսով, միջազգային իրավունքում մարդու անձի, նրա իրավունքների մարդասիրության սկզբունքների գերակայության դարաշրջանի սկիզբ է դրվել:

Միջազգային մարդասիրական իրավունքի զարգացումը հանգեցրել է նրան, որ 1977 թ. լրացուցիչ արձանագրություններում մտցվել էին կոմբատանտների վարքագծի վերաբերյալ (այդ թվում՝ քաղաքացիական բնակչության հանդեպ) դրույթներ, որոնք նախկինում ավանդաբար վերաբերում էին «Հաազայի իրավունքին»:

Միջազգային մարդասիրական իրավունքի սուբյեկտներն են ինքնիշխան պետությունները, իրենց ազատության և անկախության համար պայքարող ազգերը և ժողովուրդները, որոշ միջազգային միջկառավարական կազմակերպություններ:

Միջազգային մարդասիրական իրավունքի դրույթների իրացման համակարգում առանձնահատուկ տեղ ունի *Կարմիր խաչի միջազգային կոմիտեն*: ԿԽՄԿ առանձնահատկությունը, որով նա տարբերվում է միջազգային հարաբերություններին մասնակցող մյուս բոլոր մարմիններից և ինստիտուտներից, այն է, որ տվյալ կազմակերպությունը սկզբնապես ստեղծվել էր Շվեյցարիայի քաղաքացիների կողմից, սակայն հետագայում, պետությունների կամքով, Ժնևի կոնվենցիաների դրույթների ուժով վեր է ածվել ինստիտուտի, որն օժտված է միջազգային միջկառավարական կազմակերպությանը հատուկ իրավասությամբ:

Միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքները: Միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքների կայացումը և իրավաբանական ամրագրումը օբյեկտիվ անհրաժեշտություն են, որը պայմանավորված է մի կողմից ռազմատեխնիկական ոլորտի, մյուս կողմից միջազգային իրավունքի գիտության փոփոխություններով: Միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքները և նորմերը կոչված են դառնալու իրավական պատմեշ՝ կամայականության և զինված հակամարտության ընթացքում ծագող հիմնախնդիրների դեմ, քանի որ դրանք պատերազմող կողմերի վարքագծի հիմնարար կանոններ են:

Պետությունները նույնպես պետք է հետևեն, որպեսզի իրենց ներքին օրենսդրությունը համապատասխանի միջազգային մարդասիրական իրավունքի որոշակի նորմերին և սկզբունքներին: Եթե ներպետական նորմերը հակասում են զինված հակամարտությունների իրավունքի սկզբունքներին և նորմերին, ապա դրանք ընդունած պետությունը պետք է վերացնի այդ հակասությունը և պատասխանատվություն կրի դրանց խախտման դեպքում:

Միջազգային մարդասիրական իրավունքի մարդասիրության սկզբունքն արգելում է ռազմական այնպիսի բռնության գործադրումը, որն անհրաժեշտ չէ պատերազմ վարելու նպատակների համար:

Մարդասիրության սկզբունքը իրավանորմերի տվյալ համակարգի ամենաընդհանրացված սկզբունքն է: Մյուս բոլոր սկզբունքները, կարծես, կազմում են դրա առանձին եզրերը և դրա որոշակիացումը և շարունակությունն են:

Միջազգային մարդասիրական իրավունքի հաջորդ սկզբունքը խորականության անթույլատրելիությունն է, ըստ որի՝ բոլոր դեպքերում և անկախ զինված հակամարտության բնույթից ու ծագումից, այն անհատներին, ովքեր օգտվում են մարդասիրական կոնվենցիաների պաշտպանությունից, պետք է վերաբերվել առանց որևէ խտրականության՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, դավանանքից, սեռից, գույքային դրությունից:

Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի և սկզբունքների խախտման համար պատասխանատվության սկզբունքը ներառում է պետությունների միջազգային իրավական պատասխանատվությունը և ֆիզիկական անձանց պատասխանատվությունը: Այդ սկզբունքը պատերազմի օրենքների և սովորույթների գոյության տրամաբանական հետևանքն է և հիմնված է միջազգային իրավական պահանջները չպահպանելու համար զինված հակամարտությունների մասնակիցների պատասխանատվությունը սահմանող մի շարք կոնկրետ նորմերի վրա:

Չինված պայքարի միջոցների ընդիրության հարցում պատերազմողների սահմանափակման սկզբունքը սահմանում է, որ զինված հակամարտության դեպքում պատերազմ վարելու միջոցների և մեթոդների ընտրության՝ հակամարտության մեջ գտնվող կողմերի իրավունքն անսահմանափակ չէ: Նշված սկզբունքի բովանդակությունը

բացահայտվում է գենքի որոշակի տեսակների գործադրումն արգելող ընդհանուր և հատուկ նորմերում: Հայտնի են այն նորմերը, որոնք ներառված են միջազգային պայմանագրերում և արգելում են գենքի որոշակի տեսակներ: Ընդհանուր նորմերը պատերազմողներին պարտավորեցնում են չկիրառել այնպիսի գենք, որն ունի ոչ ընտրական գործողություն ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական օբյեկտների դեմ, պատճառում է ավելորդ վնասվածքներ կամ տառապանքներ:

Շրջակա միջավայրի պաշտպանության սկզբունքի համաձայն՝ մարտական գործողությունների ժամանակ պետք է հոգ տանել լայնածավալ, երկարաժամկետ և լուրջ վնասից բնական միջավայրի պաշտպանության համար: Այդպիսի պաշտպանությունը ընդգրկում է պատերազմ վարելու այնպիսի մեթոդների և միջոցների արգելումը, որոնք նպատակ ունեն պատճառել կամ, ինչպես կարելի է ակնկալել, վնաս կպատճառեն բնական միջավայրին և դրանով իսկ՝ բնակչության առողջությանը կամ կյանքին:

Իրավունքների պաշտպանության սկզբունքի համաձայն՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում պետությունը պետք է ապահովի իր իշխանության ներքո հայտնված անձանց պաշտպանությունը:

Այս սկզբունքը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝

- գերին գտնվում է ոչ թե իրեն գերած գորքերի, այլ այն պետության իշխանության ներքո, որին ծառայում են այդ գորքերը,
- պետությունը պատասխանատվություն է կրում իր կողմից գերի վերցված անձանց համար,
- ռազմագերիները պետք է ապահովվեն միջազգային պաշտպանությամբ:

Մարդկան գործողություններին անմիջական մասնակցությունը դադարեցրած անձանց (վիրավորներ, հիվանդներ, ռազմագերիներ, բանազնացներ և այլն) անձեռնմխելիության սկզբունքի համաձայն՝

- սպանել կարելի է միայն այն զինվորին, որն ինքն է սպանելուն պատրաստ: Մարտի դաշտում ընկածը անձեռնմխելի է, ինչպես և գերի հանձնվող հակառակորդը՝ նա իր կյանքի պահպանման իրավունք ունի,

• յուրաքանչյուր ոք, այդ թվում և հակառակորդը, ունի իր կյանքի նկատմամբ հարգանքի, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիութ- յան, իր անձի նկատմամբ հարգանքի իրավունք:

Նշված սկզբունքը սերտորեն կապված է ոչ կոմքարաներների ան- ջեռնմխելիության հետ, ըստ այդմ՝ իր զինված ուժերին օգնություն ցուցաբերող, սակայն անմիջականորեն մարտական գործողություն- ներին չմասնակցող կազմի (բուժական անձնակազմ, հոգևորակա- նություն և այլն) նկատմամբ չի կարող կիրառվել զենք, և նա պետք է օգտվի հակառակորդի հարգանքից և հովանավորությունից բոլոր դեպքերում, բացառությամբ մարտական գործողություններին անմի- ջական մասնակցության դեպքերի:

Ժամանակակից միջազգային իրավունքում ձևավորվել է չհար- ջակվելու հիմնարար սկզբունքը, ըստ որի՝ քաղաքացիական բնակ- չությունը, որպես այդպիսին, ինչպես նաև առանձին քաղաքացիա- կան անձինք չպետք է լինեն հարձակման օբյեկտ՝ նույնիսկ ռեպրե- սալիաների կարգով:

Ըստ օբյեկտների սահմանափակումը (ratione loci)՝ միջազգային մարդասիրական իրավունքի՝ երկար պատմություն ունեցող և ճյուղի բազմաթիվ աղբյուրներում ամրագրված սկզբունքներից մեկն է: Այս սկզբունքը ենթադրում է, որ

- հարձակումները պետք է խիստ սահմանափակվեն ռազմական օբյեկտներով,
- արգելվում է հարձակումը չպաշտպանվող տեղանքների նկատ- մամբ,
- արգելվում է որևէ թշնամական գործողություն՝ ուղղված այն շեն- քերին, որտեղ իրականացվում են գիտական հետազոտություններ կամ տեղակայված են բարեգործական հիմնարկներ, նույնը և՛ պատ- մական հուշարձանների և արվեստի ստեղծագործությունների դեպքում
- արգելվում է հարձակումը սարքերի և կառույցների նկատմամբ, եթե այն կարող է առաջացնել քաղաքացիական բնակչության համար վտանգավոր ուժերի բացթողում,
- քաղաքացիական բնակչությունը չի կարող օգտագործվել ռազ- մական օբյեկտները հարձակումից պաշտպանելու համար:

§ 39. Պատերազմ վարելու միջազգային իրավական կարգավորումը

18.

Պատերազմի սկզբի իրավական հետևանքները: Ռազմական գործողություններ սկսելու մասին 1907 թ. Հաագայի III կոնվենցիան սահմանում է, որ պետությունների միջև ռազմական գործողություննե- րը չպետք է սկսվեն առանց նախնական և աներկիմաստ նախազու- շացման, որը կարող է ունենալ կա՛մ պատերազմի պատճառաբան- ված հայտարարման, կա՛մ պատերազմի պայմանական հայտարար- մամբ վերջնագրի ձև: Այդ նորմը շարունակում է գործել նաև այսօր: Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ, ըստ ՄԱԿ-ի Գլխա- վոր ասամբլեայի 1974 թ. ընդունած ագրեսիայի բնորոշման, ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի համաձայն, ինքնապաշտպանու- թյուն չհանդիսացող պատերազմ հայտարարելու փաստը չի օրինակա- նացնում հակաիրավական պատերազմը, այլ ագրեսիայի գործողու- թյուն է: Պատերազմ հայտարարելու փաստն ինքնին դառնում է մի- ջազգային հանցագործություն:

Պատերազմ հայտարարելը յուրաքանչյուր պետության իշխանու- թյան բարձրագույն մարմինների իրավասությունն է:

Պատերազմ հայտարարելը, նույնիսկ եթե այն չի ուղեկցվում մար- տական գործողություններով, նշանավորում է պատերազմական վի- ճակի իրավաբանական սկիզբը: Միևնույն ժամանակ, պետություննե- րի միջև ռազմական գործողությունների փաստական սկիզբը միշտ չէ, որ կարող է բերել պատերազմական վիճակի:

Պատերազմի սկիզբը նշանակում է պատերազմող պետություննե- րի խաղաղ հարաբերությունների ավարտ, ինչը հանգեցնում է դիվա- նագիտական և, որպես կանոն, հյուպատոսական հարաբերություն- ների խզման: Դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուց- չությունների անձնակազմն իրավասու է լքել թշնամական պետու- թյան տարածքը: Ընդ որում, 1961 թ. Վիեննայի կոնվենցիայի համա- ձայն, նստավայր պետությունը արտոնություններից և անձեռնմխե- լիություններից օգտվող անձանց հնարավորին չափ արագ մեկնելու համար պարտավոր է ցուցաբերել անհրաժեշտ օժանդակություն և, անհրաժեշտության դեպքում, նրանց փոխադրամիջոցներ տրամադ- րել:

Պատերազմի սկիզբը ազդում է պատերազմող պետություններին պարտավորեցնող միջազգային պայմանագրերի գործողության վրա: Խաղաղ ժամանակի համար նախատեսված քաղաքական, տնտեսական և այլ պայմանագրերի գործողությունը դադարում է: Ռազմական գործողություններ սկսելու հետ մեկտեղ տեղի է ունենում պատերազմ վարելու կանոնների պահանջների փաստացի իրականացում:

Պետության տարածքում գտնվող հակառակորդ կողմի քաղաքացիների նկատմամբ կիրառվում են տարատեսակ սահմանափակումներ: Այդ անձինք կարող են հարկադրվել պատերազմի ժամանակամիջոցում որոշակի շրջանում բնակվել:

Անմիջականորեն հակառակորդ պետությանը պատկանող գույքը բռնագրավվում է (բացառությամբ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների գույքի): Հակառակորդ պետության քաղաքացիների գույքը սկզբունքորեն անձեռնմխելի է:

Ռազմական գործողությունները ծավալվում են որոշակի տարածքային սահմաններում, որոնք անվանվում են *պայտերազմի քայտերաքեմ*, որի տակ հասկացվում է պատերազմողների գործողությունների ամբողջ տարածքը (ցամաքային, ծովային և օդային), որում նրանք կարող են ռազմական գործողություններ վարել:

Չեզոքությունը: *Չեզոքությունը* ռազմական գործողությունները կարգավորող իրավունքի հնագույն ինստիտուտներից է: Չեզոքության տակ հասկացվում է զինված հակամարտությանը չմասնակցելը և պատերազմող կողմերին օգնություն չցուցաբերելը:

Այստեղ քննարկման հիմնական առարկան կլինի ոչ թե *մշտական* չեզոքությունը, որը շատ առումներով քաղաքական երևույթ է, այլ չեզոքությունը զինված հակամարտության ժամանակ:

Չեզոքության կանոնները ենթակա են կիրառման այն պահից, երբ զինված հակամարտությունը հասնում է այն մակարդակին, որի պայմաններում նշանակություն է ստանում երրորդ պետությունների դիրքորոշումը: Ոչ միջազգային հակամարտությունների նկատմամբ չեզոքություն գոյություն չունի, քանի որ այստեղ գործում է ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ մարդասիրական օգնությունը՝ հիվանդներին և վիրավորներին կամ էլ խաղաղ բնակչությանը երբեք միջամտություն չէ հակամարտությանը: Հենց այդ դրույթն է հնարավորություն տալիս օգնել զինված հա-

կամարտության հետևանքներից տուժող քաղաքացիական բնակչությանը, հեշտացնում է բուժական անձնակազմի, ԿԽՄԿ-ի ներկայացուցիչների գործունեությունը:

Չեզոք պետության կարգավիճակը բավականաչափ ճշգրիտ է բերորշված 1907 թ. հոկտեմբերի 18-ին Հաագայում ընդունված՝ *Ցամաքային պայտերազմի դեպքում չեզոք տերությունների իրավունքների և պայտականությունների մասին* և *Ծովային պայտերազմի դեպքում չեզոք տերությունների իրավունքների և պայտականությունների մասին* կոնվենցիաներով, ինչպես նաև *Ծովային պայտերազմի իրավունքի մասին* 1909 թ. Լոնդոնի հռչակագրով:

Չեզոք պետության հիմնական պարտականությունը պատերազմող կողմերին ցանկացած օգնություն ցուցաբերելուց ձեռնպահ մնալն է, նրանց նկատմամբ հավասար վերաբերմունք պահպանելը:

Չեզոք տարածքն անձեռնմխելի է: Այն չի կարող լինել ռազմական գործողությունների թատերաբեմ կամ հարձակման օբյեկտ: Չեզոք պետությունն իրավունք ունի դիմագրավել իր չեզոքության նկատմամբ ռոնձգություններին իր զինված ուժերով:

Պատերազմող պետություններին արգելվում է չեզոք պետության տարածքով անցկացնել զորքեր և ռազմական տրանսպորտ: Եթե չեզոք պետության տարածքում հայտնվեն պատերազմող տերության զորքեր, ապա նա պարտավոր է ներկայել դրանք, սակայն կարող է թույլատրել իր տարածքով փոխադրել պատերազմող կողմերի վիրավորներին և հիվանդներին:

Չեզոք պետությունն իրավունք չունի պատերազմող կողմերին օգնել զենքով և ռազմական այլ նյութերով: Այնուամենայնիվ, նա պարտավոր չէ դադարեցնել առևտուրը պատերազմող կողմերի հետ, այդ թվում՝ ռազմական նյութերի առևտուրը:

Չեզոք պետությունը պարտավոր է թույլ չտալ իր տարածքում հավաքագրման կետերի բացում և ջոկատների կազմավորում՝ պատերազմող կողմերի օգտին: Մինչույն ժամանակ, չեզոք պետության քաղաքացիները կարող են որպես կամավորականներ մտնել պատերազմող կողմերից մեկի բանակ, սակայն այդ դեպքում նրանք կորցնում են չեզոք անձանց կարգավիճակը:

Պատերազմող պետության տարածքում գտնվող չեզոք պետության քաղաքացիները չեն օգտվում տեղի բնակչության համեմատ

որևէ հատուկ արտոնություններից: Նրանց համար ճանաչվում են քաղաքացիական բնակչության իրավունքները: Նրանց սեփականությունը ենթարկվում է այն նույն վտանգին, ինչ տեղի քաղաքացիներինը: Ռազմական գործողությունների ընթացքում չեզոք պետության քաղաքացիների (ինչպես և տեղական բնակչության) սեփականության վնասման կամ ոչնչացման համար պատերազմող պետությունը պատասխանատվություն չի կրում:

Եվ, վերջապես, բոլոր չեզոք պետությունները կամ հակամարտության կողմ չհանդիսացող այլ պետությունները կարող են իրականացնել հովանավոր տերության գործառույթներ՝ դրանով իսկ կարևորագույն դեր խաղալով զինված հակամարտության ընթացքում մարդասիրական իրավունքի պահպանման հարցում:

Զինված հակամարտությունների մասնակիցների իրավական վիճակը: Միջազգային բնույթի զինված հակամարտությունում պատերազմող կողմերը ներկայացված են նախ և առաջ իրենց զինված ուժերով: Ժնևի 1949 թ. կոնվենցիաների առաջին Լրացուցիչ արձանագրության համաձայն, պատերազմող կողմերի զինված ուժերը բաղկացած են այնպիսի անձի հրամանատարության ներքո գտնվող բոլոր կազմակերպված զինված ուժերից, խմբերից և ստորաբաժանումներից, որը պատասխանատու է իր ենթակաների վարքագծի համար, նույնիսկ եթե այդ կողմը ներկայացված է հակառակորդի կողմից չճանաչված կառավարությամբ կամ իշխանությամբ: Այդպիսի զինված ուժերը ենթարկվում են ներքին կարգապահական համակարգի, որն ի թիվս այլ խնդիրների նաև ապահովում է միջազգային իրավունքի՝ զինված հակամարտությունների շրջանում կիրառվող նորմերի պահպանումը:

Զինված հակամարտությունների մասնակիցներին կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ մարտնչողների (կոմբատանտների) և չմարտնչողների (ոչ կոմբատանտների): Առաջին Լրացուցիչ արձանագրության համաձայն, հակամարտող կողմի զինված ուժերի կազմում գտնվող և մարտական գործողություններին անմիջականորեն մասնակցող անձինք կոմբատանտներ են: Միայն նրանք իրավունք ունեն զինված ուժ գործադրել: Մարտական գործողությունների ժամանակ նրանց նկատմամբ թույլատրելի է բռնության առավելագույն չափի՝ ֆիզիկական ոչնչացման կիրառումը: Հակառակորդի տի-

րապետման տակ հայտնված կոմբատանտներն իրավասու են պահանջել, որպեսզի իրենց վերաբերվեն որպես ռազմագերիների:

Զմարտնչող է այն անձնակազմը, որն իրավաչափորեն գտնվում է պատերազմող կողմի զինված ուժերի համակարգում, աջակցում է մարտական գործողություններում նրա հաջողություններին, սակայն անմիջականորեն չի մասնակցում այդ մարտական գործողություններին: Ոչ կոմբատանտները չպետք է մասնակցեն մարտական գործողություններին: Խոսքը ինտենդանտական և բուժական անձնակազմի, լրագրողների, հոգևորականության և այլոց մասին է: Զմարտնչողները չեն կարող լինել հակառակորդի զինված հարձակման անմիջական օբյեկտի: Մինչև ժամանակ, նրանց մոտ առկա զենքը նրանք պարտավոր են գործադրել բացառապես ինքնապաշտպանության և նրանց վստահված գույքի պաշտպանության նպատակներով:

Քանի որ պարտիզանական պատերազմը ժամանակակից միջազգային իրավունքում որակվում է որպես ագրեսորի, զաղութային կախվածության և օտարերկրյա օկուպացիայի դեմ իրավաչափ պայքար, 1949 թ. Ժնևյան կոնվենցիաներով պարտիզանները օժտվում են կոմբատանտի կարգավիճակով, եթե նրանց գլխավորում է իր ենթակաների համար պատասխանատու անձը, ունեն տարբերանշան, բացահայտորեն կրում են զենք, մարտական գործողությունների ընթացքում պահպանում են պատերազմի օրենքները և սովորույթները: Առաջին Լրացուցիչ արձանագրությունը որոշակիացնում է վերը նշված որոշ դրույթներ: Առաջին Լրացուցիչ արձանագրության 44-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիական բնակչությունից տարբերվելու համար կոմբատանտը պետք է բացահայտ զենք կրի՝

- յուրաքանչյուր զինված բախման ժամանակ,
- այն ժամանակ, երբ նա տեսանելի է հակառակորդի համար հարձակմանը նախորդող մարտական շարքերի դասավորման ժամանակ, որին նա պետք է մասնակցի:

Ժամանակակից միջազգային իրավունքի լույսի ներքո կոմբատանտի կարգավիճակով օժտված են նաև ազգային-ազատագրական շարժումների մարտիկները:

Գործնականում հաճախ այնպիսի հասկացությունների տարանջատման անհրաժեշտություն է ծագում, ինչպիսիք են ռազմական լրտեսը և ռազմական հետախույզը, կամավորականը և վարձկանը:

Ռազմական լրտեսի կարգավիճակի կապակցությամբ Առաջին Լրացուցիչ արձանագրության 46-րդ հոդվածն ամրագրում է նորմ, որի համաձայն՝ զինված ուժերի կազմի մեջ մտնող անձը, որը համաձայնվել է հակառակորդի իշխանության ներքո լրտեսություն իրականացնել, իրավունք չունի հավակնել ռազմագերու կարգավիճակին, և նրան կարող են վերաբերվել որպես լրտեսի:

Եթե զինված ուժերի կազմի մեջ մտնող անձը տեղեկություններ է հավաքում հակառակորդի կողմից վերահսկվող տարածքում և այդ ընթացքում «կրում է իր զինված ուժերի համազգեստը» կամ «չի գործում խաբեության միջոցով, կանխամտածված չի դիմում գաղտնի միջոցների», ապա այդպիսի անձը չի համարվում լրտես և որակվում է որպես **ռազմական հետախույզ**: Այլ կերպ ասած՝ ռազմական հետախույզ է այն անձը, որը տեղեկություններ է հավաքում հակառակորդի գործողության շրջանում և կրում է իր բանակի համազգեստը, այսինքն՝ չի թաքցնում իր իսկական դեմքը: Եթե նա գերի վերցվի հակառակորդի կողմից, նրա նկատմամբ պետք է տարածվի ռազմագերու իրավական ռեժիմը:

Կամավորականն այն անձն է, որը կամավոր մտնում է պատերազմող կողմերից մեկի գործող բանակ: Այդ դեպքում նա կորցնում է չեզոք պետության անձի կարգավիճակը:

Վարչկան է այն անձը, որը կամավոր մտնում է զինված պայքար մղող զինված կազմավորումներ, որոնք հատուկ հավաքագրվել են տեղում կամ արտասահմանում՝ զինված հակամարտությունում մարտնչելու համար և փաստացի անմիջական մասնակցություն են ունենում ռազմական գործողություններին՝ առաջնորդվելով գլխավորապես անձնական շահ ստանալու ցանկությամբ, և որին իրականում հակամարտության կողմը կամ նրա հանձնարարությամբ խոստացվել է նյութական այնպիսի հատուցում, որը էապես բարձր է տվյալ կողմի զինված ուժերի կազմի մեջ մտնող նույն կարգի և նույն գործառույթներն իրականացնող կոմբատանտներին խոստացված կամ վճարվող հատուցումից: Վարձկանը ոչ հակամարտությանը մասնակցող կողմի քաղաքացին է, ո՛չ էլ հակամարտողների կողմից

վերահսկվող տարածքում մշտապես բնակվող անձ: Վարձկանը չի պաշտպանվում միջազգային հակամարտությունների իրավունքի նորմերով, նա չի կարող հավակնել կոմբատանտի, ռազմագերու կարգավիճակի:

Ռազմական օկուպացիան (զավթումը): Օտարերկրյա տարածքում գործերի գտնվելու այլ տեսակներից **ռազմական օկուպացիան** տարբերվում է դրան բնորոշ հատկանիշների համակցությամբ: Դա օտարերկրյա պետության տարածքում խոշոր զինվորական կազմավորումների՝ այդ պետության և այդ կազմավորումների պետության միջև պատերազմական վիճակի պայմաններում ժամանակավոր գտնվելու այնպիսի տեսակ է, որի դեպքում դադարում է այն պետության կառավարության կողմից իշխանության արդյունավետ իրականացումը, որին պատկանում է զբաղեցված տարածքը, իսկ վարչական իշխանությունը, միջազգային իրավունքով որոշված շրջանակներում, իրականացնում են զինվորական կազմավորումների բարձրագույն հրամանատարական ատյանները:

Ռազմական օկուպացիան չի հանգեցնում օկուպացնող պետության ինքնիշխանության տարածմանը՝ դրա գործերի զբաղեցրած տարածքի նկատմամբ:

Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների համաձայն, արգելվում է զբաղեցված շրջանի բնակչությանը հարկադրել տեղեկություններ տրամադրել պատերազմող մյուս պետության բանակի կամ նրա պաշտպանության միջոցների մասին: Առանձին անձանց պատիվը և ընտանեկան իրավունքները, կյանքը և մասնավոր սեփականությունը, ինչպես նաև կրոնական համոզմունքները պետք է հարգվեն: Բռնագրավումներ կարող են կատարվել միայն ղեկավար հրամանատարի գրավոր կարգադրության հիման վրա, յուրաքանչյուր բռնագրավման կապակցությամբ պետք է տրվի ստացական:

Օկուպացնող պետությունը պարտավոր է պահպանել հակառակորդ պետությանը պատկանող հասարակական շենքերի, անշարժ գույքի, անտառների և գյուղատնտեսական հողատեսքերի հիմնական արժեքը:

Համայնքների, եկեղեցական, բարեգործական, կրթական, գեղարվեստական և գիտական հիմնարկների (ինչպես պետական, այնպես էլ մասնավոր) սեփականությունը, ինչպես նաև պատմական հուշար-

ձանները գեղարվեստական և գիտական ստեղծագործությունները կանխամտածված ոչնչացնելը կամ վնասելն արգելված են և ենթակա են հետապնդման:

Օկուպացված տարածքի բնակչության ներգրավումը հարկադիր աշխատանքի թույլատրվում է միայն օկուպացնող բանակի կամ տեղական բնակչության կարիքների համար: Ընդ որում, օկուպացնող բանակը չի կարող բնակչությանը ներգրավել ռազմական օբյեկտներում և պաշտպանական աշխատանքներում:

Պատերազմ վարելու միջոցները և մեթոդները: Պատերազմ վարելու միջոցներ են հակառակորդին վնաս և պարտություն պատճառելու համար կիրառվող զենքը և այլ միջոցները: Պատերազմ վարելու մեթոդները ներառում են պատերազմ վարելու միջոցների օգտագործման և կիրառման կարգն ու եղանակները: Պատերազմ վարելու միջոցները և մեթոդները բաժանվում են միջազգային իրավունքով արգելվածների (մասնակիորեն արգելվածների) և չարգելվածների:

Արգելված են պատերազմ վարելու հետևյալ միջոցները՝

- ցանկացած զենք, որը բազմակի մեծացնում է մարդկանց տառապանքները, պատճառում է ավելորդ վնասվածքներ և մահն անխուսափելի է դարձնում. հեղձուցիչ, թունավոր կամ նման այլ գազերը և համանման հեղուկները, նյութերը, ինչպես նաև կենսաբանական, քիմիական զենքը և տոքսինները,

- որպես ավերածության կամ վնաս պատճառելու եղանակ՝ բնական միջավայրի վրա ներգործության այն միջոցները, որոնք մեծածավալ, երկարաժամկետ կամ լուրջ հետևանքներ ունեն,

- ցանկացած զենք, որի հիմնական գործողությունը այնպիսի բեկորներով վնասվածքներ հասցնելն է, որոնք մարդու մարմնում չեն հայտնաբերվում ռենտգենի օգնությամբ (պլաստմաս, ապակի), ականներ, թակարդ-ականներ և այլ սարքեր՝ քաղաքացիական բնակչության և բնակավայրերի դեմ,

- սովորական զենքի այլ որոշակի տեսակներ, որոնք կարող են համարվել չափազանց մեծ վնասվածքներ պատճառող կամ ոչ ընտրական գործողություն ունեցող:

Արգելված են պատերազմ վարելու հետևյալ մեթոդները՝

- հակառակորդի բնակչությանը կամ գործերին պատկանող անձանց դավաճանաբար սպանելը կամ վիրավորելը, այն հակառակոր-

դին վիրավորելը և սպանելը, որը, վայր դնելով զենքը կամ այլևս պաշտպանության միջոցներ չունենալով, հանձնվել է. հայտարարել, որ ոչ մեկը չի խնայվելու. սպանել, վիրավորել կամ գերի վերցնել հակառակորդին՝ դիմելով ուխտադրության. սպանել բանագնացին և նրան ուղեկցող անձանց, անօրինական օգտագործել բանագնացի կամ չեզոք կամ չպատերազմող այլ պետության ազգային դրոշը, հակառակորդի զինվորական նշանները կամ համազգեստը, ինչպես նաև ՄԱԿ-ի կամ ԿԽՄԿ-ի տարբերանշանները, ոչնչացնել հակառակորդի սեփականությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման ոչնչացումը կամ զավթումը պահանջվում է՝ ելնելով ռազմական անհրաժեշտությունից, հակառակորդ կողմի քաղաքացիներին հարկադրել մասնակցել իրենց երկրի դեմ ուղղված ռազմական գործողություններին, պատանդ վերցնել, սպանել կամ ոչնչացնել վիրավորներին և հիվանդներին, սպանել ռազմագերիներին կամ նրանց հարկադրել՝ իրենց երկրի դեմ մարտական գործողություններ վարել. ահաբեկել խաղաղ բնակչությանը, ինչպես նաև օկուպացված տարածքի բնակչությանը՝ օկուպացնող տերության տարածք կամ այլ ցանկացած պետության տարածք դեպորտացնելը, գրոհել, ռմբակոծել կամ ոչնչացնել սանիտարական հիմնարկները, հիվանդանոցները և հոսպիտալները, ոչնչացնել սանիտարական և բուժական անձնակազմը,

- ոչնչացնել հատուկ պաշտպանության ներքո գտնվող և հատուկ եղանակով տարբերանշանով մշված մշակութային արժեքները և մշակութային կենտրոնները,

- որևէ տվյալներ ստանալու նպատակով կիրառել խոշտանգումներ, ինչպես նաև դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք և պատժի այլ տեսակներ:

Պատերազմի զոհերի և մշակութային արժեքների պաշտպանությունը: Պատերազմի զոհերն այն անձինք են, ովքեր անմիջականորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին կամ մասնակցությունը դադարեցրել են որոշակի պահից՝ վիրավոր և հիվանդ կոմբատանտները և ոչ կոմբատանտները, ռազմագերիները, քաղաքացիական բնակչությունը (այդ թվում՝ օկուպացված տարածքների): Ցանկացած պատերազմի զոհերը բոլոր հանգամանքներում

պետք է օգտվեն պաշտպանությունից և մարդասիրական վերաբերմունքից, առանց որևէ խտրականության:

Արգելվում են կանխամտածված սպանությունները, խեղում պատճառելը, դաժան, անմարդկային, վիրավորական կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, տանջանքները, խոշտանգումները, կենսաբանական և բժշկական փորձերը և գիտափորձերը, կանխամտածված մարմնական վնասվածքներ հասցնելը, դատապարտելը և պատիժ կիրառելն առանց պատշաճ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռի, չկատարված հանցագործությունների համար պատիժները, այդ թվում՝ կոլեկտիվ պատիժները, առանց բժշկական օգնության, ջրի, սննդի թողնելը և այլ գործողությունները: Հատուկ պաշտպանությունից և հովանավորությունից են օգտվում երեխաները, կանայք, հատկապես՝ հղի կանայք, զառամյալները: Պատերազմի զոհերի պաշտպանության վերաբերյալ նորմերի դիտավորյալ խախտումների համար մեղավոր անձինք զինվորական հանցագործներ են և ենթակա են քրեական պատասխանատվության:

Վիրավորների, հիվանդների և նավաբեկյալների միջազգային իրավական պաշտպանությունը նախատեսված է 1949 թ. Ժնևի I և II կոնվենցիաներով և 1977 թ. I և II Լրացուցիչ արձանագրություններով:

Երկու կոնվենցիաներն էլ պատերազմող կողմերին պարտավորեցնում են՝

- ապահովել հակառակորդի այն վիրավորների և հիվանդների բժշկական օգնությունն ու խնամքը, ովքեր համարվում են ռազմագերի (ընդ որում, արգելվում է նրանց սպանել), փնտրել և օգնել վիրավորներին և հիվանդներին, հաստատել նրանց անձը, պաշտպանել նրանց կողոպտվելուց և վատ վերաբերմունքից, փնտրել և հողին հանձնել մահացածներին՝ հաստատելով նրանց անձը և խոչընդոտելով նրանց կողոպտմանը,

- երբ թույլ են տալիս հանգամանքները, կնքել զինադադարի կամ կրակի դադարեցման մասին համաձայնություններ կամ տեղական համաձայնություններ՝ մարտի դաշտում մնացած վիրավորներին և հիվանդներին մարտի դաշտից դուրս բերելու, նրանց տեղափոխելու և փոխանակելու նպատակով,

- չեզոք պետությունների ռազմաճակատներին և թոշոդ սպարատներին թույլատրել մարտական գործողությունների գոտուց դուրս բերել վիրավորներին, հիվանդներին և նավաբեկյալներին, միջոցներ ձեռնարկելով, որպեսզի այդ անձինք չկարողանան կրկին մասնակցել ռազմական գործողություններին, հակառակորդի հոսպիտալային նավերին թույլ տալ լքել գրավված նավահանգիստները: Ձինված ուժերին առընթեր սանիտարական և բուժական անձնակազմը և հոգևորականներն օգտվում են հարգանքից և հովանավորությունից բոլոր հանգամանքներում և ռազմագերիներ չեն համարվում:

Ռազմագերիների միջազգային իրավական պաշտպանությունը նախատեսված է 1907 թ. Հաագայի IV կոնվենցիայով, 1949 թ. Ժնևի III կոնվենցիայով և 1977 թ. I և II Լրացուցիչ արձանագրություններով:

Ռազմագերիին զինաթափված հակառակորդն է, որը ժամանակավորապես գտնվում է պատերազմող պետության իշխանության ներքո: Վերջինը լրիվ պատասխանատվություն է կրում նրա ճակատագրի համար: Ռազմագերին չի հանդիսանում և չի էլ կարող հանդիսանալ հանցագործ միայն գերեվարվելու փաստի ուժով:

Պատերազմող կողմերը պարտավոր են՝

- մարդասիրաբար վերաբերվել ռազմագերիներին, նրանց գիտական կամ բժշկական փորձերի չենթարկել, պաշտպանել ռազմագերիներին ցանկացած բռնությունից կամ ահաբեկումից, ամբոխի վիրավորանքներից և հետաքրքրասիրությունից, հարգել նրանց անձը և պատիվը, ռազմագերիներին ապահովել ջրով, սննդամթերքով, բժշկական օգնությամբ, հագուստով և առաջին անհրաժեշտության այլ առարկաներով, վարձատրել նրանց կողմից կատարվող աշխատանքը,

- ռազմագերիների նկատմամբ չկիրառել ֆիզիկական տանջանքներ և բռնության այլ միջոցներ՝ նրանցից որևէ տեղեկություն ստանալու համար (ռազմագերին պարտավոր է հաղորդել միայն իր ազգանունը, անունը, կոչումը, ծննդյան ամսաթիվը և անձնական համարը), արգելել անհատական զանցանքների համար կոլեկտիվ պատիժները, կարգապահական տույժերը չպետք է լինեն անմարդկային, դաժան կամ առողջության համար վտանգավոր, չհաջողված

փախուստի համար ռազմագերիին միայն կարգապահական պատասխանատվություն է կրում.

- ռազմագերի կանանց նկատմամբ վերաբերվել պատշաճ հարգանքով և բոլոր դեպքերում նրանց հետ վարվել ոչ ավելի վատ, քան տղամարդկանց հետ: Մասնավորապես, ռազմագերի կանայք պետք է պահվեն տղամարդկանցից առանձին, նրանց պետք է տրամադրվեն ավելի լավ սանիտարահիգիենիկ պայմաններ, չպետք է ոտնձգություններ կատարվեն նրանց պատվի նկատմամբ. ռազմագերի կինը չպետք է ներգրավվի այնպիսի աշխատանքներում, որոնցում սեփական պետության կանայք չեն ներգրավվում.

- ազատել և հայրենադարձնել ռազմագերիներին անմիջապես ռազմական գործողություններն ավարտվելիս (կրակը դադարեցնելիս) և այն:

Քաղաքացիական բնակչության և մշակութային արժեքների միջազգային իրավական պաշտպանությունը նախատեսված է 1907 թ. Հաագայի IV, 1949 թ. Ժնևի IV և 1954 թ. Հաագայի կոնվենցիաներով: Քաղաքացիական բնակչությունը բոլոր պայմաններում իրավունք ունի հավակնել մարդասիրական վերաբերմունքի և բռնության, ահաբեկման և վիրավորանքների ցանկացած գործողություններից պաշտպանության՝ անկախ նրանից՝ հակառակորդի կողմից ժամանակավորապես օկուպացված տարածքում՝ է գտնվում, թե՞ իր բանակի թիկունքում: Պատերազմող կողմերը կարող են իրենց կամ օկուպացված տարածքներում ստեղծել սանիտարական և անվտանգության գոտիներ՝ ռազմական գործողություններից վիրավորներին և հիվանդներին, զառամյալներին և հաշմանդամներին, մինչև 15 տարեկան երեխաներին, կանանց, հղիներին և 7 տարեկանից ցածր երեխաների հետ գտնվող կանանց, հակառակորդին հաղորդելով այդպիսի գոտիների ստեղծման մասին:

Հակառակորդի զինված ուժերի կողմից ժամանակավորապես զբաղեցված տարածքի նկատմամբ տարածվում է ռազմական օկուպացիայի ռեժիմը, որը նախատեսում է օկուպացնող կողմի միայն փաստական իշխանություն, այլ ոչ թե նրա ինքնիշխանության տարածում: Օկուպացված տարածքում ուժի մեջ են մնում նախկին օրենքները, որոնց գործողությունը կարող է կասեցվել կամ դադարեց-

վել միայն այն դեպքում, եթե դրանք վտանգ են ներկայացնում օկուպացնող տերության համար:

Օկուպացնող տերությունը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները հասարակական կարգը վերականգնելու և բնակչության անվտանգությունն ապահովելու համար, բնակչությանն իր լեզվով տեղյակ պահել վարչական և քրեական պատասխանատվության վերաբերյալ օկուպացիոն իշխանությունների կողմից ընդունվող որոշումների մասին, քաղաքային բնակչությանն ապահովել սննդամթերքով և սանիտարական նյութերով, ապահովել օկուպացված տարածքների ժողովուրդների մշակութային արժեքների պահպանությունը և այլն:

Օկուպացնող տերությանն արգելվում է օկուպացված տարածքի բնակչությանն արտաքսել իր կամ այլ պետության տարածք, տեղափոխել իր բնակչությունը օկուպացված տարածք, փոխել երեխաների քաղաքացիությունը և նրանց հեռացնել ծնողներից, օկուպացված տարածքի բնակչությանը հարկադրել ծառայել օկուպանտի զինված ուժերում, ոչնչացնել պետական, հասարակական, անձնական և մասնավոր սեփականությունը, եթե դա պայմանավորված չէ ռազմական անհրաժեշտությամբ, ոչնչացնել կամ դուրս բերել մշակութային արժեքները կամ հոգևոր ժառանգությունը, կամ դրանց անուղղելի վնաս հասցնել, որը պայմանավորված չէ ռազմական անհրաժեշտությամբ:

1977 թ. I Լրացուցիչ արձանագրությունը հատուկ պաշտպանություն է սահմանում կանանց և երեխաների համար: Մասնավորապես, կանանց համար պետք է ապահովվի պաշտպանություն՝ բռնաբարությունից, պոռնկության հարկադրելուց և սեռական ոտնձգության ցանկացած այլ ձևերից, հղի կանանց և փոքրահասակ երեխաների մայրերի գործերը պետք է քննվեն առաջին հերթին առավելագույնս բացառելով նրանց նկատմամբ մահապատժի կիրառումը: Երեխաների համար պետք է ապահովվի պաշտպանություն՝ ցանկացած սեռական ոտնձգությունից, 15 տարին չլրացած երեխաները չպետք է մասնակցեն ռազմական գործողություններին, 18 տարին չլրացած երեխաների նկատմամբ չի կարող կիրառվել մահապատժ:

Ռազմական գործողությունների և պատերազմի ավարտը, դրա իրավական հետևանքները: Պատերազմողների միջև պատերազմա-

կան գործողությունները կարող են դադարեցվել զինադադարի կամ նրանցից մեկի անձնատուր լինելու (կապիտուլյացիա) արդյունքում: *Զինադադարը* կարող է լինել տեղային կամ ընդհանուր:

Տեղային զինադադարը ժամանակավոր բնույթ ունի, այն կնքվում է պատերազմի սահմանափակ թատերաբեմի համար (մարտի դաշտ, ամրոց, կղզի), տեղական նշանակության որոշակի նպատակներով կամ խնդիրներով (վիրավորներին, հիվանդներին և մահացածների դիակները մարտի դաշտից դուրս բերելը և տեղափոխելը, վիրավորներին փոխանակելը, կանանց և երեխաներին պաշարված ամրոցից դուրս բերելը, բանագնացի հետ բանակցելը, համազգային կամ կրոնական տոներ տոնելը) և, որպես կանոն, կարճ է տևում (մեկ ժամ, մի քանի ժամ, մեկ կամ մի քանի օր):

Տեղային զինադադարի մասին որոշում կարող է ընդունել տեղական զինվորական հրամանատարությունը՝ իր լիազորությունների շրջանակներում: Տեղային զինադադարը պատերազմողների միջև պատերազմի դադարեցման չի հանգեցնում:

Ընդհանուր զինադադարը կամ կրակի ընդհանուր դադարեցումը պատերազմողների միջև ռազմական գործողությունների լրիվ դադարեցումն է: Այն, որպես կանոն, չի սահմանափակվում որևէ ժամկետով և շարունակվում է մինչև խաղաղության պայմանագրի կնքումը կամ խաղաղ կարգավորումը: Առանձին զինծառայողների կողմից ընդհանուր զինադադարի խախտումը զինվորական հանցագործություն է, որի համար նրանք պետք է քրեական պատասխանատվության ենթարկվեն:

Ընդհանուր զինադադարը ոչ միայն ռազմական, այլև քաղաքական բնույթ ունի, քանի որ դա առաջին քայլն է պատերազմի ավարտի և խաղաղ կարգավորման ճանապարհին: Ընդհանուր զինադադարի կամ կրակի դադարեցման խախտումը որևէ հակառակորդի կողմից պետք է դիտվի որպես ագրեսիայի գործողություն կամ զինվորական հանցագործություն:

Անչնադարությունը ռազմական գործողությունների դադարեցման եղանակներից մեկն է: Ի տարբերություն ընդհանուր զինադադարի, այս դեպքում պարտված կողմը կորցնում է նույնիսկ ձևական հավասարությունը հաղթող կողմին (բացառությամբ պատվավոր

անձնատուրության): Անձնատուրությունը կարող է լինել պատվավոր, պարզ (սովորական), ընդհանուր և անվերապահ:

Պատվավոր անձնատուրությունը ռազմական գործողությունների դադարեցումն է պատերազմող կողմերի միջև ձեռք բերված համաձայնության կապակցությամբ, որի համաձայն, անձնատուր լինող կողմն իրավունք ունի լքել իր դիրքերը կամ պաշարված քաղաքը՝ դրոշմներով, տեխնիկայով, զենքով և հետագայում միանալ իր զինված ուժերին, այդ թվում՝ հետագա մարտական գործողություններ իրականացնելու համար:

Պարզ (սովորական) անձնատուրությունն առանձին հատվածում ռազմական գործողությունների դադարեցումն է, անձնատուր լինողների զինաթափումը և գերեվարումը: Այդպիսի անձնատուրությունը չի նշանակում ընդհանրապես պատերազմի ավարտ, թեև կարող է ազդել պատերազմող պետությունների ռազմաքաղաքական դրության վրա:

Ընդհանուր անձնատուրությունը մարտական գործողությունների համընդհանուր դադարեցումն է անձնատուր լինող պետության կողմից՝ պատերազմում իր պարտությունը ճանաչելով: Ընդհանուր անձնատուրության արդյունքում զինաթափվում են պարտված պետության բոլոր զինված ուժերը, նրա տարածքը կարող է օկուպացվել և նրա վրա կարող է դրվել քաղաքական և նյութական պատասխանատվություն:

Անվերապահ անձնատուրությունը (ընդհանուր անձնատուրության հատուկ ձև) մարտական գործողությունների համընդհանուր և լրիվ դադարեցումն է, պարտված պետության բոլոր զինված ուժերի զինաթափումը և առանց որևէ պայմանի հանձնվելը:

Ագրեսորը զրկվում է պետական ինքնիշխանությունից (քաղաքական պատասխանատվության բարձրագույն ձևը), նրա տարածքն օկուպացվում է, գերագույն իշխանությունն իրականացնում են հատուկ նշանակված անձինք՝ հաղթանակած պետությունների անունից: Ագրեսորն իրավունք չունի հրաժարվել կամ անվերապահ չկատարել անձնատուրության պայմանները ոչ անձնատուրության պահին, ոչ էլ դրանից հետո: Այդպիսին են Գերմանիայի 1945 թ. մայիսի 8-ի և Ճապոնիայի 1945 թ. սեպտեմբերի 2-ի անվերապահ անձնատուրության օրինակները:

Պատերազմող պետությունների միջև պատերազմի վիճակի ավարտը, որպես կանոն, ձևակերպվում է խաղաղության պայմանագրի կնքման, միակողմանի հռչակագրի ընդունման կամ երկկողմ հռչակագիր ստորագրելու միջոցով:

Պատերազմող կողմերի միջև պատերազմական վիճակի դադարեցման միջազգային իրավական հիմնական միջոցը նրանց կողմից խաղաղության պայմանագրի կնքումն է: Այդպիսի պայմանագրերն ընդգրկում են քաղաքական, տնտեսական, տարածքային և այլ հիմնախնդիրների կարգավորմանը նվիրված հարցերի լայն շրջանակ (ռազմագերիների փոխանակում, զինվորական հանցագործների պատասխանատվություն, պայմանագրերի գործողության վերսկսում, ռեստիտուցիաներ, ռեպարացիաներ, դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունների վերականգնում և այլն)՝ պատերազմողների միջև պատերազմական վիճակի դադարեցման և խաղաղության վերականգնման կապակցությամբ:

Պատերազմի (պատերազմական վիճակի) ավարտի իրավական հետևանքները պատերազմող կողմերի համար առաջանում են ինչպես պատերազմող, այնպես էլ չեզոք և չպատերազմող այլ պետությունների համար:

Պատերազմող պետությունների համար դադարում են գործել պատերազմի օրենքներն ու սովորույթները, և հաստատվում են բնականոն խաղաղ հարաբերություններ, այդ թվում՝ դիվանագիտական. վերսկսվում է նախկինում կնքված միջազգային պայմանագրերի գործողությունը, կնքվում են նոր պայմանագրեր, վերադարձվում են բոլոր ռազմագերիները, կատարվում է քաղաքացիական բնակչության հայրենադարձումը, իրականացվում է օկուպացիոն զորքերի դուրսբերումը, լուծվում են զինվորական հանցագործների քրեական, քաղաքական և նյութական պատասխանատվության բոլոր հարցերը, ստեղծվում են քաղաքական և նյութական երաշխիքներ՝ հետագայում պատերազմը չվերսկսելու համար:

Չեզոք պետությունների համար դադարում է պատերազմում չեզոքության վիճակը: Ընդհանրապես բոլոր չպատերազմող պետությունների համար վերանում է պատերազմ վարելու գոտիների (եթե դրանք

ստեղծվել էին) ռեժիմի պահպանման անհրաժեշտությունը, վերադարձվում են չեզոք պետությունների տարածքում հայտնված նախկին պատերազմող կողմերի ներկալված քաղաքացիները, ռազմանավերը և թռչող ապարատները, վերականգնվում է Համաշխարհային օվկիանոսում միջազգային ծովային և օդային նավագնացության անվտանգությունը և այլն:

ԳԼՈՒԽ 14. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 40. Միջազգային քրեական իրավունքի, միջազգային հանցագործությունների և միջազգային բնույթի հանցագործությունների հասկացությունը

Միջազգային քրեական իրավունքի հասկացությունը. Միջազգային քրեական իրավունքը միջազգային պայմանագրերով նախատեսված հանցագործությունների կանխարգելման, քննության և դրանց կատարման համար պատժելու գործում պետությունների համագործակցությունը կարգավորող նորմերի և սկզբունքների համակցությունն է:

Միջազգային քրեական իրավունքի կարգավորման ոլորտը ներառում է՝

- միջազգային հանցագործությունների դեմ պայքարը,
- համագործակցությունը միջազգային հանցավորության դեմ պայքարում:

Միջազգային քրեական իրավունքը միջազգային հանրային իրավունքի ճյուղ է և սերտորեն կապված է պետությունների ազգային քրեական իրավունքի հետ: Միջազգային քրեական իրավունքի առանձնահատկությունների շարքում հարկ է նշել՝

- դրա համալիր բնույթը (այն ներառում է քրեական, քրեադատավարական և քրեակատարողական իրավունքի նորմերը),
- միջազգային պայմանագրերով ամրագրված՝ տվյալ ճյուղի հատուկ սկզբունքները,
- զինվորական հանցագործների և մարդկության դեմ հանցագործություն կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելը,
- միջազգային քրեական իրավունքի հատուկ աղբյուրները՝ ունիվերսալ և տարածաշրջանային միջազգային պայմանագրերի ձևով և օժանդակ աղբյուրները՝ միջազգային տրիբունալների և ազգային դատարանների որոշումների ձևով,

- հանցագործության հատուկ սուբյեկտը՝ ի դեմս պետությունների և իրավաբանական անձանց (ֆիզիկական անձանց հետ մեկտեղ),

• հատուկ սանկցիաներ և այլն:

Միջազգային քրեական իրավունքում սահմանված է պատասխանատվություն միջազգային և միջազգային բնույթի հանցագործությունների համար:

Միջազգային քրեական հանցագործության հասկացությունը: Միջազգային հանցագործությունը ծանրագույն միջազգային հակաիրավական արարք է, որը ոտնձգում է պետությունների և ազգերի գոյության հիմքերի դեմ, խախտում է միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները, սպառնում է միջազգային անվտանգությանը: Միջազգային իրավունքի հանձնաժողովի նախապատրաստած՝ պետությունների պատասխանատվության մասին կոնվենցիայի նախագծում ընդգծվում է, որ «պետության կողմից այնպիսի պարտավորության խախտման արդյունքում ծագող միջազգային հակաիրավական արարքը, որն այնքան հիմնարար է միջազգային ընկերակցության կենսական կարևոր շահերի համար, որ դրա խախտումը դիտվում է որպես հանցագործություն ամբողջ միջազգային ընկերակցության դեմ, *միջազգային հանցագործություն է*»: Միջազգային հանցագործության օբյեկտ կարող են լինել համընդհանուր խաղաղությունը և միջազգային անվտանգությունը, ժողովուրդների և պետությունների բարիդրացիական հարաբերությունները, ժողովուրդների և ազգերի ինքնորոշման իրավունքը, պատերազմի օրենքները և սովորույթները:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո դատարանի առաջ են կանգնել Գերմանիայի և Ճապոնիայի ղեկավարները: Նյուրնբերգի տրիբունալին էին ներկայացվել 24 գերմանացի գլխավոր զինվորական հանցագործներ: Դատավարության ընթացքում ապացուցվել էր ամբաստանյալների մեղքը 15 միլիոն քաղաքացիական անձանց ոչնչացման, ռազմագերիների սպանությունների և խոշտանգումների, օկուպացված տարածքներից 7 միլիոն մարդկանց արտաքսման, 275 հազար մարդու թույնով սպանելու, բանտարկյալներին վարակիչ հիվանդություններով կանխամտածված վարակելու, կենդանի մարդկանց վրա անմարդկային փորձեր կատարելու համար և այլն: Տոկիոյի զինվորական տրիբունալի առաջ էին կանգնել Ճապոնիայի նախկին բարձրաստիճան ղեկավարներից 28-ը:

Միջազգային իրավունքում ֆիզիկական անձանց հանցավոր արարքներ են ճանաչվում ինչպես միջազգային տրիբունալների ստատուտներով, այնպես էլ ընդհանուր միջազգային իրավունքի նորմերով նախատեսվածները (օրինակ, ցեղասպանություն արարքը նախատեսված է *Յեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին 1948 թ.* կոնվենցիայով):

Միջազգային զինվորական տրիբունալի 1945 թ. կանոնադրության (հ. 6) և միջազգային իրավական այլ ակտերի համաձայն, միջազգային հանցագործությունների թվին են դասվում *հանցագործությունները խաղաղության դեմ, զինվորական հանցագործությունները, հանցագործությունները մարդկության դեմ, ինչպես նաև գաղութարարությունը, ցեղասպանությունը, սպարտեիդը, մթնոլորտի կամ ծովերի զանգվածային աղտոտումը (էկոցիդ)*:

Նշված հանցագործությունները կարող են կատարվել այնպիսի պարտավորությունների կոպիտ խախտման արդյունքում, որոնք հիմնարար նշանակություն ունեն միջազգային խաղաղության և անվտանգության, ժողովուրդների ինքնորոշման իրավունքի, անհատի և շրջակա միջավայրի պաշտպանության սպառնված համար: Դրանցով շոշափվում են ոչ միայն անմիջականորեն տուժած պետության, այլև ընդհանրապես միջազգային ընկերակցության շահերը: Այդ դեպքում պատասխանատվության հարաբերություններն առաջանում են միջազգային հանցագործություն կատարած պետության և մյուս բոլոր պետությունների միջև: Միջազգային հանցագործությունների և դրանց կատարման համար պատասխանատվության սուբյեկտներ կարող են լինել պետությունները, միջազգային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք: Պետությունները և միջազգային իրավունքի այլ սուբյեկտները քաղաքական, նյութական և բարոյական պատասխանատվություն են կրում միջազգային հանցագործությունների համար, իսկ ֆիզիկական անձինք ենթակա են միջազգային քրեական պատասխանատվության:

Միջազգային քրեական իրավունքի նորմերում տրվում է հանցավոր արարքը որակելու համար անհրաժեշտ և բավարար չորս հատկանիշների նկարագրությունը (*հանցակազմ*), առանց որոնց հանցագործությունը գոյություն չունի: Միջազգային քրեական հանցագործության կազմը ներառում է հետևյալ հատկանիշները՝

- *Հանցագործության սուբյեկտը* (ֆիզիկական անձ)՝ միջազգային իրավական նորմերը խախտած և միջազգային իրավունքին համապատասխան՝ դրա համար միջազգային քրեական իրավունքի նորմերով նախատեսված պատասխանատվությունը կրելուն ունակ ճանաչվող պաշտոնատար անձը կամ պետության գործակալը:

- *Հանցագործության օբյեկտը*՝ միջազգային իրավունքով պահպանվող հասարակական հարաբերությունները, որոնց դեմ ոտնձգող միջազգային իրավունքի սուբյեկտները դրա համար պատասխանատվություն են կրում միջազգային պատասխանատվության վերաբերյալ նորմերի հիման վրա: Այդ նույն հարաբերությունները պաշտպանվում են նաև միջազգային քրեական իրավունքում, որը պատասխանատվություն է նախատեսում այն ֆիզիկական անձանց համար, ովքեր պետությունը կամ միջազգային իրավունքի այլ սուբյեկտն օգտագործում են միջազգային հանցագործություն կատարելու համար:

- *Հանցագործության օբյեկտիվ կողմը* բնութագրում է ֆիզիկական անձի հակաիրավական արարքի արտաքին կողմը, այսինքն՝ բուն արարքը (գործողություն կամ անգործություն), կապը արարքի հակաիրավական բնույթի և հանցավոր հետևանքի միջև, եթե դա պահանջվում է կոնկրետ քրեական հանցագործությունը որակելու համար: Որպես կանոն, միջազգային հանցագործության օբյեկտիվ կողմն ընդգրկում է անձի՝ պետության միջազգային հանցագործությանը հանգեցրած գործողության կամ անգործության հանցավոր հետևանքների պատճառական կապը:

- *Հանցագործության սուբյեկտիվ կողմն* ընդգրկում է և՛ հանցավոր ճանաչվող պետության արարքին, և հանցավոր հետևանքներին անձի հոգեբանական վերաբերմունքը, արդյո՞ք նա ցանկանում էր կամ գիտակցաբար էր թույլ տալիս պետության կողմից իրավախախտման կատարումը և վնաս պատճառելը: Հանցավոր արարքի նկատմամբ անձի հոգեբանական վերաբերմունքը դրսևորվում է մեղքի երկու ձևերից մեկով՝ դիտավորությամբ կամ անզգուշությամբ, ինչը նշանակություն ունի պատիժ նշանակելիս: Մեղքի հետ մեկտեղ, սուբյեկտիվ կողմը բնութագրվում է այնպիսի լրացուցիչ հատկանիշներով, ինչպիսիք են միջազգային հանցագործության կատարման համար պետությունն օգտագործող ֆիզիկական անձանց արարքի շարժառիթը և նպատակը:

Միջազգային քրեական հանցագործությունը քրեական այլ հանցագործություններից տարբերակող հատկանիշ կարելի է համարել այն, որ ֆիզիկական անձանց հանցավոր ոտնձգությունների օբյեկտը բոլոր դեպքերում համաշխարհային հանրության՝ միջազգային իրավունքով պահպանվող շահն է:

Միջազգային բնույթի հանցագործություններ: Միջազգային բնույթի հանցագործությունները ոտնձգության օբյեկտով և հանրային վտանգավորության աստիճանով տարբերվում են միջազգային հանցագործություններից: Դրանք անհատների կամ անձանց խմբերի այն իրավախախտումներն են, որոնք երբեմն ոտնձգում են ոչ միայն ազգային, այլև միջազգային իրավակարգի հանդեպ՝ վտանգ ներկայացնելով երկու, մի քանի կամ բոլոր պետությունների համար: Այդպիսի հանցագործություններ են ահաբեկչությունը, թմրամիջոցների տարածումը և վաճառքը, դրամանենգությունը, պատանդներ վերցնելը և այլն:

Միջազգային բնույթի հանցագործությունների դեմ պայքարում պետությունների համագործակցությունը գլխավորապես կանոնակարգվում է բազմակողմ պայմանագրերով (կոնվենցիաներով), որոնցից յուրաքանչյուրը առանձին հանցագործության մասին է: Կոնվենցիաները, որպես կանոն, բովանդակում են՝

- հանցակազմի նորմատիվային բնորոշումը,
- մասնակից պետության պարտավորությունը՝ ամրագրել կոնվենցիայի նորմն ազգային օրենսդրությունում (իմպլեմենտացիա),
- մասնակից պետության պարտավորությունը՝ պայքարել համապատասխան հանցագործությունների դեմ:

Միջազգային բնույթի ամենալուրջ հանցագործություններից մեկը *միջազգային ահաբեկչությունն է*, որը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով՝

- հանցագործությունը նախապատրաստվում է մի պետության տարածքում, բայց կատարվում է մեկ այլ պետության տարածքում,
- հանցագործություն կատարելով մի պետության տարածքում՝ ահաբեկիչը, որպես կանոն, պատասպարվում է այլ պետության տարածքում (ծագում է նրա հանձնման հարցը):

Թմրամիջոցների փարսածումը և վաճառքը հանցագործություններ են, որոնք ոտնձգում են ոչ միայն առանձին մարդու կյանքի և առողջության,

չության, այլև երկրի տնտեսության, պետությունների արտաքին-տնտեսական կապերի, նրանց խաղաղ համագործակցության դեմ: 1961 թ. ստորագրվել է *Թմրամիջոցների մասին միասնական կոնվենցիան*, 1971 թ. *Հոգեներգործուն միջոցների մասին կոնվենցիան*, իսկ 1988 թ. *Թմրամիջոցների և հոգեներգործուն միջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիան*:

Այդ կոնվենցիաների համաձայն, քրեորեն պատժելի արարքներ են թմրամիջոցների և հոգեներգործուն միջոցների ապօրինի արտադրությունը, պահպանումը, տարածումը, ինչպես նաև դրանց վաճառքը, գնումը, ներկրումը և արտահանումը: Թմրամիջոցների տարածման և առևտրի դեմ պայքարը յուրաքանչյուր պետության գործն է, որոնց մեծամասնությունը ընդունել են խիստ պատժի միջոցներ նախատեսող ազգային օրենքներ: Յուրաքանչյուր պետություն պարտավոր է պատժել հանցագործներին, երբ ենթադրյալ իրավախախտը գտնվում է իր տարածքում: Թմրաբիզնեսը, որպես կանոն, պետական սահմաններ չճանաչող երևույթ է, ուստի և անհրաժեշտ է պետությունների միասնական պայքարն այդ չարիքի դեմ:

Միջազգային բնույթի հանցագործություն է *դրամանենգությունը*: 1929 թ. ստորագրվել է *Դրամանիշեր կեղծելու դեմ պայքարի մասին կոնվենցիան*, որի համաձայն՝ պետությունները պարտավորություն են ստանձնել քրեորեն հետապնդել դրամանիշեր կեղծողներին, կեղծված դրամանիշեր տարածողներին, դրամանիշեր կեղծելու համար նախատեսված սարքերի կամ այլ առարկաների պատրաստմանը մասնակցողներին: Այդ անձինք պատասխանատվության են ենթարկվում անկախ նրանից, թե որ պետության դրամանիշեր են պատրաստում կամ կեղծում: Կոնվենցիան պարունակում է դրույթ՝ հանցագործներին շահագրգիռ պետությանը հանձնելու մասին:

Ծանր հանցագործություն է *մարդկանց առևտուրը*: Այդ հանցագործությունը ներառում է ստրկավաճառությունը, կանանց (պոռնկության հարկադրելը) և երեխաների առևտուրը: Ստրուկների առևտուրն արգելող առավել կարևոր միջազգային իրավական ակտը 1956 թ. *Ստրկության վերաբերյալ կոնվենցիան* է:

Միջազգային բնույթի հանցագործություն է հին և միջին դարերում լայն տարածում ունեցած *ծովահենությունը*: 1982 թ. Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն, ծովահենության տակ հաս-

կացվում է մասնավոր նավերի կամ թռչող սպարատների բռնության, գերման կամ կողոպտման ցանկացած անհրավաչափ գործողություն բաց ծովում՝ ուղղված այլ նավի կամ թռչող սպարատի, կամ նավում գտնվող անձանց կամ գույքի դեմ:

Օդանավերի զավթման դեմ պայքարի նպատակով 1970 թ. դեկտեմբերին Հաագայում պետություններն ընդունել են *Օդանավերի ապօրինի զավթման դեմ պայքարի մասին կոնվենցիան*: Այն սահմանում է, որ թռիչքի ընթացքում օդանավում գտնվող ցանկացած անձ, որն ապօրինի բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով զավթում է այդ օդանավը կամ վերահսկողություն իրականացնում դրա նկատմամբ, կատարում է հանցագործություն: Յուրաքանչյուր պետություն պարտավորություն է ստանձնել այդպիսի անձի նկատմամբ կիրառել պատժի խիստ միջոցներ:

Ռադիոակտիվ նյութերի հեյր ապօրինի գործողությունների դեմ պայքարը կարգավորվեց 1980 թ. ընդունված *Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին կոնվենցիայով*: Կոնվենցիայի համաձայն, հանցագործություն է առանց իրավասու մարմինների թույլտվության միջուկային նյութը ստանալը, ինչպես նաև գողանալը, յուրացնելը, տիրապետելը, օգտագործելը, փոխանցելը, ձևափոխելը, ոչնչացնելը կամ սփռելը, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ցանկացած անձի մահվան կամ լուրջ վնաս պատճառել սեփականությանը:

§ 41. Միջազգային հանցագործությունների դեմ պայքարը

Միջազգային հանցագործությունների և միջազգային բնույթի հանցագործությունների հասարակական վտանգավորությունը պահանջում է դրանց դեմ պայքարում պետությունների ջանքերի միավորում՝ միջազգային համագործակցություն, որն իրականացվում է տարբեր եղանակներով:

Միջազգային քրեական դատարանը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո գլխավոր զինվորական հանցագործների գործերի արագ և արդարացի դատական քննությունն ապահովելու նպատակով ստեղծվեցին երկու տրիբունալներ՝ մեկը եվրոպական երկրների գլխավոր զինվորական հանցագործներին դատելու և

պատժելու, մյուսը՝ Ճապոնիայի գլխավոր զինվորական հանցագործներին դատելու և պատժելու համար:

1945 թ. օգոստոսի 8-ին դաշնակից չորս տերությունները՝ ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը, Անգլիան և Ֆրանսիան ստորագրել են *Լոնդոնի համաշայնագիրը*, որի բաղկացուցիչ մասն էր «*Գլխավոր զինվորական հանցագործների դատական հետապնդման և պատժի համար միջազգային զինվորական տրիբունալի կանոնադրությունը*», որի հիման վրա ստեղծվել է նույնանուն միջազգային դատական մարմին՝ Նյուրնբերգում (*Նյուրնբերգի տրիբունալը*):

Նյուրնբերգի միջազգային տրիբունալը կազմված էր չորս անդամներից և չորս տեղակալներից. մեկական՝ տրիբունալի հիմնադրման մասին Լոնդոնի համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետությունից: Բվորումի համար անհրաժեշտ էր տրիբունալի բոլոր չորս անդամների կամ նրանց տեղակալների առկայությունը: Մեղավորությունը ճանաչվում և պատիժը նշանակվում էր տրիբունալի անդամներից ոչ պակաս քան 3-ի ձայներով:

Տրիբունալին առընթեր ստեղծվել էր գլխավոր զինվորական հանցագործների գործերի քննության և մեղադրանքի կոմիտեն՝ չորս մեղադրողի կազմով: Տրիբունալն իրավասու էր ամբաստանյալներին դատապարտել մահապատժի՝ որոշելով դրա ձևը, կամ այլ պատժի, որը տրիբունալն արդարացի կհամարեր:

Նյուրնբերգի դատավարության պատմաիրավական նշանակությունն այն է, որ այն առաջ բերեց մի շարք դատական մախադեպեր, որոնք հաստատեցին գործող միջազգային իրավունքի այն դրույթները, համաձայն որոնց՝ պետությունների միջազգային հանցագործությունների համար ֆիզիկական անձինք ենթակա են քրեական պատասխանատվության:

1948 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան Միջազգային իրավունքի հանձնաժողովին առաջարկել էր քննարկել միջազգային քրեական դատարանի ստեղծման հարցը: Հանձնաժողովն դատարանի կանոնադրության մախագծի մշակումը 1994 թ. ավարտեց: 1998 թ. Հռոմում ՄԱԿ-ի հովանու ներքո կայացած լիազոր ներկայացուցիչների դիվանագիտական կոնֆերանսն ընդունեց *Միջազգային քրեական դատարանի Հռոմի սրատույրը*: Կոնֆերանսի աշխատանքներին մասնակ-

ցում էին ավելի քան 160 պետության պատվիրակություններ: Ստատուտի ընդունման օգտին էր քվեարկել 120 պետություն:

Ստատուտի համաձայն, դատարանն ստեղծվում է որպես մշտական մարմին, որը կոչված է պատժելու միջազգային հանրությանը մտահոգող ամենալուրջ հանցագործությունների համար պատասխանատու անձանց: Միջազգային քրեական դատարանը չի փոխարինում պետությունների քրեական դատարաններին: Նրա իրավասությունը լրացնող է: Դառնալով ստատուտի մասնակից՝ պետությունը դրանով իսկ ճանաչում է նրա իրավասությունը:

Կոնկրետ գործի քննությունը կարող է սկսվել պետության դիմումով կամ դատարանի կառույցի մեջ մտնող դատախազի նախաձեռնությամբ: Դատարանի նախնական վարույթի պալատը կարող է պետության կամ համապատասխան դեպքերում՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի դիմումով վերանայել դատախազի որոշումը՝ քննություն սկսելու կամ քննություն սկսելը մերժելու մասին:

Դատարանի ստատուտը պարունակում է քրեական իրավունքի ընդհանուր սկզբունքներին նվիրված հատուկ բաժին: Դրանում գետեղված են հետևյալ սկզբունքները՝ «չկա օրենքով չսահմանված հանցագործություն», «չկա պատիժ առանց օրենքի», ստատուտի հետադարձ ուժի բացառում, անհատական քրեական պատասխանատվություն:

Դատարանը կազմված է 18 դատավորներից: Նրանք ընտրվում են ստատուտի մասնակից պետությունների կողմից՝ 9 տարի ժամկետով: Ստատուտի մասնակից պետությունները պարտավոր են համագործակցել դատարանի հետ՝ դատարանի իրավասությանը ենթակա հանցագործությունների քննության և մեղավորների հետապնդման հարցերում: Պետությունները պետք է ապահովեն, որ նրանց ազգային իրավունքը նախատեսի դատարանի հետ համագործակցության համապատասխան ձևեր:

Ազատագրկման ձևով պատիժը դատապարտվածները կրում են՝ դատապարտվածներին ընդունելու պատրաստակամություն հայտնած պետությունների ցանկից դատարանի ընտրած պետությունում:

Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտում ամրագրվեց միջազգային քրեական արդարադատության լրացուցիչ բնույթի սկզբունքը: Դա նշանակում է, որ Միջազգային քրեական դա-

տարանը կոչված է լրացնելու քրեական արդարադատության ազգային համակարգերն այն դեպքերում, երբ համապատասխան դատական ընթացակարգերը կարող են բացակայել կամ անարդյունավետ լինել:

Այդ սկզբունքը համաձայնեցվում է միջազգային քրեական արդարադատության՝ ներքին քրեական արդարադատությունից անկախության սկզբունքի հետ:

Քրեական գործերով իրավական օգնությունը: Քրեական գործերով իրավական օգնությունը հիմնականում իրականացվում է քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության մասին միջազգային պայմանագրերի շրջանակներում:

1985-1990 թթ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան հավանություն է տվել քրեական գործերով փոխադարձ օգնության մասին մի շարք տիպային պայմանագրերի:

Այդ համաձայնագրերով սովորաբար կարգավորվում են հետևյալ հարցերը՝

- հանցագործություններ կատարող անձանց վերաբերյալ տվյալների փոխանակումը,
 - նախապատրաստվող և կատարված հանցագործությունների մասին տեղեկատվության փոխանակումը,
 - աջակցությունը՝ դատարանների դատավճիռների կատարմանը,
 - այլ պետության տարածքում հանցագործությունների կատարման համար կասկածվող քաղաքացիների (այդ թվում՝ սեփական) դեմ քրեական հետապնդումը,
 - անձանց հետախուզումը քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով,
 - անձանց ձերբակալումը հանձնումն ապահովելու նպատակով:
- Իրավական օգնության հարցերով պետությունները համագործակցում են իրենց կենտրոնական մարմինների միջոցով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով կամ օրենսդրությամբ: Իրավական օգնությունը ցույց է տրվում դրա մասին *հանձնարարության* (միջնորդության, խնդրանքի) հիման վրա, որում նշվում է՝
- հանձնարարությունը տվող հիմնարկի և այն հիմնարկի անվանումն ու հասցեն, որին ուղղված է հանձնարարությունը, ինչպես նաև

այն գործի անվանումը, որի առնչությամբ խնդրվում է իրավական օգնություն,

• համապատասխան անձանց անունները և ազգանունները, ըստ հնարավորության՝ նրանց բնակության և գտնվելու վայրերի հասցեները, ծննդյան ամսաթիվը և վայրը, ներկայացուցիչների անունները, ազգանունները, հասցեները,

• հանձնարարության բովանդակությունը և դրա կատարման համար անհրաժեշտ տեղեկությունները,

• արարքի նկարագրությունը և որակումը, տվյալներ վնասի չափի մասին:

Հանձնարարությանը կցվում են հանձնարարություն տվող կողմի մոտ առկա գործի նյութերը և այլ ապացույցները: Բոլոր փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակներով և հավաստվում իրավասու հիմնարկի կնիքով:

Պետություններն ինքնուրույն են հոգում իրենց տարածքում իրավական օգնության հետ կապված ծախսերը:

Իրավական օգնության վերաբերյալ հանձնարարությունները կատարելիս կիրառվում է այն պետության օրենսդրությունը, որին ուղղվում է հանձնարարությունը: Սակայն հանձնարարություն տվող պետության խնդրանքով կարող են կիրառվել նաև նրա դատավարական այն նորմերը, որոնք չեն հակասում տվյալ պետության օրենսդրությանը:

1993 թ. կնքվել է *ՄՊՀ շրջանակներում քաղաքացիական, ընդհանրական և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին կոնվենցիան*: Կոնվենցիայով նախատեսված է դատավարական և այլ գործողությունների կատարում, մասնավորապես, խուզարկումների և առգրավումների անցկացում, իրենց ասպացույցների հանձնում, փորձաքննության անցկացում, մեղադրյալների, վկաների, փորձագետների հարցաքննություն, քրեական հետապնդման հարուցում, հանցագործություններ կատարած անձանց հետախուզում և հանձնում:

Հանչնումը մեղադրյալի կամ դատապարտյալի փոխանցումն է այն պետության կողմից, որի տարածքում նա գտնվում է: Նա հանձնվում է այն պետությանը, որտեղ նա համարվում է հանցագործություն կատարած անձ կամ որտեղ նա դատապարտվել է:

Ընդունված է, որ մեղադրյալը կամ դատապարտյալը հանձնվում է միայն, եթե կատարված արարքը երկու պետությունների իրավունքով էլ համարվում է հանցագործություն: Հանձնում չի կատարվում, եթե հիմքեր կան ենթադրելու, որ անձը հետապնդվում է քաղաքական շարժառիթներով:

Գոյություն ունի հանձնման երեք տեսակ՝

- անձի հանձնումը՝ քրեական պատասխանատվության ենթարկելու համար,

- անձի հանձնումը՝ պատիժն ի կատար ածելու համար,
- ժամանակավոր հանձնումը:

Իրավական օգնության պայմանագրերին համապատասխան չեն հանձնվում՝

- սեփական քաղաքացիները,
- անձինք, որոնց հանդեպ քրեական հետապնդում չի կարող հարուցվել վաղեմության ժամկետը լրանալու կամ այլ օրինական հիմքի ուժով,

- անձինք, որոնց նկատմամբ արդեն կայացվել է օրինական ուժի մեջ մտած և կատարված դատավճիռ՝ միևնույն հանցագործության համար կամ առկա է ուժի մեջ մտած որոշում՝ գործով վարույթը կարճելու մասին:

Ինտերպոլ: Ինտերպոլը *Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության* կրճատ անվանումն է, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Լիոնում (Ֆրանսիա): Դրան մասնակցում են գրեթե բոլոր պետությունները, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը:

Ինտերպոլի հիմնական նպատակը ազգային օրենսդրության շրջանակներում և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ոգուն համապատասխան քրեական ոստիկանության բոլոր մարմինների լայն համագործակցության ապահովումն է:

Ինտերպոլը հավաքում և համակարգում է քրեահետախուզական և քրեագիտական տեղեկատվությունը, մասնակցում է միջազգային հետախուզմանը, տեղեկատվություն է տրամադրում ազգային ոստիկանական ծառայություններին:

Տեղեկատվական գործունեությունը ներառում է հետախուզման մեջ գտնվող անձանց արտաքինը նկարագրող տվյալներ, նրանց լու-

սանկարները և մատնահետքերի դրոշմներ պարունակող հետախուզման քարտերի առաքումը: Առաքվում են նաև միջազգային հանցագործների մասին տեղեկություններ պարունակող ծանուցում-քարտերը, ինչպես նաև անհայտ կորած անձանց և չճանաչված դիակների, հափշտակված սեփականության քարտերը: Դրանից բացի, առաքվում է հանցագործությունների կատարման նոր և հատուկ հետաքրքրություն առաջացնող եղանակների մասին տեղեկատվությունը:

Այս կազմակերպության անդամ պետություններում հիմնադրվում են Ինտերպոլի ազգային բյուրոներ, որոնք իրականացնում են Ինտերպոլի Կենտրոնական բյուրոյի և քրեական ոստիկանության ազգային մարմինների միջև կապերի համակարգման գործառույթը:

ԳԼՈՒԽ 15. ՏԱՐԱԾՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

§ 42. Տարածքի տեսակները

Տարածքի հասկացությունը: Տարածքային հիմնահարցերը մշտապես կարևորագույններից են միջազգային հարաբերություններում:

Տարածքի տակ միջազգային իրավունքում հասկացվում է որոշակի իրավական ռեժիմով տարածությունը՝ երկրագնդի մասը (ցամաքային, ջրային տարածքները, ընդերքը, օդային տարածքը), ինչպես նաև տիեզերական տարածությունը և երկնային մարմինները: Տարածքների իրավական կարգավիճակը սահմանվում է ներպետական օրենսդրության և միջազգային իրավունքի նորմերով:

Ըստ իրավական ռեժիմի՝ տարածքները բաժանվում են պետական տարածքների, միջազգային ռեժիմով տարածքների և խառը ռեժիմով տարածքների:

*Պեպակալ տարածք*ն այն տարածությունն է, որի սահմաններում պետությունն իրականացնում է գերագույն իշխանությունը (ինքնիշխանությունը):

*Միջազգային տարածք*ը միջազգային ռեժիմով տարածություն է, որի վրա չի տարածվում որևէ պետության ինքնիշխանությունը, և որը բաց է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան բոլոր պետությունների կողմից օգտագործվելու համար: Այդպիսի ռեժիմ ունեն բաց ծովը, դրանից վեր օդային տարածությունը, ազգային իրավասության սահմաններից դուրս ծովերի և օվկիանոսների հատակը, տիեզերական տարածությունը, ներառյալ Լուսինը և այլ երկնային մարմինները, Անտարկտիկան և դրանից վեր օդային տարածությունը:

*Խառը իրավական ռեժիմով տարածություններ*ն ունեն էական առանձնահատկություններ. ավամերձ պետություններն օժտված են այդ տարածությունների սահմաններում բնական պաշարների հետախուզման և արդյունահանման ինքնիշխան իրավունքներով՝ մյուս բոլոր պետությունների համար միջազգային նորմերին և ավամերձ պետության կանոններին համապատասխան նավագնացության ազատության և մի շարք այլ իրավունքների պահպանմամբ: Այդ տա-

վել խաղաղ միջոցներով կամ ընդունել ազգային ճնշման դեմ ապստամբությունների ձև:

Վիճելի տարածքի պետական պատկանելության մասին հարցերը լուծելիս, ազգի կամքի բացահայտման համար երբեմն կիրառում են *հանրաքվե (պլեբիսցիտ)*: Պլեբիսցիտը համաժողովրդական քվեարկություն է, որը սովորաբար անց է կացվում փոխանցվող կամ միացվող տարածքի բնակչության շրջանում: Այն կարող է անցկացվել ներպետական օրենքի հիման վրա, միջազգային պայմանագրի կնքման կամ միջազգային կազմակերպության որոշման արդյունքում:

Արևմտյան Իրանում անցկացված պլեբիսցիտի արդյունքում այն միացել է Ինդոնեզիային (1969 թ.), իսկ Էրիտրեա մարզն առանձնացել է Եթովպիայից (1993 թ.):

Պետության տարածքային գերակայության շրջանակները որոշվում են պետական սահմաններով:

Պեպակալ սահմանը: *Պեպակալ սահմանը* պետական տարածքի (ցամաքի, ջրերի, ընդերքի և օդային տարածության) սահմանները որոշող գիծն է և դրանով անցնող ուղղահայաց մակերևույթը:

Պետական սահմանի գիծը սահմանվում է՝

- ցամաքում՝ տեղանքը բնորոշ կետերով, գծերով կամ կողմնորոշիչներով,
- ծովում՝ տարածքային ծովի արտաքին սահմանով,
- գետերում՝ դրանց կենտրոնով կամ գլխավոր գետաբազկի կենտրոնով:

Պետությունների միջև սահմանները, որպես կանոն, սահմանվում են բանակցային ճանապարհով, երկու փուլով՝ դելիմիտացիայի և դեմարկացիայի:

Դելիմիտացիան (տեղորոշում) տեղանքի, բնակավայրերի և ֆիզիկաաշխարհագրական այլ օբյեկտների պատկերմամբ քարտեզի վրա պետական սահմանի գծի նշումն է: Սահմանի գծի նշմամբ քարտեզը սահմանի դելիմիտացիայի մասին պայմանագրի բաղկացուցիչ մասն է որում տրվում է նաև սահմանի գրավոր նկարագրությունը: Քարտեզն ստորագրվում կամ նախաստորագրվում է պայմանադիր պետությունների կողմից:

Դեմարկացիան (գծանշում) տեղանքում պետական սահմանի գծի որոշումն է: Այն իրականացնում է կառավարությունների կողմից հա-

տուկ դրա համար ստեղծվող՝ սահմանային պետությունների ներկայացուցիչներից կազմված խառը հանձնաժողովը, որը նշում է սահմանը պարզ տեսանելի սահմանային նշաններով (սյուներով, բուրգերով և այլն):

Դեմարկացիայի խառը հանձնաժողովի աշխատանքի արդյունքներն ամրագրվում են հատուկ փաստաթղթերում, որոնցից հիմնականը պետական սահմանի նկարագրություն-արձանագրությունն է: Այն ստորագրվում է հանձնաժողովի անդամների կողմից: Դեմարկացիայի փաստաթղթերն ուժի մեջ են մտնում երկու պետությունների կառավարությունների կողմից դրանք հաստատվելուց հետո:

Պետական սահմանի ռեժիմը սահմանվում է ազգային օրենսդրությամբ ու միջազգային պայմանագրերով և ներառում է հետևյալ կանոնները՝

- սահմանի պահպանման,
- անձանց և տրանսպորտային միջոցների կողմից սահմանի հատման,
- սահմանով անձանց, տրանսպորտային միջոցների, ապրանքների, բեռների և կենդանիների մուտքի և ելքի վերահսկողության,
- սահմանամերձ տարածքում տնտեսական և այլ գործունեության իրականացման,

• սահմանային միջադեպերի կարգավորման:

Սահմանի պահպանման կանոնները սահմանում են սահմանային նշանները և սարքավորումները պատշաճ վիճակում պահպանելու, դրանց վերահսկիչ զննությունների իրականացման, պետական սահմանի անցման ստուգման կարգը:

Անչանց կողմից պեպակալ սահմանի անցումը, փրանսպորտային միջոցներով դրա հատումը կարող է իրականացվել միայն սահմանի անցման (հատման)՝ միջազգային և երկկողմ շարժման համար սահմանված կետերում, որոնք որոշվում են սահմանային պետությունների պայմանավորվածությամբ:

Պեպակալ սահմանով անչանց, փրանսպորտային միջոցների, ապրանքների, բեռների և կենդանիների մուտքի և ելքի վերահսկողությունը ենթադրում է սահմանում այցագրային վերահսկողության իրականացում, ինչպես նաև մաքսային, սանիտարական-կարանտինային, անասնաբուժական, ֆիտոսանիտարական և վերահսկողութ-

յան այլ ձևերի իրականացում: Մուտքի և ելքի վերահսկողությունն իրականացվում է պետական սահմանի հատման կետերում և դրա արդյունքում ճանաչվում է պետական սահմանի հատման օրինականությունը: Բացթողնման համար հիմք է մուտքի/ելքի իրավունքը հավաստող վավերական փաստաթղթերի, տրանսպորտային միջոցների, ապրանքների և բեռների փաստաթղթերի առկայությունը: Օտարերկրյա այն քաղաքացուն, ում թույլատրված է մշտական բնակության համար մուտքը տվյալ պետության տարածք տրվում է իմիգրացիոն մուտքի արտոնագիր, իսկ ժամանակավոր բնակության համար մուտքի դեպքում՝ ոչ իմիգրացիոն մուտքի արտոնագիր (վիզա): Պետությունները կարող են պայմանավորվել նաև պետության տարածք մուտքի պարզեցված կարգի մասին՝ ներառյալ ոչ վիզային մուտքը: Այսպես օրինակ՝ ԱՊՀ պետությունների քաղաքացիներն իրավունք ունեն մուտք գործել, դուրս գալ և տեղաշարժվել ԱՊՀ մասնակից պետությունների տարածքում՝ առանց մուտքի արտոնագրերի՝ նրանց անձը հաստատող կամ քաղաքացիությունը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

Սահմանում իրականացվող տնտեսական և այլ գործունեությունը չպետք է վնաս պատճառի հարակից պետության տարածքին, վնաս հասցնի բնակչության առողջությանը, էկոլոգիական կամ այլ անվտանգությանը, խոչընդոտներ ստեղծի պետական սահմանի պահպանության ապահովման գործում:

Օրարերկրյա պետությունների հետ սահմանային միջադեպերի կարգավորումը ենթադրում է, որ սահմանում ծագող խնդիրները պետք է լուծվեն պետությունների կողմից համատեղ: Բացի դրանից, կանոնների խախտմամբ պետական սահմանը հատող անձինք, օդանավերը, նավերը և տրանսպորտային այլ միջոցները ճանաչվում են սահմանը խախտողներ և պետք է պատասխանատվություն կրեն: Կախված իրադրությունից և խախտման բնույթից՝ սահմանը խախտողները կարող են ենթարկվել քրեական կամ վարչական պատասխանատվության կամ փոխանցվել այն պետության իշխանություններին, որի տարածքից նրանք հատել են սահմանը:

Պետական սահմանի ռեժիմի պահպանման հետ կապված հարցերը լուծելու և սահմանային միջադեպերը կարգավորելու համար պետությունները նշանակում են ներկայացուցիչներ (սահմանային

հանձնակատարներ, սահմանային լիազորներ) և նրանց տեղակալներին: Նրանց նստավայրերը, լիազորությունները և գործունեության կարգը որոշվում են համաձայնագրերով: Սահմանային ներկայացուցիչները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ պետական սահմանի խախտման դեպքերը կանխելու համար: Սահմանից գնդակոծության, այլ պետության տարածքում գտնվող անձանց նկատմամբ բռնի գործողությունների կատարման, սահմանով իրականացվող գործողությունների արդյունքում սպանության, վիրավորման, սահմանի ապօրինի անցման (հատման) և սահմանի ռեժիմի այլ խախտումների դեպքերում նրանք պարտավոր են իրականացնել քննություն և ձեռնարկել պատշաճ միջոցներ: Սահմանի ռեժիմի խախտման այս կամ այն դեպքի վերաբերյալ սահմանային ներկայացուցիչների կողմից համատեղ ընդունված որոշումներն ուժի մեջ են մտնում արձանագրության ստորագրման պահից:

Պետական սահմանի ռեժիմից պետք է տարբերել *սահմանային ռեժիմը*, որը պետական սահմանին հարող՝ պետության տարածքի հատուկ իրավական կարգավիճակն է: Այն որոշվում է պետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

Սահմանային ռեժիմն ուղղված է սահմանի պահպանության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Սահմանային գոտու լայնությունը, որպես կանոն, չի գերազանցում հինգ կիլոմետրը:

Սահմանային ռեժիմը ներառում է՝

- անձանց և տրանսպորտային միջոցների՝ սահմանային գոտի մուտքի (անցման), այդտեղ ժամանակավորապես գտնվելու և տեղաշարժվելու,
- սահմանային գոտում տնտեսական, արդյունահանման և այլ գործունեության իրականացման, հասարակական-քաղաքական, մշակութային և այլ զանգվածային միջոցառումների անցկացման կանոնները:

Պետական սահմանի պահպանությունը պետական սահմանի պաշտպանության բաղկացուցիչ մասն է: Այն իրականացվում է սահմանապահ ծառայության մարմինների և զորքերի կողմից՝ օդային տարածությունում և ստորջրյա միջավայրում: Որոշակի դեպքերում այդպիսի լիազորություններով կարող են օժտվել նաև այլ մարմիններ:

§ 44. Միջազգային փարածքներ

Ինչպես նշել էինք, միջազգային տարածքը միջազգային ռեժիմով տարածություն է, որի վրա չի տարածվում որևէ պետության ինքնիշխանությունը, և որը բաց է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան բոլոր պետությունների կողմից օգտագործվելու համար: Այդպիսի ռեժիմ ունեն բաց ծովը, դրանից վեր օդային տարածությունը, ազգային իրավասության սահմաններից դուրս՝ ծովերի և օվկիանոսների հատակը, տիեզերական տարածությունը, ներառյալ Լուսինը և այլ երկնային մարմինները, Անտարկտիկան և դրանից վեր օդային տարածությունը: Այս տարածքների իրավական ռեժիմին կանոնադառնանք սույն աշխատության համապատասխան բաժիններում, որոնք վերաբերվում են միջազգային ծովային, օդային և տիեզերական իրավունքին, ուստի ստորև կներկայացվի Անտարկտիկայի միջազգային իրավական կարգավիճակը:

Անտարկտիկայի իրավական ռեժիմը: *Անտարկտիկան* հարավային լայնության 60°-ից դեպի հարավ ընկած երկրագնդի տարածքն է, որը ներառում է Անտարկտիդա մայրցամաքը, ելուստային սառցադաշտերն ու հարող ծովերը: Անտարկտիկայի իրավական ռեժիմը սահմանված է *Անտարկտիկայի մասին 1959 թ. պայմանագրով*, որին մասնակցում է մոտ քառասուն պետություն: Պայմանագրի մասնակից պետությունների կոնֆերանսում 1995 թ. այդ համաձայնությունը ճանաչվել է անժամկետ:

1959 թ. պայմանագրի դրույթների համաձայն, Անտարկտիկայում պետությունների բոլոր տարածքային հավակնությունները «սառեցվում են»: Չճանաչելով Անտարկտիկայում որևէ մեկի ինքնիշխանությունը՝ պայմանագիրը չի հերքում տարածքային հավակնությունների գոյությունը, սակայն սառեցնում է գոյություն ունեցող հավակնությունները և արգելում պետությունների կողմից նոր հավակնությունների ներկայացումը:

Պայմանագրով սահմանված է, որ Անտարկտիկան կարող է օգտագործվել միայն խաղաղ նպատակներով: Անտարկտիկայում, մասնավորապես, արգելվում է ռազմական բազաների ստեղծումը, ռազմական զորաշարժերի իրականացումը, զենքի ցանկացած տեսակների փորձարկումը: Բացի այդ, Անտարկտիկայի տարածքում

արգելված է միջուկային պայթյունների իրականացումը և ռադիոակտիվ թափոնների արտանետումը: Այսպիսով, Անտարկտիկան ճանաչված է ապառազմականացված տարածք:

Պայմանագրի պահպանման նկատմամբ սահմանված է խիստ վերահսկողություն: Պայմանագրի մասնակից ցանկացած պետություն կարող է նշանակել իր դիտորդներին, որոնք ցանկացած ժամանակ կարող են մուտք գործել Անտարկտիկայի ցանկացած շրջան: Բոլոր պետությունների անտարկտիկ կայանները, սարքերը, սարքավորումը, ծովային նավերն ու օդանավերը բաց են ստուգայցերի համար:

Անտարկտիկայում դիտորդները և կայանների գիտական անձնակազմը գտնվում են այն պետության իրավասության ներքո, որի քաղաքացիներն են նրանք:

Արկտիկայի իրավական ռեժիմը: Խոսելով Անտարկտիկայի միջազգային իրավական ռեժիմի մասին՝ տրամաբանական կլիներ անդրադառնալ նաև Արկտիկային, որի կարգավիճակը բնորոշվում է որոշակի առանձնահատկություններով: *Արկտիկան* Հյուսիսային բևեռային շրջանով պարփակված երկրագնդի մասն է, որը ներառում է Եվրասիա և Հյուսիսային Ամերիկա մայրցամաքների ծայրամասերը, ինչպես նաև Հյուսիսային սառուցյալ օվկիանոսը:

Արկտիկայի տարածքը բաժանված է բևեռային սեկտորների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Կանադայի, Դանիայի և Նորվեգիայի միջև: Բևեռային սեկտորների հայեցակարգի համաձայն, համապատասխան բևեռային պետության արկտիկ ծովեզերքից հյուսիս ընկած բոլոր հողերը և կղզիները, որոնք գտնվում են այդ ծովեզերքով և Հյուսիսային բևեռի կետում հատվող միջօրեականներով կազմված սեկտորի սահմաններում, համարվում են տվյալ պետության տարածքի մեջ:

Բևեռային սեկտորների միջև սահմանները համապատասխան պետությունների պետական սահմաններ չեն. բևեռային սեկտորում պետական տարածքը սահմանափակվում է տարածքային ջրերի արտաքին սահմանով: Սակայն կարելի է ասել, որ սեկտորների տարածքում գործող իրավական ռեժիմը քիչ է տարբերվում տարածքային ջրերի ռեժիմից: Բևեռամերձ պետությունները սահմանում են բևեռային սեկտորի շրջանում տնտեսական գործունեություն իրականացնելու թույլատվական կարգ, շրջակա միջավայրի պահպանության կանոններ:

ԳԼՈՒԽ 16. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՈՎԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 45. Միջազգային ծովային իրավունքը

Միջազգային ծովային իրավունքը կարելի է բնորոշել որպես ծովային տարածությունների իրավական վիճակը սահմանող և այդ տարածությունների օգտագործման ու հետազոտման գործունեության կապակցությամբ միջազգային իրավունքի սուբյեկտների միջև ծագող հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի համակցություն: Իր բնույթով և բովանդակությամբ միջազգային ծովային իրավունքը միջազգային իրավունքի օրգանական մասն է, դրա ճյուղը:

Միջազգային ծովային իրավունքն ստեղծվում է միջազգային իրավունքի սուբյեկտների (նախ և առաջ՝ պետությունների) կողմից՝ միջազգային իրավունքի նորմերի կազմավորման ընդհանուր օրինաչափություններին համապատասխան և հաշվի առնելով ինչպես ծովերում և օվկիանոսներում պետությունների գործունեության, այնպես էլ Համաշխարհային օվկիանոսի առանձին մասերի դիրքի առանձնահատկությունները:

Քանի որ միջազգային ծովային իրավունքը միջազգային իրավունքի ճյուղ է, վերջինիս հանրաճանաչ նորմերը և սկզբունքները, մասնավորապես, ՄԱԿ-ի Կանոնադրության նորմերը գործում են ծովերում և օվկիանոսներում, ինչպես նաև դրանցից վեր օդային տարածությունում պետությունների գործունեության և հարաբերությունների նկատմամբ:

Միջազգային ծովային իրավունքի աղբյուրները: Լինելով միջազգային իրավունքի հնագույն ճյուղերից մեկը՝ միջազգային ծովային իրավունքը մինչև 20-րդ դարի երկրորդ կեսը հիմնականում սովորության էր: Սակայն գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում պետությունների ծովային գործունեության աշխուժացումը պահանջեց ծովային իրավունքի կողմնափոխում և նման կողմնափոխման օբյեկտիվ անհրաժեշտության հաշվառմամբ՝ առաջընթաց զարգացում:

Ծովային իրավունքի ՄԱԿ-ի առաջին կոնֆերանսում, որը կայացել է 1948 թ., Ժնևում, ընդունվել են հետևյալ չորս կոնվենցիաները՝

1. Բաց ծովի մասին կոնվենցիան,
2. Տարածքային ծովի և հարակից գոտու մասին կոնվենցիան,
3. Մայրցամաքային ելուստի մասին կոնվենցիան,
4. Ձկնորսության և բաց ծովի կենդանի պաշարների պահպանության մասին կոնվենցիան:

1973-1982 թթ. Ծովային իրավունքի ՄԱԿ-ի երրորդ կոնֆերանսին մասնակցեցին 164 պետությունների ներկայացուցիչներ և զգալի թվով դիտորդներ: Կայացել էր 11 մատաչքան և ի վերջո ընդունվեց 1982 թ. *Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիան*: Այն ուժի մեջ է մտել 1994 թ.:

Համաշխարհային օվկիանոսի տարածությունների իրավական կարգավիճակը և իրավաբանական ռեժիմը սահմանող՝ 1982 թ. Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիան միջազգային ծովային իրավունքի հիմնական աղբյուրն է: Այն միջազգային ծովային իրավունքը կողմնափոխող և միաժամանակ դրա առաջընթաց զարգացումն ապահովող փաստաթուղթ է:

Միջազգային կազմակերպություններ: Միջազգային ծովային իրավունքի զարգացման ճանապարհին մեծ դեր ունեն միջազգային կազմակերպությունները: Համաշխարհային օվկիանոսի օգտագործման և հետազոտման նպատակներով համագործակցությունն իրականացվում է ինչպես պետությունների միջև, այնպես էլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Այդպիսի համագործակցության և միջազգային ծովային իրավունքի զարգացման գործում ամենամեծ ներդրումն ունի *Միջազգային ծովային կազմակերպությունը* (IMO), որը ՄԱԿ-ի մասնագիտացված հիմնարկ է:

Կազմակերպության ստեղծման մասին կոնվենցիան ստորագրվել է 1948 թ., Ժնևում, Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնֆերանսում: 1958 թ. կոնվենցիան մտել է ուժի մեջ, և նույն թվականից սկսել է գործել կազմակերպությունը:

- ԻՍՕ-ի հիմնական նպատակները հետևյալն են.
- առևտրային նավագնացության տեխնիկական հարցերում պետությունների համագործակցությանն աջակցելը,
- ծովում անվտանգության և նավագնացության արդյունավետության ապահովումը,

• նավերից ծովի աղտոտման կանխարգելումը և դրա հետ կապված վարչական և իրավական հարցերի քննությունը:

ԻՄՕ-ն ամենակտիվ մասնակցությունն ունի միջազգային պայմանագրերի և այլ փաստաթղթերի մշակման գործում, որոնք այս կամ այն չափով վերաբերում են կազմակերպության գործունեության շրջանակի մեջ մտնող հարցերին:

Ծովային տարածությունների դասակարգումը: Ինչպես արդեն նշել էինք, միջազգային ծովային իրավունքի հիմնական առաքելությունը ծովային տարածությունների իրավական վիճակի սահմանումն է: Ծովային տարածություններն իրարից տարբերվում են ինչպես պետության ինքնիշխանության հետ հարաբերությամբ, այնպես էլ համապատասխան ծովային տարածություններում պետությունների գործունեության որոշակի տեսակների իրավական կարգավորմամբ:

Ծովային այս կամ այն տարածության *իրավական կարգավիճակը* պայմանավորված է պետության ինքնիշխանությունը դրա հարաբերությամբ: Պետության ինքնիշխանությունը տարածվում է ծովային տարածության միայն այն մասի նկատմամբ, որը կամ հարում է այդ պետության ափին, կամ էլ գտնվում է դրան մոտ: Այդ մասը գտնվում է համապատասխան պետության տարածքի կազմում: Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն, այդպիսին են ներքին ծովային ջրերը, արշիպելագային ջրերն ու տարածքային ծովը:

Գոյություն ունեն որոշ ծովային տարածություններ, որոնք պետական տարածքի մաս չեն, սակայն դրանց հանդեպ ափամերձ պետություններն ունեն որոշ ինքնիշխան իրավունքներ: Այդպիսի տարածություններ են համարվում հարակից գոտին, բացառիկ տնտեսական գոտին, մայրցամաքային ելուստը:

Ծովային տարածության մեծ մասի նկատմամբ պետությունների ինքնիշխանությունը չի տարածվում. դրանք այսպես կոչված՝ միջազգային տարածություններն են: Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն, դրանց թվին են դասվում բաց ծովը և ծովային հատակի միջազգային շրջանը:

Ծովային տարածությունում պետությունների այս կամ այն գործունեության իրավական կարգավորման, այսինքն՝ նրանց իրավունքների և պարտականությունների առումով ծովային տարածությունները դասակարգվում են ըստ *իրավական ռեժիմի*: Միևնույն կարգավի-

ճակն ունեցող ծովային տարածությունները կարող են զգալիորեն տարբերվել միմյանցից իրավական ռեժիմով (օրինակ՝ ներքին ծովային ջրերն ու տարածքային ծովը կամ բաց ծովն ու բացառիկ տնտեսական գոտին):

Ծովեզերք չունեցող պետությունների իրավունքները: Միջազգային ծովային իրավունքի նշանակությունը մեծ է բոլոր պետությունների, այդ թվում նաև՝ ծովեզերք չունեցող, ներմայրցամաքային պետությունների համար, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը:

Ծովեզերք չունեցող պետություններն ունեն դեպի ծով մուտքի իրավունք, այդ թվում՝ իրավունք, որպեսզի իրենց դրոշի ներքո նավերը նավարկեն ծովում: Նախկինում ևս գոյություն ունեցած այս իրավունքն ամրագրվել է Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայում, որը նախատեսում է ծովի և տվյալ ներմայրցամաքային պետության միջև ընկած պետության տարածքով ներմայրցամաքային պետության՝ դեպի ծով մուտքի հարցի լուծման կարգը:

Գործնականում այս հարցը լուծվում է այնպես, որ ծովեզերք չունեցող շահագրգիռ պետությունը պայմանավորվում է ծովեզերք ունեցող համապատասխան երկրի հետ՝ նրա այս կամ այն նավահանգստից օգտվելու հնարավորություն տրամադրելու մասին: Այդպիսի համաձայնություններով միաժամանակ լուծվում է նաև շահագրգիռ ոչ ափամերձ պետության և նրան տրամադրվող նավահանգստի միջև տարանցիկ հաղորդակցության մասին հարցը: Ամրագրելով ծովեզերք չունեցող պետության այս իրավունքը՝ կոնվենցիան, սակայն, անպատասխան է թողնում այն հարցը, թե արդյո՞ք ափամերձ պետությունը պարտավոր է իր նավահանգիստը և տարածքը տրամադրել տարանցիկ փոխադրումներ իրականացնելու համար:

Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն՝ ծովեզերք չունեցող պետություններն իրավունք ունեն արդարացի հիմքի վրա մասնակցել տնտեսական գոտիների կենդանի պաշարների այն մասի շահագործմանը, որն այս կամ այն պատճառներով չի կարող օգտագործվել ափամերձ պետության կողմից: Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիան ծովեզերք չունեցող պետություններին իրավունք է վերապահում նաև եկամուտներ ստանալ կոնվենցիայի շրջանակներում ծովային հատակի միջազգային շրջանի շահագործումից:

§ 46. Ծովային տարածությունների իրավական ռեժիմը

Ներքին ծովային ջրեր: Ներքին ծովային ջրերը ափամերձ պետության տարածքի մասն են, և դրանց նկատմամբ տարածվում է նրա ինքնիշխանությունը: Դրանց թվին են դասվում նավահանգիստների, ծովածոցերի, ծովախորշերի, լիմանների, ինչպես նաև տարածքային ծովի ելակետային գծերից դեպի ափ գտնվող ջրերը և այսպես կոչված՝ պատմական ջրերը՝ պատմականորեն տվյալ պետությանը պատկանող ծովածոցերի, ծովախորշերի, լիմանների, ծովերի և նեղուցների ջրերը, անկախ բնական մուտքի գծի լայնությունից:

Նավահանգիստներում ներքին ծովային ջրերի արտաքին սահմանը դեպի ծով առավել առաջ եկած նավահանգստային կառույցները միացնող ուղիղ գիծն է:

Ծովածոցի անվան տակ հասկացվում է ափի ընդգծված խորացումը, որն այն չափով է մխրճվում ցամաք, որ ավելին է, քան ուղղակի ափի աղեղը: Եթե առավելագույն տեղատվության ժամանակ ծովածոցի մուտքի խորությունը պակաս է 24 ծովային մղոնից, ապա ամբողջ ծովածոցը պատկանում է ափամերձ պետության ներքին ծովային ջրերին:

Ներքին ծովային ջրերի իրավական ռեժիմը ներքին ջրեր և նավահանգիստներ մուտք գործելու, այդտեղ գտնվելու և դուրս գալու կանոնների համակցությունն է: Այն սահմանվում է ներպետական օրենսդրությամբ և միջազգային իրավական նորմերով:

Օտարերկրյա նավերը մուտք են գործում պետության ներքին ջրեր և նավահանգիստներ՝ նրա թույլտվությամբ: Մակայն, գործնականում, թույլատրական կարգը տարբեր կերպ է իրացվում ոչ ռազմական և ռազմական նավերի նկատմամբ: Օտարերկրյա ոչ ռազմական նավերին թույլատրվում է ազատ մուտք գործել բաց հայտարարված նավահանգիստներ: Օտարերկրյա պետությունների ռազմական նավերը կարող են մուտք գործել ներքին ջրեր և նավահանգիստներ՝ ափամերձ պետության թույլտվության հիման վրա կամ նրա իրավերով:

Նավահանգիստ ժամանող բոլոր նավերը ենթակա են սահմանապահ, սանիտարական և մաքսային զննման: Ափամերձ պետությունը չի կարող նավերից վճար գանձել՝ նավահանգիստ մուտք գործելու և

այդտեղ գտնվելու համար: Վճար է գանձվում միայն մատուցված ծառայությունների համար:

Ներքին ջրերում և նավահանգիստներում գտնվող օտարերկրյա ոչ ռազմական նավերի նկատմամբ տարածվում է ափամերձ պետության իրավասությունը: Քրեական իրավասությունն արտահայտվում է նրանում, որ ափամերձ պետության իրավասու մարմիններն իրավունք ունեն իրականացնել նախաքննություն և քննել նավերում կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերը: Քաղաքացիական իրավասությունը ենթադրում է ափամերձ պետության դատական մարմինների՝ օտարերկրյա նավերի նկատմամբ գույքային հայցեր քննելու իրավունքը: Քաղաքացիական հայցի ապահովման նպատակով նավի վրա կարող է արգելանք դրվել: Նավապետն ու անձնակազմի անդամները նույնպես կարող են պատասխանատվության ենթարկվել: Ափամերձ պետության իրավասությունից անձեռնմխելիությունից օգտվում են պետական ոչ առևտրային և ռազմական նավերը: Ռազմական նավերը ներքին ջրերում և նավահանգիստներում օգտվում են անձեռնմխելիության իրավունքից: Օտարերկրյա ռազմական նավի նկատմամբ անթույլատրելի է հարկադիր որևէ գործողությունների կիրառումը:

Արշիպելագային ջրեր: Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայով ներմուծվել է ծովային տարածության իրավական նոր տեսակ՝ «արշիպելագային ջրեր»: Արշիպելագային ջրերի ռեժիմը կիրառելի է միայն արշիպելագ-պետությունների նկատմամբ:

Արշիպելագ-պետության ինքնիշխանությունը տարածվում է արշիպելագային ջրերի, դրանցից վեր օդային տարածության, դրանց հատակի ու ընդերքի և դրանց պաշարների նկատմամբ: Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիան նախատեսում է արշիպելագային ջրերով անցման երկու տեսակ՝ խաղաղ անցում և արշիպելագային անցում, որը մոտ է տարանցիկին:

Տարածքային ծով: Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիան (հ. 2) նախատեսում է, որ ափամերձ պետության ինքնիշխանությունը տարածվում է իր ցամաքային տարածքի և ներքին ջրերի սահմաններից դուրս (իսկ արշիպելագ-պետության պարագայում՝ դրա արշիպելագային ջրերի սահմաններից դուրս) հարող ծովային գոտու նկատմամբ, որն անվանվում է *տարածքային ծով* (դրան համարժեք է

«տարածքային ջրեր» եզրույթը): Այսպիսով, տարածքային ծովը պետության ցամաքային տարածքին (հիմնական ցամաքային զանգվածին ու կղզիներին) և ներքին ջրերին հարող ծովային գոտին է: Տարածքային ծովը, դրա հատակն ու ընդերքը, դրանից վեր օդային տարածությունը ավաներձ պետության տարածքի բաղկացուցիչ մասն են և գտնվում են նրա ինքնիշխանության ներքո: Տարածքային ծովի նկատմամբ ավաներձ պետության ինքնիշխանությունն իրականացվում է միջազգային իրավունքի նորմերի պահպանմամբ:

Տարածքային ծովի լայնության մասին հարցը երկար ժամանակ լուծում չէր ստանում՝ տարբեր պետությունների դիրքորոշումների և գործելակերպի զգալի տարբերությունների պատճառով: Միայն 1982 թ. Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայով սահմանվել է, որ յուրաքանչյուր պետություն իրավունք ունի սահմանել իր տարածքային ծովի լայնությունը՝ մինչև ծովային 12 մղոնը չգերազանցող սահմանը, որը հաշվարկվում է այդ կոնվենցիայի հիման վրա որոշված ելակետային գծերից:

Տարածքային ծովը մեծ նշանակություն ունի միջազգային ծովային նավագնացության համար: Դրանով է բացատրվում դրա իրավական ռեժիմի հիմնական առանձնահատկությունը (օրինակ, ներքին ծովային ջրերի ռեժիմի համեմատությամբ)՝ *խաղաղ անցման* իրավունքը: Բոլոր պետությունների նավերն օգտվում են տարածքային ծովով խաղաղ անցման իրավունքից: Այդպիսի անցման համար ավաներձ պետության իրավասու իշխանությունների նախնական համաձայնություն չի պահանջվում:

Անցման իրավունքի տակ հասկացվում է տարածքային ծովում նավարկելու հնարավորությունն առանց ներքին ջրեր մտնելու, ներքին ջրեր մտնելով և դուրս գալով: Ամեն դեպքում անցումը պետք է լինի անընդհատ և արագ:

Ավաներձ պետությունը կարող է ընդունել նավագնացության անվտանգությանը և տարածքային ծովում նավերի երթևեկության կարգավորմանը վերաբերող օրենքներ և կանոններ: Ձկնորսությունը և այլ գործունեությունն օտարերկրյա նավերի կողմից իրականացվում է միայն ավաներձ պետության իրավասու իշխանությունների թույլտվությամբ կամ նրանց հատուկ համաձայնությամբ:

Իրականացնելով տարածքային ծովով խաղաղ անցման իրավունքը՝ օտարերկրյա նավերը պարտավոր են պահպանել այդտեղ սահմանված իրավական ռեժիմը: Այդ ռեժիմը խախտող նավերի նկատմամբ կարող են կիրառվել խախտման կասեցման կամ խախտողին պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ միջոցներ:

Այդպիսով, սահմանվել է տարածքային ծովի իրավաբանական կարգավիճակը, որպես ավաներձ պետության ինքնիշխանության ներքո գտնվող՝ դրա տարածքի ինտեգրալ մասի, որի նկատմամբ պետությունն իրականացնում է իր իրավասությունը՝ Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունների և միջազգային իրավունքի այլ նորմերի հաշվառմամբ:

Հարակից գոտի: Հարակից գոտին տարածքային ծովին հարող ծովային տարածության մասն է, որտեղ ավաներձ պետությունը կարող է վերահսկողություն իրականացնել օրենքով սահմանված որոշակի բնագավառներում:

Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայի 33-րդ հոդվածի համաձայն, վերահսկողությունը կարող է անհրաժեշտ լինել՝

- իր տարածքի կամ տարածքային ծովի սահմաններում մաքսային, ֆիսկալ, ներգաղթային և սանիտարական օրենքների և կանոնների խախտումը կանխարգելելու համար,

- այդ կանոնները խախտելու համար պատժելու նպատակով:

Հարակից գոտին չի կարող տարածվել ելակետային այն գծերից 24 մղոնի սահմաններից դուրս, որոնցից հաշվարկվում է տարածքային ծովը:

Բաց ծով: Բաց ծովը Համաշխարհային օվկիանոսի տարածությունների՝ ազգային իրավասության սահմաններից դուրս գտնվող մասն է, որը ավաներձ պետության տարածքի մաս չէ և բաց է բոլոր պետությունների կողմից միջազգային իրավունքի նորմերի հիման վրա օգտագործելու համար: Դրանք ծովային այն տարածքներն են ներառյալ դրանցից վեր օդային տարածքը, որոնք ունեն ոչ պետական (միջազգային) տարածքի իրավաբանական կարգավիճակ, և որոնց իրավական ռեժիմը կարգավորվում է բացառապես միջազգային իրավունքով:

Բաց ծովի մասին ՄԱԿ-ի 1958 թ. և Ծովային իրավունքի ՄԱԿ-ի 1982 թ. կոնվենցիաների համաձայն, բաց ծովն ազատ է բոլոր՝ ինչպես ավիաներձ, այնպես էլ ծովեզերք չունեցող (ներմայրցամաքային) պետությունների համար:

Ծովեզերք չունեցող պետությունները պետք ունենան դեպի բաց ծով մուտքի հնարավորություն: Այդ նպատակով նրանք համաձայնագրեր են կնքում դեպի ծով ելք ունեցող պետությունների հետ՝ նրանց տարածքով տարանցման, ծովային նավահանգիստներ մուտքի և դրանց օգտագործման մասին:

Որպես սովորության իրավական ծագած՝ բաց ծովի ազատության սկզբունքը ամրագրված է 1958 թ. և 1982 թ. կոնվենցիաներում: Բաց ծովի ազատության ռեժիմը ներառում է՝

- նավագնացության ազատությունը,
- թռիչքների ազատությունը,
- ստորջրյա մալուխների և խողովակաշարերի անցկացման ազատությունը,
- արհեստական կղզիների և այլ սարքերի կառուցման ազատությունը,
- ձկնորսության և որսի ազատությունը,
- գիտական հետազոտությունների ազատությունը:

Նավագնացության ազատությունը նշանակում է, որ յուրաքանչյուր պետություն իրավունք ունի ինչպես ավիաներձ, այնպես էլ դեպի ծով ելք չունեցող, որպեսզի իր դրոշի ներքո նավերը նավարկեն բաց ծովում: Նավերն ունեն այն պետության ազգային պատկանելությունը, որի դրոշի ներքո նավարկելու իրավունք ունեն: Որոշակի պետության դրոշի տակ նավարկելու իրավունքի տրամադրման պայմանները, ինչպես նաև գրանցման և նավին իր ազգային պատկանելության տրամադրման կարգը որոշում է ինքը՝ պետությունը: Կոնվենցիաները միայն պահանջում են, որպեսզի նավի և պետության միջև գոյություն ունենա իրական կապ, մասնավորապես՝ պետությունը պետք է արդյունավետ իրականացնի իր իրավասությունն ու վերահսկողությունը՝ վարչական, տեխնիկական և սոցիալական հարցերում:

Բաց ծովում տվյալ պետության դրոշի ներքո նավարկող նավի նկատմամբ տարածվում է նրա բացառիկ իրավասությունը, բացա-

նությամբ Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայում և միջազգային այլ պայմանագրերում ուղղակիորեն նախատեսված դեպքերի:

Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիան նախատեսում է այդ սկզբունքից մի շարք բացառություններ: Ռազմական նավն իրավասու է զննության ենթարկել օտարերկրյա նավը, եթե ողջամիտ հիմքեր կան ենթադրելու, որ նավն զբաղվում է ծովահենությամբ, ստրկավաճառությամբ, չսանկցիավորված ռադիո և հեռուստահեռարձակմամբ, չունի ազգային պատկանելություն կամ իրականում ունի նույն ազգային պատկանելությունը, ինչ ռազմական նավը, թեև դրանում բարձրացված է օտարերկր ա դրոշ կամ հրաժարվում է դրոշ բարձրացնելուց:

Թռիչքների ազատությունը ենթադրում է, որ բոլոր պետությունների օդանավերն իրավունք ունեն թռիչքներ իրականացնել բաց ծովից վեր օդային տարածությունում:

Մալուխների և խողովակաշարերի անցկացման ազատությունը տարածվում է բաց ծովի հատակի նկատմամբ՝ մայրցամաքային ելուստի սահմաններից դուրս:

Արհեստական սարքերի և կղզիների կառուցման ազատությունն իրականացվում է ինչպես օվկիանոսի ջրային մասում, այնպես էլ՝ հատակում:

Ձկնորսության ազատությունը (որսի իրավունքը) բաց ծովում ընձեռված է բոլոր պետություններին՝ նրանց կողմից միջազգային պարտավորությունների պահպանման պայմանով, այդ թվում՝ ավիաներձ պետությունների շահերի առնչությամբ: Ձկնորսության ազատությունն ընդգրկում է նաև կենդանի պաշարների որսի այլ տեսակները:

Գիտական հետազոտությունների ազատությունը ենթադրում է, որ բոլոր պետությունները, անկախ աշխարհագրական դիրքից, ինչպես նաև իրավասու միջազգային կազմակերպությունները իրավունք ունեն կատարել ծովային գիտական հետազոտություններ:

Նավագնացության անվտանգության ապահովման և պետությունների այլ շահերի պաշտպանության նպատակով միջազգային իրավական նորմերով նախատեսվում են որոշ հակաիրավական գործողությունների կանխմանն ու կասեցմանն ուղղված մի շարք միջոցներ: Հակաիրավական այդ գործողությունները, որոնց դեմ պայքարե-

լու պարտականություն ունեն պետությունները, մասնավորապես, հետևյալներն են՝

- տվյալ պետության դրոշի ներքո նավարկելու իրավունք ունեցող նավերով ստրուկներ փոխադրելը,

- ծովահենությունը, որի տակ հասկացվում է մասնավոր նավերի կամ թռչող ապարատների բռնության, գերման կամ կողոպտման ցանկացած անիրավաչափ գործողություն բաց ծովում՝ ուղղված այլ նավի կամ թռչող ապարատի կամ նավում գտնվող անձանց կամ գույքի դեմ,

- բաց ծովում իրականացվող՝ թմրանյութերի և հոգեմեդիկամենտների ապօրինի վաճառքը,

- չսանկցիավորված հեռարձակումը բաց ծովից:

Բաց ծովում նավագնացության իրավական ռեժիմը ներառում է նաև օգնություն ցույց տալու մասին, ծովում մարդու կյանքի պահպանության մասին, ծովում բախումների և այլ միջադեպերի կանխարգելման մասին, ծովային միջավայրի պահպանման մասին համաձայնագրերով նախատեսված կանոնները:

Մայրցամաքային ելուստ: Մայրցամաքային ելուստը ավիամերձ պետության մայրցամաքի ստորջրյա շարունակությունն է՝ մինչև դրա կտրուկ ընդհատվելը կամ մայրցամաքային լանջի անցնելը: «Մայրցամաքային ելուստ» եզրույթը կիրառվում է՝

- ավիան հարող, բայց տարածքային ծովի գոտուց դուրս գտնվող ստորջրյա շրջանների ծովային հատակի և ընդերքի նկատմամբ՝ մինչև մայրցամաքի ստորջրյա ծայրամասի արտաքին սահմանը, կամ այդ ուղղությամբ մինչև 200 մղոն երկայնքով կամ այդ սահմանից դուրս մինչև այն տեղը, ուր ծածկող ջրերի խորությունը թույլ է տալիս այդ շրջանների բնական հարստությունների արդյունահանումը ,

- կղզիների ավերին հարող նման ստորջրյա շրջանների մակերեսի և ընդերքի նկատմամբ:

Մայրցամաքային ելուստի իրավական ռեժիմը հանգում է նրան, որ ավիամերձ պետություններն իրականացնում են ինքնիշխան իրավունքներ մայրցամաքային ելուստի նկատմամբ՝ դրա բնական պաշարների հետախուզման և արդյունահանման նպատակով: Այդ իրավունքները բացառիկ են այն իմաստով, որ ոչ ոք չի կարող գործու-

նելություն իրականացնել այդպիսի պետության մայրցամաքային ելուստի վրա՝ առանց այդ պետության որոշակիորեն արտահայտված համաձայնության:

Մայրցամաքային ելուստի բնական պաշարներն ընդգրկում են ծովային հատակի և դրա ընդերքի հանքային և ոչ կենդանի այլ պաշարները, ինչպես նաև «նստակյաց տեսակներին» պատկանող կենդանի օրգանիզմները, ինչպես դրանք բնորոշված են Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայի հ. 77 կ. 4-ում:

Մայրցամաքային ելուստի նկատմամբ ավիամերձ պետության ինքնիշխան իրավունքները չեն առնչվում ծածկող ջրերի և այդ ջրերից վեր օդային տարածության՝ որպես բաց ծովի տարածությունների իրավաբանական կարգավիճակին: Ավիամերձ պետության կողմից ինքնիշխան այս իրավունքների իրականացումը չպետք է, մասնավորապես, վնասի Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայով բաց ծովի համար նախատեսված՝ նավագնացության և այլ իրավունքների իրականացմանը:

Բոլոր պետությունները նաև իրավունք ունեն մայրցամաքային ելուստին անցկացնելու ստորջրյա մալուխներ և խողովակաշարեր, սակայն այդպիսիք անցկացնելու ուղին պետք է որոշվի ավիամերձ պետության համաձայնությամբ:

Բացառիկ փնտեսական գոտի: Բացառիկ տնտեսական գոտին տարածքային ծովի սահմաններից դուրս գտնվող և դրան հարող ծովային շրջան է, ոչ ավելի, քան այն ելակետային գծերից հաշվվող 200 մղոն լայնությամբ, որոնցից չափվում է տարածքային ծովի լայնությունը:

Բացառիկ տնտեսական գոտու իրավական ռեժիմը նախատեսում է, որ ավիամերձ պետությունն այդտեղ իրականացնում է՝

- ինքնիշխան իրավունքներ բնական պաշարների հետախուզման, արդյունահանման և պահպանման նպատակով, ինչպես նաև նշված գոտու տնտեսական հետախուզման և արդյունահանման գործունեության այլ տեսակների նկատմամբ,

- իրավասություն արհեստական կղզիների, սարքերի և կառույցների ստեղծման և օգտագործման, ծովային զիտական հետազոտությունների, ծովային միջավայրի պաշտպանության և պահպանման նկատմամբ.

• կենդանի պաշարների թույլատրելի որսի որոշումը և միջոցներ է ձեռնարկում նրանց պահպանման ուղղությամբ:

Բոլոր այլ պետություններն այդ գոտում օգտվում են բաց ծովին վերաբերող՝ Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներով նախատեսված իրավունքներից, ազատություններից և իրավասությունից:

Եթե պետության հնարավորությունները թույլ չեն տալիս նրան օգտագործել իր գոտում թույլատրելի ամբողջ որսը, ապա նա համաձայնագրերի հիման վրա համապատասխան հնարավորություն է տրամադրում այլ պետություններին: Որսին թույլատրվող օտարերկրյա ձկնորսները պահպանում են ավիամերձ պետության օրենքներն ու կանոնները, որոնք պետք է համապատասխանեն Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին: Նշված օրենքների և կանոնների պահպանումն ապահովելու համար ավիամերձ պետության իշխանությունները կարող են կատարել զննություն, ստուգում, ձերբակալել օտարերկրյա ձկնորսական նավերն ու նրանց նկատմամբ դատական քննություն սկսել:

Ծովային հայրակի միջազգային շրջանը: Համաշխարհային օվկիանոսում ավիամերձ պետությունների ազգային իրավասությունը տարածվում է մայրցամաքային ելուստի սահմաններում ծովային հատակի և դրա ընդերքի նկատմամբ, ուստի և ծովային հատակի միջազգային շրջանի սահմաններն են ավիամերձ պետությունների մայրցամաքային ելուստների արտաքին սահմանները:

Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայի I-ին հոդվածում ծովային հատակի միջազգային շրջանը բնորոշված է որպես ծովերի և օվկիանոսների հատակը և դրանց ընդերքը՝ ազգային իրավասության սահմաններից դուրս: Կոնվենցիայի 133-րդ հոդվածում օգտագործվում է «պաշար» եզրույթը, որը նշանակում է «Շրջանում՝ ծովային հատակին կամ դրա ընդերքում «in situ»¹ բոլոր կոշտ, հեղուկ կամ գազային հանքային պաշարները»: Շրջանից արդյունահանված պաշարները դիտվում են որպես օգտակար հանածոներ:

Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայի 136-րդ հոդվածի համաձայն, Շրջանը և դրա պաշարները «մարդկության ընդհանուր ժա-

նանգությունն են»: Այդ հասկացության վրա հիմնված՝ Շրջանի և դրա պաշարների իրավական կարգավիճակը բացահայտվում է Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայի 137 և հաջորդ հոդվածներում:

Ոչ մի պետություն չի կարող հավակնել Շրջանի կամ դրա պաշարների նկատմամբ ինքնիշխանության կամ ինքնիշխան իրավունքների, կամ իրականացնել դրանք. ոչ մի պետություն, ֆիզիկական կամ իրավաբանական անձ չի կարող յուրացնել դրա որևէ մասը: Շրջանի պաշարների նկատմամբ բոլոր իրավունքները պատկանում են ամբողջ մարդկությանը, որի անունից գործում է Ծովային հատակի միջազգային մարմինը (Մարմին), որի անդամներն են Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայի բոլոր մասնակիցները:

Մարմինը այն կազմակերպությունն է, որի օգնությամբ Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայի մասնակից պետությունները կազմակերպում և վերահսկում են Շրջանում իրականացվող գործունեությունը, հատկապես դրա պաշարների կառավարման նպատակով:

Մարմինն ունի Ասամբլեա՝ լրիվ կազմի մարմին, Ասամբլեայի կողմից ընտրվող՝ 36 անդամից բաղկացած Խորհուրդ, Գլխավոր քարտուղարից և անձնակազմից բաղկացած քարտուղարություն: Ծովային հատակի միջազգային մարմնի յուրահատուկ մարմին է իր կանոնադրությունն ունեցող ձեռնարկությունը:

Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն՝ Շրջանում գործունեությունն իրականացվում է Մարմնի և մասնակից պետությունների կամ պետական ձեռնարկությունների, կամ անդամ պետությունների երաշխավորության դեպքում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից: Մարմինն ապահովում է Շրջանում գործունեությունից ստացվող ֆինանսական և տնտեսական այլ շահերի արդարացի բաշխումը:

Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիային համապատասխան, Շրջանում գործունեության նկատմամբ կիրառվում են այդպիսի գործունեության՝ ծովային միջավայրի համար վտանգավոր հնարավոր հետևանքներից դրա պաշտպանության անհրաժեշտ միջոցներ:

Միջազգային ներուցներ: Միջազգային են համարվում ծովային տարածության մասերը միացնող և միջազգային նավագնացության

¹ Լատիներեն՝ «անշարժ, հանգիստ վիճակում»:

համար օգտագործվող նեղուցները: Այդպիսի նեղուցների ռեժիմի ուղղման հիմքում դրված է ավիամերձ (նեղուցամերձ) պետությունների և դրանցից օգտվող այլ պետությունների շահերի համակցման կանոնը:

Մեծ թվով նեղուցներ միակ կամ ամենահարմար անցումն են բաց ծովի մի մասից մեկ այլ մասը, կամ մուտք են ծառայում բաց ծովից տարածքային ծով: Այդպիսի դիրքը կանխորոշում է դրանց նշանակությունը միջազգային նավագնացության համար: Որոշ նեղուցների իրավական ռեժիմը (սևծովյան, բալթյան) կարգավորվել է միջազգային պայմանագրերով, իսկ մեծամասնության համար ձևավորվել և գործում է միջազգային սովորութային իրավունքի նորմ:

Սևծովյան նեղուցների (Բոսֆորի և Դարդանելի) իրավական ռեժիմը կարգավորվում է 1936 թ. Մոնտրոյում (Շվեյցարիա) կնքված կոնվենցիայով:

Խաղաղ ժամանակ բոլոր պետությունների նավերն ունեն նեղուցներով խաղաղ անցման իրավունք օրվա ցանկացած ժամին: Միևնույն կանոնը գործում է նաև պատերազմի ժամանակ, եթե Թուրքիան պատերազմող կողմ չէ: Իսկ եթե Թուրքիան մասնակցում է պատերազմին, ապա ցերեկային ժամանակ նեղուցներով անցման և նավարկելու ազատությունը պահպանում են Թուրքիայի հետ պատերազմի մեջ չգտնվող պետությունները: Նեղուցներով անցնող յուրաքանչյուր նավից գանձվում են սանիտարական և փարոսային վճարներ:

Սևծովյան տերություններն իրավունք ունեն նեղուցներով անցկացնել ցանկացած ռազմական նավ, ընդ որում՝ գծանավերը (և դրանց հավասարեցվածները) նեղուցն անցնում են մեկ առ մեկ և ուղեկցվում ոչ ավել, քան երկուական ականակիրներով:

Բալթյան նեղուցների (Մեծ և Փոքր Բելթերի և Չունդի) իրավական ռեժիմը կարգավորվում է 1857 թ. Կոպենհագենի տրակտատով, որի մասնակիցն էր նաև Ռուսական Կայսրությունը:

Միջազգային ջրանցքներ: Միջազգային նավագնացության համար մեծ նշանակություն ունեն Սուեզի, Պանամայի և Կիլի ջրանցքները:

Սուեզի ջրանցքը նավագնացության համար բացվել է 1869 թ., իսկ 1888 թ. ընդունվել է Սուեզի ջրանցքով ազատ նավագնացության ա-

պահովման վերաբերյալ Կոստանդնուպոլսյան կոնվենցիան, որը գործում է մինչ օրս:

Կոնվենցիայի հիմնական դրույթները հանգում են հետևյալին. ջրանցքն ազատ է և բաց՝ բոլոր երկրների առևտրային և ռազմական նավերի համար՝ խաղաղ և պատերազմական ժամանակ: Ջրանցքի շրջափակումն անթույլատրելի է. պատերազմող երկրների ռազմական նավերը պարտավոր են նեղուցն անցնել առանց կանգառի և ամենակարճ ժամկետում, ջրանցքում և մուտքի նավահանգիստներում, ինչպես նաև այդ նավահանգիստների շուրջ երեք մղոնի սահմաններում արգելվում է պատերազմական գործողություններ վարել:

Պանամայի ջրանցքը պաշտոնապես բացվել է 1920 թ.: Դրա իրավական ռեժիմը մշակվել է մինչ շինարարությունը: 1903 թ. ԱՄՆ-ի և Պանամայի միջև կնքվել է օվկիանոսների միջև ջրանցքի շինարարության մասին պայմանագիր, որի համար ԱՄՆ-ին Պանամայի տարածքում հավերժ տրամադրվել էր 10 մղոն լայնությամբ հողաշերտ:

1977 թ. Վաշինգտոնում ԱՄՆ-ի և Պանամայի միջև կնքվել են Պանամայի ջրանցքի մասին նոր պայմանագրեր: Դրանց համաձայն, ջրանցքի գոտու նկատմամբ վերականգնվել է Պանամայի ինքնիշխանությունը: 1999 թ. դեկտեմբերի 31-ից Պանաման ստանձնել է դրա կառավարման, շահագործման և սպասարկման գործառույթները: Ջրանցքը հռչակվել է «մշտապես չեզոք» ջրային ուղի, որը բաց է բոլոր երկրների նավերի համար:

Միջազգային գեյտերը: Չնայած գեյտերը ծովային տարածությունների թվին չեն դասվում, այդուհանդերձ, դրանց օգտագործումը շոշափում է միջազգային ծովային իրավունքի կարգավորման առարկայի մեջ մտնող շատ հիմնահարցեր, կապված նավագնացության, պետական ինքնիշխանության և այլ խնդիրների հետ, ուստի և տրամաբանական է միջազգային գեյտերի իրավական ռեժիմը դիտարկել հենց այս ենթատեքստում:

Միջազգային գեյտերը՝ երկու (կամ ավելի) պետությունների տարածքով հոսող և համաձայնեցված նպատակներով օգտագործվող գեյտերն են: Հատուկ նշանակություն ունեն ծովի հետ նավագնացային հաղորդակցություն ունեցող և տարբեր պետությունների (այդ թվում՝ ոչ ավիամերձ) կողմից նավագնացության համար օգտագործվող գեյտերը:

Աշխարհագրական և տնտեսական այս գործոնները պայմանավորում են այդպիսի գետերի միջազգային իրավական ռեժիմը: Յուրաքանչյուր պետություն ինքնիշխանություն է իրականացնում գետի՝ իր սահմանների ներսում գտնվող մասի նկատմամբ: Միևնույն ժամանակ, նա պարտավորված է գետի իր հատվածն օգտագործել այնպես, որպեսզի վնաս չպատճառվի ամիսներձ պետություններին: Պետությունն իրավասու չէ միակողմանի փոփոխել գետի հունը, քանի որ դա կարող է սահմանափակել ամիսներձ մյուս պետությունների հնարավորությունները կամ վնաս պատճառել նրանց բնական միջավայրին:

Արևմտյան Եվրոպայի հիմնական գետերով նավագնացության ազատությունը ճանաչվել է 1815 թ. Վիեննայի կոնգրեսի կողմից, որը միաժամանակ ամիսներձ պետություններին իրավունք է վերապահել նման նավագնացության փոխհամաձայնեցված կանոններ սահմանել:

Հատուկ կարգավորում է նախատեսված Դանուբի համար: Այդ գետի ժամանակակից ռեժիմը որոշվում է *Դանուբում նավագնացության ռեժիմի մասին 1948 թ. կոնվենցիայով*:

Կոնվենցիայում տեղ են գտել միջազգային գետի իրավական ռեժիմի յուրահատուկ բնութագրիչ գծերը, որտեղ նավագնացությունը հայտարարվում է ազատ քաղաքացիների, առևտրային նավերի և ապրանքների համար՝ առևտրային և նավագնացության վճարների և նավագնացության պայմանների հավասարության հիմքի վրա:

Նավագնացության ազատությունը ենթադրում է ոչ միայն գետով նավարկությունը, այլև նավահանգիստներ մուտք գործելը, դրանցում առևտրային, բեռնման և բեռնաթափման աշխատանքներ կատարելը, ուղևորներ վերցնելը և իջեցնելը: Այդ պարագայում ենթադրվում է, որ ամիսներձ պետություններում գործող օրենքները և կանոնները պարտադիր պետք է պահպանվեն:

ԳԼՈՒԽ 17. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 47. Միջազգային օդային իրավունքի հասկացությունը

Միջազգային օդային իրավունքը միջազգային իրավունքի ճյուղ է, որը միջազգային օդային հաղորդակցությունների իրականացման հետ կապված միջպետական հարաբերությունները կարգավորող միջազգային իրավական սկզբունքների և նորմերի համակցություն է:

Միջազգային օդային իրավունքի նորմերը կարգավորում են օդային հաղորդակցությունների հաստատման, իրականացման և զարգացման ընթացքում պետությունների միջև ծագող հարաբերությունները: Միջազգային օդային իրավունքի առարկան օդային տարածության իրավական ռեժիմի և միջազգային օդային հաղորդակցությունների վերաբերյալ միջպետական հարաբերություններն են: Միջազգային օդային իրավունքն ընդգրկում է իրավական կարգավորման երկու հիմնական ոլորտ՝ պետությունների օդային տարածությունում և միջազգային օդային տարածությունում միջազգային թռիչքների իրականացումը: Համապատասխանաբար՝ օդանավերը կարող են կատարել երկու տեսակի թռիչքներ՝ միջազգային և ներպետական: Միջազգային են համարվում այն թռիչքները, որոնց ընթացքում օդանավը հատում է պետական սահմանները:

Անհրաժեշտ է նշել, որ միջազգային օդային իրավունքը կանոնակարգում է հիմնականում օդային տարածության օգտագործումը քաղաքացիական ավիացիայի կողմից օդային փոխադրումներ կատարելու նպատակով: Ռազմական կամ պետական պատկանելություն ունեցող այլ ավիացիայի օգտագործումը, որպես կանոն, դուրս է մնում միջազգային օդային իրավունքի կարգավորիչ ներգործությունից:

Միջազգային օդային իրավունքի աղբյուրները: Միջազգային օդային իրավունքի հիմնական աղբյուրը միջազգային պայմանագրերն են:

Միջազգային օդային իրավունքի ոլորտի հիմնական փաստաթուղթը 1944 թ. Չիկագոյում կնքված *Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին կոնվենցիան* է: Չիկագոյի կոնվենցիան սահմա-

նում է միջազգային թռիչքների, օդային տրանսպորտի գործունեության կարգավորման և դրա անվտանգության ապահովման բնագավառում միջպետական համագործակցության հիմնական սկզբունքները, ինչպես նաև ներառում է *Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ/ICAO)* հիմնադիր դրույթները:

Միջազգային օդային իրավունքի նորմատիվ համակարգն ընդգրկում է նաև մի շարք այլ պայմանագրեր, որոնցից են՝

- 1929 թ. Վարշավայում ստորագրված *Միջազգային օդային փոխադրումներին վերաբերող որոշ կանոնների միասնականացման մասին կոնվենցիան*,
- *Մակերևութի վրա օդարերկրյա օդանավի կողմից երրորդ անջանց պարճատված վնասի հատուցման մասին 1952 թ. Հռոմի կոնվենցիան*,
- *Օդանավում իրավահաստատումների և որոշ այլ գործողությունների մասին 1963 թ. Տոկիոյի կոնվենցիան*,
- *Օդանավերի ապօրինի զավթումների դեմ պայքարի մասին 1970 թ. Հաագայի կոնվենցիան*,
- *Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին 1971 թ. Մոնրեալի կոնվենցիան*:

Լայն տարածում են ստացել օդային հաղորդակցության մասին *երկկողմ պայմանագրերը*, որոնք որոշակիացնում են Չիկագոյի կոնվենցիայի և այլ կոնվենցիաների ընդհանուր դրույթները՝ պայմանադիր պետությունների համագործակցության պայմանների առնչությամբ:

Միջազգային պայմանագրերի հետ մեկտեղ միջազգային օդային իրավունքի աղբյուր են միջազգային իրավական սովորույթները: Այսպես, 1944 թ. Չիկագոյի կոնվենցիային չմասնակցող պետությունների համար դրանում ամրագրված՝ իրենց տարածքի վրա գտնվող օդային տարածության նկատմամբ պետությունների ինքնիշխանության սկզբունքը մնում է սովորության իրավական նորմ: Սովորության ինչպես այլ նորմերի թվին կարելի է դասել նաև այն դրույթները, որ բաց օդային տարածքում պետությունը պահպանում է իր իրավասությունն այն օդանավի նկատմամբ, որը գրանցված է տվյալ պետության գրանցամատյանում, կամ , որ ադետի դեպքում օդանավն իրավունք

ունի չարտոնված մուտք գործել այլ պետության օդային տարածություն՝ վթարային վայրէջք կատարելու նպատակով:

Միջազգային օդային իրավունքում մեծ դեր են խաղում ԻԿԱՕ-ի խորհրդի կողմից ընդունվող կամ հավանության արժանացող չափորոշիչները, ընթացակարգերը, հանձնարարականները, որոնք հայտնի են «*միջազգային ավիացիոն կանոնակարգեր*» ընդհանուր անվանմամբ:

Միջազգային օդային իրավունքի նորմերը փոխգործում են ներպետական իրավունքի համապատասխան նորմերի հետ:

§ 48. Միջազգային օդային իրավունքի սկզբունքները

Իրենց օդային տարածության նկատմամբ պետությունների բացառիկ և լրիվ ինքնիշխանության սկզբունքը ամրագրվել է ինչպես միջազգային համաձայնագրերում (1944 թ. Չիկագոյի կոնվենցիայի հ. 1), այնպես էլ տարբեր երկրների օրենսդրությամբ:

Օդային տարածության նկատմամբ ինքնիշխանության սկզբունքի հիմնական բովանդակությունն այն է, որ պետությունները, իրականացնելով իրենց օդային տարածության նկատմամբ բացառիկ և լիակատար ինքնիշխանություն, ինքնուրույն են սահմանում իրենց օդային տարածքի օգտագործման իրավական ռեժիմը:

Պետության օդային տարածությունը կարող է օգտագործվել օտարերկրյա թռչող ապարատների թռիչքների համար միայն թույլատրական կարգին համապատասխան: Օտարերկրյա օդանավերը որոշակի պետության տարածք թույլատրելու, այսինքն՝ միջազգային թռիչքների իրականացման հիմք է միջազգային պայմանգիրը կամ հատուկ թույլտվությունը: Պետությունը սահմանում է օտարերկրյա օդանավերի կողմից իր սահմանի հատման վայրը և կարգը, իր օդային տարածությունում սահմանում է օդային երթուղիները, կարգավորում է բոլոր օդային տեղաշարժերը, օտարերկրյա օդանավերի և դրանց անձնակազմերի նկատմամբ իրականացնում է վարչական և քրեական իրավասություն, իրացնում է միջազգային թռիչքները կարգավորող նորմերը:

Միջազգային պայմանագրերում և պետությունների ազգային օրենսդրություններում միջազգային թռիչքները բաժանվում են երկու -

տեսակի՝ կանոնավորների և ոչ կանոնավորների (չարտերային): *Կանոնավոր* միջազգային թռիչքներն իրականացվում են պետության կողմից հատուկ նշանակված ավիաձեռնարկությունների կողմից՝ համապատասխան միջազգային պայմանագրում համաձայնեցված ուղիներով: *Ոչ կանոնավոր* թռիչքներն իրականացվում են հատուկ թույլտվության հիման վրա, սակայն վերջին տարիներին որոշ պետություններ կնքում են երկկողմ պայմանագրեր ոչ կանոնավոր օդային հաղորդակցությունների մասին:

Յուրաքանչյուր օդանավ որևէ այլ պետության տարածքի սահմաններում թռիչքի և գտնվելու ընթացքում պարտավոր է խստիվ պահպանել այդ պետությունում գործող՝ օդային հաղորդակցություններին վերաբերող օրենքները և կանոնները:

Օդային տարածության նկատմամբ ինքնիշխանության սկզբունքի համաձայն, պետությունները սովորաբար սահմանում են թռիչքների երթուղիներ, միջազգային օդանավակայանները և անհրաժեշտության դեպքում թռիչքների համար արգելված գոտիներ, ինչպես նաև որոշում են ռադիոկապի և թռիչքների անվտանգության ապահովման կանոններ:

Օտարերկրյա օդանավերի վրա տարածվում են անձնագրային, մաքսային, սանիտարական և այլ կանոններ, ինչպես նաև գույքի ներմուծման և արտահանման կանոնները:

Այսպիսով, միջազգային օդային հաղորդակցություններ իրականացնող օտարերկրյա օդանավը որևէ պետության տարածքում գտնվելիս ենթակա է այդ պետության իրավասությանը:

Բաց օդային տարածությունում թռիչքների ազատության սկզբունքը: Բաց կամ միջազգային օդային տարածությունը ավիամերձ պետությունների տարածքային ջրերից դուրս գտնվող օդային տարածությունն է: Միջազգային օդային տարածությունը գտնվում է բաց ծովի, միջազգային նեղուցների, արշիպելագային ջրերի, ինչպես նաև Անտարկտիդայի վրա:

Բաց ծովի ազատության սկզբունքն ուղղակիորեն կապված է դրանից վեր բաց օդային տարածության ազատության սկզբունքի հետ: Բոլոր պետությունները, անկախ նրանից՝ ավիամերձ են դրանք, թե ոչ, իրավունք ունեն ազատ, այն է՝ առանց որևէ մեկի թույլտվության իրականացնել օդանավագնացություն բաց ծովի վրա և չեն կարող

ինքնիշխան իրավունքներ ձեռք բերել այդ օդային տարածության նկատմամբ: Սակայն, այդ ազատությունը պետությունների կողմից իրացվում է միջազգային օդային իրավունքի նորմերի հաշվառմամբ և, հետևաբար, ենթադրում է մի շարք հանրաճանաչ կանոնների գործողություն:

Միջազգային օդային տարածությունում գտնվելու ժամանակ բոլոր օդանավերը ենթարկվում են միայն դրանց գրանցման պետության իրավասությանը: Մակայն միջազգային օդային տարածությունում թռիչքների ազատությունը չի նշանակում, որ պետությունները և նրանց օդանավերը ազատ են միջազգային համաձայնագրերում կամ ԻԿԱՕ-ի կանոնակարգերում ամրագրված որոշակի կանոնների և պահանջների պահպանման պարտականությունից: Պետությունները պարտավոր են հոգ տանել, որպեսզի իրենց իրավասության տակ գտնվող օդանավերը սպառնալիք չստեղծեն այլ պետությունների օդանավերի թռիչքների, ինչպես նաև ծովագնացության անվտանգության համար:

Միջազգային օդանավագնացությամբ զբաղվող յուրաքանչյուր օդանավ ունի համապատասխան ազգային և գրանցման նշաններ: Օդանավերն ունեն այն պետության ազգային պատկանելությունը, որում դրանք գրանցված են:

1944 թ. Չիկագոյի կոնվենցիայի համաձայն, թռիչքների կանոնները, որոնք սահմանվում են ԻԿԱՕ-ի կողմից, բաց ծովի վրա գործում են առանց որևէ բացառության: Բոլոր պետությունները պետք է պահպանեն այդ կանոնները և ձեռնարկեն միջոցներ, որպեսզի դրանք պահպանվեն իրենց օդանավերի կողմից բաց ծովի վրա թռիչքների ժամանակ:

1982 թ. *Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիան* հաստատեց բաց ծովի վրա թռիչքների ավանդական ազատությունը: Այդ ազատությանը չի ազդել նաև կոնվենցիայի համաձայն ստեղծված 200-մղոմանոց տնտեսական գոտին: Գոտուց վեր օդային տարածությունում նույնպես գործում է թռիչքների ազատությունը:

Միջազգային քաղաքացիական ավիացիայի անվտանգության ապահովման սկզբունքին համապատասխան՝ պետությունները պարտավոր են՝

• միջոցներ ձեռնարկել ավիացիոն տեխնիկայի օդանավակայանների, օժանդակ ծառայությունների և օդային ուղեգծերի տեխնիկական հուսալիության ապահովման ուղղությամբ,

• պայքարել քաղաքացիական ավիացիայի գործունեությանն ապօրինի միջամտությունների դեմ:

Դրան են ուղղված նախ և առաջ օդանավագնացության անվտանգության նկատմամբ միասնական այն պահանջները, որոնք զետեղված են Չիկագոյի կոնվենցիայում և դրա 18 հավելվածներում: Այդ պահանջները մշտական ճշգրտման և նորացման կարիք ունեն: Տվյալ գործառույթի իրագործումը ԻԿԱՕ-ի խնդիրն է: Այդ նպատակով ԻԿԱՕ-ի շրջանակներում պետությունները, ըստ անհրաժեշտության, պարբերաբար մշակում են միջազգային կանոնակարգեր (կանոններ, չափորոշիչներ, համձնարարականներ և այլն), որոնք վերաբերում են թռիչքների համար օդանավերի պիտանիությանը, թռիչքային ու տեխնիկական անձնակազմի որակավորմանը, օդանավերի գրանցմանը, կապի համակարգին և օդանավագնացության քարտեզներին, օդանավակայանների և վայրէջքի հրապարակների բնութագրերին, թռիչքների կանոններին և օդային երթևեկության կառավարմանը, ինչպես նաև օդանավագնացության անվտանգությանն ու արդյունավետությանն առնչվող այլ հարցերի:

Ընդհանուր առմամբ ԻԿԱՕ-ի կանոնակարգերը նպաստում են միջազգային քաղաքացիական ավիացիայի անվտանգությանն ու արդյունավետությանը, քանի որ դրանք աջակցում են տարբեր պետությունների կողմից՝ միջազգային օդափոխադրումների բնագավառում նորագույն նվաճումների վրա հիմնված քաղաքացիական օդանավերի թռիչքների միասնական կամ համանման թռիչքատեխնիկական նորմերի և կանոնների ներմուծմանը:

Միջազգային օդանավագնացության անվտանգության ապահովման կարևոր ուղղություն է պայքարը քաղաքացիական ավիացիայի գործունեությանն ապօրինի միջամտությունների (օդանավերի զավթումների, ահաբեկչության այլ դրսևորումների) դեմ: Դրան են ուղղված 1963 թ. Տոկիոյի, 1970 թ. Հասագայի և 1971 թ. Մոնրեալի կոնվենցիաները: Վերջինս սահմանել է ապօրինի միջամտությունների վերաբերյալ պետությունների ունիվերսալ իրավասությունը. յուրաքանչյուր պետություն պարտավոր է կամ պատժել հանցագործներին,

կամ էլ այդ նպատակով նրանց այլ պետության հանձնել: Համապատասխան ընթացակարգերը մանրամասն կանոնակարգվում են միջազգային քրեական իրավունքի կողմից:

§ 49. Միջպետական համագործակցությունը միջազգային օդային հաղորդակցությունների ոլորտում

Միջազգային օդային փոխադրումների բնույթը պայմանավորում է այս ոլորտում պետությունների սերտ համագործակցության անհրաժեշտությունը: Միջազգային իրավունքում մշակված են այդպիսի համագործակցության որոշակի կառուցակարգեր, որոնք կոչված են խթանելու միջազգային հաղորդակցությունների զարգացումը:

«Օդի ազատությունները»՝ Միջազգային օդային հաղորդակցությունների (փոխադրումների) իրականացումը սովորաբար կապված է մի շարք առևտրային բնույթի իրավունքների («օդի ազատություններ») հետ:

Միջազգային օդային հաղորդակցությունների առևտրային բնույթը կապված է այն հանգամանքի հետ, որ ուղևորների, ուղեբեռի, բեռների և փոստի փոխադրումներն իրականացվում են վճարի դիմաց, այսինքն օդային փոխադրումների իրականացումը շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեություն է: Տվյալ ոլորտում առևտրային գործունեությունն ունի տարբեր ծավալներ, ինչը պայմանավորված է այդ գործունեության իրականացման պայմաններով և հնարավորություններով: Այստեղ տարբերում են յոթ «օդի ազատություն»՝ տարբեր ծավալի հնարավորություններ տրամադրող առևտրային իրավունքներ՝

1. առանց պետության տարածքում վայրէջքի տարանցիկ թռիչքի իրավունքը,
2. այլ պետության տարածքում առանց առևտրային նպատակների (այսինքն՝ վառելիքի լցվորման կամ տեխնիկական սպասարկման նպատակով) վայրէջքով տարանցիկ թռիչքի իրավունքը,
3. այլ պետության տարածքում իր տարածքից վերցված (ուղևորվող) ուղևորների, փոստի և բեռների իջեցման իրավունքը,

4. այլ պետության տարածքից վերցված և իր տարածք ուղևորվող ուղևորների, փոստի և բեռների իջեցման իրավունքը ,

5. այլ պետության տարածքում երրորդ պետության տարածք կամ տարածքից ուղևորվող ուղևորների փոստի և բեռների իջեցման կամ վերցման իրավունքը,

6. այլ երկու պետությունների միջև իր տարածքով ուղևորների, փոստի և բեռների փոխադրումներ իրականացնելու իրավունքը,

7. այլ երկու պետությունների միջև իր տարածքը շրջանցելով ուղևորների, փոստի և բեռների փոխադրումներ իրականացնելու իրավունքը:

Առևտրային իրավունքների տրամադրումը պետության՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի, մենաշնորհն է: Ներկայումս «օդի ազատությունների» բոլոր տեսակները կիրառվում են ոչ միայն գրանցման պետության, այլև շահագործող պետության (օդանավեր վարձակալող) օդանավերի նկատմամբ, քանի որ վերջինս ինքնուրույն պայմանավորվում է վարձակալված օդանավերով օդային փոխադրումներ իրականացնելիս առևտրային իրավունքների մասին:

1944 թ. Չիկագոյի կոնվենցիայի Եզրափակիչ ակտում տեղ է գտել կանոնավոր միջազգային օդային հաղորդակցության մեջ առևտրային իրավունքների փոխադարձ տրամադրման մասին երկկողմ համաձայնագրի ստանդարտ ձև (Չիկագոյի ստանդարտ ձևը), որը նախատեսում է բոլոր հիմնական «օդի ազատությունների» փոխադարձ տրամադրում:

Միջազգային ավիացիոն կազմակերպությունները օդային հաղորդակցությունների ոլորտում միջպետական համագործակցության ինստիտուցիոնալ (կազմակերպչական) ձևեր են: *Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունը* (ԻԿԱՕ/ICAO) հիմնադրվել է 1944 թ., *Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին կոնվենցիայի* երկրորդ մասի հիման վրա: 1947 թ. գոյություն ունեցող ԻԿԱՕ-ի կանոնադրային նպատակներն են ամբողջ աշխարհում միջազգային քաղաքացիական ավիացիայի անվտանգ և կարգավորված զարգացման ապահովումը, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի գործունեության բոլոր հարցերով միջազգային համագործակցության կազմակերպման և համակարգման այլ խնդիրները:

Կազմակերպության բարձրագույն մարմինը Վեհաժողովն է (Ասամբլեան), որում ներկայացված են բոլոր անդամ պետությունները: Ասամբլեան գումարվում է առնվազն երեք տարին մեկ անգամ:

ԻԿԱՕ-ի մշտապես գործող մարմին է խորհուրդը, որն իր գործունեության համար պատասխանատու է Ասամբլեայի առջև: Խորհրդում ներկայացված են Ասամբլեայի կազմից ընտրվող 33 պետություններ:

ԻԿԱՕ-ի մյուս մարմիններն են Օդանավագնացության հանձնաժողովը, Ավիատրանսպորտային կոմիտեն, Իրավաբանական կոմիտեն, Օդանավագնացության ապահովման համատեղ աջակցության կոմիտեն, Ֆինանսական կոմիտեն, Քաղաքացիական ավիացիայի գործերին ապօրինի միջամտության դեմ պայքարի կոմիտեն:

Իրավաբանական կոմիտեն մեծ դեր է խաղում օդային իրավունքի բազմակողմ պայմանագրերի մշակման գործում, որոնք հետագայում քննարկվում են ԻԿԱՕ հովանու ներքո գումարվող դիվանագիտական կոնֆերանսներում:

ԻԿԱՕ-ից բացի, միջազգային օդային իրավունքի կայացման և զարգացման գործում էական դեր են խաղում տարածաշրջանային ավիացիոն կազմակերպությունները և մարմինները, որոնք այժմ մոտ չորս տասնյակ են: Դրանցից կարևորագույնների թվին են պատկանում, մասնավորապես, 1954 թ. ստեղծված *Քաղաքացիական ավիացիայի եվրոպական կոնֆերանսը*, 1960 թ. կազմավորված *Նավիգացիայի անվտանգության ապահովման եվրոպական կազմակերպությունը՝ Եվրավերահսկողությունը*, 1969 թ. ստեղծված *Քաղաքացիական ավիացիայի աֆրիկյան հանչնաժողովը*, 1959 թ. հիմնադրված *Աֆրիկայում և Մադագասկարում սերոնավիգացիայի անվտանգության ապահովման գործակալությունը*, 1960 թ. հիմնադրված *Աերոնավիգացիայի սպասարկման կենտրոնական-ամերիկյան կազմակերպությունը*, 1973 թ. հիմնադրված *Քաղաքացիական ավիացիայի լատինամերիկյան կազմակերպությունը* 1967 թ. հիմնադրված *Արաբական պետությունների քաղաքացիական ավիացիայի խորհուրդը*:

Ավիացիայի և օդային տրանսպորտի օգտագործման միջպետական խորհուրդը հիմնադրվել է 1991թ. դեկտեմբերին՝ նախկինում ԽՍՀՄ կազմի մեջ մտնող 12 պետությունների կառավարությունների

ղեկավարների լիազոր ներկայացուցիչների կողմից, *Քաղաքացիական ավիացիայի և օդային տարածության օգտագործման մասին համաչայնագրի* հիման վրա:

Համաձայնագրի և ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի կողմից՝ 1991թ. դեկտեմբերի 30-ին Միևսկում ընդունված որոշման համաձայն, Միջպետական խորհրդի գործադիր մարմինը Միջպետական ավիացիոն կոմիտեն է: Կազմակերպության կենտրոնական գրասենյակը գտնվում է Մոսկվայում:

ՉԼՈՒԽ 18. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԻԵՉԵՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 50. Միջազգային տիեզերական իրավունքի հասկացությունը

Միջազգային տիեզերական իրավունքը տիեզերական տարածության և երկնային մարմինների իրավական ռեժիմը որոշող, ինչպես նաև դրանց հետազոտման ու օգտագործման ընթացքում պետությունների հարաբերությունները կարգավորող սկզբունքների և նորմերի համակցություն է:

Միջազգային տիեզերական իրավունքի սկիզբը դրվել է 1957 թ., առաջին արհեստական արբանյակի՝ ԽՍՀՄ-ի իրականացրած արձակումից անմիջապես հետո գոյացած սովորությանը նորմով: Այդ նորմը կազմավորվել էր իրենց տարածքի վրայով ոչ միայն տիեզերքում, այլև արձակման և վայրէջքի ընթացքում օդային տարածության համապատասխան հատվածում խաղաղ թռիչքի իրավունքը պետությունների կողմից ճանաչվելու արդյունքում:

Հետագայում հիմնադրվել են միջազգային տիեզերական իրավունքի ոլորտում համապատասխան իրավասությանը օժտված միջազգային մարմիններ և կազմակերպություններ: ՄԱԿ-ի կողմից ստեղծվել է *Տիեզերական տարածության խաղաղ օգտագործման կոմիտեն* իրավական ենթակոմիտեով, որտեղ տեղի է ունենում միջազգային տիեզերական իրավունքի նորմերի մշակման հիմնական գործընթացը: Ստեղծվել են տիեզերական կապի կարգավորման կազմակերպություններ՝ *Արբանյակային կապի միջազգային կազմակերպությունը* (ԻՆՏԵԼՍԱՏ/INTELSAT), *Ծովային արբանյակային կապի միջազգային կազմակերպությունը* (ԻՆՍԱՐՍԱՏ/INMARSAT): Հիմնադրվել են նաև համապատասխան տարածաշրջանային կազմակերպություններ:

Միջազգային տիեզերական իրավունքի հիմնական աղբյուրները միջազգային պայմանագրերն են: Դրանց թվում են *Տիեզերական տարածության, ներառյալ Լուսնի և երկնային այլ մարմինների հետազոտման և օգտագործման՝ պետությունների գործունեության սկզբունքների մասին* 1967 թ. պայմանագիրը (Տիեզերքի մասին պայմանագիրը), *Տիեզերազնայնության փրկելու, տիեզերազնայնության վե-*

րադարձման և փեղեղեղական փարածություն արձակված օրյեկտրների վերադարձման մասին 1968 թ. համաձայնագիրը, Տիեզերական օրյեկտրներով պարճառված վնասի համար միջազգային պատասխանարվության մասին 1972 թ. կոնվենցիան (Պատասխանատվության մասին կոնվենցիա), Տիեզերական փարածություն արձակված օրյեկտրների գրանցման մասին 1975 թ. կոնվենցիան, Լուսնի և երկնային այլ մարմինների վրա պետությունների գործունեության մասին 1979 թ. համաձայնագիրը (Լուսնի մասին համաձայնագիրը), Մթնոլորտում, փեղեղեղական փարածությունում և ջրի փակ միջուկային զենքի փորձարկումների արգելման մասին 1963 թ. պայմանագիրը, տարածաշրջանային և երկկողմ համաձայնագրերը պետությունների միջև, պետությունների և միջազգային կազմակերպությունների միջև:

Միջազգային տիեզերական իրավունքի սուբյեկտներն են տիեզերական տարածությունում գործունեության կամ տիեզերական տեխնոլոգիայի օգտագործման առնչությամբ միջազգային իրավահարաբերության մասնակիցները: Միջազգային տիեզերական իրավունքի հիմնական սուբյեկտները պետություններն են, քանզի հենց նրանք են իրականացնում տիեզերական գործունեության հիմնական ծավալը: Միջազգային տիեզերական իրավունքի երկրորդային սուբյեկտներ են միջազգային կազմակերպությունները՝ իրենց իրավասությանը համապատասխան:

Միջազգային տիեզերական իրավունքը չի բացառում նաև ոչ կառավարական կազմակերպությունների (իրավաբանական անձանց) կողմից տիեզերական գործունեություն իրականացնելու հնարավորությունը: Սակայն այդ ձեռնարկությունները միջազգային տիեզերական իրավունքի սուբյեկտներ չեն դառնում: Այդ սուբյեկտները տիեզերական գործունեությունն իրականացնում են համապատասխան պետության թույլտվությամբ և մշտական վերահսկողության ներքո, որը և պատասխանատվություն է կրում այդ իրավաբանական անձանց գործունեության համար:

Միջազգային փեղեղեղական իրավունքի սկզբունքները: Միջազգային տիեզերական իրավունքը հիմնվում է ընդհանուր միջազգային իրավական սկզբունքների վրա, ներառյալ ՄԱԿ-ի Կանոնադրություն-

նր: Միջազգային տիեզերական իրավունքում ձևավորվել են հետևյալ հիմնական ճյուղային սկզբունքները՝

- տիեզերական տարածության և երկնային մարմինների հետազոտման և օգտագործման ազատությունը,
- տիեզերական գործունեության համար պետությունների պատասխանատվությունը,
- տիեզերական տարածության և երկնային մարմինների ազգային յուրացման արգելումը,
- տիեզերական տարածությանը և երկնային մարմիններին վնաս չպատճառելը:

Պատասխանարվությունը միջազգային փեղեղեղական իրավունքում: Տիեզերքի մասին 1967 թ. պայմանագրով սահմանվել է ընդհանուր կանոն, որի համաձայն՝ պետությունը պատասխանատվություն է կրում ամբողջ ազգային գործունեության համար, անկախ նրանից՝ այն իրականացվում է կառավարությամբ, թե՞ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից: Եթե այդ գործունեությունն իրականացվում է միջազգային կազմակերպության կողմից, համապարտ պատասխանատվություն են կրում նաև անդամ պետությունները:

Տիեզերական օրյեկտրերով պատճառված վնասի համար պատասխանատվության հարցերին է նվիրված 1972 թ. կոնվենցիան:

«Տիեզերական օրյեկտրով պատճառված վնաս» հասկացությունը ներառում է արձակման (արձակման փորձի) հետևանք հանդիսացած՝ ֆիզիկական անձանց կյանքից զրկելը, մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելը, կամ պետությունների, միջազգային կազմակերպությունների, ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի ոչնչացնելը կամ վնասելը:

Արձակող պետությունը լրիվ և բացարձակ (անկախ մեղքից) պատասխանատվություն է կրում իր տիեզերական օրյեկտի թռիչքի հետևանքով անձանց կամ գույքին պատճառված վնասի և համապատասխան փոխհատուցման համար: Եթե Երկրի մակերեսից դուրս վնասը պատճառվել է այլ պետության տիեզերական օրյեկտին, դրանում գտնվող անձանց կամ գույքին, արձակող պետությունը պատասխանատվություն է կրում միայն իր մեղքի առկայության դեպքում:

Պատասխանատվության հարցերը լուծվում են միջպետական մակարդակով, նույնիսկ այն դեպքում, եթե վնասը պատճառվել է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց: Վնասի հատուցման մասին պահանջը փոխանցվում է դիվանագիտական ուղիներով, իսկ կարգավորման չհասնելու դեպքում՝ փոխանցվում է պահանջների քննության հանձնաժողով:

Այլ պետությունների տարածքում հայտնաբերված տիեզերական օբյեկտների և դրանց մասերի նկատմամբ սեփականության իրավունքը պահպանվում է, և դրանք ենթակա են վերադարձման՝ գրանցման պետության հաշվին: Ասվածը վերաբերվում է տիեզերական ապարատների բոլոր տեսակներին՝ տիեզերական կայաններին, արբանյակներին:

§ 51. Տիեզերական տարածության, երկնային մարմինների և տիեզերազնացների իրավական կարգավիճակը

Տիեզերական տարածության իրավական կարգավիճակը: Տիեզերական տարածությունը օդային տարածության սահմաններից դուրս գտնվող տարածությունն է: Տիեզերական տարածության իրավական ռեժիմը նախ և առաջ նախատեսում է, որ այդ տարածքի նկատմամբ չի տարածվում որևէ պետության ինքնիշխանությունը: Տիեզերական տարածությունը ենթակա չէ ազգային յուրացման ո՛չ դրա նկատմամբ ազգային ինքնիշխանության հռչակմամբ, ո՛չ օգտագործմամբ կամ զբաղեցմամբ, ո՛չ էլ ցանկացած այլ միջոցներով (Տիեզերքի մասին պայմանագրի հ. 2):

Տիեզերական տարածությունը բաց է բոլոր պետությունների կողմից հետազոտման համար, տիեզերական տարածության հետազոտումն ու օգտագործումը իրականացվում է ի շահ բոլոր երկրների, անկախ նրանց տնտեսական կամ գիտական զարգացման աստիճանից, և ամբողջ մարդկության սեփականությունն է:

Տիեզերական գործունեությունը տիեզերական տարածությունում իրականացվող գործունեությունն է, ինչպես նաև տիեզերքում գործունեության հետ կապված՝ Երկրի վրա իրականացվող գործունեությունը: Տիեզերական գործունեության հիմնական տեսակներն են՝ Երկրի հետազոտումը, տիեզերքից անմիջական հեռափոխումը, նոր տեխնո-

լոգիաների ստեղծումը, ուղեծրային կայանների ստեղծումը, հեռավոր տիեզերքի հետազոտումը, տիեզերական երկրաբանությունը, օդերևութաբանությունը, նավիգացիան և այլ գործունեությունը:

Տիեզերքի հետազոտումն ու օգտագործումն իրականացվում է նախ և առաջ տիեզերական օբյեկտներ արձակելու միջոցով: Տիեզերական օբյեկտների տակ հասկացվում են մարդու ստեղծած՝ Երկրի արհեստական արբանյակները, ավտոմատ և կառավարվող հրթիռները և կայանները:

Երկրի ուղեծիր կամ տիեզերական տարածության ավելի հեռավոր մասեր հասցվող բոլոր տիեզերական օբյեկտները ենթակա են միջազգային և պետական գրանցման՝ 1975 թ. կոնվենցիային համապատասխան: Գրանցման պետությունը տեղեկացնում է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին՝ իր գրանցամատյանում գրանցված տիեզերական յուրաքանչյուր օբյեկտի մասին:

Լուսնի և երկնային այլ մարմինների իրավական կարգավիճակը: Լուսնի մակերեսը, ընդերքը կամ բնական պաշարները չեն կարող լինել որևէ պետության, միջազգային կազմակերպության, պետական կազմակերպության, ոչ կառավարական հիմնարկի կամ ֆիզիկական անձի սեփականությունը: Լուսնի մակերեսին կամ դրա ընդերքում անձնակազմի, տիեզերական ապարատների, սարքավորման, սարքերի, կայանների և կառույցների տեղաբաշխումը չի առաջացնում սեփականության իրավունք Լուսնի մակերեսի, դրա ընդերքի կամ դրա մասերի նկատմամբ:

Լուսինը և երկնային այլ մարմինները պետք է օգտագործվեն բացառապես խաղաղ նպատակներով: Լուսնի և երկնային այլ մարմինների վրա, մասնավորապես, արգելվում է միջուկային և զանգվածային ոչնչացման զենքի այլ տեսակների տեղաբաշխումը, ռազմականացումը, կառույցների ստեղծումը, զենքի ցանկացած տեսակների փորձարկումը, զորաշարժերի անցկացումը:

Տիեզերքի մասին 1967 թ. պայմանագրի համաձայն, պետությունները պարտավոր են իրականացնել տիեզերական տարածության, ներառյալ Լուսնի և երկնային այլ մարմինների հետազոտումն ու օգտագործումը, այնպես, որպեսզի խուսափեն դրանց վնասակար ադտոտումից, ինչպես նաև արտատերրային նյութի բերման հետևանքով երկրային միջավայրի անբարենպաստ փոփոխություններից:

Տիեզերագնացների իրավական կարգավիճակը: Տիեզերքի մասին 1967 թ. պայմանագրի և Տիեզերագնացներին փրկելու մասին 1968 թ. համաձայնագրի դրույթներին համապատասխան, պետությունները տիեզերագնացներին դիտում են որպես ամբողջ մարդկության պատվիրակների և պետք է օգնություն ցուցաբերեն նրանց:

Այն պետությունը, որի գրանցամատյանում գրանցված է տիեզերական տարածություն արձակված օբյեկտը, պահպանում է իր իրավասությունը և վերահսկողությունն այդպիսի օբյեկտի և դրա անձնակազմի նկատմամբ տիեզերական տարածությունում գտնվելու ընթացքում:

Այլ պետությունում գրանցված տիեզերանավի վթարի կամ հարկադրված վայրէջքի դեպքում Տիեզերքի մասին պայմանագրի ցանկացած մասնակից տեղեկացնում է արձակումն իրականացրած իշխանություններին ու ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին, ինչպես նաև ձեռնարկում տիեզերագնացներին փրկելուն ուղղված բոլոր միջոցները:

Հարկադրված վայրէջք կատարած տիեզերագնացները, ինչպես նաև տիեզերական օբյեկտն ու դրա բաղկացուցիչ մասերը պետք է վերադարձվեն այն պետությանը, որի գրանցամատյանում գրանցված է տիեզերանավը:

ՉԼՈՒԽ 19. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 52. Միջազգային էկոլոգիական իրավունքի հասկացությունը և հիմնական դրույթները

Միջազգային էկոլոգիական իրավունքի հասկացությունը: Միջազգային էկոլոգիական իրավունքը շրջակա միջավայրի պահպանության և դրա պաշարների արդյունավետ օգտագործման բնագավառում միջազգային իրավունքի սուբյեկտների հարաբերությունները կարգավորող միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի համակցություն է:

Ներկայում շրջակա միջավայրի պաշտպանությունը ձեռք է բերում մեծագույն կարևորություն և դասվում է համընդհանուր հիմնախնդիրների թվին: Մարդկային գործունեության արդյունքում բնության նկատմամբ տեղի ունեցող ներգործությունը չի ճանաչում պետական սահմաններ, ուստի այս հիմնախնդիրը լուծելու համար պահանջվում է միջազգային հանրության բոլոր ուժերի, իսկ միջազգային իրավունքի շրջանակներում՝ միջազգային իրավունքի բոլոր սուբյեկտների միավորումը: Հիմնահարցին ոչ բավարար ուշադրության հետևանքները կարող են աղետալի լինել: Խոսքը ոչ միայն մարդկության բարեկեցության, այլև գոյատևման մասին է: Հատկապես տագնապալի է այն, որ բնական միջավայրի վատթարացումը կարող է լինել անդառնալի:

Այս ամենը խթան հանդիսացավ շրջակա միջավայրի պահպանության իրավական կարգավորման արագ զարգացման համար, ընդ որում, որակական առաջընթաց տեղի ունեցավ 20-րդ դարի երկրորդ կեսին:

Միջազգային էկոլոգիական իրավունքի աղբյուրները: Միջազգային իրավունքի այս ճյուղի կայացման փուլում լայնորեն կիրառվում էին սովորութային նորմերը:

Միջազգային էկոլոգիական իրավունքի սովորութային նորմերի ձևավորման ընդհանուր գործընթացում կարևոր դեր ունեն միջազգային կազմակերպությունների և կոնֆերանսների բանաձևերը, որոնք ուղի են հարթում իրավական նորմերի ձևավորման համար:

Ներկայում շրջակա միջավայրի իրավունքը դառնում է գերազանցապես պայմանագրային: Կախված կարգավորման առարկայից՝ առանձնանում են օվկիանոսի, մթնոլորտի, տիեզերական տարածության, կենդանական և բուսական աշխարհի պահպանության, ռազմական գործունեության էկոլոգիական հետևանքների մասին պայմանագրերը: Վերջին տարիներին ընդունվել է այդ բնագավառի ունիվերսալ կոնվենցիաների մի ամբողջ համալիր, որոնք նաև պատկերացում են տալիս միջազգային իրավունքի սովյալ ճյուղի առարկայի մասին: Դա նախ և առաջ *Բնական միջավայրի վրա ռազմական կամ ցանկացած այլ թշնամական ներգործության արգելման մասին 1977 թ. կոնվենցիան* է, ինչպես նաև *Օզոնային շերտի պահպանության մասին 1985 թ. կոնվենցիան*, *Կենդանական և բուսական աշխարհի՝ անհեղափայտ սպառնալիքի տակ գրավող տեսակների միջազգային առևտրի մասին 1973 թ. կոնվենցիան*, *Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պահպանության մասին 1972 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիան*:

Միջազգային էկոլոգիական իրավունքի սկզբունքները: Ինչպես նշվեց, միջազգային էկոլոգիական իրավունքը սկսել է ձևավորվել որպես սովորության իրավունք. դա նախ և առաջ վերաբերում է դրա սկզբունքներին: Հենց այդպես է հաստատվել միջազգային էկոլոգիական իրավունքի հիմնական սկզբունքը՝ *սեփական տարածքում կատարվող գործողություններով այլ պետության բնությանը վնաս չպատճառելու սկզբունքը*: Ձևավորվել է առավել ընդհանուր մի սկզբունք՝ *շրջակա միջավայրի պաշտպանության սկզբունքը*: Ընթացքում է նաև *այլ պետության բնությանը վնաս պատճառելու համար պատրաստանալու սկզբունքի* կայացումը:

Միջազգային էկոլոգիական իրավունքի կարևորագույն սկզբունքներից է *իրենց ազգային բնական պաշարների նկատմամբ պետությունների ինքնիշխանության սկզբունքը*: Այն, ըստ էության, ընդհանուր միջազգային իրավունքի մաս կազմող պետական ինքնիշխանության սկզբունքի դրսևորում է:

Շրջակա միջավայրի միջազգային իրավական պաշտպանության ոլորտում կարևորվում է նաև այն սկզբունքը, որի համաձայն պետությունները պետք է խորհրդակցեն մյուս շահագրգիռ պետությունների հետ իրենց կողմից ծրագրվող այնպիսի գործունեության վերա-

բերյալ, որը կարող է անբարենպաստ անդրսահմանային հետևանքներ ունենալ:

Ներկայում ձևավորվում է նաև *շրջահայաց մուլտիցամակ սկզբունքը*, որի համաձայն՝ պետությունները պետք է շրջահայաց մուլտեցում ցուցաբերեն այնպիսի գործունեության իրականացմանը կամ այնպիսի նախագծի իրագործմանը որը կարող է հանգեցնել շրջակա միջավայրին վնաս պատճառելուն:

Միջազգային կազմակերպությունները: Միջազգային էկոլոգիական իրավունքի զարգացման հարցում առաջատար դերը պատկանում է միջազգային կազմակերպություններին: Շրջակա միջավայրի պահպանության հիմնահարցով են զբաղվում մեծ թվով մշտական կառույցներ՝ ընդհանուր և հատուկ իրավասության, ունիվերսալ և տարածաշրջանային, միջկառավարական և ոչ կառավարական միջազգային կազմակերպություններ:

Դրանցից հիմնականը Միավորված ազգերի կազմակերպությունն է և նրա երկու գլխավոր մարմինները՝ Գլխավոր ասամբլեան ու տնտեսական և սոցիալական խորհրդը: Այս ոլորտում ներգրավված են նաև ՄԱԿ-ի որոշ մասնագիտացված հիմնարկներ: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) զբաղվում է մթնոլորտային օդի աղտոտման հիմնահարցով, Միջազգային ծովային կազմակերպությունը (ԻՍՕ/ՄՕ)՝ ծովային միջավայրի պահպանության հարցերով, ՄԱԿ-ի մթերային և գյուղատնտեսական կազմակերպությունը (ՖԱՕ/ԲԱՕ)՝ հողերի, անտառների, ջրերի, կենդանական և բուսական աշխարհի պահպանության հարցերով, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունը (ԻԿԱՕ/ԻՇԱՕ) մշակում է ավիացիոն աղմուկից միջավայրի պահպանության չափորոշիչներ, ՅՈՒՆԵՍԿՕ-ն իրականացնում է միջազգային գիտական հետազոտությունների ծրագրեր: Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման ապահովման իր հիմնական գործունեության հետ մեկտեղ իրականացնում է ռադիացիայից մարդու և շրջակա միջավայրի պաշտպանության ծրագիր:

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում համագործակցությունը համակարգող միջազգային կազմակերպության հատկանիշներով օժտված հատուկ կառուցակարգ է Շրջակա միջավայրի

ՄԱԿ-ի ծրագիրը (ՅՈՒՆԵՊ/UNEP): Այն օժտված է հատուկ իրավասությամբ, այսինքն՝ ի տարբերություն վերը նշված կազմակերպությունների, ամբողջովին կենտրոնացված է տվյալ հիմնահարցի վրա: ՅՈՒՆԵՊ-ի կառույցում ընդգրկված են՝ կառավարիչների խորհուրդը (գլխավոր ղեկավար մարմինը), քարտուղարությունը՝ կատարող-տնօրենի գլխավորությամբ և Շրջակա միջավայրի հիմնադրամը:

Տարածաշրջանային մակարդակում առավել նշանակալի դեր են խաղում ԵԱՀԿ-ն, Հյուսիսային խորհուրդը, ԵԽ-ն, ՄԱԿ-ը և ԵՏԿ-ն: Տվյալ ուղղությունն առկա է նաև ԱՊՀ գործունեությունում, որի շրջանակներում ստեղծվել են Միջպետական էկոլոգիական խորհուրդը և Միջպետական էկոլոգիական հիմնադրամը:

Մթնոլորտի միջազգային իրավական պահպանությունը: Օդային միջավայրը մարդկության ընդհանուր սեփականությունն է: Օդի աղտոտումը, մեծ քանակությամբ ջերմություն և թունավոր նյութեր մթնոլորտ արտանետելը կարող է անուղղելի վնաս պատճառել էկոլոգիական համակարգերին: Այդ պատճառով պետությունները շահագրգռված են համատեղ ջանքերով Երկրի մթնոլորտի պահպանությամբ:

Այս ոլորտում ընդունված են ինչպես ունիվերսալ, այնպես էլ տարածաշրջանային մի շարք միջազգային իրավական ակտեր:

ԵԱՀԿ շրջանակներում պատրաստված և հետագայում մի շարք արձանագրություններով լրացված՝ *Մեծ հեռավորությունների վրա օդի միջսահմանային աղտոտվածության մասին 1979 թ. կոնվենցիայում* հատուկ ուշադրություն է դարձվում մեծ հեռավորությունների վրա փոխանցվող թթվային անձրևներ առաջացնող ծծմբի՝ մթնոլորտ արտանետումների կրճատմանը:

Բնության պահպանության կարևոր ուղղություն է համագործակցությունը *ջերմոցային էֆեկտի* (մթնոլորտի՝ ածխածնի երկօքսիդով հագեցման արդյունքում ջերմաստիճանի գլոբալ բարձրացումը) զարգացմանը հակազդման հարցում:

1992 թ. ընդունվել է *Կլիմայի փոփոխության մասին* ՄԱԿ-ի *շրջանակային կոնվենցիան*: Դրանով որոշվել են համագործակցության ընդհանուր դրույթները և հիմնական ուղղությունները: Մահմանվել է պետությունների ընդհանուր պատասխանատվությունը, սակայն, միաժամանակ, հաշվի են առնվել տնտեսական ներուժի տարբերությունները:

Օզոնային շերտը պահպանում է Երկիրն արևի ուլտրամանուշակագույն ճառագայթման վնասակար ազդեցությունից: Մարդու գործունեության ազդեցության տակ այն էականորեն հյուծվել է, և որոշ շրջանների վերևում առաջացել են օզոնային շերտի պատվածքներ: 1985 թ. ընդունվել է *Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիան*: Այն վերաբերում է օզոնային շերտի վիճակի վերահսկողությանը և դրա պաշտպանության նպատակով համագործակցությանը: 1987 թ. ընդունվել է *Մոնրեալի արչանագրությունը*՝ օզոնային շերտը քայքայող նյութերի մասին: Մահմանվել են այդ շերտին բացասաբար ազդող նյութերի արտադրության սահմանափակումներ:

Ռադիոակտիվությունը՝ ատոմային էներգիայի խաղաղ կամ ռազմական օգտագործման արդյունքում լուրջ վտանգ է դարձել Երկրի վրա կյանքի համար: Այդ վտանգը նվազեցնելու ճանապարհին կարևոր քայլ էր *Մթնոլորտում, փինեգերական տարածությունում և ջրի տակ միջուկային զենքի փորձարկումների արգելման մասին 1963 թ. Մոսկվայի պայմանագիրը*: Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը սահմանում է տնտեսությունում ատոմային էներգիայի օգտագործման ընթացքում անվտանգության, ներառյալ դրա հետ կապված աշխատողների անվտանգության չափորոշիչներ:

Չրերի միջազգային իրավական պահպանությունը: Ծովային միջավայրի միջազգային իրավական պահպանությունը նախ և առաջ ուղղված է նավթով, նավթամթերքներով, ռադիոակտիվ թափոններով դրա աղտոտումը կանխարգելելուն:

Ծովային իրավունքի 1958 թ. կոնվենցիաները և Ծովային իրավունքի 1982 թ. ՄԱԿ-ի կոնվենցիան նախատեսում են պետության՝ ծովային միջավայրը պահպանելու պարտականությունը: Վերջին կոնվենցիան, մասնավորապես, բովանդակում է ծովային միջավայրի պաշտպանությանն ու պահպանմանը հատուկ նվիրված XII մասը:

Թափոնների և այլ նյութերի արտանետումներով ծովի աղտոտման կանխարգելման մասին 1972 թ. կոնվենցիան առանձնացնում է նյութերի երեք խումբ՝

1. նյութեր, որոնց արտանետման համար պահանջվում է նախնական հատուկ թույլտվություն,
2. նյութեր, որոնց արտանետման համար պահանջվում է նախնական ընդհանուր թույլտվություն,
3. նյութեր, որոնց արտանետումն ընդհանրապես արգելված է:

Նավերից ծովի աղբյուրման կանխարգելման մասին 1973 թ. կոնվենցիան նախատեսում է բոլոր տեսակի նավերից (բացառությամբ ռազմանավերի և պետական ոչ առևտրային նավերի) ցանկացած նյութերի արտանետման արգելք, ներառյալ նավթը և բունավոր նյութերը, կեղտաջրերը և աղբը:

Վնասի փոխհատուցման հարցերը կարգավորվում են Նավթով աղբյուրումից վնասի համար քաղաքացիական պատրաստիանավորության մասին 1969 թ. կոնվենցիայով, ինչպես նաև աղտոտմամբ պատճառված վնասի փոխհատուցման համար միջազգային հիմնադրամի ստեղծում նախատեսող 1971 թ. կոնվենցիայով:

Խմելու ջրի սպառման ծավալների մեծացման և դրա պաշարների սահմանափակության կապակցությամբ բացառիկ նշանակություն է ձեռք բերում նաև քաղցրահամ ջրավազանների պահպանության հարցը: Միջազգային իրավունքի ՄԱԿ-ի հանձնաժողովը նախապատրաստել և Գլխավոր ասամբլեային է փոխանցել միջազգային ջրահոսքերի ոչ նավագնացային օգտագործման իրավունքի մասին հողվածների նախագիծը:

Կենդանական և բուսական աշխարհի միջազգային իրավական պահպանությունը: Կենդանական և բուսական աշխարհի պաշտպանության ոլորտում պետությունների միջազգային իրավական համագործակցությունն առաջին հերթին կապված է անհետացող և հազվադեպ տեսակների, ինչպես նաև որոշակի շրջաններում բնության պահպանության հետ: Դա բնության պահպանության առավել արագ զարգացող ոլորտն է:

Այդ ոլորտում առանձնանում են համագործակցության որոշակի ուղղություններ, որոնցից յուրաքանչյուրը ներառում է պայմանագրերի մի խումբ.

- ձկնորսության և ծովային պաշարների արդյունահանման կարգավորումը,
- բուսական աշխարհի պահպանությունը,
- որոշակի տեսակների պաշտպանությունը,
- կենդանիների վայրերի պահպանությունը,
- հազվադեպ տեսակների պաշտպանությունը:

ԳԼՈՒԽ 20. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§ 53. Միջազգային արևմտական իրավունքի հասկացությունը և սկզբունքները

Միջազգային արևմտական իրավունքը միջազգային իրավունքի սուբյեկտների միջև միջազգային տնտեսական հարաբերությունների բնագավառում իրենց գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի համակցություն է:

Որպես այդպիսին միջազգային տնտեսական հարաբերություններն ունեն երկու մակարդակ, ինչը պայմանավորված է հանրային և մասնավոր տարրերի առկայությամբ: Դրանք են՝

1. միջազգային իրավունքի սուբյեկտների՝ պետությունների, միջազգային կազմակերպությունների հանրային իրավական բնույթի հարաբերությունները: Հենց այս հարաբերություններն են կարգավորվում միջազգային տնտեսական իրավունքով.

2. տարբեր երկրների ֆիզիկական և իրավաբանական անձանց տնտեսական, քաղաքացիաիրավական (մասնավոր իրավական) հարաբերությունները: Այս հարաբերությունները կարգավորվում են յուրաքանչյուր պետության ներքին իրավունքով և միջազգային մասնավոր իրավունքով:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ հանրային սուբյեկտները՝ պետությունները, միջազգային կազմակերպությունները մասնակցում են ոչ միայն միջազգային իրավական հանրային հարաբերություններում, այլև կարող են քաղաքացիաիրավական գործարքների կողմեր լինել:

Միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտում մասնավոր անձանց պայմանագրային իրավահարաբերությունների առարկան կարող են լինել ապրանքներ, ծառայություններ, ֆինանսներ (արժույթներ), արժեթղթեր, ներդրումներ, տեխնոլոգիաներ, սեփականության (այդ թվում՝ մտավոր սեփականության) իրավունքներ, գույքային և ոչ գույքային այլ իրավունքներ, աշխատուժ և այլն:

Միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտում միջպետական հանրային իրավահարաբերությունների առարկան, որ-

պես կանոն, ապրանքաշրջանառության, ներքին շուկա ապրանքների մուտքի, շուկայի պաշտպանության իրավական ռեժիմներն են, արտաքին առևտրի, ներմուծման և արտահանման կարգավորման սակագնային և ոչ սակագնային միջոցների, ապրանքային շուկաներում համաշխարհային գների վերահսկողության, ապրանքահոսքերի, ապրանքների փոխադրման կարգավորման օգտագործումը, արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող մասնավոր անձանց իրավական կարգավիճակը և այլն:

Միջազգային տնտեսական իրավունքի աղբյուրները: Պայմանագրերը և միջազգային սովորույթներն այն հիմնական ձևերն են, որոնցով ամրագրված են պետությունների ու միջազգային իրավունքի այլ սուբյեկտների վարքագծի կանոնները նրանց տնտեսական հարաբերություններում: Դրանք միջազգային տնտեսական իրավունքի ունիվերսալ աղբյուրներն են:

Ինչպես հայտնի է, միջազգային իրավունքում տարածված է պայմանագրերի բաժանումը «օրենք-պայմանագրերի» (իրավասահմանող) և «գործարք-պայմանագրերի»: Այդ առանձնահատկությունն առավել վառ արտահայտվում է միջազգային տնտեսական իրավունքում:

Պայմանագրերի առաջին խմբին են դասվում, օրինակ, առևտրատնտեսական հարաբերությունների սկզբունքները սահմանող առևտրային պայմանագրերը, իսկ երկրորդին՝ համաձայնեցված ժամկետի ընթացքում կոնկրետ ապրանքների փոխադարձ մատակարարման, տնտեսական օբյեկտների (օրինակ, խողովակաշար կամ ԱԷԿ) շինարարության, տնտեսական օգնության շրջանակներում գույքի մատակարարման մասին համաձայնագրերը և այլն:

Միջազգային տնտեսական իրավունքում լայնորեն կիրառվում են միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերը:

Ըստ կարգավորման առարկայի՝ միջազգային տնտեսական հարաբերությունների համապատասխան ոլորտները կարգավորող միջազգային պայմանագրերը կարելի է պայմանականորեն դասակարգել հետևյալ կերպ՝

- ապրանքների և ծառայությունների միջազգային առևտրի հարցերով պայմանագրեր,

• միջազգային ֆինանսական (վարկային, արժույթային, հարկային և այլն) հարաբերությունների հարցերով պայմանագրեր,

• ներդրումների շարժի հարցերով (այդ թվում՝ արդյունաբերական և գիտատեխնիկական համագործակցության մասին) պայմանագրեր,

• միջազգային տնտեսական օգնության հարցերով պայմանագրեր,

• միջազգային աշխատանքային հարաբերությունները կարգավորող պայմանագրեր:

Պայմանագրային նորմերի ստեղծման գործում կարևոր դեր են խաղում միջազգային կազմակերպությունները՝ ՀԱԿ, ՄԱՀ, ԱՄԿ և այլն, ինչպես նաև ինտեգրացիոն գործընթացների կազմակերպական հիմք հանդիսացող միջազգային հաստատությունները: **Միջազգային կազմակերպությունների բանաչևերը** միջազգային տնտեսական իրավունքի հատուկ աղբյուրներ են:

Միջազգային տնտեսական իրավունքի զգալի մաս են կազմում սովորույթային իրավական նորմերը (համընդհանուր, տարածաշրջանային, տեղային):

Միջազգային տնտեսական իրավունքի սկզբունքները: Բացի միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից, որոնք հիմնարար նշանակություն ունեն միջազգային իրավունքի ցանկացած ճյուղի համար, միջազգային տնտեսական իրավունքի համակարգը հենվում է հատուկ (ճյուղային) սկզբունքների վրա:

Իրենց բնական պաշարների և տնտեսական գործունեության նկատմամբ պեպությունների ինքնիշխանության սկզբունքը ենթադրում է բնական պաշարներին ազատ տիրապետելու, տնօրինելու, շահագործելու, դրանց օգտագործումը վերահսկելու, օգտագործման համար հատուցում ստանալու, օտարերկրյա մասնավոր սեփականությունը հատուցման դիմաց ազգայնացնելու իրավունքը, ինչպես նաև բնական պաշարների օգտագործմանը խոչընդոտելու նպատակ ունեցող տնտեսական կամ այլ հարկադրանքի արգելումը:

Արտաքին տնտեսական կապերի կազմակերպման շեղումների և ծառայության սկզբունքը նախատեսում է տնտեսական հարաբերությունների և արտաքին տնտեսական քաղաքականության ձևերը և մեթոդներն ինքնուրույն որոշելու՝ պետության իրավունքը:

Տնտեսական համագործակցության սկզբունքը ենթադրում է միջազգային տնտեսական հարաբերություններում գործընկերներին և համագործակցության ձևերն ազատ ընտրելու, միջազգային առևտրից շահույթ ստանալու, համաշխարհային տնտեսական հիմնախնդիրների կարգավորմանը մասնակցելու իրավունքը:

Փոխադարձ շահի սկզբունքը նշանակում է միջազգային տնտեսական հարաբերություններում համեմատելի ծավալի շահույթների և պարտավորությունների արդարացի բաշխման՝ պետությունների փոխադարձ իրավունքը:

Տնտեսական խորականության արգելման սկզբունքը ենթադրում է պետությանը, նրա ֆիզիկական և իրավաբանական անձանց կամ ապրանքներին այլ պետության կողմից այնպիսի տնտեսական գործունեության ընդհանուր պայմաններ տրամադրելու իրավունքը, որոնք ավելի անբարենպաստ չեն, քան ցանկացած երրորդ պետությանը տրամադրվող պայմանները: Նշված սկզբունքը նշանակում է նաև պետության պարտականությունը՝ առանձին պետության համար չվատթարացնել բոլոր պետությունների համար ընդհանուր պայմանները, հատուկ չսահմանել որևէ պետության, նրա ֆիզիկական իրավաբանական անձանց կամ ապրանքների համար անբարենպաստ պայմաններ:

Առավել բարենպաստվող ազգի սկզբունքը սահմանում է պետության պարտականությունը՝ համաձայնեցված ոլորտում գործընկեր պետությանը, նրա ֆիզիկական և իրավաբանական անձանց, ապրանքներին տրամադրելու առավել նպաստավոր պայմաններ, որոնք տրամադրված են ցանկացած երրորդ պետությանը, նրա ֆիզիկական և իրավաբանական անձանց կամ ապրանքներին:

Ազգային ռեժիմի սկզբունքը պետության պարտականությունն է համաձայնեցված ոլորտում օտարերկրյա պետություններին, դրանց ֆիզիկական և իրավաբանական անձանց, ապրանքներին իր տարածքում տրամադրելու այն նույն պայմանները, որոնք տրամադրված են ազգային ապրանքներին և տնտեսական գործունեության սուբյեկտներին:

Տվյալ սկզբունքի կիրառման պայմանագրային և սովորութային իրավական ոլորտը շատ հարցերում համընկնում է առավել բարենպաստվող ազգի սկզբունքի կիրառման ոլորտին սակայն այն միա-

ժամանակ ավելի լայն է, քանի որ, որպես կանոն, ներառում է իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավական կարգավիճակը և «գործողության ոլորտները». այսինքն՝ միջազգային տնտեսական հարաբերությունների մասնավոր իրավական ոլորտը:

Միջազգային տնտեսական կազմակերպությունները: Տնտեսական հարաբերությունների ոլորտում գործող կազմակերպությունները կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ իրենց գործունեությամբ տնտեսական հարաբերությունների ամբողջ բնագավառն ընդգրկող կազմակերպությունների և միջազգային տնտեսական իրավունքի առանձին ենթաճյուղերի շրջանակներում գործող կազմակերպությունների (օրինակ՝ առևտրային, ֆինանսական, ներդրումային, տրանսպորտային և այլն):

Վերջիններիս գործունեությունը կքննարկվի ստորև:

Ինչ վերաբերում է կազմակերպությունների առաջին խմբին, ապա նշենք, որ այստեղ իր նշանակությամբ գլխավոր տեղ է գրավում մարմինների և կազմակերպությունների ընդարձակ ցանց ունեցող ՄԱԿ-ը: ՄԱԿ-ի նպատակներից մեկը՝ միջազգային տնտեսական համագործակցության զարգացումն է, որով զբաղվում են ՄԱԿ-ի կենտրոնական երկու մարմինները՝ *Գլխավոր ասամբլեան* ու *տնտեսական և սոցիալական խորհուրդը*: Գլխավոր ասամբլեան կազմակերպում է հետազոտություններ և հանձնարարություններ է տալիս պետություններին՝ տնտեսական, սոցիալական և այլ բնագավառներում միջազգային համագործակցությանն օժանդակելու նպատակով (ՄԱԿ-ի Կանոնադրության հ. 13):

Տնտեսական և սոցիալական խորհուրդը համակարգում է ՄԱԿ-ի այն մասնագիտացված հաստատությունների գործունեությունը, որոնք կոչված են միջնորդել տնտեսական համագործակցությանը: Դրանցից է 1967 թ. ստեղծված և 1985 թ. ՄԱԿ-ի մասնագիտացված հաստատության կարգավիճակ ձեռք բերած Միավորված *ազգերի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը* (ՅՈՒՆԻԴՕ), որը համակարգում է արդյունաբերական զարգացման բնագավառում ՄԱԿ-ի համակարգի ամբողջ գործունեությունը՝ զարգացող երկրների արդյունաբերացումն արագացնելու նպատակով:

ՄԱԿ-ի մյուս մասնագիտացված հաստատությունները գործում են տնտեսական համագործակցության առանձին ոլորտներում: Դրանք

են ՄԱԿ-ի Մթերային և գյուղատնտեսական կազմակերպությունը (ՖԱՕ), Միավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՄՍՀԿ), ՄԱԿ-ի ֆինանսական հաստատությունները (Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը՝ ՎՋՄԲ, Միջազգային արժույթային հիմնադրամը՝ ՄԱՀ, Միջազգային ֆինանսական կորպորացիան՝ ՄՖԿ, Չարգացման միջազգային ասոցիացիան՝ ՉՍԱ):

ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման կոնֆերանսը (ՅՈՒՆԿՏԱԴ) ստեղծվել է 1964 թ. որպես ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի օժանդակ մարմին, սակայն վերաճել է ինքնուրույն միջազգային կազմակերպության: ՅՈՒՆԿՏԱԴ-ի գլխավոր նպատակը միջազգային առևտրի ոլորտում տնտեսական զարգացման արագացմանն ուղղված սկզբունքների և քաղաքականության մշակումն է:

Տրանսնացիոնալ կորպորացիաները: Գլոբալիզացիայի գործընթացների խորացումը պայմանավորեց *տրանսնացիոնալ կորպորացիաների* (ՏՆԿ) միջազգային իրավասուրյեկտության խնդրի քննարկումը: ՏՆԿ-ները պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ մեկտեղ հաճախ դիտվում են որպես միջազգային տնտեսական իրավունքի սուբյեկտներ: Դա բացատրվում է նրանով, որ ՏՆԿ-ները դառնում են միջազգային տնտեսական հարաբերությունների ավելի ու ավելի կարևոր սուբյեկտներ, որոնք աճող ազդեցություն են թողնում ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային տնտեսության վրա: Շատ ՏՆԿ-ների տարեկան շրջանառության ծավալները մի քանի անգամ կարող են գերազանցել մի քանի պետության պետական բյուջեները միասին վերցրած, ժամանակակից աշխարհում մեծ ընկերությունների գործունեությունը դառնում է ոչ միայն համաշխարհային տնտեսության, այլ նաև քաղաքականության հիմնական գործոններից մեկը:

ՏՆԿ-ների առանձնահատկությունն այն է, որ իրավաբանական բազմատեսակությամբ հանդերձ, դրանք օժտված են տնտեսական միասնականությամբ: ՏՆԿ-ն տարբեր պետությունների օրենսդրությանը համապատասխան ստեղծված այնպիսի ընկերությունների խումբ է, որոնք ինքնուրույն իրավաբանական անձինք են և գործունեություն են իրականացնում տարբեր երկրների տարածքներում, սակայն կապված են փոխադարձ կախվածության հարաբերություններով,

րով, որոնց պարագայում դրանցից մեկը (գլխավորը կամ վերագահինը) գերակայող դիրք է գրավում մյուսների նկատմամբ և վերահսկում դրանց:

Մեր կարծիքով, պետք է հստակ գիտակցել, որ իրավունքի սուբյեկտ են այն ընկերությունները, որոնք միավորվում են միասնական համակարգում: Միևնույն ժամանակ, իրավունքի սուբյեկտ կարող է լինել նաև ընկերությունների միավորումը: Ցանկացած դեպքում, ինչպես առանձին ընկերությունները, այնպես էլ դրանց միավորումները ոչ թե միջազգային տնտեսական իրավունքի, այլ ազգային (տարբեր պետությունների) և միջազգային մասնավոր իրավունքի սուբյեկտներ են:

§ 54. Միջազգային փնտեսական իրավունքի ենթաճյուղերը և ինստիտուտները

Ինչպես արդեն նշվել է, միջազգային տնտեսական իրավունքը կարգավորում է միջազգային տնտեսական հարաբերությունների տարբեր ոլորտներ, և դա պայմանավորում է նրա ենթաճյուղերի առկայությունը՝

- միջազգային առևտրային իրավունքը, որի շրջանակներում կարգավորվում է ապրանքների միջազգային շարժը, ներառյալ ծառայությունների և իրավունքների առևտուրը,
- միջազգային ներդրումային իրավունքը, որի շրջանակներում կարգավորվում է ներդրումների (կապիտալների) միջազգային շարժը,
- միջազգային տնտեսական օգնության իրավունքը՝ ապրանք չհանդիսացող նյութական և ոչ նյութական ռեսուրսների շարժը կարգավորող նորմերի համակցությունը,
- միջազգային աշխատանքային իրավունքը, որի շրջանակներում կարգավորվում է աշխատանքային ռեսուրսների՝ աշխատուժի միջազգային շարժը:

Միջազգային առևտրային իրավունքը: Տնտեսական կապերի ժամանակակից համակարգում միջազգային առևտուրը կենտրոնական տեղ է զբաղեցնում: Տնտեսական կապերի այլ տեսակները կամ զուգորդում են առևտրային կապերին (փոխադրումներ, ապահովագ-

րություն, հաշվարկներ), կամ ներառում են առևտրի տարրեր (գիտատեխնիկական համագործակցություն արտադրական համագործակցություն):

Առևտրային պայմանագրերը կնքվում են երկկողմ հիմքի վրա և սահմանում են կողմերի միջև առևտրի ընդհանուր իրավական հիմքը: Դրանք տարբեր անվանումներ ունեն՝ «Բարեկամության, առևտրի և ծովագնացության մասին պայմանագիր», «Առևտրի և նավագնացության մասին պայմանագիր», «Առևտրի և տնտեսական համագործակցության մասին պայմանագիր» և այլն: Այս պայմանագրերը, որպես կանոն, կնքվում են տևական ժամկետով կամ անժամկետ: Դրանցով լուծվում է հարցերի լայն շրջանակ՝ որոշվում են պայմանադիր յուրաքանչյուր պետության կողմից ընդհանուր առմամբ առևտրային կամ տնտեսական կապերն իրականացնող իրավագործ սուբյեկտները, միմյանց տրամադրվում են մաքսային վճարների գանձման, ապրանքների ներմուծման և արտահանման կարգի, ապրանքների փոխադրման, տարանցիկ փոխադրման, առևտրային ծովագնացության իրավական ռեժիմները, որոշվում է մեկ կողմի ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ մյուս կողմի տարածքում գործունեության իրավական ռեժիմը:

Ապրանքաշրջանառության մասին համաշայնագրերը սահմանում են երկկողմ հիմքով պետությունների միջև ապրանքաշրջանառությունը կազմող ապրանքների համաքանակները: Դրանք, որպես կանոն, կնքվում են կարճատև ժամկետներով (6-12 ամսով): Դրանց հիմնական բովանդակությունը փոխհամաձայնեցված համաքանակների շրջանակներում ապրանքների ներմուծման և արտահանման լիցենզիայի անարգել տրամադրումն ապահովելու պետությունների պարտականությունն է:

Միջազգային ապրանքային համաշայնագրերը նույնպես առևտրի ոլորտում բազմակողմ համաձայնագրեր են: Դրանք կնքվում են հանքային և գյուղատնտեսական հումք ներմուծող և արտահանող երկրների միջև որոշակի ժամկետով, ավելի հաճախ՝ հինգ տարով, իսկ այնուհետև վերանայվում են: Համապատասխան ապրանքի առքուվաճառքի քվոտաների սահմանման օգնությամբ պետությունները ձգտում են կանխել

որոշակի ապրանքների (անագի, կաուչուկի, կակաոյի, սուրճի, շաքարի և այլն) գների կտրուկ տատանումները:

Միջազգային առևտրի բնագավառում հիմնական ունիվերսալ ակտ է 1947 թ. *Սակագների և առևտրի մասին համաշայնագիրը* (GATT/ԳԱՏՏ): Այն կազմեց առևտրի բազմակողմ կարգավորման և դրանով իսկ՝ միջազգային առևտրային իրավունքի հիմքը: Համաձայնագրի հիմնական նպատակներն են՝ արտաքին առևտրի ազատականացումը, մաքսային սակագների նվազեցումը, ներմուծման քանակական սահմանափակումներից հրաժարումը, առևտրի ոլորտում խտրականության վերացումը: ԳԱՏՏ նպատակներն աստիճանաբար ընդլայնվում էին, և այն վեր էր ածվում պետությունների առևտրային հիմնական միավորման: Նշված ձևափոխությունն իրավաբանորեն ձևակերպվել է 1994 թ., ԳԱՏՏ փոխարեն *Համաշխարհային առևտրային կազմակերպության* (WTO/ՀԱԿ) հիմնադրմամբ, որը ժամանակակից միջազգային առևտրային իրավունքի համակարգում կենտրոնական տեղ է գրավում:

Այն ստեղծվել է ԳԱՏՏ մասնակիցների վերջին նստաշրջանի («ռաունդի»), այսպես կոչված՝ *Ուրուգվայական ռաունդի* ընթացքում, որին մասնակցում էր 118 պետություն: Այն ընթանում էր 7 տարի և ավարտվեց *Եզրափակիչ ակտի* ստորագրմամբ, որը միջազգային առևտրի յուրօրինակ օրենսգիրք է: Ակտի միայն հիմնական տեքստը շարադրված է 500 էջում: Ակտը բովանդակում է բազմաթիվ ոլորտներին վերաբերող համաձայնագրերի ընդարձակ համալիր: Դրանցից հիմնականներն են՝ ՀԱԿ-ի հիմնադրման (ԳԱՏՏ փոխարեն), մաքսային սակագների, ապրանքների առևտրի, ծառայությունների առևտրի, մտավոր սեփականության պաշտպանության առևտրային տեսանկյունների մասին համաձայնագրերը: Ներկայում Հայաստանի Հանրապետությունում աշխատանքներ են կատարվում Համաշխարհային առևտրային կազմակերպությանն անդամակցելու ուղղությամբ, ինչը ենթադրում է վերը նշված ոլորտներում օրենսդրության համապատասխանեցում ՀԱԿ-ի չափանիշներին:

Միջազգային ֆինանսական իրավունքը: Միջազգային ֆինանսական իրավունքը միջպետական ֆինանսավարկային հարաբերությունները կարգավորող միջազգային իրավական սկզբունքների և նորմերի համակցություն է:

Պետությունների ֆինանսավարկային հարաբերությունները հիմնականում կարգավորվում են երկկողմ պայմանագրերով: Այդ ոլորտին վերաբերող նորմերը զետեղված են առևտրային կամ տնտեսական համագործակցության մասին ընդհանուր պայմանագրերում: Սակայն դա չի բացառում ֆինանսավարկային հատուկ համաձայնագրերի առկայությունը:

Փոխադարձ հաշվարկների համաչափագրերը որոշում են արտաքին տնտեսական ոլորտում ծագող փոխադարձ ֆինանսական պահանջների և պարտավորությունների հաշվանցման կարգը, առանց արտարժույթի փոխանակման փոխադարձ հաշվարկների կարգը: Այդպիսի համաձայնագրերի նպատակը փոխադարձ վճարումները հավասարակշռելն է:

Վճարային համաչափագրերը կանոնակարգում են հաշվարկները համաձայնեցված արժույթով և սահմանում հաշվարկների կառուցակարգը:

Վարկային համաչափագրերը որոշում են փոխառության տրամադրման ձևերը (ոսկով, արժույթով, ապրանքներով) և պայմանները (ժամկետները, տոկոսային հատուցումը, մարման եղանակները և այլն):

Ֆինանսավարկային հարաբերությունները սկսել են ավելի հաճախ կարգավորվել բազմակողմ պայմանագրերով: Օրինակ, Արևմտյան Եվրոպայի երկրների միջև կնքվել են եվրոարժույթով փոխադարձ հաշվարկների կարգի մասին մի շարք համաձայնագրեր (դրանցից վերջինը 1992 թ. Մասստրիխտի պայմանագիրն է): Մեկ ուրիշ օրինակ է ԱՊՀ մասնակից պետությունների *Վճարային միության սրեղծման մասին* 1994 թ. համաձայնագիրը:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններն այս ոլորտում միջազգային համագործակցության իրականացման կառուցակարգի կարևոր օղակն են:

Միջազգային արժույթային հիմնադրամը (IMF/ՄԱՀ) կենտրոնական դիրք է գրավում միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունների համակարգում: Այն ստեղծվել է 1945 թ., *Ֆինանսավարկային հարցերով Միավորված ազգերի կոնֆերանսի* կողմից ընդունված պայմանագրերի (Բրետտոն-Վուդի համաձայնագրերի) հիման վրա: ՄԱՀ-ի կենտրոնական գրասենյակը գտնվում է Վաշինգտոնում:

1947 թ. ՄԱՀ-ը ունի ՄԱԿ-ի մասնագիտացված հաստատության կարգավիճակ: Հիմնադրամի անդամ են գրեթե բոլոր պետությունները՝ ներառյալ Հայաստանի Հանրապետությունը:

ՄԱՀ-ի հիմնական նպատակը պետությունների ֆինանսավարկային քաղաքականության համակարգումն է և դրանց վճարային հավասարակշռության ու արժույթային փոխարժեքների պահպանման համար փոխառություններ տրամադրելը: Բացի այդ, ՄԱՀ-ը նպաստում է միջազգային համագործակցությանը՝ արժույթային ոլորտում և միջազգային առևտրի աճին, միջոցներ է ձեռնարկում արժույթների կայունությունն ապահովելու և պետությունների արժույթային հարաբերությունները կանոնակարգելու համար, մասնակցում է արժույթային սահմանափակումներից ազատ հաշվարկների բազմակողմ համակարգի ստեղծմանը:

Համաշխարհային բանկը ՄԱԿ-ի համակարգի բարդ միջազգային կազմավորում է: Դրա համակարգի մեջ են մտնում Համաշխարհային բանկի նախագահին ենթարկվող չորս ինքնուրույն հաստատություններ՝ *Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը* (ՎԶՄԲ), *Միջազգային ֆինանսական կորպորացիան* (IFC/ՄՖԿ), *Զարգացման միջազգային ստոցիացիան* (ՉՄԱ), *Երաշխիքային ներդրումների բազմակողմ գործակալությունը* (ԵՆԲԳ): Այդ հաստատությունների ընդհանուր նպատակը ՄԱԿ-ի նվազ զարգացած անդամների տնտեսական և սոցիալական զարգացմանն աջակցելն է՝ ֆինանսական և խորհրդատվական օգնություն ցուցաբերելու և կադրերի պատրաստմանն աջակցելու միջոցով: Այս ընդհանուր նպատակի շրջանակներում յուրաքանչյուր հաստատություն իրականացնում է իր նպատակները:

Միջազգային ներդրումային իրավունքը: Ներդրումների առնչությամբ հարաբերությունները կարգավորող նորմերի և ինստիտուտների քանակը թույլ է տալիս խոսել միջազգային ներդրումային իրավունքի մասին որպես միջազգային իրավունքի ինքնուրույն ենթաճյուղի, հատկապես հաշվի առնելով օտարերկրյա ներդրումների նշանակությունը պետության տնտեսական զարգացման գործում:

Միջազգային ներդրումային իրավունքը կապիտալի ներդրումների կապակցությամբ պետությունների հարաբերությունները կարգավորող նորմերի և սկզբունքների համակարգն է:

Միջպետական ներդրումային հարաբերությունները գլխավորապես կարգավորվում են երկկողմ պայմանագրերով: Դրանք կարող են կոչվել տարբեր կերպ՝ «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագիր», «Ներդրումների իրականացմանն աջակցության և փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագիր» և այլն:

Բոլոր երկկողմ ներդրումային պայմանագրերի բովանդակությունում կարելի է առանձնացնել հարցերի ընդհանուր շրջանակ՝ օտարերկրյա ներդրողների իրավական ռեժիմի սահմանումը (որպես կանոն՝ ազգային ռեժիմ), ընդունող պետության կողմից տրամադրվող երաշխիքների համակարգը (ազգայնացումից, արժույթի ազատ արտահանման արգելքից, ոչ առևտրային՝ քաղաքական ռիսկերից և այլն), ներդրողի և ընդունող պետության միջև վեճերի քննության կարգը (որպես կանոն, նախատեսվում է արբիտրաժային քննության հնարավորություն):

Պեպրությունների տեսակների ինքնագրումը: Ինքնագրումը ինքնիշխան պետությունների միավորման գործընթացն է ընդլայնված տնտեսական այնպիսի տարածություն կազմավորելու նպատակով, որում կարող են ազատ շրջանառվել ապրանքները, ծառայությունները, ֆինանսները, ներդրումները, աշխատուժը:

- Ինտեգրման արտաքին դրսևորումն է՝
- միասնական ապրանքային շուկաների կազմավորումը,
- ապրանքների, ծառայությունների, աշխատուժի ընդհանուր շուկայի ստեղծումը,
- կապիտալների կենտրոնացումը և փոխներհյուսումը,
- փոխհամաձայնեցված արտաքին տնտեսական՝ քաղաքականության իրականացումը:

Գործնականում տարբերում են ինտեգրացիոն միավորումների հետևյալ հինգ հիմնական կազմակերպական-իրավական ձևերը՝

1. *ազատ առևտրի գոտի*. այս դեպքում վերացվում են մասնակից երկրների միջև առևտրում մաքսատուրքերը՝ երրորդ երկրների հետ առևտրում ազգային մաքսային սակագների պահպանմամբ,

2. *մաքսային միություն*. սահմանվում է երրորդ պետությունների նկատմամբ միասնական մաքսային սակագին,

3. *ընդհանուր շուկա*. վերացվում են մաքսատուրքերը և ապրանքների, ծառայությունների, կապիտալների, ֆինանսների, աշխատուժի տեղափոխմանն ոչ մաքսային արգելքները,

4. *տնտեսական միություն*. բնութագրվում է ապրանքների, ծառայությունների, կապիտալների, ֆինանսների, աշխատուժի ազատ տեղափոխմամբ, միասնական արտաքին-տնտեսական քաղաքականությամբ, համապատասխան ոլորտների վերազգային կարգավորման ընդլայնմամբ և ուժեղացմամբ,

5. *միասնական տնտեսական տարածություն*. բնութագրվում է համապատասխան քաղաքական վերնաշենքով, միասնական արժույթով, համադաշնային կառուցվածքի միտումներով:

Ինտեգրման գործընթացների միջազգային իրավական կարգավորման հիմնական աղբյուրը միջազգային պայմանագիրն է, իսկ ինստիտուցիոնալ կառուցակարգը՝ միջազգային կազմակերպությունը (ինտեգրացիոն միավորման մարմինները):

Տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումներից ինտեգրման գործընթացն առավել կառավարվող ձևով է ընթանում *Եվրոպական միության* շրջանակներում:

Եվրոպական տնտեսական տարածության ստեղծումը սկիզբ է առնում ինքնուրույն, սակայն փոխկապակցված կազմակերպությունների կազմավորումից (1951 թ.՝ քարածխի ու պողպատի ընդհանուր շուկա (ԶՊԵՄ), 1957 թ.՝ Եվրատոմ և ԵՏՀ):

Հետագայում Եվրոպական միության կազմակերպական իրավական կառույցների զարգացումը հիմնվում էր հետևյալ իրավական ակտերի՝ 1965 թ. Բրյուսելի պայմանագրի, 1971 թ. Լյուքսեմբուրգի պայմանագրի, 1985 թ. Միասնական եվրոպական ակտի, 1990 թ. Շենգենի համաձայնագրի, 1992 թ. Մասստրիխտի համաձայնագրերի, Ամստերդամի պայմանագրի վրա:

Ներկայում տարածաշրջանում ինտեգրման վիճակն ու մակարդակը բնութագրվում է հետևյալ արդյունքներով՝

- վերացված են մասնակից երկրների առևտրի արգելքները (մնացորդային մաքսային արգելքները լիովին վերացվել են 1994 թ.), ստեղծվել է ապրանքների և ծառայությունների ընդհանուր շուկա, այդ թվում միջուկային բնագավառում կիրառվող նյութերի և սարքա-

վորման ընդհանուր շուկա (Եվրատոմ) և քարածխի ու պողպատի ընդհանուր շուկա (ԶՊԵՄ),

- սահմանված է միասնական մաքսային սակագին (ՄՄՄ)՝ երրորդ երկրների համար (մաքսային միության մակարդակ),
- ապահովված է կապիտալների և աշխատուժի տեղափոխման ազատությունը,
- ապահովված է միասնական առևտրական քաղաքականության իրականացումը,
- իրականացվում է ագրարային հատվածի նկատմամբ նպաստավորման և հովանավորչության միասնական քաղաքականություն՝ գների միասնական համակարգի հիման վրա, ինչպես նաև՝ միասնական քաղաքականություն տրանսպորտի բնագավառում,
- ստեղծված է ֆինանսարժութային համակարգ և «Եվրո» միասնական դրամական միավոր,
- իրավունքի ներքին համակարգերը մերձեցվել և ունիֆիկացել են մի շարք ուղղություններով,
- ստեղծված է, գործում և զարգանում է իրավունքի հատուկ համակարգ՝ ԵՄ իրավունքը, ստեղծվում է միասնական իրավաբանական միջավայր ձեռնարկատիրական գործունեության համար:

ԵՄ-ի գլխավոր մարմիններն են Եվրոպական խորհուրդը (ԵՄ խորհուրդը), Եվրոպական խորհրդարանը, Եվրոպական դատարանը:

ԵՄ-ի իրավակարգի վերագոյացված բնույթը դրսևորվում է մասնակից պետությունների և նրանց քաղաքացիների համար պարտադիր, ազգային իրավունքի հանդեպ գերակայությամբ օժտված, անմիջական կիրառման իշխանական ակտեր ընդունելու, ինչպես նաև որոշումները ձայների մեծամասնությամբ ընդունելու՝ նրա մարմինների իրավասությամբ: Ընդ որում, պաշտոնյաները հանդես են գալիս անձնապես այլ ոչ թե որպես իրենց քաղաքացիության պետության ներկայացուցիչներ կամ ծառայողներ:

Եվրոպայից բացի, տարածաշրջանային ինտեգրումն ակտիվորեն իրականացվում է նաև այլ մայրացամաքներում:

Հյուսիսային Ամերիկայում ստեղծված է Ազատ առևտրի հյուսիսամերիկյան ասոցիացիան (NAFTA/ՆԱՖԹԱ), Հարավային Ամերի-

կայում՝ Ինտեգրման լատինաամերիկյան ասոցիացիան (ԻԼԱ) «Անդյան խումբը», «ՄԵԲԿՆՍՈՒԻ» առևտրային պակտը:

Կարիբյան ավազանի երկրները նպատակ են դրել Կարիբյան համագործակցության (ԿԱՐԻԿՈՍ) շրջանակներում ստեղծել ազատ առևտրի գոտի: Ասիայում ինտեգրման գործընթացներն ընթանում են Հարավարևելյան Ասիայի երկրների ասոցիացիայի (ASEAN/ԱՍԵԱՆ), Ասիական-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության (ԱԽՏՀ), Կենտրոնական-ասիական պետությունների տնտեսական համագործակցության կազմակերպության միջոցով:

Արաբական երկրները կազմավորել են ընդհանուր շուկա Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) շրջանակներում: Աֆրիկյան պետությունները նույնպես ձգտում են զարգացնել ինտեգրացիոն գործընթացներն իրենց տարածաշրջանում:

Նախկին ԽՍՀՄ տարածքում տնտեսական ինտեգրումն ընթանում է Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) շրջանակներում: ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագիրն ստորագրվել է Ռուսաստանի, Բելառուսի և Ուկրաինայի կողմից՝ 1991 թ. դեկտեմբերի 8-ին: 1991 թ. դեկտեմբերի 21-ին այդ համաձայնագրին մասնակցելու մասին հատուկ արձանագրություն են ստորագրել Ադրբեջանը, Թուրքմենստանը, Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Վրաստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը:

Համաձայնագրում կողմերի համատեղ գործունեության ոլորտ է դիտվում, մասնավորապես, ընդհանուր տնտեսական տարածության, մաքսային և միգրացիոն քաղաքականության կազմավորումը և զարգացումը, տրանսպորտի, կապի, էներգետիկայի համակարգի զարգացումը: Նախատեսված է ֆինանսավարկային քաղաքականության համակարգումը, ներդրումների խրախուսումն ու պաշտպանությունը, օրենսդրությունների մերձեցումը:

1993 թ. ԱՊՀ մի շարք պետություններ ստորագրել են *Տնտեսական միության ստեղծման մասին* պայմանագիրը, որը նախատեսում է ինտեգրման փուլային խորացում՝ ազատ առևտրի միջպետական ասոցիացիայի, մաքսային միության, ընդհանուր շուկայի, արժույթային միության կազմավորման միջոցով: Պայմանագրով ամրագրված է պայմանագրի նորմերի գերակայությունը՝ մասնակից երկրների ներքին իրավունքների նկատմամբ:

Միության բարձրագույն մարմիններն են ԱՊՀ բարձրագույն մարմինները: Որպես միության մշտական մարմին, ստեղծվել է Միջպետական տնտեսական կոմիտե (ՄՏԿ), որը համակարգող և գործադիր մարմին է:

1994 թ. ապրիլին ստորագրվել է *Ազատ առևտրի գոյու սրեղծման մասին* համաձայնագիրը, որն ուղղված է փոխադարձ առևտրի քանակական և այլ խոչընդոտները, մաքսատուրքերը, հարկերը, պարտադիր վճարներն աստիճանաբար վերացնելուն, միասնականացված ապրանքային անվանակարգ կիրառելուն:

Ներկայում, այդ համաձայնագրին համապատասխան, մասնակից երկրներից ներմուծման դեպքում գործնականում մաքսատուրքեր չեն գանձվում, իսկ ԱԱՀ և ակցիզները գանձվում են նույն այն դրույքաչափերով, որոնք կիրառվում են հայրենական արտադրության ապրանքների նկատմամբ: Մաքսային ձևակերպման համար վճարները գանձվում են ընդհանուր հիմունքներով:

Մաքսային միության սրեղծման մասին պայմանագիրն ստորագրվել է 1995 թ. հունվարին: Մաքսային միությանը մասնակցում են Բելառուսը, Ղազախստանը, Ղրղըզստանը (1996 թ. մարտից) և Ռուսաստանը:

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ¹

¹ Հրատարակվում է ուսումնական նպատակներով:

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ Միավորված ազգերի ժողովուրդներս, լի վճռականությամբ փրկել զայիք սերունդներին պարերազմի արհավիրքից, որը մեր կյանքի ընթացքում երկու անգամ անասելի վիշտ է պարճառել մարդկությանը, և վերահասարակել հավատք մարդու հիմնական իրավունքների, անհատի արժանապատվության և արժեքի, Կոնոս, ինչպես նաև մեծ ու փոքր ազգերի հավասար իրավունքների նկատմամբ, և սրբեղծել այնպիսի պայմաններ, որոնք ապահովեն արդարությունն ու դաշինքներից և միջազգային իրավունքի այլ աղբյուրներից բխող պարտավորությունների հանդեպ հարգանքը, և ավելի մեծ ազատության պայմաններում խթանել սոցիալական առաջընթացն ու կենսամակարդակի բարելավումը,

Եվ հանուն այդ նպատակների

ցուցաբերել հանդուրժողականություն ու միմյանց հետ ապրել խաղաղությամբ, որպես բարի դրացիներ, և միավորել մեր ուժերը միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու համար, և համապատասխան սկզբունքների ընդունման և մեթոդների սահմանման միջոցով երաշխավորել զինուժի գործադրումը բացառապես ընդհանուր շահերին համապատասխան, և միջազգային լծակները գործադրել բոլոր ժողովուրդների տնտեսական ու սոցիալական առաջընթացը խթանելու համար,

Որոշել ենք միավորել մեր ջանքերն այդ նպատակներին հասնելու համար

Ըստ այդմ, մեր համապատասխան կառավարությունները, ժողովված Սան Ֆրանցիսկոյում, բավարար ու պատշաճ կերպով իրենց լիազորությունները փաստած ներկայացուցիչների միջոցով համաձայնել են ընդունել Միավորված ազգերի կազմակերպության սույն կանոնադրությունը և հիմնում են Միավորված ազգեր անվանումով միջազգային կազմակերպությունը:

ԳԼՈՒԽ 1

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 1

Միավորված ազգերի կազմակերպության նպատակներն են.

1. Պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և այդ նպատակով արդյունավետ համախմբված միջոցներ ձեռնարկել՝ կանխելու և վերացնելու խաղաղության սպառնալիքները, ինչպես նաև ճնշելու ագրեսիայի կամ խաղաղությունը խախտող այլ գործողությունները, և խաղաղ միջոցներով, արդարության և միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա հասնել միջազգային վեճերի կամ խաղաղության համար վտանգավոր իրավիճակների շտկմանը կամ կարգավորմանը:

2. Չարգացնել ազգերի բարեկամական հարաբերություններ՝ հիմնված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հար-

գանքի վրա և այլ համապատասխան միջոցներ ձեռնարկել հանուն համընդհանուր խաղաղության ամրապնդման:

3. Իրականացնել միջազգային համագործակցություն տնտեսական, սոցիալական, մշակութային կամ մարդասիրական բնույթի միջազգային խնդիրների լուծման, ինչպես նաև բոլորի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի տարածման և խրախուսման գործում՝ անկախ ցեղից, սեռից, լեզվից կամ դավանանքից, և

4. Դառնալ ազգերի գործողությունների համաձայնեցման կենտրոն այդ ընդհանուր նպատակներն իրագործելու ճանապարհին:

Հոդված 2

Կազմակերպությունը և նրա անդամները, հետամուտ լինելով 1-ին հոդվածում շարադրված նպատակներին, գործելու են հետևյալ սկզբունքների համաձայն.

1. Կազմակերպությունը հիմնվում է իր բոլոր անդամների ինքնիշխան հավասարության սկզբունքի վրա:

2. Բոլոր անդամները բարեխղճորեն կատարում են սույն կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունները, որպեսզի ապահովեն իրենց համար անդամությունից բխող իրավունքներն ու առավելությունները:

3. Բոլոր անդամներն իրենց միջազգային վեճերը կարգավորում են խաղաղ միջոցներով, այնպես, որ վտանգի չենթարկվեն միջազգային խաղաղությունը, անվտանգությունն ու արդարությունը:

4. Բոլոր անդամները միջազգային հարաբերություններում ձեռնպահ են ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ և կամ Միավորված ազգերի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից:

5. Բոլոր անդամները համակողմանի օժանդակություն են ցուցաբերում Միավորված ազգերի կազմակերպությանը նրա նախաձեռնած բոլոր գործողություններում, որոնք համապատասխանում են սույն կանոնադրությանը և ձեռնպահ են օժանդակելուց որևէ պետության, որի նկատմամբ Միավորված ազգերի կազմակերպությունը կանխարգելիչ կամ հարկադրական գործողություն է ծավալում:

6. Կազմակերպությունն ապահովում է, որպեսզի այն պետությունները, որոնք նրա անդամ չեն, գործեն համաձայն վերոհիշյալ սկզբունքների այնքանով, որքանով դա կարող է անհրաժեշտ լինել միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման համար:

7. Սույն կանոնադրության և ոչ մի դրույթ Միավորված ազգերի կազմակերպությանը չի լիազորում միջամտել որևէ պետության ներքին իրավասության հարցերին և չի պահանջում անդամներից նմանօրինակ հարցերը ներկայացնել լուծման սույն կանոնադրության կարգով, սակայն այս սկզբունքը չի վերաբերում VII գլխով նախատեսված հարկադրական միջոցների կիրառմանը:

**ԳԼՈՒԽ II
ԱՆԴԱՍՏՈՒԹՅՈՒՆ**

Հոդված 3

Միավորված ազգերի կազմակերպության սկզբնական անդամներ են հանդիսանում այն պետությունները, որոնք մասնակցելով Սան Ֆրանցիսկոյում միջազգային կազմակերպության ստեղծման Միավորված ազգերի խորհրդաժողովին կամ նախապես ստորագրելով Միավորված ազգերի՝ 1942 թ. հունվարի 1-ի Հռչակագիրը՝ ստորագրել են սույն կանոնադրությունը և վավերացրել 110-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 4

1. Միավորված ազգերի կազմակերպության անդամությունը բաց է մյուս բոլոր խաղաղասեր պետությունների համար, որոնք կատանձնեն սույն կանոնադրությունը բովանդակող պարտավորությունները և կազմակերպության կարծիքով, կարող են և կամենում են կատարել այդ պարտականությունները:

2. Ցանկացած նման պետության՝ Միավորված ազգերի կազմակերպություն ընդունվելն իրականացվում է Գլխավոր ասամբլեայի որոշմամբ՝ Անվտանգության խորհրդի հանձնարարականով:

Հոդված 5

Եթե կազմակերպության որևէ անդամի նկատմամբ կիրառվել են կանխարգելիչ կամ հարկադրական գործողություններ Անվտանգության խորհրդի կողմից, Գլխավոր ասամբլեան կարող է Անվտանգության խորհրդի հանձնարարականով կասեցնել նրա անդամության իրավունքներն ու արտոնությունները: Այդ իրավունքներն ու արտոնությունները կարող են վերականգնվել Անվտանգության խորհրդի կողմից:

Հոդված 6

Կազմակերպության այն անդամը, որը պարբերաբար խախտում է սույն կանոնադրությունում բովանդակվող սկզբունքները, կարող է Անվտանգության խորհրդի հանձնարարականով վտարվել կազմակերպությունից Գլխավոր ասամբլեայի կողմից:

**ԳԼՈՒԽ III
ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

Հոդված 7

1. Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր մարմիններն են՝ Գլխավոր ասամբլեան, Անվտանգության խորհուրդը, Տնտեսական և սոցիալական խորհուրդը, Խնամակալության խորհուրդը, Միջազգային դատարանը և Քարտուղարությունը:

2. Անհրաժեշտության դեպքում, համաձայն սույն կանոնադրության, կարող են հիմնվել այլ օժանդակ մարմիններ:

Հոդված 8

Միավորված ազգերի կազմակերպությունը որևէ սահմանափակում չի դնում իր գլխավոր և օժանդակ մարմիններում ցանկացած մակարդակով և հավասարության պայմաններում տղամարդկանց ու կանանց մասնակցության իրավունքի վրա:

**ԳԼՈՒԽ IV
ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱ**

ԿԱԶՄԸ

Հոդված 9

1. Գլխավոր ասամբլեան բաղկացած է Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամներից:

2. Յուրաքանչյուր անդամ Գլխավոր ասամբլեայում ունի հինգից ոչ ավելի ներկայացուցիչ:

ԳՈՐԾԱՆՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԼԵԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 10

Գլխավոր ասամբլեան կարող է քննարկել սույն կանոնադրության սահմաններում կամ սույն կանոնադրությամբ որևէ մարմնի լիազորություններին ու գործառույթներին վերաբերող ցանկացած հարց կամ գործ, բացառությամբ 12-րդ հոդվածով նախատեսվածների, ցանկացած նման հարցի կամ գործի վերաբերյալ հանձնարարականներ ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության անդամներին կամ Անվտանգության խորհրդին և կամ երկուսին միաժամանակ:

Հոդված 11

1. Գլխավոր ասամբլեան կարող է քննարկել միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման գործում համագործակցության հիմնական սկզբունքները, ներառյալ զինաթափումը և սպառազինությունների կարգավորումը պայմանավորող սկզբունքները, և կարող է այդ սկզբունքների առնչությամբ հանձնարարականներ ներկայացնել անդամներին կամ Անվտանգության խորհրդին և կամ երկուսին միաժամանակ:

2. Գլխավոր ասամբլեան, համաձայն 35-րդ հոդվածի 2-րդ կետի և բացառությամբ 12-րդ հոդվածով նախատեսվածների, կարող է Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամի կամ Անվտանգության խորհրդի և կամ Միավորված ազգերի կազմակերպության անդամ չհանդիսացող պետության առաջարկությամբ քննարկել միջազգային խաղաղությանն ու անվտանգությանն առնչվող ցանկացած հարց, կարող է այդ հարցերի վերաբերյալ հանձնարարականներ ներկայացնել շահագրգիռ պետությանը կամ պետություններին, Անվտանգության խորհրդին կամ բոլորին միաժամանակ: Ցանկացած հարց, որի առնչությամբ անհրաժեշտ է նախաձեռնել գործողություն, նախքան քննարկումը կամ քննարկումից հետո Գլխավոր ասամբլեան փոխանցում է Անվտանգության խորհրդին:

3. Գլխավոր ասամբլեան կարող է Անվտանգության խորհրդի ուշադրությունը հրավիրել այն իրավիճակների վրա, որոնք կարող են սպառնալ միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը:

4. Գլխավոր ասամբլեայի՝ սույն հոդվածում թվարկված լիազորությունները չեն կարող սահմանափակել 10-րդ հոդվածի հիմնական իմաստը:

Հոդված 12

1. Այն ընթացքում, երբ Անվտանգության խորհուրդը որևէ վեճի կամ իրավիճակի առնչությամբ իրականացնում է սույն կանոնադրությամբ իրեն վե-

րապահված գործառույթները, Գլխավոր ասամբլեան այդ վեճի կամ իրավիճակի վերաբերյալ չի կարող որևէ հանձնարարական ներկայացնել, եթե Անվտանգության խորհուրդը չդիմի այդպիսի խնդրանքով:

2. Անվտանգության խորհրդի համաձայնությամբ Գլխավոր քարտուղարը տեղեկացնում է Գլխավոր ասամբլեային նրա յուրաքանչյուր նստաշրջանում միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանմանն առնչվող ցանկացած հարցի մասին, որը քննարկում է Անվտանգության խորհուրդը, և երբ Անվտանգության խորհուրդը դադարեցնում է նման հարցերի քննարկումը, անմիջապես տեղեկացնում է Գլխավոր ասամբլեային, իսկ եթե վերջինս նստաշրջանում չէ, Միավորված ազգերի կազմակերպության անդամներին:

Հոդված 13

1. Գլխավոր ասամբլեան ուսումնասիրություններ է կազմակերպում և հանձնարարականներ ներկայացնում հետևյալ նպատակներով.

ա. աջակցություն միջազգային համագործակցությանը քաղաքականության բնագավառում և միջազգային իրավունքի առաջադիմական զարգացման ու դրա կողմի ֆիկացիայի խրախուսում,

բ. աջակցություն միջազգային համագործակցությանը տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական և առողջապահության ասպարեզներում և օժանդակություն բոլորի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների իրականացմանը՝ առանց ցեղային, սեռային, լեզվի և դավանանքի տարբերակման:

2. Վերոհիշյալ 1.բ. կետում նշված հարցերի առնչությամբ Գլխավոր ասամբլեայի պարտականությունները, գործառույթները և լիազորությունները շարադրված են IX և X գլուխներում:

Հոդված 14

12-րդ հոդվածի դրույթների համաձայն, Գլխավոր ասամբլեան կարող է միջոցառումներ հանձնարարել ցանկացած իրադրության խաղաղ կարգավորման համար՝ անկախ դրա ծագումից, որը, ըստ իրեն, կարող է սպառնալ ընդհանուր բարօրությանը կամ ազգերի միջև բարեկամական հարաբերություններին, ներառյալ այն իրադրությունները, որոնք առաջանում են Միավորված ազգերի կազմակերպության նպատակներն ու սկզբունքները շարադրող սույն կանոնադրության դրույթները խախտելու հետևանքով:

Հոդված 15

1. Գլխավոր ասամբլեան ստանում և քննարկում է Անվտանգության խորհրդի ամենամյա և հատուկ զեկույցներ, որոնք պարունակում են հաշվետվություն միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման համար Անվտանգության խորհրդի ձեռնարկած կամ ձեռնարկելիք միջոցառումների մասին:

2. Գլխավոր ասամբլեան ստանում և քննարկում է Միավորված ազգերի կազմակերպության մյուս մարմինների զեկույցները:

Հոդված 16

Գլխավոր ասամբլեան Խնամակալության միջազգային համակարգի նկատմամբ իրականացնում է այնպիսի գործառույթներ, որոնք վերապահ-

ված են իրեն XII և XIII գլուխներով, ներառյալ ռազմավարականների շարքը չդասվող տարածքների խնամակալության վերաբերյալ համաձայնագրերի հաստատումը:

Հոդված 17

1. Գլխավոր ասամբլեան քննարկում և հաստատում է կազմակերպության բյուջեն:

2. Կազմակերպության ծախսերը հոգում են անդամները՝ ըստ Գլխավոր ասամբլեայի սահմանած մասնաշափերի:

3. Գլխավոր ասամբլեան 57-րդ հոդվածում նշված մասնագիտացված գործակալությունների հետ քննարկում և հաստատում է ցանկացած ֆինանսական կամ բյուջետային համաձայնություն, ինչպես նաև ստուգում է վերոհիշյալ մասնագիտացված գործակալությունների վարչական բյուջեները, որպեսզի հանձնարարականներ ներկայացնի շահագրգիռ գործակալություններին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հոդված 18

1. Գլխավոր ասամբլեայի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն:

2. Կարևոր հարցերով Գլխավոր ասամբլեան որոշում է ընդունում ներկա գտնվող և քվեարկող անդամների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ: Այդ հարցերի թվում են՝ միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանմանը վերաբերող հանձնարարականները, Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամների ընտրությունը, Տնտեսական ու սոցիալական խորհրդի անդամների ընտրությունը, համաձայն 86-րդ հոդվածի գ. կետի՝ Հոգաբարձության խորհրդի անդամների ընտրությունը, նոր անդամների ընդունելությունը Միավորված ազգերի կազմակերպություն, անդամության իրավունքների և արտոնությունների դադարեցումը, անդամների հեռացումը, խնամակալության համակարգի գործառնությանն առնչվող ու բյուջետային հարցեր:

3. Այլ հարցերի վերաբերյալ որոշումները, ներառյալ երկու երրորդի մեծամասնությամբ ընդունվող հարցերի լրացուցիչ կատեգորիաների սահմանումը, վճռվում են ներկա քվեարկող անդամների ձայների մեծամասնությամբ:

Հոդված 19

Միավորված ազգերի կազմակերպության այն անդամը, որը կազմակերպությանը վճարվող անդամավճարի պարտք ունի, զրկվում է Գլխավոր ասամբլեայում ձայնի իրավունքից, եթե պարտքի գումարը հավասար է կամ գերազանցում է վերջին երկու լրիվ տարիների համար այդ անդամից ստանալիք անդամավճարի ընդհանուր գումարը: Սակայն Գլխավոր ասամբլեան կարող է թույլատրել այդպիսի անդամին քվեարկել, եթե վերջինս հավաստիացնի որ ուշացումը տեղի է ունեցել իրենից անկախ հանգամանքների բերումով:

ԸՆԹԱՏԱԿԱՐԳ

Հոդված 20

Գլխավոր ասամբլեան կանոնավոր կերպով գումարում է ամենամյա նստաշրջաններ, ինչպես նաև հանգամանքների բերումով՝ արտահերթ

նատաշրջաններ: Արտահերթ նատաշրջանները Անվտանգության խորհրդի կամ Միավորված ազգերի կազմակերպության անդամների մեծամասնության պահանջով հրավիրում է Գլխավոր քարտուղարը:

Հոդված 21

Գլխավոր ասամբլեան սահմանում է ընթացակարգի սեփական կանոնները: Ամեն նատաշրջանի համար նա ընտրում է իր նախագահին:

Հոդված 22

Գլխավոր ասամբլեան կարող է ստեղծել այլ օժանդակ մարմիններ, որոնք նա անհրաժեշտ կհամարի իր գործառույթներն իրականացնելու համար:

Գ.ԼՈՒՆ Վ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱԶՄԸ

Հոդված 23

1. Անվտանգության խորհուրդը բաղկացած է Միավորված ազգերի կազմակերպության տասնհինգ անդամներից: Ամերիկայի Միացյալ Նահանգները, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը, Չինաստանի Հանրապետությունը և Ֆրանսիան Անվտանգության խորհրդի մշտական անդամներ են: Գլխավոր ասամբլեան Միավորված ազգերի կազմակերպության տասը այլ անդամների ընտրում է որպես Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամներ՝ մասնավորապես ըստ արժանվույն ուշադրություն դարձնելով առաջին հերթին անդամի ունեցած մասնակցությանը միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման և կազմակերպության այլ նպատակներին հասնելու գործում, ինչպես նաև աշխարհագրական արդարացի համամասնությանը:

2. Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամներն ընտրվում են երկու տարի ժամկետով: Ոչ մշտական անդամների առաջին իսկ ընտրություններում Անվտանգության խորհրդի անդամների թիվը տասնմեկից մինչև տասնհինգ հասնելուց հետո, չորս լրացուցիչ անդամներից երկուսն ընտրվում են մեկական տարի ժամկետով: Անվտանգության խորհրդի ժամկետը սպառած անդամը անմիջապես վերընտրության ենթակա չէ:

3. Անվտանգության խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ներկայացուցիչ:

ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 24

1. Միավորված ազգերի կազմակերպության արագ և արդյունավետ գործողությունները ապահովելու համար նրա անդամները միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման հիմնական պատասխանատվությունը վերապահում են Անվտանգության խորհրդին և համաձայնության են գալիս, որ այդ պատասխանատվությունից բխող իր պարտավորությունները կատարելիս Անվտանգության խորհուրդը գործում է իրենց անունից:

2. Այդ պարտավորությունները կատարելիս Անվտանգության խորհուրդը գործում է Միավորված ազգերի նպատակների ու սկզբունքների համաձայն: Այդ պարտավորությունները կատարելու համար Անվտանգության խորհրդին տրված հատուկ լիազորությունները շարադրված են 6-րդ, 7-րդ, 8-րդ և 12-րդ գլուխներում:

3. Անվտանգության խորհուրդը Գլխավոր ասամբլեային ներկայացնում է ամենամյա զեկույցներ և ըստ անհրաժեշտության՝ հատուկ զեկույցներ:

Հոդված 25

Սույն կանոնադրության համաձայն, Միավորված ազգերի կազմակերպության անդամները համաձայնության են գալիս ենթարկվել Անվտանգության խորհրդի որոշումներին և կատարել դրանք:

Հոդված 26

Միջազգային խաղաղության ու անվտանգության հաստատմանն ու պահպանմանը նպաստելու նպատակով սպառազինման համար համաշխարհային նվազագույն մարդկային ուժեր ու տնտեսական պաշարներ ներգրավելով՝ Անվտանգության խորհուրդը պատասխանատվություն է կրում 47-րդ հոդվածում նշվող Ռ-ազմական անձնակազմի կոմիտեի օժանդակությամբ սպառազինությունների կարգավորման համակարգ ստեղծելու վերաբերյալ նախագծեր ձևակերպելու և դրանք Միավորված ազգերի կազմակերպության անդամներին ներկայացնելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հոդված 27

1. Անվտանգության խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն:

2. Ընթացակարգի հարցերին վերաբերող Անվտանգության խորհրդի որոշումներն ընդունվում են ինը անդամների կողմ ձայներով:

3. Բոլոր այլ հարցերի վերաբերյալ Անվտանգության խորհրդի որոշումներն ընդունվում են ինը անդամների կողմ ձայներով, ներառյալ բոլոր մշտական անդամների համընկնող ձայները, ընդ որում 6-րդ գլխի և 52-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա որոշումներն ընդունելիս վեճին մասնակցող անդամը պետք է ձեռնպահ մնա քվեարկությունից:

ԸՆԹԱՅՆԱԿԱՐԳ

Հոդված 28

1. Անվտանգության խորհուրդը կազմակերպվում է այնպես, որ կարողանա գործել անընդմեջ: Այդ նպատակով Անվտանգության խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է մշտապես ներկայացված լինի Միավորված ազգերի կազմակերպության նստավայրում:

2. Անվտանգության խորհուրդը գումարում է պարբերական նիստեր, որոնց ժամանակ նրա յուրաքանչյուր անդամ կարող է իր հայեցողությամբ ներկայացվել կառավարության անդամի կամ հատուկ նշանակված որևէ այլ ներկայացուցչի միջոցով:

3. Անվտանգության խորհրդի նիստերը կարող են տեղի ունենալ ոչ միայն կազմակերպության նստավայրում, այլև ցանկացած այլ վայրում, որը, ըստ խորհրդի, առավել նպաստավոր է իր աշխատանքի համար:

Հոդված 29

Անվտանգության խորհուրդը կարող է հիմնադրել այնպիսի օժանդակ մարմիններ, որոնք անհրաժեշտ կհամարի իր գործառույթների իրականացման համար:

Հոդված 30

Անվտանգության խորհուրդը հաստատում է ընթացակարգի սեփական կանոնները, ներառյալ իր նախագահին ընտրելու կարգը:

Հոդված 31

Միավորված ազգերի կազմակերպության՝ Անվտանգության խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած անդամ կարող է, առանց ձայնի իրավունքի, մասնակցել Անվտանգության խորհրդում ցանկացած հարցի քննարկմանը բոլոր այն դեպքերում, երբ Անվտանգության խորհուրդը համարում է, որ մասնավորապես շոշափվում են տվյալ անդամի շահերը:

Հոդված 32

Միավորված ազգերի կազմակերպության՝ Անվտանգության խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած անդամ կամ Միավորված ազգերի կազմակերպության անդամ չհանդիսացող ցանկացած պետություն, որը Անվտանգության խորհրդում քննարկվող վեճի կողմ է հանդիսանում, հրավիրվում է, առանց ձայնի իրավունքի, մասնակցելու այդ վեճին վերաբերող քննարկմանը: Միավորված ազգերի կազմակերպության անդամ չհանդիսացող պետության մասնակցության համար Անվտանգության խորհուրդը սահմանում է այնպիսի պայմաններ, որոնք արդարացի է համարում:

ԳԼՈՒԽ VI

ՎԵՃԵՐԻ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 33

1. Ցանկացած վեճի մասնակցող կողմերը, որի շարունակվելը կարող է վտանգել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը, պետք է ամենից առաջ ձգտեն լուծել այն բանակցությունների, հարցադրումների, միջնորդությունների, հաշտեցման, արբիտրաժի, դատավարությունների, տարածքային մարմիններին կամ համաձայնություններին դիմելու և կամ իրենց ընտրությամբ այլ խաղաղ միջոցներով:

2. Անվտանգության խորհուրդը, երբ հարկ է համարում, կողմերին կոչ է անում վեճը կարգավորել նման միջոցներով:

Հոդված 34

Անվտանգության խորհուրդը իրավասու է հետաքննել ցանկացած վեճ կամ իրավիճակ, որը կարող է հանգեցնել միջազգային լարվածության կամ վեճի, որոշելու համար, թե կարող է արդյոք տվյալ վեճի կամ իրավիճակի շարունակվելը վտանգել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը:

Հոդված 35

1. Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ կարող է Անվտանգության խորհրդին կամ Գլխավոր ասամբլեային տեղյակ պահել 34-րդ հոդվածում նշված բնույթի ցանկացած վեճի կամ իրավիճակի մասին:

2. Միավորված ազգերի կազմակերպության անդամ չհանդիսացող պետությունը կարող է Անվտանգության խորհրդին կամ Գլխավոր ասամբլեային տեղյակ պահել ցանկացած վեճի մասին, որի կողմն է հանդիսանում ինքը, եթե նախապես սույն կանոնադրությամբ նախատեսվող խաղաղ կարգավորման պարտավորություն է ստանձնում տվյալ վեճի առնչությամբ:

3. Սույն հոդվածի հիման վրա ստացված գործերի կարգավորումը Գլխավոր ասամբլեան իրականացնում է համաձայն 11-րդ և 12-րդ հոդվածների դրույթների:

Հոդված 36

1. 33-րդ հոդվածում նշված բնույթի վեճի կամ համանման իրավիճակի ցանկացած փուլում Անվտանգության խորհուրդը իրավասու է հանձնարարել կարգավորման համապատասխան ընթացակարգ կամ եղանակ:

2. Անվտանգության խորհուրդը տվյալ վեճը կարգավորելու համար նկատի է առնում ցանկացած ընթացակարգ, որն արդեն ընդունվել է կողմերի կողմից:

3. Սույն հոդվածի հիման վրա հանձնարարականներ տալիս Անվտանգության խորհուրդը նկատի է առնում նաև, որ կողմերն իրավական բնույթի վեճերն ընդունված կարգով պետք է հանձնեն Միջազգային դատարանին՝ համաձայն այդ դատարանի կանոնակարգի դրույթների:

Հոդված 37

1. Եթե 33-րդ հոդվածում նշված բնույթի վեճերի կողմերը այդ հոդվածում նշված միջոցներով կարգավորման չեն հասնում, ապա ներկայացնում են այն Անվտանգության խորհրդին:

2. Եթե Անվտանգության խորհուրդը համարում է, որ վեճի շարունակվելն իրոք կարող է վտանգել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը, որոշում է՝ գործէ՞լ արդյոք 36-րդ հոդվածի համաձայն կամ իր հայեցողությամբ հանձնարարել կարգավորմանը պատշաճ պայմաններ:

Հոդված 38

Չանտեսելով 33-37-րդ հոդվածների դրույթները, Անվտանգության խորհուրդը, վեճի բոլոր կողմերի խնդրանքով, կարող է կողմերին ներկայացնել վեճի խաղաղ կարգավորման հանձնարարականներ:

ԳԼՈՒԽ VII

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳՄԱՆ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԱՍՏՄԱՆ ԵՎ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԱՈՆՉՈՒԹՅԱՄԸ

Հոդված 39

Անվտանգության խորհուրդը որոշում է խաղաղության ցանկացած վտանգման, խաղաղության խախտման կամ ագրեսիայի ակտի առկայությունը և հանձնարարականներ է ներկայացնում կամ վճռում է, թե համաձայն 41-րդ և 42-րդ հոդվածների՝ ի՞նչ միջոցներ պետք է ձեռնարկվեն միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման կամ վերականգման համար:

Հոդված 40

Իրավիճակի վատթարացումը կանխելու նպատակով Անվտանգության խորհուրդը նախքան հանձնարարականներ տալը կամ 39-րդ հոդվածով նախատեսված միջոցներին դիմելու որոշումը կարող է պահանջել շահագրգիռ կողմերից կատարելու այն ժամանակավոր միջոցառումները, որոնք անհրաժեշտ կամ ցանկալի կհամարի: Նման ժամանակավոր միջոցառումները չպետք է լինեն ի վնաս շահագրգիռ կողմերի իրավունքներին, հավակնություններին կամ դիրքին: Անվտանգության խորհուրդը հարկ եղած կերպով նկատի է առնում նման ժամանակավոր միջոցառումները չկատարելը:

Հոդված 41

Անվտանգության խորհուրդը կարող է որոշել, թե զինուժի գործածությունից զերծ ինչ միջոցների պետք է դիմել իր որոշումներն իրականացնելու համար և պահանջել Միավորված ազգերի կազմակերպության անդամներից կիրառել այդ միջոցները: Դրանք կարող են ընդգրկել տնտեսական հարաբերությունների, երկաթուղային, ծովային, օդային, փոստային, հեռագրային, ռադիո և հաղորդակցության այլ ձևերի լիակատար կամ մասնակի ընդհատումը և դիվանագիտական հարաբերությունների խզումը:

Հոդված 42

Եթե Անվտանգության խորհուրդը համարում է, որ 42-րդ հոդվածով նախատեսված միջոցները անբավարար կլինեն կամ արդեն իսկ անբավարար են, կարող է օդային, ծովային կամ ցամաքային ուժերով նախաձեռնել այնպիսի գործողություններ, որոնք անհրաժեշտ կհամարվեն միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու կամ վերականգնելու համար: Դրանք կարող են ներառել Միավորված ազգերի կազմակերպության անդամների օդային, ծովային կամ ցամաքային զինուժի ցուցադրություններ, շրջափակում և այլ գործողություններ:

Հոդված 43

1. Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամները միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանմանը նպաստելու համար պարտավորվում են Անվտանգության խորհրդի կոչով և հատուկ համաձայնագրի կամ համաձայնագրերի համաձայն, նրան տրամադրել միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանմանն անհրաժեշտ զինուժ, օժանդակություն և համապատասխան միջոցներ, ներառյալ սահմանն անցնելու իրավունքը:

2. Նման համաձայնագիրը կամ համաձայնագրերը սահմանում են տրամադրվող զինուժի քանակը և տեսակը, պատրաստականության աստիճանը և ընդհանուր տեղաբաշխումը, ինչպես նաև օժանդակության ու մատուցվող ծառայությունների բնույթը:

3. Համաձայնագիրը կամ համաձայնագրերը կնքելու բանակցությունները Անվտանգության խորհրդի նախաձեռնությամբ ձեռնարկվում են հնարավորինս կարճ ժամկետում: Դրանք կնքվում են Անվտանգության խորհրդի և կազմակերպության անդամների կամ Անվտանգության խորհրդի և կազմա-

կերպության անդամների խմբերի միջև և ենթակա են վավերացման ստորագրող պետությունների կողմից՝ համաձայն իրենց սահմանադրական կարգի:

Հոդված 44

Երբ Անվտանգության խորհուրդը որոշում է ընդունում ուժ կիրառելու մասին, ապա նախքան Անվտանգության խորհրդում չներկայացված անդամից պահանջել զինուժ տրամադրել 43-րդ հոդվածի համաձայն ստանձնած պարտավորությունները կատարելու համար, այդ անդամի ցանկությամբ Անվտանգության խորհուրդը հրավիրում է նրան մասնակցելու իր զինված ուժերի զորախմբերի օգտագործմանը վերաբերող քննարկումներին:

Հոդված 45

Միավորված ազգերի կազմակերպության համար անհասպաղ ռազմական միջոցառումներ ձեռնարկելու հնարավորություններ ապահովելու նպատակով կազմակերպության անդամները պետք է կազմ ու պատրաստ պահեն իրենց ազգային ռազմաօդային ուժերի գորամիավորումները համատեղ հարկադրական գործողությունների համար: Այդ գորամիավորումների քանակը և պատրաստության աստիճանը, ինչպես նաև համատեղ գործողությունների պլանները Անվտանգության խորհրդի կողմից որոշվում են Ռազմական անձնակազմի կոմիտեի օժանդակությամբ՝ 43-րդ հոդվածում նշված հատուկ համաձայնագրում կամ համաձայնագրերում հաստատված սահմաններում:

Հոդված 46

Զինված ուժերի կիրառման պլանները կազմվում են Անվտանգության խորհրդի կողմից Ռազմական անձնակազմի կոմիտեի օժանդակությամբ:

Հոդված 47

1. Ստեղծվում է Ռազմական անձնակազմի կոմիտե, որպեսզի խորհրդատվություն և օգնություն ցուցաբերվի Անվտանգության խորհրդին այն բոլոր հարցերում, որոնք առնչվում են Անվտանգության խորհրդի ռազմական կարիքներին միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման համար, նրա տրամադրության տակ դրված զորքերի օգտագործմանն ու դեկավարմանը, ինչպես նաև սպառազինությունների կարգավորմանն ու հնարավոր զինաթափմանը:

2. Ռազմական անձնակազմի կոմիտեն բաղկացած է Անվտանգության խորհրդի մշտական անդամների անձնակազմերի պետերից կամ նրանց ներկայացուցիչներից: Կոմիտեում մշտապես չներկայացված Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ համագործակցության է հրավիրվում կոմիտեի կողմից, եթե կոմիտեի պարտականությունների արդյունավետ իրականացումը պահանջում է այդ անդամի մասնակցությունը տվյալ աշխատանքին:

3. Լինելով Անվտանգության խորհրդի ենթակայության տակ՝ Ռազմական անձնակազմի կոմիտեն պատասխանատվություն է կրում Անվտանգության խորհրդի տրամադրության տակ դրված ցանկացած զինված ուժերի ռազմա-

վարական ղեկավարության համար: Այդպիսի զինուժի հրամանատարությանը վերաբերող հարցերը պետք է մշակվեն ավելի ուշ:

4. Ռազմական անձնակազմի կոմիտեն Անվտանգության խորհրդի լիազորությամբ և համապատասխան տարածաշրջանային մարմինների հետ խորհրդակցությունից հետո կարող է հիմնադրել իր տարածաշրջանային ենթակոմիտեները:

Հոդված 48

1. Անվտանգության խորհրդի որոշումների իրականացման համար պահանջվող գործողությունները՝ հանուն միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման, նախաձեռնվում են Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամների կամ դրանց մի մասի կողմից՝ ըստ Անվտանգության խորհրդի հայեցողության:

2. Այդպիսի որոշումները Միավորված ազգերի կազմակերպության անդամները կատարում են անմիջականորեն, ինչպես նաև միջազգային այն համապատասխան գործակալությունների միջոցով, որոնց անդամակցում են:

Հոդված 49

Միավորված ազգերի կազմակերպության անդամները պետք է միավորվեն փոխադարձ օգնություն ցուցաբերելու համար Անվտանգության խորհրդում որոշված միջոցառումներն իրականացնելու համար:

Հոդված 50

Եթե Անվտանգության խորհուրդը կանխարգելիչ կամ հարկադրական միջոցներ է ձեռնարկում որևէ պետության դեմ, ցանկացած այլ պետություն, լինի Միավորված ազգերի կազմակերպության անդամ, թե ոչ, որի համար վերոհիշյալ միջոցների կիրարկման հետևանքով հատուկ տնտեսական խնդիրներ են առաջանում, իրավունք ունի դրանց լուծման վերաբերյալ խորհրդակցել Անվտանգության խորհրդի հետ:

Հոդված 51

Սույն կանոնադրությունը ոչնչով չի խաթարում անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության անկապտելի իրավունքը Միավորված ազգերի կազմակերպության որևէ անդամի հարձակման ենթարկվելու դեպքում, քանի դեռ Անվտանգության խորհուրդը չի ձեռնարկի միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման միջոցառումներ: Անդամների կողմից իրենց ինքնապաշտպանության իրավունքն իրականացնելու միջոցառումների մասին անմիջապես հաղորդվում են Անվտանգության խորհրդին և, սույն կանոնադրության համաձայն, ոչ մի կերպ չեն ազդում Անվտանգության խորհրդի հեղինակության ու լիազորության վրա՝ ցանկացած ժամանակ ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք նա անհրաժեշտ կհամարի միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու կամ վերականգնելու համար:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 52

1. Սույն կանոնադրությունը ոչ մի կերպ չի խոչընդոտում տարածաշրջանային համաձայնությունների կամ մարմինների գոյությունը լուծելու համար միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման առնչվող այնպիսի հարցեր, որոնք պատշաճ են տարածաշրջանային մակարդակի գործողություններին, պայմանով, որ նման համաձայնությունները կամ մարմինները և նրանց գործողությունները համատեղելի լինեն Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին:

2. Միավորված ազգերի կազմակերպության՝ նման համաձայնությունների եկող և նման մարմիններ կազմող անդամները պետք է այդ տարածաշրջանային համաձայնությունների կամ մարմինների օգնությամբ ամեն ջանք գործադրեն տեղական վեճերի խաղաղ կարգավորման համար նախքան դրանք Անվտանգության խորհրդին հղելը:

3. Անվտանգության խորհուրդը շահագրգիռ պետությունների կամ իր նախաձեռնությամբ պետք է քաջալերի նման տարածաշրջանային համաձայնությունների կամ նման տարածաշրջանային մարմինների օգնությամբ տեղական վեճերի խաղաղ կարգավորման զարգացումը:

4. Սույն հոդվածը ոչ մի կերպ չի խոչընդոտում 34-րդ և 35-րդ հոդվածների կիրառումը:

Հոդված 53

1. Անվտանգության խորհուրդը, այնտեղ, որտեղ դա տեղին է, նման տարածաշրջանային համաձայնությունները և մարմինները օգտագործում է իր ղեկավարությամբ հարկադրական գործողություններ ձեռնարկելու համար: Սակայն առանց Անվտանգության խորհրդի լիազորության, տարածաշրջանային համաձայնությունների արդյունքում կամ տարածաշրջանային մարմինների կողմից չեն կարող նախաձեռնվել նման հարկադրական գործողություններ, բացառությամբ, նախատեսված 107-րդ հոդվածով, ցանկացած թշնամի պետության դեմ ձեռնարկվածներից, ինչպես սահմանված է սույն հոդվածի 2-րդ կետում, կամ տարածաշրջանային համաձայնություններով նախատեսվածներից, որոնք ուղղված են որևէ այդպիսի պետության կողմից ագրեսիվ քաղաքականության նորոգման դեմ, քանի դեռ շահագրգիռ կառավարությունների խնդրանքով կազմակերպության վրա չի դրվել այդպիսի պետության կողմից հետագա ագրեսիայի կանխման պատասխանատվությունը:

2. «Թշնամական պետություն» տերմինը, որը գործածված է սույն հոդվածի 1-ին կետում, վերաբերում է ցանկացած պետության, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում եղել է սույն կանոնադրությունը ստորագրող ցանկացած պետության թշնամի:

Հոդված 54

Անվտանգության խորհուրդը պետք է լիակատար կերպով տեղեկացված լինի միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման ուղղ-

ված տարածաշրջանային համաձայնությունների կամ տարածաշրջանային մարմինների ձեռնարկած կամ նախատեսվող գործողությունների մասին:

**ԳԼՈՒԽ IX
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

Հոդված 55

Հետամուտ լինելով բարեկեցության ու կայունության պայմանների ստեղծմանը, որոնք անհրաժեշտ են ազգերի միջև խաղաղ ու բարեկամական հարաբերությունների համար՝ հիմնված հավասար իրավունքների և ինքնորոշման սկզբունքի նկատմամբ հարգանքի վրա, Միավորված ազգերի կազմակերպությունը նպաստում է՝

ա. կենսամակարդակի բարձրացմանը, բնակչության լրիվ զբաղվածությանը և տնտեսական ու սոցիալական առաջընթացի ու զարգացման պայմաններին,

բ. միջազգային տնտեսական, սոցիալական, առողջապահական և համանման հարցերի լուծմանը, մշակույթի ու կրթության բնագավառներում միջազգային համագործակցությանը,

գ. բոլորի հանդեպ և բոլորի համար մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների համընդհանուր հարգանքին և պահպանմանը՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից կամ դավանանքից:

Հոդված 56

Կազմակերպության բոլոր անդամները պարտավորվում են 55-րդ հոդվածում նշված նպատակներին հասնելու համար ձեռնարկել համատեղ և ինքնուրույն գործողություններ՝ կազմակերպության հետ համագործակցելով:

Հոդված 57

1. Չանագան մասնագիտացված գործակալությունները, որոնք ստեղծվում են միջկառավարական համաձայնություններով և իրենց հիմնադիր փաստաթղթերում սահմանված միջազգային լայն պարտավորություններ ունեն տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական, առողջապահության և համանման ոլորտներում, Միավորված ազգերի կազմակերպության հետ կապի մեջ կմտնեն համաձայն 63-րդ հոդվածի դրույթների:

2. Նման գործակալությունները, որոնք Միավորված ազգերի կազմակերպության հետ կապի մեջ են նշված կերպով, այսուհետ կանվանվեն «մասնագիտացված գործակալություններ»:

Հոդված 58

Կազմակերպությունը հանձնարարականներ է ներկայացնում մասնագիտացված գործակալությունների քաղաքականության և գործունեության համակարգման համար:

Հոդված 59

Կազմակերպությունը հարկ եղած դեպքում նախաձեռնություն է ցուցաբերում, որպեսզի շահագրգիռ պետությունները բանակցություններ վարեն նոր մասնագիտացված գործակալություններ ստեղծելու համար, որոնք անհրաժեշտ կլինեն 55-րդ հոդվածում նշված նպատակներին հասնելու համար:

Հոդված 60

Կազմակերպության՝ սույն գլխում շարադրված գործառույթների իրականացման պատասխանատվությունը կրում է Գլխավոր ասամբլեան ինչպես նաև Գլխավոր ասամբլեայի ղեկավարությամբ՝ Տնտեսական և սոցիալական խորհուրդը, որին այդ նպատակով տրվում են լիազորություններ՝ նշված 10-րդ գլխում:

**ԳԼՈՒԽ X
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ԿԱԶՄԸ

Հոդված 61

1. Տնտեսական և սոցիալական խորհուրդը բաղկացած է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից ընտրված հիսունչորս անդամներից:

2. Առաջնորդվելով 3-րդ կետում շարադրված դրույթներով՝ Տնտեսական և սոցիալական խորհրդի տասնութ անդամ ընտրվում է ամեն տարի երեք տարի ժամկետով: Ժամկետը սպառած անդամը կարող է վերընտրվել անմիջապես:

3. Տնտեսական և սոցիալական խորհրդի առաջին ընտրություններում անդամների թիվը քսանյոթից հիսունչորսի հասնելուց հետո, ի հավելումն պաշտոնավարության ժամկետը տարեվերջին սպառող ինը անդամների փոխարեն ընտրվողների, ընտրվում է ևս քսանյոթ լրացուցիչ անդամ: Այս քսանյոթ լրացուցիչ անդամներից իննի պաշտոնավարության ժամկետը սահմանվում է մինչև առաջին տարվա վերջը, իսկ մյուս ինն անդամների ժամկետը՝ համաձայն Գլխավոր ասամբլեայի որոշման, մինչև երկրորդ տարեվերջը:

4. Տնտեսական և սոցիալական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ներկայացուցիչ:

ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 62

1. Տնտեսական և սոցիալական խորհուրդը լիազորված է ուսումնասիրություններ կատարել կամ զեկուցագրեր պատրաստել միջազգային տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական, առողջապահական և համանման հարցերի վերաբերյալ կամ շահագրգռել այդ հարցերով ուրիշներին, ինչպես նաև ցանկացած այդպիսի հարցով հանձնարարականներ ներկայացնել Գլխավոր ասամբլեային, Միավորված ազգերի կազմակերպության անդամներին և շահագրգիռ մասնագիտացված գործակալություններին:

2. Խորհուրդը լիազորված է հանձնարարականներ ներկայացնել բոլորի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքն ու դրանց պահպանումը խրախուսելու համար:

3. Տնտեսական և սոցիալական խորհուրդը կարող է իր իրավասության շրջանակներում գտնվող հարցերի վերաբերյալ համաձայնագրերի նախագծեր պատրաստել Գլխավոր ասամբլեային ներկայացնելու համար:

4. Տնտեսական և սոցիալական խորհուրդը, Միավորված ազգերի կազմակերպության սահմանած կանոնների համաձայն, կարող է հրավիրել միջազգային խորհրդաժողովներ իր իրավասության շրջանակներում գտնվող հարցերի վերաբերյալ:

Հոդված 63

1. Տնտեսական և սոցիալական խորհուրդը կարող է համաձայնություններ կնքել 57-րդ հոդվածում նշված ցանկացած գործակալության հետ՝ սահմանելով այն պայմանները, որոնցով տվյալ գործակալությունը հարաբերություններ հաստատի Միավորված ազգերի կազմակերպության հետ: Նման համաձայնությունները ենթակա են Գլխավոր ասամբլեայի հաստատմանը:

2. Խորհուրդը կարող է համակարգել մասնագիտացված գործակալությունների գործողությունները նրանց հետ խորհրդակցություններ անցկացնելու և հանձնարարականներ տալու, ինչպես նաև Գլխավոր ասամբլեային ու Միավորված ազգերի կազմակերպության անդամներին հանձնարարականներ ներկայացնելու միջոցով:

Հոդված 64

1. Տնտեսական և սոցիալական խորհուրդը կարող է համապատասխան քայլեր ձեռնարկել մասնագիտացված գործակալություններից պարբերաբար զեկուցագրեր ստանալու նպատակով:

Խորհուրդը կարող է համաձայնություններ կնքել Միավորված ազգերի կազմակերպության անդամների և մասնագիտացված գործակալությունների հետ իր իրավասության շրջանակներում գտնվող հարցերի առնչությամբ իր հանձնարարականները և Գլխավոր ասամբլեայի հանձնարարականները կատարելու համար նրանց ձեռնարկած միջոցառումների մասին զեկուցագրեր ստանալու նպատակով:

2. Խորհուրդը կարող է այդ զեկուցագրերի վերաբերյալ իր դիտողությունները հայտնել Գլխավոր ասամբլեային:

Հոդված 65

Տնտեսական և սոցիալական խորհուրդը կարող է տեղեկատվություն տրամադրել Անվտանգության խորհրդին և, Անվտանգության խորհրդի առաջարկությամբ, պարտավոր է օգնել նրան:

Հոդված 66

1. Տնտեսական և սոցիալական խորհուրդն իր իրավասության շրջանակներում իրականացնում է այնպիսի գործառույթներ, որոնք առնչվում են Գլխավոր ասամբլեայի հանձնարարականների կատարմանը:

2. Խորհուրդը, Գլխավոր ասամբլեայի հավանությամբ, կարող է ծառայություններ մատուցել Միավորված ազգերի կազմակերպության անդամների և մասնագիտացված գործակալությունների խնդրանքով:

3. Խորհուրդն իրականացնում է այնպիսի այլ գործառույթներ, որոնք թվարկված են սույն Կանոնադրության այլ հատվածներում կամ հանձնարարվում են իրեն Գլխավոր ասամբլեայի կողմից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հոդված 67

1. Տնտեսական և սոցիալական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն:

2. Տնտեսական և սոցիալական խորհրդի որոշումներն ընդունվում են ներկա և քվեարկող անդամների ձայների մեծամասնությամբ:

ԸՆԹԱՅՆԱԿԱՐԳ

Հոդված 68

Տնտեսական և սոցիալական խորհուրդը հիմնադրում է տնտեսական, սոցիալական ոլորտների և մարդու իրավունքները խրախուսող հանձնաժողովներ, ինչպես նաև իր գործառույթների իրականացմանն անհրաժեշտ այլ հանձնաժողովներ:

Հոդված 69

Տնտեսական և սոցիալական խորհուրդը հրավիրում է Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամի, առանց ձայնի իրավունքի, մասնակցելու իր քննարկումներին ցանկացած հարցով, որը մասնավոր հետաքրքրություն է ներկայացնում տվյալ անդամի համար:

Հոդված 70

Տնտեսական և սոցիալական խորհուրդը կարող է քննարկումներ կազմակերպել խորհրդում կամ իր ստեղծած գործակալություններում մասնագիտացված գործակալությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, առանց ձայնի իրավունքի, ինչպես նաև քննարկումներ կազմակերպել մասնագիտացված գործակալություններում խորհրդի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հոդված 71

Տնտեսական և սոցիալական խորհուրդը կարող է համապատասխան միջոցառումներ ձեռնարկել ոչ կառավարական այն կազմակերպությունների հետ խորհրդատվություն անցկացնելու համար, որոնք շահագրգիռ են իր իրավասությանը վերաբերող հարցերում: Նման միջոցառումները կարող են համաձայնեցվել միջազգային, հարկ եղած դեպքում նաև ազգային կազմակերպությունների հետ Միավորված ազգերի կազմակերպության շահագրգիռ անդամի հետ խորհրդակցելուց հետո:

Հոդված 72

1. Տնտեսական և սոցիալական խորհուրդը սահմանում է ընթացակարգի սեփական կանոնները, ներառյալ իր նախագահ ընտրելու կարգը:

2. Տնտեսական և սոցիալական խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, համաձայն իր կանոնների, որոնք պետք է ընդգրկեն անդամների մեծամասնության խնդրանքով նիստ գումարելու մասին դրույթը:

ԳԼՈՒԽ XI

ՀՈՉԱԿԱԳԻՐ ՈՉ ԻՆՔՆԱԿԱՍՈՎԱՐՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 73

Միավորված ազգերի կազմակերպության անդամները, որոնք պատասխանատվություն են կրում կամ ստանձնում այնպիսի տարածքների կառավարման համար, որոնց ժողովուրդները դեռևս չեն հասել լիակատար ինքնակառավարման, ընդունում են այն սկզբունքը, որ տվյալ տարածքների բնակչության շահերն առաջնահերթ են և, իբրև նվիրական պարտականություն, պատասխանատվություն են ստանձնում սույն կանոնադրությամբ հաստատ-

ված միջազգային խաղաղության և անվտանգության համակարգի շրջանակներում առավելագույնս նպաստել այդ տարածքների բնակչության բարօրությանը և այդ նպատակով՝

ա. այդ ժողովուրդների մշակույթի հանդեպ պատշաճ հարգանք դրսևորելով՝ ապահովել նրանց քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական առաջընթացը, նրանց նկատմամբ արդարացի վերաբերմունքն ու նրանց պաշտպանությունը չարաշահումներից,

բ. զարգացնել ինքնակառավարումը, պատշաճ կերպով հաշվի առնել այդ ժողովուրդների քաղաքական ձգտումները և օժանդակել նրանց ազատ քաղաքական հաստատությունների առաջադիմական զարգացմանը՝ ըստ յուրաքանչյուր տարածքի և նրա ժողովրդի մասնավոր հանգամանքների և զարգացման տարբեր աստիճանների,

գ. ամրապնդել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը,

դ. առաջ մղել զարգացման կառուցողական միջոցառումները, խրախուսել հետազոտությունները, համագործակցել միմյանց հետ, ուր և երբ հարկ է, միջազգային մասնագիտացված կազմակերպությունների հետ՝ հանուն սույն հոդվածում շարադրված սոցիալական, տնտեսական ու գիտական նպատակների գործնական իրականացման, և

ե. տեղեկատվության նպատակով և այնպիսի սահմանափակումներով, որոնք կարող են պահանջվել անվտանգության և սահմանադրական նկատառումներով, պարբերաբար Գլխավոր քարտուղարին հաղորդել վիճակագրական և տեխնիկական բնույթի այլ տեղեկություններ իրենց պատասխանատվության ներքո գտնվող տարածքների տնտեսական, սոցիալական և կրթական պայմանների վերաբերյալ, բացառությամբ այն տարածքների, որոնց վերաբերում են XI և XII գլուխները:

Հոդված 74

Միավորված ազգերի կազմակերպության անդամները համաձայնվում են նաև, որ սույն հոդվածին վերաբերող տարածքների նկատմամբ իրենց քաղաքականությունը, ոչ պակաս, քան իրենց բուն տարածքների դեպքում, պետք է հիմնված լինի բարիդրացիության սկզբունքի վրա՝ հաշվի առնելով մնացած աշխարհի շահերն ու բարօրությունը սոցիալական, տնտեսական և առևտրական գործերում:

ԳԼՈՒԽ XII
**ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԸ**

Հոդված 75

Միավորված ազգերի կազմակերպությունը իր ղեկավարության ներքո ստեղծում է խնամակալության միջազգային համակարգն այն տարածքների կառավարման ու վերահսկման համար, որոնք կներգրավվեն իր մեջ հետագա անհատական համաձայնություններով: Այդ տարածքներն այսուհետև կոչվում են խնամարկյալ տարածքներ:

Հոդված 76

Խնամակալության համակարգի հիմնական խնդիրները, համաձայն Միավորված ազգերի կազմակերպության սույն կանոնադրության 1-ին հոդվածում շարադրված նպատակների, հետևյալն են.

ա. ամրապնդել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը,

բ. նպաստել խնամարկյալ տարածքների բնակչության քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական առաջընթացին և նրանց առաջադիմական զարգացմանն ինքնակառավարման կամ անկախության ուղղությամբ՝ համաձայն յուրաքանչյուր տարածքի և դրա բնակչության մասնավոր հանգամանքների և այդ ժողովուրդների ազատ արտահայտած ցանկության, ինչպես նաև յուրաքանչյուր խնամակալության համաձայնագրով նախատեսված պայմանների,

գ. խրախուսել հարգանքը մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ բոլորի համար՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից կամ դավանանքից, ինչպես նաև խրախուսել փոխադարձ կախվածության ընդունումը աշխարհի ժողովուրդների կողմից,

դ. ապահովել հավասար վերաբերմունքը Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամների և նրանց քաղաքացիների հանդեպ սոցիալական, տնտեսական և առևտրական ոլորտներում, ինչպես նաև հավասար վերաբերմունքը վերջիններիս հանդեպ արդարադատության իրականացման հարցում՝ չխոչընդոտելով վերը շարադրված նպատակների իրականացումը և հավատարիմ մնալով 80-րդ հոդվածի դրույթներին:

Հոդված 77

1. Խնամակալության համակարգը վերաբերում է ստորև թվարկվող այն տարածքներին, որոնք կարող են ընդգրկվել իր մեջ՝ համաձայն խնամակալության համաձայնագրերի.

ա. տարածքներ, որոնց վրա ներկայումս տարածվում է մանդատը,

բ. տարածքներ, որոնք Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով կարող են օտարվել թշնամի պետությունների կողմից, և

գ. տարածքներ, որոնց կառավարման պատասխանատվությունը ստանձնած պետությունները կամավոր հանձնել են համակարգին:

2. Այն հարցը, թե վերը թվարկված տարածքներից որոնք և ինչ պայմաններով կընդգրկվեն խնամակալության համակարգում, հետագա համաձայնության առարկա է:

Հոդված 78

Խնամակալության համակարգը չի վերաբերում Միավորված ազգերի կազմակերպության անդամներ դարձած այն երկրներին, որոնց հարաբերությունները պետք է հիմնված լինեն ինքնավար հավասարության սկզբունքը հարգելու վրա:

Հոդված 79

Խնամակալության համակարգում ընդգրկվելիք յուրաքանչյուր տարածքի խնամակալության պայմանները, այդ թվում և բոլոր փոփոխություններն ու

ճշգրտումները սահմանվում են անմիջականորեն շահագրգիռ պետությունների համաձայնություններով, ներառյալ մանդատով օժտված երկրները, այն դեպքում, երբ տարածքները Միավորված ազգերի կազմակերպության անդամներից մեկի մանդատի ներքո են և հաստատվում են 83-րդ և 85-րդ հոդվածներում սահմանված կարգով:

Հոդված 80

1. Բացառությամբ այն դեպքերի, որոնք կարող են համաձայնեցվել խնամակալության առանձին համաձայնագրերով՝ ամրագրվելով 77-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածների համաձայն, որոնցով յուրաքանչյուր տարածք ընդունվում է խնամակալության համակարգ, մինչ այդ համաձայնագրերի կնքումը սույն գլխում զետեղված ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես ցանկացած պետության կամ ժողովրդի որևէ իրավունքի որևէ փոփոխություն կամ գոյություն ունեցող միջազգային պայմանագրերի պայմանների փոփոխություն, որոնց մասնակիցները համապատասխանաբար կարող են լինել Միավորված ազգերի կազմակերպության անդամները:

2. Սույն հոդվածի 1-ին կետը չի կարող մեկնաբանվել իբրև մանդատային կամ այլ տարածքները խնամակալության համակարգում ընդգրկելու շուրջ բանակցությունների ուշացման կամ հետաձգման հիմք, ինչպես որ նախատեսված է 77-րդ հոդվածով:

Հոդված 81

Ամեն առանձին դեպքում խնամակալության համաձայնագիրը պետք է ընդգրկի այն պայմանները, որոնցով կառավարվելու է խնամարկյալ տարածքը, ինչպես նաև պետք է սահմանի իշխանությունը, որը պետք է իրականացնի խնամարկյալ տարածքի կառավարումը: Այդ իշխանությունը, որ այսուհետև կոչվելու է վարչական իշխանություն, իրենից կարող է ներկայացնել մեկ կամ ավելի պետություններ և կամ ինքնին Միավորված ազգերի կազմակերպությունը:

Հոդված 82

Խնամակալության ցանկացած համաձայնագրում կարող են նշվել ռազմավարական նշանակություն ունեցող շրջանը կամ շրջանները, որոնք կարող են ընդգրկել համաձայնագրի առարկա հանդիսացող խնամարկյալ տարածքի մի մասը կամ ամբողջ տարածքը՝ չխախտելով 43-րդ հոդվածի համաձայն կնքված որևէ հատուկ համաձայնագիր կամ համաձայնագրեր:

Հոդված 83

1. Միավորված ազգերի կազմակերպության՝ ռազմավարական նշանակություն ունեցող շրջաններին առնչվող բոլոր գործառույթները, ներառյալ խնամակալության համաձայնագրերի և դրանց փոփոխությունների կամ լրամշակումների հաստատումը, իրականացնում է Անվտանգության խորհուրդը:

2. 76-րդ հոդվածում շարադրված հիմնական նպատակները վերաբերում են ռազմավարական նշանակություն ունեցող յուրաքանչյուր շրջանի ժողովրդին:

3. Հետևելով խնամակալության համաձայնագրերում զետեղված դրույթներին և չխախտելով անվտանգության պահանջները՝ Անվտանգության խորհուրդն օգտվում է Հոգաբարձուների խորհրդի օժանդակությունից իրականացնելու համար, խնամակալության համակարգին համաձայն, Միավորված ազգերի կազմակերպության այն գործառույթները, որոնք վերաբերում են ռազմավարական շրջանների քաղաքական, տնտեսական, սոցիալական և կրթական հարցերին:

Հոդված 84

Վարչական իշխանության պարտականությունն է ապահովել, որպեսզի խնամարկյալ տարածքն իր դերը կատարի միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման գործում: Այս նպատակով վարչական իշխանությունը կարող է օգտագործել խնամարկյալ տարածքի կամավոր զինված ուժերը, ծառայությունները և օգնությունը Անվտանգության խորհրդի առջև այդ առնչությամբ իր ստանձնած պարտավորությունները կատարելիս, նմանապես տեղական ինքնապաշտպանության և խնամարկյալ տարածքի սահմաններում ներքին կարգուկանոնը պահպանելու համար:

Հոդված 85

1. Միավորված ազգերի կազմակերպության՝ ռազմավարական շրջանների շարքին չպատկանող խնամարկյալ բոլոր տարածքների վերաբերյալ համաձայնագրերին անչվող գործառույթները, ներառյալ խնամակալության համաձայնագրերի և դրանց փոփոխությունների կամ լրամշակումների հաստատումը, իրականացնում է Գլխավոր ասամբլեան:

2. Խնամակալության խորհուրդը, գործելով Գլխավոր ասամբլեայի հովանու ներքո, օգնում է Գլխավոր ասամբլեային՝ իրականացնելու այդ գործառույթները:

**ԳԼՈՒԽ XIII
ՀՈԳԱԲԱՐԶՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ԿԱԶՄԸ

Հոդված 86

1. Հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է Միավորված ազգերի կազմակերպության հետևյալ անդամներից.

ա. խնամարկյալ տարածքներ կառավարող անդամներ,
բ. 23-րդ հոդվածում հանվանե հիշատակված այն անդամները, որոնք խնամարկյալ տարածքներ չեն կառավարում,

գ. Գլխավոր ասամբլեայի կողմից երեքական տարի ժամկետով ընտրվող այնքան այլ անդամներ, որքան անհրաժեշտ կլինեն, որպեսզի Հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվում հավասարապես պահպանվի Միավորված ազգերի կազմակերպության՝ խնամարկյալ տարածքներ կառավարող և չկառավարող անդամների համամասնությունը:

2. Հոգաբարձուների խորհրդի յուրաքանչյուր անդամ հատուկ որակավորում ունեցող մեկ անձի նշանակում է իր ներկայացուցիչ Հոգաբարձուների խորհրդում:

ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 87

Գլխավոր ասամբլեան և իր ղեկավարության տակ գտնվող Հոգաբարձուների խորհուրդը իրենց գործառույթներն իրականացնելիս լիազորվում են՝
ա. քննարկել վարչական իշխանության ներկայացրած զեկուցագրերը,
բ. ընդունել և քննության առնել խնդրագրեր՝ խորհրդակցելով վարչական իշխանության հետ,

գ. վարչական իշխանության հետ համաձայնեցված ժամկետներում պարբերական այցելություններ կատարել համապատասխան խնամարկյալ տարածքներ, և

դ. ձեռնարկել նշված և այլ գործողություններ խնամակալության համաձայնագրերի պայմաններին համապատասխան:

դ. ձեռնարկել նշված և այլ գործողություններ խնամակալության համաձայնագրերի պայմաններին համապատասխան:

Հոդված 88

Հոգաբարձուների խորհուրդը մշակում է խնամարկյալ յուրաքանչյուր տարածքի բնակիչների քաղաքական, տնտեսական, սոցիալական և կրթական առաջընթացի վերաբերյալ հարցաթերթիկ, իսկ Գլխավոր ասամբլեայի իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուր խնամարկյալ տարածքի վարչական իշխանությունը այդ հարցաթերթիկի հիման վրա ամենամյա զեկուցագրեր է ներկայացնում Գլխավոր ասամբլեային:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հոդված 89

- 1. Խնամակալության խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն:
- 2. Հոգաբարձուների խորհրդի որոշումներն ընդունվում են ներկա և քվեարկող անդամների մեծամասնությամբ:

ԸՆԹԱՅԱԿԱՐԳ

Հոդված 90

1. Հոգաբարձուների խորհուրդն ընդունում է ընթացակարգի սեփական կանոնները, ներառյալ իր նախագահին ընտրելու կարգը:

2. Հոգաբարձուների խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, համաձայն իր ընթացակարգային կանոնների, որոնք պետք է ներառեն անդամների մեծամասնության պահանջով նիստ գումարելու մասին դրույթը:

Հոդված 91

Հոգաբարձուների խորհուրդը հարկ եղած դեպքում դիմում է Տնտեսական և սոցիալական խորհրդի և մասնագիտացված գործակալությունների օժանդակությանը այն հարցերի առնչությամբ, որոնցում վերջիններս համապատասխանաբար շահագրգռված են:

**ԳԼՈՒԽ XIV
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ**

Հոդված 92

Միջազգային դատարանը Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր դատական մարմինն է: Այն գործում է համաձայն կից ներկայացվող կանոնագրի, որը հիմնված է Միջազգային արդարադատության մշտական պալատի կանոնագրի վրա և սույն կանոնադրության անբաժան մասն է կազմում:

Հոդված 93

1. Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամները Միջազգային դատարանի կանոնագրի ipso facto կողմեր են:

2. Միավորված ազգերի կազմակերպության անդամ չհանդիսացող պետությունը կարող է դառնալ Միջազգային դատարանի կանոնագրի մասնակից այն պայմաններով, որոնք սահմանվում են յուրաքանչյուր առանձին դեպքում Գլխավոր ասամբլեայի կողմից Անվտանգության խորհրդի հանձնարարականով:

Հոդված 94

1. Միավորված ազգերի կազմակերպության յուրաքանչյուր անդամ պարտավորվում է կատարել Միջազգային դատարանի վճիռներն այն գործերով, որոնց մասնակից է հանդիսանում:

2. Եթե գործի մասնակից կողմը թերաճում է իրականացնել դատարանի կայացրած վճռով իր վրա դրված պարտականությունները, մյուս կողմը կարող է դիմել Անվտանգության խորհուրդ, որն անհրաժեշտ համարելու դեպքում կարող է հանձնարարականներ տալ կամ որոշել այն միջոցառումները, որոնց հարկավոր է դիմել դատարանի վճիռն ի կատար ածելու համար:

Հոդված 95

Սույն կանոնադրությունը ոչնչով չի խոչընդոտում Միավորված ազգերի կազմակերպության անդամներին, համաձայն արդեն գոյություն ունեցող կամ հետագայում կնքվելիք համաձայնագրերի, վստահելու իրենց տարածայնությունների լուծումը այլ դատարանների:

Հոդված 96

1. Գլխավոր ասամբլեան կամ Անվտանգության խորհուրդը կարող են ցանկացած իրավական հարցի վերաբերյալ Միջազգային դատարանից խորհրդակցական կարծիք հայցել:

2. Գլխավոր ասամբլեայի կողմից ցանկացած ժամանակ նման լիազորություն ստացած Միավորված ազգերի կազմակերպության այլ մարմիններն ու մասնագիտական գործակալությունները նույնպես կարող են իրենց գործունեության սահմաններում ծագող իրավական հարցերի վերաբերյալ խորհրդակցական կարծիք հայցել Միջազգային դատարանից:

ԳԼՈՒԽ XV
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոդված 97

Քարտուղարոյնը բաղկացած է Գլխավոր քարտուղարից և Միավորված ազգերի կազմակերպոյան համար անհրաժեշտ այլ աշխատակազմից: Գլխավոր քարտուղարը նշանակվում է Գլխավոր ասամբլեայի կողմից՝ Անվտանգոյան խորհրդի հանձնարարականով: Նա հանդիսանում է Միավորված ազգերի կազմակերպոյան գլխավոր վարչական պաշտոնյան:

Հոդված 98

Գլխավոր քարտուղարը՝ որպէս այդպիսին, հանդես է գալիս Գլխավոր ասամբլեայի, Անվտանգոյան խորհրդի, Տնտեսական և սոցիալական խորհրդի և Հոգաբարձուների խորհրդի բոլոր նիստերում, ինչպէս նաև կատարում է բոլոր այն գործառնութեան, որոնք վստահված են իրեն նշված մարմինների կողմից: Գլխավոր քարտուղարը կազմակերպոյան աշխատանքի մասին ամենամյա զեկուցագրեր է ներկայացնում Գլխավոր ասամբլեային:

Հոդված 99

Գլխավոր քարտուղարը իրավասու է Անվտանգոյան խորհրդի ուշադրոյանը ներկայացնել ցանկացած հարց, որը, իր կարծիքով, կարող է սպառնալ միջազգային խաղաղոյանն ու անվտանգոյանը:

Հոդված 100

1. Իրենց պարտականոյունները կատարելիս Գլխավոր քարտուղարը և քարտուղարոյան աշխատակազմը կարգադրոյուններ չեն ակնկալում կամ ստանում կազմակերպոյան համար կողմնակի որևէ կառավարոյունից կամ իշխանոյունից: Նրանք ձեռնպահ են մնում ցանկացած գործողոյունից, որը կարող է անդրադառնալ իրենց՝ որպէս միմիայն կազմակերպոյան առջև պատասխանատու միջազգային պաշտոնյա անձանց, դիրքի վրա:

2. Միավորված ազգերի կազմակերպոյան յուրաքանչյուր անդամ պարտավորվում է հարգել Գլխավոր քարտուղարի և քարտուղարոյան աշխատակազմի պարտականոյունների բացառապէս միջազգային բնույթը և չպետք է փորձի ներգործել նրանց վրա իրենց պարտականոյունների կատարման ընթացքում:

Հոդված 101

1. Քարտուղարոյան աշխատակազմը նշանակվում է Գլխավոր քարտուղարի կողմից, Գլխավոր ասամբլեայի հաստատած կանոնների համաձայն:

2. Տնտեսական և սոցիալական խորհրդին Հոգաբարձուների խորհրդին և, եթէ անհրաժեշտ է, Միավորված ազգերի կազմակերպոյան այլ մարմիններին հատկացվում է մշտական աշխատակազմ: Այդ աշխատակազմերը Քարտուղարոյան մասն են կազմում:

3. Աշխատակազմին աշխատանքի ընդունելիս և ծառայոյան պայմանները սահմանելիս հարկ է գերազանցապէս առաջնորդվել աշխատունակոյ-

յան բարձր մակարդակ, բանիմացոյուն և բարեխղճոյուն ապահովելու անհրաժեշտոյանը: Հարկ է պատշաճ ուշադրոյուն դարձնել հնարավորինս լայն աշխարհագրական ընդգրկումով աշխատակազմ հավաքագրելու կարևորոյանը:

ԳԼՈՒԽ XVI
ՏԱՐԲԵՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 102

1. Սույն կանոնադրոյան ուժի մեջ մտնելուց հետո Միավորված ազգերի կազմակերպոյան ցանկացած անդամի կնքած բոլոր պայմանագրերն ու միջազգային համաձայնագրերը պետք է առաջին իսկ հնարավորոյան դէպքում գրանցվեն Քարտուղարոյունում և հրապարակվեն նրա կողմից:

2. Սույն հոդվածի 1-ին կէտի համաձայն չարձանագրված որևէ դաշինքի կամ միջազգային համաձայնագրի կողմերը չեն կարող Միավորված ազգերի կազմակերպոյան որևէ մարմնում վկայակոչել այդ դաշինքը կամ միջազգային համաձայնագիրը:

Հոդված 103

Այն դէպքում, երբ Միավորված ազգերի կազմակերպոյան անդամի՝ սույն կանոնադրոյան ստանձնած պարտավորոյունները հակասում են ցանկացած այլ միջազգային համաձայնագրերով նրա ստանձնած պարտավորոյուններին, ապա գերակայում են սույն կանոնադրոյան ստանձնած պարտավորոյունները:

Հոդված 104

Միավորված ազգերի կազմակերպոյունն իր յուրաքանչյուր անդամի տարածքում օգտվում է այնպիսի իրավասոյունից, որպիսին կարող է անհրաժեշտ լինել իր գործառնութեանն ու նպատակներն իրականացնելու համար:

Հոդված 105

1. Միավորված ազգերի կազմակերպոյունն իր յուրաքանչյուր անդամի տարածքում օգտվում է այնպիսի արտոնոյուններից ու անձեռնմխելիութոյունից, որոնք անհրաժեշտ են իր նպատակներն իրականացնելու համար:

2. Միավորված ազգերի կազմակերպոյան անդամների ներկայացուցիչները և նրա պաշտոնյաները նույնպէս օգտվում են այնպիսի արտոնոյուններից ու անձեռնմխելիութոյունից, որոնք անհրաժեշտ են կազմակերպոյան գործունեոյան հետ կապված իրենց գործառնութեանն ինքնուրոյն իրականացնելու համար:

3. Գլխավոր ասամբլեան կարող է հանձնարարականներ ներկայացնել սույն հոդվածի 1-ին և 2-րդ կէտերի կիրառոյան մանրամասները սահմանելու նպատակով, ինչպէս նաև նույն այդ նպատակով համաձայնագրեր առաջարկել Միավորված ազգերի կազմակերպոյան անդամներին:

ԳԼՈՒԽ XVII
ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՇՆԱՅԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 106

Մինչ 43-րդ հոդվածում հիշատակված հատուկ համաձայնագրերի ուժի մեջ մտնելը, որոնք, Անվտանգության խորհրդի կարծիքով, հնարավորություն են տալիս իրեն սկսելու 42-րդ հոդվածով նախատեսված իր պարտավորությունների կատարումը, 1943թ. հոկտեմբերի 30-ին Մոսկվայում ստորագրված Չորս տերությունների հռչակագրի մասնակիցները, ինչպես նաև Ֆրանսիան, այդ հռչակագրի 5-րդ կետի համաձայն, պետք է խորհրդակցեն միմյանց հետ, հարկ եղած դեպքում նաև Միավորված ազգերի կազմակերպության այլ անդամների հետ՝ նպատակ ունենալով կազմակերպության անունից դիմել այնպիսի համատեղ գործողությունների, որոնք կարող են անհրաժեշտ դիտվել միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման համար:

Հոդված 107

Սույն կանոնադրությունը որևէ կերպ չի զրկում իրավաբանական ուժից այն գործողությունները, որոնք ձեռնարկվել են Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով նման գործողությունների պատասխանատվություն կրող կառավարությունների կողմից ցանկացած պետության նկատմամբ, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում թշնամի է եղել սույն կանոնադրությունը ստորագրած ցանկացած պետության, ինչպես նաև չի խոչընդոտում նման գործողությունները:

ԳԼՈՒԽ XVIII
ԼՐԱՄՇԱԿՈՒՄՆԵՐ

Հոդված 108

Սույն կանոնադրության փոփոխությունները Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամների համար ուժի մեջ են մտնում Գլխավոր ասամբլեայի անդամների ձայների երկու երրորդով ընդունվելուց և Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետությունների, ներառյալ Անվտանգության խորհրդի բոլոր մշտական անդամ պետությունների երկու երրորդի կողմից, համաձայն իրենց սահմանադրական ընթացակարգի, վավերացնելուց հետո:

Հոդված 109

1. Սույն կանոնադրության վերանայման նպատակով հրավիրված Միավորված ազգերի կազմակերպության անդամների խորհրդաժողովի կազմակերպման վայրն ու ժամանակը սահմանվում են Գլխավոր ասամբլեայի անդամների ձայների երկու երրորդով և Անվտանգության խորհրդի ցանկացած ինը անդամների ձայներով: Միավորված ազգերի կազմակերպության յուրաքանչյուր անդամ խորհրդաժողովում ունի մեկ ձայն:

2. Սույն Կանոնադրության ցանկացած փոփոխություն՝ առաջարկված խորհրդաժողովի մասնակիցների ձայների երկու երրորդով, ուժի մեջ է մտնում Գլխավոր ասամբլեայի անդամների երկու երրորդի, ներառյալ Անվ-

տանգության խորհրդի բոլոր մշտական անդամների կողմից վավերացվելուց հետո՝ համաձայն իրենց սահմանադրական ընթացակարգի:

3. Եթե սույն կանոնադրության ուժի մեջ մտնելուց հետո մինչև Գլխավոր ասամբլեայի տասներորդ ամենամյա նստաշրջանը նման խորհրդաժողով չի գումարվում, ապա այդ խորհրդաժողովն անցկացնելու առաջարկությունները մտնում են Գլխավոր ասամբլեայի այդ նստաշրջանի օրակարգ, և խորհրդաժողովը գումարվում է Գլխավոր ասամբլեայի անդամների ձայների պարզ մեծամասնության և Անվտանգության խորհրդի ցանկացած յոթ անդամների ձայների որոշմամբ:

ԳԼՈՒԽ XIX
ՎԱՎԵՐԱՅՈՒՄ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

Հոդված 110

1. Սույն կանոնադրությունը այն ստորագրող պետությունների կողմից վավերացվում է համաձայն վերջիններին սահմանադրական ընթացակարգի:

2. Վավերագրերը պահպանության են հանձնվում Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությանը, որը բոլոր ստորագրող պետություններին, ինչպես և, նշանակվելուց հետո, Գլխավոր քարտուղարին ծանուցում է պահպանության հանձնվող յուրաքանչյուր վավերագրի մասին:

3. Սույն կանոնադրությունը ուժ մեջ է մտնում Ամերիկայի Միացյալ Նահանգների, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Չինաստանի Հանրապետության, Ֆրանսիայի, ինչպես նաև ստորագրող մյուս պետությունների մեծամասնության կողմից վավերագրերը պահպանության հանձնելուց հետո: Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը կազմում է պահպանության հանձնված վավերագրերի արձանագրությունները, որոնց պատճեններն առաքում է կանոնադրությունը ստորագրող բոլոր պետություններին:

4. Սույն կանոնադրությունը ստորագրող այն պետությունները, որոնք վավերացնում են այն ուժի մեջ մտնելուց հետո, դառնում են Միավորված ազգերի կազմակերպության սկզբնական անդամներ համապատասխան վավերագրերը պահպանության հանձնելու օրվանից:

Հոդված 111

Սույն կանոնադրության չինարեն, ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն և իսպաներեն տեքստերը հավասարազոր բնագրեր են, պահպանվում են Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության արխիվներում: Կանոնադրության պատշաճ կերպով վավերացված պատճենները այդ կառավարության կողմից առաքվում են ստորագրող մյուս կառավարություններին:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄ ՈՐԻ Միավորված ազգերի կազմակերպության կառավարությունների ներկայացուցիչները ստորագրել են սույն կանոնադրությունը:

ԿԱԶՄՎԱԾ Է Սան Ֆրանցիսկո քաղաքում, հազար ինը հարյուր քառասունհինգ թվականի հունիսի քսանվեցերորդ օրը:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՉԱԿԱԳԻՐ

ՆՍԽԱՐԱՆ

Քանզի մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվությունը և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհի ազատության, արդարության և խաղաղության հիմքն է, քանզի մարդու իրավունքների նկատմամբ քամահրանքն ու արհամարհանքը հանգեցրել են մարդկության խիղճը վրդովող բարբարոսական գործողությունների, և քանի որ իբրև մարդկության վեհ նպատակ է հռչակված այնպիսի աշխարհի ստեղծումը, ուր մարդիկ կվայելեն խոսքի ու համոզմունքների ազատություն և զերծ կլինեն վախից ու կարիքից, քանզի անհրաժեշտ է օրենքի իշխանությամբ պաշտպանել մարդու իրավունքները, որպեսզի նա, որպես վերջին միջոց, հարկադրված չընդվզի բռնակալության ու ճնշման դեմ, քանզի անհրաժեշտ է նպաստել ազգերի միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը, քանզի Միավորված ազգերի ժողովուրդները Կանոնադրության մեջ վերահաստատել են իրենց հավատը մարդու հիմնական իրավունքների, մարդ անհատի արժանապատվության ու արժեքի, տղամարդու ու կնոջ իրավահավասարության նկատմամբ և վճռել սոցիալական առաջադիմության ու կենսապայմանների բարելավմանն աջակցել առավել ազատության պայմաններում, քանզի անդամ պետությունները պարտավորվել են, Միավորված ազգերի հետ համագործակցելով, հասնել մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքի ու դրանց պահպանման, քանզի այս իրավունքների ու ազատությունների համընդհանուր ըմբռնումը վիթխարի նշանակություն ունի այս պարտավորության լիակատար իրականացման համար.

Հոդված 1

Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով:

Հոդված 2

Յուրաքանչյուր ոք ունի սույն Հռչակագրում բերված բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ անկախ որևէ ռասայական, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական և այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, դասային պատկանելության կամ որևէ այլ կարգավիճակի տարբերակման:

Ավելին, որևէ տարբերակում չպետք է դրվի, ելնելով անհատի պատկանած երկրի կամ տարածքի քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակից՝ լինի դա անկախ, խնամարկյալ, ոչ ինքնավար կամ որևէ այլ սահմանափակումով պետական կազմավորում:

Հոդված 3

Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունք:

Հոդված 4

Ոչ ոք չպետք է մնա ստրկության կամ անազատ վիճակում. ստրկությունը և ստրկավաճառությունը՝ իրենց բոլոր տարատեսակներով, արգելվում են:

Հոդված 5

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի ու պատիժի:

Հոդված 6

Օրենքի առաջ բոլոր մարդիկ հավասար են և, առանց որևէ խտրության, ունեն օրենքի հավասար պաշպանության իրավունք: Բոլոր մարդիկ ունեն սույն Հռչակագրով հաստատված հավասարությունը խախտող որևէ խտրականությունից, սադրանքից պաշտպանվելու հավասար իրավունք:

Հոդված 7

Օրենքի առաջ բոլոր մարդիկ հավասար են և, առանց որևէ խտրության, ունեն օրենքի հավասար պաշպանության իրավունք: Բոլոր մարդիկ ունեն սույն Հռչակագրով հաստատված հավասարությունը խախտող որևէ խտրականությունից, սադրանքից պաշտպանվելու հավասար իրավունք:

Հոդված 8

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարելու դեպքում, իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ կերպով վերականգնելու այդ իրավունքները:

Հոդված 9

Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական կալանքի, ձերբակալման կամ արտաքսման:

Հոդված 10

Յուրաքանչյուր ոք իր իրավունքներն ու պարտականությունները ճշտելու և իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար լիակատար հավասարության հիման վրա իրավունք ունի պահանջել, որ իր գործը հրապարակայնորեն և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ քննվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից:

Հոդված 11

1. Հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմեղ համարվել մինչև այն պահը, քանի դեռ նրա մեղքը օրինական կարգով չի հաստատվի հրապարակային դատական քննության միջոցով, որի ժամանակ նրան տրվում են պաշտպանության բոլոր հնարավորությունները:

2. Ոչ ոք չի կարող հանցագործության մեջ մեղադրվել որևէ արարք կատարելու կամ անգործության համար, որը կատարելու պահին ազգային օրենքներով կամ միջազգային իրավունքով հանցագործություն չի համարվել:

Չի կարող նաև ծանր պատիժ տրվել, քան այն, որը կարող էր սահմանվել հանցանքը կատարելու ժամանակ:

Հոդված 12

Ոչ ոք չպետք է իր անձնական ու ընտանեկան կյանքի, տան կամ նամակագրության նկատմամբ կամայական միջամտության ենթարկվի, ոչ էլ որևէ ոտնձգության՝ պատվի ու հեղինակության նկատմամբ: Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքով պաշտպանվելու իրավունք:

Հոդված 13

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն տեղից տեղ փոխադրվել և բնակավայր ընտրել ցանկացած պետության սահմաններում:

2. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի լքել ցանկացած երկիր ներառյալ իր սեփականը, և վերադառնալ իր երկիրը:

Հոդված 14

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի հետապնդումից ապաստան որոնել ուրիշ երկրներում և օգտվել այդ ապաստանից:

2. Այդ իրավունքը չի կարող կիրառվել, եթե հետապնդումն իրականում հիմնավորված է ոչ քաղաքական հանցագործության կամ Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին հակասող արարքներ կատարելով:

Հոդված 15

1. Յուրաքանչյուր ոք ունի քաղաքացիության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր քաղաքացիությունից կամ իր քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

Հոդված 16

1. Յուրաքանչյուր ոք ունի սեփականություն ունենալու իրավունք՝ ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ:

2. Ոչ ոք կամայականորեն չպետք է զրկվի իր սեփականությունից:

Հոդված 17

1. Յուրաքանչյուր ոք ունի սեփականություն ունենալու իրավունք՝ ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ:

2. Ոչ ոք կամայականորեն չպետք է զրկվի իր սեփականությունից:

Հոդված 18

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու դավանանքի ազատության իրավունք. այդ իրավունքը ներառում է իր դավանանքը կամ համոզմունքները փոխելու ազատություն և իր դավանանքը կամ համոզմունքները մենակ կամ ուրիշների հետ մեկտեղ, հրապարակավ կամ գաղտնի՝ քարոզելու, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի և ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատություն:

Հոդված 19

Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք. այս իրավունքը ներառում է համոզմունքներ

րին անարգել հավատարիմ մնալու, տեղեկատվություն ու զաղափարներ որոնելու, ստանալու և լրատվության ցանկացած միջոցներով տարածելու ազատությունը՝ անկախ պետական սահմաններից:

Հոդված 20

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ու միություններ կազմելու իրավունք:

2. Ոչ ոք չի կարող հարկադրաբար անդամակցվել որևէ միության:

Հոդված 21

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմիջականորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով մասնակցել իր երկրի կառավարմանը:

2. Յուրաքանչյուր ոք իր երկրում ունի պետական ծառայության մտնելու հավասար հնարավորության իրավունք:

3. Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը. այդ կամքն իր արտահայտությունը պիտի գտնի պարբերական և անեղծ ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի պայմաններում, գաղտնի կամ քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարաբեթ ձևերի միջոցով:

Հոդված 22

Յուրաքանչյուր ոք, որպես հասարակության անդամ, սոցիալական ապահովության իրավունք ունի և ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով, յուրաքանչյուր պետության կառուցվածքին ու ռեսուրսներին համապատասխան, օգտվում է իր արժանապատվության և իր անձի ազատ զարգացման համար անհրաժեշտ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից:

Հոդված 23

1. Յուրաքանչյուր ոք աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, արդարացի ու նպաստավոր աշխատանքային պայմանների և գործազրկությունից պաշտպանվելու իրավունք ունի:

2. Յուրաքանչյուր ոք, առանց որևէ խտրականության, հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության իրավունք ունի:

3. Յուրաքանչյուր աշխատող իրավունք ունի իր և իր ընտանիքի մարդավայել գոյությունը ապահովող արդար ու գոհացուցիչ վարձատրության, որն անհրաժեշտության դեպքում կլրացվի սոցիալական ապահովության այլ միջոցներով:

4. Յուրաքանչյուր ոք ունի արհեստակցական միություններ ստեղծելու և իր շահերը պաշտպանելու համար արհեստակցական միություններին անդամակցելու իրավունք:

Հոդված 24

Յուրաքանչյուր ոք ունի հանգստի ու ժամանցի, այդ թվում՝ աշխատանքային ժամերի խելամիտ սահմանափակման և պարբերաբար վճարովի արձակուրդների իրավունք:

Հոդված 25

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի, որը պատշաճ է իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, առողջապահությունը և անհրաժեշտ սոցիալական ծառայությունները, ինչպես նաև ունի ապահովության իրավունք գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիահալու, ծերության կամ իր կամքից անկախ գոյության այլ միջոցների անհրաժեշտության դեպքում:

2. Մայրությունն ու մանկությունը հատուկ հոգածության և օժանդակության իրավունք ունեն: Ամուսնությունից կամ արտամուսնական կապից ծնված բոլոր երեխաները պետք է օգտվեն միևնույն սոցիալական պաշտպանությունից:

Հոդված 26

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Կրթությունը, առնվազն տարրական և հանրակրթական փուլերում, պետք է լինի անվճար: Տարրական կրթությունը պետք է լինի պարտադիր: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է հանրամատչելի լինի, իսկ բարձրագույն կրթությունը, ընդունակություններին համապատասխան, հավասարապես մատչելի բոլորի համար:

2. Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ռասայական և կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը, էլ ավելի նպաստի Միավորված ազգերի կազմակերպության խաղաղապահական գործունեությանը:

3. Ծնողներն իրենց երեխաների համար կրթության տեսակ ընտրելու առաջնային իրավունք ունեն:

Հոդված 27

1. Յուրաքանչյուր ոք ունի հասարակության մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստներից բավականություն ստանալու, գիտական առաջընթացին մասնակցելու և դրա բարիքներից օգտվելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք իր հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական աշխատանքի բարոյական և նյութական շահերի պաշտպանության իրավունք ունի:

Հոդված 28

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի սոցիալական ու միջազգային այնպիսի կարգուկանոնի, որի առկայությամբ սույն Հռչակագրում շարադրված իրավունքներն ու ազատությունները լիովին իրագործելի են:

Հոդված 29

1. Յուրաքանչյուր ոք համայնքի առաջ պարտականություններ ունի, ուր և միայն հնարավոր է նրա անհատականության ազատ ու լիարժեք զարգացումը:

2. Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք պետք է ենթակա լինի միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով սահմանված են բացառապես ուրիշների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքն ապահովելու և ժողովրդավարական հասարակարգում բարոյականության արդարացի պահանջները, հասարակական կարգը և ընդհանուր բարեկեցությունը բարելավելու նպատակով:

3. Այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը ոչ մի դեպքում չպետք է հակասի Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին:

Հոդված 30

Սույն Հռչակագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես որևէ պետության, մարդկանց խմբի կամ առանձին անհատների ընձեռված իրավունք՝ զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի արարք, որոնք նպատակաուղղված լինեն սույն Հռչակագրում շարադրված իրավունքների և ազատությունների ոչնչացմանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՎԻԵՆՆԱՅԻ 1969 Թ. ՄԱՅԻՍԻ 23-Ի ԿՈՆՎԵՆՏԻԱՎՑ

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները, հաշվի առնելով միջազգային հարաբերությունների պատմության մեջ պայմանագրերի հիմնարար դերը,

ճանաչելով պայմանագրերի, որպես միջազգային իրավունքի աղբյուրի և որպես ազգերի միջև անկախ նրանց սահմանադրական ու հասարակական համակարգերից, խաղաղ համագործակցության զարգացման միջոցի, զնալով աճող նշանակությունը,

նշելով, որ ազատ համաձայնության և բարեխղճության սկզբունքները և pacta sunt servanda նորմն ընդհանուր ճանաչում ունեն,

հաստատելով, որ պայմանագրերին վերաբերող վեճերը, ինչպես նաև միջազգային մյուս վեճերը պետք է լուծվեն միայն խաղաղ միջոցներով և արդարության ու միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխան,

հիշեցնելով Միավորված ազգերի ժողովուրդների վճռականության մասին ստեղծելու պայմաններ, որոնց դեպքում կարող են պահպանվել արդարությունը և պայմանագրերից բխող պարտավորությունների հարգումը,

ընդունելով ի գիտություն Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության մեջ մարմնավորված միջազգային իրավունքի սկզբունքները, ինչպիսիք են ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման, բոլոր պետությունների ինքնիշխան հավասարության և անկախության, պետությունների ներքին գործերին չմիջամտելու, ուժի սպառնալիքի կամ դրա կիրառման արգելման և բոլորի համար մարդու իրավունքների և ազատությունների համընդհանուր հարգման և պահպանման սկզբունքները,

համոզված լինելով, որ սույն Կոնվենցիայով իրագործվող պայմանագրերի իրավունքի կողմնակցումը և առաջադիմական զարգացումը կնպաստեն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ նշված նպատակներին, հատկապես միջազգային խաղաղության և անվտանգության պահպանմանը, ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը և միմյանց հետ նրանց համագործակցության իրագործմանը,

2 Կոնվենցիան ուժի մեջ է մտել 27. 01. 1980թ.: Հայաստանի Հանրապետությունն այն վավերացրել է 23.10.1996թ.:

ՀՀ-ն Կոնվենցիան վավերացրել է նրա 66-րդ հոդվածի վերաբերյալ վերապահումով, համաձայն որի. «Հայաստանի Հանրապետությունն իրեն կաշկանդված չի համարում Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969թ. Վիեննայի կոնվենցիայի 66-րդ հոդվածի դրույթներով և հայտարարում է, որ Կոնվենցիայի 5-րդ բաժնի ցանկացած հոդվածի կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ Պայմանավորվող կողմերի միջև ցանկացած վեճը ՄԱԿ-ի Միջազգային դատարանի լուծմանը հանձնելու կամ հաշտարար հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է վեճի բոլոր մասնակիցների պարտադիր համաձայնությունը»:

հաստատելով, որ միջազգային սովորույթային իրավունքի նորմերը նախկինի պես կկարգավորեն այն հարցերը, որոնք իրենց լուծումը չեն գտել սույն Կոնվենցիայի դրույթներում,

պայմանավորվեցին հետևյալի շուրջ.

ՄԱՍ 1.

Ներածություն

Հոդված 1

Սույն Կոնվենցիայի կիրառման ոլորտը

Սույն Կոնվենցիան կիրառվում է պետությունների միջև կնքված պայմանագրերի նկատմամբ:

Հոդված 2

Հասկացությունների օգտագործումը

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար.

a) «պայմանագիր» նշանակում է պետությունների միջև գրավոր ձևով կնքված և միջազգային իրավունքով կարգավորվող միջազգային համաձայնություն, անկախ նրանից, այդ համաձայնությունը պարունակվում է մեկ կամ երկու, կամ միմյանց հետ կապված մի քանի փաստաթղթերում, ինչպես նաև անկախ դրա կոնկրետ անվանումից,

b) «վավերացում», «ընդունում», «հաստատում» և «միացում» նշանակում է, պայմանավորված դեպքով, նման անվանում ունեցող միջազգային գործողություն, որի միջոցով պետությունը միջազգային մակարդակով հաստատում է իր համար պայմանագրի պարտադիրության համաձայնությունը,

c) «լիարժեք լիազորություն» նշանակում է պետության իրավասու մարմնի կողմից տրվող փաստաթուղթ, որով մեկ կամ մի քանի անձինք նշանակվում են ներկայացնելու այդ պետությունը բանակցություններ վարելու, պայմանագրի տեքստն ընդունելու կամ դրա բնագրային բնույթը հաստատելու, այդ պետության համար պայմանագրի պարտադիրության համաձայնությունն արտահայտելու կամ պայմանագրին առնչվող ցանկացած ուրիշ գործողություն կատարելու նպատակով,

d) «վերապահում» նշանակում է պայմանագրի ստորագրման, վավերացման, ընդունման կամ հաստատման կամ դրան միանալու ժամանակ ցանկացած ձևակերպումով և ցանկացած անվանումով պետության կողմից արված միակողմանի հայտարարություն, որի միջոցով նա ցանկանում է բացառել կամ փոփոխել պայմանագրի որոշակի դրույթների իրավական ուժը դրանք տվյալ պետության նկատմամբ կիրառելիս,

e) «բանակցող պետություն» նշանակում է պետություն, որը մասնակցել է պայմանագրի տեքստը կազմելուն և ընդունելուն,

f) «պայմանավորվող պետություն» նշանակում է պետություն, որը համաձայնել է պայմանագրի պարտադիրությանը, անկախ նրանից, այդ պայմանագիրն ուժի մեջ է մտել, թե ոչ,

g) «կողմ» նշանակում է պետություն, որը համաձայնել է պայմանագրի պարտադիրությանը, և որի համար պայմանագիրն ուժի մեջ է,

հ) «երրորդ պետություն» նշանակում է պետություն, որը պայմանագրին կողմ չէ,

ի) «միջազգային կազմակերպություն» նշանակում է միջկառավարական կազմակերպություն:

2. Սույն Կոնվենցիայում հասկացությունների կիրառման վերաբերյալ 1-ին կետի դրույթները չեն վերաբերում ցանկացած պետության ներքին իրավունքում այդ տերմինների կիրառմանը և դրանց տրվող նշանակությանը:

Հոդված 3

Սույն Կոնվենցիայի շրջանակից դուրս միջազգային համաձայնագրեր

Այն փաստը, որ սույն Կոնվենցիան չի կիրառվում պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների միջև, կամ միջազգային իրավունքի ուրիշ սուբյեկտների միջև կնքված միջազգային համաձայնագրերի և ոչ գրավոր ձևի միջազգային համաձայնագրերի նկատմամբ, չի շոշափում:

ա) նման համաձայնագրերի իրավական ուժը,
բ) դրանց նկատմամբ սույն Կոնվենցիայում շարադրված որևէ կանոնի կիրառումը, որին ըստ միջազգային իրավունքի ենթակա կլինեին անկախ սույն Կոնվենցիայից,

ց) այն միջազգային համաձայնագրերի շրջանակներում պետությունների՝ միմյանց միջև հարաբերությունների առնչությամբ սույն Կոնվենցիայի կիրառումը, որոնց մասնակից են նաև միջազգային իրավունքի այլ սուբյեկտներ:

Հոդված 4

Սույն Կոնվենցիան հետադարձ ուժ չունի

Առանց վնաս պատճառելու սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած նորմի կիրառմանը, որոնց, անկախ Կոնվենցիայից, պայմանագրերը ենթակա են ըստ միջազգային իրավունքի, Կոնվենցիան կիրառվում է միայն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք կնքվել են պետությունների կողմից՝ այդ պետությունների նկատմամբ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո:

Հոդված 5

Միջազգային կազմակերպություններ հիմնադրող պայմանագրերը և միջազգային կազմակերպության շրջանակներում ընդունված պայմանագրեր

Սույն Կոնվենցիան կիրառվում է միջազգային կազմակերպության հիմնադիր փաստաթուղթ հանդիսացող ցանկացած պայմանագրի նկատմամբ և միջազգային կազմակերպության շրջանակներում ընդունված ցանկացած պայմանագրի նկատմամբ առանց վնասելու տվյալ կազմակերպության համապատասխան կանոնները:

**ՄԱՍ 2
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՈՒՇԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ
ԲԱԺԻՆ 1.
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄ**

Հոդված 6

Պայմանագրեր կնքելու՝ պետության իրավունակությունը
Յուրաքանչյուր պետություն օժտված է պայմանագրեր կնքելու իրավունակությամբ:

Հոդված 7

Լիարժեք լիազորություններ

1. Անձը համարվում է պետությունը ներկայացնող պայմանագրի տեքստն ընդունելու կամ դրա բնագիր լինելը հաստատելու, կամ պայմանագրով պարտավորված լինելու վերաբերյալ պետության համաձայնությունը հայտնելու նպատակով, եթե

ա) նա ներկայացնում է համապատասխան լիարժեք լիազորություններ, կամ

բ) համապատասխան պետությունների փորձից կամ այլ հանգամանքներից հետևում է, որ նրանք մտադիր են եղել տվյալ անձին դիտել որպես այդ նպատակների համար պետությունը ներկայացնող, և չպահանջել նրանից այդ լիազորությունները:

2. Իրենց գործառնությունների ուժով և առանց լիազորություններ ներկայացնելու անհրաժեշտության իրենց պետությունը ներկայացնող են համարվում հետևյալ անձինք.

ա) պետությունների ղեկավարները, կառավարությունների ղեկավարները և արտաքին գործերի նախարարները պայմանագրին վերաբերող բոլոր տեսակի գործողություններ կատարելու նպատակով,

բ) դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները հավատարմագրող երկրի և այն երկրի միջև պայմանագրի տեքստ ընդունելու նպատակով, որտեղ նրանք հավատարմագրված են,

ց) պետությունների կողմից միջազգային խորհրդածողովում կամ միջազգային կազմակերպությունում, կամ դրանց մարմիններից մեկում հավատարմագրված ներկայացուցիչները նման խորհրդածողովում, նման կազմակերպությունում կամ նման մարմնում պայմանագրի տեքստ ընդունելու նպատակով:

Հոդված 8

Առանց լիազորության կատարված գործողության հետագա հաստատումը
Պայմանագրի կնքելուն վերաբերող գործողությունը, որն իրագործվել է այն անձի կողմից, որը 7-րդ հոդվածի հիման վրա չի կարող համարվել պետության այդ նպատակով լիազորված ներկայացուցիչ, չունի իրավաբանա-

կան նշանակություն, եթե այն հետագայում հաստատված չէ տվյալ պետության կողմից:

Հոդված 9

Տեքստի ընդունումը

1. Պայմանագրի տեքստի ընդունումը կատարվում է դրա կազմմանը մասնակից բոլոր պետությունների համաձայնությամբ, բացառությամբ 2-րդ կետով նախատեսված դեպքերի:

2. Միջազգային խորհրդաժողովում պայմանագրի տեքստի ընդունումը կատարվում է ներկա գտնվող և քվեարկությանը մասնակցող պետությունների ձայների երկու երրորդի քվեարկությամբ, եթե ձայների նույն մեծամասնությամբ նրանք չեն որոշել ընդունել այլ կանոններ:

Հոդված 10

Տեքստի բնագիր լինելու հաստատումը

Պայմանագրի տեքստը բնագիր և վերջնական է դառնում.

ա) այնպիսի ընթացակարգով, որը կարող է նախատեսված լինել այդ տեքստում կամ համաձայնեցվել դրա կազմմանը մասնակցած պետությունների կողմից, կամ

բ) նման ընթացակարգի բացակայության դեպքում այդ պետությունների ներկայացուցիչների կողմից պայմանագրի տեքստը կամ այդ տեքստը պարունակող խորհրդաժողովի եզրափակիչ ակտն ստորագրելու, ad referendum ստորագրելու կամ նախնական ստորագրելու միջոցով:

Հոդված 11

Պայմանագրով պարտավորված լինելու մասին համաձայնություն հայտնելու միջոցները

Պայմանագրով պարտավորված լինելու պետության համաձայնությունը կարող է արտահայտվել պայմանագրի ստորագրմամբ, պայմանագիր կազմող փաստաթղթերի փոխանակմամբ, պայմանագրի վավերացմամբ, դրա ընդունմամբ, հաստատմամբ, դրան միանալով կամ ցանկացած ուրիշ եղանակով, որի մասին պայմանավորվել են:

Հոդված 12

Ստորագրությամբ արտահայտված՝ պայմանագրով պարտավորված լինելու համաձայնությունը

1. Պայմանագրով պարտավորված լինելու պետության համաձայնությունն արտահայտվում է պետության ներկայացուցչի կողմից ստորագրության միջոցով, եթե.

ա) պայմանագիրը նախատեսում է, որ ստորագրությունն ունի նման ուժ,

բ) բանակցություններին մասնակից պետությունների կողմից այլ կերպ պայմանավորվածություն է սահմանվել այն մասին, որ ստորագրությունն ունի նման ուժ, կամ

ց) պետության ստորագրությանը նման ուժ տալու մտադրությունը բխում է նրա ներկայացուցչի լիազորություններից կամ արտահայտված է բանակցությունների ընթացքում:

2. 1-ին կետի նպատակների համար.

ա) տեքստի նախնական ստորագրում նշանակում է պայմանագրի ստորագրում այն դեպքում, երբ հաստատվել է, որ բանակցություններին մասնակցող պետություններն այդպես են պայմանավորվել,

բ) պետության ներկայացուցչի կողմից պայմանագրի ad referendum ստորագրումը, եթե այն հաստատվում է իր պետության կողմից, նշանակում է պայմանագրի ամբողջական ստորագրում:

Հոդված 13

Պայմանագիր կազմող փաստաթղթերի փոխանակման միջոցով արտահայտված՝ պայմանագրով պարտավորված լինելու համաձայնություն

Պետությունների համաձայնությունը միմյանց հետ փոխանակվող փաստաթղթերից կազմված պայմանագիրն իրենց համար պարտադիր լինելու մասին արտահայտվում է այդ փոխանակման միջոցով, եթե.

ա) այդ փաստաթղթերով նախատեսվում է, որ դրանց փոխանակումը կունենա նման ուժ, կամ

բ) այլ կերպ սահմանվել է այդ պետությունների պայմանավորվածությունն այն մասին, որ փաստաթղթերի այդ փոխանակումը պետք է ունենա նման ուժ:

Հոդված 14

Վավերացման, ընդունման կամ հաստատման միջոցով պայմանագրի պարտադիր լինելու մասին համաձայնության արտահայտումը

1. Իր համար պայմանագիրը պարտադիր լինելու մասին պետության համաձայնությունն արտահայտվում է վավերացման միջոցով, եթե.

ա) պայմանագիրը նախատեսում է, որ նման համաձայնությունն արտահայտվում է վավերացման միջոցով,

բ) այլ կերպ սահմանվել է, որ բանակցություններին մասնակցող պետությունները պայմանավորվել են վավերացման անհրաժեշտության մասին,

ց) պետության ներկայացուցիչը պայմանագիրն ստորագրել է վավերացման պայմանով, կամ

դ) վավերացման պայմանով պայմանագիր ստորագրելու մասին պետության մտադրությունը բխում է նրա ներկայացուցչի լիազորություններից կամ արտահայտվել է բանակցությունների ընթացքում:

2. Պայմանագրով պարտավորված լինելու՝ պետության համաձայնությունն արտահայտվում է ընդունման կամ հաստատման միջոցով այն նույն պայմաններով, որոնք կիրառվում են վավերացման առնչությամբ:

Հոդված 15

Պայմանագրով պարտավորված լինելու համաձայնությունը՝ միանալու միջոցով

Պետության պայմանագրով պարտավորված լինելու համաձայնությունն արտահայտվում է միանալու միջոցով, եթե.

- a) պայմանագիրը նախատեսում է, որ պետության կողմից նման համաձայնությունը կարող է արտահայտվել միանալու միջոցով,
- բ) այլ կերպ սահմանվել է, որ բանակցություններին մասնակցող պետությունները պայմանավորվել են, որ նման համաձայնությունն այդ պետության կողմից կարող է արտահայտվել միանալու միջոցով, կամ
- ց) բոլոր կողմերը հետագայում պայմանավորվել են, որ նման համաձայնությունը կարող է արտահայտվել այդ պետության կողմից միանալու միջոցով:

Հոդված 16

Վավերագրերի, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթղթերի փոխանակումը կամ ի պահ հանձնումը

Եթե պայմանագրերով այլ բան նախատեսված չէ, ապա վավերագրերը, ընդունման, հաստատման կամ միանալու վերաբերյալ փաստաթղթերը նշանակում են պետության համար պայմանագրով պարտավորված լինելու մասին համաձայնություն հետևյալ պահից

- a) պայմանավորվող պետությունների միջև դրանց փոխադարձ փոխանակման,
- բ) ավանդապահին դրանց ի պահ հանձնման, կամ
- ց) պայմանավորվող պետություններին կամ ավանդապահին դրանց մասին ծանուցման, եթե այդպես են պայմանավորվել:

Հոդված 17

Պայմանագրի մի մասով պարտավորված լինելու համաձայնությունը և տարբեր դրույթների ընտրությունը

- 1. Առանց 19-20-րդ հոդվածներին վնասելու, պայմանագրի մի մասով պարտավորված լինելու՝ պետության համաձայնությունն ուժ ունի միայն այն դեպքում, եթե պայմանագիրը դա թույլատրում է կամ եթե դրա հետ համաձայն են պայմանավորվող մյուս պետությունները:
- 2. Այն պայմանագրով պարտավորված լինելու պետության համաձայնությունը, որը թույլատրում է տարբեր դրույթների միջև ընտրության հնարավորություն, եթե հստակ ցույց է տրված, թե համաձայնությունն այդ դրույթներից որին է վերաբերում:

Հոդված 18

Մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը պայմանագիրն իր առարկայից և նպատակից չզրկելու պարտավորությունը

Պետությունը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք հակառակ են պայմանագրի առարկային և նպատակին, երբ.

- a) այն վավերացման, ընդունման կամ հաստատման ենթակա պայմանագիրն ստորագրել է կամ փոխանակել է պայմանագիրը կազմավորող փաստաթղթերը մինչև այն պահը, քանի դեռ նա հստակ չի արտահայտել իր մտադրությունն այդ պայմանագրին չմասնակցելու մասին, կամ
- բ) այն հայտնել է պայմանագրով պարտավորված լինելու համաձայնությունը մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը, և այն պայմանով, որ այդ ուժի մեջ մտնելը չափից դուրս չի ձգձգվի:

ԲԱԺԻՆ 2.

ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐ

Հոդված 19

Վերապահումների ձևակերպումը

Պայմանագիրն ստորագրելու, վավերացնելու, ընդունելու կամ հաստատելու կամ դրան միանալու պահին պետությունը կարող է ձևակերպել վերապահում բացառությամբ այն դեպքերի, երբ.

- a) վերապահումն արգելվում է պայմանագրով,
- բ) պայմանագիրը նախատեսում է, որ կարելի է անել միայն որոշակի վերապահումներ, որոնց թվի մեջ տվյալ վերապահումը չի մտնում, կամ
- ց) (a) և (b) կետերի ազդեցության տակ չընկնելու դեպքում վերապահումն անհամատեղելի է պայմանագրի առարկայի և նպատակների հետ:

Հոդված 20

Վերապահումների ընդունումը և դրանց դեմ առարկությունները

- 1. Պայմանագրով որոշակիորեն թույլատրված վերապահումը մյուս պայմանավորվող պետությունների կողմից որևէ հետագա ընդունում չի պահանջում, եթե միայն պայմանագրով նման ընդունում նախատեսված չէ:
- 2. Եթե բանակցող պետությունների սահմանափակ քանակից և պայմանագրի առարկայից ու նպատակներից հետևում է, որ պայմանագիրը բոլոր կողմերի համար ամբողջությամբ կիրառելի էական պայման է, որպեսզի յուրաքանչյուր կողմ այդ պայմանագրով պարտավորված լինելու համաձայնություն տա, ապա վերապահումը պահանջում է բոլոր կողմերի համաձայնությունը:
- 3. Այն դեպքում, երբ պայմանագիրը միջազգային կազմակերպության հիմնադիր փաստաթուղթ է և դրանում այլ բան չի նախատեսված, ապա պահանջվում է վերապահման ընդունում այդ կազմակերպության իրավասու մարմնի կողմից:

4. Նախորդ կետերի գործողության տակ չընկնող դեպքերում և եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

ա) մի այլ պայմանավորվող պետության կողմից վերապահման ընդունումը վերապահում ձևակերպող պետությունը դարձնում է վերապահություն ընդունող պետության նկատմամբ այդ պայմանագրի մասնակից, եթե տվյալ պայմանագիրն այդ պետությունների համար գտնվում կամ մտնում է ուժի մեջ,

բ) ուրիշ պայմանավորվող պետության կողմից վերապահման նկատմամբ առարկությունը չի խոչընդոտում պայմանագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ վերապահման նկատմամբ առարկող պետության և վերապահումը ձևակերպող պետությունների միջև, եթե վերապահության դեմ առարկող պետությունը որոշակիորեն չի հայտարարում հակառակ մտադրության մասին,

գ) պետության համար պայմանագրի պարտադիր լինելն արտահայտող և վերապահություն պարունակող փաստաթուղթը մտնում է ուժի մեջ, հենց որ պայմանավորվող առնվազն մեկ ուրիշ պետություն ընդունում է այդ վերապահումը:

5. 2 և 4-րդ կետերի նպատակների համար, և եթե պայմանագիրն այլ բան չի նախատեսում, վերապահումը համարվում է պետության կողմից ընդունված, եթե այն վերապահման մասին տեղյակ պահվելուց հետո մինչև տասներկուամսյա ժամկետի վերջը դրա նկատմամբ առարկություն չի արտահայտել, կամ մինչև այն ժամկետի վերջը, երբ այն հայտնել է պայմանագրով պարտավորված լինելու համաձայնություն կախված այն բանից, թե որ ժամկետն է ավելի ուշ:

Հոդված 21

Վերապահումների և վերապահումների դեմ առարկությունների իրավաբանական հետևանքները

1. 19, 20 և 23-րդ հոդվածներին համապատասխան այլ մասնակցի նկատմամբ վերապահումը.

ա) փոխում է վերապահում անող պետության և այդ ուրիշ մասնակցի հարաբերությունների պայմանագրային այն դրույթները, որոնց վերաբերում է վերապահումը վերապահության գործողության ոլորտի սահմաններում, և

բ) նույն չափով փոխում է նշված դրույթներն այդ ուրիշ մասնակցի և վերապահություն անող երկրի հարաբերությունների նկատմամբ:

2. Ուրիշ մասնակիցների համար միմյանց հետ ունեցած հարաբերություններում վերապահումը չի փոխում պայմանագրային դրույթները:

3. Եթե վերապահության դեմ առարկող պետությունը չի առարկում իր և վերապահում անող պետության միջև պայմանագրի ուժի մեջ մտնելուն, ապա այն դրույթները, որոնց վերաբերում է վերապահումը, չի կիրառվում երկու պետությունների միջև նման վերապահման գործողության սահմաններում:

Հոդված 22

Վերապահումների և դրանց դեմ առարկությունների հանումը

1. Եթե պայմանագիրն այլ բան չի նախատեսում, վերապահումը կարելի է հանել ցանկացած ժամանակ և այն հանելու համար չի պահանջվում վերապահումն ընդունող պետության համաձայնությունը:

2. Եթե պայմանագիրն այլ բան չի նախատեսում, վերապահման դեմ առարկությունը կարելի է հանել ցանկացած պահի:

3. Եթե պայմանագիրն այլ բան չի նախատեսում կամ չկա այլ պայմանավորվածություն.

ա) այլ պայմանավորվող պետության նկատմամբ վերապահման հանումն ուժի մեջ է մտնում միայն վերջինիս կողմից այդ մասին ծանուցում ստանալուց հետո,

բ) վերապահման դեմ առարկության հանումն ուժի մեջ է մտնում միայն վերապահումը ձևակերպող պետության կողմից ծանուցում ստանալուց հետո:

Հոդված 23

Վերապահումներին վերաբերող ընթացակարգը

1. Վերապահումը, վերապահման նկատմամբ որոշակիորեն արտահայտված համաձայնությունը և վերապահման դեմ առարկությունը պետք է ձևակերպվեն գրավոր և տեղեկացվեն պայմանավորվող պետություններին և այլ պետություններին, որոնք իրավունք ունեն դառնալու պայմանագրի մասնակից:

2. Եթե վերապահումը ձևակերպվել է վավերացման, ընդունման կամ հաստատման ենթակա պայմանագիրն ստորագրելու ժամանակ, վերապահումը պետք է պաշտոնապես հաստատվի վերապահում անող պետության կողմից պայմանագրով պարտավորված լինելու համաձայնությունն արտահայտելու ժամանակ: Այդ դեպքում վերապահումն արված է համարվում դրա հաստատման օրը:

3. Որոշակիորեն արտահայտված վերապահման նկատմամբ համաձայնությունը կամ նրա դեմ առարկությունը, մինչև վերապահման հաստատումը, ինքնըստինքյան հաստատում չի պահանջում:

4. Վերապահման կամ դրա նկատմամբ առարկության հանումը պետք է իրականացվի գրավոր ձևով:

ԲԱԺԻՆ 3

ՊԵՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՐԱՆՅ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հոդված 24

Ուժի մեջ մտնելը

1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն կարգով և ժամկետում, որը նախատեսված է դրանով կամ համաձայնեցված է բանակցող պետությունների կողմից:

2. Նման դրույթի կամ պայմանավորվածութեան բացակայութեան դեպքում պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն պահից, երբ բանակցող բոլոր պետութիւններին կողմից համաձայնութիւն է հայտնվում պայմանագրով պարտավորված լինելու մասին:

3. Եթէ պայմանագրով պարտավորված լինելու մասին պետութեան համաձայնութիւնն արտահայտվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո որևէ տարեթիվով, ապա, եթէ պայմանագրով այլ բան չի նախատեսված, պայմանագիրն այդ պետութեան համար ուժի մեջ է մտնում այդ թվականին:

4. Պայմանագրի տեքստի բնագրային բնույթի հաստատումը կարգավորող դրույթները, պայմանագրով պարտավորված լինելու մասին պետութիւնների համաձայնութեան արտահայտումը, դրա ուժի մեջ մտնելու կարգը կամ ժամկետը, վերապահումները, ի պահ հանձնելու գործողութիւնները և մյուս հարցերը, որոնք անխուսափելիորեն ծագում են մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը, կիրառվում են դրա տեքստն ընդունելու պահից:

Հոդված 25

Ժամանակավոր կիրառումը

1. Պայմանագիրը կամ պայմանագրի մի մասը ժամանակավոր կիրառվում է մինչև ուժի մեջ մտնելը, եթէ.

a) դա նախատեսված է նույն պայմանագրով, կամ

b) բանակցող պետութիւններն այդ մասին պայմանավորվել են որևէ այլ ձևով:

2. Եթէ պայմանագրով այլ բան չի նախատեսված կամ բանակցող պետութիւնները չունեն այլ պայմանավորվածութիւն, ապա պետութեան նկատմամբ պայմանագրի կամ պայմանագրի մի մասի ժամանակավոր կիրառումը դադարեցվում է, եթէ տվյալ պետութիւնը պայմանագրին մասնակից չլինելու իր մտադրութեան մասին տեղյակ է պահում մյուս պետութիւններին, որոնց միջև ժամանակավոր կիրառվում է պայմանագիրը:

ՄԱՅ 3

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ, ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՎ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

ԲԱԺԻՆ 1.

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Հոդված 26

Pacta sunt servanda

Յուրաքանչյուր գործող պայմանագիր պարտադիր է դրա մասնակիցների համար և պետք է նրանց կողմից բարեխղճորեն կատարվի:

Հոդված 27

Ներքին իրավունքը և պայմանագրերի պահպանումը

Մասնակիցը որպէս պայմանագիրը չկատարելու արդարացման պատճառաբանութիւն չի կարող վկայակոչել իր ներքին իրավունքի դրույթները: Այս կանոնը գործում է առանց 46-րդ հոդվածը վնասելու:

ԲԱԺԻՆ 2.

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հոդված 28

Պայմանագրերի հետադարձ ուժ չունենալը

Եթէ պայմանագրից այլ մտադրութիւն չի հետևում կամ այլ կերպ չի սահմանված, ապա դրա դրույթները ցանկացած գործողութեան կամ փաստի առնչութեամբ, որոնք տեղի են ունեցել կամ ցանկացած իրադրութեան համար, որը դադարել է գոյութիւն ունենալ մինչև տվյալ մասնակցի համար պայմանագրի ուժի մեջ մտնելու թվականը, պայմանագրի մասնակցի համար պարտադիր չեն:

Հոդված 29

Պայմանագրի գործողութեան տարածքային ոլորտը

Եթէ պայմանագրից այլ մտադրութիւն չի հետևում կամ այլ կերպ չի սահմանված, ապա պայմանագիրը պարտադիր է յուրաքանչյուր մասնակցի համար նրա ողջ տարածքում:

Հոդված 30

Միևնույն հարցի վերաբերյալ հաջորդող պայմանագրերի կիրառումը

1. Միավորված ազգերի կազմակերպութեան կանոնադրութեան 103-րդ հոդվածի պահպանմամբ, միևնույն հարցին վերաբերող հաջորդող պայմանագրերի մասնակից պետութիւնների իրավունքներն ու պարտականութիւնները որոշվում են հետևյալ կետերին համապատասխան:

2. Եթէ պայմանագրի մեջ նշված է, որ այդ պայմանավորված է նախորդ կամ հաջորդ պայմանագրով կամ անհամատեղելի չպետք է համարվի նման պայմանագրի հետ, ապա առավելութեան ուժ ունեն այդ ուրիշ պայմանագրի դրույթները:

3. Եթէ նախորդ պայմանագրի բոլոր մասնակիցները հաջորդ պայմանագրի մասնակիցներն են, բայց նախորդ պայմանագրի գործողութիւնը 59-րդ հոդվածի համաձայն չի դադարեցվել կամ չի կասեցվել, ապա նախորդ պայմանագիրը կիրառվում է այնքանով, որքանով դրա դրույթները համատեղելի են վերջին պայմանագրի դրույթների հետ:

4. Եթէ վերջին պայմանագրի մասնակիցները չեն ներառում նախորդ պայմանագրի բոլոր մասնակիցներին:

ա) երկու պայմանագրերի մասնակից պետությունների հարաբերություններում կիրառվում է նույն այն կանոնը, ինչը 3-րդ կետում է,

բ) երկու պայմանագրերի մասնակից պետության և միայն մեկ պայմանագրի մասնակից պետության հարաբերություններում նրանց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները կարգավորում է այն պայմանագիրը, որին երկու պետություններն էլ մասնակից են:

5. 4-րդ կետը կիրառվում է առանց վնաս պատճառելու 41-րդ կամ 60-րդ հոդվածին համապատասխան պայմանագրի դադարեցման կամ կասեցման ցանկացած հարցին, կամ պետության պատասխանատվության մասին ցանկացած հարցին, որը կարող է ծագել այնպիսի պայմանագիր կնքելու կամ օգտագործելու ժամանակ, որի դրույթներն անհամատեղելի են ուրիշ պետության նկատմամբ այլ պայմանագրով նախատեսված տվյալ պետության պարտավորությունների հետ:

ԲԱԺԻՆ 3.

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

Հոդված 31

Մեկնաբանման ընդհանուր կանոնը

1. Պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի հասկացությունների և դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի և նպատակի լույսի ներքո:

2. Պայմանագրի մեկնաբանման նպատակով համատեքստը, բացի տեքստից, ներառյալ նախաբանը և հավելվածները, ընդգրկում է նաև.

ա) պայմանագրին վերաբերող ցանկացած համաձայնություն, որը կայացվել է բոլոր մասնակիցների միջև կապված պայմանագրի կնքման հետ,

բ) ցանկացած փաստաթուղթ, որը կազմվել է մեկ կամ մի քանի մասնակիցների կողմից կապված պայմանագրի կնքման հետ և մյուս մասնակիցների կողմից ընդունվել է որպես պայմանագրին վերաբերող փաստաթուղթ:

3. Համատեքստի հետ միաժամանակ հաշվի են առնվում.

ա) պայմանագրի մեկնաբանման կամ դրա դրույթների կիրառման վերաբերյալ մասնակիցների միջև հետագա ցանկացած համաձայնություն,

բ) պայմանագրի կիրառման հետագա պրակտիկան, որը սահմանում է դրա մեկնաբանման վերաբերյալ մասնակիցների համաձայնությունը,

ց) մասնակիցների հարաբերություններում կիրառվող միջազգային իրավունքի ցանկացած համապատասխան նորմ:

4. Հասկացությանը տրվում է հատուկ նշանակություն այն դեպքում, եթե սահմանվել է, որ մասնակիցները նման մտադրություն են ունեցել:

Հոդված 32

Մեկնաբանման լրացուցիչ միջոցները

31-րդ հոդվածի կիրառումից բխող նշանակությունը հաստատելու կամ ուղղելու նպատակով կարելի է դիմել մեկնաբանման լրացուցիչ միջոցների,

այդ թվում նախապատրաստական նյութերին և պայմանագրի կնքման հանգամանքներին երբ 31-րդ հոդվածին համապատասխան մեկնաբանումը.

- ա) նշանակությունը թողնում է երկիմաստ կամ անհասկանալի, կամ
- բ) հանգեցնում է բացարձակ անհեթեթ կամ անմիտ արդյունքի:

Հոդված 33

Պայմանագրերի մեկնաբանումը, որոնց տեքստի բնագիրը սահմանվել է երկու կամ մի քանի լեզուներով

1. Եթե պայմանագրի տեքստի բնագիրը սահմանվել է երկու կամ մի քանի լեզուներով, յուրաքանչյուր լեզվով տեքստն ունի միևնույն ուժը, եթե պայմանագրով չի նախատեսված կամ դրա մասնակիցների կողմից չկա պայմանավորվածություն առ այն, որ այդ տեքստերի միջև տարբերությունների դեպքում առավելություն կունենա որևէ որոշակի տեքստ:

2. Պայմանագրի ոչ այն լեզվով տարբերակը, որի համար սահմանվել է տեքստի բնագիր լինելը, համարվում է բնագիր միայն այն դեպքում, եթե դա նախատեսված է պայմանագրով, կամ եթե դրա մասին պայմանավորվել են պայմանագրի մասնակիցները:

3. Ենթադրվում է, որ յուրաքանչյուր բնագիր տեքստում պայմանագրի հասկացություններն ունեն միատեսակ բովանդակություն:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ 1-ին կետի համաձայն առավելություն ունի որևէ մեկ որոշակի տեքստ, եթե բնագիր տեքստերի համեմատումից հայտնաբերվում են բովանդակության տարբերություններ, որոնք չեն վերանում 31 և 32-րդ հոդվածները կիրառելիս, ընդունվում է այն բովանդակությունը, որը, պայմանագրի առարկան և նպատակները հաշվի առնելով, առավել լավ է համաձայնեցնում այդ տեքստերը:

ԲԱԺԻՆ 4.

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԵՎ ԵՐՐՈՐԳ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 34

Երրորդ պետություններին վերաբերող ընդհանուր նորմը

Պայմանագիրը երրորդ պետության համար պարտավորություններ կամ իրավունքներ չի ստեղծում առանց նրա համաձայնության:

Հոդված 35

Երրորդ պետությունների համար պարտավորություններ նախատեսող պայմանագրեր

Երրորդ պետության համար պայմանագրի դրույթից ծագում է պարտավորություն, եթե այդ պայմանագրի մասնակիցները մտադրություն ունեն այդ դրույթը պարտավորություն ստեղծելու միջոց դարձնել, և եթե երրորդ պետությունը գրավոր ձևով որոշակիորեն ստանձնում է այդ պարտավորությունները:

Հոդված 36

Երրորդ պետությունների համար իրավունք նախատեսող պայմանագրեր

1. Պայմանագրի դրույթից երրորդ պետության համար ծագում է իրավունք, եթե այդ պայմանագրի մասնակիցները մտադրություն ունեն այդ դրույթի միջոցով նման իրավունք տալ կամ երրորդ պետությանը, կամ պետությունների այն խմբին, որին նա պատկանում է, կամ բոլոր պետություններին, և եթե երրորդ պետությունը համաձայն է դրան: Եթե պայմանագրով այլ բան չի նախատեսված, նրա համաձայնությունը կենթադրվի այնքան ժամանակ, մինչև հակառակ ապացույցներ չլինեն:

2. 1-ին կետի համաձայն, իրավունքից օգտվող պետությունը կատարում է այդ իրավունքից օգտվելու պայմանները, որոնք նախատեսված են պայմանագրով կամ սահմանված են պայմանագրի համաձայն:

Հոդված 37

Երրորդ պետությունների պարտավորությունների կամ իրավունքների վերացումը կամ փոփոխումը

1. Եթե 35-րդ հոդվածի համաձայն երրորդ պետության համար առաջացել է պարտավորություն, ապա այդ պարտավորությունը կարող է վերացվել կամ փոփոխվել միայն պայմանագրի մասնակիցների և երրորդ պետության համաձայնությամբ, եթե միայն չի սահմանվել, որ նրանք պայմանավորվել են այլ կերպ:

2. Եթե 36-րդ հոդվածի համաձայն երրորդ պետության համար առաջացել է իրավունք, ապա այդ իրավունքը մասնակիցների կողմից չի կարող վերացվել կամ փոփոխվել, եթե սահմանվել է, որ առանց երրորդ պետության համաձայնության այդ իրավունքը ենթակա չէ վերացման կամ փոփոխման:

Հոդված 38

Պայմանագրի նորմեր, որոնք երրորդ պետության համար պարտադիր են դառնում միջազգային սովորույթի միջոցով

34-37-րդ հոդվածներում ոչինչ չի խոչընդոտում, որպեսզի պայմանագրում պարունակվող որևէ նորմ դառնա երրորդ պետության համար պարտադիր որպես միջազգային իրավունքի սովորույթային նորմ, որն ընդունվել է որպես այդպիսին:

ՄԱՍ 4

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԼՐԱՅՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒՄԸ

Հոդված 39

Պայմանագրերի փոփոխություններին ու լրացումներին վերաբերող ընդհանուր կանոն

Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել մասնակիցների համաձայնությամբ: 2-րդ մասում շարադրված նորմերը նման համաձայնության նկատմամբ կիրառվում են, եթե միայն պայմանագրում այլ բան չի նախատեսվում:

Հոդված 40

Բազմակողմ պայմանագրերի փոփոխություններն ու լրացումները

1. Եթե պայմանագիրն այլ բան չի նախատեսում, բազմակողմ պայմանագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելու ժամանակ պետք է ղեկավարվել հետևյալ կետերով:

2. Պայմանավորվող բոլոր պետությունները պետք է տեղեկացվեն բազմակողմ պայմանագրում փոփոխություն և լրացում կատարելու վերաբերյալ ցանկացած առաջարկության մասին, որոնք պետք է գործեն բոլոր մասնակիցների միջև, ընդ որում, պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրն իրավունք ունի մասնակցելու:

a) նման առաջարկության վերաբերյալ կայացվելիք որոշման ընդունմանը,

b) պայմանագրում փոփոխություն և լրացում կատարելու վերաբերյալ բանակցություններին և համաձայնության կնքմանը:

3. Պայմանագրին մասնակից դառնալու իրավունք ունեցող յուրաքանչյուր պետություն իրավունք ունի նաև մասնակից դառնալու այն պայմանագրին, որում փոփոխություններ և լրացումներ են կատարվել:

4. Փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ համաձայնությունը պարտադիր չէ արդեն պայմանագրին մասնակից ցանկացած պետության համար, որը մասնակից չի դառնում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ համաձայնագրին: Նման պետության առնչությամբ կիրառվում է 30-րդ հոդվածի 4 (b) կետը:

5. Ցանկացած պետություն, որը պայմանագրի մասնակից է դառնում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ համաձայնությունն ուժի մեջ մտնելուց հետո, եթե այդ պետության կողմից չի արտահայտվել այլ մտադրություն.

a) համարվում է փոփոխված և լրացված պայմանագրի մասնակից,

b) համարվում է չփոփոխված և չլրացված պայմանագրի մասնակից պայմանագրի ցանկացած մասնակցի առնչությամբ, որը կապված չէ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ համաձայնությունով:

Հոդված 41

Բազմակողմ պայմանագրերի փոփոխման համաձայնագրերը՝ միայն որոշակի մասնակիցների միջև

1. Բազմակողմ պայմանագրի երկու կամ մի քանի մասնակիցներ կարող են միայն իրենց միջև հարաբերություններում պայմանագիրը փոփոխելու մասին համաձայնագրեր կնքել, եթե.

a) նման փոփոխությունը նախատեսված է պայմանագրով, կամ

b) պայմանագրով նման փոփոխությունը չի արգելվում, և.

i) չի ազդում մյուս մասնակիցների կողմից պայմանագրով իրենց իրավունքների օգտագործման կամ իրենց պարտավորությունների կատարման վրա, և

ii) չի շոշափում այնպիսի դրույթներ, որոնցից նահանջելն անհամատեղելի է պայմանագրի առարկայի և նպատակի արդյունավետ իրագործման հետ:

2. Եթե (a) կետի ներգործությանը ենթարկվելու դեպքում պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա խնդրո առարկայի մասնակիցները մյուս մասնակիցներին տեղյակ են պահում համաձայնագիր կնքելու իրենց մտադրության մասին և պայմանագրի այն փոփոխության մասին, որը նախատեսված է այդ համաձայնագրով:

ՄԱՍ 5

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԱՆՎԱԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԳԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ԿԱՍԵՑՈՒՄԸ

ԲԱԺԻՆ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 42

Պայմանագրերի վավերականությունը և ուժի մեջ մնալը

1. Պայմանագրի վավերականությունը կամ պետության համաձայնությունն իր համար պայմանագրի պարտադիրության վերաբերյալ կարող է վիճարկվել միայն սույն Կոնվենցիայի կիրառման միջոցով:

2. Պայմանագրի դադարեցումը, դրա չեղյալ հայտարարումը կամ դրանից մասնակցի դուրս գալը կարող է իրագործվել միայն պայմանագրի կամ սույն Կոնվենցիայի դրույթների կիրառմամբ: Նույն նորմը կիրառվում է նաև պայմանագրի գործողությունը կասեցնելու դեպքում:

Հոդված 43

Պայմանագրից անկախ՝ միջազգային իրավունքի հիման վրա ուժ ունեցող պարտավորությունները

Պայմանագրի անվավերությունը, դադարեցումը կամ չեղյալ հայտարարումը, դրանից մասնակիցներից մեկի դուրս գալը կամ նրա գործողության կասեցումը, եթե դրանք իրագործվել են սույն Կոնվենցիայի կամ պայմանագրի դրույթների կիրառմամբ, ոչ մի կերպ չեն շոշափում պայմանագրում ամրագրված ցանկացած պարտավորություն կատարելու պետության պարտականությունը, որը նրա համար, անկախ պայմանագրից, միջազգային իրավունքով ուժ ունի:

Հոդված 44

Պայմանագրային դրույթների բաժանելիությունը

1. Պայմանագրով նախատեսված կամ 56-րդ հոդվածից բխող պայմանագիրը չեղյալ հայտարարելու, դրանից դուրս գալու կամ դրա գործողությունը

կասեցնելու՝ մասնակցի իրավունքը կարող է օգտագործվել միայն ամբողջ պայմանագրի առումով, եթե պայմանագիրն այլ բան չի նախատեսում, կամ երբ դրա մասնակիցները չունեն այլ պայմանավորվածություն:

2. Սույն Կոնվենցիայում ճանաչված պայմանագրի անվավերության, դադարեցման, դրանից դուրս գալու և դրա գործողության կասեցման հիմքը չճանաչելը սույն համաձայնագրում կարող է պատճառաբանվել միայն ամբողջ պայմանագրի վերաբերյալ, բացառությամբ ներքոհիշյալ հետևյալ կետերի կամ 60-րդ հոդվածի:

3. Եթե մման հիմքը վերաբերում է միայն առանձին դրույթների, ապա այն կարող է պատճառաբանվել միայն այդ դրույթների վերաբերյալ, երբ.

a) նշված դրույթները պայմանագրի մնացած մասերից կիրառման առումով բաժանելի են,

b) պայմանագրից բխում է կամ այլ կերպ սահմանվել է, որ մման դրույթների կիրառումն էական հիմք չի հանդիսացել ուրիշ մասնակցի կամ ուրիշ մասնակիցների՝ ամբողջ պայմանագրի պարտադիր լինելու համաձայնության համար, և

c) պայմանագրի մնացած մասի կատարման շարունակությունն անարդար չի լինի:

4. 49 և 50-րդ հոդվածների ազդեցության տակ ընկնելու դեպքում պետությունը, որն իրավունք ունի վկայակոչել խարդախությունը կամ կաշառքը. կարող է այդ անել ամբողջ պայմանագրի նկատմամբ կամ 3-րդ կետով նախատեսված դեպքերում առանձին դրույթների նկատմամբ:

5. 51, 52 և 53-րդ հոդվածների ազդեցության տակ ընկնելու դեպքում պայմանագրի դրույթների բաժանում չի թույլատրվում:

Հոդված 45

Պայմանագրի անվավերության, դադարեցման, դրանից դուրս գալու կամ դրա գործողության կասեցման հիմքը պատճառաբանելու իրավունքի կորուստը

Պետությունն այլևս իրավունք չունի 46 և 50-րդ կամ 62-րդ հոդվածների հիման վրա պայմանագրի անվավերության, դադարեցման, դրանից դուրս գալու կամ դրա գործողության հիմքը պատճառաբանել այն բանից հետո, երբ նրան հայտնի են դարձել փաստեր, որ

a) այն որոշակիորեն համաձայնել է, որ պայմանագիրը վավերական է, կամ պահպանում է իր ուժը կամ մնում է գործողության մեջ, ինչպես որ լինի, կամ

b) այն, ելնելով իր վարքից, պետք է համարվի լռելյայն համաձայնած այն բանին, որ պայմանագիրը վավերական է կամ պահպանում է իր ուժը, կամ մնում է գործողության մեջ ինչպես որ լինի:

**ԲԱԺԻՆ 2.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

Հոդված 46

Պայմանագիր կնքելու իրավասության վերաբերյալ ներպետական իրավունքի դրույթները

1. Պետությունն իրավունք չունի վկայակոչել այն հանգամանքը, որ իր համաձայնությունը պայմանագրի իրեն վերաբերող պարտավորության նկատմամբ արտահայտվել է իր ներպետական իրավունքի պայմանագիր կնքելու իրավասության վերաբերյալ այս կամ այն դրույթի խախտումով, որպես իր համաձայնության ոչ իրական լինելու հիմք, բացի այն դեպքից, եթե այդ խախտումն ակնհայտ է և վերաբերում է նրա ներպետական իրավունքի առավել կարևոր նշանակություն ունեցող նորմերին:

2. Խախտումն ակնհայտ է, եթե այն առարկայորեն բացահայտ է այդ հարցում սովորական պրակտիկային համապատասխան գործող և հարցին բարեխղճորեն վերաբերող ցանկացած պետության համար:

Հոդված 47

Պետության համաձայնությունն արտահայտելու լիազորությունների հատուկ սահմանափակումները

Եթե պետության որևէ պայմանագրով պարտավորված լինելու վերաբերյալ համաձայնություն արտահայտելու՝ ներկայացուցչի լիազորությունները պայմանավորված են հատուկ սահմանափակումներով, ապա ներկայացուցչի կողմից նման սահմանափակումները չպահպանելը չի կարելի պատճառ բերել որպես նրա կողմից համաձայնություն արտահայտելու անօրինակահանության վերաբերյալ, եթե այդ սահմանափակումների շուրջ բանակցող մյուս պետությունները տեղյակ են պահվել մինչև ներկայացուցչի կողմից նման համաձայնություն արտահայտելը:

Հոդված 48

Սխալը

1. Պետությունը կարող է պատճառաբանել պայմանագրում եղած սխալը որպես պայմանագրով իր պարտավորությունների նկատմամբ համաձայնության ոչ իրավական լինելու հիմք, եթե այդ սխալը վերաբերում է այնպիսի փաստի կամ վիճակի, որն այդ պետության ենթադրությամբ գոյություն է ունեցել պայմանագիրը կնքելու ժամանակ և իրենից ներկայացրել է այդ պայմանագրով իրեն վերաբերող պարտավորություններն ընդունելու էական հիմք:

2. 1-ին կետը չի կիրառվում, եթե նշված պետությունն իր գործողությամբ նպաստել է այդ սխալի առաջացմանը կամ հանգամանքներն այնպիսին էին, որ այդ պետությունն ուշադրություն պետք է դարձներ հնարավոր սխալին:

3. Միայն պայմանագրի տեքստի ձևակերպմանը վերաբերող սխալը չի ազդում դրա վավերականության վրա, նման դեպքում կիրառվում է 79-րդ հոդվածը:

Հոդված 49

Խարդախություն

Եթե պետությունը պայմանագիր է կնքել մյուս բանակցող պետության խարդախ գործողությունների ազդեցության տակ, ապա նա կարող է խարդախությունը վկայակոչել որպես պայմանագրով պարտավորված լինելու իր համաձայնությունն անվավեր համարելու հիմք:

Հոդված 50

Պետության ներկայացուցչին կաշառելը

Եթե պետության պայմանագրով պարտավորված համաձայնությունն արտահայտվել է բանակցություններին մասնակից մյուս պետության կողմից իր ներկայացուցչին ուղղակի կամ անուղղակի կաշառելու միջոցով, ապա այդ պետությունը կարող է վկայակոչել նման կաշառատվությունը այդ պայմանագրով պարտավորված լինելու իր համաձայնությունն անվավեր համարելու համար:

Հոդված 51

Պետության ներկայացուցչին հարկադրելը

Պայմանագրով պարտավորված լինելու պետության համաձայնության արտահայտումը վերջինիս ներկայացուցչին հարկադրելու արդյունքում վերջինիս դեմ ուղղված գործողությունների կամ սպառնալիքների միջոցով, որևէ իրավական հետևանք չունի:

Հոդված 52

Ուժի կամ այն կիրառելու սպառնալիքի միջոցով պետությանը հարկադրելը

Պայմանագիրը համարվում է առոչինչ, եթե այն կնքված է ուժի սպառնալիքի կամ այն կիրառելու միջոցով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված միջազգային իրավունքի սկզբունքների խախտմամբ:

Հոդված 53

Ընդհանուր միջազգային իրավունքի համընդհանուր պարտադիր (jus cogens) նորմին հակասող պայմանագրերը

Պայմանագիրն առոչինչ է, եթե կնքման պահին հակասում է ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմին: Սույն Կոնվենցիայի նպատակների համար ընդհանուր միջազգային պարտադիր նորմն այն նորմն է, որը պետությունների միջազգային հանրության կողմից ամբողջությամբ ընդուն-

վում ու ճանաչվում է որպէս նորմ, որից շեղումն անթույլատրելի է, և որը կարող է փոփոխվել միայն ընդհանուր միջազգային իրավունքի հաջորդ նորմով:

ԲԱԺԻՆ 3.

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ԿԱՍԵՑՈՒՄԸ

Հոդված 54

Պայմանագրի դադարեցումը կամ դրանից դուրս գալը՝ պայմանագրի դրույթների կամ մասնակիցների համաձայնությանը համապատասխան

Պայմանագրի դադարեցումը կամ մասնակցի դուրս գալը կարող է տեղի ունենալ.

- a) պայմանագրի դրույթներին համապատասխան, կամ
- b) բոլոր մասնակիցների համաձայնությամբ ցանկացած ժամանակ պայմանավորվող մյուս պետությունների հետ խորհրդակցելուց հետո:

Հոդված 55

Բազմակողմ պայմանագրի մասնակիցների թվի կրճատումը, որի հետևանքով այն դառնում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ քանակից պակաս

Եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, բազմակողմ պայմանագիրը չի դադարեցվում միայն այն պատճառով, որ դրա մասնակիցների թիվը դարձել է պայմանագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ թվից պակաս:

Հոդված 56

Դադարեցնելու, չեղյալ հայտարարելու կամ նրանից դուրս գալու մասին դրույթներ չպարունակող պայմանագրի չեղյալ հայտարարելը կամ դրանից դուրս գալը

1. Պայմանագիրը, որը ոչ մի դրույթ չի պարունակում այն դադարեցնելու մասին, և որն այն չեղյալ համարել կամ դրանից դուրս գալ չի նախատեսում, ենթակա չէ չեղյալ հայտարարվելու և դրանից դուրս գալ չի թույլատրվում, եթե միայն.

- a) սահմանվել է, որ մասնակիցները մտադրվել էին թույլատրել այն չեղյալ հայտարարելը կամ դրանից դուրս գալը, կամ
- b) պայմանագրի բնույթը ենթադրում է չեղյալ հայտարարելու կամ դուրս գալու իրավունքը:

2. 1-ին կետին համապատասխան պայմանագիրը չեղյալ հայտարարելու կամ դրանից դուրս գալու իր մտադրության մասին մասնակիցը տեղյակ է պահում ոչ ուշ, քան տասներկու ամիս առաջ:

Հոդված 57

Պայմանագրի գործողության կասեցումը՝ պայմանագրի դրույթների կամ դրա մասնակիցների համաձայնությանը համապատասխան

Պայմանագրի գործողությունը բոլոր մասնակիցների կամ առանձին մասնակցի առնչությամբ կարող է կասեցվել.

- ա) պայմանագրի դրույթներին համապատասխան, կամ
- բ) ցանկացած ժամանակ բոլոր մասնակիցների համաձայնությամբ, պայմանավորվող այլ պետությունների հետ խորհրդակցելուց հետո:

Հոդված 58

Բազմակողմ պայմանագրի գործողության կասեցումը՝ միայն մի քանի մասնակիցների միջև եղած համաձայնությամբ

1. Բազմակողմ պայմանագրի երկու կամ մի քանի մասնակիցներ կարող են կնքել համաձայնագիր պայմանագրի գործողությունը ժամանակավորապես և միայն իրենց միջև կասեցնելու վերաբերյալ, եթե.

- a) նման կասեցման հնարավորությունը նախատեսված է պայմանագրով, կամ
- b) նշված կասեցումը չի արգելվում պայմանագրով, և.
 - i) չի ազդում մյուս մասնակիցների կողմից պայմանագրից բխող իրենց իրավունքներից օգտվելու կամ իրենց պարտավորությունների կատարման վրա,
 - ii) անհամատեղելի չէ պայմանագրի առարկայի և նպատակի հետ:

2. Եթե 1-ի (a) կետի գործողության տակ ընկնելու դեպքում պայմանագրով այլ բան չի նախատեսված, ապա խնդրո առարկա մասնակիցները մյուս մասնակիցներին տեղյակ են պահում պայմանագրի այն դրույթների վերաբերյալ համաձայնագիր կնքելու իրենց մտադրության մասին, որոնց գործողությունները նրանք մտադիր են կասեցնել:

Հոդված 59

Պայմանագրի գործողության դադարեցումը կամ կասեցումը՝ հաջորդող պայմանագրի կնքելու հետևանքով

1. Պայմանագիրը համարվում է դադարեցված եթե դրա բոլոր մասնակիցները նույն հարցի առնչությամբ կնքում են հաջորդող պայմանագիր, և

- a) հաջորդող պայմանագրից բխում է կամ այլ կերպ սահմանվում է տվյալ հարցն այդ պայմանագրով կարգավորելու մասին մասնակիցների մտադրությունը, կամ
- b) հաջորդող պայմանագրի դրույթներն այնքան են անհամատեղելի նախորդ պայմանագրի դրույթների հետ, որ երկու պայմանագրերը հնարավոր չէ միաժամանակ կիրառել:

2. Նախորդ պայմանագրի գործողությունը համարվում է միայն կասեցված, եթե հաջորդող պայմանագրից բխում է կամ այլ կերպ սահմանվել է, որ այդպիսին է եղել մասնակիցների մտադրությունը:

Հոդված 60

Պայմանագիրը խախտելու հետևանքով դրա գործողության դադարեցումը կամ կասեցումը

1. Երկկողմ պայմանագրի էական խախտումը մասնակիցներից մեկի կողմից մյուսին իրավունք է տալիս այդ խախտումը վկայակոչել պայմանագիրն ամբողջությամբ կամ մի մասով դադարեցնելու կամ այն կասեցնելու համար:

2. Մասնակիցներից մեկի կողմից բազմակողմ պայմանագրի էական խախտումն իրավունք է տալիս.

a) մյուս մասնակիցներին միաձայն ձեռք բերված համաձայնությամբ, պայմանագիրն ամբողջությամբ կամ մի մասով կասեցնել կամ այն դադարեցնել.

- i) իրենց և խախտող պետության հարաբերություններում, կամ
- ii) բոլոր մասնակիցների հարաբերություններում,

b) խախտման հետևանքով առավել շատ տուժած մասնակցին այդ խախտումը վկայակոչել իր և խախտող պետության միջև պայմանագրի գործողությունն ամբողջությամբ կամ մասամբ կասեցնելու համար,

c) բացի պայմանագիրը խախտող պետությունից, ցանկացած մասնակցին այդ խախտումը վկայակոչել իր նկատմամբ պայմանագիրն ամբողջությամբ կամ մասամբ կասեցնելու, եթե պայմանագիրն այնպիսի բնույթ ունի, որ նրա դրույթների էական խախտումը մի մասնակցի կողմից հիմնովին փոխում է յուրաքանչյուր մասնակցի դրությունը պայմանագրից բխող իր պարտականությունների հետագա կատարման առնչությամբ:

3. Սույն հոդվածի նպատակների համար պայմանագրի էական խախտում է հանդիսանում.

a) պայմանագրից այնպիսի հրաժարումը, որը սույն Կոնվենցիան չի թույլատրում, կամ

b) պայմանագրի առարկան և նպատակն իրականացնելու համար էական նշանակություն ունեցող դրույթի խախտումը:

4. Նախորդ կետերը չեն վերաբերում պայմանագրի որևէ դրույթի, որը կիրառվում է խախտման ժամանակ:

5. 1, 2 և 3-րդ կետերը չեն կիրառվում մարդասիրական բնույթ ունեցող պայմանագրերում պարունակվող անձի պաշտպանությանը վերաբերող այն դրույթներին, որոնք արգելում են նման պայմանագրերով պաշտպանվող անձանց նկատմամբ ճնշման որևէ ձև:

Հոդված 61

Հետագա կատարման անհնարիությունը

1. Մասնակիցը կարող է պայմանագրի կատարման անհնարիությունը վկայակոչել որպես պայմանագիրը դադարեցնելու կամ դրանից դուրս գալու

հիմք, եթե նման անհնարիությունը հանդիսանում է պայմանագիրը կատարելու համար անհրաժեշտ առարկայի մշտապես անհետացման կամ մշտապես ոչնչացման հետևանք: Եթե անհնարիությունը ժամանակավոր է, ապա այն կարող է վկայակոչվել միայն պայմանագրի գործողության կասեցման համար:

2. Կատարման անհնարիությունը չի կարող վկայակոչվել մասնակցի կողմից որպես դրա դադարեցման, դրանից դուրս գալու կամ դրա գործողության կասեցման հիմք, եթե այդ անհնարիությունը հանդիսանում է այդ մասնակցի կողմից պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կամ նրա կողմից պայմանագրի ցանկացած ուրիշ մասնակցի նկատմամբ ստանձնված միջազգային պարտավորությունների խախտման արդյունք:

Հոդված 62

Հանգամանքների արմատական փոփոխություն

1. Պայմանագրի կնքման ժամանակ գոյություն ունեցած հանգամանքների արմատական փոփոխությունը, որը չի կանխատեսվել մասնակիցների կողմից, չի կարող վկայակոչվել որպես պայմանագիրը դադարեցնելու կամ դրանից դուրս գալու համար հիմք, բացառությամբ այն դեպքերի, երբ.

a) այդ հանգամանքների առկայությունը պայմանագրով պարտավորված լինելու մասնակիցների համաձայնության համար էական հիմք է հանդիսացել, և

b) հանգամանքների փոփոխության հետևանքը հիմնովին փոխում է ըստ պայմանագրի դեռևս կատարման ենթակա պարտավորությունների գործողությունների ոլորտը:

2. Հանգամանքների արմատական փոփոխությունը չի կարող վկայակոչվել որպես պայմանագիրը դադարեցնելու կամ դրանից դուրս գալու հիմք.

a) եթե պայմանագիրը որոշում է սահման, կամ

b) եթե նման արմատական փոփոխությունը, որը վկայակոչում է պայմանագրի մասնակիցը, հանդիսանում է այդ մասնակցի կողմից կամ պայմանագրի իր պարտավորության, կամ պայմանագրի ցանկացած ուրիշ մասնակցի նկատմամբ իր վրա ունեցած միջազգային այլ պարտավորության խախտման արդյունք:

3. Եթե նախորդ կետերի համաձայն մասնակիցն իրավունք ունի հանգամանքների արմատական փոփոխությունը վկայակոչել որպես հիմք պայմանագիրը դադարեցնելու կամ դրանից դուրս գալու համար, ապա նա կարող է նաև վկայակոչել այդ փոփոխությունը որպես պայմանագրի գործողությունը կասեցնելու հիմք:

Հոդված 63

Դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերությունների խզումը

Պայմանագրի մասնակիցների միջև դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերությունների խզումը չի ազդում պայմանագրով նրանց միջև

հաստատված իրավական հարաբերությունների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերությունների առկայությունն անհրաժեշտ է այդ պայմանագիրը կատարելու համար:

Հոդված 64

Ընդհանուր միջազգային իրավունքի համընդհանուր պարտադիր նոր նորմի (jus cogens) առաջացումը

Եթե առաջանում է ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նոր նորմ, ապա ցանկացած պայմանագիր, որը հակասում է այդ նորմին, անվավեր է և դադարում է:

ԲԱԺԻՆ 4.

ԸՆԹԱՅԱԿԱՐԳ

Հոդված 65

Ընթացակարգ, որը պետք է պահպանել պայմանագրի անվավերության, դադարեցման, դրանից դուրս գալու կամ դրա գործողությունը կասեցնելու դեպքում

1. Մասնակիցը, որը սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն վկայակոչում է պայմանագրով պարտավորված լինելու համաձայնության մեջ թերությունը կամ պայմանագրի վավերականությունը վիճարկող, պայմանագիրը դադարեցնող, դրանից դուրս գալու կամ գործողությունը կասեցնող հիմքը, պետք է մյուս մասնակիցներին ծանուցի իր պահանջի մասին: Ծանուցումը պետք է հիշատակի այն միջոցառումը, որն առաջարկում է կիրառել պայմանագրի նկատմամբ, ինչպես նաև դրա հիմնավորումը:

2. Եթե ծանուցումն ստանալուց ոչ պակաս, քան երեք ամիս ժամկետից հետո, բացառությամբ հրատապ հատուկ դեպքերի, ոչ մի մասնակից չի առարկում, ապա ծանուցում ուղարկող մասնակիցը կարող է 67-րդ հոդվածում նշված կարգով իրագործել իր կողմից նախատեսված միջոցառումը:

3. Սակայն, եթե ցանկացած այլ մասնակցի կողմից կա առարկություն, ապա մասնակիցները պետք է կարգավորման հասնեն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 33-րդ հոդվածով նախատեսված միջոցառումների միջոցով:

4. Նախորդ կետերում ոչինչ չի վերաբերում մասնակիցների ցանկացած գործող դրույթի հիման վրա ունեցած այն իրավունքներին կամ պարտականություններին, որոնք վեճերի կարգավորման ժամանակ մասնակիցների համար պարտադիր են:

5. Առանց 45-րդ հոդվածը վնասելու, այն հանգամանքը, որ պետությունը 1-ին կետով նախատեսված ծանուցումը չի կատարել, նրան չի արգելում նման ծանուցում կատարել ի պատասխան այլ մասնակցի, որը պահանջում է պայմանագրի կատարում կամ հայտարարում է այն խախտելու մասին:

Հոդված 66

Պատական կարգավորման, արբիտրաժի և հաշտեցման ընթացակարգերը

Եթե առարկությունը ներկայացնելու ժամկետից հետո 12 ամսվա ընթացքում 65-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ոչ մի լուծում չի կայացվել, ապա կիրառվում են հետևյալ ընթացակարգերը.

a) 53-րդ կամ 64-րդ հոդվածների կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ վեճի ցանկացած կողմ որոշման համար գրավոր դիմումի ձևով կարող է դիմել Միջազգային դատարան, եթե կողմերն ընդհանուր համաձայնությամբ չեն պայմանավորվում այդ վեճն արբիտրաժին հանձնելու մասին,

b) Կոնվենցիայի 5-րդ մասի ցանկացած այլ հոդվածների կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ վեճի ցանկացած կողմ կարող է սկսել Կոնվենցիայի հավելվածում նշված ընթացակարգը՝ այդ հարցի կապակցությամբ խնդրանք ներկայացնելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Հոդված 67

Պայմանագիրն անվավեր հայտարարելու, պայմանագիրը դադարեցնելու, դրանից դուրս գալու կամ դրա գործողության կասեցման հայտարարման փաստաթղթերը

1. 65-րդ հոդվածի 1-ին կետում նշված ծանուցումը պետք է լինի գրավոր:

2. Ցանկացած գործողություն, որը նպատակ ունի պայմանագիրն անվավեր հայտարարել, դադարեցնել, դրանից դուրս գալ կամ դրա գործողությունը կասեցնել պայմանագրի դրույթների կամ 65-րդ հոդվածի 2 և 3-րդ կետերի դրույթների համաձայն, կատարվում է մյուս մասնակիցներին փոխանցված փաստաթղթի ձևով: Եթե նման փաստաթուղթն ստորագրված չէ պետության ղեկավարի, կառավարության ղեկավարի կամ արտաքին գործերի նախարարի կողմից, այդ փաստաթուղթը փոխանցող պետության ներկայացուցիչ կարող է պահանջվել ներկայացնել լիազորագիր:

Հոդված 68

65 և 67-րդ հոդվածներով նախատեսված ծանուցումը և փաստաթղթերը հետ վերցնելը

65 և 67-րդ հոդվածներով նախատեսված ծանուցումը կամ փաստաթղթերը, մինչև դրանց ուժի մեջ մտնելը, ցանկացած ժամանակ կարող են հետ վերցվել:

ԲԱԺԻՆ 5.

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅԱՆ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՄ ԿԱՍԵՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հոդված 69

Պայմանագրի անվավերության հետևանքները

1. Սույն Կոնվենցիային համապատասխան անվավեր ճանաչված պայմանագիրը համարվում է առոչինչ: Առոչինչ պայմանագրի դրույթներն իրավական ուժ չունեն:

2. Եթե. այնուամենայնիվ, նման պայմանագրով գործողություններ են կատարվել.

ա) յուրաքանչյուր մասնակից ցանկացած այլ մասնակցից կարող է պահանջել, որքան հնարավոր է, իրենց փոխհարաբերություններում ստեղծել այնպիսի վիճակ, որը գոյություն կունենար, եթե տեղի չունենային նման գործողություններ,

բ) նախքան անվավերությունը վկայակոչելը, բարեխղճորեն կատարված գործողությունները միայն պայմանագրի անվավերության պատճառով անօրինական չեն դառնում:

3. 49, 50, 51 կամ 52-րդ հոդվածներով նախատեսված գործողության դեպքերում 2-րդ կետը չի կիրառվում խարդախության, կաշառատվության կամ ստիպելու համար պատասխանատու մասնակցի նկատմամբ:

4. Առանձին պետության բազմակողմ պայմանագրով պարտավորված լինելու համաձայնության անվավերության դեպքում, վերոհիշյալ կանոնները կիրառվում են այդ պետության և պայմանագրի մասնակիցների հարաբերություններում:

Հոդված 70

Պայմանագրի դադարեցման հետևանքները

1. Եթե պայմանագրով այլ բան չի նախատեսված, կամ եթե մասնակիցները չեն համաձայնել այլ կերպ, պայմանագրի դադարեցումը դրա դրույթներին համապատասխան կամ սույն Կոնվենցիայի համաձայն.

ա) պայմանագրի մասնակիցներին ազատում է պայմանագիրը հետագայում կատարելու ցանկացած պարտավորվածությունից,

բ) չի ազդում մինչև պայմանագրի դադարեցումը դրա կատարման միջոցով ստեղծված մասնակիցների ցանկացած իրավունքի, պարտավորության կամ իրավական վիճակի վրա:

2. Եթե պետությունը չեղյալ է հայտարարում բազմակողմ պայմանագիրը կամ դուրս է գալիս դրանից, ապա 1-ին կետը կիրառվում է այդ պետության և պայմանագրի յուրաքանչյուր մասնակցի միջև եղած հարաբերություններում այն օրվանից, երբ չեղյալ հայտարարելը կամ պայմանագրից դուրս գալն ուժի մեջ է մտել:

Հոդված 71

Ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմին հակասող պայմանագրի անվավերության հետևանքները

1. Եթե 53-րդ հոդվածի համաձայն պայմանագիրը համարվում է անվավեր, մասնակիցները.

ա) որքանով որ հնարավոր է, վերացնում են ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմին հակասող որևէ դրույթի հիման վրա կատարված ցանկացած գործողության հետևանքները, և

բ) իրենց փոխհարաբերությունները համապատասխանեցնում են ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմին:

2. Եթե 64-րդ հոդվածի համաձայն պայմանագիրը դառնում է անվավեր և դադարում է, ապա պայմանագրի դադարեցումը.

ա) մասնակիցներին ազատում է պայմանագիրը հետագայում կատարելու պարտավորությունից,

բ) չի ազդում մինչև պայմանագրի դադարեցումը դրա կատարման միջոցով ստեղծված մասնակիցների ցանկացած իրավունքի, պարտավորության կամ իրավական վիճակի վրա պայմանով, որ նման իրավունքներն ու պարտավորությունները կամ վիճակները կարող են պահպանվել հետագայում միայն այն չափով, որ չափով որ դրանց պահպանումն ինքնըստինքյան չի հակասում միջազգային իրավունքի նոր պարտադիր նորմին:

Հոդված 72

Պայմանագրի գործողության կասեցման հետևանքները

1. Եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, կամ եթե մասնակիցներն այլ կերպ չեն համաձայնել, պայմանագրի դրույթներին կամ սույն Կոնվենցիային համապատասխան դրա գործողության կասեցումը.

ա) մասնակիցներին, որոնց միջև կասեցված է պայմանագրի գործողությունը, կասեցված ժամանակամիջոցում ազատում է իրենց փոխհարաբերություններում պայմանագիրը կատարելու պարտավորությունից,

բ) չի ազդում մասնակիցների միջև պայմանագրով այլ կերպ սահմանված մնացած իրավահարաբերությունների վրա:

2. Պայմանագրի գործողության կասեցման ժամանակամիջոցում մասնակիցները ձեռնպահ են մնում պայմանագրի գործողությունը վերսկսելու նկատմամբ գործողություններից:

ՄԱՍ 6

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 73

Պետությունների իրավահաջորդության, պետությունների պատասխանատվության և ռազմական գործողություններ սկսելու դեպքերը

Սույն Կոնվենցիայի դրույթները չեն կանխորոշում պայմանագրի առնչությամբ որևէ հարց, որը կարող է առաջանալ պետությունների իրավահաջորդության, պետության միջազգային պատասխանատվության կամ պետությունների միջև զինված գործողությունների պատճառով:

Հոդված 74

Դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունները և պայմանագրերի կնքումը

Երկու կամ մի քանի պետությունների միջև դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերությունների խզումը չի խոչընդոտում այդ պետությունների միջև պայմանագրեր կնքելուն: Պայմանագիր կնքելն ինքնըստինքյան չի ազդում դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունների վիճակի վրա:

Հոդված 75

Ազդեցող պետության դեպքը

Սույն Կոնվենցիայի դրույթները չեն վնասում պայմանագրի վերաբերյալ որևէ պարտավորություն, որը կարող է ծագել ազդեցող պետության նկատմամբ այդ պետության կատարած ազդեցիկ կապակցությամբ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համապատասխան ընդունված միջոցառումների հետևանքով:

ՄԱՍ 7

ԱՎԱՆՊԱՊԱՀՆԵՐ, ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ, ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՐԱՆՅՈՒՄ

Հոդված 76

Պայմանագրերի ավանդապահը

1. Պայմանագրի ավանդապահը կարող է նշանակվել բանակցություններին մասնակցող պետությունների կողմից կամ հենց պայմանագրով, կամ որևէ ուրիշ կարգով: Ավանդապահ կարող են լինել մեկ կամ մի քանի պետություններ, միջազգային կազմակերպություններ կամ նման կազմակերպության գլխավոր գործադիր պաշտոնյան:

2. Ավանդապահի գործառույթն իր բնույթով միջազգային է, և այդ գործառույթը կատարելու ժամանակ ավանդապահը պարտավոր է գործել անկողմնակալ: Մասնավորապես այն փաստը, որ պայմանագիրը որոշ մասնակիցների միջև ուժի մեջ չի մտել կամ պետությունների և ավանդապահի միջև ծագել են տարաձայնություններ վերջինիս կողմից իր գործառույթը կատարելու կապակցությամբ, չի ազդում այդ պարտավորությունների կատարման վրա:

Հոդված 77

Ավանդապահի գործառույթները

1. Եթե պայմանագրով այլ բան չի նախատեսված, կամ եթե պայմանավորվող պետություններն այլ բանի մասին չեն համաձայնել, ավանդապահի դերը, մասնավորապես, կայանում է հետևյալում.

a) պայմանագրի բնագրի և ավանդապահին տրված լիազորագրերի պահպանում,

b) բնագրի հաստատված պատճենների պատրաստում և պայմանագրով նախատեսված այլ լեզուներով պայմանագրի այլ տեքստերի պատրաստում և դրանց առաքում պայմանագրի մասնակիցներին և պայմանագրին մասնակցելու իրավունք ունեցող ուրիշ պետությունների,

c) պայմանագրի ստորագրությունների ստացում, դրան վերաբերող փաստաթղթերի, ծանուցումների հաղորդագրությունների ստացում և պահպանում,

d) այն հարցի ուսումնասիրումը, թե պայմանագրին վերաբերող ստորագրությունը, փաստաթղթերը, ծանուցումները կամ հաղորդագրություններն արդյոք պատշաճ ձևով են. և անհրաժեշտության դեպքում համապատասխան պետությանն այդ մասին տեղյակ պահելը,

e) պայմանագրին վերաբերող փաստաթղթերի, ծանուցումների և հաղորդագրությունների մասին պայմանագրին մասնակցելու իրավունք ունեցող պետություններին տեղեկատվություն տալը,

f) պայմանագրին մասնակից դառնալու իրավունք ունեցող պետություններին տեղեկատվություն տալն այն մասին, թե ստորագրությունների թիվը, վավերագրերը կամ ընդունման, հաստատման կամ միացման մասին փաստաթղթերը, որոնք պետք են պայմանագիրն ուժի մեջ մտնելու համար, երբ են ստացվել և ի պահ հանձնվել,

g) Միավորված ազգերի կազմակերպության Քարտուղարությունում պայմանագրերի գրանցումը,

h) սույն Կոնվենցիայի այլ դրույթներով նախատեսված այլ գործառույթների կատարումը:

2. Որևէ պետության և ավանդապահի միջև վերջինիս գործառույթների կատարման կապակցությամբ տարաձայնություններ ծագելու դեպքում ավանդապահն այդ հարցի մասին տեղյակ է պահում պայմանագիրն ստորագրող պետություններին, պայմանավորվող պետություններին կամ համապատասխան դեպքերում շահագրգիռ միջազգային կազմակերպության իրավասու մարմնին:

Հոդված 78

Ծանուցում և հաղորդագրություն

Եթե պայմանագրով և սույն Կոնվենցիայով այլ բան չի նախատեսված, ցանկացած պետության կողմից արված ծանուցումը կամ հաղորդագրությունը սույն Կոնվենցիայի համաձայն.

a) եթե ավանդապահ չկա, առաքվում է անմիջապես այն պետությանը, որի համար այն նախատեսված է, իսկ եթե ավանդապահ կա, ապա նրան,

b) համապատասխան պետության կողմից համարվում է կատարված միայն այն պետության կողմից ստանալուց հետո, որին այն առաքված է. կամ հանգամանքներից ելնելով ավանդապահի ստանալուց հետո,

c) եթե այն առաքված է ավանդապահին, համարվում է ստացված այն պետության կողմից, որի համար այն նախատեսված է, միայն այն բանից հե-

տո, երբ վերջինս ավանդապահի կողմից տեղյակ է պահվել 77-րդ հոդվածի 1(ե) կետի համաձայն:

Հոդված 79

Պայմանագրերի տեքստերում կամ հաստատված օրինակներում եղած սխալների ուղղումը

1. Եթե պայմանագրի բնագիր լինելը հաստատվելուց հետո այն ստորագրող պետությունները և պայմանավորվող պետություններն ընդհանուր համաձայնությամբ հավաստում են, որ դրանում սխալ կա, ապա, եթե նրանք չեն որոշում այլ միջոց կիրառել, այդ սխալն ուղղում են հետևյալ ճանապարհով.

- a) տեքստի մեջ համապատասխան ուղղում մտցնելով և պատշաճ ձևով լիազորված ներկայացուցիչների միջոցով այդ ուղղումը նախակնքելով,
- b) սխալն ուղղելու մասին, որը համաձայնել են կատարել փաստաթուղթ կազմելով կամ նման փաստաթղթեր փոխանակելով, կամ
- c) պայմանագրի ուղղված ամբողջ տեքստը կազմելով նույն կարգով, ինչպես իսկական տեքստը կազմելու ժամանակ:

2. Եթե խոսքը վերաբերում է ավանդապահի պահպանությանը հանձնված պայմանագրին, ապա վերջինս սխալի և այն ուղղելու առաջարկության մասին ծանուցում է պայմանագիրն ստորագրող պետություններին և սահմանում է համապատասխան ժամանակամիջոց, որի ընթացքում կարող է այդ առաջարկության դեմ առարկություն արվել: Եթե մինչև այդ ժամանակի ավարտը.

- a) առարկություն չի կատարվել, ավանդապահն ուղղումը մտցնում է տեքստի մեջ և այդ ուղղումը նախակնքում է, կազմում է տեքստն ուղղելու մասին արձանագրություն և պատճենն ուղարկում է մասնակիցներին և մասնակից դառնալու իրավունք ունեցող պետություններին,
- b) եղել է առարկություն, ավանդապահն այդ առարկության մասին տեղյակ է պահում պայմանագիրն ստորագրող պետություններին և պայմանավորվող պետություններին:

3. 1-ին և 2-րդ կետերում շարադրված կանոնները կիրառվում են նաև այն դեպքերում, երբ տեքստի բնագիր լինելը սահմանվել է երկու կամ մի քանի լեզուներով և տարբեր տեքստերի միջև նկատվել է անհամապատասխանություն, որը պայմանագիրն ստորագրող պետությունների և պայմանավորվող պետությունների ընդհանուր համաձայնությամբ պետք է ուղղվի:

4. Ուղղված տեքստը փոխարինում է սխալ պարունակող տեքստին սկզբից ab initio, եթե միայն պայմանագիրն ստորագրող պետությունները և պայմանավորվող պետություններն այլ բան չեն որոշում:

5. Գրանցված պայմանագրի տեքստի ուղղման մասին տեղյակ է պահվում Միավորված ազգերի կազմակերպության Քարտուղարությանը:

6. Եթե սխալը նկատվում է վավերացված պատճենում, ավանդապահը կազմում է ուղղումը պարունակող արձանագրություն, և պատճենն ուղարկում է պայմանագիրն ստորագրած պետություններին և պայմանավորվող պետություններին:

Հոդված 80

Պայմանագրերի գրանցումը և հրապարակումը

1. Ուժի մեջ մտնելուց հետո պայմանագիրն ուղարկվում է Միավորված ազգերի կազմակերպության Քարտուղարություն գրանցելու կամ գործերի մեջ պահելու և ցուցակի մեջ մտցնելու հանգամանքից ելնելով հրապարակելու համար:

2. Ավանդապահ նշանակվելը նրան լիազորում է կատարել նախորդ կետում նշված գործողությունները:

ՄԱՍ 8

ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՀՈՂՎԱԾՆԵՐ

Հոդված 81

Ստորագրում

Սույն Կոնվենցիան ստորագրության համար բաց է Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամ պետությունների կամ մասնագիտացված հաստատություններից որևէ մեկի անդամների, կամ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության և կամ Միջազգային դատարանի ստատուտի մասնակիցների, ինչպես նաև այլ պետությունների համար, որոնք հրավիրված են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից սույն Կոնվենցիայի անդամ դառնալու հետևյալ կերպ, մինչև 1969թ. նոյեմբերի 30-ը Ավստրիայի Հանրապետության արտաքին գործերի դաշնային նախարարությունում, իսկ այդ ժամկետից հետո և մինչև 1970թ. ապրիլի 30-ը՝ Նյու Յորքում Միավորված ազգերի կազմակերպության Կենտրոնակայանում:

Հոդված 82

Վավերացում

Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Հոդված 83

Միանալը

Սույն Կոնվենցիային կարող է միանալ 81-րդ հոդվածում նշված ցանկացած դասին պատկանող պետություն: Միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Հոդված 84

Ուժի մեջ մտնելը

1 Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում երեսուցիցերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից հաշված երեսուներորդ օրը:

2. Երեսունհինգերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո Կոնվենցիան վավերացնող կամ դրան միացող յուրաքանչյուր պետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո՝ երեսուներորդ օրը:

Հոդված 85

Բնագրային տեքստեր

Սույն Կոնվենցիայի բնագիրն անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն է, որի տեքստերը հավասարապես նույնական են, ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Ի ՀԱՎԱՍՏՈՒԽՆ ՈՐԻ իրենց կառավարությունների կողմից պատշաճ ձևով լիազորված ներքոստորագրյալ լիազոր ներկայացուցիչներն ստորագրեցին սույն Կոնվենցիան:

ԿԱՏԱՐՎԵԼ Է ՎԻԵՆՆԱՅՈՒՄ հազար ինը հարյուր վաթսունինը թվականի մայիսի քսաներեքին:

ՀԱՎԵԼՎԱԾ

1. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կազմում և տնօրինում է որակյալ իրավաբաններից կազմված հաշտարար միջնորդների ցուցակը: Այդ նպատակով յուրաքանչյուր պետության, որը Միավորված ազգերի կազմակերպության անդամ է կամ սույն Կոնվենցիայի մասնակից, հրավիրվում է առաջարկելու երկուական հաշտարար միջնորդների թեկնածություններ, և այդ ձևով առաջարկված անձանց ազգանուններից կազմվում է ցուցակ: Հաշտարար միջնորդները, այդ թվում նաև պատահմամբ թափուր մնացած տեղերի համար նշանակված միջնորդները, նշանակվում են հինգ տարի ժամկետով, որը կարող է նորոգվել: Հաշտարար միջնորդը, իր նշանակման ժամկետը լրանալուց հետո էլ, համաձայն հաջորդ կետի դրույթների, պետք է շարունակի կատարել ցանկացած գործառույթ, որի համար նա ընտրվել է:

2. Եթե 66-րդ հոդվածի դրույթների համաձայն Գլխավոր քարտուղարին ներկայացվում է խնդրանք, նա վեճը քննարկման է հանձնում հետևյալ կարգով կազմավորված համաձայնեցման հանձնաժողովին: Վեճի մի կողմ հանդիսացող պետությունը կամ պետությունները նշանակում են.

ա) այդ պետության կամ այդ պետություններից մեկի քաղաքացի հանդիսացող մեկ հաշտարար միջնորդ, որը կարող է ընտրվել 1-ին կետում նշված անձանցից կամ այլ անձանցից, և

բ) այդ պետության կամ այդ պետություններից մեկի քաղաքացին, որն ընտրվում է ցուցակից:

Վեճի մյուս կողմը հանդիսացող պետությունը կամ պետությունները նույն կարգով նշանակում են երկու հաշտարար միջնորդներ: Կողմերի ընտրած չորս հաշտարար միջնորդները պետք է նշանակվեն Գլխավոր քարտուղարի համապատասխան խնդրանքն ստանալու օրվանից հաշվված վաթսուր օրվա ընթացքում:

Այդ չորս հաշտարար միջնորդներն իրենցից վերջինի նշանակման օրվանից հետո վաթսուր օրվա ընթացքում ցուցակում ընդգրկված անձանցից նշանակում են հինգերորդ հաշտարար միջնորդին, որը կլինի նախագահ:

Եթե Նախագահը կամ մյուս հաշտարար միջնորդներից որևէ մեկը նրանց նշանակման համար նշված ժամկետներում չեն նշանակվում, ապա նրանք նշանակվում են Գլխավոր քարտուղարի կողմից համապատասխան ժամկետն անցնելուց հետո վաթսուր օրվա ընթացքում: Գլխավոր քարտուղարը Նախագահին կարող է նշանակել կամ ցուցակում ընդգրկված անձանցից, կամ Միջազգային իրավունքի հանձնաժողովի անդամներից: Նշանակման համար նախատեսված ցանկացած ժամկետ, վեճի կողմերի համաձայնությամբ, կարող է երկարացվել:

Ցանկացած թափուր տեղ պետք է լրացվի նախնական նշանակման համար նախատեսված կարգով:

3. Համաձայնեցման հանձնաժողովն ինքն է սահմանում իր ընթացակարգը: Կողմերի համաձայնությամբ հանձնաժողովը կարող է ցանկացած կողմին առաջարկել ներկայացնելու իր կարծիքը գրավոր կամ բանավոր: Հանձնաժողովը որոշում է ընդունում կամ հանձնարարություն է տալիս իր հինգ անդամների ձայների մեծամասնությամբ:

4. Հանձնաժողովը կարող է վեճի կողմերի ուշադրությունը հրավիրել վեճի հոժարակամ լուծումը թեթևացնող ցանկացած միջոցի վրա:

5. Հանձնաժողովը լսում է կողմերին, քննարկում է պահանջները և առարկությունները և կողմերի քննարկմանն է ներկայացնում վեճի հոժարակամ լուծմանը հասնելու առաջարկություններ:

6. Հանձնաժողովն իր զեկույցը պետք է ներկայացնի իր կազմավորման ժամկետից հաշվված տասներկու ամսվա ընթացքում: Այդ զեկույցն ուղարկվում է Գլխավոր քարտուղարին և տրվում է վեճի կողմերին: Հանձնաժողովի զեկույցը, ներառյալ դրանում պարունակվող փաստերի վերաբերյալ և իրավունքի վերաբերյալ ցանկացած եզրակացություն, կողմերի համար պարտադիր չեն, և միայն վեճի հոժարակամ լուծումը թեթևացնելու նպատակով կողմերին ներկայացվող հանձնարարական են:

7. Գլխավոր քարտուղարը հանձնաժողովին տրամադրում է օգնություն և սպասարկման միջոցներ, որոնց կարիքը նա կարող է ունենալ: Հանձնաժողովի ծախսերը կրում է Միավորված ազգերի կազմակերպությունը:

(Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիա: ՄԱԿ: Նյու Յորք, 1970թ)

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին

Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը համոզված լինելով, որ միմյանց միջև բարեկամական հարաբերությունների, բարիդրացիության և փոխաշահավետ համագործակցության անփոփոխ զարգացումն ու ամրապնդումը համապատասխանում են երկու երկրների ժողովուրդների կենսական շահերին և լավագույնս նպաստելու են նրանց համակողմանի զարգացմանն ու բարգավաճմանը,

հիմնվելով մշակութային նմանության, հոգևոր շփման բազմադարյա ավանդույթների և մեր ժողովուրդների բարեկամական կապերի վրա,

հաստատելով իրենց կողմնակցությունը Սիավորված Ազգերի Կազմակերպության, Հելսինկյան Եզրափակիչ ակտի և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության այլ փաստաթղթերի նպատակներին ու սկզբունքներին, միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին,

ձգտելով համագործակցության Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում և վճռականությամբ լեցուն լինելով, համաձայն Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում երկու պետությունների կողմից ստորագրած փաստաթղթերում ամրագրված նպատակների և սկզբունքների, պահպանելու այն պարտավորությունները, որոնք բխում են Համագործակցությունում նրանց մասնակցությունից, մասնավորապես, 1992թ. մայիսի 15-ի Կոլեկտիվ անվտանգության պայմանագրից,

համարելով, որ երկու պետությունների պատմական ճակատագիրն ու բարեկեցությունը անխզելիորեն կապված են Անդրկովկասյան տարածաշրջանում, ինչպես նաև ողջ աշխարհում խաղաղության, անվտանգության և կայունության ամրապնդման հետ,

հաշվի առնելով միջազգային ասպարեզում երկկողմ հետաքրքրություններ կայացնող կարևորագույն հարցերի շուրջ երկու պետությունների փոխհամաձայնեցված գործողությունների կարևորությունը,

ձգտելով այդ նպատակներով նպաստել ռազմաքաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառներում համագործակցության խորացմանը,

հաստատելով նաև իրենց կողմնակցությունը պահպանելու մարդու իրավունքների բնագավառում միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերը, համաձայնվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Բարձր Պայմանավորվող Կողմերը ամեն կերպ կամրապնդեն երկու երկրների միջև ավանդական բարեկամական հարաբերություններն ու հա-

մակողմանի համագործակցությունը քաղաքական, տնտեսական, ռազմական, գիտական, մշակութային և այլ բնագավառներում:

Նրանք պարտավորվում են անշեղորեն ղեկավարվել միմյանց պետական ինքնիշխանության փոխադարձ հարգանքի, հավասարության և միմյանց ներքին գործերին չմիջամտելու, ուժի չկիրառման կամ ուժով սպառնանքի, տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության վեճերի խաղաղ կարգավորման, մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի, պարտավորությունների պարտաճանաչ կատարման սկզբունքներով և միջազգային իրավունքի այլ հանրաճանաչ նորմերով:

Հոդված 2

Բարձր Պայմանավորվող Կողմերը միմյանց հետ սերտորեն կհամագործակցեն Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության պաշտպանության և անվտանգության ապահովման գործում: Նրանք, համատեղ պաշտպանության, խաղաղության ու փոխադարձ անվտանգության ապահովման նպատակով, միմյանց միջև անհապաղորեն կանցկացնեն խորհրդատվություններ ամեն անգամ, երբ, Կողմերից մեկի կարծիքով, առաջացել է նրա վրա զինված հարձակման սպառնալիք: Այդ խորհրդատվությունների ընթացքում կորոշվի օգնության անհրաժեշտությունը, ձևերն ու չափերը, որը ստեղծված իրավիճակի հաղթահարման նպատակով կցուցաբերվի մեկ Բարձր Պայմանավորվող Կողմից մյուս Բարձր Պայմանավորվող Կողմին:

Հոդված 3

Բարձր Պայմանավորվող Կողմերը համատեղ կձեռնարկեն իրենց համար բոլոր մատչելի միջոցները՝ խաղաղության դեմ ուղղված սպառնալիքն ու խաղաղության խախտումը կանխելու, նրանց նկատմամբ յուրաքանչյուր պետության կամ պետությունների խմբի կողմից ձեռնարկված ագրեսիային հակազդելու համար: Կողմերը միմյանց անհրաժեշտ, ներառյալ՝ ռազմական, օգնություն կցուցաբերեն համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության 51 հոդվածով սահմանված կոլեկտիվ պաշտպանության իրավունքի:

Հոդված 4

Բարձր Պայմանավորվող Կողմերը, ինքնուրույն լուծելով ազգային անվտանգության ապահովման և զինվորական շինարարության խնդիրները, այդ ոլորտներում սերտ համագործակցություն կիրականացնեն և, սույն Պայմանագրի, 1995թ. մարտի 16-ի Հայաստանի Հանրապետության տարածքում Ռուսաստանի Դաշնության ռազմակայանների մասին երկկողմ պայմանագրի, ինչպես նաև այլ համապատասխան համաձայնագրերի հիման վրա, կսահմանեն փոխներգործության ձևերը:

Բարձր Պայմանավորվող Կողմերը կընդլայնեն իրենց ազգային զինված ուժերի փոխներգործությունը: Կողմերից մեկի անվտանգության նկատմամբ սպառնալիքի առաջացման կամ նրանցից որևէ մեկի վրա զինված հարձակման դեպքում Բարձր Պայմանավորվող Կողմերը կառաջնորդվեն ռազմական

օբյեկտների և կառույցների փոխադարձ օգտագործման սկզբունքով, ինչը իրականացվելու է ազգային զինված ուժերի համար նախատեսված կանոնների, ինչպես նաև պաշտպանական նշանակության օբյեկտների համատեղ շահագործմամբ:

Բարձր Պայմանավորվող Կողմերը կհամագործակցեն ռազմատեխնիկական քաղաքականության անցկացման, ինչպես նաև, հաշվի առնելով սպառազինության ստանդարտիզացիան, ռազմական արտադրության կոուպերացիայի բնագավառներում, ներառյալ՝ ռազմական ծրագրերի համաձայնեցված ֆինանսավորումը:

Բարձր Պայմանավորվող Կողմերը, հաշվի առնելով սահմանված միջազգային կանոնները, կհամագործակցեն նաև ռազմական տեխնոլոգիաների և զենքի արտահանման ու ներմուծման քաղաքականության անցկացման ուղիքում:

Հոդված 5

Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանությունը Անկախ Պետությունների Համագործակցության կազմի մեջ չմտնող պետությունների հետ կիրականացվի Բարձր Պայմանավորվող Կողմերի համատեղ ջանքերով հիմնվելով իրենց միջև գոյություն ունեցող համապատասխան պայմանագրերի վրա և ելնելով իրենց սեփական ու ԱՊՀ կոլեկտիվ անվտանգության շահերից:

Հոդված 6

Բարձր Պայմանավորվող Կողմերը կշարունակեն սերտորեն համագործակցել արտաքին քաղաքականության, խաղաղության ամրապնդման, կայունության բարձրացման և անվտանգության բնագավառներում ինչպես Անդրկովկասյան տարածաշրջանում, այնպես էլ ողջ աշխարհում: Նրանք կնպաստեն զինաթափման գործընթացի շարունակմանը, վստահության ու անվտանգության ամրապնդման նպատակով միջոցների կիրառմանը, ինչպես նաև ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի ու ԱՊՀ-ի խաղաղարար դերի մեծացմանն օժանդակող մեխանիզմների և ինստիտուտների կայացմանը: Բարձր Պայմանավորվող Կողմերը ջանքեր կգործադրեն տարածաշրջանային հսկամարտությունների և իրենց շահերին վնասող այլ իրավիճակների կարգավորման համար:

Բարձր Պայմանավորվող Կողմերը համատեղ կձգտեն իրավիճակի բարելավմանը և խաղաղության ու անվտանգության ապահովմանը ինչպես Անդրկովկասյան տարածաշրջանում, այնպես էլ ողջ աշխարհում, այդ թվում, անհրաժեշտության դեպքում փոխհամաձայնեցված գործողություններ իրականացնելու համար, կանցկացնեն խորհրդատվություններ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող միջազգային խնդիրների շուրջ:

Հոդված 7

Բարձր Պայմանավորվող Կողմերը պարտավորվում են գերծ մնալ մասնակցությունից որևէ գործողություններում կամ միջացառումներում, ինչպես

նաև միություններում և դաշինքներում, որոնք ուղղված են ընդդեմ մյուս Բարձր Պայմանավորվող Կողմի ինքնիշխանությանը, անկախությանը ու տարածքային ամբողջականությանը, և թույլ չտալ, որպեսզի իրենց տարածքները օգտագործվեն ագրեսիայի կամ այլ բռնի գործողությունների համար ընդդեմ Բարձր Պայմանավորվող Կողմի:

Բարձր Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրը արգելում և կանխում է իր տարածքում կազմակերպությունների ու խմբերի, ինչպես նաև առանձին անձանց գործունեությունը, որոնք ուղղված են ընդդեմ մյուս Բարձր Պայմանավորվող Կողմի պետական ինքնիշխանությանը, անկախությանն ու տարածքային ամբողջականությանը:

Հոդված 8

Բարձր Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրը կապահովի մյուս Բարձր Պայմանավորվող Կողմի քաղաքացիների անձի իրավունքներն ու ազատությունները, թույլ չի տա ազգային, կրոնական, լեզվական, քաղաքական և այլ համոզմունքների կամ սեռի պատկանելության հիման վրա խտրականության որևէ ձևի դրսևորում՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի համաձայն: Կապահովվեն այդ քաղաքացիների տեղաշարժման ազատությունը և, Կողմերի օրենսդրության համաձայն, երկու պետություններում բնակվելու, աշխատանք ստանալու ու անշարժ գույքի ձեռք բերման իրավունքները:

Բարձր Պայմանավորվող Կողմերը կկնքեն առանձին համաձայնագրեր Կողմերից մյուսի տարածքում մշտապես բնակվող իրենց քաղաքացիների իրավունքների պաշտպանության և ապահովման համար:

Հոդված 9

Բարձր Պայմանավորվող Կողմերը կգարգացնեն իրավահավասար և փոխշահավետ համագործակցություն քաղաքական, առևտրատնտեսական, գիտատեխնիկական, հումանիտար և այլ բնագավառներում:

Վերոհիշյալ ուղղություններից բացի, գերապատվությունը տրվելու է միջազգային կազմակերպություններում Բարձր Պայմանավորվող Կողմերի շահերին չհակասող զանազան նախաձեռնությունների իրականացմանն ուղղված համագործակցությանը, մարդու իրավունքների ապահովման համաձայն հիմնարար միջազգային փաստաթղթերի, համագործակցություն շրջակա միջավայրի պաշտպանության, կազմակերպված հանցագործության, ահաբեկչության և թմրադեղերի անօրինական շրջանառության դեմ պայքարի բնագավառներում:

Վերոհիշյալ և այլ խնդիրների շուրջ, որոնք ներկայացնում են փոխադարձ հետաքրքրություն, Բարձր Պայմանավորվող Կողմերը կկնքեն առանձին համաձայնագրեր համագործակցության մասին:

Հոդված 10

Բարձր Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում գտնվող մյուս Բարձր Պայմանավորվող Կողմի պետական գույքի, իրավաբանական անձանց ու քաղաքացիների գույքի իրավական կարգավիճակը կանոնակարգ-

վում է գործող բազմակողմանի համաձայնագրերի և այն Կողմի օրենսդրության համաձայն, որի տարածքում գտնվում է տվյալ գույքը, եթե հետագայում Բարձր Պայմանավորվող Կողմերի միջև համապատասխան երկկողմ համաձայնագրերում այլ կարգ չի նախատեսվելու:

Եթե Բարձր Պայմանավորվող Կողմերից որևէ մեկը հայտարարում է, որ մյուս Բարձր Պայմանավորվող Կողմի տարածքում գտնվող գույքը, որի նկատմամբ սեփականության պահանջ են ներկայացնում երրորդ անձերը կամ պետությունները, իրեն է պատկանում, ապա մյուս Կողմը, մինչև այդ գույքի պատկանելության հարցի լուծումը, պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները նման գույքի պաշտպանության և ապահովման համար:

Հոդված 11

Բարձր Պայմանավորվող Կողմերը, մեծ նշանակություն տալով կայուն զարգացման ու երկու պետությունների տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործմանը, փոխգործակցելու են շուկայական հարաբերությունների հիման վրա անցկացվելիք տնտեսական բարենորոգումների իրականացման գործում, նպաստելու են երկու պետությունների միջև տնտեսական ինտեգրացիայի խորացմանը և ընդհանուր տնտեսական տարածքի ձևավորման համար պայմանների ստեղծմանը, համաձայն Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում նրանց կողմից կնքած բազմակողմ ու երկկողմ պայմանագրերից բխող պարտավորությունների:

Այդ նպատակներով, Բարձր Պայմանավորվող Կողմերը ձգտելու են համաձայնեցնել իրենց գործողությունները ֆինանսական, դրամավարկային, արժույթային, հարկային, մաքսային և սոցիալական քաղաքականության իրականացման հարցում:

Բարձր Պայմանավորվող Կողմերը նախապես տեղեկացնելու են միմյանց տնտեսական որոշումների մասին, որոնք կարող են ազդել Բարձր Պայմանավորվող Կողմերից մյուսի շահերի վրա:

Հոդված 12

Բարձր Պայմանավորվող Կողմերը կնպաստեն առևտրատնտեսական ու գիտատեխնիկական հարաբերությունների զարգացմանը բոլոր մակարդակներում և իրենց տարածքներում ձեռնարկությունների ու ձեռնարկատերերի գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, այդ թվում ուղղակի ներդրումների բնագավառում: Կողմերը կօժանդակեն համատեղ ֆինանսաարդյունաբերական խմբերի կարգավորմանը, տրանսագգային միավորումների, ինչպես նաև համագործակցության այլ առաջադեմ ձևերի ստեղծմանն ու գործունեությանը:

Կողմերը կնպաստեն տնտեսավարող անձերի միջև փոխշահավետ արտադրական ու գիտատեխնիկական համագործակցության պահպանմանն ու զարգացմանը, նախ և առաջ ժամանակակից գիտատար արտադրանքի մշակման ու արտադրության ոլորտում, ներառյալ՝ արտադրանքը պաշտպա-

նության կարիքների համար, այդ թվում միջպետական և միջշուկային համագործակցության համակարգված ծրագրերի ձևավորման ճանապարհով:

Հոդված 13

Բարձր Պայմանավորվող Կողմերը գործողություններ կձեռնարկեն ազգային արժույթների փոխարկելիության ապահովման, նրանց կայունության պահպանման, ազգային արժույթային շուկաների զարգացման համար և կհամաձայնեցնեն արժույթային կուրսերի սահմանման կարգը:

Հոդված 14

Բարձր Պայմանավորվող Կողմերը կրնդլայնեն իրենց համագործակցությունը տրանսպորտի ու կապի, տեղեկամուհիկացիաների ու ինֆորմատիկայի ազգային համակարգերի զարգացման հարցում, օժանդակելով տվյալ ասպարեզներում ձևավորված համալիրների և միասնական համակարգերի պահպանմանն ու ռացիոնալ օգտագործմանը:

Երկաթուղային, օդային, ավտոմոբիլային, ծովային և գետային տրանսպորտներով բեռների ու ուղևորների տեղափոխումները երկու պետությունների միջև և նրանց տարածքներով, այդ թվում համապատասխան նավահանգիստների ու կայարանների օգտագործման միջոցով, ինչպես նաև երկու պետությունների տարածքներում գտնվող գլխավոր խողովակաշարերի, էլեկտրացանցերի ու կապի գծերի օգտագործումն իրականացվելու է առանձին համաձայնագրով սահմանվող փոխադարձաբար օգտավետ պայմաններով և կարգով:

Բարձր Պայմանավորվող Կողմերը կզարգացնեն համագործակցությունը վառելիքաէներգետիկ բնագավառում, այդ թվում էներգետիկայի համատեղ արտադրության և տեղափոխման միջոցով: Այդ նպատակով Կողմերը կնպաստեն համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը:

Հոդված 15

Բարձր Պայմանավորվող Կողմերը, գիտակցելով գիտատեխնիկական բնագավառում համագործակցելու առաջնային դերը, երկու պետությունների մտավոր, գիտական ու տեխնիկական ներուժի առավել ռացիոնալ օգտագործման նպատակով, կձեռնարկեն բոլոր միջոցները, որպեսզի ստեղծեն ընդհանուր գիտատեխնիկական տարածք:

Կողմերը, հետևելով մտավոր ու արդյունաբերական սեփականության ասպարեզում իրենց օրենսդրություններին ու միջազգային պարտավորություններին, կհամագործակցեն ֆունդամենտալ ու կիրառական գիտությունների բնագավառում, ներառյալ արդյունաբերական հետազոտությունների, ժամանակակից գիտության, տեխնիկայի ու տեխնոլոգիաների նվաճումների փոխադարձ օգտագործման բնագավառում:

Կողմերը կնպաստեն իրենց ազգային ակադեմիաների և այլ գիտական հաստատությունների միջև շփումների ընդլայնմանը, կիրականացնեն ինտելեկտուալ գործունեությունը ապահովող փոխադարձ ենթակառույցների զարգացումը, կաջակցեն համատեղ գիտատեխնիկական կոլեկտիվների բնագավառում ընդհանուր ինֆորմացիոն ցանցի մշակմանն ու ստեղծմանը, կքաջա-

լերեն ընդհանուր ծրագրերի ու նախագծերի իրականացումը և գիտնականների, փորձագետների ու մասնագետների միջև փորձի փոխանակումը, ինչպես նաև կատեղծեն բարենպաստ պայմաններ գիտական կադրերի պատրաստման համար:

Հոդված 16

Բարձր Պայմանավորվող Կողմերը ամեն կերպ կօժանդակեն համագործակցության հետագա զարգացմանը հումանիտար բնագավառում, կամրայնդեն կապերը մշակույթի զանազան ասպարեզներում, կնպաստեն ստեղծագործական միությունների, մշակութային հաստատությունների, գրականության ու արվեստի գործիչների միջև գործնական կապերի ընդլայնմանը:

Հաշվի առնելով ռուսաց լեզվի պատմականորեն ձևավորված դերը Ռուսաստանի և Հայաստանի ժողովուրդների փոխհարաբերություններում, Հայկական Կողմը կստեղծի բոլոր պայմանները Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում ռուսերենի խորացված ուսումնասիրության համար: Ռուսական Կողմը կստեղծի բոլոր պայմանները, որպեսզի բավարարի Ռուսաստանյան Դաշնության տարածքում հայոց լեզվի ուսումնասիրության պահանջը:

Կողմերը կնպաստեն մշակութային կենտրոնների ստեղծմանն ու գործունեությանը, կփոխներգործակցեն ժողովրդական կրթության, կադրերի պատրաստման, մշակույթի, մամուլի, տեղեկատվության, զբոսաշրջիկության ու սպորտի ասպարեզներում:

Հոդված 17

Բարձր Պայմանավորվող Կողմերը կզարգացնեն համագործակցությունը առողջապահության, սանիտար-համաճարակաբանական հսկողության, աշխատանքի պաշտպանության, սոցիալական պաշտպանության և կենսաթոշակային ապահովման բնագավառներում:

Հոդված 18

Սույն Պայմանագրի դրույթները չեն շոշափում միջազգային այլ պայմանագրերից բխող Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, որոնց մասնակիցներն են հանդիսանում նրանք:

Հոդված 19

Սույն Պայմանագրի մեկնաբանման և կիրառման վերաբերյալ վեճերը ենթակա են լուծման Բարձր Պայմանավորվող Կողմերի միջև խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 20

Սույն Պայմանագրի դրույթների իրականացման ուղղությամբ տարվող գործունեության համակարգման նպատակով Բարձր Պայմանավորվող Կողմերը անհրաժեշտության դեպքում կստեղծեն համատեղ խորհրդատվական մարմիններ հատուկ համաձայնագրերի կնքման միջոցով:

Հոդված 21

Բարձր Պայմանավորվող Կողմերը կնպաստեն իրենց միջև խորհրդարանական կապերի ընդլայնմանը:

Սույն Պայմանագրի իրականացմանը նպաստելու նպատակով Բարձր Պայմանավորվող Կողմերը կհիմնեն մշտական գործող միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողով:

Հոդված 22

Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ է մտնում վավերագրերի փոխանակման օրվանից, որը տեղի կունենա Երևանում:

Հոդված 23

Սույն Պայմանագիրը կնքվում է քսանհինգ տարի ժամկետով և ինքնըստինքյան ամեն անգամ կերկարաձգվի հետագա տասը տարվա ժամկետով, եթե Բարձր Պայմանավորվող Կողմերից ոչ մեկը ընթացիկ ժամկետի ավարտից առնվազն մեկ տարի առաջ չի հայտնի մյուս Բարձր Պայմանավորվող Կողմից դրա գործողությունը դադարեցնելու իր ցանկության մասին:

Կնքված է Մոսկվայում, 1997 թվականի օգոստոսի 29-ին, երկու քնօրինակից, յուրաքանչյուրը հայերեն ու ռուսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության կողմից՝ Լ. Տեր-Պեդրոսյան

Ռուսաստանի Դաշնության կողմից՝ Բ. Ելցին

ՀՈՉԱԿԱԳԻՐ

Հայաստանի անկախության մասին

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը՝ արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում,

եյնելով Սարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից,

կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա,

գարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները,

խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը,

ՀՈՉԱԿԱՌՄԷ

ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՍԿԻՉԲԸ:

1. Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն, կրճատ՝ Հայաստան: Հայաստանի Հանրապետությունը ունի իր դրոշմ, դինանշանը և հիմներ:

2. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ: Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները:

3. Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունն իրագործում է անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների հիման վրա: Հանրապետության ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Արտերկրի հայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք ունի: Հայաստանի Հանրապետության քաղաքացիները գտնվում են նրա պաշտպանության և աջակցության ներքո: Հայաստանի Հանրապետությունը ապահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից:

5. Հայաստանի Հանրապետությունը իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունն ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և

հասարակական անվտանգության մարմիններ: Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ սպառազինության իր մասնաբաժնի իրավունքը: Հայաստանի Հանրապետությունը ինքն է որոշում իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը:

Այլ երկրների գորամիավորումները, նրանց ռազմական բազաները և շինությունները կարող են տեղաբաշխվել Հայաստանի Հանրապետության տարածքում միայն Գերագույն խորհրդի որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կարող են օգտագործվել միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ:

6. Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ, ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը:

7. Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով: Հայաստանի Հանրապետությունն ունի ԽՍՀՄ ազգային հարստություն, այդ թվում՝ ոսկու պաշարների, ալմաստի և վալյուտային ֆոնդերի մասնաբաժնի իրավունք:

8. Հայաստանի Հանրապետությունը սեփականության բազմաձևության հիման վրա որոշում է իր տնտեսավարման սկզբունքները և կարգը, հիմնում սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ, հարկային և մաքսային ծառայություններ:

9. Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է խոսքի, մամուլի, խղճի ազատություն:

օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում. բազմակուսակցություն, կուսակցությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացում:

10. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է հայերենի, որպես պետական լեզվի, գործառնությունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթության, գիտության և մշակույթի սեփական համակարգ:

11. Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին:

12. Մույն Հռչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մշակման, իսկ գործող Սահմանադրության մեջ՝ փոփոխությունների և լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար:

ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ՝ Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ Գերագույն խորհրդի քարտուղար՝ Ա ՍԱՀԱԿՅԱՆ

23 օգոստոսի 1990 թվականի, քաղ. Երևան

ԿՈՆՎԵՆՑԻԱ

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՆԽԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՊԱՏԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԵՎ ՄԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 1948 թվականի Դեկտեմբերի 9 - ի 260 ձ. (III) ԲԱՆԱՁԵՎՈՎ ՈՒԺԻ ՄԵՁ ՄՏԵԼ Է 1961 թ. հունվարի 12-ին՝ XIII հոդվածին համապատասխան:

Պայմանավորվող կողմերը, Ուշադրության առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան իր 1946 թվականի դեկտեմբերի 11-ի 96 (D) բանաձևում հայտարարել էր, որ ցեղասպանությունը միջազգային իրավունքի նորմերը խախտող և Միավորված ազգերի կազմակերպության ոգուն ու նպատակներին հակասող հանցագործություն է, և որ քաղաքակիրթ աշխարհը դատապարտում է այն,

ընդունելով, որ ամբողջ պատմության ընթացքում ցեղասպանությունը մեծ կորուստներ է պատճառել մարդկությանը, և համոզված լինելով, որ այդ նողկալի պատուհասից մարդկությանը փրկելու համար անհրաժեշտ է միջազգային համագործակցություն, համաձայնության են գալիս, ինչպես դա նախատեսված է ստորև.

ՀՈԴՎԱԾ I

Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից, թե այն խաղաղ, թե պատերազմական ժամանակ է կատարվում, հանցագործություն է, որը խախտում է միջազգային նորմերը, և որի դեմ նրանք պարտավորվում են կանխման միջոցներ ձեռնարկել և պատժել դրա կատարման համար:

ՀՈԴՎԱԾ II

Սույն Կոնվենցիայում ցեղասպանության տակ հասկացվում են հետևյալ գործողությունները, որոնք կատարվում են որևէ ազգային, էթնիկական ցեղային կամ կրոնական խումբ, որպես այդպիսին լիովին կամ մասամբ ոչնչացնելու մտադրությամբ.

- ա) նման խմբի անդամների սպանությունը.
- բ) նման խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր խանգարում պատճառելը.
- գ) որևէ խմբի համար կանխամտածված այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնք նախորոշված են նրան լիովին կամ մասամբ ֆիզիկապես ոչնչացնելու համար.
- դ) նման խմբի միջավայրում մանկածնությունը կանխելու նպատակով նախորոշված միջոցները.
- ե) երեխաների բռնի հանձնումը մարդկանց մի խմբից մյուսին:

ՀՈԴՎԱԾ III

Պատժելի են հետևյալ գործողությունները՝
ա) ցեղասպանությունը.
բ) ցեղասպանություն կատարելու նպատակով նյութիկո դավադրությունը.
գ) ցեղասպանություն կատարելու ուղղակի և հրապարակային հրահրումը.
դ) ցեղասպանություն կատարելու հանցավորը.
ե) հանցակցությունը ցեղասպանությանը:

ՀՈԴՎԱԾ IV

Ցեղասպանություն կամ III հոդվածում թվարկված գործողություններից որևէ մեկը կատարած անձինք պատժի են ենթակա անկախ այն բանից, թե նրանք ըստ սահմանադրության պատասխանատու կառավարիչներ են, պաշտոնատար, թե մասնավոր անձինք:

ՀՈԴՎԱԾ V

Սույն Կոնվենցիայի դրույթներն ուժի մեջ մտցնելու համար պայմանավորվող կողմերը պարտավորվում են անհրաժեշտ օրենսդրություն անցկացնել՝ յուրաքանչյուրն իր սահմանադրական արարողակարգով, և, մասնավորապես, այն անձանց պատժելու արդյունավետ միջոցներ նախատեսել, որոնք մեղավոր են ցեղասպանության կամ III հոդվածում նշված այլ հանցագործություններ կատարելու համար:

ՀՈԴՎԱԾ VI

Ցեղասպանություն կամ III հոդվածում թվարկված այլ գործողություններ կատարելու համար մեղադրվող անձինք պետք է դատվեն այն պետության իրավասու դատարանի կողմից, որի տարածքում կատարվել է այդ գործողությունը, կամ այնպիսի միջազգային քրեական դատարանի կողմից, որը կարող է իրավագործություն ունենալ սույն Կոնվենցիայի կողմերի նկատմամբ, որոնք ճանաչել են նման դատարանի իրավասությունը:

ՀՈԴՎԱԾ VII

Մեղավորների հանձնման առումով ցեղասպանությունը և III հոդվածում թվարկված մյուս գործողությունները չեն դիտվում որպես քաղաքական հանցագործություններ:

Նման դեպքերում պայմանավորվող կողմերը պարտավորվում են հանձնումն իրականացնել իրենց օրենսդրությանը և գործող պայմանագրերին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ VIII

Սույն Կոնվենցիայի յուրաքանչյուր մասնակից կարող է դիմել Միավորված ազգերի համապատասխան մարմնին՝ պահանջելով Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության դրույթներին համապատասխան ձեռնարկել իր կարծիքով բոլոր անհրաժեշտ միջոցները, ցեղասպանության կամ III հոդվածում թվարկված մյուս գործողություններից որևէ մեկը կանխելու և կասեցնելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ IX

Սույն Կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման կամ կատարման հարցի շուրջ պայմանավորվող կողմերի վեճերը, ներառյալ ցեղասպանություն կամ III հոդվածում թվարկված գործողություններից որևէ մեկը կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության շուրջ վեճերը, վեճի կողմերից մեկնումների պահանջով հանձնվում են Միջազգային դատարանի քննարկմանը:

ՀՈԴՎԱԾ X

Սույն Կոնվենցիան, որի անգլերեն, չինարեն, իսպաներեն, ֆրանսերեն և ռուսերեն տեքստերը հավասարապես նույնական են, թվագրվում են 9 դեկտեմբերի 1948 թվականի:

ՀՈԴՎԱԾ XI

Սույն Կոնվենցիան Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամի կամ Կազմակերպության անդամ չհանդիսացող ցանկացած պետության անունից, որը ստացել է Գլխավոր ասամբլեայի հրավերը՝ ստորագրելու Կոնվենցիան, ստորագրման համար բաց կլինի մինչև 1948 թվականի դեկտեմբերի 31-ը:

Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման և վավերացման ակտերը ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր Քարտուղարին:

1950 թվականի հունվարի 1-ից սկսած սույն Կոնվենցիային կարող են միանալ Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ և այդ Կազմակերպության անդամ չհանդիսացող ցանկացած պետություն, որը ստացել է վերոհիշյալ հրավերը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԳԼՈՒԽ I
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 1. ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը նախապատրաստելու, դրա շուրջ բանակցություններ վարելու, այդ պայմանագիրը նախաստորագրելու, ստորագրելու, վավերացնելու կամ հաստատելու, դրան միանալու, ուժի մեջ մտնելու, գրանցելու, դա ժամանակավորապես կիրառելու, կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համար միջազգային պայմանագրի գործողությունը կասեցնելու, դադարեցնելու և դրա հետ կապված այլ հարաբերություններ:

2. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում միջազգային մասնավոր իրավունքի կարգավորման ոլորտում ընդգրկված միջազգային քաղաքացիաիրավական հարաբերությունների վրա, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3.1-րդ կետով սահմանված դեպքի:

ՀՈԴՎԱԾ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ միջազգային իրավունքի այլ սուբյեկտների միջև կնքված գրավոր համաձայնություն է, որը կարգավորվում է միջազգային իրավունքով, սահմանում, փոփոխում կամ դադարեցնում է կողմերի իրավունքները և պարտականությունները, սահմանված կարգով մտնում է իրավաբանական ուժի մեջ և Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է պարտադիր:

2. Սույն օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր է համարվում ցանկացած գրավոր համաձայնություն, որը ձևակերպվել է պայմանագրի, համաձայնագրի, կոնվենցիայի, հուշագրի, արձանագրության, նոտաների փոխանակման կամ միջազգային պրակտիկայում ընդունված այլ անվանմամբ փաստաթղթի տեսքով:

Միջազգային պայմանագիրը կարող է ձևակերպված լինել մեկ ընդհանուր փաստաթղթի կամ փոխկապակցված և միմյանցից անբաժանելի մեկից ավելի փաստաթղթերի տեսքով:

3. Սույն օրենքի համաձայն՝ միջազգային կազմակերպություն է համարվում երկու և ավելի պետությունների կամ դրանց կառավարությունների մաս-

նակցությամբ ստեղծված միջպետական կամ միջկառավարական կազմակերպությունը:

ՀՈԴՎԱԾ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կարող է լինել երկկողմ կամ բազմակողմ:

2. Երկկողմ միջազգային պայմանագրում Հայաստանի Հանրապետության հետ որպես պայմանագրի մյուս կողմ հանդես է գալիս միջազգային իրավունքի մեկ այլ սուբյեկտ:

Երկկողմ միջազգային պայմանագրում (ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ մյուս կողմի հետ) որպես տվյալ պայմանագրի մեկ միասնական (հավաքական) կողմ կարող են հանդես գալ միջազգային իրավունքի մեկից ավելի սուբյեկտներ:

3. Բազմակողմ միջազգային պայմանագրում Հայաստանի Հանրապետության հետ որպես պայմանագրի ինքնուրույն կողմեր հանդես են գալիս միջազգային իրավունքի մեկից ավելի սուբյեկտներ:

ՀՈԴՎԱԾ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով:

2. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի հետ կապված և սույն օրենքով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով և նորմերով:

ՀՈԴՎԱԾ 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն է: Եթե Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացված միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են Հայաստանի Հանրապետության օրենքներով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից չվավերացված Հայաստանի Հանրապետության միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերը չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության օրենքներին:

2. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի նորմերը Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են անմիջականորեն, եթե պայմանագրով նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության ներպետական ակտի ընդունում, կամ եթե վերջինիս ընդունումը չի բխում այդ պայմանագրի պատշաճ կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:

ԳԼՈՒԽ II

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ԵՎ ԱՅԴ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԸ

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի սուբյեկտը Հայաստանի Հանրապետությունն է:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի սուբյեկտներ կարող են լինել օտարերկրյա պետությունները, միջազգային կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային իրավունքի այլ սուբյեկտներ:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր կարող է կնքվել նաև դաշնային կամ միջազգային իրավունքով ընդունված համանման կառուցվածք ունեցող (այսուհետ՝ դաշնային) օտարերկրյա պետությունների դաշնության սուբյեկտի և ինքնավարության կամ այլ կարգավիճակ ունեցող պետական կազմավորման հետ, եթե նրանք դաշնային պետության օրենքների համաձայն ունեն միջազգային պայմանագրեր կնքելու իրավունք:

2. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կարող է կնքվել՝

ա) Հայաստանի Հանրապետության անունից (միջպետական պայմանագիր).

բ) Հայաստանի Հանրապետության կառավարության անունից (միջկառավարական պայմանագիր).

գ) Հայաստանի Հանրապետության հանրապետական գործադիր մարմինների, գլխավոր դատախազության, գիտությունների ակադեմիայի, ինչպես նաև կենտրոնական բանկի անունից (միջգերատեսչական պայմանագիր):

3. Անկախ նրանից, թե միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության կողմից ում անունից է կնքվել (այսուհետ՝ հայկական կողմ) դրանում որպես կողմ և միջազգային պայմանագրի սուբյեկտ հանդես է գալիս Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի Հանրապետությունը պատասխանատու է հայկական կողմի ստանձնած պարտավորությունների կատարման համար:

ՀՈԴՎԱԾ 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության միջպետական պայմանագրով կարգավորվում են՝

ա) այլ պետությունների հետ բարեկամության և համագործակցության, պաշտպանության, ուժի կիրառումից կամ ուժի կիրառման սպառնալիքից փոխադարձաբար հրաժարվելու, հաշտության, քաղաքական կամ ռազմական դաշինք ստեղծելու կամ դրան անդամակցելու, սահմանային, տարածքային հարցեր լուծելու, միջազգային կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց անդամակցելու, դիվանագիտական և հյուպատոսական հարաբերություններ հաստատելու, վարկեր, փոխառություններ, երաշխիքներ ստանալու կամ դրանք տրամադրելու, ֆինանսական համագործակցության և Հայաստանի Հանրապետության կենսական շահերին վերաբերող այլ հարաբերություններ.

բ) մարդու իրավունքների, ազատությունների և պարտականությունների, քաղաքացիության, օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի, փախստականների, հարկադիր տեղահանվածների, ինչպես նաև քաղաքացիական, ընտանեկան, քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների հաստատման հետ կապված հարաբերությունները.

գ) Հայաստանի Հանրապետության սեփականություն համարվող մշակութային արժեքների և այլ օբյեկտների օտարման հետ կապված հարաբերությունները.

դ) սույն օրենքով միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերի կարգավորման շրջանակների մեջ մտնող հարաբերությունները, եթե պայմանագրի մյուս կողմը ցանկանում է դրանք կնքել Հայաստանի Հանրապետության անունից:

ՀՈՂ-ՎԱԾ 8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԿԱՆՍՎԱՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության միջկառավարական պայմանագրով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենքին և այլ օրենքներին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասության մեջ մտնող հարաբերություններ:

2. Հայաստանի Հանրապետության միջկառավարական պայմանագրով կարգավորվում են՝

ա) ընդհանուր տնտեսական, ներառյալ՝ առևտրի, արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության և տեխնիկայի, կրթության, օտարերկրյա ներդրումների և հարկային հարաբերությունները.

բ) տնտեսության առանձին ճյուղերի հետ կապված հարաբերությունները, եթե դրանք ուղղակիորեն չեն մտնում համապատասխան ճյուղի պետական կառավարում իրականացնող հանրապետական գործադիր մարմնի իրավասության մեջ.

գ) միջկառավարական միջազգային կազմակերպություններ ստեղծելու, դրանց միանալու, վարկեր, փոխառություններ, երաշխիքներ ստանալու կամ դրանք տրամադրելու, ֆինանսական համագործակցության և դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

3. Հայաստանի Հանրապետության միջկառավարական պայմանագիրը կարող է կնքվել ինչպես Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ, այնպես էլ ի կատարումն Հայաստանի Հանրապետության միջպետական կամ այլ միջկառավարական պայմանագրի:

3.1. Բացառիկ դեպքերում Հայաստանի Հանրապետությունը կարող է միջազգային պայմանագիր կնքել միջազգային կամ օտարերկրյա ոչ կառավարական կազմակերպության կամ միավորման հետ, որը հիմնադրվել է բարեգործական կամ մարդասիրական գործունեության նպատակով և Հայաստանի Հանրապետությունում իրականացնելու է բարեգործական, մարդասիրական կամ զարգացման, տեխնիկական, տնտեսական կամ ֆինանսական գործունեություն կամ Հայաստանի Հանրապետությանը տրամադրելու է մարդասիրական, բարեգործական, տեխնիկական, տնտեսական կամ ֆինանսական օգնություն:

Այդպիսի պայմանագիրը նույնպես համարվում է Հայաստանի Հանրապետության միջկառավարական պայմանագիր:

4. Հայաստանի Հանրապետության միջկառավարական պայմանագրով չեն կարող կարգավորվել Հայաստանի Հանրապետության միջպետական պայմանագրով կարգավորվող հարաբերություններ:

ՀՈՂ-ՎԱԾ 9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության միջգերատեսչական պայմանագրով կարգավորվում են միջգերատեսչական համագործակցության, փոխօգնության և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այն հարաբերությունները, որոնք, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, մտնում են Հայաստանի Հանրապետության հանրապետական գործադիր համապատասխան մարմնի, գլխավոր դատախազության, գիտությունների ազգային ակադեմիայի, կենտրոնական բանկի (այսուհետ՝ գերատեսչություններ) իրավասության մեջ:

2. Հայաստանի Հանրապետության միջգերատեսչական պայմանագիրը կարող է կնքվել ինչպես գերատեսչությունների նախաձեռնությամբ, այնպես էլ ի կատարումն Հայաստանի Հանրապետության միջպետական, միջկառավարական կամ այլ միջգերատեսչական պայմանագրի:

3. Հայաստանի Հանրապետության միջգերատեսչական պայմանագրով չեն կարող կարգավորվել Հայաստանի Հանրապետության միջպետական և միջկառավարական պայմանագրերով կարգավորվող հարաբերություններ:

ԳԼՈՒԽ III
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼԸ

ՀՈԴՎԱԾ 10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՆԱԽԱԶԵՆՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր կնքելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը, գերատեսչությունները՝ իրենց գործունեության ոլորտին կամ իրավասությանը վերաբերող հարցերով, ինչպես նաև օտարերկրյա պետությունները և միջազգային իրավունքի այլ սուբյեկտներ:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը կարող է միջազգային պայմանագիր կնքելու նախաձեռնությամբ հանդես գալ նաև այլ գերատեսչության իրավասությանը վերաբերող հարցերով՝ վերջինիս համապատասխան առաջարկություն ներկայացնելու միջոցով:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր կնքելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ շահագրգիռ մեկից ավելի գերատեսչություններ: Այդ գերատեսչությունները կարող են նաև սեփական նախաձեռնությամբ կամ սույն հոդվածի 2-րդ կետում նշված մարմինների և պաշտոնատար անձանց հանձնարարությամբ համատեղ մշակել միջազգային պայմանագրի նախագիծ: Այդ դեպքում դրանցից մեկը հանդես է գալիս որպես գլխավոր նախաձեռնող և պատասխանատվություն է կրում պայմանագրի նախագծի համաձայնեցման և հետագա ընթացքի համար:

2. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր կնքելու հանձնարարական կարող են սալ՝

ա) Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրեր կնքելու վերաբերյալ.

բ) Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրեր կնքելու վերաբերյալ, բացառությամբ կենտրոնական բանկի և գլխավոր դատախազության անումից կնքվող միջգերատեսչական պայմանագրի:

3. Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված հանձնարարականների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են միջազգային պայմանագրի կնքման առաջարկությանն ընթացք տալու վերաբերյալ սույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի "բ" ենթակետի 13-րդ հոդվածի ինչպես նաև 14-րդ հոդվածի 2-րդ կետի նորմերով, եթե այդ հանձնարարականներով այլ բան նախատեսված չէ:

ՀՈԴՎԱԾ 11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ
ԿԱՄ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Եթե Հայաստանի Հանրապետության միջպետական կամ միջկառավարական պայմանագիր կնքելու նախաձեռնությամբ հանդես է գալիս գերատեսչությունը, ապա նա մշակում է համապատասխան պայմանագրի նախագիծն ու դրա կնքման անհրաժեշտության կամ նպատակահարմարության հիմնավորմամբ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջպետական կամ միջկառավարական պայմանագիր կնքելու նախաձեռնությամբ հանդես է եկել օտարերկրյա պետությունը կամ միջազգային իրավունքի այլ սուբյեկտ, և համապատասխան առաջարկությունը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, ապա վերջինս՝ առաջարկությունն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում դա հասցևագրում է համապատասխան գերատեսչությանը:

Եթե առաջարկությունն ստացվել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով կամ անմիջականորեն ապա համապատասխան գերատեսչությունը դա ստանալուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում դրա վերաբերյալ գրավոր կարծիք է ներկայացնում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված կարգով համապատասխան գերատեսչությունների առաջարկությունները կամ կարծիքներն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն ուսումնասիրում է դրանք և սվյալ միջպետական կամ միջկառավարական պայմանագիր կնքելու վերաբերյալ բոլոր փաստաթղթերը կամ դրանց պատճենները նախարարության կարծիքի հետ համապատասխանաբար ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահին կամ Հայաստանի Հանրապետության կառավարություն:

ՀՈԴՎԱԾ 12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ
ԿԱՄ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼԸ

1. Եթե Հայաստանի Հանրապետության միջպետական կամ միջկառավարական պայմանագիր կնքելու առաջարկությանը համաձայնություն են տվել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության Նախագահը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը համապատասխան որոշում ընդունելով, ապա Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով այդ մասին հայտնվում է այն գերատեսչությանը, որը հանդես է եկել սվյալ պայմանագրի կնքման նախաձեռնությամբ կամ

այն գերատեսչությանը, որի իրավասության մեջ են մտնում այդ պայմանագրով կարգավորվող հարցերը (այսուհետ՝ իրավասու գերատեսչություն):

Հայաստանի Հանրապետության Նախագահը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է համաձայնության հետ միաժամանակ որոշակի հանձնարարականներ տալ տվյալ պայմանագրի կնքման հետ կապված հարցերի վերաբերյալ:

2. Հայաստանի Հանրապետության միջպետական կամ միջկառավարական պայմանագիր կնքելու առաջարկության վերաբերյալ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության Նախագահի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնությունն ստանալուց հետո (եթե Հայաստանի Հանրապետության Նախագահը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը այլ ժամկետ չեն սահմանել), իրավասու գերատեսչությունը 1 ամսվա ընթացքում՝

ա) վերանայում է միջպետական կամ միջկառավարական պայմանագիր կնքելու առաջարկության հետ կապված բոլոր փաստաթղթերը և անհրաժեշտության դեպքում ճշգրտում կամ վերանշակում է պայմանագրի նախագիծը կամ մշակում է այդպիսի նախագիծ, եթե օտարերկրյա պետությունից կամ միջազգային իրավունքի այլ սուբյեկտից ստացված առաջարկությանը դա կցված չէ:

Եթե առաջարկությունն ստացվել է օտարերկրյա պետությունից կամ միջազգային իրավունքի այլ սուբյեկտից, և դրան կցված է եղել համապատասխան պայմանագրի նախագիծը, ապա իրավասու գերատեսչությունը մշակում է այդ նախագծի վերաբերյալ իր նախնական կարծիքը:

բ) սույն կետի "ա" ենթակետով նախատեսված գործողություններն ավարտելուց հետո, համապատասխան միջպետական կամ միջկառավարական պայմանագրի նախագիծը համաձայնեցնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, ինչպես նաև տվյալ միջազգային պայմանագրով շահագրգիռ այլ գերատեսչությունների հետ:

ՀՈԴՎԱԾ 13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿԱՍՄ ՄԻՋԿԱՆՎԱՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼԸ

1. Համաձայնեցման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության միջպետական կամ միջկառավարական պայմանագրի նախագիծն ստանալուց հետո տասնհինգօրյա ժամկետում շահագրգիռ գերատեսչությունները պարտավոր են իրենց կարծիքը կամ դիտողությունները և առաջարկությունները ներկայացնել իրավասու գերատեսչություն:

Համաձայնեցման նպատակով ներկայացված Հայաստանի Հանրապետության միջպետական կամ միջկառավարական պայմանագրի նախագծում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող դրույթների առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատութ-

յան նախարարությունը նախագիծը կազմողին առաջարկում է վերացնել դրանք, իսկ Հայաստանի Հանրապետության օրենքներին հակասող դրույթների առկայության դեպքում նախագիծը կազմողի ուշադրությունն է հրավիրում նման դրույթների պահպանման նպատակահարմարության վրա:

Շահագրգիռ գերատեսչությունների կարծիքները կամ դիտողությունները և առաջարկություններն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում իրավասու գերատեսչությունն ուսումնասիրում է դրանք, անհրաժեշտության դեպքում լրանշակում կամ վերանշակում է պայմանագրի նախագիծն ու ներկայացնում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

Եթե իրավասու գերատեսչությունը լրիվ կամ մասամբ համաձայն չէ շահագրգիռ գերատեսչությունների կարծիքների կամ դիտողությունների ու առաջարկությունների հետ, ապա այդ մասին նույնպես հայտնում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն՝ նշելով անհամաձայնության պատճառները:

2. Հայաստանի Հանրապետության միջպետական կամ միջկառավարական պայմանագրի նախագծում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին հակասող դրույթների պահպանման նպատակահարմարության հարցը լուծում է նախագիծը կազմողը:

3. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը միջպետական կամ միջկառավարական պայմանագրի նախագիծն իրավասու գերատեսչությունից ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում ներկայացնում է պայմանագրի մյուս կողմին:

Եթե նախատեսվում է կնքել միջպետական կամ միջկառավարական բազմակողմ պայմանագիր, ապա դրա նախագիծն ուղարկվում է բոլոր կողմերին կամ այն միջազգային կազմակերպությանը կամ դրա մարմնին, որը պատասխանատու է կամ լիազորված է նախագծի տեքստի համաձայնեցման համար:

ՀՈԴՎԱԾ 14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍԶԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼԸ

1. Հայաստանի Հանրապետության միջգերատեսչական պայմանագիր կնքելու առաջարկությունը՝ անկախ այն հանգամանքից՝ Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա պետության, թե միջազգային իրավունքի այլ սուբյեկտի նախաձեռնությամբ է դա արվել, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը դա համաձայնեցման է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն, որը դրա վերաբերյալ ընդունում է համապատասխան որոշում:

Եթե Հայաստանի Հանրապետության միջգերատեսչական պայմանագիր կնքելու առաջարկություն է արել իրավասու գերատեսչությունը, ապա վերջինս առաջարկությանը պետք է կցի համապատասխան պայմանագրի նախագիծը՝ հիմնավորելով դրա կնքման անհրաժեշտությունը կամ նպատակահարմարությունը:

Եթե առաջարկությունն արել է օտարերկրյա պետությունը կամ միջազգային իրավունքի այլ սուբյեկտ և դա դիվանագիտական ուղիներով տրամադրել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը, ապա վերջինս առաջարկությունը հասցեագրում է իրավասու գերատեսչությանը:

Միջգերատեսչական պայմանագիր կնքելու առաջարկությունն ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով, այդ մասին հայտնում է իրավասու գերատեսչությանը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնությունն ստանալուց հետո իրավասու գերատեսչությունը տվյալ միջգերատեսչական պայմանագրի նախագիծը ներկայացնում է սույն օրենքի 12 հոդվածի 2-րդ կետի "բ" ենթակետով նախատեսված շահագրգիռ գերատեսչությունների համաձայնեցմանը:

Միջգերատեսչական պայմանագրի կնքման առաջարկության, այդ պայմանագրի նախագծի վերաբերյալ կարծիք կամ դիտողություններ ու առաջարկություններ ներկայացնելու, դրանք քննարկելու և պայմանագրի մյուս կողմին տրամադրելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքի 12 հոդվածի 2-րդ կետի "ա" ենթակետով և 13 հոդվածով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՈՒՐՋ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ, ՆԱԽԱՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ, ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ, ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի նախագիծը կամ այդպիսի պայմանագրի նախագծի վերաբերյալ հայկական կողմի կարծիքը կամ դիտողություններն ու առաջարկությունները պայմանագրի մյուս կողմին ներկայացնելուց հետո Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, ներգրավելով իրավասու գերատեսչություններին, կազմակերպում և ղեկավարում է այդ պայմանագրի կնքման շուրջ բանակցությունները, պայմանագրի տեքստը մյուս կողմի հետ համաձայնեցնելու, նախաստորագրելու, ստորագրելու և սահմանված կարգով վավերացման կամ հաստատման ներկայացնելու հետ կապված աշխատանքները:

ՀՈԴՎԱԾ 16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔԵԼՈՒ ՇՈՒՐՋ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ, ԴԱ ՆԱԽԱՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ ԵՎ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

1. Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը, առանց հատուկ լիազորությունների, իրավունք ունեն բա-

նակցություններ վարել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի շուրջ և ստորագրել դա:

Գերատեսչության ղեկավարը, առանց հատուկ լիազորությունների, իրավունք ունի բանակցություններ վարել միջգերատեսչական պայմանագրի շուրջ և ստորագրել դա:

2. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր կնքելու շուրջ բանակցություններ վարելու և այդ պայմանագիրն ստորագրելու իրավունք ունեն նաև այն անձինք, ովքեր դրա համար ստացել են հատուկ լիազորություններ:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր կնքելու շուրջ բանակցություններ վարելու և դա ստորագրելու համար հատուկ լիազորություններ տալիս են՝

- ա) Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ միջպետական պայմանագրի վերաբերյալ.
 - բ) Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ միջկառավարական պայմանագրի վերաբերյալ.
 - գ) գերատեսչության ղեկավարը գերատեսչության անունից կնքվելիք միջգերատեսչական պայմանագրի վերաբերյալ:
- Սույն կետով սահմանված կարգով լիազորություններ են տրվում նաև միջազգային պայմանագիրը նախաստորագրելու համար:
- Սույն կետով նախատեսված դեպքերում հատուկ լիազորությունների տրամադրումը կատարվում է համապատասխան իրավասու պաշտոնատար անձի կողմից սահմանված կարգով տրված լիազորագրով:

ՀՈԴՎԱԾ 17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի նախաստորագրումը դրա կնքման փուլն է, որի ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված անձն այդ պայմանագրի յուրաքանչյուր էջի վրա նշագրում կատարելու միջոցով հավաստում է գրավոր տեքստի վերաբերյալ հայկական կողմի նախնական համաձայնությունը, որից հետո պայմանագիրը սահմանված կարգով պատրաստ է ստորագրման՝ Հայաստանի Հանրապետության կողմից:

2. Միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության կողմից կարող է նախաստորագրվել միայն այդ պայմանագրի նախագծի մշակման և նախաստորագրման համար սույն օրենքով նախատեսված բոլոր գործողություններն ավարտվելուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ այդպիսի պայմանագիր կնքելու հանձնարարականով:

Միջազգային պայմանագիրը նախաստորագրելուց առաջ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը մյուս կողմի հետ համաձայնեցնում է պայմանագրի նախաստորագրման վայրը, ժամկետն ու ծանուցում է հայկական կողմի պաշտոնական ներկայացուցչի կամ պատվիրակության կազմի մասին:

Միջազգային պայմանագրի նախաստորագրմանը հավասարեցվում է պայմանագրի վերջնական տեքստը մյուս կողմին ուղարկելը և այդ տեքստին համաձայն լինելու մասին նրա պաշտոնական ծանուցումը հայկական կողմին ներկայացնելը, եթե որևէ պատճառով հնարավոր չի եղել նախաստորագրման իրականացումը:

3. Նախաստորագրված միջազգային պայմանագրի տեքստը կարող է փոփոխվել միայն պայմանագիրն ստորագրելուց առաջ դրանում որոշակի ճշգրտումներ կամ ուղղումներ կատարելու համար կողմերի միջև ձեռք բերված լրացուցիչ պայմանավորվածության դեպքերում:

ՀՈԴՎԱԾ 18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՏՈՐԱԳՐՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի ստորագրումը դրա կնքման փուլն է, որով ավարտվում են պայմանագրի շուրջ բանակցությունները, և որի ընթացքում նախաստորագրված պայմանագիրը ի հաստատումն դրա տեքստի հետ վերջնական համաձայնության, Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրում է սույն օրենքով այդպիսի իրավասություն կամ հատուկ լիազորություն ունեցող անձը, որից հետո պայմանագիրը համարվում է Հայաստանի Հանրապետության համար կնքված կամ ենթակա է վավերացման կամ հաստատման սույն օրենքով սահմանված կարգով:

2. Ստորագրված միջազգային պայմանագրի տեքստը ենթակա չէ փոփոխման:

Եթե Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացմանը ենթակա միջազգային պայմանագրի դրույթները Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող, ապա դրա տեքստը կարող է սույն օրենքով սահմանված կարգով փոփոխվել, նոր հիմունքներով ստորագրվել և ներկայացվել վավերացման տեքստից հանելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող դրույթները:

Այդ դեպքում պարտադիր չեն միջազգային պայմանագրի նախագծի համաձայնեցման և դրա նախաստորագրման վերաբերյալ սույն օրենքի պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ մյուս կողմի հետ ձեռք բերված պայմանավորվածությամբ:

3. Եթե միջպետական պայմանագրով նախատեսվում է, որ դա ուժի (գործողության) մեջ է մտնում ստորագրման պահից կամ մինչև ուժի մեջ մտնելը կարող է ժամանակավորապես կիրառվել, ապա Հայաստանի Հանրապետության կողմից այդ պայմանագիրն ստորագրելու իրավասություն կամ հատուկ լիազորություն ունեցող անձը պարտավոր է բանակցությունների ընթացքում մյուս կողմի հետ համաձայնեցնել, որ պայմանագիրն ուժի մեջ կմտնի դրա վավերացումից հետո: Այդպիսի համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կողմից իրավասու կամ լիազոր

անձը նման դրույթներ պարունակող պայմանագիրն ստորագրելիս պետք է վերապահում կատարի նշելով, որ այդ պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտնելու կամ կիրառվելու է սույն օրենքով սահմանված կարգով:

Սույն կետի նորմերը տարածվում են նաև միջկառավարական և միջգերատեսչական այն պայմանագրերի վրա, որոնք սույն օրենքի 23 հոդվածի 2-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետերի, ինչպես նաև 24 հոդվածի նորմերին համապատասխան վավերացման կամ հաստատում են համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, Հայաստանի Հանրապետության Նախագահը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի ստորագրմանը հավասարագոր է ճանաչվում դիվանագիտական ուղիներով նոտաների փոխանակման միջոցով կողմերի միջև համապատասխան բնագավառում հարաբերություններ հաստատելու մասին համաձայնության ձեռքբերումը:

5. Միջազգային իրավունքի նորմերով և սույն օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունը կարող է ստորագրել նաև ստորագրման համար բաց միջազգային պայմանագիր, որի նախագծի նախապատրաստման, ինչպես նաև նախաստորագրման և ստորագրման ներկայացնելու աշխատանքներին ինքը չի մասնակցել:

ՀՈԴՎԱԾ 19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՍԱՆՁՆԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԴԵՊՋԵՐԸ

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով տվյալ տարվա համար սահմանված ծավալների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի վարկային, երաշխիքային կամ Հայաստանի Հանրապետության համար այլ ֆինանսական պարտավորություններ նախատեսող միջազգային պայմանագրի նախապատրաստման նպատակով կնքել նախնական պայմանագիր, որն ուժի մեջ է մտնում և կիրառվում այդ պայմանագրով սահմանված կարգով՝ առանց սույն օրենքի ընթացակարգերի պահպանման, ինչպես նաև օգտագործել միջազգային պայմանագրի նախապատրաստման և դրա հետ կապված պարտավորությունների կատարման համար նախատեսված դրամական և այլ միջոցներ:

ՀՈԴՎԱԾ 20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼԵԶՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի նախագծերը մշակվում և Հայաստանի Հանրապետության շահագրգիռ գերատեսչությունների հետ համաձայնեցվում են հայերենով:

Եթե երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրի նախագիծը ներկայացրել է որևէ օտարերկրյա պետություն կամ միջազգային իրավունքի այլ սուբյեկտ, ապա դա թարգմանվում է հայերեն:

2. Միջազգային պայմանագրի հայերենով և օտար լեզվով տեքստեր կազմելու կամ դրանք հայերեն թարգմանելու (եթե պայմանագրի նախագիծը ստացվել է մյուս կողմից) պարտականությունը դրվում է իրավասու գերատեսչության վրա:

3. Երկկողմ միջազգային պայմանագրի բնօրինակներից մեկն ստորագրվում է հայերենով:

4. Բազմակողմ միջազգային պայմանագիրը կարող է ստորագրվել օտար լեզվով, ինչպես նաև հայերենով, եթե դա նախատեսված է տվյալ միջազգային պայմանագրով:

5. Հայերենով ստորագրվող միջազգային պայմանագրին զուգահեռաբար ստորագրվող որևէ օտար լեզվով տեքստի նկատմամբ նույնականությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը:

6. Սույն հոդվածով սահմանված կարգով՝ օտար լեզվով ստորագրված միջազգային պայմանագիրը հայերեն թարգմանելու պարտականությունը դրվում է իրավասու գերատեսչությունների վրա:

Օտար լեզվով ստորագրված միջազգային պայմանագրի տեքստի հետ հայերեն թարգմանության նույնականությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը: Նույնականացված հայերեն տեքստը (պաշտոնական թարգմանությունը) հավասարազոր է օտար լեզվով ստորագրված միջազգային պայմանագրի տեքստին:

ՀՈԴՎԱԾ 21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՈՒՄԸ, ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԿԱՄ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի վավերացումը կամ հաստատումն այդ պայմանագրի կնքման փուլն է, որի ընթացքում հայկական կողմից ստորագրված միջազգային պայմանագրի վերաբերյալ սույն օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը համապատասխան որոշում է ընդունում, և այդ հիմքով պայմանագիրը, դրա ուժի մեջ մտնելու պահից, պարտադիր է ճանաչվում Հայաստանի Հանրապետության համար:

Եթե հայկական կողմի ստորագրած միջազգային պայմանագիրը նախատեսում է դրա ընդունումը, ապա սույն օրենքով սահմանված կարգով իրավասու մարմնի՝ այդ պայմանագրի վավերացման կամ հաստատման մասին որոշումը փոխարինում է պայմանագրի ընդունման մասին որոշմանը:

ՀՈԴՎԱԾ 22. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼԸ

1. Հայաստանի Հանրապետությունը, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, կարող է միանալ ուժի մեջ մտած միջազգային պայմանագրին, որում ինքը հանդես չի եկել որպես պայմանագրի կողմ:

2. Միջազգային պայմանագրին միանալու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Հայաստանի Հանրապետության վարչապետը, գերատեսչությունները՝ իրենց գործունեության ոլորտին կամ իրավասությանը վերաբերող հարցերով:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը կարող է հանդես գալ միջազգային պայմանագրին միանալու նախաձեռնությամբ նաև այլ գերատեսչության իրավասությանը վերաբերող հարցերով՝ վերջինիս համապատասխան առաջարկություն ներկայացնելու միջոցով:

Միջազգային պայմանագրին միանալու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ շահագրգիռ մեկից ավելի գերատեսչություններ: Այդ դեպքում դրանցից մեկը հանդես է գալիս որպես գլխավոր նախաձեռնող, որը պատասխանատու է այդ պայմանագրին միանալու նպատակահարմարությունը հիմնավորելու և հետագա ընթացքի համար:

3. Միջազգային պայմանագրին միանալու հանձնարարականներ կարող են տալ՝

ա) Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերին միանալու վերաբերյալ:

բ) Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերին միանալու վերաբերյալ, բացառությամբ կենտրոնական բանկին ել գլխավոր դատախազությանը վերաբերող միջգերատեսչական պայմանագրերի:

4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերին համապատասխան միջազգային պայմանագրին միանալու առաջարկությանը կամ հանձնարարականին ընթացք տալու համար իրավասու գերատեսչությունը հայերեն է թարգմանում միանալու ենթակա միջազգային պայմանագիրը, որի նույնականությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը: Միջազգային պայմանագիրը, դրան միանալու նպատակահարմարության հիմնավորմամբ, իրավասու գերատեսչությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

5. Համապատասխան գերատեսչությունների առաջարկություններն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն ուսումնասիրում է դրանք և տվյալ միջազգային պայմանագրին միանալու վերաբերյալ բոլոր փաստաթղթերը կամ դրանց պատճենները նախարարության կարծիքի հետ համապատասխանաբար ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնեցմանը:

Եթե միջազգային պայմանագրին միանալու առաջարկությանը համաձայնություն են տվել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության Նախագահը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

համապատասխան որոշում ընդունելով, ապա Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով այդ մասին հայտնվում է այն գերատեսչությանը, որը հանդես է եկել տվյալ պայմանագրին միանալու նախաձեռնությամբ:

Հայաստանի Հանրապետության Նախագահը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է համաձայնության հետ միաժամանակ որոշակի հանձնարարականներ տալ տվյալ պայմանագրին միանալու հետ կապված հարցերի վերաբերյալ:

6. Հայաստանի Հանրապետությունը միջազգային պայմանագրին կարող է միանալ սույն օրենքով իրավասու մարմնի՝ տվյալ միջազգային պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին որոշում ընդունելու միջոցով, որը հիմք է դրանով նախատեսված կարգով դա Հայաստանի Հանրապետության համար պարտադիր և Հայաստանի Հանրապետությունն այդ պայմանագրի կողմ ճանաչելու համար:

ՀՈԴՎԱԾ 23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԱՅԴ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը վավերացնում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը և Հայաստանի Հանրապետության Նախագահը:

2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը վավերացնում է միջպետական պայմանագիրը: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը վավերացնում է նաև միջկառավարական և միջգերատեսչական այն պայմանագրերը, որոնք՝

ա) վերաբերում են վարկեր, փոխառություններ, երաշխիքներ ստանալուն կամ դրանք տրամադրելուն կամ Հայաստանի Հանրապետության համար առաջացնում են այլ անմիջական ֆինանսական պարտավորություններ:

Սույն օրենքի համաձայն՝ այլ անմիջական ֆինանսական պարտավորություններ են համարվում, մասնավորապես, հարկային և այլ պարտադիր վճարումների գծով արտոնություններ, միջազգային կազմակերպությունների պահպանման, միջպետական (միջկառավարական) հիմնադրամների ձևավորման նպատակով դրամական միանվագ կամ պարբերական մուծումներ նախատեսող պարտավորությունները:

Այլ անմիջական ֆինանսական պարտավորություններ չեն համարվում, մասնավորապես, գործողությունների, օտարերկրյա քաղաքացիների ընդունելության, բնակարանների և այլ գույքի վարձակալության հետ կապված պարտավորությունները:

բ) պարունակում են Հայաստանի Հանրապետության օրենքներին հակասող նորմեր:

գ) պարունակում են Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ կատարելու կամ նոր օրենքներ ընդունելու նորմեր:

3. Հայաստանի Հանրապետության Նախագահը վավերացնում է բոլոր միջկառավարական պայմանագրերը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի:

4. Միջգերատեսչական պայմանագիրը, եթե դա, սույն հոդվածի 2-րդ կետի "ա", "բ" և "գ" ենթակետերի համաձայն, ենթակա չէ վավերացման Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից, սակայն պարունակում է Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերին կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներին հակասող դրույթներ, կամ կողմերը նախատեսել են այդ պայմանագրի հաստատումը, ապա այդ պայմանագիրը հաստատում են՝

ա) Հայաստանի Հանրապետության Նախագահը, եթե պայմանագիրը հակասում է Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերին կամ կնքված է կենտրոնական բանկի կամ գլխավոր դատախազության անունից:

բ) Հայաստանի Հանրապետության կառավարությունը, եթե պայմանագիրը կնքված է Հայաստանի Հանրապետության այլ գերատեսչությունների անունից:

5. Միջազգային իրավունքի նորմերին համապատասխան ուժի մեջ մտած միջազգային պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու հարցը որոշում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, համապատասխան գերատեսչությունը՝ ելնելով սույն հոդվածի 2-րդ, 3-րդ կետերի և սույն օրենքի 24 հոդվածի պահանջներին:

Այն միջգերատեսչական պայմանագրին միանալու դեպքում, որը պարունակում է Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերին կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներին հակասող դրույթներ, այդ պայմանագիրը, սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն, ներկայացվում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության Նախագահի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը:

ՀՈԴՎԱԾ 24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԸ

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով տվյալ տարվա համար հաստատված արտաքին փոխառության ծավալների շրջանակներում նախապատրաստված և ստորագրված վարկային, երաշխիքային կամ Հայաստանի Հանրապետության համար այլ ֆինանսական պարտավորություններ նախատեսող միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերը, ինչպես նաև միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական այն պայմանագրերը, որոնք նախատեսում են մարդասիրական օգնության, մվիրատվության կամ դրամաշնորհների տրամադրում Հայաստանի Հանրապետությանը կամ վերաբերում են տեխնիկատնտեսական,

ֆինանսական համագործակցությանը, որոնք հայկական կողմի վրա փոխադարձ համարժեք պարտավորություններ չեն դնում, և եթե դրանք նույնիսկ նախատեսում են հարկային, մաքսային, պետական տուրքի և պարտադիր այլ վճարումների գծով արտոնություններ՝

ա) վավերացնում կամ հաստատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը, եթե դա համապատասխանաբար միջպետական կամ միջկառավարական պայմանագիր է կամ կնքված է կենտրոնական բանկի կամ գլխավոր դատախազության անունից.

բ) հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, եթե դա միջգերատեսչական պայմանագիր է:

ՀՈԴՎԱԾ 25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԿԱՄ ԴՐԱՆ ՄԻԱՆԱԼՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը, սույն օրենքով սահմանված կարգով, վավերացման, հաստատման կամ դրան միանալուն ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն ապահովում է հետևյալ փաստաթղթերն ստանալը՝

ա) պայմանագիրը վավերացնելու, հաստատելու կամ դրան միանալու նպատակահարմարության վերաբերյալ դրա կնքման համար պատասխանատու գերատեսչության հիմնավորումը.

բ) պայմանագրի դրույթների և Հայաստանի Հանրապետության օրենսդրության միջև հակասության կամ դրա բացակայության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կարծիքը.

գ) պայմանագրով Հայաստանի Հանրապետության համար անմիջական ֆինանսական պարտավորություններ սահմանող կամ դրա բացակայության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կարծիքը.

դ) տվյալ պայմանագրի կողմ համարվող օտարերկրյա պետության կամ միջազգային իրավունքի այլ սուբյեկտի կողմից այդ պայմանագիրը վավերացրած կամ հաստատած լինելու, կամ նրանց համար պայմանագիրն ուժի մեջ մտած լինելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության տեղեկանքը:

Սույն կետի "ա", "բ" և "գ" ենթակետերով նախատեսված փաստաթղթերը գերատեսչությունները Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն են ներկայացնում վերջինիս կողմից համապատասխան հարցում ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված փաստաթղթերն ստանալուց հետո՝ երեսուցուրյա ժամկետում, դրանք միջազգային պայմանագրի հետ ներկայացնում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության Նախագահին կամ Հայաստանի Հանրապետության կառավարություն:

ՀՈԴՎԱԾ 26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՆԱԿԱՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐԵԼԸ

Եթե Հայաստանի Հանրապետության միջկառավարական պայմանագիրն ստորագրել է Հայաստանի Հանրապետության Նախագահը, և դա սույն օրենքին համապատասխան ենթակա չէ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացմանը, ապա պայմանագիրը վավերացված է համարվում դրա ստորագրման պահից:

ՀՈԴՎԱԾ 27. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացմանը ենթակա միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության Նախագահը նախապես ներկայացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան՝ պայմանագրում ամրագրված պարտավորությունները Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանելու հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումն ստանալու համար:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դրական որոշումն ստանալու դեպքում Հայաստանի Հանրապետության Նախագահը միջազգային պայմանագիրը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացմանը:

ՀՈԴՎԱԾ 28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՍՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1. Եթե Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը որոշում է ընդունել միջազգային պայմանագրով ամրագրված պարտավորությունները Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասելու մասին, ապա Հայաստանի Հանրապետության Նախագահը, ելնելով Հայաստանի Հանրապետության համար այդ պայմանագրի կարևորությունից, կարող է՝

ա) հանձնարարել Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ պայմանագրի մյուս կողմի հետ բանակցություններ վարել դրանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող պարտավորություններ նախատեսող նորմերը փոփոխելու, վերացնելու և սահմանված կարգով վավերացման ներկայացնելու համար.

բ) աննպատակահարմար համարել տվյալ միջազգային պայմանագիր կնքելը՝ հանձնարարելով այդ մասին դիվանագիտական ուղիներով պարտադիր ծանուցել պայմանագրի մյուս կողմին:

2. Եթե Հայաստանի Հանրապետությունը շահագրգիռ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող դրույթներ պարունակող

միջազգային պայմանագիրը վավերացնել առանց այդ դրույթները վերացնելու, ապա Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը նշված պայմանագիրը կարող է վավերացնել միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ կատարվելուց հետո:

ՀՈԴՎԱԾ 29. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԴԻԱՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԿԱՄ ԴԱ ՄԵՐԺԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը միջազգային պայմանագիրը վավերացնելու, դրան միանալու կամ դա մերժելու մասին ընդունում է որոշում, իսկ Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ հրամանագիր:

Հայաստանի Հանրապետության Նախագահը միջգերատեսչական պայմանագիրը հաստատում կամ մերժում է հրամանագրով, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ որոշմամբ:

2. Եթե Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, Հայաստանի Հանրապետության Նախագահը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում (հրամանագիր) են ընդունել տվյալ միջազգային պայմանագիրը չվավերացնելու, չհաստատելու կամ դրան չմիանալու մասին, ապա այդ պայմանագիրը կարող է կրկնակի վավերացման, հաստատման կամ միանալու ներկայացվել՝ անհրաժեշտության դեպքում պահպանելով դրա համար սույն օրենքով նախատեսված ընթացակարգը:

Երկրորդ անգամ պայմանագիրը չվավերացնելու, չհաստատելու կամ դրան չմիանալու դեպքում դա այլևս չի կարող վավերացնելու, հաստատելու կամ դրան միանալու ներկայացվել, եթե համապատասխան իրավասու մարմինն այլ որոշում չընդունի:

3. Եթե Հայաստանի Հանրապետության միջկառավարական կամ միջգերատեսչական պայմանագիրը սույն օրենքի պահանջների պահպանմամբ ուժի մեջ է մտել կամ ենթակա է ժամանակավորապես կիրառման ստորագրման պահից, և եթե դա սույն օրենքին համապատասխան վավերացնում կամ հաստատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ վերջիններս երկրորդ անգամ մերժել են դրա վավերացումը կամ հաստատումը և այլ որոշում չեն ընդունել, ապա իրավասու գերատեսչությունը, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, միջոցներ է ձեռնարկում այդ պայմանագրի գործողությունը Հայաստանի Հանրապետության համար դադարեցնելու ուղղությամբ:

Եթե մերժվել է սույն օրենքի 19 հոդվածով նախատեսված միջազգային պայմանագրի վավերացումը կամ հաստատումը, ապա Հայաստանի Հանրապետությունը պատասխանատու է այդ պայմանագրով ստանձնած այն

պարտավորությունների շրջանակներում, որոնք սույն օրենքի 19 հոդվածի նորմերի պահպանմամբ նախատեսվել են նախքան տվյալ պայմանագրի ուժի մեջ մտնելու համար սույն օրենքով նախատեսված ընթացակարգերի կատարումը:

ՀՈԴՎԱԾ 30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒՅԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի ուժի մեջ մտնելն այդ պայմանագրի կնքման ավարտական փուլն է, երբ միջազգային իրավունքի նորմերին և սույն օրենքի պահանջներին համապատասխան՝ այդ պայմանագիրն ստորագրելուց, վավերացնելուց, հաստատելուց կամ դրան միանալուց հետո իրականացվում են տվյալ պայմանագրով նախատեսված իրավունքների ու պարտականությունների ծագման համար անհրաժեշտ կազմակերպական և իրավաբանական վերջին գործողությունները, որոնց ավարտմամբ կամ ավարտից հետո տվյալ պայմանագիրը համարվում է կնքված, և պայմանագրով նախատեսված ժամկետից այդ իրավունքները և պարտականությունները համարվում են ծագած:

Միջազգային պայմանագրի կնքմանը հավասարազոր է ճանաչվում միջազգային իրավունքի նորմերին համապատասխան Հայաստանի Հանրապետության կողմից իրեն միջազգային պայմանագրի իրավահաջորդ ճանաչելը (հայտարարելը):

2. Սույն օրենքով սահմանված կարգով ստորագրված, վավերացված, հաստատված կամ դրան միացած՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրն ուժի մեջ է մտնում՝

ա) վավերացվելուց, հաստատվելուց կամ դրան միանալուց հետո՝ տվյալ պայմանագրով նախատեսված կարգով.

բ) միջազգային պայմանագրի պաշտոնական հրապարակումից հետո, եթե պայմանագիրը վերաբերում է մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին.

գ) ստորագրման կամ տվյալ միջազգային պայմանագրով նախատեսված այլ պահից, եթե պայմանագիրը միջկառավարական կամ միջգերատեսչական է և, սույն օրենքի 23 և 24 հոդվածների նորմերին համապատասխան, ենթակա չէ վավերացման կամ հաստատման համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության Նախագահի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

ՀՈԴՎԱԾ 31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒՅԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՆՉԵՎ ՈՒՅԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՆԿԱՏԱՍՐ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Եթե Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված միջազգային պայմանագրով նախատեսված է, որ դա ուժի մեջ է մտնում ստորագրման

պահից կամ դա կարող է ժամանակավորապէս կիրառվել մինչև սահմանված կարգով ուժի մեջ մտնելը, և այդ պայմանագրի ստորագրման պահին չի ապահովվել վերապահում կատարելու մասին սույն օրենքի 18 հոդվածի 3-րդ կետի պահանջը, ապա այդպիսի միջազգային պայմանագրի նկատմամբ կիրառվում են հետևյալ կանոնները, եթե՝

ա) միջազգային պայմանագիրն ստորագրված է Հայաստանի Հանրապետության անունից, կամ դա դասվում է սույն օրենքի 23 հոդվածի 2-րդ կետի "ա" ենթակետով նախատեսված միջկառավարական կամ միջգերատեսչական պայմանագրի շարքին, ապա մինչև սույն օրենքով սահմանված կարգով դրանց ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության համար չեն գործում այդ պայմանագրի՝ ստորագրման պահից ուժի մեջ մտնելու կամ ժամանակավորապէս կիրառելու վերաբերյալ դրոյթները.

բ) միջազգային պայմանագիրը պարունակում է Հայաստանի Հանրապետության օրենքներին հակասող կամ օրենքներում փոփոխություններ կատարելու կամ նոր օրենքներ ընդունելու վերաբերյալ դրոյթներ, ապա մինչև սույն օրենքով սահմանված կարգով այդ պայմանագրի ուժի մեջ մտնելը ստորագրման պահից ուժի մեջ մտնելու կամ ժամանակավորապէս կիրառելու մասին տվյալ պայմանագրի դրոյթները Հայաստանի Հանրապետության համար գործում են այդ պայմանագրով նախատեսված միայն այն պարտավորությունների կամ նորմերի նկատմամբ, որոնք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենքներին:

2. Եթե սույն հոդվածի 1-ին կետի "բ" ենթակետով նախատեսված միջազգային պայմանագրի՝ սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու համար նախատեսված ընթացակարգերը չեն ավարտվում այդ պայմանագիրն ստորագրելուց հետո՝ 1 տարվա ընթացքում, ապա նշված ենթակետով նախատեսված պայմանագրի գործողությունը ենթակա է դադարեցման հայկական կողմի համար:

ՀՈՂՎԱԾ 32. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

Սույն օրենքով սահմանված կարգով միջազգային պայմանագիրն ստորագրելիս կամ վավերացնելիս, հաստատելիս կամ դրան միանալիս հայկական կողմը կարող է դրա վերաբերյալ կատարել վերապահումներ կամ վերացնել կատարված վերապահումները, ինչպես նաև ընդունել մյուս կողմի նույն պայմանագրի վերաբերյալ կատարված վերապահումները կամ առարկել դրանց դեմ՝ միջազգային իրավունքի նորմերին և սույն օրենքի պահանջներին համապատասխան:

Միջազգային պայմանագրի վերաբերյալ կատարված վերապահումների և դրանց վերաբերյալ առարկելու իրավաբանական հետևանքների նկատմամբ կիրառվում են միջազգային իրավունքի և սույն օրենքի համապատասխան նորմերը:

ՀՈՂՎԱԾ 33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՎԵՐԱԳԻՐ ԿԱՄ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՍՏՈՐԱԳՐԵԼԸ

1. Հայաստանի Հանրապետության Նախագահն ստորագրում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացրած միջազգային պայմանագիրը:

Սույն կետով նախատեսված միջազգային պայմանագրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահն ստորագրում է վավերագիր, որով այդ պայմանագրի մյուս կողմին կամ ավանդապահին տեղեկացվում է այն մասին, որ այդ պայմանագրի վավերացմամբ դա պարտադիր է դարձել Հայաստանի Հանրապետության համար:

2. Միջազգային պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընդունած որոշումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահն ստորագրում է հայտարարագիր, որով այդ պայմանագրի մյուս կողմերին կամ ավանդապահին տեղեկացվում է այդ պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին:

Հայաստանի Հանրապետության Նախագահի ստորագրած վավերագրերը և հայտարարագրերն ամրագրվում են Հայաստանի Հանրապետության կնիքով և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի ստորագրությամբ:

3. Սույն օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Նախագահի վավերացրած կամ հաստատած և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած միջազգային պայմանագրի վերաբերյալ վավերագիրը, ինչպես նաև միջազգային պայմանագրերին միանալու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների վերաբերյալ հայտարարագրերն ստորագրում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը և ամրագրում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կնիքով:

4. Միջազգային պայմանագրի վավերագրերի փոխանակման կամ այդ պայմանագրի ավանդապահներին վավերագրերի և հայտարարագրերի հանձնման գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը:

ՀՈՂՎԱԾ 34. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԲԻՈՂ ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼԸ

1. Սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրից բխող այլ միջազգային պայմանագիր կարող է կնքվել, եթե այդպիսի պահանջ կա ուժի մեջ մտած պայմանագրում, կամ եթե նոր միջազգային պայմանագրի կնքումն անհրա-

ժեշտ է ուժի մեջ մտած պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար:

2. Ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրից բխող նոր միջազգային պայմանագիրը կնքվում է միջազգային պայմանագիրը կնքելու՝ սույն օրենքով սահմանված ընթացակարգերով, եթե այլ կարգ նախատեսված չէ ուժի մեջ մտած պայմանագրով, կամ եթե նոր կնքվող պայմանագրով չի նախատեսվում այնպիսի լրացուցիչ դրույթներ, որոնք սույն օրենքի ուժով ենթակա են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացմանը:

ՀՈՂՎԱԾ 35. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ, ԱՅԴ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԵԿՆԱԲԱՆԵԼԸ

1. Սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրում կարող են կատարվել փոփոխություններ, լրացումներ և ուղղումներ:

Փոփոխություններ և լրացումներ կատարելու դեպքում կիրառվում են միջազգային պայմանագիրը կնքելու՝ սույն օրենքով նախատեսված ընթացակարգերը, եթե այլ կարգ սահմանված չէ այդ պայմանագրով, կամ եթե փոփոխությունները և լրացումները չեն նախատեսում այնպիսի դրույթներ, որոնք սույն օրենքի ուժով ենթակա են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացմանը:

Միջազգային պայմանագրում ուղղումները կատարվում են միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա դրա պայմանները մեկնաբանվում են՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում դա սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:

Եթե սույն կետով նախատեսված կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունները, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, կողմերի հետագա վարքը:

ԳԼՈՒԽ IV

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ, Ի ՊԱՀ ՏԱԼԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

ՀՈՂՎԱԾ 36. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

1. Սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պետական գրանցման միասնական գրանցամատյանում:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պետական գրանցման միասնական գրանցամատյանը վարում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի գրանցման և այդ պայմանագրերի պետական գրանցման միասնական գրանցամատյանի լրացման և պահպանման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը ներկայացնում է Միավորված ազգերի կազմակերպություն, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպություններ, որոնց մասնակից է Հայաստանի Հանրապետությունը, և որոնց հիմնադիր կամ այլ փաստաթղթերով նախատեսված է, որ մասնակից պետությունների միջազգային պայմանագիրը ենթակա է գրանցման կամ պահպանման այդ կազմակերպություններում:

ՀՈՂՎԱԾ 37. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ Ի ՊԱՀ ՏԱԼԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՏՃԵՆՆԵՐՆ ԻՐԱՎԱՍՈՒՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՈՒՂԱՐԿԵԼԸ

1. Հայաստանի Հանրապետությունում երկկողմ միջազգային պայմանագրի ավանդապահը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն է:

Եթե բազմակողմ միջազգային պայմանագրով նախատեսված է, որ դրա ավանդապահն է Հայաստանի Հանրապետությունը, ապա այդ պայմանագրի ավանդապահի գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը:

2. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրն ստորագրելուց հետո դրա բնագիրը (սահմանված կարգով հաստատված պատճենը, պաշտոնական թարգմանությունը) երկշաբաթյա ժամկետում ի պահ է տրվում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը:

3. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ I ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը դրա պատճենը, պայմանագրի ուժի մեջ մտնելու մասին նշումով, ուղարկում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության Նախագահի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և այլ իրավասու գերատեսչություններ:

4. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը սույն հոդվածի 3-րդ կետում նշված մարմիններին տեղեկատվություն է տրամադրում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կասեցնելու, վերսկսելու, դադարեցնելու, ինչպես նաև ժամկետը լրացած պայմանագրի գործողությունը երկարաձգելու վերաբերյալ:

ՀՈՂՎԱԾ 38. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

1. Սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագրում:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիրը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական պարբերականն է, որը հրատարակվում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության սահմանած պարբերականությամբ:

2. Մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին վերաբերող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը հրապարակվում են նաև Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում՝ Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի հրապարակման մասին օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ V

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ՀՈՂՎԱԾ 39. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը ենթակա է անվերապահ կատարման Հայաստանի Հանրապետության կողմից:

Ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետությունը ձեռնպահ

է մնում այնպիսի գործողություններից, որոնք կարող են հակասել այդ պայմանագրի նպատակներին և առարկային:

ՀՈՂՎԱԾ 40. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Միջազգային պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության կառավարությունն ու Հայաստանի Հանրապետության վարչապետը, իրենց իրավասության շրջանակներում, ձեռնարկում են համապատասխան կազմակերպչական և իրավական միջոցներ:

ՀՈՂՎԱԾ 41. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ

1. Գերատեսչությունները, որոնց իրավասության մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով կարգավորվող հարցերը, ապահովում են դրանով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումը, իրականացնում են այդ պայմանագրից բխող հայկական կողմի իրավունքները, հետևում են, որ նշված պայմանագրի մյուս կողմը (կողմերը) կատարի (կատարեն) պարտավորությունները:

2. Ելնելով Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով կարգավորվող հարաբերությունների բնույթից (միջպետական առևտուր, սահմանների պաշտպանություն, ներդրումների խրախուսում և այլն), դրանով նախատեսվող պարտավորությունների ծավալից, նշանակությունից և առանձնահատկություններից՝ այդ պայմանագրի կատարման աշխատանքներում կարող են ներգրավվել Հայաստանի Հանրապետության այլ գերատեսչություններ և այլ պետական, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ:

3. Միջազգային պայմանագրի հայկական կողմի և մյուս կողմի առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները, հիմնարկները, ինչպես նաև ֆիզիկական անձինք այդ պայմանագրով, Հայաստանի Հանրապետության և մյուս կողմի օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով, նշված պայմանագրի կատարմանը կարող են մասնակցել, եթե նրանց մասնակցությունը բխում է այդ պայմանագրից:

4. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կատարման ընթացքում սույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված գերատեսչությունները, այլ պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները, հիմնարկներն ու ֆիզիկական անձինք այդ պայմանագրի մյուս կողմի համապատասխան մարմինների, կազմակերպությունների, հիմնարկների և ֆիզիկական անձանց հետ հաղորդակցվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով, եթե նշված պայմանագրով այլ կարգ նախատեսված չէ:

ՀՈՂՎԱԾ 42. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը հետևում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կատարմանը: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն իրավունք ունի օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու գերատեսչություններում ծանոթանալ միջազգային պայմանագրի կատարման վիճակին և ընթացքին, համակարգել միջազգային պայմանագրի կատարման ուղղությամբ գերատեսչությունների կողմից կատարվող աշխատանքները:

Ելնելով Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կատարման վիճակից՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, անհրաժեշտության դեպքում, կարող է համապատասխան առաջարկություններ ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին, Հայաստանի Հանրապետության կառավարություն կամ Հայաստանի Հանրապետության վարչապետին:

ԳԼՈՒԽ VI

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ

ՀՈՂՎԱԾ 43. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼԸ

1. Սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կարող է կասեցվել այդ պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով կամ ցանկացած ժամանակ՝ այդ պայմանագրի բոլոր մասնակիցների համաձայնությամբ, պայմանավորվող այլ պետությունների հետ խորհրդակցելուց հետո, ինչպես նաև միջազգային իրավունքի նորմերով նախատեսված դեպքերում:

2. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կարող է կասեցվել նաև, եթե՝

ա) Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով պատերազմական կամ այլ ռազմական իրավիճակում, տնտեսական կամ այլ շրջափակման մեջ կամ երկրաշարժի, բնական այլ աղետի կամ այլ անհաղթահարելի ուժի ազդեցության տակ, օբյեկտիվ պատճառների բերմամբ հնարավորություն չունի ժամանակին կամ պատշաճ կերպով կատարել իր ստանձնած պարտավորությունները:

բ) միջազգային պայմանագրի մյուս կողմը (կողմերը) էականորեն խախտում է (են) այդ պայմանագրով ստանձնած անմիջական պարտավորությունները և վտանգում պայմանագրի կատարումը

գ) միջազգային պայմանագրի մյուս կողմը (կողմերը) կասեցրել է (են) այդ պայմանագրի գործողությունը:

Սույն կետով նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կասեցնելը կատարվում է տվյալ պայմանագրի մյուս կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այդ կողմի համաձայնությունն ստանալով:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կասեցնելու ծանուցման մեջ նշվում են կասեցման պատճառները, հնարավորության դեպքում՝ նաև կասեցման ժամկետը:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողության կասեցումն սկսվում է այդ մասին մյուս կողմին դիվանագիտական ուղիներով ծանուցելու կամ մյուս կողմի համաձայնությունը պաշտոնապես Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում ստանալու պահից:

3. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կասեցնելու համար հիմք դարձած հանգամանքների վերացումից հետո այդ պայմանագրի գործողությունը վերսկսվում է: Այդ մասին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը ծանուցում է մյուս կողմին (կողմերին):

ՀՈՂՎԱԾ 44. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ

1. Սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել (ուժը կորցնել) այդ պայմանագրով սահմանված կարգով և այն պահից, երբ՝

ա) որոշակի ժամկետով կնքված միջազգային պայմանագրի ժամկետը լրացել է, եթե այդ պայմանագրով սահմանված կարգով այդ ժամկետը չի երկարաձգվում:

բ) անորոշ ժամկետով կնքված միջազգային պայմանագրի գործողությունը դադարեցնելու մասին ծանուցել է հայկական կողմը կամ մյուս կողմը, եթե այդ պահից հետո պայմանագրով նախատեսված ժամկետը լրացել է:

գ) բազմակողմ միջազգային պայմանագրով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունը դուրս է եկել այդ պայմանագրից:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել նաև պայմանագրի մյուս կողմի՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի վերացմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ սուբյեկտին փոխարինել է միջազգային իրավունքի մեկ այլ սուբյեկտ, որը, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, ստանձնել է վերացած սուբյեկտի իրավահաջորդի պարտականությունները, ինչպես նաև նույն հարցով նոր (հաջորդական) պայմանագիր կնքելով:

2. Եթե միջազգային պայմանագրով դրա գործողությունը դադարեցնելու մասին դրույթներ նախատեսված չեն, ապա դրա գործողությունը կարող է

դադարեցվել (ուժը կորցնել) միջազգային իրավունքի նորմերով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 45. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

Սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել նաև չեղյալ հայտարարելու միջոցով: Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի չեղյալ հայտարարելը Հայաստանի Հանրապետության կողմից միակողմանիորեն և այդ պայմանագրով չսահմանված կարգով նշված պայմանագիրն իր համար այլևս պարտադիր չհամարելու մասին որոշում ընդունելն է:

Միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար կարող է չեղյալ հայտարարվել, եթե պայմանագրի մյուս կողմը (կողմերը)՝

ա) պատերազմական կամ այլ ռազմական գործողություններ է (են) սկսել Հայաստանի Հանրապետության դեմ կամ իրականացնում է (են) Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին սպառնացող այլ գործողություններ:

բ) էականորեն խախտում է (են) պայմանագրով ստանձնած սեփական պարտավորությունները, որի հետևանքով ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ Հայաստանի Հանրապետությունն այլևս նպատակահարմար չի գտնում իր համար այդ պայմանագրի հետագա պարտադիր լինելը:

գ) չեղյալ է (են) հայտարարել Հայաստանի Հանրապետության հետ կնքված միջազգային պայմանագիրը:

Հայաստանի Հանրապետությունը միջազգային պայմանագիրը կարող է չեղյալ հայտարարել նաև միջազգային իրավունքի նորմերով նախատեսված այլ դեպքերում:

Միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար դադարում է պարտադիր լինել չեղյալ հայտարարելու մասին՝ իրավասու մարմնի որոշումն ընդունելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ այդ որոշմամբ:

ՀՈԴՎԱԾ 46. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՂԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կասեցնելու և դադարեցնելու մասին առաջարկությամբ կարող են հանդես գալ՝

ա) Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացրած միջազգային պայմանագրի առնչությամբ, բացառությամբ սույն կետի "բ" ենթակետով նախատեսված դեպքերի:

բ) Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի վավերացրած (հաստատած) միջազգային պայմանագրի առնչությամբ:

գ) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը՝ սույն կետի "ա" և "բ" ենթակետերով չնախատեսված մնացած միջազգային պայմանագրերի առնչությամբ:

Առաջարկություն ներկայացնող մարմինը հիմնավորում է միջազգային պայմանագրի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու անհրաժեշտությունը՝ մատնանշելով դրդապատճառները:

2. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը իր վավերացրած միջազգային պայմանագրի վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ իր վավերացրած միջազգային պայմանագրի վերաբերյալ կամ իրավասու գերատեսչության ղեկավարը՝ համապատասխան միջգերատեսչական պայմանագրի վերաբերյալ:

Եթե Հայաստանի Հանրապետության միջգերատեսչական պայմանագիրը սույն օրենքին համապատասխան հաստատել է Հայաստանի Հանրապետության Նախագահը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ապա դրա գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու որոշումը նույնպես հաստատում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության Նախագահը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին իրավասու մարմնի որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն այդ մասին դիվանագիտական ուղիներով ծանուցում է տվյալ միջազգային պայմանագրի մյուս կողմին (կողմերին):

ՀՈԴՎԱԾ 47. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԻՐԱՎԱՐԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կասեցնելու պահից հայկական կողմի համար ժամանակավորապես դադարում են գործել այդ պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականություններն ամբողջությամբ կամ դրանց մի մասով:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կասեցնելու ընթացքում հայկական կողմը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են խոչընդոտել տվյալ միջազգային պայմանագրի գործողության վերսկսմանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅ-
ՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀՀ ՕՐԵՆՔԸ**

ՀՈԴՎԱԾ 1. «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի երկրորդ կետի վերջում լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3.1-րդ կետով սահմանված դեպքի:» բառերը:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 8-րդ հոդվածը երրորդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-րդ կետով.

«3.1. Բացառիկ դեպքերում Հայաստանի Հանրապետությունը կարող է միջազգային պայմանագիր կնքել միջազգային կամ օտարերկրյա ոչ կառավարական կազմակերպության կամ միավորման հետ, որը հիմնադրվել է բարեգործական կամ մարդասիրական գործունեության նպատակով և Հայաստանի Հանրապետությունում իրականացնելու է բարեգործական, մարդասիրական կամ զարգացման, տեխնիկական, տնտեսական կամ ֆինանսական գործունեություն կամ Հայաստանի Հանրապետությանը տրամադրելու է մարդասիրական, բարեգործական, տեխնիկական, տնտեսական կամ ֆինանսական օգնություն:

Այդպիսի պայմանագիրը նույնպես համարվում է Հայաստանի Հանրապետության միջկառավարական պայմանագիր»:

ՀՈԴՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ԳԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ընդունված է 2001 թվականի հոկտեմբերի 24-ին

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 1. ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության կազմակերպման, դեկավարման, այդպիսի ծառայության անցնելու և ծառայությունը դադարեցնելու, ծառայողական առաջխաղացման, դիվանագիտական աստիճաններ շնորհելու, դիվանագիտական ծառայություն իրականացնող անձանց իրավական վիճակի սահմանման, ծառայության ընթացքում ու դրանից հետո այդ անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական երաշխիքների, դիվանագիտական ծառայության մարմինների ֆինանսավորման սկզբունքների, ինչպես նաև դիվանագիտական ծառայության հետ կապված այլ հարաբերություններ:

ՀՈԴՎԱԾ 2. ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների և դրանցում դիվանագիտական ծառայություն իրականացնող անձանց (այսուհետ՝ դիվանագետ) վրա:

2. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում քաղաքացիական ծառայողների, ինչպես նաև աշխատանքային պայմանագրով վարչատեխնիկական կամ սպասարկման գործառույթներ իրականացնող անձանց վրա:

Օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների վարչատեխնիկական կամ սպասարկման անձնակազմում օտարերկրյա քաղաքացիների կամ այդ պետության մշտական բնակիչներ համարվող՝ քաղաքացիություն չունեցող անձանց աշխատանքի ընդունելու դեպքում հաշվի են առնվում նաև տվյալ պետության օրենսդրության, ինչպես նաև այդ պետության հետ կնքված՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համապատասխան պահանջները:

ՀՈԴՎԱԾ 3. ԳԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. Դիվանագիտական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որը սույն օրենքի 5-րդ հոդվածում նշված մարմիններում կատարվում է՝ սույն օրենքով և այլ իրավական ակտերով այդ մարմիններին վերապահված խնդիրների լուծման ու գործառույթների իրականացման նպատակով:

Դիվանագիտական գործունեություն է համարվում Հայաստանի Հանրապետության Նախագահի և նրա աշխատակազմի, Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի, հանրապետական գործադիր մարմինների, Հայաստանի Հանրապետության հատուկ առաքելությունների, պատվիրակությունների, բանակցային խմբերի կողմից միջազգային հարաբերություններում և միջազգային կապերում սույն օրենքի 4-րդ հոդվածում նշված խնդիրների լուծմանն ուղղված գործունեությունը:

2. Դիվանագիտական ծառայությունը պետական ծառայության բաղկացուցիչ մասն է:

ՀՈԴՎԱԾ 4. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դիվանագիտական ծառայության խնդիրներն են՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը իրականացնելը, միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերը և իրավունքները պատշաճ ու հետևողական ներկայացնելը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքները և օրինական շահերը պաշտպանելը:

ՀՈԴՎԱԾ 5. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններն են՝

ա) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը.

բ) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ենթակայության ներքո գտնվող մարմիններն ու հիմնարկները.

(“ա” և “բ” ենթակետերում նշված մարմիններն այսուհետ համարել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող դիվանագիտական ծառայության մարմիններ)

գ) օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դեսպանությունները.

դ) միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչությունները.

ե) օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկները.

(“գ” և “ե” ենթակետերում նշված մարմիններն այսուհետ համարել օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմիններ):

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված դիվանագիտական ծառայության մարմինները կազմում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության համակարգը:

ՀՈԴՎԱԾ 6. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

2. Դիվանագետների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, եթե դիվանագիտական ծառայության մասին օրենսդրությամբ այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն:

3. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված է սույն օրենքով, ապա կիրառվում են պայմանագրերի նորմերը:

ԳԼՈՒԽ 2.

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը կառավարում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերը, ինչպես նաև կազմակերպում և ղեկավարում է դիվանագիտական ծառայությունը՝ սույն օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը գլխավորում է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններին:

3. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը համակարգում է միջազգային հարաբերությունների և կապերի ոլորտում գործադիր իշխանության հանրապետական և տարածքային մարմինների գործունեությունը:

ՀՈԴՎԱԾ 8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը ղեկավարում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը, իսկ նրա բացակայության դեպքում՝ արտաքին գործերի նախարարի տեղակալը:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը նշանակվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված կարգով:

3. Արտաքին գործերի նախարարի տեղակալի պաշտոնը հայեցողական պաշտոն է: Արտաքին գործերի նախարարի տեղակալները նշանակվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Գլխավոր քարտուղարի պաշտոնը դիվանագիտական ծառայության բարձրագույն պաշտոն է: Գլխավոր քարտուղարը ղեկավարում է դիվանագիտական ծառայությունը:

5. Արտաքին գործերի նախարարի տեղակալների և գլխավոր քարտուղարի իրավասությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կանոնադրությամբ, որը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈԴՎԱԾ 9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով օտարերկրյա պետությունում հավատարմագրված Հայաստանի Հանրապետության դեսպանությունն է և միջազգային կազմակերպությունում հավատարմագրված Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչությունը:

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը սույն օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացնում է պաշտոնական հարաբերություններ համապատասխան օտարերկրյա պետությունում և միջազգային կազմակերպությունում:

2. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունն արտաքին գործերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր գործունեությամբ ենթակա և հաշվետու է նրան:

3. Դիվանագիտական ներկայացուցչությունը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած՝

ա) օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դեսպանությունների մասին կանոնադրությամբ.

բ) միջազգային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչությունների մասին կանոնադրությամբ:

ՀՈԴՎԱԾ 10. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

1. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունն ստեղծվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ Հայաստանի Հանրապետության և տվյալ օտարերկրյա պետության միջև նախնական համաձայնության հիման վրա:

Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը կարող է լուծարվել Հայաստանի Հանրապետության Նախագահի

հրամանագրով՝ տվյալ օտարերկրյա պետության հետ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հարաբերությունները խզելու, ինչպես նաև դեսպանության պահպանումը որևէ պատճառով նպատակահարմար չլինելու դեպքերում:

Տվյալ պետության հետ դիվանագիտական կապերը վերականգնվելու կամ որևէ այլ պատճառով օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը լուծարելուց հետո դրա վերականգնման անհրաժեշտություն առաջանալու դեպքում օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանության վերաբացումը կատարվում է սույն կետի առաջին մասով սահմանված կարգով:

2. Միջազգային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչությունն ստեղծվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ տվյալ միջազգային կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի կամ տվյալ միջազգային կազմակերպությունում ընդունված կարգի համաձայն:

3. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների ստեղծման և լուծարման կազմակերպական հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով:

4. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով, կարող են միաժամանակ հավատարմագրվել մեկից ավելի օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում:

5. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը, անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով և պայմաններով, կարող է որևէ օտարերկրյա պետության շահերը ներկայացնել օտարերկրյա այլ պետությունում կամ միջազգային կազմակերպությունում: Որևէ օտարերկրյա պետության դիվանագիտական ներկայացուցչությունը կարող է Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնել այլ օտարերկրյա պետությունում կամ միջազգային կազմակերպությունում՝ ընդունող պետության կամ միջազգային կազմակերպության հետ նախնական համաձայնության դեպքում:

ՀՈԴՎԱԾ 11. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանության խնդիրներն են՝

ա) ներկայացնել Հայաստանի Հանրապետությունը համապատասխան դեսպանընկալ օտարերկրյա պետությունում և ապահովել պաշտոնական հարաբերություններն այդ պետության հետ.

բ) խրախուսել և ամրապնդել Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետության միջև բարեկամական հարաբերությունները (ներառյալ

քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական և այլ բնագավառներ), նպաստել փոխշահավետ կապերի զարգացմանը.

զ) պաշտպանել Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև նրա քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքներն և օրինական շահերը դեսպանընկալ պետությունում.

ը) պարզաբանել Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին քաղաքականությունը.

ե) նպաստել օտարերկրյա պետության հետ կնքած միջազգային պայմանագրերի կատարմանը.

զ) վարել բանակցություններ օտարերկրյա պետության իշխանությունների և այդ պետությունում հավատարմագրված դեսպանությունների ու միջազգային կազմակերպությունների հետ.

է) իրականացնել միջազգային իրավունքի նորմերի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հյուպատոսական գործողություններ.

ը) օրինական միջոցներով հավաքել, մշակել ու Հայաստանի Հանրապետության իշխանություններին տրամադրել տեղեկություններ օտարերկրյա պետությունում տեղի ունեցող իրադարձությունների, քաղաքական և տնտեսական իրավիճակի մասին.

թ) նպաստել Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության հայ համայնքի համակողմանի կապերի ամրապնդմանն ու զարգացմանը:

2. Միջազգային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչության խնդիրներն են՝

ա) ներկայացնել Հայաստանի Հանրապետությունը համապատասխան միջազգային կազմակերպությունում և ապահովել պաշտոնական հարաբերություններ միջազգային կազմակերպության հետ.

բ) պաշտպանել Հայաստանի Հանրապետության և նրա քաղաքացիների ու իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը.

գ) պարզաբանել Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին քաղաքականությունը.

դ) նպաստել համապատասխան միջազգային կազմակերպության հետ կնքած միջազգային պայմանագրերի կատարմանը.

ե) վարել բանակցություններ միջազգային կազմակերպության հետ.

զ) օրինական միջոցներով հավաքել, մշակել և Հայաստանի Հանրապետության մարմիններին տրամադրել տեղեկություններ տվյալ միջազգային կազմակերպությունում տեղի ունեցող իրադարձությունների մասին:

3. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունները և միջազգային կազմակերպությունում մշտական ներկայացուցչություններն իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և (կամ) միջազգային պայմանագրերով իրենց վերապահված այլ խնդիրներ:

ՀՈԴՎԱԾ 12. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ

1. Դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար կարող է լինել Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանը կամ գործերի հավատարմատարը՝ տվյալ պետության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն:

2. Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանին նշանակում և ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

Հայաստանի Հանրապետության գործերի հավատարմատարին նշանակում և ազատում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը:

3. Դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի ժամանակավոր բացակայության դեպքում նրա պարտականություններն ամբողջ ծավալով կատարում է Հայաստանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատարը:

Հայաստանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատարին նշանակում է տվյալ դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի համաձայնությամբ:

ՀՈԴՎԱԾ 13. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԿԻՉԲԸ ԵՎ ԱՎԱՐՏԸ

1. Հայաստանի Հանրապետության դեսպանն իր պարտականությունների կատարմանն է անցնում դեսպանընկալ պետության ղեկավարին այդ պաշտոնում իր նշանակվելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի տված հավատարմագիրը հանձնելուց կամ այդ պետության արտաքին գործերի պետական մարմնի ղեկավարին իր ժամանման մասին ծանուցելուց և հավատարմագրի կրկնօրինակը նրան հանձնելուց հետո՝ դեսպանընկալ պետությունում ընդունված կարգի համաձայն:

2. Հայաստանի Հանրապետության գործերի հավատարմատարն իր պարտականությունների կատարմանն է անցնում այդ պաշտոնում իր նշանակվելու մասին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի նամակը դեսպանընկալ պետության արտաքին գործերի պետական մարմնի ղեկավարին հանձնելուց անմիջապես հետո կամ այդ պետությունում ընդունված կարգի համաձայն:

3. Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են հետևյալ դեպքերում՝

- ա) Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով.
- բ) դեսպանընկալ պետության կողմից անցանկալի անձ (persona non grata) հայտարարվելու.

զ) իր գործառույթները կատարելու անհնարինության.
դ) միջազգային իրավունքի նորմերով նախատեսված այլ հանգամանքների առկայության.

ե) սույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին կետի "ա" և "ե", "է", "ը", "ժ" և "ժգ" ենթակետերում նշված հիմքերի առկայության դեպքերում:

Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի պարտականությունները դադարում են նրա մահվան դեպքում:

ՀՈՂՎԱԾ 14 ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԴԵՍՊԱՆԸ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՋԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջազգային հարաբերություններում որոշակի խնդիրներ լուծելու նպատակով Հայաստանի Հանրապետության Նախագահը կարող է նշանակել հատուկ հանձնարարություններով դեսպան կամ ստեղծել հատուկ առաքելություններ, որոնց կազմում կարող են ընդգրկվել ինչպես դիվանագետներ, այնպես էլ այլ անձինք:

ՀՈՂՎԱԾ 15. ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկն ստեղծվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ Հայաստանի Հանրապետության և տվյալ օտարերկրյա պետության նախնական համաձայնության հիման վրա:

Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկը լուծարվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

2. Հյուպատոսական հիմնարկը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր գործունեությամբ ենթակա և հաշվետու է նրան:

Հյուպատոսական հիմնարկը տվյալ օտարերկրյա պետությունում իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության դեսպանության անմիջական քաղաքական ղեկավարությամբ:

3. Հյուպատոսական հիմնարկի ստեղծման և լուծարման կազմակերպական հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով:

ՀՈՂՎԱԾ 16 ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հյուպատոսական հիմնարկի ղեկավարի պաշտոնի նշանակման և պաշտոնից ազատման, ինչպես նաև հյուպատոսական հիմնարկների գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են հյուպատոսական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

ԳԼՈՒԽ 3

ՎԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

ՀՈՂՎԱԾ 17 ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության պաշտոններն են՝

ա) արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնը.

բ) արտաքին գործերի նախարարության ենթակայության ներքո գտնվող մարմնի կամ հիմնարկի ղեկավարի պաշտոնը.

գ) արտաքին գործերի նախարարության վարչության պետի (կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի) պաշտոնը.

դ) արտաքին գործերի նախարարության ենթակայության ներքո գտնվող մարմնի կամ հիմնարկի ղեկավարի տեղակալի պաշտոնը.

ե) արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարարի պաշտոնը.

զ) գործերի հավատարմատարի պաշտոնը.

է) գլխավոր հյուպատոսի պաշտոնը.

ը) խորհրդականի պաշտոնը.

թ) հյուպատոսի պաշտոնը.

ժ) փոխհյուպատոսի պաշտոնը.

ժա) հյուպատոսական գործակալության ղեկավարի պաշտոնը.

ժբ) բաժնի վարիչի (պետի) պաշտոնը.

ժգ) առաջին քարտուղարի պաշտոնը.

ժդ) երկրորդ քարտուղարի պաշտոնը.

ժե) երրորդ քարտուղարի պաշտոնը.

ժզ) կցորդի պաշտոնը:

2. Սույն հոդվածի 1-ին կետի "ա" և "բ" ենթակետերում նշված պաշտոններ զբաղեցնող անձանց վրա չեն տարածվում սույն օրենքով սահմանված մրցույթի, ատեստավորման, վերապատրաստման, նշանակման և ազատման հետ կապված նորմերը:

ՎԴԻՎԱԾ 18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական աստիճանները հատուկ դասային աստիճաններ են, որոնք դիվանագետներին շնորհվում են դիվանագիտական ծառայության անցնելիս և ծառայության ընթացքում: Դիվանագիտական աստիճանները բնութագրում են մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխանող որակավորումը:

2. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական աստիճանները լինում են բարձրագույն դիվանագիտական և դիվանագիտական:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն դիվանագիտական աստիճաններն են՝

ա) Հայաստանի Հանրապետոյթյան արտակարգ և լիազոր դեսպանի աստիճանը.

բ) Հայաստանի Հանրապետոյթյան արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարարի աստիճանը:

Հայաստանի Հանրապետոյթյան դիվանագիտական աստիճաններն են՝

ա) առաջին դասի խորհրդականի աստիճանը.

բ) երկրորդ դասի խորհրդականի աստիճանը.

գ) առաջին դասի առաջին քարտուղարի աստիճանը.

դ) երկրորդ դասի առաջին քարտուղարի աստիճանը.

ե) երկրորդ քարտուղարի աստիճանը.

զ) երրորդ քարտուղարի աստիճանը.

է) կցորդի աստիճանը:

ՀՈԴՎԱԾ 19. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՀՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետի "ա" և "բ" ենթակետերում նշված պաշտոններն զբաղեցնել կարող են բարձրագոյն դիվանագիտական աստիճան ունեցող անձինք:

2. Սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետի "գ" և "ժզ" ենթակետերում նշված պաշտոններն զբաղեցնելու համար անհրաժեշտ դիվանագիտական աստիճանները սահմանում է Հայաստանի Հանրապետոյթյան կառավարոյթունը:

ՀՈԴՎԱԾ 20. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԸՆՈՐՀԵԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆԸ

1. Հայաստանի Հանրապետոյթյան բարձրագոյն դիվանագիտական աստիճանները շնորհում է Հայաստանի Հանրապետոյթյան Նախագահը:

2. Հայաստանի Հանրապետոյթյան այլ դիվանագիտական աստիճանները շնորհում է Հայաստանի Հանրապետոյթյան արտաքին գործերի նախարարը՝ արտաքին գործերի նախարարոյթյան մրցութային-ատեստավորող հանձնաժողովի եզրակացոյթյան հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 21 ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԸՆՈՐՀՈՒՄԸ

1. Կցորդի դիվանագիտական աստիճանը շնորհվում է սույն օրենքով սահմանված փորձաշրջանը հաջողոյթյամբ անցած անձին:

2. Հերթական դիվանագիտական աստիճանը շնորհվում է, երբ դիվանագետը համապատասխանաբար ավելի ցածր դիվանագիտական աստիճանով ծառայել է հետևյալ ժամկետներում՝

ա) կցորդ, երրորդ քարտուղար, երկրորդ քարտուղար՝ առնվազն երեք տարի.

բ) երկրորդ դասի առաջին քարտուղար, առաջին դասի առաջին քարտուղար, երկրորդ դասի խորհրդական, առաջին դասի խորհրդական՝ առնվազն երկու տարի:

3. Սույն օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված դեպքերում կարող է արտահերթ դիվանագիտական աստիճան կամ հերթական դիվանագիտական աստիճան շնորհվել սույն հոդվածի երկրորդ կետում նշված ժամկետից շուտ՝ արտահերթ ատեստավորումից հետո:

4. Դիվանագիտական աստիճանի արտահերթ կամ ժամկետից շուտ շնորհումը կարող է իրականացվել ծառայոյթյան ընթացքում ոչ ավելի, քան երկու անգամ:

5. Սույն օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված թափուր պաշտոն զբաղեցնելու ներքին մրցոյթով թեկնածու շնորհվելու դեպքում արտաքին մրցոյթով անցած անձին դիվանագիտական աստիճան շնորհվում է՝ հաշվի առնելով տվյալ պաշտոնի համար անհրաժեշտ դիվանագիտական աստիճան ունենալու պահանջը (19-րդ հոդվածի 2-րդ կետ):

ՀՈԴՎԱԾ 22. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

1. Բարձրագոյն դիվանագիտական աստիճանները շնորհվում են ցմահ:

2. Դիվանագիտական աստիճաններ ունեցող անձինք պահպանում են այդ աստիճանները Հայաստանի Հանրապետոյթյան արտաքին գործերի նախարարոյթյան համակարգից կենսաթոշակի անցնելու դեպքում:

3. Սույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին կետի "ա", "բ", "գ", "է", "ը" ենթակետերի համաձայն՝ դիվանագիտական ծառայոյթյունից ազատված դիվանագետների աստիճանները վերականգնվում են մրցութային-ատեստավորող հանձնաժողովի դրական եզրակացոյթյան հիման վրա դիվանագետի՝ նորից դիվանագիտական ծառայոյթյան անցնելու դեպքում:

Դիվանագիտական աստիճանի վերականգնման դեպքում հերթական դիվանագիտական աստիճանը շնորհվում է սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ:

ՀՈԴՎԱԾ 23. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻՑ ԶՐԿԵԼԸ

Սույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին կետի "բ", "է", "թ" և "ժզ" ենթակետերում սահմանված հիմքերով դիվանագիտական ծառայոյթյունից ազատվելու դեպքում Հայաստանի Հանրապետոյթյան Նախագահը և Հայաստանի Հանրապետոյթյան արտաքին գործերի նախարարը ազատված անձանց զրկում են շնորհած դիվանագիտական աստիճաններից:

ԳԼՈՒԽ 4.

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻՆ ՆՇԱՆԱԿՎԵԼԸ

;

ՀՈԴՎԱԾ 24. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆԸ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆԸ

Դիվանագիտական ծառայոյթյան պաշտոնի նշանակվելու իրավունք ունի միայն Հայաստանի Հանրապետոյթյան այն քաղաքացին, ով տիրապե-

տում է հայերենին, առնվազն երկու օտար լեզվի, ունի բարձրագույն կրթություն և բավարարում է արտաքին գործերի նախարարության հաստատած համապատասխան պաշտոնի նկարագրի պահանջները:

Դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈԴՎԱԾ 25. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Դիվանագիտական ծառայության պաշտոնի չեն կարող նշանակվել այն անձինք, ովքեր՝

ա) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ են ճանաչվել:

բ) դատական կարգով զրկվել են որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

գ) տառապում են այնպիսի հիվանդությամբ, որը ծառայության ընթացքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների և լիազորությունների իրականացմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

դ) դատապարտվել են հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով չի հանվել կամ չի մարվել:

ՀՈԴՎԱԾ 26. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԸ

1. Դիվանագիտական ծառայության թափուր պաշտոնի առկայության դեպքում այդ պաշտոնն զբաղեցվում է արտաքին կամ ներքին մրցույթով, որի անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Արտաքին մրցույթ անցկացվում է միայն կցորդի թափուր պաշտոնն զբաղեցնելու, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված ներքին մրցույթով թափուր պաշտոնը չհամարվելու դեպքում:

Արտաքին մրցույթ անցկացնելու մասին մրցութային-ատեստավորող հանձնաժողովի հայտարարությունը հրապարակվում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն 1000 տպաքանակ ունեցող մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

3. Ներքին մրցույթին մասնակցել կարող են միայն այն դիվանագետները, ովքեր ունեն տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ դիվանագիտական աստիճան (19-րդ հոդվածի 2-րդ կետ):

Ներքին մրցույթ անցկացնելու մասին՝ սույն օրենքով նախատեսված մրցութային-ատեստավորող հանձնաժողովի հայտարարությունը հրապարակվում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ:

4. Մրցույթի արդյունքները պաշտոնապես հրապարակելուց հետո՝ եռօրյա ժամկետում մրցութային-ատեստավորող հանձնաժողովը մրցույթով ընտրված մասնակցի վերաբերյալ արտաքին գործերի նախարարին կամ արտաքին գործերի նախարարության ենթակայության ներքո գտնվող մարմնի կամ հիմնարկի ղեկավարին տալիս է եզրակացություն:

5. Մրցույթի պայմանները չբավարարած անձանց յոթօրյա ժամկետում այդ մասին հայտնվում է գրավոր:

ՀՈԴՎԱԾ 27. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

1. Մրցույթով անցած անձը դիվանագիտական ծառայության պաշտոնում նշանակվում է անժամկետ:

2. Դիվանագիտական ծառայության պաշտոնում նշանակվելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակումը կատարում է արտաքին գործերի նախարարի կամ արտաքին գործերի նախարարության ենթակայության ներքո գտնվող մարմնի կամ հիմնարկի ղեկավարը՝ մրցութային-ատեստավորող հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՈԴՎԱԾ 28. ՓՈՐՁԱՇՐՋԱՆԸ

1. Արտաքին մրցույթով առաջին անգամ դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակվող անձը նշանակվում է մինչև 6 ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանի անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Փորձաշրջանի անբավարար արդյունքի դեպքում փորձաշրջան անցնող անձին այդ մասին հայտնվում է գրավոր:

ՀՈԴՎԱԾ 29. ԴԻՎԱՆԱԳԵՏ ՀԱՄԱՐՎԵԼԸ

Անձը համարվում է դիվանագետ, երբ նրան շնորհվում է առաջին դիվանագիտական աստիճանը, նա անցնում է համապատասխան պաշտոնի և տալիս է դիվանագետի երդումը:

ՀՈԴՎԱԾ 30. ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ԵՐԴՈՒՄԸ

Առաջին անգամ դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակվող անձը մրցութային-ատեստավորող հանձնաժողովի նիստում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի ներկայությամբ տալիս է հետևյալ բովանդակությամբ երդում.

"Ստանձնելով Հայաստանի Հանրապետության դիվանագետի պաշտոնը՝ հանդիսավոր երդվում եմ հավատարմորեն ծառայել Հայաստանի Հանրապետությանը և հայ ժողովրդին, պահպանել Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությունը և օրենքները, արժանապատվորեն կրել դիվանագետի բարձր կոչումը”:

Դիվանագետն ստորագրում է երդման տեքստը, և նրան հանդիսավորությամբ շնորհվում է Հայաստանի Հանրապետության դիվանագետի վկայական:

ԳԼՈՒԽ 5.

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

ՀՈԴՎԱԾ 31. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

1. Դիվանագետի ծառայությունն սկսվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող դիվանագիտական ծառայության մարմնում: Չի թույլատրվում առաջին անգամ դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակվող անձի նշանակումն անմիջապես օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում:

2. Դիվանագետի գործունեությունն ընթանում է ռոտացիայի սկզբունքով՝ Հայաստանի Հանրապետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում և օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում համապատասխանաբար իրար հաջորդող երկամյա աշխատանքային փուլերով:

Անհրաժեշտության դեպքում երկամյա ժամկետը կարող է երկարաձգվել, սակայն մեկ տարուց ոչ ավելի ժամկետով:

ՀՈԴՎԱԾ 32. ՌՈՏԱԳԻԱՆ

1. Ռոտացիան իրականացնելիս հաշվի է առնվում դիվանագետի դիվանագիտական աստիճանը, տվյալ պահին նրա զբաղեցրած պաշտոնը և ռոտացիայի արդյունքում զբաղեցնելիք պաշտոնը: Ռոտացիա իրականացվում է հավասարազոր պաշտոնների միջև:

2. Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում աշխատանքային փուլի ժամկետը լրանալուց անմիջապես հետո չի թույլատրվում դիվանագետի նոր նշանակումը մեկ այլ օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում:

3. Ռոտացիա իրականացնելու կարգն ու հավասարազոր պաշտոնների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈԴՎԱԾ 33. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴԻՎԱՆԱԳԵՏԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼԸ

Դիվանագետը, իր համաձայնությամբ, Հայաստանի Հանրապետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնից, համապատասխան դիվանագիտական ծառայության մարմնի և Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի և Հայաստանի Հանրապետության գործադիր

իշխանության հանրապետական մարմինների միջև պայմանավորվածության համաձայն, առավելագույնը երկու տարի ժամկետով կարող է համապատասխանաբար արտաքին կապերի գծով գործուղվել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ: Այդ դեպքում դիվանագետը պահպանում է իր դիվանագիտական աստիճանը, օգտվում է դիվանագետի համար սահմանված իրավունքներից, կարող է ընդհանուր հիմունքներով ստանալ հաջորդ դիվանագիտական աստիճանը և մասնակցել թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին:

Դիվանագետի գործուղման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈԴՎԱԾ 34. ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

1. Ատեստավորումն իրականացվում է զբաղեցրած պաշտոնին դիվանագետի՝ համապատասխանությունը որոշելու և աստիճանային առաջխաղացումն ապահովելու նպատակով:

2. Դիվանագիտական ծառայության մարմինների դիվանագետների առնվազն մեկ երրորդը յուրաքանչյուր տարի ենթակա է պարտադիր ատեստավորման:

3. Դիվանագետի հերթական ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ անգամ:

4. Տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող դիվանագետն ատեստավորման ենթակա չէ:

5. Դիվանագետի արտահերթ ատեստավորումն անցկացվում է հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի հրամանի հիման վրա, պաշտոնի նկարագիրը փոփոխվելու դեպքում կամ դիվանագետի ցանկությամբ:

6. Ատեստավորումն անցկացվում է դիվանագետի պարտադիր մասնակցությամբ:

7. Դիվանագետի ատեստավորումն անցկացնելու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈԴՎԱԾ 35. ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Դիվանագետի վերապատրաստումն անցկացվում է դիվանագետի ատեստավորման արդյունքների հիման վրա:

2. Յուրաքանչյուր դիվանագետ առնվազն հինգ տարին մեկ անգամ ենթակա է պարտադիր վերապատրաստման:

3. Դիվանագետի վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կամ Հայաստանի Հանրապետությունում գործող դիվանագիտական ծառայության այլ մարմնի՝ պետական բյուջեով հաստատված միջոցների հաշվին, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների

միջոցների հաշվին նրանց հրավերով, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

4. Մեկից մինչև երկու տարի ժամկետով վերապատրաստման դասընթացների դեպքում ռոտացիայի իրականացման համար անհրաժեշտ ստաժի ժամկետի մեջ հաշվարկվում է միայն մեկ տարին:

5. Վերապատրաստումը, համապատասխան վկայագրի առկայության դեպքում, կարող է հիմք դառնալ սահմանված ժամկետից շուտ հաջորդ դիվանագիտական աստիճանն ստանալու համար:

6. Վերապատրաստման նպատակով վեց ամսից ավելի ժամկետով ուսման մեկնելու դեպքում ուսման մեկնող դիվանագետի և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջև կնքվում է պայմանագիր, որի համաձայն ուսման մեկնողը պարտավորվում է ուսման ավարտից հետո՝ առնվազն երեք տարի, աշխատել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության համակարգում: Նշված պայմանը խախտելու դեպքում նա պարտավոր է փոխհատուցել ուսման ծախսերը:

ՀՈՂՎԱԾ 36. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎԸ

1. Դիվանագիտական ծառայության կադրերի ռեզերվում գրանցվում են՝ ա) դիվանագետները, որոնք որպես միջազգային ծառայողներ աշխատանքի են անցել միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետությանը հատկացված քվոտաների սահմաններում:

բ) դիվանագետները, որոնք զբաղվում են գիտական գործունեությամբ:

գ) դիվանագետները՝ սույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին կետի "գ" ենթակետում նշված պաշտոններում իրենց պաշտոնավարման ավարտից հետո:

դ) դիվանագետները՝ սույն օրենքով սահմանված կարգով դիվանագիտական ծառայության մարմնի լուծարման ժամանակ կամ հաստիքների կրճատման դեպքում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի "ա" և "գ" ենթակետերում նշված դեպքերում դիվանագիտական ծառայության կադրերի ռեզերվում դիվանագետներ գրանցվում են մինչև 4 տարի ժամկետով, առանց վարձատրման իրավունքի: Կադրերի ռեզերվում գտնվելն իրավունք է տալիս դիվանագետին թափուր պաշտոնի առկայության դեպքում վերականգնվել դիվանագիտական ծառայությունում սույն օրենքի 26-րդ հոդվածում նախատեսված ներքին մրցույթով:

3. Սույն հոդվածի 1-ին կետի "դ" ենթակետում նշված դեպքում դիվանագիտական ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու առավելագույն ժամկետը վեց ամիս է:

Կադրերի ռեզերվում գտնվելու ժամկետը հաշվարկվում է դիվանագիտական ծառայության ստաժի մեջ:

4. Կադրերի ռեզերվում դիվանագետներին գրանցելու և ռեզերվից հանելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ԳԼՈՒԽ 6.

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ-ԱՏԵՍՏԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

ՀՈՂՎԱԾ 37. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ-ԱՏԵՍՏԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԸ

Դիվանագիտական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի և ատեստավորում անցկացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում ստեղծվում է մրցութային-ատեստավորող հանձնաժողով:

Մրցութային-ատեստավորող հանձնաժողովում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչները: Մրցութային-ատեստավորող հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել նաև միջազգային հարաբերությունների բնագավառի գիտական աշխատողներ:

Մրցութային-ատեստավորող հանձնաժողովի կազմն ու աշխատակարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը:

ԳԼՈՒԽ 7.

ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

ՀՈՂՎԱԾ 38. ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Ծառայողական պարտականությունները, հատուկ առաջադրանքները լավագույնս կատարելու, երկարամյա ծառայության, անբասիր աշխատանքի, ծառայության մեջ ունեցած նվաճումների համար դիվանագետների նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ միջոցները՝

ա) շնորհակալության հայտարարում:

բ) միանվագ դրամական պարգևատրում:

գ) հուշանվերով պարգևատրում:

Դիվանագետների նկատմամբ կարող են կիրառվել օրենքով սահմանված խրախուսանքի այլ միջոցներ:

2. Խրախուսանքի միջոցներ կիրառում է դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարը:

Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ենթակայության ներքո գտնվող մարմնի կամ հիմնարկի ղեկավարը կիրառում է խրախուսանքի միջոցները՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով արտաքին գործերի նախարարությանը:

ՀՈԴՎԱԾ 39. ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ԿԻՐԱՆՎՈՂ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԸ

1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ անպատշաճ կատարելու, ծառայողական լիազորությունները զերազանցելու, աշխատանքային կարգապահության կանոնները և դիվանագիտական էթիկան խախտելու դեպքում դիվանագետի նկատմամբ սույն օրենքով սահմանված կարգով կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը՝

- ա) նախազգուշացում.
- բ) նկատողություն.
- գ) խիստ նկատողություն.
- դ) աշխատավարձի իջեցում (մինչև 3 ամիս ժամկետով):

2. Կարգապահական տույժերը կիրառում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը:

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մյուս մարմինների ղեկավարները կիրառում են սույն հոդվածի 1-ին կետի "ա" և "գ" ենթակետերում նշված կարգապահական տույժերը՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին:

3. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը կիրառում է միայն սույն հոդվածի 1-ին կետի "ա" և "գ" ենթակետերում նշված տույժերը:

ՀՈԴՎԱԾ 40. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Դիվանագետն զբաղեցրած պաշտոնից ազատվում է հետևյալ դեպքերում՝

- ա) անձնական դիմում ներկայացնելիս.
- բ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելիս.
- գ) օրենքով սահմանված քաղաքական կամ հայեցողական պաշտոններում ընտրվելիս կամ նշանակվելիս.
- դ) դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար՝ սույն օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալիս.
- ե) սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին կետի "բ"- "դ" ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելիս.

զ) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալիս (չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդը).

է) սույն օրենքի 25-րդ հոդվածի "գ" ենթակետով նախատեսված հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալիս.

ը) հաստիքները կրճատվելիս և (կամ) դիվանագիտական ծառայության մարմինը լուծարվելիս.

թ) ատեստավորման հետևանքով զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանությունը որոշելիս.

ժ) սույն օրենքի 44-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները խախտելիս.

ժա) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրվման դատապարտվելիս.

ժբ) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելիս.

ժգ) դատական կարգով դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելիս:

2. Դիվանագետի պարտականությունները դադարում են նրա մահվան դեպքում:

3. Սույն հոդվածի 1-ին կետի "գ" և "թ" ենթակետերով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատվել չեն կարող հղի և մինչև երեք տարեկան երեխա խնամող դիվանագետները:

4. Դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը կամ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ենթակայության ներքո գտնվող մարմնի կամ հիմնարկի ղեկավարը՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին:

ՀՈԴՎԱԾ 41. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՏԱՐԻՔԸ

1. Դիվանագիտական ծառայության պաշտոնում պաշտոնավարման առավելագույն տարիքը 65 տարին է:

2. Դիվանագիտական ծառայության պաշտոնում պաշտոնավարության առավելագույն տարիքը լրանալու դեպքում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի հրամանով դիվանագետը կարող է մինչև երեք տարի ժամկետով շարունակել պաշտոնավարել:

**ԳԼՈՒԽ 8.
ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՀՈԴՎԱԾ 42. ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
Դիվանագետի հիմնական իրավունքներն են՝
ա) զբաղեցրած պաշտոնում իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.

բ) իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության բոլոր գնահատականներին և այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ ներկայացնելը

գ) ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.

դ) իր լիազորությունների շրջանակներում որոշումներ ընդունելը (անհրաժեշտության դեպքում՝ խորհրդակցելով անմիջական ղեկավարի հետ) և հարցերի քննարկումներին մասնակցելը.

ե) աշխատանքի, աշխատավարձի, առողջության պաշտպանությունը, անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմաններով ապահովվածությունը.

զ) սոցիալական ապահովությունը.

է) սահմանված կարգով դիվանագիտական աստիճանի բարձրացումը.

ը) վերապատրաստումը.

թ) մրցույթի և առեստավորման արդյունքները բողոքարկելը, այդ թվում՝ դատական կարգով.

ժ) դիվանագիտական ծառայության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:

Դիվանագետն ունի սույն օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

ՀՈԴՎԱԾ 43. ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դիվանագետի հիմնական պարտականություններն են՝

ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները կատարելը.

բ) մասնագիտական և այլ անհրաժեշտ գիտելիքներ ապահովելը.

գ) օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ և ժամանակին կատարելը.

դ) ղեկավար անձանց՝ իրենց լիազորությունների շրջանակներում և սահմանված կարգով տրված հանձնարարականներն ու ընդունած որոշումները կատարելը.

ե) մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն ապահովելը.

զ) արտաքին գործերի նախարարության հաստատած՝ աշխատանքային կարգապահության կանոնների պահպանումը.

է) իր լիազորությունների շրջանակներում առաջարկություններ, դիմումներ և բողոքներ քննության առնելը և օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց ընթացք տալը.

ը) պետական, ծառայողական և օրենքով պահպանվող այլ գաղտնիքն օրենքով սահմանված կարգով պահպանելը, այդ թվում՝ դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատվելուց հետո օրենքով նախատեսված ժամկետի ընթացքում.

թ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դիվանագետի Էթիկայի կանոնները պահպանելը.

ժ) իր եկամուտների հայտարարագիրը ներկայացնելը՝ օրենքով սահմանված կարգով:

Դիվանագետն ունի նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

ՀՈԴՎԱԾ 44. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

1. Դիվանագետն իրավունք չունի՝

ա) կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.

բ) անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ.

գ) իր ծառայողական դիրքը, աշխատանքային միջոցներն օգտագործել կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների (այդ թվում՝ կրոնական միավորումների) շահերի համար, այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու համար.

դ) խախտել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ հրաժարվել գաղտնիքին առնչվելու քույրություն ձևակերպման սահմանված ընթացակարգն անցնելը.

ե) ստանալ հոնորար իր ծառայողական պարտականությունների կատարումից բխող՝ իր նախապատրաստած հրապարակումների կամ ելույթների համար.

զ) ոչ ծառայողական նպատակներով օգտագործել դիվանագիտական ծառայության մարմնի նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները. պետական այլ գույքն ու ծառայողական տեղեկատվությունը.

է) իր ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

2. Դիվանագետին արգելվում է համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, վերջինիս զավակ, եղբայր և քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:

3. Դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, դիվանագետը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում տասը և ավելի տոկոս բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման: Դիվա-

նագետն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալ եկամուտներ:

ՀՈԴՎԱԾ 45 ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Պետությունը դիվանագետի համար երաշխավորում է՝

ա) ծառայողական պարտականությունների կատարման համար անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովում:

բ) ամենամյա վճարովի արձակուրդ:

գ) օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայելու ընթացքում բժշկական ապահովագրության վճար (նաև՝ նրա ընտանիքի անդամներին)՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով այդ նպատակով նախատեսված միջոցների հաշվին:

դ) վերապատրաստում՝ այդ ընթացքում պահպանելով նրա պաշտոնը և դրա համար նախատեսված աշխատավարձը:

ե) ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում ստացած հաշմանդանության դեպքում՝ նրան, իսկ զոհվելու դեպքում նրա ընտանիքի անդամներին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան նպաստներով ապահովում՝ պատճառված վնասի հատուցմամբ:

զ) ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված՝ նրա և նրա ընտանիքի անդամների անվտանգության ապահովում բռնությունից, ահաբեկումից և այլ ռոնդգություններից:

է) ծառայողական գործուղումների հետ կապված տրանսպորտային, բնակարանային և այլ ծախսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցում:

զ) կենսաթոշակի անցնելու դեպքում դիվանագիտական աստիճանի համար լրավճար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով:

թ) կադրերի ռեզերվում գտնվելու ընթացքում վարձատրություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով:

ժ) օրենքով սահմանված այլ երաշխիքներ:

ՀՈԴՎԱԾ 46. ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԸ

ԵՎ ՓՈՒՆԿԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

1. Դիվանագետների դրամական բավարարումը բաղկացած է պաշտոնային դրույքաչափից և դիվանագիտական աստիճանի համար հավելավճարից:

Դիվանագետի պաշտոնային դրույքաչափը և դիվանագիտական աստիճանի համար հավելավճարը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2. Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետին, դրամական բավարարումից բացի, վճարվում է ամսական փոխհատուցում օտարերկրյա պետությունում ծառայության հետ կապված ծախսերի համար՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխան:

տասխան, համաձայն տվյալ երկրի կենսամակարդակի հիման վրա հաշվարկված գործակցի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով և կարգով:

3. Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետին վճարվում է նաև փոխհատուցում ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվարկով՝ յուրաքանչյուրին՝ սույն հոդվածի 2-րդ կետում նշված օտարերկրյա պետությունում իր ծառայության հետ կապված ծախսերի ամսական փոխհատուցման տասը տոկոսի չափով: Ամուսնու մասով փոխհատուցման վճարումը դադարեցվում է, երբ նա անցնում է աշխատանքի տվյալ երկրում:

4. Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետի հետ բնակվող երեխաների՝ միջնակարգ ուսումնական հաստատությունում ուսման ծախսերը հոգալու նպատակով դիվանագետին վճարվում է փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով, մինչև երեխայի 18 տարին լրանալը:

5. Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետին տրամադրվում է նրա դիվանագիտական աստիճանին, զբաղեցրած պաշտոնին և ընտանիքի անդամների թվին համապատասխան՝ բնակարանի համար հավելավճար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով:

6. Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու ծախսերը փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

7. Դիվանագետն իրավունք ունի ստանալ նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լրավճարներ:

8. Սույն օրենքում օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետի ընտանիքի անդամներ են համարվում նրա ամուսինը և մինչև 18 տարեկան երեխաները:

ՀՈԴՎԱԾ 47. ՕՏԱՐԵՐԿՐԻՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԾ ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ԱՄՈՒՄՆՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնած դիվանագետի ամուսինն օտարերկրյա պետությունից վերադառնալուց հետո վերականգնվում է աշխատանքի պետական հիմնարկներում և զբաղեցնում է պաշտոն՝ մինչև օտարերկրյա պետություն մեկնելը ստացած աշխատավարձից ոչ պակաս աշխատավարձով, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

2. Այն ժամանակաշրջանը, որն ամուսինն անց է կացրել օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնած իր ամուսնու հետ, ներառվում է նրա պետական սոցիալական ապահովագրության ժամանակաշրջանում, և նա ապահովվում է նախատեսված սոցիալական ապահովագրության մուծումներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Դիվանագետի ամուսինն իրավունք ունի աշխատել այն երկրում, որտեղ ծառայում է նրա ամուսինը, եթե այդ հնարավորությունը սահմանված է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ թույլատրվում է սովյալ երկրի ներպետական օրենսդրությամբ: Այդ մասին դիվանագետը նախապես պետք է տեղյակ պահի Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը:

ԳԼՈՒԽ 9.

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ

ՀՈԴՎԱԾ 48. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնագիրը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրվող՝ անձը հաստատող փաստաթուղթ է, որը հաստատում է, որ դրա կրողը դիվանագետ կամ, սույն օրենքի 49-րդ հոդվածի համաձայն, դրա կրելու իրավունքն ունեցող անձ է:

ՀՈԴՎԱԾ 49. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ ԿՐԵԼՈՒ

ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

1. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնագրեր տրվում են Հայաստանի Հանրապետության Նախագահին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներին, Հայաստանի Հանրապետության վարչապետին, Հայաստանի Հանրապետության կառավարության անդամներին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահին, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին, Ամենայն Հայոց կաթողիկոսին, Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի անդամներին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին, Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող հանձնաժողովների (խորհուրդների) նախագահներին, Հայաստանի Հանրապետության մարզպետներին (Երևանի քաղաքապետին), դիվանագետներին, իսկ առանձին դեպքերում՝ այլ անձանց՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի թույլտվությամբ:

2. Դիվանագիտական անձնագրեր են տրվում նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի

նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի, ինչպես նաև դիվանագետների ընտանիքների անդամներին՝ օտարերկրյա պետություններ ծառայության մեկնելիս:

ՀՈԴՎԱԾ 50. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ ՏԱԼՈՒ

ԵՎ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Դիվանագիտական անձնագրերի վավերականության ժամկետը 5 տարի է: Դիվանագիտական անձնագրերի վավերականության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 5 տարի ժամկետով:

Պաշտոնավարության ավարտից հետո համապատասխան պաշտոնատար անձինք իրենց դիվանագիտական անձնագրերը հանձնում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

2. Սույն օրենքի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն չհանձնված, ինչպես նաև կորած դիվանագիտական անձնագրերը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը հայտարարում է անվավեր: Այդ մասին սահմանված կարգով տեղեկացվում են Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինները:

3. Դիվանագիտական անձնագրեր տալու և հետ վերցնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը:

ԳԼՈՒԽ 10.

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 51. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

1. Դիվանագիտական ծառայության մարմինները ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

2. Օտարերկրյա պետությունում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինները պետական բյուջեի միջոցներից բացի կարող են ֆինանսավորվել նաև այլ աղբյուրներից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

ԳԼՈՒԽ 11.

ԵԶՐԱՓՎԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 52. ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել՝

ա) 1992 թվականի մայիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական աստիճանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

բ) 1992 թվականի հունիսի 6-ի «Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

ՀՈԴՎԱԾ 53. ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿՆԵՐԻ, ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐԻ, ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԻՄՆԵՑՈՒՄԸ

Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը հաստատում է դիվանագիտական ծառայության մարմինների հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնների նկարագրերը:

Պաշտոնների նկարագրերը հաստատվելուց հետո՝ եռամսյա ժամկետում իրականացվում է սույն օրենքով նախատեսված ատեստավորումը:

Ատեստավորման հետևանքով մրցութային-ատեստավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա դիվանագետներին շնորհվում են իրենց պաշտոններին համապատասխանող դիվանագիտական աստիճաններ՝ սույն օրենքի 19-րդ հոդվածին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 54. ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ 24-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը սույն օրենքով դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակված անձանց նկատմամբ սույն օրենքի 24-րդ հոդվածի դրույթները կիրառվում են սույն օրենքի 53-րդ հոդվածում նախատեսված ատեստավորումից հետո:

ՀՈԴՎԱԾ 55. ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ԵՐԴՈՒՄ ՏԱԼԸ

Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, սույն օրենքի 53-րդ հոդվածով նախատեսված ատեստավորումից հետո, բոլոր դիվանագետները տալիս են դիվանագետի երդում:

ՀՈԴՎԱԾ 56. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՂ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԵՐԵՆԱՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼԸ

Սույն օրենքի 45-րդ հոդվածի "գ" ենթակետով նախատեսված բժշկական ապահովագրության վճարները, ինչպես նաև 46-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված՝ դիվանագետների երեխաների ուսման ծախսերի նպատակով վճարվող փոխհատուցումները տրվում են 2003 թվականի հունվարի 1-ից:

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Վիզեն Վլադիմիրի Քոչարյանը ծնվել է 1972 թ., Երևանում:

1988 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, որն ավարտել է 1993 թ. գերազանցության դիպլոմով:

Նույն թվականին ընդունվել է ասպիրանտուրա, իսկ 1996 թ. Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանում պաշտպանել է «Ազգային փոքրամասնությունների միջազգային իրավական պաշտպանության հիմնահարցերը» վերտառությամբ ատենախոսությունը, և նրան շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1996 թվականից Վ. Քոչարյանը դասավանդում է Երևանի պետական համալսարանում, նա ԵՊՀ սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ է:

Վ. Քոչարյանը վերապատրաստում է անցել Եվրոպայի, Ամերիկայի և Ռուսաստանի առաջատար գիտական կենտրոններում, այդ թվում՝ Բերկլիի (ԱՄՆ) և Քեմբրիջի (Միացյալ Թագավորություն) համալսարաններում:

Վ. Քոչարյանը մոտ երեք տասնյակ գիտական աշխատությունների հեղինակ է:

Նա «Պետություն և իրավունք» և «Մոսկովսկի ժուռնալ մեծդոնարդոնոզ պրավա» գիտական հանդեսների խմբագրական խորհրդի անդամ է:

Բացի գիտական և մանկավարժական աշխատանքից, Վ. Քոչարյանը զբաղվում է նաև հասարակական գործունեությամբ:

1998 թ. նա ընտրվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանների միության վարչության կազմում և նշանակվել է ՀՀ իրավաբանների միության գործադիր տնօրեն:

1999 թ. Վ. Քոչարյանը նշանակվել է ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական փոփոխություններ նախապատրաստող հանձնաժողովի անդամ:

2001 թվականից Վ. Քոչարյանը ներկայացնում է Հայաստանը Եվրոպայի խորհրդում, նա Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի անդամ է:

Վիգեն Բոչարյան
Միջազգային իրավունք

Vigen Kocharyan
International Law

Виген Кочарян
Международное право

Խմբագիր՝
Համակարգչային ձևավորումը՝

Ս. Մամյան
Ա. Պեպրոսյան

Հանձնված է տպագրության 10.03.02:
Հանձնված է տպագրության 10.05.02:
Չափսը՝ 60x84¹/₁₆: Թուղթը օֆսեթ:
Ծավալը՝ 31,5 տպ. մամուլ: Տպարանակը՝ 600: